Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2748

ԱՅԲՈՒԱՆԴԻՒ ՄԱՆՈՒՆՆԱՑ

ԽՕՍԵՑԵԱԼՔ

Թարգմանեալ ի ձեռն

Հ. ԵՂՈՒԱՐԴԱՑ ՉԻԼԻՄԻՋԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՑ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՀԴԻՆ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍԲՐՈՑՆ ՂԱԶԱՐՈՍ

1875

85
Մ-25

XLVI, 7.





Ա. ՂԵՓՍԱՆԴՐԻ ՄԱՆՇՈՆԵԱՅ

ԽՕՍԵՑԵԱԼՔ

85
Մ-25

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՆՇՈՆԵԱՅ

ԽՕՍԵՑԵԱԼՔ



Թարգմանեալ ՚ի ձեռն

Հ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ՀԻՒՐՄԻՋԵԱՆ

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՇԻՐԱԿԱՅ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

16848-58թ.
(1.002)
Տ4ՏՏ

ՀԱՑՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

1875

2011

33225-4.2.
6
9

2003

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՆԾՈՆԵԱՅ

ԽՕՍՔՑԵԱԼՔ

ԳԼՈՒԽ Ժ.

Ի սեսանել ուրուք յանմշակ դաշտի ուրեք մոլախոտ ինչ, օրինակ խիմն, եթէ գիտել կամիցի՝ ի քնիկ սերմանէ իցէ այն բուսեալ, թէ հողմոյ կամ թռչնոյ զսերմն անդր ածեալ, որչափ և խորհեսցի՝ չկարէ գիտել, այսպէս և ինձ անմարթ է ասել՝ քնաւորապէս արդեօք հիւրոց մտաց, թէ ի թելադրելոյ Ադամկեայ, շարժեալ իցէ կոմն՝ ի ձեռն մեծաւորի վեզարաւորաց չուծանել զինձիւն զայն: Զիք երկբայէ՝ զի Ադամկեան ոչ վայրապար առաքարկեաց հօրեղբօրն զխորհուրդն զայն. գիտէր խոկ՝ զի անձնասիրութիւն նորա նախանձաւոր մերժէլոց էր զանպատուական թելադրութիւնն, այլ խորհեցաւ ի միտս արկանել նմա զայն, բանալ առաջի նորա զճանապարհն՝ ընդ որ ցանկայր զի գնայցէ: Եւ խորհուրդն այն այնպէս զինի

էր մտաց կոմսին, և այնպէս ըստ պատշաճի առաջնակայից երացն, զի ինքնին իսկ կոմսն, առանց ուրուք թելադրութեան խորհէր արդեօք, ոչ յանձն առեալ զի եղբօրորդի իւր համանուն՝ ի յայտնի ճակատամարտի լինի նըկուն, և հասցէ սաստիկ համբաւոյ ղօրութեանն՝ որ սկզբնէն էր նմա յոյժ, և անհրաժեշտ կարևոր: Վրէժ, զոր եղբօրորդւոյ իւրում մտրճի էր խնդրել իւրովի, յոռետգոյն քան զչարիսն պատահէր, և սերմն էր աղեւոյց. պարտ էր իւ և է հնարիւք խափանել զայն անյապաղ: Եթէ հրամայէր նմա ելանել առաջամարտն՝ ի տանէ, չգիտաղնդէր նա. և հնազանդել իսկ՝ հաւասար էր տալոյ յապարիշ զճակատամարտին, և խոստացոյց տանն յերեսաց մենաստանին: Պատուէր, բռնութիւն առեւտրական, և իրաւասկիք հանդուգնատիպք, ոչ զօրէին ընդդէմ հակառակորդին, զի ոչ անձինք էին եկեղեցականաց՝ այլ և ընակարանք աղատ էին յամենայն աշխարհական առեւտրէ: Զէր մտրճի ընդդէմ այնպիսւոյ ոսոխի առնել ինչ, այլ հեռացուցանել զնա անտի՝ ի ձեռն մեծաւորին՝ որում էր հրամայել նմա կալ անդ կամ՝ ի բաց գնալ:

Աւրդ մեծաւորին բարեկամութիւն վաղեմի էր ընդ կոմսին. գուն ուրեք տեսեալ էր նոցա զմիմեանս, այլ միշտ մտերմաբար և յօժարութեամբ սպաս մատուցանել միմեանց: Լաւագոյն իսկ է գործել ընդ միւսմ՝ որ իշխէ բազմաց, քան ընդ ումեք առանձին՝ որ զնոսին ևեթ տեսանէ, իւրոյ ևեթ կրից լսէ, և զնոսին ևեթ

հոգայ. ուր միւսն տեսանէ ընդհանուր՝ բազում կցորդութիւնս, հեռաւոյս բազումս, զբաղմանց օգուտս, բազում ինչ զգուշալի, բազում ինչ անվնասելի. որով մարթէ է ըստ բազում իրաց յանկուցանել զնա:

Զամենայն ինչ քաջ կշռադատեալ կոմսին, հրաւիրեաց՝ ի միւսմ աւուրց զմեծաւորն՝ ի Ճաշ, և ակուսմբ բարեկամաց ընտրելոց բազում խորհրդով: Հրաւիրեաց և զմանս յազգակացս պատուաւորաց, որոց անուն իսկ մեծապոյս զնոսա ընծայեցուցանէր, և որք կերպասանօքն ևեթ և ընտանի համարձակութեամբ, և խշխաշական արհամարհութեամբ սովորական բանիւք, առանց իսկ մտադրութեան զիրայ մեծամեծաց խօսելով, տպաւորէին և նոքագիւն անդադար զազգուսն մեծութեան և զօրութեան իւրոյ. և պաշտպանեալք ոմանք՝ ի նմանէ՝ յարեալք յազգասոհմ նորա հայրենի ժառանգութեամբ, և ծառայութիւն մշանջենաւոր յանձն առեալ, ծայր՝ ի ծայր՝ ի թանէ մինչև ցմիրգ, չրթամբք, աչօք, լսելիօք, գլխով, և ամենայն մասամբք մարմնոյ և հոգւոյ, զոմանչը ես ասէին նմա. և ոչ ոք կարէր ընդ միտ առնել՝ ասել նմա ոչ:

Ի սեղանի անդ զրոյց՝ ի մէջ էարկ կոմսն զմայրաքաղաքէն Սպանիոյ, յածէր ընդ արտաքս Հռովմայ, և ամենայն ուրեք՝ ի Սաարիտ. խօսէր զարքունեաց, զկոմսին Ալիւարի, զազատանոյն, զընտանեաց քաղաքապետին, զոգորելոյ զուարթից՝ որոց՝ ի զինին էր կացեալ՝ ի միւսմ յառաջնոց կայից շուրջ տեսանելեաց,

և զարքունի պալատանէ՝ զորոյ կարէր տալ
շշնդիւն նկարագիր, զի ձեռասուն ոք կոմսին
Ալեւարի չըջեցուցեալ էր զնա անդ ընդ ամե-
նայն անկիւնս։

Ակումբն առհասարակ կայր ընդերկար 'ի
լուր. և ասպա բաժանեցաւ յերկուս, 'ի զրուց
ցառորել ընդ երեսաս. և ինքն յայնժամ լրա
ցանկալիս յաւել մտերմաբար պատմել մեծա-
ւորի վեղարաւորաց, որ բազմեալ առընթեր՝
Թողոյր նմա խօսել և խօսել անդադար։ Ա՛յլ ա-
սպա յանկարծ զկայ առեալ, չըջեաց նա զնաս,
եթող զՄաւրիս, և յարքունեաց յարքունիս,
յաւագաց յաւագս, եհաս 'ի կարգինալ Պար-
պերինն՝ որ մի էր 'ի վեղարաւորաց, եղբայր
Ա՛ւրբանեայ ութերորդի՝ որ քահանայապե-
տէրն յայնժամ։ Հարկ եղև կոմսին Թողուլ անդ
և այլոց վայրկ մի խօսելոյ, և լսել և խմանալ՝
զի դոյնն և այլք արտաքոյ ակնկրն սրբ մեծա-
մեծք անկողմնաւորքն նմին։ Եւ յետ սակաւ միոյ
յարուցեալ 'ի սեղանոյն՝ հրաւիրեաց զմեծա-
ւորն յայլ սենեակ առանձին։

Իշխանութիւնք կրկին, ալիք երկու, փորձք
քաջահմուտք, կային անդ հանդէպ միմեանց.
կամն փառաւորեալ բազմեցոյց զմեծաւորն
գերապատիւ, նստաւ և ինքն, խօսել կալաւ և
ասէ. « Մ'էրերինս եղած բարեկամութիւնը կը
յորդորէ զնս, խօսել հրամանքիդ հետ բանի
մը վրայ՝ որ երկուքնուս ալ օգտակար է, ու
բանը մէջերնիս լըննցընել՝ առանց ուրիշ ձամ
բայ բռնելու, որ կրնայ... անոր համար սըր-
տանց ամենայն անկեղծութեամբ ըսեմ հրա-

մանքիդ՝ ինչ բանի վրայ է խօսքս. գիտեմ որ
երկու խօսքով մէջը կը գտնանք։ Ըսէ ինծի, ձեր
փէսքարէն ունեցած վանքը՝ Հայր Քրիստափոր
անունով կրօնաւոր մը կայ եղեր »։ —

« Հրամմեր ես », ասէ մեծաւորն։

Եւ կոմսն ասէ. « Շնորք ըրէ, պարզ ըսէ
ինծի բարեկամաբար, ատ կրօնաւորը... ատ
Հայր... զինքը անձամբ չեմ ճանչնար... գի-
տեմ որ ձեր կրօնաւորներուն մէջ չատեր կան
երևելի նախանձաւոր հոգւոց, խոհեմ ու խո-
նարհ. պղտիկութենէս 'ի վեր բարեկամ եղած
եմ ձեր կրօնքին. բայց ամեն չատւոր ընտա-
նեաց մէջ ալ կը գտնուին տաքգլուխ... քանի
մը լսած բաներէս կը գուշակեմ որ ատ Հայր
Քրիստափորը քիչ մը կռուասէր... խոհեմու-
թիւնը պակաս... նկատմունք չունեցող... ան-
տարակոյս հրամանքիդ ալ շատ անգամ մտմը-
տուք տուած է ատ անձը »։

Մեծաւորն խորհելով յանձին, ասէ. « Իմա-
ցայ, բանի մը մէջ խառնուեր է. յանցանքը
նմն է. գիտէի որ ատ օրհնած Քրիստափորը
ամպհոնէ ամպհոն պէտք էր խրկել, չիթողուվ
որ տեղ մը կենայ վեց ամսէն աւելի, մանա-
ւանդ գեղի մը վանք »։ Եւ ապա յաւել. « Ո՛հ,
երեսցընէ կը ցաւիմ որ հրամանքդ ատոնկ
կարծիք ունենաս իր վրայ. իմ գիտցածս՝ Հայր
Քրիստափորը վանքին մէջը բարի օրինակ է,
դուրսն ալ մեծ համբաւ ունի »։

Կոմսն ասէ. « Ազէկ կը հասկընամ որ հրա-
մանքիդ ատոնկ կրկնայ... բայց երբեմն անկեղծ
բարեկամ՝ կարեւոր կը սեպեմ բան մը իմացը-

նել, Թերևս իմացեր ալ ես. ու առանց իմ պար-
տուց դէմ ընելու՝ հրամանքիդ աչքին առջեւը
կը դնեմ քանի մը կարեւի հետեւանքներ... ասկէց
աւելի չեմ կրնար ըսել: Գիտեմ որ առ
Հայր Քրիստափորը պաշտպան կեցեր է անտե-
ղացի մարդու մը... որ հրամանքդ ալ լսած
կըլլաս. անոր որ այնչափ գայթակղութիւն
տալով վտանգաւոր ճեռքէն, ան տես-
կալի օրը տուրբ Մարտինոսի տօնին, այնչափ
խռովութիւններ հանելէն ետքը, Լուրենցոյ
Թրամալեինոյ ըսուած մարդուն »: —

Մեծաւորն ասէ. « Ա՛ին, առ կտորը ինծի
համար ամենեւին նոր է. բայց հրամանքդ գի-
տես որ մեր պաշտօնին պարտքն է, ձամբէ
դուրս ելլողներուն եռանդն պաղեցնել զերծնել
ձամբայ բերելու համար »: —

« Աղեկ է, բայց քանի մը տեսակ բաներ-
ուս մէջ ձամբէ դուրս ելլողները պաշտպա-
նել!... փորձանքաւոր բաներ են, փափուկ
նիւթեր են »: Եւ առ փոխանակ Թռալլոր
փչման, ամբոխաբար զբերնուն ծծեաց օդ այն-
քան՝ որքան ի փչելն սակը էր ընդել. և յաւել.
« Աղեկ երեւցաւ ինծի՝ ակնարկութիւն մը ընել
հրամանքիդ առ բանիս վրայ, որ յանկարծ քա-
ղաքապետը... կրնայ բան մը գրած ըլլալ ի
Հռոմ... չեմ գիտեր... ու հոնկէց գալ ի-
րեն »... —

« Շնորհակալ եմ հրամանքիդ՝ առ ազդարա-
րութեանը համար. բայց առտուց գիտեմ որ՝
առ բանիս վրայ տեղեկութիւն առնելու որ
ըլլան, կը տեսնան որ Հայր Քրիստափորը առ

հրամանքիդ ըսած մարդուն հետ ուրիշ վերա-
բերութիւն մը չունի, անտարակոյս խելքը
գլուխը բերելու կաշխատի. Հայր Քրիստափո-
րը աղէկ կը ճանչնամ »: —

« Արդէն հրամանքդ ինծմէ աղէկ գիտես՝
անոր աշխարհական եղած առեւը ինչպէս մարդ
ըլլալը, իր կարճութեան առեն ըրած բաներն
ալ »: —

« Առուն իր հագուստին փառք են, որ ա-
նանկ մարդը՝ կրօնաւորական զգեստը հագա-
ծին պէս այսչափ փոխուի, ուրիշ մարդ դառ-
նայ. քանի որ Հայր Քրիստափորը առ զգեստը
հագաւ »... —

« Սրտանց կըսեմ ու կուզէի հաւտալ. բայց
երբեմն, ինչպէս որ առակ է, գիշերը գմբէթ երե-
նաւոր էընէր »: —

« Առ առակը հոս չկայարմարիր. բայց հրա-
մանքդ ապատրաստով, լեզուիդ ծայրը եկած ու-
րիշ առակի մը տեղ ըսիր. այսինքն՝ Գայլը մաղէ-
րը կը ֆոխե, բայց իր բնութիւնը չի փոխեր »: —

« Ապացոյցները ունիմ, տեղեկացած եմ »: —

« Թէ որ հրամանքդ ստոյգ գիտես՝ որ ան
կրօնաւորը սխալմունք մը ըրած է, (ամենքս ալ
կրնանք սխալիլ) հնարք մը կըսես ինծի՝ թէ որ
ըսես: Անարժան եմ մեծաւորութեան, բայց
մեծաւոր եմ գաուեր. մեծաւորին պարտքն է
խրատել, ճարը ընել »: —

« Կըսեմ. Հայր Քրիստափորը ան ըսած մար-
դուս չընդունելու պաշտպանութիւնը ընդունի 'ի
զատ, չվայելելու բան մըն ալ կընէ, որ կրնայ...
բայց մէջերնիս ամեն բան մեկտեղ կը յարմար-

ցընենք. ըսել կուզեմ որ առ կրօնաւորը իմ եղբօրորդւոյս Յոաւրիկին հետ կը կռուի »... —

« Ի՞նչ կըսես, առոր վրայ կը ցաւիմ, շատ կը ցաւիմ, երեւցընէ կը ցաւիմ» : —

« Եղբօրորդիս պատանի է, տաքարիւն, կը զգայ ինչ ըլլալը, դրդռուելուս չիգար » : —

« Իմ պարագս ըլլայ՝ որ վիճաբանեմ տեղեկաւնամ առ բանը : Ինչպէս որ ըսի հրամանքիդ, ուանանկ խշնանկ՝ մը հետ կը խօսիմ՝ որ արդաբուքեան հետ աշխարք ալ կը ճանչնայ. ամենքս ալ մարդ ենք, կրնանք սխալիլ.. այնչափ մեկ դիէն՝ որչափ մեկալ դիէն. թէ որ Հայր Փրկաւոպրը սխալեր է » ... —

« Նայէ, Հայր իմ. առ անանկ բան մըն է, ինչպէս ըսի, որ մեչքերնիս պէտք է լըմընցընենք, հոս թաղենք. անանկ բան մըն է, որ շատ խառնելով աւելի դէշ կըլլայ. հրամանքդ ալ գիտես՝ եռևէն գալիքը. առ զարնուելիները, առ ընդհմուքիւնները, փուճ բանէ մը կը սկըսին, առաջ կերթան, կը զայրանան. սկիզբը գոնել ուզելուն եաքը չիգար, ու հազար ուրիշ թռճռաքները դուրս կելլեն. մարելու է, կարելու է, յարգելի Հայր, մարել կարել: Եղբօրորդիս անփորձ է. կրօնաւորն ալ՝ ըսած ինչ համեմատ, դեռ երիտասարդութեան հոգին ու կիրքերը ուշի. մեղի կկրնայ, որ հասակնիս առեր ենք, ղներենք կառավարել: Բարեբախտութեամբ դեռ առենը չէ անցած, դորձը չէ մեծցած, դեռ տեղն է ըսելու Կաց հակառակ դո՛ւ ինքդան: Յարգը կրակին քովէն հեռացընելու է. երբեմն մեկին որ տեղ մը անյարմար է,

ուրիշ տեղ մը խիստ յարմար կրնայ ըլլալ. հրամանքդ կրնաս առ կրօնաւորին յարմար տեղը գտնալ: Ուրիշ յարմար պարագայ մըն ալ կայ. կարծեմ մեկուս մը երեսէն ինկեր է, ու կուզէ հեռանալ անկէց. ուրիշ հեռուկեկ տեղ մը խըրկելով ղինքը, մեկ ճամբորդութեամբ երկու ծառայութիւն կրնենք իրեն, ու առեն բան ինքնիրեն կարգի կը մտնայ, ու մեկուս մը վրատնդ չըլլար » :

Մեծաւորն անգամն 'ի սկզբանէ ճիայր այսը յանկերգ ելից խօսակցութեանն, և առ 'ի մտի. « Գիտէի որ բանը հոս պիտի լմընայ, ձեր սովորութիւնն է. երբոր խելօք կրօնաւորէ մը կը ձանձրանաք կամ կը կասկածիք, առանց նայելու որ իրաւ է սուտ է կասկածնիդ, կուզիք որ մեծաւորը ղինքը անկէց վերցընէ » :

Եւ իբրև դադարեաց կոմսն 'ի խօսելոյ, փըչեաց փչուն երկար, որ էր վերջակէտ իւրոյ աւելի մեծաւորն. « Աղէկ հասկըցայ ինչ որ հրամանքդ կուզես ըսել. բայց դեռ քայլ մը չառած » ... —

« Քայլ է, քայլ չէ, Հայր պատուական, բնական ու սովորական բան մըն է. ու թէ որ առ քայլը չըլլար ու չառուով, շատ անկարգութիւններ ու վայնասուններ պիտի հետևին, առաջուց կըսեմ: Ձընելու բան մը... եղբօրորդիս չեմ կարծեր... քանի որ ես հոս եմ... բայց բանը ան աստիճան հասած է որ, եթէ շուտ մը առջևը չառնենք, չիկարենք մեկէն՝ մեկ ղարնելով, անկարելի է որ դուրս չիպօռակայան առենը եղբօրորդիս մինակ չէ... Մեղսնե-

բուն հետ լինալ ջըլլար, Հայր պատուական, բոլորը մեկտեղ դուրս կը թափին: Հրամանքդ կը տեսնաս ինչ ազգականներ ինչ բարեկամ ներ ունինք »... —

« Երևելի »: —

« Ալեկ կը հասկընաս. ամենքը երակներուն մեջը արիւն ունին, ու աշխըրքս առջին ալ... բան մըն են: Հոս պատուոյ խնդիր կը մնայ, կռիւը ամենուինը կը դառնայ, ան ատենը խաղաղասէր անձինք ալ... ինծի մեծ սրտակոտրութիւն կըլլայ որ հարկաւորութիւմ... ես որ միշտ բարեկամ եղած եմ վեզարաւորաց... ամենուն բարիք ընէնուն համար, ինչպես որ կընեն՝ բարի օրինակ տալով ամենուն, պէտք է որ խռովութիւններէ կռիւներէ ազատ ըլլան, չաբուքին անոնց հետ ալ որ...: Ասկէց 'ի զատ՝ աշխարհական ազգականներ ալ ունին... ու ասանկ պատուոյ վիճելը քիչ մը երկընցած նուն պէս՝ ձիւղեր կարձկեն, կէս աշխարք ոտք կը հանեն: Ես աս օրհնած պաշտօնին մէջ գանուելէ եմ, կը սիպռուիմ որչափ որ ըլլայ՝ պատիւս պահել... քաղաքավարութիւն... ընկերներուս... բանը ամենուինը կըլլայ... մանաւանդ մեկալ ըսած պարագային համար. հրամմանքդ դիտես աս բաները ինչպէս կը դառնան »: —

« Իրաւցընէ, Հայր Քրիսաւփորը՝ քարոզիչ ըլլալով միաքս դրեր էի... ուղղութիւնը ալ կայ ին... բայց հիմայ աս պարագաներուս մէջ վինքը տեղին չարժէը՝ պատժել մը կերևայ, առանց իր յանցանքը յայտնի ըլլալու »: —

« Պատժելու համար չէ, խոհեմ ղուշուն Թեան մը համար վայլածը ընելու համար, ձախորդ պատահմունքներուս առջև առնելուս համար... միաքս կրցայ հասկըցընել »: —

« Հրամանքիդ ու իմ մէջս, կը հասկընամ որ բանը սասկ կը լըմընայ. բայց ինչպէս որ բանը հրամանքիդ հասեր է, ինծի անկարելի կերեւայ որ ձայնը դուրս չիտարածուի: Ամեն տեղ բարկկցողներ կան, բան խառնողներ կան, դուռնէ չարամիտ հետաքրքրներ կան, որոնք անխելք ախորժ մը կը ղգան՝ որ մեծերը կրծնաւորներուս հետ կրնան, կը վնասուեն, կը մանաբերեն, բերաննուն կուտան...: Ամեն մարդ կուղէ իր պատիւը պահել. իսկ ես որ մեծաւոր դըռնուեր եմ անարժանապէս, մանաւոր կերպով պարտական եմ... կրծնքես պատիւը... իմս չէ... աւանդ մըն է՝ որուն...: Հրամանքիդ եղբօրդին որովհետև այդչափ այլայլեր է, ինչպէս որ ըսիր, կրնայ հաստացում մը սեպել երեն, ու կրնայ... չեմ ըսեր պարծենալ, յաղթանակել, բայց »... —

« Ի՞նչ կը խօսիս, Հայր պատուական. իմ եղբօրդիս երևելի ասպետներէն մեկն է, ամենուն առջին իր պարտուցը ու ասպնջականին պատիւը ունի, բայց իմ առջև ոտայ մըն է. իմ հրամանիս դուրս՝ ոչ աւելի և ոչ պակաս բան մը կընէ: Ա՛ա ալ ըսեմ, եղբօրդիս և ոչ կիմանայ, ինչ պարագաներ են երեն իմացընելու. երկուքնուս մէջը անցած բարեկամութիւն եղած բան է, մէջերնիս կը մնայ. աս կողմանէ մի հոգար, սորված եմ ըսելու »: Եւ վեր ալ միւսանգամ, յաւելը.

« Իսկ բերնեբունն տուողները ինչ կուզես որ ըսեն. կրօնաւորի մը քաղաքեն քաղաք քարոզ տալու համար երթալը սովորական բան մըն է: Մէյմըն ալ՝ մենք որ եղածը կը տեսնանք, ուր ըլլալիքը կը դուշակենք, ուր մեղն կ'կենայ... ուր ըլլնելուն խօսածին պէտք չէ որ նայինք »: —

« Բայց անոնց առջևը առնելու համար՝ պէտք է որ եղբօրորդիդ, ցոյց մը յայտնի նշան մը տայ իր բարեկամութեանը, իր յարգանացը... չէ թէ մեղի համար, այլ հագած լաթերնուս »:... —

« Հապա՛, հապա՛, տակաւին կրաւունք է... բայց հարկաւոր ալ չէ, դիտեմ որ եղբօրորդիս ձեր կրօնաւորները միշտ սիրով կընդունի, թէ իր յօժարութենէն, և թէ տանը սովորութենէն. անոնցմէ՛ի զատ՝ ինծի ալ ախորժելի բան մը ընելու համար. բայց աս դիպուածս մէջ սովորականէն դուրս բան մըն ալ կը վայլէ. ինծի Թող տուր, Հայր պատուական. կը հրամմեմ երթեն... այս ինչն պէտք է որ յորդորեմ զինքը խոհեմութեամբ, որպէս զի մէջերնիս անցածը չմնանայ. ջրլայ թէ վերը չէ. զած տեղը ապերանի գնենք: Իսկ ինչ որ որոշելիք, որչափ շուտ որ ըլլուի՝ այնչափ աղէկ կըլլայ. Թէ որ հեռուկէկ տեղ մը յաջողի... ամեն առնի վերցընելու համար »... —

« Ձիւղ առնին քարոզիչ մը կուզեն Ռիմինիին, Թերևս առանց ուրիշ պատճառի ալ՝ անոր վրայ դրած կըլլայի աչքս »: —

« Շատ յարմար առեն, շատ յարմար. ուրեմն երթ »... —

« Երբոր մեյմը ըլլուի պիտոր շուտ կընեմ, կը վուրթամ»: —

« Շուտ, շուտ, Հայր պատուական. ալ աղէկ է այսօր քան վաղը »: Եւ՛ի յառնելն ևս՝ ոչ դադարէր յասելոյ « Շուտ, շուտ, Թէ որ կարենամ բան մը ձարել, ես կամ ընտանիքս առ բարի կրօնաւորներուն »... —

Յայնժամ յարուցեալ և մեծաւորն, և գնալով զհետ յաղթականին, ասէր. « Փորձով կը ճանչնանք ձեր ընտանեացը բարի սիրտը »:

Եւ կոմսն զկայ առեալ, ասէ. « Հայր պատուական, կայծ մը մարեցինք՝ որ կրնար մեծ կրակ մը հանել. բարեսէր բարեկամաց մէջ երկու խօսքով մեծ մեծ բաներ կը լըմընան »:

Եւ հասեալ՛ի դուռն սենեկին, եբայ զսյն, և եմոյծ զնա անհրաժեշտ նախ քան զինքն. մտին՛ի միւս սենեակն, և խառնեցան ընդ ամենայն:

Ձիղն մեծ, արուեստ բաղում, և ձարտարախօսութիւն՛ի կիր էարկ կոմսն՛ի յաջողութիւն երթին. և արդիւնքն եղեն համեմատք. խօսակցութեամբն այնուհետև, զոր պատմեցաք, յաջողեցաւ յղել մեծաւորին զՀայրն Քրիստափոր. և ուղղոյ եղև նա հետ՛ի Փէսքարեն նեան վանացն՛ի Ռիմինի, ՛ի ձեմ տարաշխարհիկ:

Ի միում աւուրց ընդ երեկս եհաս՛ի Փէսքարենեան վանս մի՛ի վերադարձոյ մենաստանին՝ որ՛ի Միլան, բերելով առ վանահայրն ծրար մեծ նամականեաց. և էր՛ի ծրարին գիր հնազանդութեան՝ գնալ Հայր Քրիստափորի՛ի Ռիմինի, ՛ի քառասնորդական քարոզութիւն: Եւ առ վանահայրն էին հրահանգք յորդ

1 16848-58
1002
5455

գործել զնա, թողուլ ՚ի բաց զամենայն յանձնառու երից սկսեալոց անդ ՚ի Փիլաքարէն, մի և ունել անդ ընդ ուժով թղթակցութիւն. և ուղեկից ընդ իւր առնուլ զթղթաբերն: Վասն նահապետն չտասց ինչ նմա յերեկոյ. այլ ՚ի վաղիւ անդր առաւօտու կոչեցեալ զնա առ ինքն, եցոյց նմա զերկրն հնադանդութեան, և ասաց առնուլ զզամբիղն, զցուլ, զթաշկինակ և զգօտի. և ընդ ուղեկիցն՝ զոր առաջի առնէր նմա, ուղեւոյ լինել անյապաղ:

Մարթ է ՚ի միա առնուլ որպիսի հարուածեղև այն նմա. յուշ եղեն անդէն Ինկնպոյ, Լուչիա և Ագնէս, գոչեաց ՚ի սրտէ. «Տէր Աստուած, ինչ պիտոյ ընձեն ան խեղճերը, երբոր ես հոս ջըլլամ»: Այլ եսկսն զաչս յերկինս ամբարձեալ, և զղջացեալ ընդ թերահաւատութիւն իւր՝ որով կարծէր պիտանի իմիք գոլ, եդ զձեռս խաչանիշ ՚ի կուրծս, և խոնարհեցոյց զգլուխ իւր առաջի վանահօրն: Յայնժամ վանահօրն ձգեալ զնա մեհուսի, զերկոցն նմա զոյլ ևս պատուէրս ՚ի ձև յորգորանաց. և նոքա երթեալ ՚ի խուղ իւր, էառ զզամբիղն, եդ ՚ի նմա զժամագիրս, զբառատնորդական քարտուղն, զՏայն Թողութեան, և ածեալ զգօտին մէջերկեղն ընդ մէջ իւր, հրաժարեաց ՚ի կրօնակից եղբարցն՝ որք էին ՚ի մենաստանին. և յետ ամենայնի ընկալեալ զօրհնութիւն վանահօրն, եւ ընդ ուղեկիցն ՚ի ճանապարհ՝ գնալ ուր հրամայեցաւն:

Այսպէս՝ զի Ռոսրիկ ևս քան զևս յամառեալ ածել ՚ի կատար զանօրէնն ձեռնարկ իւր,

՚ի մոկ եդեալ էր խնդրել զօգնութիւն առն ուրուսմն ահաւասիկ. զորոյ չկարեմք ասել ՚ի կարճ իսկ ոչ զանուանն, ոչ զմականուն, և ոչ զնշածարատաց անուն. և այն առաւել զարմանալի, զի ՚ի բաղում գիրս գտանեմք զնա յիշատակեալ: Զի այն այն՝ զորմէ խօսին՝ իցէ նոյն ինքն, աներկբայելի առնեն գործք նորա յարմնման վկայագրեալք. այլ պատմիչն մեր ամենայն ջանիւք խոյս ատյ յանուանելոյ զնա, որպէս յայլեցեմանէ գրչին և ձեռին: Եւ Ուիւոլա ՚ի վարս Կարդինալ Պօրրոմեայ ստիպեալ խօսել զնմանէ, կոչէ զնա Ալեքսանդրոս և Ալեքզանդր. ոչ այլ ինչ յաւելեալ: Եւ Ուիլսոնն ՚ի Հայրենական իւրում պատմութեան առնելով երկաբադսն զնմանէ յիշատակ, կոչէ զնա միշտ՝ ան, աս, նա, այն այն, այն երեսելի: Եւ գեղեցկի իւրոյն լատինաբանութեամբ, զոր ըստ կարի յեզից ՚ի մերս բարբառ, ասէ. Պապիզիոյ ասպ զանց ուրուսմն, որ ընդ առաջինս երևելեալոց փաղաքին: Ինալիէր սա ՚ի գեղջ ուրէ յերը սահմանոյ պերուԼեան. և անդ ՚ի յետս եղեալ անդ յապահովել՝ ծաղր առնէր զպետանս և զբարս, զսովագանի և զբերուխիան. վարէր կեանս ինքեան ապար բոլորովին, ապաստան ափսոխանաց, և ինքն ևս երբեմն ափսրելալ, և ապա գոյեալ աներկնաւ՝ որպէս ըն ալ ինչ լարագործեալ: Ի սմին միաժամանակ ուրեք ուրեք ածից և այլ ինչ ինչ ՚ի հաստատութիւն և ՚ի լուսաբանութիւն բանից մերոյ սմին պատմագրի, ընդ որում միտիցուք յառաջ:

Գործել ընդդէմ օրինաց, կամ հրամանի ոք և է իշխանութեան, բազմիւ տեղ և գաւառս յերս տլոց, ոչ առ այլ ինչ բայց ՚ի հրամայել,

ահարկու ամենեցուն լինել, ունել իւր օգնա-
կան զօդնականեալս երբեմն յայլոց, այսօրիկ
եին յամենայն ժամանակի իղձք նորա: Ի պա-
տանեկան սիոց անտի յաղմուկս և 'ի ջարիս
ձեռներիցութեան և ոսոխութեան, 'ի տեսիլ
այնքանեաց բռնաւորաց, կրեր խառն 'ի խուռն
յանձին զայրոյթ և նախանձ անժոյժ: Ոչ
կորուսանէր նա զպատեհութիւն, այլ մանա-
ւանդ խնդրէր, առ 'ի գալ 'ի վէդ ընդ ե-
րեսեսս յիւրումն պայմանի, առ 'ի դլել զնո-
քօք, առ 'ի փորձ մատչել ընդ նոսա, 'ի չափու
կացուցանել զնոսա, կամ ստիպել 'ի խնդիր
բարեկամութեան իւրոյ: Մեծութեամբք և
ապատաւորաց բաղմութեամբ 'ի վեր քան զա-
ռաւելագոյնս, և քան զամենեսին խակ Թեղեա
'ի յանդգնութեան և յանկողդող հաստա-
տութեան, հարկեցուցանէր զբազումս՝ տեղի
տալ յոսոխելոյ ընդ իւր, յաղթահարէր զբա-
զումս, առնէր իւր բարեկամ զբազումս, ոչ
հաւասարս իւր, այլ ըստ հաճոյս, բարեկամս
հպատակս իւր, որ կացցեն ընդ ձեռամբ իւ-
րով և 'ի ձախմէ: Սակայն և ինքն ամենե-
ցուն նոցա լինէր գործակից և գործի. և ոչ նո-
քա վերջանային 'ի խնդրելոյ զօդնութիւն նո-
ցա 'ի ձգտունս իւրեանց, և Թուէր նմա կորու-
սանել զհամբաւ զօրութեան իւրոյ և ձեռնի-
թափ լինել 'ի սկսելոցն, եթէ ոչ լինէր նոցա
ձեռնտու: Եւ այնչափ ինչ վասն իւր և վասն
այլոց անօրինեցաւ, զի ոչ անուն իւր, ոչ ազ-
գատոհմ, ոչ բարեկամք, և ոչ յանդգնութիւն
զօրեցին ընդդէմ գատապարտութեան իւրոյ

յաքսոր, և ընդդէմ ատելութեան հզօրաց. և
հարկ եղև նմա՝ տեղի տալ եշանել 'ի սահմա-
նաց տէրութեան: Յայս Թուէ տեղիս պատ-
մեաշն 'ի Ռիփամինթեայ գեալ նշանաւոր, զի
ասէ. Յերբեմն իւրոմ յաքսոր՝ այսպէսք 'ի կէր էա-
ծածխունին, տիեծածխունին, և երկիւղ յիսուրբեալ էանց
ընդ մէջ փաղաքին, բարեկ որսակոչ վէնք, 'ի հնչէան ֆո-
ղոյ. և առ պալատամբ ատագանոյն, էք պահապանաց ա-
ծել առ փաղաքապէսն ղերոյ ընծայանալից: Եւ արտա-
քուստ իսկ ոչ գադարէր 'ի գործակցութենէ և
'ի թղթակցութենէ ընդ բարեկամս իւր այնպէ-
սիս, որ հանապազորդէին ծածկաբար, ըստ
ձիշտ թարգմանութեան բառից Ռիփամին-
թեայ, 'ի համախոհութիւն անփնտրութեանց և լարեաց:
Մանաւանդ, որպէս կարծի, գաւակից էր
յայնժամ ընդ բարձրագոյն որերոյ 'ի նորանոր
ձեռնարկս սոսկալիս, զորովք խորհրդաւոր լինի
համառօտիւ անցանէ նոյն մատենագիրն, յա-
ւելեր. Ոմանք յարտօնոյ իսկ իւլիանոյ վերջին պէս
գործակցութեամբ նորա 'ի սպանութիւնս ծանուցան, և ոչ
դոն որբէ յղէին առ նա զբո՝ գինուորել ընդ հրամա-
նաւ նորա:

Ապա զերծեալ 'ի գատապարտութենէ ար-
տաքսահմանութեան, յետ որջափ ժամանակի՝
ոչ է գիտելի, և կամ ապաստանեալ 'ի յան-
գղնութիւն իւր, խորհուրդ կալաւ գառնալ 'ի
հայրենիս, որպէս և գարձաւ իսկ, ոչ 'ի Միլան,
այլ յամրոց ուրեք սահմանակից Պերգամայ՝
որ էր յայնժամ ընդ վէնետոք, որպէս ամենե-
ցուն է յայտ: Եւ յաւելու Ռիփամինթի. Ամ-
բոյն այն էր որպէս սպեան վճռոյ սպանութեան. ծառայից

Նոքա գլխապարիսի գոչէր էր գլխապէն զայլս, ոչ խոհա-
ւէր և ոչ խոհեակ ապաւէն էին ի մարդասպանութենէն,
մանիպուդն իսկ ընդդիմակացն չէին։ Բայց ի գե-
ղեցիկ պարուհի ասսի ապատաւորաց՝ էր նորա,
որպէս հաստատակ նոյն մատենագիրն, և միւս
այլ գոմնդ հպատակաց՝ որք ցան և ցիր յեր-
կաքանչիւր սահմանս, յորոց եղերս բնակեր,
կային որպէս ի պահս, պատրաստք ի կատա-
րել զպատուէրս նորա։

Ամենեքեան, որք շուրջ ի բաց զդիւղիւն բը-
նակէին բռնաւորքն, բարեկամք կամ ընտանիք
էին նորոյ բռնաւորին, յայլ և այլ դէպս հար-
կաւորեալք։ Զի որոց նախ զիորձ առեալ էր
հակառակ կալոյ նմա, այնպէս չարաչար լեալ
էին էք հակառակութենան, զի ոչ ևս ոք ի
նոցանէ իշխէր փորձ փորձել։ Եւ ոչ ոք ան-
դարտ յերս իւրեանց պարապէին, կարէին ա-
զատք ի նմանէ կալ ինքնօրէն. հասանէր առ
նոսա պատուէր ի նմանէ՝ մի առնել զայս ինչ
կամ զայն, մի նեղել զայս ոք կամ զայն պար-
տապան, և այլ հանդոյն սոցին պատուէրք.
հարկ էր հաւանիլ կամ ժխտել։ Ի գնալ առ
նա միոյ ի կողմանց՝ սպաս մատուցանել նմա
հպատակօրէն, և յանձն առնել ինչ նմա, գոտա-
նէր միւս կողմն ի գժնդակ հարկի՝ ընդունել
զվճիռ նորա, կամ ի մերժելն՝ լինել նմա թըշ-
նամի։ Բազումք յանիրաւացն գիմէին առ նա,
յաւիշտակիլ ի ձեռն նորա զիրաւունս. և որոց
էին իսկ իրաւունք, նախաժամանելն գրաւել
զպաշտպանութիւն նորա, և փակէին ընդդէմ
ոսոխաց զմուտս, երկաքանչիւրոց անկեալ ընդ-

լշխանութեամբ նորա։ Դէպ եղև երբեմն զի
ոք ի տիարաց ընկճեալ ի հզօրէ գիմեաց առ
նա. և նա պաշտպան կացեալ տիարին, ստի-
պեաց զհզօրն դադարել ի հարստահարու-
թենէ, առնել փոխարէն չարեացն, և խնդրել
թողութիւն ի հարստահարելոյն. և ի չառ-
նուլ նորա յանձն, եկ ի վերայ նորա պատե-
րազմաւ, հարկեցոյց զնա մեկնել ի բաց ուստի
բռնակալէրն, և էառ ի նմանէ տոյժ և վրէժ
ահագին։ Ի դէպս այսպիսիս օրինաբանէր առ
պայր մի անուն նորա ահարկու և առեալ. զի
թէպէտ և ոչ արդարութեամբ, այլ որպիսի և
իցէ հնարիւք առնէր զհատուցումն, զոր չէր
մարթ յայնժամ ընդունել, ոչ ի ձեռն այլոյ
ուրուք զօրութեան, և ոչ առեներից։ Յաճախ
ևս, և գրեթէ միշտ, զօրութիւն նորա էր գոր-
ծի անիրաւ կամաց, անգութ վրէժխնդրու-
թեանց, և բուռն ախորժակաց. և այսքանիկ
պէսպէս արգասիք զօրութեան նորա տպաւո-
րէին ի միտս ամենեցուն վարկ մեծ կարելոյ
նորա կամել և գործել ընդդէմ իրաւանց և
անիրաւութեան, որ առեալ արգելս արկանէն
կամաց, և ընկրկեն զմարդիկ։

Համբաւ բռնաւորաց սովորականաց ամ-
փե-
փեր յաճախ յանձուկ երկրի, ուր ձախագոյնք
և հզօրագոյնք բնակէին. և երկիր ամենայն բնա-
կեալ ընդ միով բռնաւորաւ՝ այնպէս յար և նը-
ման էր այլոց, զի չէին պատճառք բնակեցոյ մի-
ոյն խորհելոյ զայլոց։ Այլ համբաւ մերոյս բռնա-
ւորի ի բազմաց հեռի յամենայն կողմանս երկ-
րին Միլանոյ տարածեալ էր, և ամենայն ու-

բեք պատմէին գործք նորա, և անուն նորա նը-
շանակէր նորանշան ինչ և անզերծանելի: Եր-
կիւղ ունէին նորա յամենայն աեղիս պաշտօ-
նեայս և սրիկայս, առնէր զնա ամենայն ուրեք
աճարիւս, առ կասկածանաց ևեթ. զի ո՞վ խոս-
տովանէր յայտնապէս զպաշտօն այնպիսի:
Մարթ էր ամենայն ումեք բռնաւորի գոլ ընդ
նմա դաշնակից, և ամենայն չարագործի գոլ՝ի
պաշտօնեից նորա. անստուգութիւնն իսկ այն
յաճախէր զնաւակածանս, և առաւելոյր զերկիւղ. ամենայն ուրեք, ուր երևէր մի՝ի Ֆա-
ջայ անծանօթից և յառաւել խոժոռադիմաց,
և յամենայն դէպս եղեռանց՝ ուր չէր մարթ
գիտել կամ գուշակել զեղեռնագործն, անե-
ծանէր անուն նորա. զոր առ պատմագրացն
մերոց տարապայման զգուշութեան, զի մի այլ
ինչ ասացից, ատելիմ կոչել անանուն:

Յամրոցէ նորա ցապարանս Ռոտրիկեայ ոչ
ինչ աւելի էր քան զեօթն մղոն: Ռոտրիկ այն
ինչ ախրացեալ և բռնացեալ՝ խորհեցաւ զի չկա-
րէր վարել զբռնակալութիւն, բնակեալ մերձ
առ այնպիսի այր, առանց հակառակելոյ կամ
միաբանելոյ ընդ նմա. վասն որոյ մտացոյց նմա
զանձն, և բարեկամացեալ ըստ օրինակի այլոց
ամենեցուն բռնաւորաց, ձեռն էտ նմա՝ի բա-
զում իրս, որպէս պատմագիրն ասէ՝ առանց
յաւելոյ այլ ինչ, և ընկալաւ՝ի նմանէ խոս-
տումն փոխարէն ձեռնտուութեան յամենայն
դէպս: Բայց Ռոտրիկ զանազան լինէր ծածկել զբարեկամութիւն իւր ընդ նմա, կամ գէթ
չցուցանել քանի անձուկ և չինչ իրս էր բա-

րեկամութիւն իւրեանց: Կամէր և ինքն քննա-
կալել, այլ ոչ վայրենաբար. առնուլ՝ի գործի
ղբռնաւորութիւն, այլ ոչ՝ի կէտ նպատակի.
ազատօրէն կալ՝ի քաղաքի, վայելել՝ի հան-
գիստ՝ի ղբօսանս՝ի պատիւ քաղաքական կե-
նաց. առ որ կարևոր էր ակնածութիւնս ինչ՝ի
կիր արկանել, պահել զարտք ազգատոհմին,
տածել ղբարեկամութիւն ընդ աւագորեաքն,
ունել վկիւռ արդարութեան՝ի ձեռին՝ առ՝ի
տալ միտել ըստ սիտոյից լինքն կոյս, կամ ան-
տես առնել զայն, կամ տալ ևս երբեմն՝ի
գլուխ՝ եթէ օգնէր առաւել քան զբռնութիւն
զնուաց: Արդ մտերմութիւն, կամ մանաւանդ
ընկերչակութիւն ընդ այնպիսումն՝ որ յայտ-
նապէս թշնամին էր տաճեական զօրութեան՝
յանցաւոր վնաս կացուցանէր, մանաւանդ ա-
ռաջի հօրեղբօր իւրոյ, բայց այնչափ ինչ բա-
րեկամութիւն անծածկելի ընդ առն՝ որոյ բազ-
մավաստագ էր թշնամութիւն, համարէր ան-
հրաժեշտ, և հարկին կարէր անբասիր առնել
զայն. զի որում անկ է զառաջս առնուլ չա-
րեաց, և չկամի և չգտանէ հնարս առ այն, հա-
ւանի զի ամենայն ոք արկցէ իւրովի հնարս՝ի
կիր. և եթէ չհաւանի, փակէ զմի յաչաց առ
այն:

Ի միում առաւօտուց հեծաւ Ռոտրիկ յորս,
ուղեկցութեամբ Ֆաջայ հեռիուստայ. կրկղոյ
դնայր առ ասպանդակաւ, չորեքին այլք զհետ
երիվարին, դէմ եդեալ յամրոց անանուն բըռ-
նաւորին:

ԳԼՈՒԽ Ի.

Յանձուկ և ՚ի նոյեմբատուեր հովտի ուրեք ամբառնայր ամրոց բռնաւորին, ՚ի կատար միոյ ՚ի բլրոյ՝ որ կարկառի արտաքս ՚ի շղթայաշար լերանց ապառաժից, կից ՚ի նոսին՝ թէ զատուցեալ, չէ գիտելի վասն դիզադէզ ժայռից և վախից, որոյց և խոռոչից, որ երկայնին երկուսեքը: Ընդ կողմն ևեթ՝ որ հայի ՚ի հովիտն մտրթի է վերելակէզ, ընդ զառ ՚ի վեր գժուարին՝ այլ անընդհատ, ուշնելով արօտ ՚ի սարահարթի, և անդաստանս առ ստորոտով, վանկունս ցան և ցիր, և յատակ քարուտ՝ ընդ որ հոսէ ըստ եղանակաց հեղեղատ, որ անջրպետէր յայնժամ զերկոսին սահմանս: Ա՛ս հանդիպակայ բլրովք, որ գոգցեա իմն որմն յայնմ կուսէ վէմովիան, է ստորոտ անձուկ մշակեալ՝ այլ անսի և անդր քարինք հեղեղատի, բեկորք վէմց և ապառաժք անկոխք և մերկք, սիզաբոյս ևեթ ՚ի չեղքուածս ուրեք բերելով:

Ի բարձուէ ամրոցին բռնաւորն, որպէս արծուի յարիւնաթաթաւ բռնոյն, դիտէր շուրջ ՚ի բաց ուր ոք մարդկեղէն կարէին կոխել, և յեռանկը ղոք քան զնկն ՚ի վեր։ Շուրջ աչքը զաչս, կայր ՚ի զնին ընդ զառ ՚ի վայրս, ընդ հովիտն, և ընդ շաւիղս վերելից։ Ոչղին՝ որ պատ ՚ի պատ ելանէր ՚ի բնակարանն սոսկալի, երևէր աչաց ՚ի վեր անդր կացելոց որպէս տուն օձաձև սողեալ։ Մարթ էր բռնաւորին ընդ պատուհանս և ընդ երկաթի վանդակս թուել անաչխատ ղտանփոխս եկաւորի, և բնաբերս ուղղել զէն ընդգէմ, և գումարտակաւ Քաղացն Լեռոյց ամրապահաց՝ որ ՚ի բարձու անդ կային՝ կարէր զոր բաղում տապատս արկանել ընդ ուղին, և Թաւալգլորը զբաղում ՚ի վայր գահավիժել, ոչ Թողեալ ումեք հասանել ՚ի վեր։ Ոչ ոք ՚ի վեր անդր, այլ և ոչ ՚ի հովիտն կարէր կոխել անտես ՚ի նոցանէ։ Իսկ ՚ի Թշնամեաց ոք եթէ նշմարէր երևել անդ, որպէս լրտես Թշնամի հասեալ ՚ի բանակեալ՝ պատուհասակոծ լինէր։ Պատմէին անցք բազմազեպք անցեալք ընդ այնոսիկ, որոց երբեմն փորձ փորձեալ էր անդ. այլ վաղեմի պատմութիւնք էին, և ոչ ոք ի ներկայ սերնդոց կիշէր տեսեալ զոք անդ կենդանի կամ դիակնացեալ։

Ա.յսպէս նկարագրէ պատմիչն անանուն զամրոցն զայն, այլ լռէ զանուն նորին, և ոչ զձնանպարհէն ասէ ինչ, առ ՚ի չտալ ուժեք գուշակել անոր զայն։ Վասն որոյ և ոչ զուղիւորութիւն Ռոտրիկեայ պատմեալ՝ ցուցանէ զնա յանկարծ ՚ի հովտի անդ առ ստորոտով բլրոցն,

՚ի սկիզբն զառ ՚ի վեր կամակոր չտեղն։ Էր անդ տուն մի ՚ի վերին երեսս կարծեցեալ կապել, այլ մարթ էր կոչել զայն պահակ զօրանիսա. կախեալ կայր զդրամբ նորին տախտակ հնոտի, նկարեալ երկուստեք արեգակն Ճառագայթաձև. այլ ՚ի հատարակաց բարբառ՝ որ երբեմն զբնիկ անուանս ՚ի կիր արկեալ, և երբեմն փոփոխ զայնոսիկ ըստ կամս, կոչէր այն Զաբագիէք։

Յոաննաձայն երիվարի՝ որ գայր մերձենայր, երևեցաւ ՚ի սեամս անդ պատանի մի զինեալ, որպէս ոք ՚ի Սարակինոց. և ակնարկեալ ՚ի նա՝ եմուտ ՚ի նեղքս, ազդ առնել երից զինուորաց՝ որ խաղային ՚ի Թուղթս աղտեղս, և ՚ի ձև կղմընտեր գալարեալս։ Որ գլխաւորն ՚ի նոցա նէ Թուէր՝ յարուցեալ գնաց ՚ի դուռնն, և ծանուցեալ զնա բարեկամ տեառն իւրոյ՝ ողջունեաց զնա մեծարանօք։ Նորա ընկալեալ զուզջոյնն քաղցրութեամբ, եհարց Թէ էր իշխանն յամրոցին, և լուեալ զի էր, էջ ՚ի ձիոյն, և ետ զանձս միւսմ ՚ի սպասաւորաց իւրոց՝ որ կոչէր Ո.ղջոյիգ։ Ի բաց ետ զհրամանն միւսմ՝ որ կոչէր Լեռնաբնակ, իբր առ ՚ի Թեթևանալ յումեքէ բեռանէն առ ՚ի գիւրաւ վերելակել, այլ իսկապէս՝ զի էր հրամանն մնայէրոյ անդր զինուք։ Հանեալ ապա ՚ի քսակէն պերճնկս քանի մի, ետ երկորգին ՚ի Թիկնապահաց՝ որ կոչէր Դաբանակալ, և ասէ. «Գնաք հոս սպասեցէք ինչուան որ դառնամ, ասս կարճներուն հետ քիչ մը ուրախութիւն ընեմք»։ Եւ հանեալ քօշնաձև ոսկիս եդ ՚ի ձեռս գլխաւորին վասն իւր և իւ-

բայցն. և առեալ ընդ ևւր զԿրիզոյ, որ և նա
'ի բաց եդեալ էր զղէնս, գնայր հեռի ընդ զառ
'ի վերն: Յայնմ վայրի Ֆաջքն երեքին վերոյհ
շեալք, և չորրորդն՝ որ կոչէր Աղիայոյ, (ա
նուանք անմոռաց յիշատակելիք,) կային ընդ
երեսին պահակապանս, և ընդ պատանին 'ի
դեղեցիկ վարժարանի անդ կրթեալ:

Մինս այլ 'ի Ֆաջացն Թիկնապահաց ան
անուն բռնաւորին, հասեալ ցհետ Ռոտրիկեայ,
և հայեցեալ ծանեաւ զնա, և գնայր ընդ նմա,
զերծուցանել զնա 'ի ձանձրութենէ տալոյ հա
մար զանձնէ՝ որոյ հանդիպելին նմա անծա
նօթք: Եւ հասեալ յամրոց անդր, մուծաւ 'ի
նեբքս, Թողեալ առ դրան զԿրիզոյ: Էանց ընդ
համակոր ուղի մթին, և ընդ սրահս շուրջ պա
տեալս 'ի հրազենուց 'ի սուսերաց և 'ի նիզա
կաց, ուր կային Ֆաջք 'ի պահ՝ մեն մի յիւրա
քանչիւր սրահի, և սուղ ինչ սպասեալ, եմուտ
ապա ուր կայր բռնաւորն անանուն: Որոյ է
կեալ ընդ առաջ, ընկալաւ զողջոյն նորա՝ զնեհ
լով զձեռան և զդէմս, որպէս սովոր էր առնել
ամենեցուն, ունակացեալ առնել զայն և յան
զգաստից՝ որոց գայլն նմա յայց, ևս և ծերուհ
նեաց և փորձելոց բարեկամաց: Եւ էր նա հըս
կայաձև, խորշոմերես, Թուխ, ճաղատ, և սա
կաւ ինչ ծնացորդք հերացն սպիտակք. 'ի նախ
կին տեսիլ դիմացն երևէր նա անցեալ զնա
Թըմամենիւք, այլ կերպ նորա և շարժուած,
սկզբ կերպարանացն կուռ, աչք եռանդունք, և
ամենայն ինչ ցուցանէին 'ի նմա զկորով մարմնոյ
և ոգւոյ՝ անսովոր 'ի պատանի իսկ ոք:

Ռոտրիկ յայտ արար նմա վասն որոյ գայլն,
'ի խորհրդակցութիւն և 'ի խնդիր ձեռնտուու
Թեան 'ի գործ, յորմէ ձեռնթափ լինել ոչ նե
րէր նմա պատիւ իւր, և ոչ վայրապար. և
պատմեաց նմա զերեսունաւորն ձեռնարկ: Բըռ
նաւորն, որ վաղ իսկ գիտէր ինչ զայնմանէ՝
այլ խառն 'ի խուռն, ունկնդիր լինէր մտադիւ
րութեամբ, զի ցանկայր լսել զայսպիսիս, մա
նաւանդ զի էր անդ Հօրն Քրիստափորի անուն
ծանօթ և առեալ, յայտնի ոսոխի բռնաւորաց
բանիւ, և գործով իսկ՝ ուր էրն ձեռնհաս:
Ռոտրիկ գիտելով ընդ որպիսում ումեք խօ
սէրն, սկսաւ կուտակել զդժուարութիւնս
գործոյն, զհեռաւորութիւն տեղւոյն, զարգե
լանսն, և զտիկնոջն զօրութիւն... Ի լսել
բռնաւորին զայն, գոգցեաւ ինն գիւահարեալ,
կրճատեաց զբանս նորա և ասէ. « Ինծի Թող,
գիտեմ ընելիքս »: Եւ առեալ զանուն հէք
աղջկանն, 'ի հրաժեշտ կացոյց զՌոտրիկ, և
ասէ. « Ինչ մը առենէն կխմայընեմ քեզի ընե
լիքդ. »:

Եթէ ընթերցողին չիցէ մոռացեալ զվատ
շուէրն Էֆիալտոյ, որ բնակէրն առընթեր կու
սատանին՝ ուր պատասպարեալն էր Լուչիա, գի
տացէ ասա՝ զի մի 'ի սերտ և 'ի մտերիմ գոր
ծակցաց անօրէնն բռնաւորին էր նա ինքն. և
վասն այսորիկ անդէն և անդ առանց ընդ բանս
ինչ ածելոյ էա Ռոտրիկեայ զնոսատուին զայն.
այլ ապա ընդ մեկնել նորա 'ի բաց, չատացեալ
Թէ ստրկացաւ ընդ նոսատուին իւր, այլ զբարե
գաւ ընդ նա ինքն ընդ Ռոտրիկ: Վաղ իսկ սկը

սեալ էր, թէ ոչ խղճել՝ այլ գարշել ՚ի չարեաց
իւրոց. գործեցեալքն յայնժամ ՚ի նմանէ, թէ
ոչ առնչէին զնխրճմտաց նորա՝ այլ յանդիման
լինէին նմա ժահադէմք և տարապայմանք.
Թուէր նմա բեռն ՚ի վերայ բեռին յաւելուլ
զանձամբ. դժկամակութիւնն զգացեալ ՚ի նը-
մանէ ՚ի գործելն զչարիս, և անչէատակ լեալ
գրեթէ ՚ի սպառ զգալն ևս լինելոյ նմա յայնժամ:
Աչքն պատկեր երկարատև կենաց, և կորովի
զօրութեան զգայուն, ընդվին վնա ՚ի սկզբան
յանդուգն վատահութեամբ. իսկ յայնժամ
խորհուրդ ապառնոյն ծանրատաղտուկ ևս առ-
նէր զանցելոյն չիշատակ. ծերութիւն, մահ,
և ապա:.. Պատկեր մահուն՝ որ ՚ի հասեալ վը-
ատնգիլ, ՚ի ձակատ Թշնամւոյ, սովոր էր զօրա-
ցուցանել զնա, և ազդել ՚ի նա զայրոյթ և ա-
բիւրութիւն, նոյն ՚ի լուսութեան գնչերոյ, յան-
քոյթ ամրոցին երևեալ նմա, ընդոր վնա աղ-
հաւրօք: Զէր մահն այն հանգոյն ապառնացե-
ալոյն յոտնից՝ որ և լինէր ե մահացու, և չկարէր
հզօրագոյն զինուք և պատրաստագոյն բազկաւ
՚ի վերայ ածել. մահն այն լինքնեակ եկաւորէն
՚ի ներքուստ, և հեռաւոր իսկ՝ վայրկենե ՚ի
վայրկեան գայր յաձախագնէմ. և մինչդեռ միաք
ծանրաթափանցիք ձգնէին մերժել զնչուտակ նո-
ցա, նա գայր մերձենայր: Երբեմն օրինակք յա-
ճախաւորք, և աեսիլ՝ գոլգես հանապազօր՝
բռնութեանց վրիժուց և ապանութեանց, ազ-
գելով ՚ի նա նախանձ նմանութեան, խրախու-
սէին զնա ընդդէմ մտացն խղճի: Իսկ յայնժամ
զարթնոյր ՚ի նմա երբեք երբեք, ազօտ՝ այլ ա-

հարկու պատկեր գատաստանի և տալոյ զանձ-
նէ համար, յորմէ ոչ կարէին զերծուցանել
զնա օրինակք. և այնու իսկ՝ զի գէր ՚ի վերոյ
քան զամբոխ սինքեոր չարագործաց էր՝ զգայր
միայնութիւն սոսկալի: Զաստուածոյ արարչի,
զորմէ լսեալ էր երբեմն, և զոր անփոյթ առ-
նէր ճանաչել կամ ուրանալ՝ կէլով որպէս ան-
գոյ, յուսահատեալ արդ՝ առանց զվան էրն
գիտելոյ, և զարհուրեալ առանց վտանգի, լսէր
զբարբառ ՚ի սրտին Թէ գոյ: Երբեմն յեռան-
գեան կրից, օրէնք՝ որ լսելի առնէին նմա, եթէ
ոչ այլ ինչ՝ բայց զանուն Աստուածոյ, առելի
թուէին նմա. իսկ արդ ՚ի դառնալ նոցա յան-
կարծ ՚ի յուշ, միաք նորա՝ յակամայս ճանա-
չէին զկատարումն այնոցիկ կարևոր:

Բայց ոչ միայն չայտնէր ուժք զտագնապ
իւր, այլ և խորագոյնս Թաքուցանէր զայն, և
վեր ՚ի վերոյ կեղծաւորէր առաւել ևս վայրե-
նութիւն, զանազով ծածկել զայն և յանձնել, և
հեղձուցանել ՚ի սրտին: Ինդրէր նա զաւտրս,
(քանզի չկարէր դարձուցանել զայնոսիկ ՚ի
չնք, կամ ՚ի մոռացօնս արկանել,) ինդրէր զա-
ւտրս՝ յորս սովոր էր գործել անխղճ զչա-
րիս, առանց այլ ինչ խորհելոյ՝ բայց յաջողել
՚ի նոսին. ցանկայր, գուն գործէր, ունել վե-
րըստին զառաջին կամ իւր պատրաստս յանդը-
գնս անխռովս յաղթահարելոյ զմիտս իւր ՚ի
համարել զանձն նոյն:

Այսպէս տեւեալ էր նորա խոստումն վաղ-
վաղակի առ Ռոտրիկ, առ ՚ի փակել զամենայն
մուտս տարակուսի ՚ի միտս իւր: Այլ ընդ մեկ-

նել նորա ՚ի բաց, զգալով յողդողդելոյ մտացն ՚ի հաստատութենէ՝ որով հրամայեալ էր անձին խոստանալ նմա, և զգալով տակաւ զփորձ ՚ի սրտի՝ յեաս կալոյ ՚ի խոստմանէն և կորուսանելոյ զվարկ առաջի բարեկամին և գործակցի, առ՚ի զերծանել ՚ի դժնդակ կրկնի՝ կոչեաց առ ինքն ընկերպիոյ, որ էր մի ՚ի ճարտարապետն և ՚ի յանդգնագոյն արքանեկաց եղեւնապործութենանցն իւրոց, որով վարկբն ՚ի բանակութիւն ընդ Նճիւեայ, և անդողդող դիմաք պատուէր եւս նմա, հեծանել վաղ ընդ փոյթ, հասանել ՚ի Մոնցա, ազդ առնել նմա զխոստումն իւր, և զպէտս առ ՚ի նմանէ օգնականութեան ՚ի յաջողութիւն գործոյն:

Պատուիրակն անօրէն վաղագոյն քան զակընկալութիւն տեառն իւրոյ գարձաւ եբեր զպատասխանին Նճիւեայ, զի անվրիպելի էր գործն, և զի յղեսցէ վաղագոյն կառս և երիվարս կամ երթս ՚ի Փաղացն Ծպտեալս, զոյնն ամենայն յանձն առեալ հոգալ ինքնին, և ելից իրացն ունել խնամ:

Որ լուեալ և կրկին բռնաւորն ուրախացեալ ՚ի սրտի, սակայն ՚ի լուր աւետաւոր բանիցն՝ հրամայեաց եւս Նիպպիայ փութալ պատրաստել զամենայն ըստ բանիցն Նճիւեայ, և ընդ երիվարս ՚ի Փաջաց՝ զորս անուանեաց նմա, գնալ ՚ի կատարումն գործոյն: Նճիւեայ, եթէ ՚ի ձեռն սովորական հնարից առաջի կայր նմա մատուցանել զսոսկալի սպառաւորութիւնն, ոչ արդեօք այնու փութով յանձն առնոյր զայն. այլ յապատանի անդ՝ ուր ամենայն ինչ թուէր խա-



Lit. G. Corradini, Venezia

վան անպթութեան նորա, էր ինչ և օճան՝ իբր
ևեթ գիտելի: Պատմեցաք մեք ՚ի վեր անդր՝ ո՛ր-
պէս վաշխուէրն այն Ձերթրուա անասց բանից
Յճիւեայ, և յայտ ընթեռնլեաց է՝ զի չէզև
այն վերջին, այլ առաջին ոանպիոս յանօրէնու-
թիւն և յարևնհեղութիւն: Նոյն բարբառ,
զօրացեալ և ևս ՚ի ձեռն եղեռնակցութեան,
հրամայեաց նմա և զղահ անմեղին՝ որ առ իբր
կայր ՚ի պահ:

Սոսկացաւ Ձերթրուա ընդ առաջարկու-
թիւնն. կօրուսանել յանկարծ զանպարտ օ-
րիորդն՝ թուէր նմա պատուհաս և արկած
դառնագէտ. հասանէր իբր զսկիզ ՚ի նմանէ ե-
ղեռնաւոր գործանօք, և զվայրն քաւութեան
յեղաշրջել անձին ՚ի տանջանարան խղճի: Խըն-
դրեր չուառականն զամենայն հնարս սայթա-
քելոյ զհրամանն սոսկալի, բայց ՚ի հնարից ան-
ա՛ր՝ որ միայն էր անվրիպելի և առձեռն պատ-
րաստ: Անօրէնութիւն՝ է խիստ և անողո-
քելի բանաւոր, յորմէ չիք զերծանել՝ բայց
թօթափելով բացէ ՚ի բաց զլուծ նորա. Ձեր-
թրուա ոչ իրախոսեաց յայն, և աչդի էտ
անօրէնն հրամանին:

Սահմանեալ էր օրն, մերձենայր ժամադրու-
թիւնն, Ձերթրուա առեալ առանձին զՎո-
ւիա յիւբրուին լսարանի, գգուէր զնա բանիւք
քան զօրէն հանապազօր, և նա ընդունէր զգ-
գուանան առաւելագոյն գորովանօք, որպէս
գառն անարիւնեան դողդոջելով ընդ ձեռամբ հո-
վուի, ածեալ ՚ի նմանէ գգուանօք, և լինու-
զձեռն նորա, ոչ գիտելով զի արտաքոյ գաւ-

թէին պատրաստ կայ ստայել իւր առ ՚ի սպանդ։ Խօսի ընդ նմա Ձերթրուտա, և ասէ.

« Մեծ ծառայութեան մը պէտք ունիմ, զոր միայն կրնաս ընել. չատերուն կրնամ հրամմել, բայց չեմ վստահիր վրանին։ Հարկաւոր բանի մը համար, որ էտքը կըսեմ քեզի, պէտք է որ շուտ մը խօսիմ վեղարաւորներուն վանահօրը հետ, որն որ իմ խեղճ Լուչիա հոս բերաւ. մարդ ալ պիտոր չիգիտնայ՝ զինքը կանչելս. քեզմէ ՚ի զատ մէկը չունիմ, որ ծածուկ աս ծառայութիւնը ընէ ինծի » ։ —

Զահի հարաւ Լուչիա ընդ խնդիրն. և հպատակութեամբ, այլ առանց ծածկելոյ զզարմանս իւր, ՚ի վերայ էած զպատճառս՝ առ ՚ի հրաժեշտ, զորս պարտ էր նմա դիտել և նախատեսանել. առանց մեր, առանց ուրուք, ընդ ճանապարհ անմարդի, յերկիր անծանօթ։.. Բայց Ձերթրուտա սպրեալ ՚ի դիւէ, եցոյց զարմանս և ահաճութիւն ընդ հրաժարել աղջկանն, որուն այնքան բարերարեալն էր, և ձեռանայր մեռոյ պատճառանս զբանին համար. ՚ի տուընջեան, քայլս քանի մի, ընդ ճանապարհ՝ զոր արարեալ էր աւուրըք յառաջ, և առանց իսկ այնորիկ՝ էէր մարթ նմա մոլորիլ, ուսեալ յառաջադոյն։.. և այնչափ այլ և բանք, զի ՚ի ընդհատարտ սրտէ էլ ընդ չըրթունս եղկելոյն. « Ալէկ, ինչ է ընելիքս » ։ —

« Վեղարաւորներուն վանքը գնա ». և ուղղեալ նմա վերատին զճանապարհն. « Կանչէ վանահայրը, ըսէ իրեն առանձին՝ որ շուտ մը ինծի գայ, բայց մարդու չիմայլնէ որ ես կանչեր եմ զինքը » ։ —

« Բայց անտեսուհին՝ որ ամենևին դուրս ելլալս չէ տեսած, հարցընելու որ ըլլայ, ինչ ըսեմ» ։ —

« Նայէ որ ելլելու առենդ չիտեսնայ զքեզ. բայց թէ որ տեսնայ, ըսէ իրեն որ ժամ մը կերթաս, առաջադրեր ես հոն աղօթք ընելու » ։ —

Նոր իմն գժուարութիւն էր հէք աղջկանն առել. այլ Ձերթրուտա տհաճեալ անդրէն ընդ գժամակութիւն նորա ապել իմն այնպիսի ելոյց նմա դէմն ընդ նախամեծար առնել նորա շնորհապարտ գոհութեան զնիզղ անտուի, զի շուարեալ օրիորդին քան խելամտեալ, և առաւել ևս սրտաբեկեալ, ասէ. « Ալէկ կերթամ. Աստուած օգնէ ինծի » ։ Եւ մեկնեցաւ ։

Այլ ՚ի գնել նորա զտան ՚ի սեամս, Ձերթրուտա՝ որ գիտէրն զչէտ նորա ընդ վանգաին, բռնադատեալ յանհրաժեշտ իմն բերմանէ, ասէ. « Նայէ Լուչիա »... բայց յաղթեաց անդրէն թշուառականին հղօրացեալն ՚ի նմա սովորականն խորհուրդ. և որպէս թէ ոչ շատ համարեալ որչափ ինչ ուսուցեալն էր նմա զուղին, յաւել միւսանգամ բացատրել. և յարձակէն զնա ՚ի բաց՝ ասէ. « Ամեն բան ըսածիս պէս ըրէ, ու շուտով դարձիր » ։ Եւ մեկնեցաւ Լուչիա. էանց անտես ընդ գաւթի վանացն, և գնայր աչք ՚ի խոնարհ առ որմով ընդ ճանապարհ՝ զոր ուսաւն, և որչափ ինչ յիշատակէր. եգիտ զդուռն գեղջն, եւ ընդ այն յարաձեան. և անգթաս, փոքր մի ևս գոզուածեամբ ՚ի սուղ ինչ վայրկենի եհաս ՚ի ծանօթ ուղին՝ որ ածէր

'ի մեհեանտանն: Եւ էր ուղին այն, որպէս և է ցարդ խորաձև հանդոյն գետառորոյ՝ Թումլիք երկուասեք պատեալք'ի ծառոց՝ որ կամարաձև առնեն հովանի: Ի մտանել անդր Լուչխայի, և 'ի տեսանել զայն անմարդն, յաւելաւ երկիւղ նորա, և երագեր զընթացս. այլ անդէն քաջալերեցաւ, 'ի տեսանել կառս 'ի ճանապարհի անդ զկայ առեալ, և առ դրան կառացն ուղևորս երկուս՝ որ շուրջ դիտէին՝ որպէս տարակուսեալք զուղեւոյն: Եւ 'ի գնալն յառաջ, լուաւ՝ զի ասէր մին 'ի նոցանէ. « Այս աղեկ աղջիկ մը կերևայ, ձամբան կը ցուցընէ մեզի »: Եւ հասանել նորա մերձ 'ի կառս անդր, դարձաւ նոյն ինքն 'ի նա, և քաղցրութեամբ լեզու անհամամատ դիմացն խոժոռութեան, ասէ. « Աղջիկ, կրնա՞ս ցուցընել մեզի Մոնցայեն ձամբան »: —

Պատասխանի ետ Լուչխա, և ասէ. « Այո ձամբէն որ երթաք, կը հեռանաք »:

Եւ երբեք դարձաւ առ 'ի ցուցանել մատնանիշ զուղին, Նիպոլիոյ ընկեր նորա, առեալ զաղջիկն զմիջոյ՝ էդ բանի 'ի կառս. և միւս ոմն՝ որ բաղմեալ կայր 'ի ներքս, նստոյց զնա ուժգին հանդէպ իւր, մինչդեռ ձիչ բարձեալ օրիորդն գալարէր ձգներ զերծանել 'ի բաց. և միւս ոմն ելից Թաչկինակաւ զբերան նորա: Յայնմ վայրի ամաչարեալ և Նիպոլիոյ, էլեալ և ինքն 'ի կառս, փակեաց զդռնակն. և մեհենեցան կառքն սրաւարեալ: Իսկ որ զինեդաւոր հարցուածն արարեալ էր, կացեալ 'ի ճանապարհն անդ, շուրջ հայեր տեսանել՝ թէ գա՞յր ոք 'ի ձիչ օրիորդին. այլոչ զոք տեսեալ 'ի վեր

վազեայ 'ի Թումլին՝ բուռն հարեալ զմիոյնէ 'ի ծառոց, և սրացաւ 'ի բաց: Մի էր սա յարբանեկաց Նիպոլիոյ, և դէտ առ դրան մեհենատանն էր կացեալ յիշանել անակ օրիորդին՝ գիտել զնա թէ ելի՞ նոյն. և ապա ընդ կարճ ճանապարհ կանխեալ էր 'ի ժամադրեալն տեղի:

Եւ ո՞ կարիցէ պատմել զարհաւիրս և զտապանատ աղջկանն, և որ ինչ ընդ միտս նորա անցանէր: Այնէր նա զաչսն ահաբեկեալս 'ի տեսիլ գժնդակ ազեաւին, և փակէր անդէն՝ սարսափեալ 'ի խոժոռադիմայն տեսլենէ: Շարժէր առ 'ի զերծանել, այլ կալեալ էր 'ի նոցանէ. զամենայն զօրութիւնս իւր կինքն ժողովէր՝ անկանել 'ի դռնակն կոյս, այլ բազուկք կրկին աճառուաք պինդ ունէին զնա 'ի խորս կառացն, և չորեքին այլք գաղշէլիք յենուին 'ի նա. և 'ի բանալ նորա զբերան իւր յաղագս ղաչելոյ, խնդ արկեալ անդր Թաչկինակ՝ հեղձամղձուկ առնէին զնա, և բերանք երեք գժոխայինք ձահաւորեալ 'ի մարդկեղէն բարբառ՝ ասէին անդադար. « Ձայն մի հաներ, մի վախնար, ձեռս չենք ըներ քեզի »:

Յետ սուղ ինչ տառապելոյ օրիորդին 'ի դիմամարտ, Թողացոյց զբազուկս, արկ զգլուխ իւր կեռս կոյս 'ի վայր, և բացեալ հազիւ զաչս սիւշ 'ի դէմն սոսկալիս՝ որ ընդդէմ նորա կայր, և տեսեալ զնոսա ամաչեցեալս միանգամայն և յուզեալս, հատաւ գոյն երեսաց նորա, քերան ցուրտ ծածկեաց զդէմն, և անկաւ նուաղեալ: Ֆայլաէրեր զնա Նիպոլիոյ ասելով.

« Սիրա ըրէ, քեզ նայիմ, սիրա ըրէ »: Ձնոյն եւ ալեք երկոքին ապիրատաք կրկնէին. « Սիրա ըրէ »: Բայց օրիորդն անզգայեալ, ջուրը զգալ-չէլի բարբառ խրախուսանաց նոցա:

Այժ մի 'ի նոցանէ. « Մեռածի պէս է. խ-բաւցընէք մեռած որ ըլլայ »...

Մինն ասէ. « Ի՜նչ մեռած. հինհիներուն ատ մարելները, քանիներ անգիի աշխարք խրկե-լէս առաջ, տեսեր եմ »:

Նիսպոլեոյ ասէ. « Փուճ խօսքերը մէկդի դրէք. պարտքերնիդ ըրէք, հրացաններդ հա-նեցէք անտուիկէն, պատրաստեցէք. ատ անտա-ռէն մէջն որ պիտի մտնանք՝ անզգամ աւազակ-ներ միտ կը պահըռնին... Խելք չունիք, մի ա-տանկ ձեռնընդ բռնէք զանոնք, եռանդով պատ-կեցուցած գրէք. չէք տեսներ որ ոչինչ բանէ մը կը վախնայ կը մարի. գիտնք տեսնալու որ ըլ-լայ, իրաւցընէ կը մեռնի: Իրեն կուգայ, մի վախցընէք գինքը. մի մօտիք՝ ինչուան որ ձեզի նշան մը ընտամ: Ինծի թողուցէք, ձայն մի հա-նէք. ես կը խօսիմ հետը »:

Վայրկ մի յետոյ զարթեաւ եղկելին որպէս 'ի խոր և 'ի տապնապալ քնոյ. եթայ զաչս, և ընդ աղօտ նշմարելը զահագին գէմն՝ որ շուրջ կայնի, և չկարեր ժողովել զմիտս: Յետոյ ապա յինքն եկն, և 'ի ձեռն սակաւ զօրութեանն՝ որ դարձաւ 'ի նա, փորձէր անդրէն 'ի դռնակ անդր մտանել, և արտաքս զանձն արկանել. այլ կալան զնա, և չկարաց. բայց միայն սա-սեալ զկայրն ամայի՝ ընդ որ ածէր, կական և բարձ. յայնժամ Նիսպոլեայ միաբանդամ Թաչ-

կինակաւն սպառնայեալ, քաղցրութեամբ որ-չափ կարէին, ասէ. « Ձայն մի հաներ, ալ աղէկ կըլլայ քեզի. մի վախնար, չենք ընտսեր քե-զի. բայց թէ որ չկըսես, պէտք կըլլայ որ մենք լռեցընենք զքեզ »:

Օրիորդն ասէ. « Թողուցէք զիս որ երթամ. ոչ էք դուք. ոբր կը տանիք զիս. ինչո՞ւ բռներ էք, թողուտէք, թողուտէք որ երթամ »: —

« Մի վախնար կըսեմ քեզի, տղայ չես, կը հասկընաս որ քեզի ընտսու միտք չունինք. կը տեսնաս որ կրնայինք զքեզ սպաննել՝ թէ որ գէշ միտք ունենայինք. ուրեմն հանդարտ կե-ցիր »: —

« Չէ, չէ, թողուտէք որ տեղս երթամ. ես չեմ ճանչնար զձեզ »: —

« Բայց մենք կը ճանչնանք զքեզ »: —

« Սուրբ Աստուածածնին օգնէ լինի: Դուք լինչպէս կրնաք ճանչնալ զիս, հոգինիդ սի-րէք՝ թողուտէք զիս. գուք ոչ էք. ինչո՞ւ բըռ-նեցիք զիս »: —

« Մեզի աստնկ հրամմեցին »: —

« Ո՞վ են հրամմողները, ո՞վ կրնայ հրամմած ընտսլ ձեզի »: —

« Ձայնդ քաշէ », ատատիւ լուռ ասէ Նիսպոլեոյ. « մեզի աստնկ հարցմունքներ ընտել չըլլար »:

Մինչդեռ վերձեաց Լուչիա արկանել զանձն յանկարծ 'ի պատուհանէն. բայց սա-սեալ՝ զի էր ճիպն ընդունայն, դիմեաց գար-ձեալ յաղաչանս. և խոնարհեալ զգլուխ իւր, արտասուալից գիմօք, հառկեալ բարբառով հեզամիձուկ 'ի լուոյ, ձեռնամած առ ըղո-

Թամքը, ասէ. « Ո՛հ, Աստուածդ սիրոյն համար, սուրբ Աստուածածնայ սիրոյն համար, Թոզ տուէք որ երթամ. ինչ ըրի ձեզի. ես խեղճ աղջիկ մըն եմ. ինչ որ ըրիք ինծի, սրտանց կը նեբեմ, աղօթք ալ կընեմ ձեզի համար: Թէ որ դուք ալ աղջիկ զաւակ ունիք, կին ունիք, մայր ունիք, մտածեցեք որ ինչ կը քաշէին, թէ որ ասանկ բանի մը հանդիպէին: Մտածեցեք որ ամենքս ալ պիտի մեռնինք, ու օր մը պիտոր բաղձաք որ Աստուած ձեզի ողորմի. Թողուցեք զիս հոս. Աստուած ինծի կօգնէ ձամբաս գըտնալու »: —

« Չենք կրնար Թողուլ »: —

« Չէ՞ք կրնար, տէր ողորմեա. ինչո՞ւ էք կըըսար, ո՞ր պիտոր տանիք զիս, ինչո՞ւ »...

« Չենք կրնար, փուշ է, մի վախնար, քեզի միաս չենք ըներ, սիրտդ հանդարտ բռնէ, մարդ չիդպչիր քեզի »:

Նուչիա վշտացեալ տառապեալ և վհատեալ՝ զի ոչ դնային աղաչանք իւր առ նոսա, դիմեաց առ այն՝ որ պիրկ սրտից, և կակղէ զնա խստադոյնս. ամիսներեցաւ յանկիւն կառացն, եդ զբազուկն խաչանիշ ի կուրծս, և աղօթեալ վայրկ մի ի ծածուկ, եհան ապա զպատակ կուսին, և աղօթեր այնու հաւատով և եռանդեամբ, որպէս չէր երբեք աղօթեալ ի կեանս իւր: Եւ երբեք երբեք որպէս լսելի լեալ, և ընկալեալ ի տեառնէ զննորհս ողորմութեան, դառնայր պազատեալ առ նոսա, այլ ի զուր. և անկանէր նուաղեալ, և դարձեալ զգաստացեալ առ ի կրել տառապանս: Ոչ ևս զօրէ սիրտ

իմ ասասանօր նկարագրել զայնոսիկ. գուցէ ա-զեաալի ձեզէ զնս ի կէտ ձանապարհին՝ որ տեսեալ ժամն չորս, որոց զկետ հասին այլ տագնապք. անցցուք արդ յամրոցն, ուր սպա-սէր հիքին բռնաւորն անհանգիստ, անսովոր լինն խռովութեամբ սրտի վարանեալ:

Զարմանք նորանչան. այն որ անխռով զբա-զում տուեալ էր սպանանել, և յայնքան ե-զերուանս իւր առ ոչ ինչ համարեալ զաղէտս վշտակիրելոց յիւրմէ, յարկանել արդ ձեռն յանծանօթ և՝ ի հեք աղջիկ մի գեղջուկ՝ զոյր սոսկուցին և արհաւիրս: Ի բարձր պատուհա-նէ ուստեք ամրոցին կայր ի զնին երևելոյ կա-ռայն ընդ հովիտն, և ահա եռեա՝ զի յառաջ գայր յամրընթացս, նախկին արշաւանացն ըս-պառեալ զթափ, և զկորով երիվարացն ընկ-ճեալ: Եւ թէպէտ ի խորս հովտին իբրև զմի ի խաղալիկ կառաց մանկաւոյ երևէր, ծանեաւ զայն իսկոյն, և զգաց բաբախելոյ սրտին ուժ-գնագոյն, և ասէր ի մտի. « Ան է անտարա-կոյս, ասս ինչ սրտագող է որ կուտայ սրտիս, խալըսիմ սըկէց »: Եւ համեր կոչէր զմի ի սպա-սաւորաց, առ ի յղել զնա ստիպաւ ընդ ա-ռաջ կառացն, պատուէր տալ Նիսպեայ՝ դար-ձուցանել զկառան, ածել զնուիրեա առ Ռատրիկ. այլ աղգեալ սասանիւ ի սիրտ նորա ձայն՝ որ ասէր Մի, արդել զնորհուրդն: Սակայն տան-ջեալ ի հարկէ տալոյ ինչ պատուէր վասն զը-ժոխըմբեր ակնկալութեան կառացն՝ որ յա-ռաջ գայր տակաւ որպէս օրհաս նմին և պա-տուհասս, կոչեաց զպաշտին իւր պառաւ, որ

յամրոյն անդ ծնեալ՝ դուսաը ուրուք ՚ի հին-
աւուրց պահապանաց , և անդ զամենայն
կեանս իւր էր անցուցեալ. և որ ինչ տեսեալ
էր անդ ՚ի խանձարրոյց և լուեալ , տպաւո-
րեալ էին ՚ի միտս նորա մեծ և ահաւոր զըօ-
րութիւն տերանց իւրոց. և մանաւանդ հրա-
հանգօք օրինակօք ուսեալ էր զպարտս հնա-
զանդելոյ նոցա յամենայնի , վասն կարելոյ նո-
ցա գործել չարիս և բարիս մեծամեծս: Ձա-
նազութիւն պարտուց ընդ աբոյս ՚ի սիրտս ամենե-
սեան՝ տնկակից էր ՚ի նորայութիւն ընդ մեծարանս
ընդ երկիւղ և ընդ չահասիրութիւն , միաբա-
նեալ և յարմարեալ ընդ նոսին:

Եւ իբրև բանաւորն անանուն եկաց անդ
տանուտէր , և սկսաւ ՚ի կիր արկանել զղօրու-
թիւն իւր սոսկալի , սկսաւ և աղաղնին զդալ
սոսկութիւն ՚ի նմանէ ընդ խոնարհ հպատակու-
թեան , և էր սովորեալ յոր ինչ հանապազ ու-
նէր առաջի աչաց և ՚ի լուր ականջաց. հզօր և
ապերասան զօրութիւն բանաւորին էր նմա ար-
դարութիւն անհրաժարելի: Հասեալ ՚ի ջափ՝
ամուսնացեալ էր ընդ միում ՚ի սպասաւորաց
տանն , որ յեօ տակաւ միոյ յղեալ ՚ի գործ ինչ
վտանգաւոր , թողեալ էր զոսկերս իւր յոլո-
ւոյ, և ինքն յամրոյն անդ այրի մնացեալ:
Վրէժխնդրութիւն , զոր արար յայնժամ տէր
իւր , մնասցյ նմա սիրտուն գժնեայ , և յա-
ւել ՚ի նա գոռոզութիւն ընդ հզօր պաշտպա-
նութեամբն. և յայնմհետէ գոն ուրուք եղեալ
էր արտաքս յամրոյն անտի , և զամենայն ինչ
մոռացեալ էր տակաւ զմարդկային կենաց՝ բաց
՚ի տեսլոյն անդ հանապազ:

Զէր ինչ նորա պաշտօն ինչ յատուկ , այլ ՚ի
գնդէ անտի սրինկայից մերթ այս ոք և մերթ այն
տային նմա առեալ գործս՝ յորոց նեղէր. էր ըն
զՀնոտես նոցա կարկատէր , էր զի պատրաստէր
ճեպով ճաշ՝ որոց գառնային ՚ի սպասաւորու-
թենէ , և էր զի գարմանէր զվիրաւորեալս:
Իսկ պատուէրքն նոցա և սուգտանէք և ընորհա-
կալիք իսկ համեմեալ էին միշտ կատականօք և
կշտամբանօք: Անուն , զոր կոչէին նմա սովորա-
բար , էր Պառա. իսկ յաւելեալ անուանէք ըստ
հանգամանաց իրաց , և ըստ կրից իւրաքան-
չիւրոյ , պէսպէսք: Խռովէր ծուլութիւն պա-
ռաւոյն , և գրդռէր զայրոյթ նորա , որ էին
ախտք կրկին զօրացեալք ՚ի նմա , և փոխադար-
ձէր զյարգանաց բանս նոցա այլովք քան զգըր-
գռողացն ախորժելեօք բանսարկուին:

Այ սա բանաւորն ասէ. « Կը տեսնամ սա վա-
րէն եկող կառքը »: —

Պատասխանէ պառաւն , կարկառեալ ըզրա-
ծայր ծեօտ իւր , և լայնեալ զաչսն կրկովեալս.
« Կը տեսնամ »: —

« Շուտ մը գեսպակ (ԸՆՃԻՂԷ) պատրաստեր
տուր , մէջը մտիր , Թոզ տանին զքեզ Զարա-
գիչէր տունը. շուտ մը շուտ , որ կառքին ա-
ռաջ հասնիս հոն , անկից կամաց կը քալէ. ան
կառքին մէջն է... պէտք է որ ըլլայ... աղջիկ
մը: Թէ որ է , ըսէ Նիպսիոյին իմ կողմանէս ,
որ զինքը գեսպակին մէջը դնէ , ու ինքը մեկէն
ինծի գայ: Դուն գեսպակին մէջը կեցիր աղջ-
կանը հետ. ու վեր որ կը հասնիք , քու խոսդ-
տար զինքը: Հարցընելու որ ըլլայ քեզի՝ ՚ի ը

կը տանիս զիս, որո՞նն է աս տեղը, հայէ որ »...

« Ո՛հ »· ասէ պառաւն հառաչելով։ —

« Բայց սիրտ տուր երեն »։ —

« Ի՞նչ ըսեմ »։ —

« Ի՞նչ պիտոր ըսես, սիրտ տուր երեն՝ կըսեմ։ աս տարիքը հասեր ես, դեռ չէ՞ս գիտեր աղջկան մը սիրտ տալ ինչպես կըլլայ, սրտի նեղութիւն չէ՞ս ունեցեր, վախ չէ՞ս ունեցեր· չէ՞ս գիտեր ան խօսքերն որ անանկ ատեն անուշ կուգան, անոնք ըսէ· չուտ ըրէ, դնա »...

Եւ՝ի մեկնել դնալ պառաւոյն՝ ինքն եկայ այլեւս վայրկ մի առ պառաւհանաւն ակնկառոյց՝ի կառս անդր՝ որ մեծագոյն յոյնժամ երևէր· և ապա ամբարձեալ զաչս յարեգակին՝ որ՝ի մուտս էր յեռակոյս լերինն, և յամպս սփռեալս ընդ երկին նսեմն՝ որ գրեթէ յանկարծ կարմրէին հրագոյն՝ մեկնեցաւ, փակեաց զպատուհանն, և սկսաւ երթևեկել՝ի սենեկին որպէս ուղևոր ճեպընթաց։

ԳԼՈՒԽ ԻՍ·

Ընթանայր պառաւն փութով առ՝ի հնազանդել, և հրամայել զօրութեամբ անուանն, որ յուժմէ ուժեք և անուանեալ՝ սարսեցուցանէր զամենեսեան յամրոցի անդ· զի ոչ ուժեք էր կարծելի յանդգնութիւն վարելոյ նովաւ՝ի սուտ։ Գտաւ պառաւն՝ի Զարագիշեր սուղ ինչ յառաջ քան զհասանել կառացն անդր· և՝ի տեսանելն զայն՝ էջ՝ի դէսպակէն, ակնարեալ կառավարին կացուցանել զկառն, մատեաւ՝ի դռնակն, և առ Նիպպիոյ՝ որ կարկառեալ ղձլուխ իւր արտաքս, էառ անճայն զպատուէրն իշխանին։

Լուեալ՝ի զկայ առնուլ կառացն ցնցեալ, զարթեաւ՝ի մահացու թմրութենէն, զգաց ազմկելոյ արեանն, և բացեալ զբերան իւր և զաչս, պչրացեալ կայր։ Նիպպեայ յետս կոյս

ամիսներեալ, և պատասխան ՚ի պատուհան դըռ-
նակին զծնօտ իւր յերկայեալ, հայեցաւ ՚ի Լու-
չիա և ասէ. « Եկուր աղջիկ, եկուր խեղճ վա-
ւակ, հեռու եկուր. ինձի հրաման եղած է որ
քեզ աղէկ հոգամ, սկսա տամ քեզի » :

Ի լուր կանոյկ բարբառոյ քաջալերեցաւ եղ-
կելին, ոգի էառ վայրկ մի. այլ անդէն ան-
կեալ ՚ի սարսափ խորագոյն, գողգոջուն ձայ-
նիւ, յառեալ ապշութեամբ ՚ի պատասն, ասէ.
« Ո՞վ ես դուն » : —

« Եկուր, հեռու եկուր, խեղճ աղջիկ », և
յեղյեղեր պատասն զնոյն : Իսկ Նիսպիսոյ և եր-
կոքին այլք, դուշակեալ ՚ի բանից նորա, և
յանսովոր ողբանաց բարբառոյն զհամն իշխա-
նին, գուն գործէին համակել քաղցրութեամբ
զսատապետն ՚ի հնազանդութիւն : Ահա նա
հայեր միշտ արտաքս. և թէպէտ վայրենի և
անծանօթ էր տեղին, և չներելին նմա պահա-
պանք ակն ունել օրնականութեան, բանայր
զբերան իւր առ աղաղակել. բայց տեսեալ
զնոժոռ հայեցուածք Նիսպիսոյ և զձաշկինին,
լռէր և զդողանի հարկանէր : Յայնժամ բար-
ձաւ և եգաւ ՚ի դեսպակի. եմուտ անդր և պա-
ռատն զհետ. և Նիսպիսոյ պատուէրն տուեալ
կալանաւորացն երկուց գնալ զհետ դեսպա-
կին, փութացաւ ինքն ընդ զառ ՚ի վերն առ
հրամանն տերունի :

Լուչիա հայեցեալ յանծանօթ և յայլանդակ
դէմն պատասին, ասէ. « Ո՞վ ես դուն, ինչու
գիս քու հետդ տրին, ո՞ւր ենք, ո՞ւր կը տանիս
գիս » : —

« Անոր կը տանիմ՝ որ քեզի բարիք ընել կու-
գէ. մեկ մեծ... Երանի՛ անոնց, որոնց բարիք
ընել կուգէ. բախտաւոր ես, բախտաւոր. մի
վախնար. ինծի ըսաւ որ սկսա տամ քեզի. կը-
սեմ երեն որ քեզի սկսա տուի » : —

« Ո՞վ է ինքը, ինչո՞ւ, ինչ կուգէ ինծմէ : Ըսէ
ինծի, ո՞ւր ենք, թող տուր գիս. ըսէ սըտոնց որ
թողուն գիս՝ որ երթամ. թող ժամ մը տանին
գիս : Ո՛հ, դուն որ կնիկ մըն ես. տուրը Աս-
տուածածնայ սիրոյն համար ըլլայ » : —

Անունն այն տուրը և քաղցր, տակի կարդա-
յեալ ՚ի մանկութեան ՚ի վտիտուհեր պատասին,
և ոչ ևս ապա ընդ բազում ամս անուանեալ ՚ի
նմանէ, և ոչ թերևս լուեալ, արար ՚ի միտս
նորա տղղեցութիւն նմն այնպէս տգօտ նոր և
յամր, որպէս լիշատակ լուսոյ ՚ի միտս զառա-
ջեալ ծերոյ ՚ի մանկութեան կուրացելոյ :

Յայնմ վայրկ բռնաւորն կայեալ առ դրան
ամրոցին հայեր ՚ի առջ, և եաես զդեսպակն՝
զի գայր յամրաքայլ որպէս կառքն ՚ի սկզբան,
և զնիսպիսոյ՝ զի ձեպէր ընդ վերելս՝ կանխեալ
քան զդեսպակն, հեռի անտի խոտոյան՝ որ մէտ
առ մէտ յաւելոյր : Եւ ՚ի հասանել նորա ՚ի կա-
տար բլրոյն՝ ակնարկեաց նմա բռնաւորն գալ
զհետ իւր. և մտեալ ընդ նմա ՚ի սենեակ մի ամ-
րոցին՝ զկայ էառ, և ասէ. « Ի՞նչպէս եղաւ » : —

Նիսպիսոյ, խոնարհեալ առաջի նորա մեծա-
րանօք, էառ պատասխանի. « Ամեն բան հրամ-
մածիդ պէս եղաւ, հրամանդ պատուոն ձեռ-
քովը առնին հասաւ, մարդ մը չերևցաւ, ձայն
մը չլսուեցաւ, մեկը դիմացնիս չելաւ, կառա-

վարը կարկէ, ձիերը զօրաւոր, փորձանք մը չեպատահեցաւ... Բայց »... —

« Ի՞նչ բայց » : —

« Բայց, իրաւցընէ կըսեմ, աւելի կուզէի որ հրամմած ըլլայիր՝ առ աղջկանը եռւէն առը- ձանակ մը պարպել, առանց զինքը տեսնելու, առանց իր խօսքերը լսելու » : —

« Ի՞նչ ինչ, ինչ կուզես ըսել » : —

« Կուզեմ ըսել որ բոլոր ձամբան, անդա- դար... սիրտս կըրտռեցաւ, կարեկից եղայ » : —

« Դո՛ն կարեկից եղար. կարեկցութիւն ինչ ըսել է գիտե՞ս դուն, կարեկից ըլլալէն կը հաս- կընա՞ս » : —

« Ամենէն աս անգամուան պէս չէի հասկը- ցած. կարեկցութիւնն ալ վտիտ պէս բան մըն է եղեր, քիչ մը որ սիրտ չընէ մարդ, Թողու որ սիրէ իրեն, մարդկութիւն չնմար վրան » : —

« Լսենք քիչ մը՝ ինչ ըլաս, ի՞նչ ըսաս աղ- ջկին որ առջի կարեկցութիւնդ չարժէց » : —

« Սիրելի տէրս, այսչափ առեն... արցունք թափել, անանկ խեղճ աչքերը ընել. ձերմը- կիվ, դէմը մեռածի պէս նեսել, հեծկըլտալ, նորէն խեղճ ընել, խօսքեր ըսել որ »... —

Սկսաւ յանկարծ իշխանն խորհել, և ասկր ՚ի մտի. « Ջեմ ուզեր ատոնց մէջ առ աղջկիկը. անխելքութիւն ըրի աս բանը վրաս առնել: Բայց խոստացայ, մէյմը խօսք տուած դանուե- ցայ... բայց աչքս հեռու որ ըլլայ »... —

Եւ ՚ի վեր առեալ զդլուխ իւր, ՚ի ձև հրա- մայական ասէ ցՆիպոլեոյ.

« Հիմայ կարեկցութիւնը մեկդի դիր, հե-

ծիր, հետդ մեկը առ, թէ որ կուզես՝ երկու- շուտ մը Ռոտրիկին տունը գնա որ գիտես, ըսէ իրեն որ խրկէ... բայց շուտ մը շուտ, ապա թէ ոչ »...

Բայց միւսանգամ ազդումն նեղքին, սաստ- կագոյն քան զառաջինն, չէթող նմա կատարել զբանն. և իբր առ ՚ի չայտ առնել զլռելեայն առ ինքն սաստ հրամանի, ասէ վճռաբար, « Մի, գնա հիմայ հանգչէ, վաղը կըսեմ ընելիքդ » :

Ապա միայնակ, կացեալ յոտին, զբազուկս ՚ի կուրծս զմիմեամբք սրկեալ, պչուցեալ ան- քթելէթ ՚ի յատակ սենեկին՝ ուր շող լուսնի ՚ի պատուհանէ բարձուէ ծագեալ, գործէր քա- ռակուսի, աղեւսակաձև ՚ի սաւեւրէ երկա- թեայ վանդակի կարատեալ, և մանրագոյն ևս յատակափեղկիցն փոքրիկ բաժանմանց, ասէր յանձին. « Ա՛տ աղջիկը գէ մը պիտոյ ունենայ, կամ թէ որ չէ, հրեշտակ մը կօգնէ իրեն. Նիսկ պիտի պէս մարդուն կարեկցութիւնը չարժէր. վաղը, վաղը առաւու կանուխ՝ անէն դուրս. մէյմին ալ իր խօսքը չըլլայ »:

Եւ սաստկագոյն անձին որպէս խեղ մանկան՝ որ անսաստ իցէ, յաւել. « Ա՛տմոսքը վերնայ- ան անբան Ռոտրիկն ալ թող չիգայ՝ ընորհա- կալութիւններով գլուխս ցաւցընելու. ալ չեմ ուզեր աս աղջկան խօսքը լսել: Ա՛տ մարդուն ուզածը ըրի, վասն զի... խօսք տուած գըտ- նուեցայ. խօսք ալ տուի, վասն զի... Ճակատս վրայ գրուած էր: Բայց պիտոր վճարել ինձի՝ իրեն ըրած ծառայութիւնս. տեսնանք »...

Եւ խորհէր գժուարին ինչ փոխարէն պա-

հանջել՝ ի նմանէ եթէ առ՝ ի պատուհաս: Բայց անդրէն ուշ՝ ի կուրծս անկեալ, ասէ. « Նիսոլ պիոյճն գումթը չարժել... Ի՞նչպէս կրցաւ առ աղջիկը »: Եւ առակ սակպեալ, յաւել. « Կուզեմ տեսնալ առ աղջիկը... Ո՛հ, չէ... Հա՛, կուզեմ տեսնալ »: Եւ սենեակ՝ ի սենեկէ անցեալ՝ եդիտ առնդուզս իմն փոքրիկ, եւ ընդ այն առ խարխափ՝ ի վեր, չոգաւ՝ ի սենեակ պառաւին, և բաղխեաց զդուռնն աքացի:

« Ո՞վ է »: —


« Բաց »: —

Դիմեաց պառաւն, վազս երիս առեալ. լուաւ զձռընչել ծղնեւացն, բացաւ դուռնն. և շուրջ հայեցեալ իշխանին՝ ի սեմոյ անտի, եառս՝ ի նշոյլ ճրագի՝ որ վառէր՝ ի վերայ սեղանոյ՝ զԱսլիա անկեալ՝ ի գետնի յանկեան միում հեռի՝ ի դրանէ, և ասէ յաստմոքէ յպառաւն. « Ո՞վ ըսաւ քեզի՝ որ առ խեղճ աղջիկը պատառ լաթերու տապրակի մը պէս անկիւնը ձգես »: —

Պառաւախանի եառ պառաւն մեծապանծաք. « Ինքը ուզեց հոն քաշուիլ. շատ ջանացայ սիրատալ իրեն՝ ինչպէս ենքն ալ կընայ վկայել, բայց անկարելի եղաւ »: —

Մատուցեալ իշխանն առ Ասլիա, ասէ. « Ե՛լ կայնէ աղջիկ »: Ասլ բաղխել և բանալ դրանն, երևեալ իշխանին և ատատ նորա, զարհուրեցուցեալ էին զնա անդրէն, և առաւել ևս կծկեալ յանկեան անդ, և ձեռօք զերեսս ծածկեալ, կայր անշարժ, զգ՝ զանի ևեթ հարեալ:

Կրկնեաց իշխանն. « Ոտք եկիր, քեզի ինաս չեմ ըներ, կընամ բարիք ալ ընել »: Եւ՝ ի լսել



նորա՝ ասասիւ էա հրամայեն. « Ելիր կայնէ կը-
սեմ »:

Յայնժամ առ ահի եկաց եղկելին ՚ի ծունկս ձեռնամած, որպէս առաջի պատկե-
րի. և ՚ի վեր առեալ զաչս ՚ի դէմս իշխանին, և իսկոյն խոնարհեալ, ասէ. « Հոս եմ, մեռցուր
զիս »: —

« Ըսի քեզի որ չեմ ուզեր ինծասել քեզի ». ասաց իշխանն գաշն ձայնիւ, ակնկառոյց ՚ի դէմս նորա խռովեալս յանձկութենէ սրտի և յերկիւղէ: Եւ պատաւն յաւելոյր. « Սիրա
ըրէ աղջիկ, սիրա ըրէ. երբոր իշխանը կըսէ որ
ինծաս չընես քեզի »... —

Պատասխանի էա Լուիճա բարբառով ինն, յորում ընդ երկիւղ սրտատարով՝ վստահու-
թիւն ինն յաւելոյր ՚ի նա զայրոյթ յուսահատ, և ասէ. « Ուրեմն ինչո՞ւ ինծի աս գժոխային
տանջանքը քաշել կուտաս. ինչ ըրի ես քե-
զի »... —

Իշխանն ասէ. « Ի՞նչ, նեղսրտութիւն տուին քե-
զի. ըսէ »: —

« Նեղսրտութիւն! ո՛հ, բանեցին զիս նենգաւո-
րութեամբ, բանի. ինչո՞ւ բանեցին, ինչո՞ւ հոս բե-
րին. ինչո՞ւ հոս կեցեր եմ. խեղճ աղջիկ մըն եմ.
ինչ ըրած ունիմ, Աստուածոյ սիրոյն համար ըլ-
լայ »... —

Կարձեաց բանաւորն զբանս նորա ասելով. « Աստուած, Աստուած, միշտ բերաննին Աս-
տուած է. որոնք որ իրենք զիրենք պաշտպա-
նելու ուժ չունին, Աստուած կըսեն կեր-
թան, իրեն հետ խօսածն պէս: Ի՞նչ. կուզես

որ Աստուած պահէ զքեզ ամեն փորձանքներէ. ինչ նեղութիւն է քեզի՝ բառ մը ըսելը. Թէ որ փորձէիր աս քաշած տառապանքս »... —

Յայնժամ բռնաւորն քաղցրութեամբ լմնա, ընդ որ զարմանայր պառաւն, կարճեաց զբանս հնչէն, և ասէ. « Սիրա ըրէ, մի վախնար. քեզի մեռնող մը ըրի՞, սպառնացա՞յ քեզի » : —

« Ֆաւ լսցի. կը տեսնամ որ սիրտդ բարի է, կը խղճաս վրաս. Թէ որ ուզէիր, ամենէն եւեթ կը վախցընէիր զիս, կրնայիր մեռցընել տալ զիս. ընդ հակառակն... քիչ մը սիրտ տուիր ինծի. Աստուած բարիք տայ քեզի. լըմընցուր սկսած ողորմութիւնդ, ազատէ զիս » : —

« Վաղը առտու »... —

« Ո՛հ, հիմայ, չուտ մը զիս խալըսէ : —

« Վաղը առտու կը տեսնուինք կըսեմ. հիմակու հիմայ հանդիսա կեցիր. անօթի ալ ես, հիմայ կերակուր կը բերուն քեզի » : —

« Չէ, չէ. ինծի մահ է, մկիը ներս մտնալուս որ ըլլայ. հրամանքդ զիս ժամ մը տար... Աստուած ամեն մէկ քայլդ կը վարձատրէ »... —

« Կնիկ մը կը բերի կերակուրդ », ասաց իշխանն, և ինքն իսկ զարմացաւ ընդ խորհել իւր զայն հնարս, որով և զհարկ ապահովութեան կնոջն հայթայթէր : Եւ դարձեալ՝ ի պառաւն, ասէ. « Իսկ դուն յորդորէ զինքը որ ուտէ. Եաքը սա անկողնին վրայ պառկեցուր զինքը : Թէ որ մկէ տեղ կուզէ ղքեզ, աղէկ է. Թէ որ չէ, գիշերուան մը համար դուն կրնաս գետինը պառկիլ : Սիրտ տուր իրեն, նորէն կըսեմ. ուրախ բռնէ զինքը. դանգատ մը չունենայ քեզմէ » :

որ Ես ատ քու խօսքովդ »... Եւ եթող զբանն Թերի : —

« Ո՛հ, տէր. Ես խեղճ աղջիկ մը ինչ կրնամ ուզել, բայց գթութիւն. Աստուած ողորմածները կը ներէ. Թող տուր որ երթամ. հոգիդ սիրես, Թող տուր որ երթամ. ինչ օգուտ մկուս մը որ պիտոր մեռնի, այսչափ վիշտ քաշել տալ, խեղճ աղջկան մը : Ո՛հ, դուն որ կրնաս հրամ մել, ըսէ որ Թողուն զիս որ երթամ. զիս բռնի հոս բերին. զիս ատ կնոջը հետ մօրս խրկէ : Ո՛հ, տուր Աստուածածնին, ողորմէ : Մօրս երթամ, մօրս, հոգիդ սիրես՝ մօրս. հեռուս պիտոր չըլլայ տակէց... տեսայ մեր բնակած լեռները : Ինչքա՜ն ինծի ատ վիշտը քաշել կուտաս. ժամ մը տանել տուր զիս, որ քեզի համար բոլոր կեանքս աղօթքով անցընեմ, ինչ կաժէ քեզի խօսք մը ըսելը. ո՛հ, կը տեսնամ սիրտդ չարժիլը. ողորմէ ինծի, բառ մըն է, ըսէ. Աստուած ողորմածներուն կը ներէ » : —

Աստ բռնաւորն՝ ի մտի. « Աֆսո՜ս. ինչքա՜ն սըրտկայ զիս աքսորող չուներուն մկուն աղջկիը չէ, ան անզգամներուն մկուն՝ որ իմ մահս կուզեն, որ ախորժելի իր տառապանացը վրայ, ու անոր տեղը » ... —

Բայց Լուչիա սրտեռանդն և Թախանձէր, քաջալերեալ՝ ի տեսանել վարանս՝ ի դէմս և՝ ի կերպ բռնաւորին. « Սրտիդ զգացմունքը մի արհամարհեր. Թէ որ ինծի աս չնորքը չընես, Աստուած կընէ. կը Թողու որ մեռնիմ, ու աս տառապանքէն խալըսիմ. բայց քեզի... օր մը դուն ալ... բայց չէ, չէ. աղօթք կընեմ միշտ՝

Զայս ասացեալ, ընթացաւ ՚ի դուռն. երա-
գեաց Լուչիա զհետ նորա, աղաչէր զնա ան-
գրկեն, այլ նա եղև անտես. իսկ աղքկին ՚ի լսել
զբազկնիւն փակելոյ դրանն և զսահելոյ վա-
կաղակին, դարձաւ յանկիւն իւր, և հեծեծե-
լով հառաչէր. « Վա՛յ ինձ, որո՞ւն աղաչեմ հե-
մայ. ո՞ւր եմ, ըսէ ինձ՝ հոգիդ կը սիրես. ո՛վ
էր ան իշխանը... ան որ հետս խօսեցաւ »: —

« Ո՞վ է հա՞, ո՛վ է. կուզէս որ ըսեմ քեզի.
սպասէ որ ըսեմ. քեզ պաշտպանելուն համար՝
սկսար հպարտանալ, վրէժդ կուզես հանել, ու
զիս մէջ խաղցընել. իրեն հարցուր: Թէ որ ըզ-
քեզ գոհ ընել ալ ուզէի, անանկ անուշ խօս-
քեր չէի լսեր՝ ինչպէս որ դուն լսեցիր. ես պա-
տառ եմ, պառա՛ւ », յարել քրթմնջելով ան-
ձայն. « Անիծած աղքկիներ, որ արցունքնին ու-
խտաձնին պատրաստ է, ա՛ւ մէյ մը իրենցն է ի-
րաւունքը »:

Այլ ՚ի լուր հեծութեանցն Լուչիայի, և ՚ի
յուշ սպառնալից հրամանի իշխանին, խոնար-
հեցաւ յանկիւնն կողո, և քաղցրագոյնս յա-
րեալ. « Ինձ նայիմ, դեռ բան մը չէր ըսածս, մի
արամիր. միայն անանկ բաներ մի հարցըներ որ
չեմ կրնար ըսել քեզի. սիրտդ ուրախ բռնէ:
Ո՛հ, թէ որ գիտնայիր սրբոյի կը բաղձան ու-
րիշները՝ որ իրենց հետ անանկ խօսի, ինչպէս
որ քեզի հետ խօսեցաւ: Ուրախ եղիր. հիմայ
կերակուրդ ալ կուգայ. ես որ գիտեմ... ինչ
կերպով որ հետդ խօսեցաւ, աղեկ նշան է »:
Եւ ծածկելով զգժգունութիւնն իւր յարեալ.
« Եաթը պառկելու կերթաս, ինծի ալ անկող-
նին ծայրը քիչ մը տեղ կը թողուս »:

« Ձէ, չեմ ուզեր, ոչ ուտել և ոչ պառկիլ.
Թող տուր զիս միայնակ անկիւնը, մի մտաճնար
ինծի, բայց հոս կեցիր »: —

« Ձէ, անանկ բան չըլլար », ասէ պառաւն՝
գնալով՚ի բաց. և նստեալ յաթոռակ մի կիսա-
բեկ, հայէր յերկինն ահիւ լեալ և խեղճ, և
ապա հայեցեալ՚ի մահիճն իւր՝ զայրանայր թէ
դուցէ զգիչերն ողջոյն հացէ իւր՚ի բաց կալ
անսի, և քրթմնջէր զյորոյ: Բայց վասն ըն-
թրեացն ուրախանայր, յուսալով հաղորդ լի-
նել սեղանոյն: Իսկ Լուչիա ոչ ցուրտ ինչ ըզ-
պայր, և ոչ քաղց. և որպէս յանդգնեալ ոք՝
վիշաք իսկ և արհաւիրք ոչ սւելի ինչ ազդէին
՚ի նա, քան ՚ի սենդեալ ոք պատկերք երա-
զեալք:

Ի վեր վաղեաց՚ի բակնել դրանն, և՚ի վեր
առեալ զգլուխ իւր, ահաբեկեալ՝ գոչեաց.
« Ո՞վ է, ներս չեմնայ ո՛վ որ է »: —

« Բան չկայ, բան չկայ », ասէ պառաւն.
« Մարթան է, կերակուր բերեր է »: —

« Դուռը գոցէ, դուռը գոցէ », աղաղակեր
Լուչիա: —

« Էհ՛, հիմայ, հիմայ », պատասխանի ետ
պառաւն. և առեալ զսիսեն՚ի ձեռանէ Մար-
թայի, եդ՚ի վերայ սեղանոյ՚ի մէջ սենեկին.
և հրաւիրեր սոեպ զԼուչիա գալ ձաշակել՚ի
համեղ կերակուրս անտի, որ՚ի կիր արկեալ բանս՝
ըստ մտի իւրում ապրուս՚ի գրգռել զախոր-
ժակս նորա, և բացագանչելով՝ ընտիր է հա-
մոյն, և ասէր. « Ամոնք անանկ ապրնիս կերա-
կուրներն են՝ որ մեզի պէս հասարակ մարդկանց

երկան առեն համը բերաննին կը մնայ։ Աս ան գինիէն է որ աերս իր բարեկամներուն հետ... մեկը մեկալը ուրախութիւն ընելու համար որ կուգան, հէ»... —

Այլ երբեմ ետեւ՝ ղի առնային գրուատիք իւր ի գերեզմանին, ասէ. «Ուրեմն քու կամքդ է որ չես ուզեր ուտել. բայց վաղը չըսես որ ես ձքեզ չկարդարեցի, քեզի սիրտ չիտուի. իմ ուտելէս ետքն ալ քեզի բաւական կերա- կուր կը մնայ, երբոր խելքդ գլուխդ գայ, ու ուզես հնազանդելու»։

Եւ զայս ասացեալ, սկսաւ ուտել որպէս սո- վեալ. և երբեմ յագեցաւ, յարեաւ գնաց առ Լուչիա, և խոնարհեալ ի նա՝ հրաւիրեաց զինա անդրէն ի սեղան, առ ի գնալ ապա ի հան- գիստ։

Պառաւխանի ետ Լուչիա նուաղեալ ձայնիւ, և որպէս ծանրացեալ ի քնոյ. «Չէ, չէ, բան մը չեմ ուզեր»։ և ապա վճռաբար ևս զնոյն երկրորդեալ, յաւել. «Դուռը գոց է, ազէկ գո- ցած է»։ Եւ շուրջ հայեցեալ՝ յարեաւ կաս- կածագին գնայր առ խարխափ ի դուռնն կոյս։ Յառաջեաց պառաւն քան զինա և ձեռն ձգեալ ի սղնակն, սարսեաց զդուռնն, և ասէ. «Կը տեսնամ, կը լսես. գոց է թէ չէ, գոհ ես»։ —

«Ինչ գոհ, հոս տեղը գոհ», ասելով դար- ձաւ Լուչիա ի խորշ իւր, և յաւել. «Բայց Աստուած գիտէ ուր ըլլալս»։

Պառաւն ասէ. «Անկողնիդ եկուր, ինչ հոս տեղը կատուի պէս կծկեր նստեր ես. տես- նուած բան է որ մեկը իր հանգիստը չուզէ՝ երբոր կրնայ ունենալ»։ —

«Չէ, չէ, զիս հոս թողու տուր»։ —

«Դուն ես չուզողը. նայէ, անկողնին ազէկ տեղը քեզի կը թողում, ես քեզի համար ան- հանգիստ՝ մեկդին կը պառկիմ, երբոր կուզես գալ, տեր ես. բայց միւսդ պահէ որ ես քեզի այսչափ անգամ զուրցեցի»։ Զայս ասացեալ, եմուտ ձորձովքն հանդերձ ընդ վերմակաւ, և լռեաց։

Լուչիա կծկեալ կայր յանկեան անդ ան- շարժ, ծունկք ի վեր, արմունկք ի ծունկս կեցք, ձեռաք զերեսս ծածկեալ, ոչ ի քուն և ոչ արթուն, այլ հուպ ընդ հուպ զարթուցեալ ահուր խորհրդովք, ցնորիւք և արհաւրօք։ Մերթ զդաստագոյնս յիշէր յառակ որ ինչ յայնմ աւուր կրեալ էր առաւպանս, և խոր- հէր վշտագին յորպիսի մթին և ի սոսկալի երս պաշարեալ կայր. և մերթ յածեալ մտօք ի վայրս խաւարայինս, մենամարտէր ընդ խու- ճապս անառուգութեան և զարհուրանաց։ Յա- մեաց ընդերկար յայսմ տագնապի. և պարտա- սեալ վաստակաբեկ ընդարձակեալ զոտս իւր ընդարմացեալս, անկաւ յորսայս, և եկաց վայ- րիկ մի թմբրեալ որպէս ի քուն։ Ապա յան- կարծ երբեմ ի ներքին ազդմանէ զարթուցեալ, գուն գործէր զգաստանալ ի ապառ, և յինքն ժողովել զնարհուրդս իւր, գիտէ ընդէր ուր- պէս և ուր կայր։

Լուաւ յայնժամ զձայն խորդալոյ պառա- ւոյն յուշիկ և կերկեր, և տեսանէր աղօտ ինչ լուսոյ հետ ընդ հետ փայլուածն և նուաղումն. և էր պատրուգի առկայծեալ Հրագին արձակել

և ամիսոփեալ զնշոյլ դողդոջ, որպէս զալեաց
ընդ ծովեզերս երթևեկէ. և նշոյլն այն՝ մինչ չէ
հանդիպակայից էից ձև և գոյն՝ ի նմանէ ընկա-
լեալ՝ խուսէր յեռս՝ ի բաց, ընծայեալ աչաց
ոչ այլ ինչ՝ բայց շիտակ անդադար: Վաղ՝ ի միտս
նորա դարձան տպաւորութիւնք յառաջադոյն
ընկալեալք, և օգնեցին՝ ի ճանաչութիւն խառն՝ ի
խուռն երևելոց երից: Ծանեաւ եղկելին զգ-
բանա իւր, յարձակեցան զնովաւ միահամուռ
յիշատակք երիկեան աւուր սոսկալիք. և ամե-
նայն առաջնակայ արհաւիրք, և դադարուին իսկ
յայնքանէից յուզմանց, հանդիստն կարծե-
ցեալ, և լքուին իւր անդ, նորանոր արհաւիրս
՝ի նա արկանէին, և այնպէս հարեալ էր յոգի՝
զի ցանկայր մեռանել: Խորհեցաւ յայնժամ
աղօթել, և ընդ խորհրդոյն ծագեաց նշոյլ ինչ
յուսոյ՝ ի սիրտ նորա: Ա՛ռեալ՝ ի ձեռս անդրէն
զՊսակ կուսին, յալօթս եկաց. և ըստ աղօ-
թելոյն ելանել՝ ի չրթանց՝ վստահութիւն առա-
ւելագոյն զգայր՝ ի սրտի: Եւ այլ ևս յան-
կարծ անկաւ՝ ի միտս նորա խորհուրդ, զի ա-
ղօթք իւր առաւել ևս ատուածահաճոյ և լսելի
լինելին, եթէ նուէր ինչ յաւելցուր՝ ի նուսին՝ ի
պատմութեան անդ իւրում: Զմոռաւ էած որ
ինչ էրն կամ լեալ էր իւր սկզբնագոյն, քանզի
յայնժամ չզգայր ինչ այլ՝ բայց սոսկութիւն, և ոչ
նշոյլ այլ՝ բայց ապաստութիւն՝ ի վչտաց անտի, և
հաստատեաց՝ ի մտի նուիրել զոյն Աստուածոյ:
Յարեաւ, ծունր եդ և ձեռս՝ ի կուրծս ածեալ՝
ունելով զՊսակն՝ ի կախ, և զաչս յերկինս ամ-
բարձեալ, ասէ. « Սուրբ Աստուածածնին, շատ

անգամ քեզի ապաւիներ եմ, ու միշտ մխիթա-
րեր ես զիս. դուն որ այնչափ վիշտ քաշեր ես,
ու հիմայ երկինքը փառաւորուած՝ այսչափ
հրաշքներ կընես վշտացելոց, օգնէ ինծի Տիրա-
մայր, զիս մօտ դարձուր. քու առջիդ կուխ-
տեմ՝ որ միշտ կոյս մնամ, կը հրաժարիմ, կը
թողում իմ խեղճ սիրելիս, քու կինդ միայն ըլ-
լալու համար »:

Զայս ասացեալ՝ խոնարհեցոյց զէլուխ իւր,
և արկ զՊսակն կուսին զպարանոցսն իւրով
՝ի նշանակ նուիրմանն, որպէս պահպանակ և
զէն նորոյ զինուորութեանն՝ յոր գրեցաւ: Եւ
բազմեալ՝ ի գետնի, զգայ խաղաղութիւն մին
և անդորր վստահութիւն՝ ի սրտի. խորհեր՝ ի
բանն յայն անծանօթի իչխանին Վաղը առաւ,
և թուէր նմա այն խոստումն ազատութեան:
Զգայութիւնք նորա խոնջք յայնքան պատե-
բազմէ, ՝ի հանդարտել մտացն, ՝ի մերձենալ ա-
ռաւօտուն թմրեալ, և անուն Տիրամօրն ՝ի շըր-
թունս իւր, փակեաց զաչս խոր ՝ի քուն, ՝ի
քուն անբիծ և ան:

Բայց էր յամրոցի անդ և այլ ոք, որ ցան-
կայր ՝ի քուն լինել, և չկարէր: Մեհենաւ իշ-
խանն, կամ մանաւանդ փախուցեալ յաղջկա-
նէն, էտ պատուէր ածել նմա ընթրիս, և որ-
պէս սովորն էր՝ այդ արարեալ կազմանց ինչ ամ-
բոցին, բերեալ միշտ ՝ի մոմ զպատկեր աղջկանն
կենդանի, և զբարբառ նորա ՝ի լսելիս, եր-
թեալ էր ՝ի սենեակ իւր, և փակեալ անդ խու-
ճապաս, որպէս թէ առաջի կայր նմա ձակա-
տել ընդդէմ գնդի թշնամեաց. և մերկացեալ

փուԹանակի զՀանդերձս իւր՝ անկեալ կայր ՛ի մահիճս: Ահա պատկերն այն ևս քան զևս ՛ի միտս նորա սկեռեալ, Թուէր նմա ասել՝ « Զի քննասս պիտոր »: Խորհէր նա ՛ի մտի, « Ա՛ՀՆ կանացի անխելք հետաքրքրուԹիւն մըն էր՝ որ միաքս ինկաւ առ աղջիկը տեսանելս. իրաւունք ունի եղեր Նիսպիսոն, առ անբանի պէս մարդը. մարդուԹենէ կէտլայ եղեր մարդ... ալ կարծես որ մարդ չէմ. ինչ եղայ. սատանայ մտաւ փորս, աս ինչ տեսակ բան: Զկնի գիտեր առաջուց որ կինկոիք կուգան կը կանչէրըտեն: Էրիկ մարդիկ ալ մկուս մը որ գէմ չեն կրնար դնել, կուգան. չար սատանայ. գոնէ կինկան արցունք տեսած չըլլայի »:

Սատանօր յուշ եղեն նմա դէպք յոգուՀք, յորս ոչ պաղատանք և ոչ ողբք խափանեալ էին զնա ՛ի կատարելոյ որ ինչ ՛ի մտի եդեալ էր. այլ այն ամենայն անցելոց իրաց յիշատակ, փոխանակ դրդուելոյ զնա ՛ի հաստատուԹենէ մտաց՝ որ վաղ խակ յողդողդէին ՛ի կատարել զձեռնարկ իւր, և փոխանակ չկնչուցանելոյ ՛ի նմա զգուԹն գժպհի, ապգեին ՛ի նա սոսկումն լինի և սարչանա՝ չգիտեմ որպիսի: Մինչև Թուէր նմա սփոփումն յուշ ածել զպատկեր աղջկանն՝ որում ընդդէմ խնդրէրն արիանալ, և ասէր ՛ի մտի. « Դեռ ողջ է աղջիկը, կրնամ ա՛լ զատել զինքը, կրնամ ուրախացընել: Կրնամ տեսանել անոր դէմքին զուարԹանալը. կրնամ ալ լսել իրեն՝ Ներէ ինծի... Ի՞նչ. Ներէ՛ ինծի... ԹողուԹիւն խնդրէլ... աղջիկէ մը... մեկ դի ձգէ:.. Բայց ԹէՀ որ խօսքով մը՝ բառով

մը՝ սատանային ձեռքէն կարենայի խլըսել, ինչո՞ւ չըսէի. ինծի կուգայ որ պէտք էր ըսել:.. Ո՛Հ, ինչ գարձեր եմ, մարդկուԹենէ էլեր եմ»: Եւ Թաւալէալ ՛ի միւս կողմն յանկոյնն՝ որ կարծրանայր պնդանայր նմա, և ընդ վերմակաւ՝ որ Թուէր նմա ծանրաբեռն կապարեայ, ասէ. « Մէկդի՛, մէկդի՛. սատանի խեՀուԹիւն. Ներ ուրիշ անգամ ալ մտքիս անցեր գացեր են, աս ալ կանցնի կերԹայ »:

Եւ առ ՛ի մերժել զայն ՛ի մտաց իւրոց՝ խընդրէր գտանել այլ ինչ յայնպիսեաց, յորս սովոր էին միտք իւր զբաղել. այլ չէգիտ և ոչ մի: Ամենայն ինչ Թուէր նմա կերպարանափոխ լեալ. որ ինչ յառաջն մէջին զնա լղձէ, չէին նմա յայնժամ ըղձալի. կիրք նորա եղեն որպէս երկիւղ, որ սաստուցեալ յանկարծ ՛ի սաստկէն՝ զկայ առնու յամառեալ, ոչ ևս կամի գնալ յառաջ: Խորհէր ՛ի գործս իւր սկսեալ՝ որ կային Թերի, և փոխանակ խրախուսելոյ ՛ի կատարումն նոցին, և փոխանակ գրդռելոյ ընդդէմ արդելչաց, ուր ՛ի ՀաՀ պատահէր զայրացեալ առ ՛ի զբաղումն, անկանէր ՛ի Թախիծ, և գոգցես լիմն ՛ի սոսկումն ընդ ձեռնարկս իւր: Թուէր նմա կենցաղս այս Թափուր յամենայն ըղձից ՛ի կամաց և ՛ի գործոց, լի գԺոխըմբեր յիշատակօք. ամենայն ժամ Թուէր նմա հանդոյն այնմ՝ յորում կայր, որ ծանրաբեռն էր նմա: Ի ցնորս մտաց նորա չուրջ կային ամենայն արբանեակք իւր, և չգտանէր ինչ տալ նոցա հրաման. նա աւանիկ և տեսանել զնոսա և կալ ՛ի մէջ նոցա գԺպհի էր նմա, գալ

չէր՝ ի նոցանէ, և խոչընդոտան Թուխին նմա։ Ի
խորհել ինչ վասն վաղուընն, գրաւեր զմիտս նո-
ցա խորհուրդ արձակելոյ՝ ի վաղիւ անդր զաղ-
ջիկն ատառապեալ։ «Չա՛, ազատեմ խեղճ աղ-
ջիկը, առաւու եղածին պէս՝ վաղեմ երթամ ը-
սեմ երեն, Աղտա եա, դնա. հետը ձամբայ ցու-
ցընող ալ դնեմ։։։ Բայց Ռոտրիկին առած
խօսքա ոՀր կը մնայ։։։ Ռոտրիկը ով է »։։։ Եւ
որպէս ոք հարցեալ յանկարծ՝ ի գտաւաւորէ
հարցուած գժուարին, չիմթեալ տալ ինքեան
պատասխանի, կամ մանաւանդ միւս ինքեան՝
որ բաղմէր իւր գտաւաւոր ահեղ, և հարցա-
նէր. «Պուն ինչո՞ւ առանկ մկկէն, առանց ա-
ղաչանքի, առանց առելուածին մը կամ վախ
մը ուսնեցնալու, յանձն առիր Ռոտրիկին կամքը
ընել, խեղճ ու անծանօթ աղջիկ մը թշուառա-
յընել»։ ոչ միայն չգտանէր պատճառս անբաւիր
առնելոյ զգործ իւր, այլ և ոչ գիտէր՝ որպէս
զհոստուհին զայն արար։ զի ոչ կամք կշռադա-
տեալ, այլ առաժամայն բերուին ոգւոյ ածեալ էր
զնա՝ ի լուր սովորականացն զգայմանց, զնէտ
եկեալ յոյզ բազում ինչ կանխաւ գործեցելոց։
և գտաւաւորն ինքնագատ՝ ի պահանջել զհամար
միայնոյ այնր գործոյ, անկանէր՝ ի քննութիւն
իւրոյ բովանդակ կենաց։ Յետս յետս ընկրկէր,
գնայր ամ յամէ, գործ՝ ի գործոյ, արիւն յա-
րեներ, եղերան յեղեռանէ։ և մի մի յայնցանէ
Թուխեր առ գիտակից միտս իւր, օտար՝ ի զգայ-
մանց՝ որ ածեալ էին զինքն՝ ի կամէ և՝ ի
գործել զայն։ և իւրաքանչիւր յայնցանէ ի-
րեւէր հրէշ այլանդակ, զոր նոցին զգայմանց

ծածկեալ էր յիւրմէ։ իւր էին ամենեքեան, և
սովաւութիւն մտաց իւրոց զինքն կացուցանէին, և
յարակից ընդ մի մի՝ ի գործոց անդրէն ե-
կեալ՝ ի տեսիլ, արկանէին զնա՝ ի յուսահա-
տութիւն։

Յարեաւ եկաց՝ ի նիստ յանկոյնի՝ խելացե-
ղեալ, արկ մտերգին զաչ՝ ի յորմն առընթեր,
բուռն եհար խլեաց անտի զատրճանակն, և։։։
՝ի կարճել զկեանս՝ որ էր նմա անբերելի, միաք
իւր յափշտակեալ յարհաւրաց, և՝ ի գեռևս
անմեռ անձնասիրութենէ, արկին զնա՝ ի ժա-
մանակն՝ յետ մահուան խակ իւրոց յարատև։
Պատկերէր՝ ի մտի զգեստն իւր ոգեզգեալ և
անչարժ, անկեալ ընդ բռամբ վատագունին՝ ի
յերկարակեացս քան զինքն։ զաչուքն բըզ-
նաւից և զաղմուկ ամրոցին՝ ի վաղիւ, զամե-
նայն ինչ վեր՝ ի վայր հարեալ, և զինքն անզօր
անբարբառ ընկեցեալ՝ ի բաց, ո՞ գիտէ ուր։
Ջմուռս ածէր որ ինչ զոյացք հանգերձեալ էին
անցանել անդ և՝ ի չքնակայս և՝ ի հեռաստա-
նեայս, և զինդուհին Թշնամեաց իւրոց։ խա-
ւարն խակ և լռութիւն այնպիսի ինչ սխուր և
սոսկալի՝ ի մահու անդ ցուցանէին նմա, զի
մէջը արդեօք զանձն՝ ի գեհ առաջն ամենեցուն
և կորնչէր, եթէ՝ ի տուընչեան՝ ի բացն գտա-
նէր։ Եւ մինչդեռ՝ ի խորհուրդս յայսոսիկ գա-
ռնիս խորասուզեալ մերթ՝ ի վեր, մերթ՝ ի
վայր, զաչեան տարձանակին մտատանջն ուժգին
եբր՝ ի ցնցմանէ ջղացն շարժէր, այլ նմա խոր-
հուրդ անկեալ՝ ի միտս նորա՝ ասէ. «Անգին աշ-
խարք որ պղտկուց կըսեին ինծի, ու հիմայ

ալ կը լսեմ միշտ՝ որ կայ եղբէր, թէ որ քա-
հանաներուն գլուխն է, ինչ կընեմ ես, ինչո՞ւ
մեռնիմ, ինչ ինամս ունին ինծի ինչուան հիմայ
ըրածներս, խենթութիւն է մեռնիլը... Բայց
Թէ որ իրաւցընէ ուրիշ կեանք մըն ալ կայ...

Յերկբայութենէ ասոնք և՛ վտանգէ անկաս
՛ի մեծ ևս՛ի դառնագոյն յուսահատութիւն,
մանաւանդ իսկ անխուսափելի. ընկերս զղէնն՛ի
ձեռանէ, և զդողանի հարեալ՝ զէրան փեռեր,
կրճռեր զատամունս: Ա՛յլ յուշ եղև նմա յանկարծ բան աղջկանն սուղ ինչ յառաջ՛ի նմանէ
՛ի ձև աղերսանաց յեղյեղեալ՝ Աւօ՛ւօ՛ւ ողջ-
մա՛ջ նե՛րո՛ւն ի՛ աղբիւր: և Թուէր նմա լսել զայն ասա-
ւիս մեծաւ՛ խառն ընդ յոյս ինչ հեռաւոր: Եւ
վայրկ մի սփոփեալ, եղոյց զձեռս՛ի վայր, և
հանդարտագոյն յառեալ զմիտս՝ յորմէ զբանն
էր լուեալ, ոչ ևս իբրև՛ի կասկեալ իւր հայեր
՛ի նա, ոչ ևս իբրև յաղաչաւոր, այլ որպէս՛ի
պարզևատու, որպէս՛ի միխիթարիչ: Սպասէր
ըղձիւք այդուն լինելոյ, առ՛ի փուքթալ ազա-
տել զնա, առ՛ի լսել՛ի չրթանց նորա և այլ
ինչ բանս սփոփանաց վրկաւէտս. և՛ի ցնորս
մտացն՝ ինքն զնա առ միայն ածէր. և վարա-
նեալ՛ի միտս իւր, ասէր. « Հապա ե՞տքը. ինչ
պիտոր ընեմ ինչուան իրիկուն, վարն ալ, մե-
կալ օրերն ալ. հապա գիշերները. գիշերն որ
տասուերկու ժամէն կուգայ՝ ինչպէս պիտոր
անցընեմ. ա՜հ, չիմաածեմ»: Եւ որպէս Թէ ան-
կեալ՛ի վիհ ապառնւոյ, ինդրեր տարապարա
զբաղումն և հնարս անցուցանելոյ զսիւ և ըզ-
գիշեր: Մերթ խորհէր մեկնել յամրոցէն,

գնալ՛ի տար աշխարհ՝ ուր ոչ ոք ծանիցէ
զինքն, և ոչ զանուն իւր. այլ զէպայր՝ զի ինքն
ընդ իւր էր միշտ: Մերթ նչոզէր՛ի նմա նշոյլ
ինչ յուսոյ գառնալոյ յառաջին զբօրութիւն
իւր և՛ի կամս, և համարէր՛ի վաղանցուկ
ցնորս կալ. էր զի զարհուրէր՛ի տուընջենէ՝
որ յերևան ածէր իւրոցն զթշուառութիւն
իւր, և էր զի ցանկայր տուընջեան՝ յուսով ա-
ծելոյ նորա և՛ի միաս իւր զոյս:

Եւ ահա՛ի ծագել այգուն, սուղ ինչ յետոյ
քան զփակել աչաց աղջկանն առ վայր մի՛ ի
նինջ, մինգեռ կայր յանկողնի՛ ի նիստ՝ ազ-
գեաց՛ի լսելիս նորա ազօտ ինչ, այլ ջգիտեմ
որպիսի ձայն զուարթազին. ուշնկդիր եղև,
և ծանեաւ զի էր ձայն զանդակի՛ ի հեռաս-
տանէ՛ի հնչելն ածնական. և վայրկ մի յետոյ
արձագանգ՛ի լեռնէն, որ երբեմն երբեմն կըրկ-
նէր զձայնն զայն մեղմով քաղցրահառնեալ ընդ-
դէմ: Ապա լսելի եղև միւս այլ հնչելն զանգա-
կի՛ ի մօտոյ, գարձեալ ածնական, և ապա այլ:
Ոստեաւ՛ի վշտալից անկողնոյն, և կիսաղգեաս
գիմեաց՛ի պատուհանն ասելով. « Այնինք ինչ
ուրախութիւն է, ինչ ուրախալի բան պատա-
հեր է առնոց »: Աչերինք էին միգամած և եր-
կինք ամպապատ գորշ. այլ՛ի նուազ լոյս այ-
գուն, որ տակաւ պայծառանայր, երևեցին՛ ի
ճանապարհին՛ ի խորս հովտին անցաւորք. այլք
դեռ ևս ելանէին՛ ի գրունց, բնաւք յայնմ
կուսէ լերւ կոյս հովտին, յայլմէ ամրոցին, ըզ-
գեցեալք առհասարակ հանգերձս ուրախու-
թեան՛ ի ցնծութիւն անսովոր:

Աստ Իշխանն. « Դիւահարքը են սոսկք, ինչ ուրախանալու բան կրնայ ըլլալ սա կողմերը. ո՞ր կերթան սա բոլոր խաւնիճաղանճը »: Ձայն ետ միւմ 'ի հաւատարմոյ անոն Բաջայ, որ ինքնէր 'ի մերձակայ սենեկին, և եհարց. « Ի՞նչ է սա չարժումնքը »: Նա որ ոչ աւելի ինչ քան զոեր իւր գիտեր, ասէ. « Երթամ իմանամ »: Կայր Իշխանն յեց 'ի պատուհանն՝ ակնկառոյց 'ի սեսարան անդր գնայուն. էին անդ ոլք և կանայք և մանկտի. խումբ խումբ, ղոյգ ղոյգ, և առանձին. կէսք զհետ նախընթացոյն հասեալ՝ ուղեկցէին, այլք յերանէն 'ի տանէ՝ ընկերէին որոց պատահէին, գնալով ամենեցուն որպէս բարեկամք 'ի միասին ընդ ժամագրեալն ուղն: Տեսիլ նոցա յայտ առնէր ձեռ և հրճուանս, և հնչէին զանգակաց, թէպէտև ոչ դաշնակաւորք՝ այլ որ մտա և որ հեռի միաբան հնչէցեալ, թուէին որպէս չարժուածք քնաւորականք առ 'ի լնուլ զթերին բարբառոյ՝ որ չկարէր 'ի վեր անդր հասանել: Իսկ Իշխանն կայր միշտ 'ի պնին, և ա քան զևս յառելեալ 'ի յանկուճին գիտելոյ՝ զինչ այն էր, որ զբազմութիւն այլ և այլ տզդայ միաբանէր 'ի հաւասար ցնծութիւն:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Դարձաւ Քաջն ընդ հուպ, բերելով զոյգ՝ զի հասեալ էր յերկին Կարդինալ արքեպիսկոպոս Մլանոյ 'ի... լինել անդ զայն օր, և լուր գալստեան նորա տարածեալ չուրջ 'ի պիւղորէս, չարժեալ էր զամենեսեան 'ի բազձանս տեսանելոյ զնա, և հնչէր զանգականին 'ի նշան ցնծութեան քան թէ ազդ առնել ընդառաջաւ նորա: Եւ կացեալ անդ Իշխանն միայնակ, առաւել ևս մտայոյզ հայէր 'ի հովիտն, և ասէր 'ի մտի. « Մեկ մարդու մը համար այսչափ մարդիկ ոտք ելած, ամենքը ուրախ, մինակ մարդ մը տեսնելու համար... Աստնք ամենքն ալ հարկաւ մեյմեկ սատանայ ունին զինքնք տանջող. բայց մեկուսը խմինիս չենմանիր. ինչ ունի սա մարդն որ կրնայ աստված մարդիկ ուրախացընել: Կարելի է սակ կը բաժ-

նէ… բայց առանք ամենքը ողբսմունքիւն առ-
նելու չեն երթար: Կրնայ ըլլալ որ հրաշք մը,
խօսք մը… ո՛հ, ո՛ւր էր՝ անանկ խօսք մը ունե-
նար, որ զիս ալ կարենար ուրախացընել. Թէ
որ… ինչո՞ւ ես ալ չերթամ երեն. ինչո՞ւ չէ…
Հա… երթամ խօսիմ հեռը. բայց մինակ կու-
զեմ խօսիլ:… Ի՞նչ ըսեմ երեն… ինչ որ, ինչ
որ… նայիմ ինչ կըսէ ինծի »:…

Զայս այսպէս խառն 'ի խուռն 'ի մոլ եգեալ,
զգեցաւ ձեռով, արկ գլխարկուն 'ի ձև ին-
զնուորական, առ զաւրձանակն 'ի վերայ
մահճին ինացեալ, արկ զայն ասոի գօտւոյն,
և անտի սիւս այլ խչեալ յորմոյ· վարեաց ըզ-
գաշնակ իւր 'ի նմին գօտւոջ խւրամ. և գնաց-
եան հանգոյն իւր անուանի՝ խչեալ և զայն
յորմոյ, արկ զուսոյ խւրմէ 'ի կախ. և առեալ
գնոյր իւր, եւ 'ի սենեկէ անտի, չորաւ նախ
'ի խուց անդր՝ ուր Թողեալն էր գնուչիա. և-
Թող գնդացանն արտաքոյ յանկեան ուրեք առ-
դրան · բաղնեաց, ձայն եառ: Նչ պառաւն ընդ-
առաջ յանկողնոց, ընթացաւ բանալ. եմուտ իշ-
խանն, և շուրջ հայեցեալ, եառես զաղջկին հան-
դարտ յանկեան իւրում. եհարց ցպառաւն.

« Կը քնանայ· անկի՞նը· ան էր առաջադրածս »:

« Ի՞նչ ընեմ, ես ամեն չանք ըրի, բայց ինքը
չուզեց, ոչ ուտել, և ոչ գալ »… —

« Թող առաջ որ հանդարտ քնանայ, անհան-
գիստ մ'ըներ գինքը· երբոր արթընայ… Մարթան հնմայ քովի խուցդ կուգայ· գինքը
կը խրկես բերելու ինչ որ աղջկին կուզէ:.
Երբոր արթընայ… ըսէ երեն որ՝ ես… ըսէ

որ տէրս քիչ մը դուրս ելաւ, կը գառնայ…
ըսէ որ ուզածը պիտոր ընեմ »:

Կարկեաղ եկաց պառաւն, և ասէր 'ի մտի·
« Ո՞վ է առ աղջկիկը, իշխանուհի՞ մըն է »: —

Ել իշխանն, էառ զհրացանն իւր· յղեաց ըզ-
Մարթա 'ի սենեաւն ընթերակայ, արձակեաց
'ի պահ գնի 'ի Փայջաց՝ որ նախ գիպաւ նմա, զի
մի այլ ոք բաց 'ի հինգէ անտի մտցէ 'ի սենեակ
անդր. և ինքն եղեալ յամրոցէն, իջանէր ար-
շաւակի:

Զեռագիրն չասէ ինչ ոչխափ հեռի էր ամրոցն
'ի գեղջէն, ուր կայր Կարգինալն· այլ յառա-
ջիկայ պատմութենէս յայտ է՝ գնի որ 'ի միջի
ուղին չէր ինչ աւելի քան գերկայն ինչ ձեմ
գբօսանաց: Ի գիմելոյ միայն բնակչաց հովտին,
և հեռաբնակ ևս օրերոյ 'ի գիւղ անդր, չէ
մարթ գուշակել գայն, գնի 'ի յիշատակագիրս
ժամանակին գատանեմք՝ գիմեալ յոգնախուռն
բազմութեան 'ի քսան և առաւել ևս մղոնաց
հեռաստանէ, առ 'ի տեսանել գկարգինալն:

Փաղք, որ հանգիպէին նմա ընդ գառ 'ի վերն,
գկայ առնուին յանցանել նորա՝ գնի Թերևս ու-
նէցի ինչ տալ ինքեանց հրամանս, կամ ընդ իւր
կամիցի զրոյ 'ի ապատաւորութիւն, և չկարէին
գուշակել ինչ 'ի գիմաց նորա և յականարկու-
Թեանց՝ որովք գնեծարանս նոցա ընդունէր:

Ի հասանել նորա յարահեան՝ զարմանային
անցաւորք, տեսանելով գնա միայնակ անապա-
տաւոր: Հասեալ 'ի գիւղ անդր, եգիտ ամբոխ
բազում յոյժ, այլ անուն նորա բերան 'ի բե-
րանոջ անցեալ, տեղի տայր նմա ամբոխն: Մա-

աեաւ առ մի ոք յամբոխէն, և եհարց. « Կարդինալը ո՞ր է »: Նա պատասխանի եառ մեծապանօք. « Ժողովրդապետին առանն է »: և եցոյց նմա զառանն: Եմուտ անդր իշխանն, և ի փոքրիկ դաւթի ուրեք՝ ուր կային երիցունք բազումք, որք հայելին ի նա զարմացմամբ և կասկածանօք, եաես հանդէպ դառան ի բաց՝ որ աձէը ի սրահ փոքրիկ, ուր կային այլ ևս երիցունք: Ի բաց եդ զչրացանն յեց յանկիւն մի դաւթին, և եմուտ ի սրահն. անդ ևս ակնարկութիւնք, չքունք, և անուն նորա յեղյեղեալ, և լռութիւն: Իսկ ինքն դարձեալ ի մի ի նոցանէ, եհարց. « Ո՞ր է Կարդինալը, խօսք ունիմ հետը »:

Նա պատասխանի եառ. « Ես օտարական եմ », և շուրջ հայեցեալ կոչեաց զնաջակիր Կարդինալին՝ որ յանկեան ուրեք սրահին կայր, և ասէր յայժմաւ ի մրմունջ առ մի յընկերացն. « Այն է հա՛, հռչակաւորը, հոս ինչ բան ունի. հեռո՛ւ »: Ա՛յլ հարկ եղև նմա գնալ ի կոչ անդր, որ ի լռութեան հաստարակաց եկն ի յայտ. և խոնարհեալ առ իշխանն, լուաւ զինդիր նորա: Ի վեր առեալ հեռագրքրուեամբ զաչս իւր յերեսս նորա, ցածոյց խոկոյն. և կարկեալ ի սկզբան, ապա ասէ թոթովելով. « Ձեմ գի՛... գիտեր որ հիմ՛... հիմայ՛... Կարդինալը կըը՛... կըննայ՛... ինչ որ է երթ՛... երթամ նայիմ՛ »: Եւ ակամայ ջոգաւ ի ներքս՝ ազգ առնել:

Ա՛յլ ատաւնօր չկարեմ զանց առնել, առանց վայրիկ մի զկայ առնլոյ, որպէս ուղևոր՝ որ

խանջ և տիւսր ի բազում երկայն գնացից ընդ երկիր խոպան և վայրենի՝ հանդէպ յարօտի ուրեք ընդ հովանեաւ վարսագեղ ծառոյ, առ աղբեր ջրոյ կենդանւոյ: Պատահէ ինձ աստ այրս այս, որոյ անուն և յիշատակ դարուց ի գարս ազգեն ի միտս և ի սիրտ քաղցր մեծարանս, և սիրելի առնեն զնա. քանի՛ առաւել յետ այսքանեաց աղետաւոր տեսարանաց, յետ բազմապատիկ և գժնդակ եղեռնութեանց: Չարկ անհրաժեշտ սոսկե զնս անցանել սակաւուրք զառնէ այսպիսւոյ. այլ որոյ միանգամ չէցէ ինչ փոյթ գիտել զնմանէ, մարթ է նոցա թողուլ զգլուխս զայս ի բաց, և ընդ պատմութիւն առաջնկայից երացս յառաջ խաղալ:

Ֆեաերիկ Պորրոմէոյ, ծնեալ յամին 1564, եկաց մի ի սակաւուց արանց՝ որք զՀանճար ազնխուրթիւն զառաւելութիւնս առհմի և զանսպառ ջանս ի խնդիր և ի կատարումն լաւագունին յամենայն ժամանակի ի կիր արկին: Կեանք նորա է որպէս վտակ ի մէջ վէմից բղխեալ ի վիմէ, որ ոչ լճացեալ ուրեք և ոչ պղտորեալ յերկայն ընթացս ընդ այլ և այլ երկիր, գնայ անկանի ի գետ: Ի բարեկեցութեան և ի փառս ի մանկութենէ զՀետ եղև խոնարհութեան և հրաժարելոյ յանձնէ, յունայն հաճոյից և յանլրաւ գոռոզութենէ, ցանկացեալ խակապէս փառաց և ճշմարիտ բարեաց, որ Թէպէտ ըզգացեալ ի սրտի, Թէպէտ ոչ, իլանեն որդի ի հօրէ ժառանգութեամբ ընդ նախնապոյն տարերս կրօնական վարժից: Զհետ եղև այնոցիկ, ծանեաւ զայնոսիկ բովանդակութեամբ,

ախորժեաց և սիրեաց, էպիտ՝ որպէս էինն՝ ձկնարիս, և գիտաց՝ զի հակառակացն էր մարթ ձկնարիս դոլ, թէպէտ և այնուբեկ ինձանէն յազգէ յազգ անվրէպ ժառանգուեալ, է ուրեք՝ զի և՝ նոցունց իսկ չըթանց. և առաջադրեաց զձկնարիսան ունել իւր յօրինէն գործոց և խորհրդոց: Խելամուտ եղէ՝ զի չէն սահմանեալ կեանք՝ ի բեռն, որպէս առաւելագունից՝ ի մարդկանէ թուին, և ոչ որպէս կիսոց՝ ի ղբօսանս. այլ ամենեցունն իսկ՝ ի պէտս գործոց, զորոց առեալ էն համար. և սկսաւ՝ ի տղայ ոլոց խորհել՝ թէ որպէս մարթէիր նմա զնոր կեանս առնել օգտակար և սուրբ:

Յամին 1580 յայնմհետ զհաստատուն միտս իւր՝ նուիրելոյ զանձն՝ ի սպասաւորութիւն եկեղեցւոյ, և ընկալաւ զձև եկեղեցական՝ ի ձեռանէ հօրեղբօրորդւոյ իւրոյ Կարոլոսի Կարդինալի, զոր համբաւ հասարակաց անդստին ընդ սուրբս դասէր: Յետ սակաւ միոյ եմուտ՝ ի վարժարանն կառուցեալ՝ ի նմանէ՝ ի Փաւիա, որ բերէ յարդ զանուն ազգատոհմին. և անդ հանապազորդեր՝ ի սահմանեալ պարապմունս, երկուս ևս այլս յաւելեալ՝ ի նոսին՝ կրթել՝ ի քրիստոնէական հաւատս զպիտապտյնս և զանբաւունչս՝ ի ժողովրդենէ. և այլ առնել, ծառայել, արդահատել, և առնել ողորմութիւնս հնարադայ: Եւ օգնեալ՝ ի պետութենէ, որ հնորհէր նմա զամենայն, ձգեր զընկերս իւր՝ ի ձեռնհասութիւն բարեբարութեան, և յամենայն գովելի և յօգտակար գործս, օրինակաւն իւրով մեծարեալ՝ ի նոցանէ յիշնանութիւն,

զոր և բարեմասնութիւնք իւր բնածինք՝ առանց ալնուաականութեան տոհմին՝ տային նմա: Գերակայութեան՝ զոր յայլսմ կարգի մարթ էր նմա ունել՝ ոչ միայն չէրև՝ ի խնդիր, այլ և ամենայն հնարիւք խոյս ետ յայնմանէ. ընտրեաց սեղան անպատճոյճ և սակաւապէտ, զգենոյր պարզ և անպատճոյճ, ըստ այսմ և այլ ամենայն կենցաղավարութիւն իւր: Բայց թէպէտև ոմանք յազգականացն բողոք ունէին՝ որպէս թէ զիտաս տանն այնուիկ նուաստացուցանէր, սակայն ոչ կամեցաւ առնել լինչ փոփոխումն: Միւս ևս պատերազմ սակաւ ընդ գասոլարակս իւր, որք գաղտագողի և իբր յանզգաստից դնէին՝ ի սենեակս նորա և շուրջ ըզնովաւ կահս իշխանականս, առ՝ ի հանձոյ լինել նմա, կամ՝ ի ծառայական սիրոյ՝ որ օտարին փառաք մնապարծի, կամ ձախողակի խոհեմութեամբ՝ որով խիճան ոմանք յառաքինութենէ, ՝ի միջատհմանի քարոզելով վկատարերութիւն, և զկէտ միջատհման զետեղելով ուր հասանէն ինքեանք, և ուր հաճոյ է նոցա կալ: Բայց պատանին անպարտելի՝ ի ձգանց՝ նոցա, ատատեր նոցա՝ ընդ արբունս և ընդ պատանեկութիւն դեռևս գոլով:

Ա՛ն կենդանութեամբ Կարդինալին Կարոլոսի, որ քան և վեց ամաք երիցագոյն էր քան զնա, առաջի երեսաց նորա՝ որ սրբութեան էր պատկեր կենդանի, և շուրջ պատեալ՝ ի մեծատանաց և՝ ի պատկառելի լռութենէ, և համբաւալից մեծագոր, քանալ պատանւոյն Ֆէտերիկ կեայ հետևել կենցաղավարութեան և հանձա-

ըոյ այնպիսումն իւրոյ ազգականի, չէր ինչ զար-
մանալի. այլ քաջ ընդ այն էր զարմանալ, զի և
յետ մահու նորա ոչ ուստեք եղև զգալի կորու-
սանել պատանւոյն, որ քանամենի գեռևս էր
յայնժամ, զառաջնորդ իւր և ուղղիչ: Չանձա-
ըոյ նորա և գիտութեան և կրօնից համբաւ՝ որ
յաւելցոյր, ազգականութիւն և պաշտպանու-
թիւն հզօր կարգինալաց, աղնուութիւն ազգ ա-
տոհմին, և անուն իսկ՝ որում կարօղս յարակ-
ցեալ էր ընչանակութիւն սրբութեան և մեծու-
թեան, և բնաւ ամենայն ինչ՝ որ պարտի, և ա-
մենայն ինչ որ կարէ գերասանիանել զեկեղե-
ցական ոք, պար առնուին 'ի նմա, և տային գու-
շակել զհանդերձեալ բարձրութիւնն նորա: Ա՛յլ
ինքն գիտելով՝ զի բարձրութիւն ճշմարիտ քրիս-
տոնէի է 'ի ծառայել այլոց, զանգիտեր յեկե-
ղեցական աստիճանաց, և խոյս տայր յայնցա-
նէ. եթէ ոչ եթէ չկամելով ազատասուրել այլոց,
ուր սակաւուց յոյժ իբրև զնա տուեալ էր ըզ-
կեանս իւրեանց 'ի ազատասուրութիւն մարգ-
կան, այլ զի չհամարէր զանձն բաւական այն-
պիսւոյ բարձր և վտանգաւոր ազատասուրու-
թեան: Վասն որոյ 'ի կամել կղեմայ ուղեւորը-
զի կացուցանել զնա արքեպիսկոպոս Միլանու,
խուովեցաւ յոյժ, և հրաժարեաց. այլ ստի-
պեալ ապա 'ի հարկէ հրամանին, յանձն էառ:

Ցայս իսկ է զի հրաժեշտք այսպիսիք չէն ինչ
գժուարին, և ստէպ պատահին. կեղծաւորու-
թեան չէն ինչ պէտք առաւելագոյն ճգան հան-
ճարոյ առ այն, քան խելացատակութեան առ
'ի ծաղրել զայն: Ա՛յլ մինչ չկարեմք գոլ և

ճշմարտիւ հրաժարուն խոհական և առաքի-
նի. վարք և համեմատութիւն վարուց ընդ
բանս, և բանք՝ որ զհրաժեշտն զայն բացա-
տրեն, 'ի չրթունս իսկ սուտս և կեղծաւորս
գեղեցիկ են միշտ՝ կանխեալ և հետևեալ 'ի վա-
րուց, որ անփոյթք անձանց՝ նուիրին 'ի սէր
հասարակաց:

Ֆէտերիկ կացեալ արքեպիսկոպոս քաղա-
քին՝ պէտ անձին արար հանապազօր, մի վան
իւր 'ի վար արկանել՝ ոչ զինչս, ոչ զժամանակ,
ոչ զվաստակս, և ոչ զինքն գլխովին, բայց մի-
այն յանհրաժեշտ կարևորս: Ցայս առնէր հան-
գոյն ամենեցուն՝ զի հասք եկեղեցականք աղ-
քատաց են ժառանգութիւնք. այլ Թէ ո՛րպէս
զնմասս բանիցն յարդիւնս ածէր՝ ասել է 'ի
միտ առնուլ: Կամեցաւ գիտել ո՛րչափ ինչ պէտք
էին յապրուստ իւր և ազատասուրաց իւրոց.
և գիտացեալ զի բաւէին սկզբով վեցհարիւր,
հրամայեաց տալ այնչափ ամի ամի յընտիր ի-
րոց յարկէ արքեպիսկոպոսարանին, ոչ օրէն
համարեալ իւր վասն ձոխութեանն 'ի հա-
սից անտի կեալ: Եւ զիւրան իսկ այնու խը-
նայութեամբ 'ի կիր առնոյր 'ի պէտս անձին,
որպէս պատմեն ժամանակակից պատմիչք, զի
և զձորձս իւր ոչ 'ի բաց ընկենոյր՝ չև մաչեալ և
հնացեալ. սակայն ընդ պարզութեան և զազ-
նուական մաքրութիւն բերէր յանձին՝ ընդդէմ
պճնասիրութեան և անմաքրութեան 'ի հան-
դերձս այնր ժամանակի մարդկան: Եւ զի մի
նշխարք սակաւապէտ սեղանոյ իւրոյ կորնչեն,
հրամայեաց տալ զայնոսիկ 'ի մի յաղքա-

ատնոցաց, եւ ի յաղքատաց անտի ըստ իւրաքանչիւր հրամանի գայր ՚ի սեղանատունն անդր ժողովել զինացուածս կերակրոց: Խնամք՝ որ կարէին թէ՛ բեւս տալ կարծիս ուշտուբեան և գծծուբեան անձուկ և ձղձիմ մտաց, և չկարեղոյ բարձրադունից երաց միտ դնել, եթէ չկայր առաջի աչաց մատենադարանն ամբոխեան՝ զոր ինքն Ֆիլեբլիկ այնու քաջայանդուգն մեծագործութեամբ և այնքան դանձիւք կառոյց ՚ի հիմանց: Այո՛ ՚ի ընուկ զայն տպագիրս և ձեռագիրս մատենիք, ՚ի վերայ պարգևելոցն, ջանիւք մեծաւ և ծախիւք իւրովք հաւաքելոյ, առաքեաց և ուղարկեալ ՚ի քաջաց գրագիտաց և ՚ի մատենայած ոստիկանս, ՚ի Իտալիա, ՚ի Գաղղիա, ՚ի Սպանիա, ՚ի Գերմանիա, ՚ի Ֆիանդրա, ՚ի Անգղիա, ՚ի Ասորիս և ՚ի Երուսաղէմ, և յաջողեաց նմա հաւաքել երիք բիւր տպագիրս, և չորեքհազար հազար գրչագիրս մատեան: Յաւել ՚ի մատենադարան անդր և ձեռնարկեալ ինունից վարդապետաց՝ ծաղկեցուցանել զգիտութիւնս, զաստուածաբանութիւն, զպատմութիւն, զբանասիրութիւն, զեկեղեցական հնախօսութիւն, և զարևելեան լեզուս, պարտ ՚ի վերայ եդեալ նոցա՝ հրատարակել իւրաքանչիւր զերկասիրութիւն ինչ իւր գիտութենէ, որ յանձն էր նմա: Յաւել և վարժարան, զոր անուանեաց երիքլեզուեան, յորում չէլլէն Լատին և Իտալացի լեզուաց. և դպրոց ՚ի վարժս մանկաւոյ ՚ի նոյնս, որպէս զի կացցեն ապա վարժապետք գիտութենէնդն այնոցիկ և լեզուաց. և տպարան արևելեան, քաղդէացի արաբացի պարսիկ և հայ բաղդատ-

ատոյ, և Թանդարան նկարուց և անդրեաց, և վարժոյ երից գլխաւոր մատանց գծագրութեան, առ որս դիւրին էր դառնել վարժապետս քաջս: Այլ յայժ գժուարին եղև նմա, որպէս տեսաք, հաւաքել տպագիրս և դրչագիրս մատենիս ՚ի լեզուս յայնոսիկ չէ ծանօթս Աբելոտա որպէս զարդիս, և գժուարագոյն՝ գտանել հմուտս լեզուացն այնոցիկ. շատ է ասել, զի յինուընդ վարդապետաց անտի ուղեկքն էին ՚ի սանից կղերանոցին: Ի կանոնս առհմանեալս ՚ի նմանէ ՚ի պիտառուքիւն և ՚ի տեսչութիւն մատենադարանին՝ է տեսանել զդիտաւորութիւն մշանչենաւոր օգտի, որ ոչ միայն ինքնին լսկ է գեղեցիկ, այլ և իմաստուն և ազնուական քան զայնս ժամանակի սովորութիւն: Զի առհմանեաց մատենապետին ունել թղթակցութիւն ընդ գիտնաւորս Եւրոպայ, գիտել զզարգացմունս գիտութենանց, և որ ինչ ազգի ազգի մատեանք ՚ի լոյս եկեալ՝ ՚ի մատենադարան անդր յաւելուլ, և պատուիրեաց՝ զի աճեցուն, քաղաքացոց և օտարաց տայն գիւրութիւն և պարտ ՚ի կիր արկանելոյ զայնոսիկ: Թերևս բնականք և յարակից կառուցման մատենադարանաց Թուեցան արդ կանոնք այսոքիկ և հրամանք. այլ ոչ այսպէս էր զայնու ժամանակաւ: Ի պատմութեան ուրեք ամբոխեան այս մատենադարանի, գեղեցկահիւս և ընտիր այնր ժամանակի ոճով գրեալ ՚ի Պասքայէ, որ եկաց անդ մատենապետ յետ մահուան Ֆիլեբլիկեայ, որպէս անսովոր իմն պատմի զի ՚ի գրատան, կառուցելոյ ՚ի սոսկա-

կանէ ուժեղ գրեթէ ամբողջ ՚ի դոյից իւրոց, ՚ի սէաս հասարակաց էին մատեանքն՝ որոց և խնդրէին, տալով նոցա և թուղթ և գրիչ և կազմար՝ առ ՚ի նշանակել որ ինչ կամէին. ուր յայլ ականաւոր ազգունի մատենադարանս ի. տալոյ փակեալ կային գրեանք անտես, և չընորհիւ ևեթ գրապետին ածէին վայրկ մի ՚ի տեսիլ. իսկ տալոյ եկաւորաց պարապ ընթեռնլոյ և խոկալոյ ՚ի նոսին, չէր երբեք ուրեք տուրուելիւն. որպէս զի ձոխացուցանել զմատենադարանս գրենով՝ բառնալ իմն էր ղէրս ՚ի պիտոյից հասարակաց, և եթէ թէ անարգիւն զանդաստանս թողուլ, որպէս առնէին և առնեն յոգունք:

Ասաի յայս է՝ քանի մեծախոհ, քանի հանճարեղ, քանի բարեսէր և մշանչենաւոր կամեցող բարեաց ազգի մարդկան պարտ էր լինել այնմ, որ այսպէս խորհեցաւ և ՚ի գործ եդ ՚ի ժամանակի տիւրուելեան և անգործուելեան, և յաւուրս ալհամարհուելեան ամենայն ջանից և ուսմանց, և ՚ի մէջ այնոցիկ՝ որ ասէին. Չի՞ գոյն է մեզ ղպղպիսեաց. այլ ինչ առաջի կայ մեզ խորհել. փանի պարմանալի գիրս. այդ գոյն պահասէր. և հանդոյն սոցին ձառատանս: Եւ աւելի քան զկնդետասան բիւր ակուաս ՚ի մատենադարանն կային ծախեալ:

Առ ՚ի կոչել զայր այսպիսի բարեբաղ և առատաձեռն ըստ գերազանցուելեան, մարթէ խնդրել ոմանց, թէ էիցէ նորա արարեալ և կարօտելոց ողորմուելիւն: Այլ նա առ անկիւս ժեչա պարտս ունէր ղողորմածուելիւն, և

կայսմ էա, որպէս յամենայնի, գտաւ համեմատ հասարակաց կարծեաց: Կեանք իւր եղեն հանապազորդուելիւն լինն առատաձեռնուելեան առ աղքատս, մանաւանդ ՚ի սովն՝ զոր յիշատակեցաք, և դէպ լինի մեզ ընդ հուպ պատմել ինչ ինչ՝ յորս տեսցի իմաստուելիւն և ազնուականուելիւն նորա և կայսմ մասին: Ի յոգունց երևելի օրինակաց, զորս պատմագիրքք վարուց նորա աւանդեն, զմի ևեթ ածեմք այսր: Գիտացեալ նորա զի ոմն յազնուականաց հնարս և բռնուելիւն ՚ի կիր արկանէր առ ՚ի մուծանել ՚ի կուսաստան զդուստր իւր՝ որ կամէր ամուսնանալ, կոչեաց զհայր նորա, և որսայեալ ՚ի բերանոյ նորա զբուն պատճառս բռնուելեան նորա, զի չորեքհարիւր սկուտք՝ ըստ կարծեաց նորա՝ կարևոր էին առ ՚ի հարստանալ զդուստր իւր ըստ պատշաճի, եւ զայն յօժիս դասեր նորա: Առաւելազանց թէ բևս թուեսցի ոմանց այս առատուելիւն՝ առանց քաջ կշռադատուելեան, և տարապարտ զկնի ՚ի հպարտ կամն հօրն, ուր մարթէր զդուստրն զայն ՚ի բազում այլ կարեւորագոյն պէտս ծախել: Աւ այս չունիմք ասել այլ ինչ, բայց երանի՛ թէ առաւելազանցուելիւնք այսպիսիք առաքինուելեան յաճախէին, ազատք ՚ի կարծեաց՝ որ սիրեն ըստ ժամանակաց, ոչ խնայելոյ յարծաթ առ ՚ի զերծուցանել ըզդուստր ՚ի բռնի մուծանելոյ ՚ի կուսաստան:

Անսպառելի ողորմածուելիւն առնս այսորիկ, առաւել քան ՚ի տալն, էր երևելի յամենայն գործս իւր. գիւրամատոյց առ ամենեսեան,

Եւս առաւել պարտ համարիմք ցուցանել զուարթ դէմս և մարդասիրութիւն առ որս ոմանիկքն կոչին. զի դուն ուրեք պատահէ նոցա գոանել զայն: Եղև իսկ նմա երբէք զայսմանէ մարտ յերեսաց զակառելոցն ի Մէ Ինչ խըթ, որ կամէին ի չափոյ ունել զնա, նմա ի չափոյ իւրեանց: Մի ի սոցանէ, յելանել նորա երբեմն յայց ի գիւղ ուրեք յապառաժոյս, և ի հարցանել և յուսուցանել մանկտւոյն զքրիստոնէական վարդապետութիւն հայրօրէն դպուանօք, ազդարար նմա զդուշանալ յաղտեղի և ի զզուելի մանկտւոյն, որպէս թէ չէին նորա աչք առ ի տեսանել զանմաքրութիւն նոցա, և ոչ միայն բառական ի զգուշութիւն: Այսպիսի է գըժբաղդութիւն արանց աւագաց, ըստ երից և ըստ ժամանակաց. զի ուր դուն ուրեք ոք գըտանի՝ աղդ առնել զթերութիւնս նոցա, ոչ պակասեն յանդգնիլ ի յանդիմանել զառաքինութիւնս նոցին: Այլ հովիւն քաջ, ոչ առանց զայրացման, եթ պատասխանի. « Կուզիս որ չիդգուեմ զաւակիներս, որունք կընայ ըլլալ որ մէյմըն ալ չիտեսնեն զիս »:

Դուն ուրեք էր տեսանել ի նմա զայրացումն, և զարմանալի էր հեզութիւն նորա և անխռով խաղաղութիւն ոգւոյ, որ թուէր բարեմասնութիւն բուսոյ բարուց, այլ էին արգասիք ընդերկար կրթութեան աշխոյժ և դիւրագոյց ընաւորութեան: Եւ ոչ ուրեք երևեցաւ նա խիստ, բայց միայն առ հովիւս ի ձեռանէ՝ որ ի յանցանս զօշաքաղութեան և պըղերգութեան գոանէին, կամ այլոց թերութեանց, ընդդէմ հոգւոյ աղնուական իւրեանց պաշտաման: Իսկ յայնմ ամենայնի, որ ի շահ իւր հայէր կամ ի պատիւ անցաւոր, չերևէր երբէք ի նմա և նշմար խնդութեան կամ սըխրութեան, եռանդեան կամ խռովութեան. զարմանալի՝ զի չէին ի նմա այս կիրք, և զարմանալի՝ զի ոչ զարթնուին: Ի բաղում ժողովս ընտրութեան քահանայապետաց ծանուցաւ յամենեցունց անփոյթ գերազանցութեան, որ ցանկալին է փառասիրութեան և ահարկու բարեպաշտութեան. և յառաջարկել նմա երբեմն ուրուքն ի Կարդինալաց զքուէ իւր և զհամախոհին իւրոց (տգէղ ի լրբ՝ այլ այսպէս ի սովորութենէ ընկալեալ ասել,) մերժեաց զառաջարկութիւն նորա զայն բայէ ի բաց, մինչև փոխել նմա զմիտս և չըղճալ այլուր: Այս չափաւորութիւն, այս գիմացութիւն իշխելոյ երևէր ի նմա և ի սովորական գէպս կենաց. մտադիր և անխոնջ յուղղել և ի կարգաւորել որ ինչ պարտք էին իւր, զգուշանայր ի ձեռնարկելոյ կիրս այլոց. և հրաւիրեալ իսկ, խոյս տայր ամենայն ձգամբ: Խոհականութիւն և զգուշութիւն, որ որպէս ամենեցուն է յայտ, սակաւ ուրեք տեսանի ի բարեխառնած՝ որպիսի էին էր:

Եթէ կամէի ժողովել այսր զամենայն նշանաւոր մասունս ընաւորութեան նորա, լինէր տեսանել ի նմա հրաշալի խմն պարտաւորութիւն բարեմասնութեանց, հակառակաց կերևման, և գիտաւորաբար ի միում ումեք կցորդելեաց: Այլ ոչ անյիշատակ արարից և զայլ խմն գեղեցիկ

կենաց նորա գերազանցութիւն. զի թէպէտև անդուլ անդադար պարապեալ ՚ի հովուել, ՚ի կատարել զսուրբ պաշտամունս, ՚ի վարդապետել, ՚ի լսել զաղերս, յայցելութիւնս վիճակի իւրոյ, յողևորութիւնս, և ՚ի հակաճառութիւնս, սակայն եբեր և այնքան պարապ ՚ի գիտութիւնս, որչափ շատ իսկ էր նուիրելոց ՚ի նոսա. և ընդ այլ ազգի ազգի մեծարանաց ա-նուանս՝ ընկալաւ առ ժամանակակից իւր և զանուն գիտնաւորի:

Այլ ոչ է պարտ լռել՝ զի պինդ կալաւ նա ընդերկար զկարծիս՝ որ արդ Թուխն ամենեցուն անհնին և այլանդակ, նոցին իսկ որ ցանկան անբասիր առնել զայնոսիկ: Որ կամիցին պաշտպան կալ նմա ՚ի մասինս յայսմիկ, ձեռնտու գտանեն զչքմեղութիւն սովորական ընկալեալ ՚ի հասարակաց՝ զի էին կարծիք ժամանակին քան Թէ վրիպակք նորին: Այս չքմեղութիւն յիրս իրս կարէ զօրել ինչ, այլ յայսմենայնի անխոնջ՝ որպէս սովորութիւն է ածել ՚ի կիր, զօրէ և ոչ ինչ: Վասն որոյ ոչ կարեցեալ պարզ առածիւ լուծանել զբազմամանն խնդիրս, և ոչ զգրուածք պատմութեանս երկարել, չատ համարիմք զչարևանցի զայս ակնարկութիւն. զի չէին մեզ կամք զամենայն ինչ զչրաչալի առնս անխոնջ գրուատել, զի մի Թուելցիմք արձանական ինչ առնել ներքոյդ:

Կարելիցէ ոք հարցանել, զի այսպիսւոյ հանճարեղի առն չիցէ՞ ինչ Թողեալ գրաւոր յիշատակ: — Մատեանք իբր հարիւր Թողեալ են ՚ի նմանէ, ընդ մեծ և ընդ փոքր, ընդ լատին և ընդ

յունական, ընդ ձեռագիր և ընդ տպագիր, որ պահին ՚ի մատենադարանին կանգնելոյ ՚ի նմանէ, բարոյականք, հոգևորականք, պատմականք, հնախօսութիւնք որբազան և արուեստին, բանասիրականք, արուեստականք, այլովքն հանդերձ: Այլ ոչպէս այդչափ մատեանք ՚ի մուտս ցօնս լեալ հարցանիցէ ոք, կամ անծանօթ մնացեալ, կամ անտես լեալ ՚ի բազմաց. ոչպէս մեծի հանճարոյն այնորիկ այնքանեաց ջանից, այնպիսի հմտութեան մարդկան և իրաց, այնքանոյ մտածութեան և սիրոյ բարւոյն և գեղեցկի, այնպիսւոյ ամբծութեան հոգւոյ և այլոց բարեմասնութեանց՝ որ մեծամեծ մատենագիրս ածէն ՚ի լոյս, ՚ի հարիւրեսին մատեանն չիցէ և ոչ մի ընդ գերազանց մատեանս մեծարեալ, դէթ մակագրութեամբն ծանօթ՝ որոց չիցէ զայն ընթերցեալ. ոչպէս այն ամենայն բազմութեան գրեանց չիցէ աւանդեալ զգրաւորական համբաւ նորա յետնոց: — Բանաւոր արդարև հարցուած, և խնդիր ցանկալի. զպատճառս անսովոր այսր պատահման ևս գտանել՝ ՚ի քննել բազմամայլ պատահմունս հանդրականս, որք առաջնորդեն ՚ի լուծանել զնդիրս հանդուպատիպս. այլ բազմաք են և երկարապատում, թերևս և կիսոց տաղտկալիք, և այլոց գժպհիք: Վասն որոյ լռեագոյն է, զանց ընդօք արարեալ՝ առնուլ անդրէն զկարդ պատմութեանս, և փոխանակ յերկարելոյ զառնէս, տեսանել զնա ՚ի գործ, առաջնորդութեամբ մերոյս պատմագրի:

ԳԼՈՒԽ ԻԳ.

Մինչդեռ Կարդինալն Ֆէռէրիկ, մնալով ժամուն գնալոյ յեկեղեցի՝ և ժամերգութիւնն պարապելոյ յընթերցուածն, որպէս սովոր էր՝ և հատուկտիր ժամանակս առնել, եմուտ խաչակիրն խռովեալ դիմաք, և ասէ.

« Ա՛յցելութիւն մը, լրացընէք կարգէ դուրս այցելութիւն, գերապայծառ տէր »։ —

« Ո՛վ է »։ —

« Զիկարծուած մարդ »։ Եւ յաստակ զվանդս հնչելով, նշանակութեամբ մեծաւ արտասանէր զանունն՝ զոր չկարեմ ասել, և յաւել. « Դուրսն է ինքը անձամբ, կուզէ որ ներս մոցընեմ զինքը հրամանքիդ »։ —

Կարդինալն արհական դիմաք, խփեալ ըզդիմն, և յարուցեալ, ասէ. « Ի՞նքը անձամբ հա՛. Թող մնայ, մոցուր մեկէն »։ —

« Բայց պէտք է որ ալեկ հասկըցընեմ հրա-
մանքիդ, որ ան աքսորուած մարդն է, այն ե-
րեւելի մարդն որ »... —

« Ուրեմն բարեբաղդութիւն չէ՞ որ ասանկ
մարդ եպիսկոպոսին ոտքը ուզէ գալ »: —

« Բայց մենք չենք կրնար ամէն բան ըսել,
վասն զի հրամանքդ պարապ խօսքեր են կըսես.
բայց տեղն որ կուգայ, ինծի կերեւնայ որ պար-
տական ենք ըսելու... բարի նախանձը թշնա-
միներ կունենայ, տէր իմ. ու մենք ստոյգ գի-
տենք որ քանի անզգամներ համարձակեցան
պարծելու՝ որ օր մը »... —

« Ի՞նչ ըրին որ »... —

« Ա՛ս մարդը անօրէնութիւններով լեցուած
յուսահատած մարդ մըն է, երկին կատաղի
յուսահատներու հետ ընկերացած է, կրնայ
ըլլալ որ անոնցմէ խրկուած ըլլայ »... —

Կրճատեաց զբանս նորա Կարդինալն, և ա-
սէ. « Ո՛հ, աս ի՛նչ կարգ կանոն է որ զինուոր-
ները զօրավարին սիրտը վախ ձգեն »: Եւ վայ-
րկի մի մտայուզեալ, ապա լուրջ դիմօք ասէ.
« Սուրբ Կարնէոսը ասանկ մարդ մը ընդու-
նելու համար՝ էր վճռաբաներ, մեկէն դիմացը
կերթար: Գնա նէրա բեր զինքը »:

Մեկնեցաւ խաչակիրն ասելով. « Ճար չկայ,
աս օրհնած սուրբերը կամակոր կըլլան »: Եթայ
զդուռնն, և երեւեալ ի սենեակն՝ ուր էր Լե-
խանն, և Թիկնապահք նորա մեկուսի կային
չշնչելով Թողեալ զնա միայնակ ի մի կան-
կեանց, երթայր առ նա՝ ծայրիւք աչացն դի-
տելով Թէ գուցէ զնոս ընդ վերարկուաւն ու-

նիցի. և խորհէր՝ զի արդարև նախ քան զմու-
ծանելն զնա ի ներքս, պարտ էր ազդ առնել
նմա... այլ ոչ լչխեաց: Մատեաւ առ նա, և
ասէ. « Կարդինալը հրամանքիդ կը սպասէ, չը-
նորք ըրէ՝ հետս հրամմէ »: Եւ առաջնորդելով
ընդ մէջ բազմութեան՝ որ երկուստեք բանային
նմա ուզի, ի վեր հառ զվարագոյրն, և եմոյծ
զնա ի ներքս: Եկն Կարդինալն ընդ առաջ հայ-
բաբար դրկատարած՝ որպէս Թէ սպասելով
նմա, և ակնարկեաց խաչակրի՞ն ելանել ի բաց:

Եւ մնայեալ երկոքեան միայնակ, կացին վայ-
րկի մի անբարբառ անհանգոյն լռութեամբ: Ան-
անուշն, որ առ տագնապ սրտին սոսկալ էր
գալ անդր՝ կայր անդ երբ ակամայ, տանջեալ
ի ներհակակիր խորհրդոց. առաջ եղէ և յոյս
գտանելոյ սփոփուճն տանջանաց սրտի, անտի
զայրոյթ և ամօթ ընդ գալըւստ իւր՝ որպէս
զղջագեալ խոնարհեալ և ողորմելի ի խոստո-
վանութիւն, ոչներէին նմա գտանել և ոչ խըն-
դրել բան ի բարբառ: Ահ՛ի վեր առեալ ըզ-
դմի ի Կարդինալն, զգաց ի սրտի ևս քան
զևս քաղցր մեծարանս՝ որ յաւելոյր ի նա
զվստահութիւն, մեղմէր զամօթ, և առանց
յաղթահարելոյ զգուռոզութիւն՝ ընկճէր զյոյն,
և որպէս Թէ հրամայէր նմա լռել: Եւ կերպա-
րան իսկ Կարդինալն մեծութիւն ինն ազդէր,
և սիրելի զնա ընծայեցուցանէր. կերպ նորա
բնականապէս չարդարուն, և մեծավայելուչ ի
քնէ, ոչ կորացեալ և ոչ այլայլեալ յամաց, աչք
իւր հանդարտահայեաց և կենդանի, ճակատ
պարզ և խոհական, բերելով ընդ ալիս՝ և գու-

նատուԹիւն ին 'ի պահեցողուԹենէ և 'ի խոհմանէ, կայտառուԹիւն կօսական, և ամենայն ինչ 'ի գէմն նորա ցուցանէր զնա լեալ խոհապէս գեղեցիկ յայլ ոխ. ունակուԹիւն բարեբար և մեծամեծ խորհրդոց, խաղաղուԹիւն սրտի տաբրացեալ 'ի նմա ընդ երկայն աւուրս կենաց, և ինդուԹիւն յաւէրժ անձառելի յոյսոյ, փոխանակելին 'ի նմա գեղեցկուԹիւն ին ծերուԹեան, որ պայծառագոյն 'ի պարզ ծիրանւոջ անդ փայլէր:

Ինքն ևս եկաց վայրկի մի լուռ, յառեալ 'ի գէմն իշխանին, խորացնին և երկարատիրօճ աչօքն գուշակել յերեսաց նորա զխորհուրդս մտացն. և ընդ նմանեմ և աղմկեալ տեսլեամբն Թուէր նմա նշմարել ինչ համեմատ յուսոյն՝ զոր 'ի լուր այցելուԹեան նորա էր ընկալեալ. և քաջալերեալ, ասէ. « Այս ինչ մեծագին այցելուԹիւն է ինծի, որչափ պէտք է ընդունակալ ըլլամ մտածուԹեանդ, Թէ և քիչ մը յանդիմանուԹիւն է առ ինծի »:—

« ՅանդիմանուԹիւն! » գոչեաց իշխանն զարմացմամբ, այլ քաղցրացեալ 'ի բանէ անտի և յեզանակէ ընդունելուԹեանն, և ուրախ եղեալ՝ զի Կարդինալն ինքնին երեկ զառաջնէ, և եթաց Ճանապարհ խօսիլ:

Եւ յառաջ էած Կարդինալն զբան իւր. « Ի բաց ընդ յանդիմանուԹիւն մըն է ինծի առիկայ, որ հրամանքդ առաջ գաս ինծի. այսչափ առեւնէ 'ի վեր քանի անգամ պէտք էր որ ես հրամանքիդ եկած ըլլայի »:—

« Ինծի՞... հրամա՞նքդ. գիտեմ ոմ ըլլալս,

ջըլլայ Թէ ալիկ հասկըցուցած ջըլլան հրամանքիդ իմ ոմ ըլլալս »:—

« Կը կարծեմ որ անծանօԹի մը համար կըրնայի զգալ աս մխիԹարուԹիւնը, ինչ որ հրամանքիդ վրայ կը զգամ, գիմքիս վրայ ալ կենայ: Հրամանքդ ես որ զգալ կուտաս ինծի աս ուրախուԹիւնը. հրամանքդ ես՝ որն որ ես պարտական էի փնտռուելէ. հրամանքդ՝ որ այնչափ կը սիրեմ, ու այնչափ քեզի համար լացեր եմ, այնչափ ալ աղօԹք ըրեր եմ. հրամանքդ՝ որ սիրելի զաւկըներուս մէջ աւելի կը բաղձայի տեսնել ու գրկել՝ Թէ որ կրցած ըլլայի: Բայց Աստուած միայն աս հրաշքը կրնար ընել, ու իր պաշտօնեաներուն տակաւուԹեանը ու ծանր շարժելուն տեղը լեցընել »:

Ի լուր այսպիսեաց սրտառուԹենէն բանից կարդինալին, որ այնպէս 'ի ձահ պատահէին իւրոյն՝ զորս 'ի մոի ունէր ասել, յապուշ հարեալ իշխանն և փղձկեալ՝ կայր անբարբառ. և յաւէր կարդինալն սիրոյաբար. « Հրամանքդ ինծի անտարակոյս աւետիք մը ունիս տալու, ու սիրտս կը հաւցընես »:

« Աւետի՛ք... էո... ո՛հ իմ սիրտս գժոխք մըն է, կուզես որ աւետիք մը՝ ուրախալի լուր մը տամ. ո՞րն է աս ուրախալի լուրն որ ինծմէ կը սպասես »:—

ՀանգարտուԹեամբ էտ կարդինալն պատասխանի, « Այո է որ Աստուած սիրտդ շարժեր է, ու կուզէ զքեզ իրենը ընել »:—

« Աստուա՛ծ! Աստուա՛ծ! ա՛ն, Թէ որ զինքը կարենայի տեսնել, ձայնը լսել. ո՞ւր է աս Աստուածը »:—

« Ինծի՞ կը հարցընես ուր ըլլալը, երբոր ա-
մէնէն եւել մօտ է. չէս զգար սրտիդ մէջը՝ որ
զքեզ կը տիպէ, սիրտդ տակնուվրայ կընէ,
հանգարտ չնթողուր, իրեն կը քաշէ, խաղա-
ղութիւն գտնալու յոյս մը կուտայ քեզի, բո-
լորովին ու չհլըմընալու խաղաղութիւն. հե-
րնք է որ ճանչնաս ու ընդունիս զինքը »: —

« Ո՛հ, իրաւցընէ նէրսէս դիս բան մը կայ՝ որ
սիրտս կը շընդմէ. թէ որ Աստուած է, ինչ կու-
զէ ինծմէն, ինչ պիտոր ընէ զիս »: Զայսոսիկ
յուսահատութեամբ ասէր իշխանն: Իսկ կաթ-
ղիկոսն աստուածաշունչէն մի հանդարտ բար-
բառով եւս պատասխանէ.

« Ի՞նչ կուզէ քեզմէն: ինչ պիտոր ընէ զքեզ!
Իր կարողութեանն ու բարութեանը նշան մը
որ տայ, անանկ փառք մը կը հանէ քեզմէն իր
ողորմութեանը, որն որ քեզմէ ուրիշը չկրնար
տալ երբեք. քեզմէ՝ որ ամէնուն առէլի եղեր
ես, ու այսչափ առեներէն ի վեր բիւրաւոր մար-
դիկ ըրածներդ կանիծեն »: —

Սարսեցաւ իշխանն աստանօր. և վայրկի մի
աղբեալ եկաց ի լուր անասվոր բարբառին,
մանաւանդ զի չըզգայր արամութիւն ընդ այն՝
այլ մանաւանդ սփոփութիւն: Եւ յառաջ ածեալ
Կարգինալին զրանան, ասէ.

« Սրտիդ մէջ կրած սոսկումդ՝ Աստուծոյ
ազդումն է, արդարութեան ձայնն է, դիւրաւ
ու բնական կերպով ընելու արդարութեան.
կրնայ նախանձու ձայն ալ ըլլալ, աս քու մին-
չև հիմայ բանեցուցած թշնաւտ իշխանու-
թեանդ, աս քու ունեցած ոզբալի վստահու-

թեանդ: Բայց երբոր մէյմը դուն քեզի դէմ
ելլես, քու անցուցած կեանքդ դատապար-
տես, դու զքեզ ամբաստանես, ան աստիճը Աս-
տուած կը փառաւորուի: Հիմայ եկուր հար-
ցուր որ Աստուած քեզմէ ինչ կուզէ, Աս-
տուած զքեզ ինչ պիտոր ընէ: Ո՞վ եմ ես ողոր-
մելու՝ որ կարենամ հիմակուընէ ըսել ինչ
օգուտ պիտոր հանէ քեզմէ Աստուած. ինչ
պիտոր ըլլան աս քու սաստիկ կամքդ, աս ան-
վախութիւնդ, իր հոգւովը ու իր սիրովը վա-
ռուելու որ ըլլան, երբոր յուսով ու զղջմամբ
հոգւոյորուին: Դուն որ մեծ մեծ չարիքներ կըր-
ցար մտածել ու ընել, չկրնար Աստուած ա-
նոնց տեղը քեզի մտածել ու ընել տալ մեծ մեծ
բարիքներ: Ինչ կրնայ ընել զքեզ Աստուած
համ. կրնայ թողութիւն տալ քեզի, կրնայ իր
փրկագործութիւնը լըմընցընել քու վրադ.
աստիճ մեծ ու Աստուծոյ արժանի բաներ չէ՞ն:
Ո՛հ, մտածէ որ ես խեղճ մարդ մը, ինծմով լե-
ցուած, սանկ ըլլալովս կը հալիմ ու կը մաշիմ
քու փրկութեանդ բաղձանքովը, անանկ որ
Աստուած ալ գիտէ՝ որ քու փրկութեանդ
համար աս քանի մը օրուան մնացած կեանքս
ալ սիրով կուտայի: Իսկ Աստուած... ո՛հ, մը-
տածէ ինչպիսի սէր պիտոր ունենայ վրադ, եր-
բոր ինծի սանկ սաստիկ գութ ու սէր տուած
է քու փրկութեանդ համար, որ սիրտս կը հա-
լեցընէ »:

Եւ ի խօսելն զայսոսիկ դէմք նորա և աչք
և ամենայն շարժմունք ազդողագին տակաւ
ներգործէին ի սիրտ իշխանին: Այլայլեալ և

խռովէալ, ՚ի սկզբան անդ հիացեալ կայր ՚ի լուր. ապա ՚ի մեղմէ անձկութեան սրտին՝ ե֊բուեցոյց յանձին խորագոյն ևս փղձկումն. ասէ իւր՝ որ յետ մանկութեան ոչ ևս զիտրձ առեալ էին արտասուաց, ուռուցան. և իբրև դադա֊րեաց կարգինալն ՚ի խօսելոյ, ծածկեալ նորա երկոքումբք ձեռօք զերեսս իւր՝ ազբերաբար էհեղ արտասուս. և այն եղև նորա յետին և սիրելագոյն պատասխանի:

Յայնժամ կարգինալին ամբարձեալ զաչս ՚ի յերկինս, աղաղակեաց. « Աստուած մեծ, բա֊րերար Աստուած, փառք քեզ, որ լինծի պէս անպիտան քոյ ծառայդ, լինծի պէս անպիտան հովիւը, արժանի ըրիր առ քոյ ընտրելդ մեծ հանդէսը, ասանկ ուրախալի հրաշք մը տես֊նելու »: Զայս ասելով՝ ձգեաց զաչ իւր, առ֊նուլ զձեռն իշխանին:

Իսկ նա դոչեաց. « Զէ, ըլլալու բան չէ, հեռու լինծմէն. քոյ ամբիծ ու բարեբար ձեռդ կաղատաի լմինէս, չեմ գիտեր ասկ ձեռքը ինչ անօրէնութիւններ գործեր է, որ բանիլ կուզես »:

Իսկ կարգինալն սիրողաբար բռնութեամբ կալեալ զայն, ասէ. « Թող որ բռնեմ առ ձեռքն որ չարեաց վոհմարին բարիք պիտոյ ընէ, որն որ բարեպարսպութիւններով պիտի մխիթարէ այնչափ խեղճ տղայութիւնները, որն որ առանց պէնքի ընդունի պիտոյ թշնամիները հաշտութեամբ ու խոնարհութեամբ »: —

Յայնժամ իշխանն հեկեկալով ասէ. « Բայց չափէն եւել է լինծի ըրածդ, Թող ինձ. դուրսը

բազմութիւն կը սպասէ, այնչափ բարի հոգի֊ներ, այնչափ անմեղներ, հեռուէն եկողներ, մի անգամ զկերպանքդ տեսնելու, խօսքդ լսե֊լու. իսկ հրամանքդ հոս կեցեր ես որմէն հա֊մար »: —

Կարգինալն ասէ. « Թողունք ինձնիս ինը ոչխարները, անոնք լեռան վրայ ապահով են. անոր հետ կուզեմ կենալ, որն որ մոլորած էր: Այ դուրսը սպասողները շատ աւելի գոհ են քոյ հետդ կենալուս վրայ, քան թէ իրենց խեղճ եպիսկոպոսը տեսած ըլլային: Աստուած որ քոյ վրադ իր ողորմութեանը աս մեծ հրաշ֊քը ըրաւ, թերևս իրենց սիրան ալ անանկ ու֊րախութեամբ մը լեցուցեր է, որուն պատ֊ճառը չեն գիտեր. ատ բազմութիւնը առանց գիտնալոյ՝ մեզի հետ է. Հոգին սուրբ իրենց սիրտը անանկ եղբայրսիրութեան եռանդով կը վառէ, որ քեզի համար կաղօթեն ու աղօթք֊նին ընդունելի կըլլայ, քեզի համար ընորհա֊կալութիւն կընեն Աստուծոյ, թէ և դեռ չեն ճանչնար զքեզ »:

Եւ զայս ասացեալ՝ դիրկս էարկ զպարանո֊ցաւ իշխանին. իսկ նա վայրկ մի յետս Ջանա֊ցեալ ընկրկել, ապա տեղի եա՝ որպէս ՚ի զօ֊րութենէ սիրոյ յաղթեալ, և փարեցաւ զան֊ձամբ Կարգինալին, եդեալ զուսովնորա զկեր֊պարանափոխ և զդողանի հալեալ զերեսս իւր: Աւրտասուք յորդահոսք թանային զամբիծ ծի֊բանի նորա, որ անարատ բազկօքն ողջագուրեր զանձն և զվերարկու իշխանին՝ սովորելոյ կրել զինքեամբ զհնս ՚ի բռնութիւն և ՚ի գաւ:

Մեկնեալ ապա իշխանն 'ի դրկաց Կարգինա-
լին, ծածկեաց անդրէն զաչս իւր ձեռամբ, և 'ի
վեր առեալ զերեսս՝ 'ի ձայն մեծ ասէ. « Ո՛վ
տէր, բարերար Աստուած, ես զիս հնմայ կը
սկըսիմ ճանչնալ, հնմայ կիմանամ ո՛վ ըլլալս,
ըրած անօրէնութիւններս աչքիս դիմացն էն,
կը զըզուիմ անոնցմէ, կը զըզուիմ ինծմէ.
բայց ... բայց միխիթարութիւն մը կը զգամ,
ուրախութիւն մը՝ որ բոլոր իմ սոսկալի կեանցս
մէջ չեմ զգացեր »: —

Եւ Կարգինալն ասէ. « Ախիկայ ճաշակ մըն
է՝ որ կուտայ Աստուած, զքեզ յորդորելու
համար՝ որ հաստատուն սրտով նոր կեանք մը
սկըսիս, առջի կեանցդ սխալմունքները չհակե-
լուն, ճար ընելու, հատուցանելու, ու ողբա-
լու »: —

Իշխանն ասէ. « Խեղճ ողորմելիս, որչափ բա-
ներ ունիմ, որչափ... որոնց ճարը ուրիշ կեր-
պով չկրնամ ալ ետը ընելու, բայց լալով:..
Բայց սկըսածներս ալ ունիմ, որ դեռ ճամբու
մէջ են, անոնք գոնէ կրնամ արդիլել, մեկ հա-
տին ալ մեկէն ճարը ընել »:

Ունկն դնեը Կարգինալն, և պատմեաց նմա
իշխանն կարճ 'ի կարճ զկրս Լուչիայի, անկ-
ծանելով գառնագոյն անիծիւք, քան զորս մեք
'ի կիր արկաք 'ի պատմելն՝ որ ինչ ընդ աղջկանն
արար բռնութիւն, որ ինչ արհաւիրս և տա-
ռապանս ետ կրել եղկելոյն, և զոտանիոյ իւր
'ի լուր կողկողանաց անմեղին, և թէ որպէս
դեռ կայր նա յամրոցի անդ:

Ի վերայ էած Կարգինալն հառաչելով առ
գութ սրտին և հայրենի խնամոց.

« Պէտք չէ տեսն կորսընցընենք. փառք տուր
Աստուծոյ, տիկայ նշան մը պիտոր ըլլայ Աս-
տուածմէ ընդունած ընդրկիդ. գործիք մը պէ-
տոր ըլլաս խեղճ աղջկանը ազատութեանը, ո-
րուն կործանումը պիտոր ըլլայիր. Աստուած
օրհնեց զքեզ: Բայց գիտէ՞ս ուսկից է ատ աղ-
ջիկը »: Եւ իշխանն ասաց նմա զանուն գեղջն:

« Փառք Աստուծոյ », ասէ Կարգինալն, « հե-
ռու չէ ասկից. հասանական ալ է որ »...

Զայս ասելով երկար զանգակ. եմուտ անդէն
խաչակիրն. և հայեցեալ նախ յիշխանն, ետես
զնա կերպարանափոխ, և կարմրացեալ զաչս
նորա յարտասուաց. հայեցաւ ապա 'ի կար-
դինալն, և յանդգնալ դէմս նորա տեսանե-
լով լուրջ ի՛ն խնդութիւն և փոյթ 'ի ձեռ,
բերանաբացեալ եկաց: Եհարց զնա Կարդի-
նալն՝ թէ 'ի ժողովրդապետան ժողովեալս էր
և գեղջն այնորիկ...

« Հրամմեր ես », ասէ խաչակիրն:

« Շուտ մը ներս թող գայ, իրեն հետ հոս
տեղի ժամուն ժողովրդապետան ալ »: —

Զոգաւ խաչակիրն 'ի սենեակ անդր՝ ուր ժո-
ղովեալ էին երիցունք, որք գարձան տեսին
զնա դեռևս բերանաբաց, և 'ի դէմս նորա նը-
կարեալ տակաւին զհիացումն: Եւ ամբար-
ձեալ նորա զձեռս՝ շարժելով ընդ օդս, ասէ.
Տեսէք, այս է նորագոտն ալոյ Բարխէլոյն. և եկայ
սուղ ինչ անբարբառ: Եւ ապա տալով զպատ-
գամն, ասէ.

« Կարգինալը աս տեղն ու մեկալ գեղին...
ժողովրդապետը կուզէ »:

Կոչեցաւ առաջինն, և եկն խոզին. այլ ընդ նմին լսելի եղև ի միջոյ ժողովոյն ձայն զարմացական Ջ֊ից։

Խաչակիրն ասէ. « Հրամա՞նքդ ես ան դե֊ղին... ժողովրդապետը »։

« Ա՛յո, ես եմ »։ —

« Կարդինալը կ'ըսամանքդ ալ կուզէ »։

Ա՛լ ի միամանին ձայն Ջ֊ից՝ յաւելեալ էր. « Բայց ես ան մարդուն հետ ինչ ունիմ »։ Եւ ընդ ձայնին եկն ձայնողն ի մէջ. և էր ինքն աբբ Ալոնտիոյ, որ գժիամակ լինի և ապշեալ գայր դժուարաքայլ։ Հրաւիրեաց զինա խաչա֊կիրն ձեռամբ. « Չեմս հրամմէ, դժուարելոյ բան չկայ »։ Եւ առաջնորդեալ երկուց ժողո֊վրդապետացն, և բացեալ զդուռնն, եմոյծ զինուա ի ներքս։

Եթող Կարդինալն զալ իշխանին, միաբա֊նեալ ընդ նմա որ ինչ առաջի կայր առնել. փոքր ինչ ի բացեայ ակնարկեաց ժողովրդապետի և կեղեցւոյն մնացեալ առ ինքն, և ծանուցեալ նմա զիւրն, ասէ. « Կրնա՞ս շուտ մը գտնալ յար֊մար կինկ մը, որ դեսպակով մը բերդը երթայ, առնէ բերէ հոս Լուչիա անուշով աղջիկը. սիրտ ու խելք ունեցող կինկ մը, որ ասանկ բանի մէջ գիտնայ աղէկ վարուիլ, բերանը խօսք ըլլայ, կերպ ունենայ, գիտնայ յորդորել ու սիրտ տալ, հանդարտեցընել խեղճ աղջիկը, որ չըլլայ թէ այսչափ բան քաշելէն ետքը՝ ա֊զատութիւնն ալ վնաքը մտմտուքի մէջ ձգէ »։

Սուղ ինչ խորհեցեալ ժողովրդապետին, և ապա ասէ. « Ա՛ս բանիս յարմար կինկ մը կը ճանչնամ »։ և էլ ի բաց։

Յայնժամ կոչեաց Կարդինալն նշանացի ըզ֊խաչակիրն, և պատուիրեաց տալ պատրաստել փութով դեսպակ մի և դեսպակակիրս, և հա֊մեստել ընդ իս երկուս։ Եւ յետնեալ խաչակրին՝ դարձաւ Կարդինալն առ տէր Ալոնտիոյ, որ մերձ կայր նմա՝ առ ի կալ հեռի յիշխանին, և դիտէր մերթ ի մին և մերթ ի միւսն, գուշա֊կել թէ առ ինչ այն ամենայն երթեւեկք լինէին, և մերձ ևս մատուցեալ առ Կարդինալն, և խոնարհեալ յարգանօք, ասէ, « Ինծի ըսին որ հրամանքդ ինծ ուզէր ես. բայց... բայց կար֊ծեմ որ սխալած պիտի ըլլան »։ —

« Զէ, չեն սխալած, աղէկ լուր մը ունիմ տալու քեզի ու սխորժելի պաշտօն մը։ Գտա֊նուիներէդ մէկին որ կորուսեր ու լացեր էիր, Լուչիա Մօնտելլան, գտնուեցաւ, ու հոս մօտ տեղ է, աս իմ սիրելի բարեկամիս տունը. հի֊մայ իրեն հետ պիտոր երթաս, հետերնիդ կինկ մըն ալ՝ որ հոս տեղն ժողովրդապետը գնաց հոգալու. կերթաք կառնէք խեղճ աղջիկը, ու հոս կը բերէք »։

Տէր Ալոնտիոյ գուն գործէր ծածկել զուր֊հաճութիւն իւր. և զինչ ասեմ զահաճութիւն, զվիշտ և զդառնութիւն իւր ընդ հրամանն, և ոչ կարացեալ պարզել զինձիուն ի դէմս իւր անկեալ ի հրամանէն, Թագոյց զայն՝ խոնար֊հելով զգլուխ իւր վայր ի վայր ի նշան հնա֊զանդելոյ, և ոչ հառ ի վեր՝ բայց առ ի խո֊նարհել անդրէն ի մեծարանս իշխանին, ողորմ հայեցուք՝ որպէս թէ ասէլով. « Ձեռնինդ եմ, ողորմեցէք ինծի »։

Եհարց ապա Կարգինալն. « Ո՞վ ուներ աղջիկը աղքատացուբէն » : —

Եւ պատասխանի տէր Ալպոնսիոյ. « Մօտիկ՝ մայրը միայն ուներ, որուն հետ կը կենայ, կամ կը կենար » :

« Մայրը իր գիրն է » : —

« Հրամմեր ես » : —

« Որովհետեւ խեղճ աղջիկը չէնք կրնար մեկնէն իր տունը խրկել, մեծ միխիթարութիւն կըլլայ երեն՝ ժամ մը առաջ իր մայրը տեսնելը. ուստի եկեղեցի երթալէս առաջ հոս տեղի ժողովրդապետը գտնելու որ ըլլայ, ըսէ երեն՝ որ սայլ մը կամ գրաստ մը գտնայ, խեչքով մարդ մը խրկէ, որ երթայ գտնայ աղջկան մայրը, ու առնէ հոս բերէ » :

« Ես երթալու ըլլամ, չըլլար » : —

« Չէ, չէ, ինչպէս որ ըսի, անանկ ըրէ » : —

« Իմ երթալ ուզելս անոր համար է՝ որ խեղճ կինիկը արամագրեմ, զգայուն կինիկ մըն է, վնասը ճանչցող մը պէտք է՝ որ գիտնայ ինչ կերպով պիտի խօսի, որ աղէկութիւն ընելու տեղ՝ գէշ բան մը չհասնիլ » : —

« Անոր համար իմացուր ժողովրդապետին՝ որ յարմար անձ մը ընտրէ. դուն ուրիշ բանի հարկաւոր ես » : Կամը ևս Կարգինալն յաւելուց, զի պարտ էր յղել առ աղջիկն եղկելի զայնպիսի ոք՝ որ չարհանէր ի նա կասկածանս յետ այնքան տառապանաց կրելոյ յամրոյի անդ, և կալոյ ի սոսկալի անդիտութեան հանգերձելոյ՝ այլ չէր մարթ ասել զայս առաջն իշխանին :

Բայց զարմանք թուեցան Կարգինալին՝ զի տէր Ալպոնսիոյ ոչ ի միտ առեալ ի դիմաց իւրոց, և ոչ ինքնին խորհեցեալ, առաջարկէր այնպիսի ինչ և սկզբո. և հայեցեալ ի դէմս նորա զարհուրեալս, գուշակեաց՝ զի երկնչէր ուղեկից իւր ունել զայրն սոսկալի, և գնալ ընդ նմա մինչև ի տուն նորա, ևս և առ սուղ ինչ վայրկեան : Եւ առ ի փարատել զերկիւղ նորա, ոչ կամեցաւ առնուլ զնա մեկուսի և չէնջել յունկանէն առաջի իշխանին, լաւագոյն վարկաւ առ նա ինքն խօսել, որպէս և առանց այսր պատճառի խորհէրն առնել, որպէս զի ի բանից նորա ծանիցէ տէր Ալպոնսիոյ, զի ոչ ևս էր այրն երկիւղալի : Վասն որոյ մատեաւ առ իշխանն, և այնու մտերմական եղանակաւ՝ որ ի նոր և ի ջերմ բարեկամն՝ որպէս ի վաղեմի էր սովորութիւն, ասէ ցնա. « Զի կարծես որ հերիք կը սեպեմ աս այցելութիւնդ, վաղը նորէն կուգամ՝ անանկ չէ՞, աս պատուական եկեղեցականին հետ » : —

« Վա՛ղը, չէ թէ միայն վաղը, հապա չընդունիս ալ զնա, աղքատի մը պէս գունեդ չեմ բաժնուիր. խօսելու բաներ ալ ունիմ, խրատներդ ընելու պէտք ունիմ, տեսութեանդ կարօտութիւն ունիմ, կարօտ եմ հրամանքիդ » :

Կալաւ Կարգինալն զձեռանէ նորա, և սեղմելով զայն ասէ. « Ուրեմն ընօրք կընես ինծի ու աս տեղի ժողովրդապետին, հոս կը հրամայես՝ որ մեկուսի ձաշենք. կը սպասեմ: Ես հիմայ ժամ կերթամ, աղօթք ու ընորհակալութիւն ընելու՝ ժողովրդեան հետ առ Աստուած,

որուն ողորմութեանը աչքի պտուղը պիտի ցուցընես »:

Ընդ այնքան ցոյցս մեծարմութեան՝ տէր Ա-պոնտիոյ կայը, որպէս մանուկ մի երկչոտ կայ 'ի ջնին գգուելոյ զգամիւռ սառաւար, գիսա-խաիւ, խածանող և ահարկու՝ յաչացն հուր ցայ-տելով, և լսէ գովելոյ տեառն գազանին զբա-րութիւն և զհեզութիւն նորա: Հայի 'ի տէրն, ոչ հակառակ ինչ ասէ և ոչ ախորժելի. հայի 'ի շունն, և չիշխէ մտածել 'ի նա՝ թէ գուցէ բարին այն գազան և 'ի քծնելն ցուցցէ զժանիս. և ոչ 'ի բաց կալ համարձակի, զի մի երևեսցի վա-տասիրտ: Այսպէս տէր Ապոնտիոյ կացեալ անդ այլ ասէր 'ի սրտի. « Ո՞ւր էր որ տունս կեցած ըլլայի »:

Ելանէր Կարդինալն, ուսնելով զձեռանէ իշ-խանին. և հայէր զհետ նորա տէր Ապոնտիոյ տխուր, ժժգոհ, և ըստ ոչ խակ կամաց խոժո-ռեալ: Խորհեցաւ Կարդինալն թէ գուցէ ծրըտ-մեալ էր նա իբր անտես լեալ և լքեալ, մանա-ւանդ առ եղեռնագործին մեծարելոյ յիւրմէ և գգուելոյ. դարձաւ, զկայ հառ առ վայր մի, և ասէ ցնա. « Տէր Ժողովրդապետ, Դուս հանա-պաղ ընդ իս ես, իսկ սա կորսնեալ էր ի գիս » : —

« Ո՛հ, օրըստ ուրախ եմ», պատասխանեաց Ժողովրդապետն, մատուցանելով երկաքանչիւ-րոյն խոնարհ մեծարանս:

Ցառաջեաց Կարդինալն, մէկաց զգուռն. և սպասաւորք երկու՝ որ կային խարտաքոյ ասպի և անտի, փեռևկեցին բացին զփեղկան 'ի սպաս: Յայնժամ ամբոխ գեղեցիկք երևեցան կղերոյն

Ժողովելոյ 'ի սրահին, որք ցանկային տեսանել շնոտա, եկին 'ի տեսիլ դէմքն երկոքին, յորս էին նկարեալ յոյզք այլ և այլ կրից հաւասա-ցապէս տպաւորեալք. գորով հայրենի՝ շնոր-հապարտ առ Աստուած, և խոնարհութիւն խո-նարհ սրտի 'ի պատկառելի դէմս Կարդինալին. իսկ 'ի դէմս իշխանին աղմուկ լինն քաղցրա-խառնեալ ընդ քաջալերս, պատկառանք նո-քանչան, և զեղջ սրտի՝ յորում երևէր տակա-ւին կորով վայրենի բնաւորութեանն ընկճելոյ: Ծա-նուցաւ տպա, զի ոչ տակաւուց յուշ լեալ էր անդ բանն Եսայեայ. Գայլ ընդ գառին հանգչեսցի, և արի ընդ ատիճ 'ի գիսին ճարակեսցին:

Գայր զհետ տէր Ապոնտիոյ, առանց ուրուք հայելոյ 'ի նա: Եւ իբրև հասին 'ի մէջ սրահին, ջմուռս 'ի հանգիստ սենեկապետ Կարդինալին, և մատեաւ առ նա ծանուցանել՝ զի ամենայն ինչ պատրաստ կայր ըստ հրամանի նորա, զոր 'ի ձեռն խաչակրին էր տուեալ, զի կամ կային ջորիք երկոքին և դեսպանն, և սպասէին հնոյնի՝ զոր Ժողովրդապետ գեղջն ածելոյ էր: Պա-տուէր եւս Կարդինալն, զի ընդ հասանել հնոյնի՝ ածցէ զնա խօսել ընդ տէր Ապոնտիոյ, և առ-նել զամենայն ինչ ըստ ակնարկութեան նորա և իշխանին: Իսկ ինքն աշ տաւեալ իշխանին 'ի յուզարկ, էջ սպասէ ասելով, գարձաւ 'ի տէր Ապոնտիոյ՝ ողջունել և զնա, և գնայր ընդ կողմն՝ որ ածէր յեկեղեցի, և գերծն զհետ նո-քա կարգաւ. իսկ երկոքին ուղևորք կային մնա-յին 'ի սրահի անդ:

Գայր իշխանն մտախոհ, և ցանկայր գնալ

վաղագոյն զերծուցանել ՚ի տառապանաց և ՚ի բանտին զևրն Լուվիա, այլ զևրն յոյժ այլ ազգ քան զոր յերկին. և յոյզք սրտին այնպես ՚ի դէմն նորա ՚ի վեր երևեալ, զի չարագոյն ինչ կարեր տալ ժողովրդապետին կասկածել: Հայէր սա ՚ի նա, և կամքը սկիզբն առնել բա- բեկամական ինչ բանից, այլ խորհէր ՚ի մոլ. « Չիմայ ինչ ըսեմ երեն. ուրախակից եմ ը- սեմ, բայց ինչ բանի համար. ուրախակից եմ որ ինչուան հիմայ սատանայ էիր, հիմայ մարդ եղար. ինչ աղտոր քաղաքավարուԹիւն. էհ, չըլլար: Բայց ինչ կերպով ալ բառերը չարեմ, ընելու ուրախակցուԹիւնս ասկէց ուրիշ նշա- նակուԹիւն չունենար:.. Նայինք ալ որ երա- ցընէ սատանի մէկէն խելքը գլուխը եկեր ու մարդ եղեր է: Դրսուանց բաներ շատ կըլլան աշխըրքիս վրայ, ու շատ պատճառներու հա- մար. ինչ գիտնամ, երբեմն:.. Բանը ան է որ պէտք է ինչուան բերդը երեն հետ երԹամ. ահ, ինչ գժար բան, ինչ գժար բան. ով կրնար սա առաուտ սատանի բան մտքէն անցընել: Մէյմը կա- բենամ ողջ ելլելանկէց, տուն դառնալ, կը հաս կըցընեմ ՓերփէԹուա խաԹունին, ինչ ըսել է մարդը հոս բռնի՝ առանց հարկի, գէղէս դուրս քշել, գլուխս ուտելով որ ուրիշ ամէն ժողովրդապետաներ չորս գիշեր հոս կը Թափին եղեր, հեռուներէն ալ. ինծի անոնցմէ վար մնալ չըլլար եղեր, սա կըլլայ եղեր, ան կըլլայ եղեր. ու սատանով գիս սա փոսին մէջը ձգել. ափսոս ինծի:.. Բայց վերջապէս պէտք է որ բան մը խօսիմ սըւոր հետ »:..

Եւ մինչդեռ խորհէր և դարձեալ խորհէր, յուշ եղև նմա յանկարծ, և ասէ. « Մոքիս չէր անցներ սատնկ բարեբաղդ ուղեկցուԹիւն մը »... Եւ մինչդեռ բանքն ՚ի բերանի կային, եմուտ սենեկապանն, ընդ նմա և ժողովրդա- պետ դեղջն, և ասէ. « Կինիկը դեսպակին մէջ պատրաստ կը սպասէ »: Եւ դարձաւ առ տէր Ալսնոփոյ, ընդունել ՚ի նմանէ զմիւս պատուէրը Կարդինալին: Տէր Ալսնոփոյ ասաց նմա, որ- պէս կարէրն յաղմկի անդ մտացն, և մեր- ձեալ ՚ի սենեկապանն, ասէ. « Գոնէ հանգարտ դրատա մը տուր ինծի, անփորձ հեծնող մըն եմ, երթալը կըսեմ »:

Ա՛ւ որ սենեկապանն ժպտելով լսեն ասէ. « Մտածէ մեյմը, քարտուղարին ջորին է, ա- նանկ գիտուն մարդուս »:

Իսկ նա դեռևս մտայոյզ, ասէ. « Հերիք է, Ալսուտած ՚ի բարին կատարէ »:

Ընդ ազդել սենեկապանին՝ ձեռքեաց իշխանն յընԹացս, եհաս ՚ի դրունս և տեսեալ՝ զի յետս մնայր ուղեկիցն, զկայ հառ՝ մնալով նմին: Եհաս և նա խուճապաւ. և խոնարհեալ՝ երբ ներսումն յիշխանէն խնդրելով, որ տեղի ետ նմա բարե- ձևուԹեամբ՝ յառաջ անցանել, ուստի սուղ ինչ ոգի էառ: Այլ երբև մտին ՚ի գաւիԹն փոքրիկ, աղմկեցաւ գարձեալ սակաւիկն այն քաջալե- րուԹիւն նորա. զի մեկնեալ իշխանին յանկիւն անդ՝ ուր Թողեալ էր զՀրաշէնն, էառ զայն, և արագ արագ արկ ուս ընդ անուԹ, որպէս ՚ի հրահանգս մարտի: « Վայ վայ » սկսաւ կար- գալ ՚ի սրտէ տէր Ալսնոփոյ, « աւա մարդը

զինքը ինչ պիտոր ընէ. ինչ չարմար խորդ ու խարազան դարձի եկողի մը համար, թէ որ չանկարծ խելքին փչէ... ինչ աղէտր արշաւանք, ինչ աղէտր հեծելուհիւն »:

Եթէ մարթէր եչխանին դուշակել որ ինչ խորհուրդք 'ի միտս ուղեկցին չածէին, զի՞ր ձիդն ոչ դոլծէր առ աներկիւան ատնելոյ զնա. այլ քաջ 'ի բաց հեռի էր 'ի մտաց նորա կասկած այնպիսի. և աէր Ապռնաիոյ զդուշանայր չտալ ինչ ցոյց չվստահելոյ 'ի նա: Հասին 'ի դուռն փողոցին, գտին անդ կազմ զջորիս. հեծաւ ընդոստ եչխանն 'ի մին՝ զոր վարաւանդասպան մատուցանէր: Իսկ աէր Ապռնաիոյ դարձուցեալ զտան յերկիր՝ զոր ամբարձեալն էր 'ի վեր դնել յասպանդակն, ասէ ցսենեկապանն.

« Զըլլայ թէ ախտ մը ունենայ ատ ջորին »:—

Սենեկապանն ասէ. « Մի վախնար, դառնուկ մըն է »:

Տէր Ապռնաիոյ սողոսկելով ընդ հասեան, օգնեալ 'ի սենեկապանէն, 'ի վեր 'ի վեր՝ գոսաւ 'ի նուա դրաստն: Կայր անդ մտա և դեսպակին՝ յառաջ ածեալ 'ի զուգից Ջորեաց, և 'ի ձայն վարչին չարժեալ 'ի գնացս, մեկնեցաւ կարաւանն:

Հարկ էր անցանել առ եկեղեցեաւն՝ ուր էր խուռն բազմուհիւն ժողովրդեան, և ընդ հրապարակն՝ ուր էր ամբոխ բնակաց և եկաց, որոց չէր կարացեալ յեկեղեցի անդր մտանել: Վաղ իսկ համբաւն տարածեալ էր, և յերևիլ կառաւանին տեսիլ եչխանին՝ յորմէ սուղ ինչ յառաջ զարհուրէին, և անէծս 'ի նա արձակէին՝

ալդ ուրախուհիւն և զարմանս ածէր նոցա: Ամբարձաւ 'ի խուռն անդ չչնջիւն ծափախառն, բանային նմա ձանապարհ, կոխէին ղերեսս առ 'ի տեսանել զնա 'ի մտոյ. Հանց դեսպակին, անցանէր և եչխանն. և առաջի եկեղեցւոյն՝ ոչ ոյ դրուանք բացեալ կային՝ եթարձ զնոյր իւր, խոնարհեցոյց մինչև ցգաշ Ջորւոյն զգլուխն՝ երբեմն ահարկու, 'ի ձայն բիւրաւորաց՝ որ դոչէին. « Աստուած օրհնէ զքեզ »: Եթարձ և աէր Ապռնաիոյ զնոյր իւր, խոնարհեցաւ, յանձն արար զանձն Աստուծոյ. այլ 'ի լուր անընդհատ երդոց և նուագարանաց՝ զգայր խառն նախանձ իմն և սրտաբեկութհիւն, և գոյով այնպիսի տխուր՝ մինչև հազիւ ժոյժ ունել արտասուաց:

Բայց արտաքոյ բնակութեան 'ի բացի, ընդ կամակոր շաւիղ, և ուրեք ուրեք 'ի սպառ անմատչի, քօղ սեաւ 'ի խորհուրդս աէր Ապռնաեայ ի՛ջանէր: Զկարեր այլ ուրեք զաչս իւր վստահութեամբ հանգուցանել, բայց միայն յուղղիչ դեսպակին, որ զի սպասաւորէր Կարդինալին՝ էր անկասկածելի, և դէմք նորա չէին վատասրտի: Երբեք երբեք երևէին ուղևորք, ևս և ընկերակցեալք, որ գնային 'ի տեսանել զԿարդինալն. և էր այն 'ի սփոփուհի աէր Ապռնաեայ, այլ հարևանցի, և մերձենայր ձորն սոսկալի, ուր արբանեակք ևեթ իչխանին պատահէին, և արբանեակք որպիսիք: Կամէր յայնժամ աէր Ապռնաիոյ խօսել ընդ բարեկամին, փորձել զնա, յինքն յանկուցանել. այլ 'ի տեսանէն զնա մտայոյզ, ոչ ևս կամէր.

հարկ լինէը նմա խօսել յանձին, և որ ինչ եղ-
կէլին ընդ բովանդակ ուղին յերեմեղէը 'ի մոլ-
փոքը 'ի շատե համառօտեմ, ղի մի սատւաւատ-
ցի մատեանս:

« Շատ բան է որ՝ թէ սուրբերը և թէ ան-
օրէն մարդիկ ներսերնին կրակ մը որ ունեինան,
հանդարտ չէն կրնար կենալ. թէ որ կարենան,
ամեն ուրիշներն ալ անհանգիստ կընեն: Ինծի
ալ որ հանդստութենէս ուրիշ բան չեմ փնտը-
ռեր, կարծես որ ամենէն անհանդարտները կը
պատահին. մազերնս կը բռնեն, իրենց դռ-
ծերուն մէջը կը խառնեն: Մէկն ալ խենթ
Յոտրիկն է, ան անզգամը. ինչ կը պակսէր ի-
րեն՝ աշխրքիս վրայ երջանիկ կեանք մը անցը-
նելու, թէ որ քիչ մը խելք ունենար. հարուստ,
կարիճ, ամենքը պատրաստ իրեն ծառայելու.
բայց ինքը հանգիստ կեանքէն ձանձրացած,
նեղութիւն կը փնտռէ, իրեն ալ՝ ուրիշներուն
ալ: Կրնար հանդարտ կենալ. չէ, պէտք է որ
աշխրքիս ամենէն խենթ՝ ամենէն կատաղի ա-
րուեստը ընէ, հնիկներուն եռւէն կրնայ. կըր-
նար կառքի մէջ նստած արքայութիւն երթալ.
բայց չէ, ոտքէ կաղալով դժոխք երթալ»:

« Սըւիկայ ալ»· ատտանօր հայերը յիշեանն
կասկածանօք, թէ գուցէ ըսեր ղնորհուրդս
իւր· « սըւիկայ ալ՝ իր անզգամութիւններովը
աշխարք տանհնուելոյ ընելէն ետքը, հիմայ ալ
նորէն կը խառնվէ դարձի գալուն համար··· Թէ
որ ան ալ իրաւ է· եկուր նայէ որ ինծի ինկաւ
փորձելը: Երբոր մէյմը ատ անհանգարտ բնու-
թեամբը ծներ է, ձարի չկայ, պէտք է որ ու-

րիշներն ալ անհանգիստ ընէ: Այսչափ իրաւ-
անցում պէտք է եղեր մարդ ըլլալու համար·
մենք ինչպէս եղեր ենք··· չէ, մենք ալեկ չենք
դիտեր եղեր, պէտք է եղեր ուրիշները չար-
չըրկել, սպաննել, դժոխքէն սատանաները
դուրս կանչել··· վայ ինծի··· եռքն ալ դար-
ձի գալու համար՝ աշխարք ոտք հանել: Մէկն
որ իրաւցընէ կամք ունի դարձի գալու, իր
տանը մէջ ալ կրնայ ընել հանդարտութեամբ,
առանց այսչափ խռովութիւն հանելու, առանց
ուրիշներուն նեղութիւն տալու: Եկու հիմայ
տես· ատտանկ աշնիւ պարոնին՝ մէկէն գդուանք,
սիրելի բարեկամ, սիրելի որդեակ, ամեն ուզա-
ծը պատրաստ, ամեն ըսածը պատգամ, կարծես
որ հրաշք գործեր է, ոտքով ձեռքով ծառայու-
թիւն ընել իրեն, հա հոս, հա հոն··· ատոր մեր
գեղը փոքնկածութիւն կըսենք: Եաքն ալ,
առանց պզտիկ ապահովութիւն մը ունենալու՝
խեղճ ժողովրդապետ մը անոր ձեռքը մատնել·
ասլիկայ դար ու կոճատ (ՆՀՓ ԼՒՓՓ) խաղալու
պէս բան մըն է: Ատանկ իրեն պէս սուրբ եպիս-
կոպոս մը՝ պէտք էր որ ժողովրդապետներուն
աղէկ նայէր, աչքին բիբին պէս· քիչ մը հան-
դարտութիւն, քիչ մը խոհեմութիւն, քիչ մը
եղբայրսիրութիւն, կարծեմ որ սրբութեան
հետ ալ կրնայ ունեցուիլ··· Իսկ յանկարծ թէ
որ ամեն տեսնուածը դրսուանց ըլլայ··· ով
կրնայ մարդուն ամեն դիտմունքը իմանալ, մա-
նաւանդ ատտանկ մարդուն: Մտածելու բան է
մինչև իր տունը մկտեղ երթալ· չկրնար տակը
սատանայ մը պահըտած ըլլալ··· Լուչիայեն

բանն ալ ինծի պատճուկ բան մը կերևայ. չըլլայ Թէ Ռոտրիկին հետ խօսքը մեկ ըրած ըլլայ... բայց գոնէ կիմացուէր. ով գիտէ ինչպէս ալ ձեռք ձգեր է աղջիկը. բոլորն ալ գաղտնիք մըն է. Թերևս Կարդինալը գիտնայ. բայց խօսք մը ըսելու չէր ինծի, որ մէջ քշուեցայ. երբոր մէկը իր կեանքը վտանգի սլիտոր դնէ, իրաւունք ունի գիտնալու: Թէ որ երթալու, խեղճ աղջիկը բերելու համար միայն ըլլար, համբերուէր Թիւն, Թէ և ինքը միևակ կրնար երթալ, մեկէն առնել բերել:.. Մէյմըն ալ՝ Թէ որ իրաւ գործէ եկեր է, սուրբ Ճգնաւոր մը գործեր է, ես ինչ հարկաւոր էի իրեն... ո՜հ, աս ինչ խառնափընդոր բաներ են. հերիք է. Աստուած տայ որ անանկ ըլլայ: Ծանր բան, բայց համբերութիւն. գոհ կըլլամ քաշածիս ան խեղճ աղջկան համար. ինքն ալ մեծ վտանգէ խալըսած սլիտոր ըլլայ. Աստուած գիտէ ինչ տառապանք քաշեր է խեղճը. կը ցաւիմ վրան, բայց իմ կործանմանս համար ծները է ան աղջիկը: Գոնէ կարենայի սըտոր սիրտը ճանչնալ, միտքը իմանալ. ով կրնայ գիտնալ. երբեմն սուրբ Անտոն Ճգնաւորը կը կարծես զինքը անապատի մէջ, երբեմն ալ Հոզեփեռնէս ինքը. բայց Աստուած օգնէ սլիտոր ինծի, վասն զի ես իմ կամքս չնմայ աս բանիս մէջ »: —

Յիրաւի խակ և 'ի դէմս իշխանին երևէին յոյզք մտայ՝ որպէս 'ի մըրկի յոլոյն ամպք զեբեսօք արեգական, վայրկեան 'ի վայրկենէ փոխանակելով ընդ իմն կծանող և խաւար ցուրտ: Սիրտ նորա դեռևս զմայլեալ 'ի քաղցր բանից Կարդինալին, և որպէս վերածնեալ 'ի կեանս՝ մերթ ամբառնայր 'ի խորհուրդս ողջմտութեան Թաղուքեան և սիրոյ, և մերթ անկանէր ընդ բեռամբ արհաւրացն անցելոց: Յածէր մտօք 'ի հնդիկս եղեռանցն՝ զորս յայնցանէ մարթէր փոխարինել, զորոյ առնուլ զառաջս, որոյ մատուցանել դեղ և դարման, որպէս լուծանել զայնքան կնճիռն և կապ, և զինչ ընդ գործա կից չարեաց առնել. բաւիղ անել: Գործն խակ՝ յոր երթայր, դիւրին և մերձ 'ի կատարուածն, ապա նմա տագնապ գժոխըմբեր, յածել զմըտաբ՝ քանի վշտակրեր աղջկին յայնժամ, և զի որ մորմոքէրն ըղձիւք ազատուելեան նորա՝ ինքն էր որ ունէր զնա 'ի վիշտս:

Ուր կիցք ուղեաց եշանէին ընդ առաջ, գառնայր վարիչն առ 'ի գիտել ընդ որ պարտէրն դնալ. և իշխանն 'ի ցուցանէր ձեռամբ՝ ձեպէր զնա 'ի վարել: Մտանեն 'ի ձորն. և զինչ յայնժամ խորհուրդք 'ի սիրտ տէր Ալոնսեայ եղանէին. մտանել 'ի ձորն աշխարհագոյժ, զոր մէ այնչափ անցս լուեալ էր սոսկալիս. կալանդ 'ի ներքս. տեսանել զընտիրս 'ի ֆալացին անտի Իտալիոյ անուանիս, զարս ամեհիս և անողորմս, տեսանել զնոցին իրան յաղթանդամ և զբազուկ ահառուս, պատահել նոցա յամենայն դարձս ուղեաց, միւսմ կամ երկուց կամ երից, որ խոնարհեալ մեծարանս մատուցանէին իշխանին, դէմք արևակիզ, պերճեւշաք թաւք, և աչք՝ որ թուէին տէր Ալոնսեայ ըսպառնալ կորուստ, երպէս զի զդողանի հարեալ՝ ասէր 'ի մտի. « Ասկէց դէշն չէի կրնար

հանդըսիլ, Թէ որ աղջիկը պսակած ըլլայի »: Յառաջ խաղան առ հեղհղատիւ ընդ ուղի քա-
րուտ, անդր քան զապառաժս ափափայս, և անդր քան զբնակութիւնն՝ որ ցանկալի առնէր զամենայն անապատս: Անցանէն առ անուանեալ Զարագիշերաձն. Ֆաջք առ դրան խոնարհէին իշխանին, և դիտէլով զուղեկից նորա և զգես-
պակն՝ չգիտէին զինչ խորհէլ: Վաղ իսկ մեկ-
նել իշխանին միայնակ ընդ առաւօտն՝ էր ինչ անսովոր, ոչ ինչ նուազ և գարձն. աւաղ ար-
դեօք ածէր, և ինչ առեալ էր զայն միայնակ. զինչ գեսպակն այն անծանօթ, և զմի՞ր բերե-
լով նշանակս: Հայէին առեպ, այլ ոչ ոք չար-
ժէր, այսպէս ակնարկելով իշխանին:

Հասանէն կան 'ի կառաւ ըլլոյն. Ֆաջք՝ որ 'ի սարահարթի անդ էին և առ դրան, յայսկոյս յայնկոյս ընկրկեալ՝ արարին նմա ճանապարհ. և նորա նշանացի տուեալ նոցա զկայ առնուլ, էանց զգեսպակաւն, և ակնարկեաց վարչին և ուղեկցին գալ զհետ: Մտանէն 'ի գաւիթն ա-
ռաջին, գնայ ինքն 'ի դուռն մի փոքրիկ, կա-
ցուցանէ զմի 'ի Ֆաջաց՝ որ գիմիր ունէր զաս-
պանդակն, և պատուիրէ նմա. « Դուն հոս կե-
ցիր, մի Թողուր որ մէկը մօտենայ »: Իջանէ կապէ զձորին 'ի ձող երկաթեայ վանդակին, մտանէ 'ի գեսպակն, 'ի վեր առնու զվարագոյրն՝ զոր կնոջն ածեալ էր զպատուհանաւ գեսպա-
կին, և ասէ ցնա անձայն. « Մէկէն գնա ուրա-
խացուր աղջիկը, հասկըցուր երէն որ խալը-
սած է, ու բարեկամներու ձեռք է »: Եւ ապա
ակնարկեալ վարչին բանալ զգեսպակն, փու-

Թայ առ ուղեկիցն. և զուարթագէմ, որպիսի
չէր նորա երբեք տեսեալ զիշխանն, և ոչ ընդ
միտս նորա անցանէր տեսանել, նկարեալ 'ի
դէմս նորա խնդութիւն ընդ բարեբարութիւնն,
ասէ ցնա 'ի մրմունջ. « Տէր Հայր, Թողութիւն
չեմ խնդրեր ասանկ նեղութիւնը տալուս համար
հրամանքիդ. պիտեմ որ նախ Աստուծոյ համար
յանձն առիր՝ որ հարուրապետիկը կը հատու-
ցանէ, եւքն ալ սա խեղճ զաւկիդ համար »:
Զայս ասացեալ՝ բուռն եհար զսանձուց ջոր-
ւոյն, և կալեալ միւսով ձեռամբ զսպանդակն,
օդնէր ժողովրդապետին յէջս: Կերպարան իշ-
խանին և խօսք և գործ այնպիսի՝ կեանս եւտուն
նմա. յոգւոց եհան հառաչանօք, որ 'ի ժամ
հետ հեղձամղձուկ 'ի սրտին՝ չգտանէին ելս
'ի դուրս: Խոնարհեցաւ իշխանին, և գաշն
ձայնիւ ասէ. « Կամըչըներս զնս »: և ապա յա-
ւելեալ էայ, էայ, սահեցաւ՝ որպէս կարացն,
էջ 'ի ջորւոյն: Կապեաց իշխանն և զայն. և պա-
տուէր տուեալ վարչին կալ սպասել անդ, եհան
ինքն զբանալի դրանն 'ի դրսպանէն, եբաց զդ-
դուռնն, եմոյծ զժողովրդապետան, եմոյծ և զդ-
կինն, առաջնորդեաց նոցա 'ի սանդուղսն, և
ելին երեքեանն լաւէտայն 'ի վեր:

ԳԼՈՒԽ Ի Գ.

Լուչիա այն ինչ զարթուցեալ՝ գեռ ևս ձըգնէր սթափել՝ի քնոյ՝ի սպառ, և ընտրել զոլըտոր աչսիըս՝ի յիշատակաց և՝ի պատկերաց իրաց՝ որ համանմանք էին օրհասական էրազոց: Մատուցեալ պառաւն առ նա բանաձրօս խոնարհութեամբ ասէ. « Քնացար հա՞, կրնայիր հանգիստ անկողնիդ մէջ պառկիլ. ըսի ալ քեզ քանի անգամ երկէկ իրիկուն »: Եւ ոչ ընկալեալ պատասխանի, աղերսախառն զայրացմամբ սպասիէր ընա առնուլ կերակուր, և ասէր. « Խելքդ գլուխդ ժողվէ, կեր քիչ մը, երեսդ ինչ գարձեր է անօթութենէ. եառը մը կալն ալ կը գառնայ, ինս կը չէ խէ »: —

Իսկ աղջկին ասէ. « Ձեմ ուզեր ուտել, երթալ կուզեմ ասկէց, կուզեմ մըրս երթալ. մըրդը խօսք տուաւ ինծի, վաղը առտու կերթաս ըսաւ, ո՞ւր է ինքը »: —

« Դուրս ելաւ , շուտ մը պիտոր դառնայ , ուղածդ պիտոր ընէ , ասանկ ըսաւ » : —

« Ասանկ ըսաւ հա՞, ինչ աղէկ. ես մօրս կուզեմ երթալ շուտ մը , շուտ մը » : —

Եւ ահա լսելի լիներ ոռնաձայն ՚ի միւս սենեկէ , և ապա բաղխիւն դրանն : Ընթանայ պառաւն , հարցանէ ՚ի ներքուստ. « Ո՞վ է » : —

« Ես եմ, բայ » . և էր ձայն իշխանին : Զգէ պառաւն զսղնակ դրանն . մէկ իշխանն արտաքուստ մեղմով, և ընդ դուռնն Թերաբայց հրամայէ պառաւոյն գալ արտաքս , և յղէ վնա հեռի ՚ի կողմն մի ամրոցին , ուր և զմիւսն յղեալ էր՝ որ կայր յաւրնեթեր սենեկին ՚ի պահ : Այս ամենայն չարժուեաւ , գիտիրմէրեն ակընկալուելիւն , և երևուաւ երկոցունցն եկաւորաց ՚ի ներքս , այլայլեցին զաղջկնկն . որուն յանբերէ լի տառապանն՝ ամենայն փոփոխուաւ յաւելոյր կասկած և արհաւիրս : Հայեցեալ եառս երեց մի և կինն , և ապա քաջալերեցաւ ոչ սակաւ . ուշիւ նկատեալ « ա՞ն է , ան չէ՞ » , ծանեաւ զգիտիրմէրեն , և հիացեալ սկսուցեալ կարկեալ եկաց : Մտաւեաւ առ նա կինն , և խոնարհեալ հայեցեալ ՚ի նա գոռոզով , էառ զձեռանէ նորա գգուանօք , և որպէս յարուցանելով ցնա , ասէ . « Խելո՛ աղջիկս , եկուր , հետերնիս եկուր , երթանք » : —

« Ո՞վ ես դուն » , ասէ Լուչիա , և ոչ միայեալ պատասխանւոյ , դառնայ ՚ի Ժողովրդապետեան՝ որ փոքր մի հեռի կայր կարեկից դիմօք . հայի ՚ի նա անդրէն , և դոչէ . « Ան է , ինքն է . ո՛ւր եմ, վա՛յ ինծի , չըլլայ Թէ երազ ըլլայ » : —

« Չէ , երազ չէ » , ասէ տէր Ապոնսիոյ , իրօք է , սիրա ըրէ . զքեզ տանելու եկեր ենք » :

Լուչիա որպէս կենդանանորդ զօրացեալ , յարեաւ անդրէն յոտն եկաց , և անդրէն պչուցեալ յերկոսին ՚ի նոսա , ասէ . « Սուրբ Աստուածածինը խրկեց զձեզ անտարակոյս » : —

Ասէ կինն բարեբաւ . « Ես ալ անանկ կը հաւատամ՛ » :

Կրկնէ Լուչիա , ցածուցեալ զբարբառ ահիւ և կասկածանօք . « Ուրեմն կրնա՞նք երթալ , կրնա՞նք իրաւցընէ... հապա ան մարդինը... հապա իշխանը... բայց արդէն ինքը ինծի խօսք տուած է » :

Եւ Ժողովրդապետեան ասէ . « Ինքն ալ հոս է , գիտես . անձամբ եկաւ քեզ տանելու , դուրսը կեցեր է , շուտ ընենք , սպասել չիտանք իրեն պէս անձը » : —

Յայնժամ իշխանն մղեաց զդուռնն , և եկն ՚ի յայտ : Լուչիա , որ սուղ ինչ յառաջ միայր նմա անձկանօք , և միայր նմա միայնում՝ չունէր լուռ այլ ուստեք յոյս , ՚ի տեսիլ երեսաց նորա յետ բարեկամացն գիմաց և խօսից՝ չկարաց բռնաւորել զանկարծակի սոսկումն իւր . և զգոլանի հարեալ՝ անկաւ ընչաստաւ ՚ի գիրկս բարեբաւի կնոջն , և ծածկեաց զերեսս իւր ՚ի ծոց նորա : Իսկ իշխանն ՚ի տեսիլ հեզին՝ հայեցեալ ՚ի դուռնատեալ և ՚ի պատասեալ ՚ի բազում երկայն վշտակրութենէ և ՚ի ներքինէ , ՚ի մեռելատիպ դէմս նորա՝ յոր յերկինն խսկ չէր կարացեալ կալ ակնկառոյց , ակնկոթեալ եկաց առ վայր մի . և ապա որպէս Թէ ՚ի պատասխա-

նի առ այն՝ զոր չկարէր առել եղկելին, պոչեաց.

« Իրաւունք ունիս, ուրիշ բան չեմ ըսեր, Թողութիւն առը լինի »:

Յայնժամ կինն բարեաւ ասէ յունկանէ աղջկանն. « Քիզ ազատելու եկեր է, գիտեմ. ալ ինքը նոյն մարդը չէ հապէ որ Թողութիւն ալ կը խնդրէ քեզմէն »: —

Յաւել և տէր Ասպնախոյ. « Ասկէց եւել ինչ կրնայ ըսուիլ. գլուխդ վեր առ, քեզ նայիմ, ազատութիւն մ'ըներ. կրնանք չուտ մը Ճամբայ ելլել »: —

Ի վեր հառ Լուչիա զգլուխ իւր, հայեցաւ յիշխանն, և տեսանելով խոնարհեալ զՃակատ նորա և ակնկորեալ, ի գութ շարժեցաւ և ի ընդհատարար մեծարանս, և քաջալերեալ ասէ. « Տէր իմ, Ատուածած վարձատրէ քու ողորմած սիրտդ »: —

Եւ նա ասէ. « Հազար անգամ աւելի վարձատրէ աս քու խօսքերովդ ինձի ըրած բարիքդ »: —

Զայս ասացեալ՝ մեկնեցաւ ի դուռնն կոյս, և եղ ինքն նախ. քաջալերեալ ի սպառ և Լուչիա, Թէ ի Թէ ընդ կնոջն՝ ջոգաւ գՀետ. յետ ամենեցուն և տէր Ասպնախոյ: Իջին ընդ սանդուղսն, հասին ի դուռնն՝ որ ի գաւթին ածէր. եթաց զայն իշխանն, առաջնորդեաց ի դեսպակն, եթաց և զայն, և բարեձեւութեամբ լիճն և ակնածութեամբ, որպէս ոչն էր սովոր, ի վեր ունելով զբազուկ աղջկանն՝ օգնեաց նմա ի մուտս, օգնեաց և բարեաւ կնոջն: Եւայծ ապա զդրաստ Ժողովրդապետին, և ձեռն եա

նմա ի հեծանել: « Ո՛հ, աս ինչ խոնարհութիւն է » ասելով աշտանակեաց նա ի ջորին, արագագոյն յոյժ քան յառաջնումն նուագի: Եւ ի հեծանել իշխանին մեկնեցաւ ջուն ի վեր հառ յայնժամ իշխանն զգլուխ իւր, և երեւեցաւ անդրէն ի տեսիլ իշխանական: Քանք որ պատահէին նմա, տեսանէին ի դէմս նորա մտածութիւն լիճն սաստիկ, և փոյթ նորանչան, այլ ոչ կարէին աւելի ինչ գուշակել. անծանօթ էր տակաւին յամրոցի անդ փոփոխութիւն նորա յայլ այլ. և ոչ ուրուք յամրականացն հասու լինէին միտք իւրացն պատահելոց:

Զգեաց անդէն կինն բարեաւ զվարագոյր դէսպակին. և առեալ զձեռս աղջկանն սիրոյ զաբար, քաջալերէր զնա բանիւք կարեկցութեան և խնդակցութեան և գորովոյ: Եւ տեսեալ զի ոչ միայն վշտակրութիւնք գառինք, այլ և շիտակ և մտութիւն անցեին որ անցանէին, ոչ նեղէին եղկելոյն զգալ լիով զինչգութիւն ազատութեանն, պատմէր նմա որ ինչ օգնէին ի պարզել և ի հանգուցանել զմիտս նորա. յաւել ասել և ուր երթայինն: Եւ յիշեալ աղջկանն՝ զի մօտ էր տեղին ի գիւղ իւր, ասէ. « Իրաւ հո՞ն կերթանք. փառք քեզ տուրը Ատուածածնին. մեր մայրս տեսնայի, մայրը »: —

« Շուտ մը կը խրկենք, բերել կուտանք », ասէ կինն բարեաւ, ոչ գիտելով զի պատրաստեալ էր ամենայն:

Աղջիկն ասէ. « Հա՛, հա՛, օրհնած ըլլաս, վարձքդ Ատուածմէ ընդունիս... բայց ո՞վ ես

հրամանքդ, ինչպէս եղաւ որ եկաք հնձի »։ —

« Մեր ժողովրդապետը խրկեց զիս։ Աստուած աս իշխանին սիրտը շարժեր էր, օրհնեալ ըլլայ, մեր գեղը եկեր էր Կարգինալին՝ որ այցելութեան եկած է հոն, այն ատրը եպիսկոպոսը։ Անոր խօսքերէն դարձի եկէր, զղջացեր է ըրածներուն վրայ, ու վարդը փոխել ուզեր է։ Գեղն համար ալ ըսեր է Կարգինալին՝ որ խեղճ անմեղ աղջիկ մը բանի վրուցեր՝ բերդը ատրեր է. խօսք ալ դրած է եղեր ուրիշի մը հետ, որ ան ալ Աստուածմէ չվախցող մէկը. ով ըլլալը չիզուրցեց հնձի ժողովրդապետը »։ —

Յայնժամ Լուչիա ամբարձ զաչս իւր յերկինս. և կինն յառաջ էած զբանան.

« Դուն գիտնաս պիտոր ատ մարդը. հերիք է։ Կարգինալը մոտածեր էր որ դուն աղջիկ ոդայ մըն ես, հնիկ մը պէտք է որ առնէ բերէ զքեզ. ըսեր էր ժողովրդապետին որ յարմար հնիկ մը գտնայ. ան ալ իր բարեսրտութեանը համար հնձի եկաւ »։ .. —

« Ո՜հ, Աստուած քեզի բարիք տայ, վարձատրէ ցուցուցած սէրդ »։ —

« Ինչ կըսես, խեղճ աղջիկս։ ժողովրդապետը ապստրեց հնձի՝ որ սիրտ տամ քեզի, մխիթարեմ զքեզ, ու մհիէն խմացընեմ՝ որ Աստուած զքեզ հրաշքով խալըսեց »։ —

« Իրաւցընէ հրաշքով. սուրբ Աստուածածնայ բարեխօսութեամբը »։ —

« Ուրեմն սիրտդ հանդիստ բռնէ. քեզի չարիք ընողին ներէ, ուրախացիր որ Աստուած իրեն ողորմեցաւ. աղօթք ալ ըրէ իրեն համար. աստանկով արդիւնք կը վաստըկիս, սիրտդ ալ կը բացուի »։

Լուչիա հայեցուածով լեռն և քաղցրութեամբ այնպիսի եղոյզ հաւանութիւն, զոր չէր մարթ նմա բանիւք բացատրել։ Եւ կինն ասէ. « Ապրիս աղջիկս »։ և յաւել. « Ձեր գեղին ժողովրդապետն ալ հոն գտնուելով ուրիշ շատ ժողովրդապետներու հետ՝ որ չորս դիէն եկեր էին, կարգինալը ուզեց որ անիկա ալ մէյտեղ դայ. բայց իրաւ որ մեծ օգնութիւն մը չեզաւ մեզի։ Այդէն լսած էի խեղճ մարդ մը ըլլալը, բայց փորձն ալ տալ աս բանիս մէջ. խծուծի մէջ ինկած հաւու ձագի մը պէս չփոթեր էր »։ —

Յայնժամ եհարց Լուչիա. « Իսկ ատ դարձի եկող իշխանը ով է »։ —

Կինն ասէ. « Ի՜նչպէս, չգիտեր ով ըլլալը »։ և ՚ի տալ զանուն նորա, դոչեաց Լուչիա.

« Տէր ողորմեա. որչափ անգամ լսեր եմ անոր ըրածները սոսկալով պատմելնին. միշտ ալ ինքը գլխաւոր եղած է պատմածներուն մէջը։ Հիմայ երբոր կը մոտածեմ անոր սոսկալի ձեռքին տակը ըլլալս, ու եռքն ալ ինծի ըրած ոդորմութիւնը, առջի յաւտահատելի վտանգս, ու եռքը յանկարծ խալըսիլս, առջի սեւած ժանիքս, ու հիմակուան գունքն ու գորովը վրաս, ի՛սպիտի ու կը հիանամ. ինչ մեծ է Աստուծոյ ողորմութիւնը »։ —

« Իրաւ մեծ ողորմութիւն. անոր գարձի գա-

լսվը կէս աշխարք չունէր պիտոյ առնէ. մտածէ որ ուրջդի մարդիկ անոնց գոյն մէջ կեն: Իսկ հիմայ, ինչպէս որ մեր ժողովրդապետը ըսաւ ինծի... անկէց ՚ի զատ՝ երեսէն ալ կերևնայ, սուրբ մը գարձեր է, գործերէն ալ յայտնի է »:

Չէ մարթ ասել՝ Թէ կնոջս այսմիկ բարեբաւ լեցէ լեալ հեռաքրքրութիւն յայտնագոյնս գիտելոյ զանցս ծանուցիս աղջկանն, որոյ և ինքն յայնժամ հաղորդ գտանէր. այլ պարտ է ասել ՚ի գովութիւն նորա, զի գործովքն և ակնածութեամբ յաղթականէն, և խելամուտ և լեալ ծանուցիս պանծալի պատմութեանն՝ որ յանձն էր նա, ոչ կամեցաւ հարցանել մինչ նմա ընդունայն և թեթևաբար. այլ ամենայն բանիք նա զճանապարհայն եղեն ՚ի քաջալերութիւն և ՚ի խնամս տառապելոյն, և ասէ.

« Ո՞վ գիտէ ուրջդի առեն է որ բան մը չես գրած բերանդ »: —

« Զեմ ալ լիշեր... խելք մը առեր է »: —

« Խելքդ ազդիկս, անօթի պիտոր ըլլաս »: —

« Ա՛յո », ասէ աղջկին նուաղելով ձայնիւ:

« Տունը, Աստուծոյ տուածէն, քիչ մը բան կը գտանիք ուտելու. քիչ մինոյ համեհլու, քիչ մըն ալ համբերել »:

Բայց աղջկին պարտասեալ անկաւ ՚ի խորս դեսպակին ՚ի նիրհ. և կինն բարեբաւ եթողնոյս լինել ՚ի քուն:

Իսկ տէր Ասպոնիոյ արգարև ոչ տագնապէր ՚ի գարձին որպէս լերթային, այլ ՚ի գադարել անհնարին երկիւղին՝ ՚ի սկզբան անդ

Թուէր նմա ՚ի բաց Թողթափեալ յանձնիէ բեռն ծանր. բայց ապա սկսան անդրկին ծնանել ՚ի սիրտ նորա վարանք. որպէս ուր ծառ մեծ խլեալ արմատաքի՝ մնայ տեղին առ ժամանակ մի գատարկ, այլ ընդ հուպ ծածկի ՚ի մոլախոտոց: Առաւել և զգայր յայնժամ զայլ վիշտս, ոչ զորս կրէին միայն՝ այլ և զորս կրէլոց էր. առաւել յոյժ զգայր յայնժամ զտառապանս տաժանաւոր ուղևորութեանն, քան յերթալ իւրաքանչիւր մանաւանդ ՚ի սկզբան զառ ՚ի վայրկին յէջս յամրոցէ անտի ՚ի խորաձորն: Վարկեալ սակսեալ յակնարկութենէ իշխանին՝ մտորահէր զգրաստս, և զհետ նոցա զբազահետ գնաց ՚ի ջրերք հեծելոյ. և ՚ի տեղիս ուրեք սեպացեալս, որպէս Թէ լծակաւ յեակուսէ ՚ի վեր առեալ եղկելին՝ գլխովայր կոյս անկանէր, և առ ՚ի կալ անկործան, յինոյր ձեռամբ յբմբռնեալ Թամբին. և խնդրել խակ ոչ իշխեր գնալ յուշիկ, զի ցանկայր զերծանել վաղագոյն ՚ի տեղւոջէ անտի: Գարձեալ և ուր ընդ սեպս և ընդ Թուխս էր ուղին, Թուէր ջորին ՚ի հեծուկս հեծելոյն ըստ խրտուիլ քնաւորութեան գնալ ընդ եղերս. և ժողովրդապետին նկատեալ առաջի աչաց զգահավիժութիւն, ասէր յգրաստն. « Գոն ալ առ անիծած ախտը ունիս՝ քու կորուսագ փնտռելու, այդչափ լոյն ճամբայ կայ առջիդ »: և ձգէր զսանձն յայնկոյս, այլ ՚ի ջուր. և առ ահի և զայրացման Թողայր գրաստուն ըստ կամս գնալ: Բայց ՚ի գաջայ անտի, ոչ ևս որպէս յառաջին էրկիցն էր, հասու եղեալ մտաց իշխանին. խորհէր

միայն ՚ի մոխ և ասէր. « Անոր գարձի գալուն լուրը մեր որ տարածուելու ըլլայ աս կողմերը քանի որ հոս ենք, ով գիտե ո՛ր կողմը կը բռնեն ասոնք, ով գիտե ինչ կը ծագի. մանաւանդ՝ թէ որ կարծեն որ ես գարձի բերի զինքը, վայ ինծի, մարտիրոս կընեն զիս »: Եւ ոչ ևս գժտելի Թուէբ նմա գժնեայ հայեցուած նայեցաւ, այլ ասէր ՚ի մոխ. « Առանց ասանկ պէտք է ընել՝ զերծնիք սանձելու համար, ես ալ կը հասկընամ. բայց ինչ պէտք էր որ մեզ երեսին դանուէի »:

Հասին ՚ի առորոտ բլրոյն, ելին անագան ուբեմն ՚ի ձորոյն. երեսք նչմանին պարզեցան, և աչք Աստուծոյ գարձաւ ՚ի բնաւորականն իւր տեսիլ. ՚ի վեր էառ զդէմս իւր ՚ի միջոց ուսոց, արձակեաց զկծկեալ ոտան և զձեռս, ոգի էառ, և հանդարտագոյնս սկսաւ ՚ի հեռաւոր վտանգս խորհել. « Ան անբան Ոտարկը ինչ պիտոր ըսէ հիմայ, ասանկ խաղք ու խաւերը որ ըլլայ. կարծեմ շատ լեղի պիտոր գայ երեսն աս պատառը, պիտոր կատղի. հերիք է որ իմ վրաս ալ չիտաքնայ՝ աս բանիս մէջ գտնուելուս համար: Ինչն որ առաջուց ան երկու աստանաները խրկեց Ճամբուն վրայ զիս վտանգընելու, ով գիտէ հիմայ ինչ պիտոր ընէ: Իշխանին հետ չկրնար նար նետուիլ, երմէն շատ վեր է. պէտք է որ սանձը ծամէ. բայց Թոյնը ներսի դին կը պահէ՝ մկու մը վրայ Թափելու: Ի՞նչպէս պիտոր լըմընան աս բաները՝ չեմ գիտեր. հարուածները միշտ դէպ ՚ի վար կիյնան, քուրջերը դէպ ՚ի վեր կը Թռչին: Իշխանը հարկաւ ի՛ապահովէ

Լուչիան. Մկիալողորմելին ալ ձախորդութեան հանդըպելեցաւ, ինքնըրեն իր մասը առաւ գնաց, բայց նետ հասնելու տեղին դուրս է. ես մէջ տեղը մնայի քուրջի պէս: Ա՛յսչափ նեղութիւն ու վախ քաշելէս ետքը, վարձք մը չունենալէս ՚ի զատ՝ պատիժ ալ քաշել տալ ինծի, բարբարոսութիւն կըլլայ: Հիմայ իշխանը, զիս ասանկ բանի մէջ խօթելէն ետքը, ինչ պիտոր ընէ զիս պաշտպանելու. կրնա՞յ երաշխաւոր ըլլալ՝ որ ան գժոխքի հոգին առջինէն գէշը չընէ ինծի: Ա՛յնչափ ալ մոմոտուք ունի, այնչափ գործքերու ձեռք կը զարնէ, որ ինչպէս կրնայ հասնիլ ամենուն. ասանկները շատ անգամ առջինէն եւել խառնափնդոր մկիգի կը Թողուն ըսկսածնին: Ալեկուտիւն ընողները՝ մանր չեն նայիր. երբեմն բարեգործութեանը վրայ ախորժ մը զգալը հերիք կը սեպեն, ամեն հետևանքները մոռնալու կը ձանձրանան. բայց չարիք ընողները աւելի ուշագիր են, ինչուան ետքը հետ կըլլան, չեն հանգչիր, սրտերնուն մէջ եղած որդը կուտէ զիրենք: Ի՞նչ, երեմ ըսեմ պիտոր իրեն՝ որ ես քու հրամանովդ աս բանիս մէջ մտայ, իմ կամքովս չմտայ. կը կարծէ որ անօրէնութեան կողմը կը բռնեմ. ո՛հ, չէ. զիս առանց վարձքի աշխատցընելուն համար՝ անօրէնութեան կողմը բռնել. քաւ լիցի:... Հերիք է. ալեկ կըլլայ որ աս ամեն բան փերփերթուային իմացընեմ, որ բերնէ բերան ձանձրանալ. բաւական է որ կարգինալին միտքը չհայնայ Թուղթ մը հանելու, պարապ տեղը տեսարան մը բանալու, զիս ալ մէջը դնելու:...

Աաեղին հասանք. Թէ որ ժամէն եկեր է կար-
դինալը, շուտ մը կերթամ յարգելու զինքը.
Թէ որ չէ եկած, կը յանձնեմ ուրիշի որ Թո-
ղութիւն խնդրէ ինծի համար, ու շիտակ տուն
կերթամ: Լուչիան աղեկ ձեռք յանձնուած է,
ինծի պէտք չունի: Ա յսչափ նեղութիւն քա-
շեցէք եղբը, ես ալ ըրատունք ունիմ հանդիս-
ըու: Բայց··· բայց ջըլլայ Թէ ուղէ կարդինալը
աղջկան պատմութիւնը սկիզբէն գիտնալ, ու
ինծի ալ հարկ ըլլայ պահին բանը պատմել···
աս կը պահեր. հապա Թէ որ մեր ժամն ալ
այցելութեան գալու ըլլայ!·· ո՛հ ո՛հ··· ինչ որ
պիտի ըլլայ, Թող ըլլայ. աաեղին առաջ չեմ
ուզեր սիրտս հատցընել, բաւական մտածելու
բան ունիմ: Հիմակուս հիմայ երթամ տունս
փակուիմ: Քանի որ կարդինալը աս կողմերս
է, Լուսիկը երես չուննենար խենթութիւն մը
ընելու. եղբ ալ··· եղբը! ո՛հ, վախիմ որ կե-
նացս եղբն ատելութիւնը գէշ պիտոր անցընեմ»:

Զև վախճան լեալ եկեղեցական հանդիսին,
եհաս ջուն, հանդ ընդ մէջ ամբոխին՝ որ ոչ ինչ
նուազ քան զառաջինն գլզլեալ, և ապա բա-
ժանեցաւ յայս կոյս և յայն: Հեծեալք երկո-
քին խառնուեցան ի հրապարակին փոքրիկ առ-
ընթեր, ուր էր տուն ժողովրդապետին ի
խորս. և գեսպանին յառաջ խաղայ ի տուն
կնոջն բարեխաւսի: Տէր Ա պոնոիոյ արար որպէս
խորհէրն, էջ ի ջորւոյն, մատոյց մեծարանս իշ-
խանին սրտեռանդն հնարիւք վասն իւր ի կարդինա-
լէն, զի սակաւք գառնալ ի գիւղ իւր վասն

կարեւոր իրաց: Զոգաւ առնուլ զդուստ իւր Թո-
ղեալ յանկեան սրահին, զդուսն՝ զոր երիվար
իւր կոչէր, և ուղեղ եղև. իսկ իշխանն կայր
ինայր անդ գառնալոյ կարդինալին: Եհաս գես-
պանն ի տուն բարեխաւսի կնոջն. և հանդոյց նա
զԼուչիա ի դեպ տեղւոջ ի խոհակերոցի իւ-
րում, և զբաղէր ի պատրաստել կերակուր
աղջկանն, և հրաժարեր գեղջկօրէն, այլ ի սըր-
տէ, ի հնարհակալեաց՝ զոր աղջկին առեալ մա-
տուցանէր նմա:

Աւրկ նա արագ արագ խոհս ի ներքոյ սա-
նին՝ յորում էր վառեակ մի գէզ ի կեփ. և
ադայոյց զարգանակն, և լցեալ զայն զերծուխք
հայոյ պատրաստելովք ի պնակի, եդ առաջի
աղջկանն. և ի տեսանել զերկեղեալն զօրացեալ
առ մեն մի դրգռալ, ուրախ լինէր և ասէր. «Ի՛նչ
աղեկ օր հանդըպեցաւ՝ որ (որպէս ինքն ասէր)
կատու չիկայ կրակին քովը. ամենքը այսօր կը
ջանան կերակրիկ մը ունենալ, բայ ի խեղճ
աղքատներէն՝ որոնք հազիւ հացերնին կը գըտ-
նան, ան ալ գարիւ կամ սիմիոնով: Բայց ա-
մենքն ալ չգիտեն՝ որ տան մեծ իշխանը այս-
օր իրենց ողորմութիւն ընէ: Փառք Աստուծոյ,
մենք ան տասիճանը չենք. քիչ մը երկանս ա-
րուեստէն, քիչ մը պարտէզին բերքէն կ'ապ-
րինք. մի մտածեր, կեր որ ուժ առնես, հաւա-
կը եփած է»: Զայս ասացեալ, ջոգաւ պատ-
րաստել ճաշ ընտանեացն:

Լուչիա ոչ սակաւ զօրացեալ, և առաւել ևս
քաջալերեալ հոգւով յարգարեր գհանգերձան
զանձամբ, սովորեալ բնաւորապես ի մաքրու-

Թիւն և 'ի հաւատոյ Թիւն, և յօրինէր զքի-
ահս իւր լուծեալս և խոտեալս: Եւ 'ի յար-
մարիլն զքօղ իւր 'ի կուրծս և 'ի պարանոցն զե-
պան մատուռիք իւր 'ի Պասին Կուսին, զոր զպա-
րանոցսն ածեալ էր 'ի գիշերին: Եւ ընդ հա-
յելն յայն, խռովեցան միտք իւր. յիշատակ
ոսխոյն Թմբրեալ յայնքանեաց կրից՝ զար-
թեաւ յանկարծ, երևեալ 'ի միտս իւր յոտակ
և պայծառ: Ամենայն զօրութիւնք հոգւոյն,
այն ինչ դարձեալք 'ի նա, անդրէն նոաղե-
ցան. և եթէ չէր նա անմեղութեամբ կենաց,
համակամութեամբ ընդ Աստուծոյ, և վստա-
հութեամբն 'ի նա պատրաստեալ, վճռոտու-
թիւնն այն փոխէր արդեօք 'ի յուսահատու-
թիւն: Ի ծուխս անդ խորհրդոց, որ 'ի սկզբան
անդ էառն 'ի միտս լուելեայն, արձակեաց զայս
նախկին բարբառ. «Վա՛յ ինձ, ի՞նչ էր որ
ըրի»:

Եւ յասելն զայս՝ դողումն կալաւ զնա, դար-
ձան 'ի միտս նորա ամենայն որ ինչ յարակից
ոսխոյն. տագնապ դժոխոմքերը անդոյս յօդնա-
կանութենէ, աղօթքն սրտեռանդն, և կամք
հաստատուն՝ որով զնստատումն արարեալ էր.
խակ յընդունել զըղձալին ընորհ՝ ստոյգնալ 'ի
խոստմանէն, Թուէր նմա ապաշնորհ երդմնա-
զանցութիւն, դրժումն առ Տէր և առ Տիրա-
մայրն. Թուէր նմա ածելոսխատաղնցութեանն
'ի վերայ իւր արկածս նորանորս, և ազէտս
չարեաց, և չմնայր նմա այնուհետև յոյսալ
յաղօթս: Չարաչ նա յայնժամ ընդ հարևանցի
ստոյգնան խակոյն 'ի զինջ. և հանեալ զՊասին 'ի

պարանոցէն, և առեալ 'ի ձեռս դողութեամբ,
հաստատեաց անդրէն և նորոգեաց զնստատ
իւր, վշտագին սրտիւ խնդրելով 'ի Տեառնէ
զօրութիւն առ 'ի ընդալ զայն, և պահպանու-
թիւն 'ի խորհրդոց և 'ի վտանգաց յուզելոյ և
յուղղորդելոյ զմիտս իւր: Հեռաւորութիւն պա-
տանեայն Ներկոյի, և դարձնորա անյուսալի, որ
յայնժամ դառն էր նմա, Թուէր այնուհետև
վերնախնամ տեսչութիւն՝ որ ուղղէր 'ի մի կէտ
նպատակն զերկոսին պատահարս. դառնէր 'ի
'ի միութիւն պատճառս գոհութեան ընդ միասն, և
զհետ խորհրդոցս այսոցիկ յուսայր 'ի նոյն ա-
տուաձային խնամն, զի առ 'ի կատարումն ոսխ-
ոյնն՝ ատգէ և պատանեայն համակամութիւն մի
և նոյն խորհելոյ: . Ա՛յլ այս խորհուրդ՝ այն ինչ 'ի
միտս նորա երկնեալ, խռովեցոյց զնա. տատա-
պելոյ օրհորդին զգալով միանգամ ստոյգնոյն
'ի սրտի, դիմեաց յաղօթս. հաստատէր ան-
դրէն զնստատ իւր, մարանգէր ընդ խորհուրդս,
և որպէս յաղթող խոնջ և վիրաւոր յառնէր 'ի
վերայ ոսոխին ընկճելոյ, այլ չև ևս սպանելոյ:

Եւ ահա յանկարծ լսելի եղև ոսանաձայն, և
բարբառ ցնծութեան. էին ընտանիք հիւրընկալ
կնոջն, որք գառնային յեկեղեցւոյ, դըս-
տրիկք երկու և ուստրիկ մի. մտանէն վազվազե-
լով, և զկայ առեալ վայրիկ մի, հայրն հետա-
քրքիր 'ի Լուչիա. և ապա դիմեալ առ մայր իւ-
րեանց, և շուրջ կացեալ զնովաս, ոմն զանձա-
նօթի հիւրոյն հարցանէ զանուն, և օրպէս և
առ ինչ եկեալ, այլ որ խնդրէ պատմել որ ինչ
տեսեալն էր հրաշալիս. և կինն բարեբար զնոյն

ամենեցուն տայր պատասխանի. « Խելօք կե-
ցէք, ձայն մի հանէք »: Մտանէ ասպա ասնուա-
տերն հանդարտաքայլ, խնամք սրտին 'ի գէմն
նկարեալ, և էր նա գերձակ գեղջն և շրջակայ
վայրաց. գիտէր նա ընթեռնուլ, և ընթեր-
ցեալ խակ էր զվարս սրբոց միանգամ և միւս-
անգամ, և այլ գիրս ինչ, և հատորեր 'ի կող-
մանեն յայնոսիկ այր հանճարեղ և գիտնասէր.
այլ ինքն զդովութիւնս զայսոսիկ մերժեալ հա-
մեստաբար, ասէր և ևթէ սխալեալ գիտչուն
իւր, զի եթէ պատահեալ էր ուսման որպէս
զայսը:.. Հանգերձ այսու էր նա 'ի բարեմտու-
նագունից 'ի մարդկանէ. և յաղաչել ժողովուրդ-
գապեաին զկին նորա 'ի բարեգործական ուղե-
ւորութիւնն, գաեալ և ինքն անդ՝ ոչ միայն հա-
ճելեալ էր ընդ այն, այլ և յաւելոյր յորգո-
րել զնա՝ եթէ պէաք եին՝ 'ի նոյն: Այն ինչ
վախճան լեալ յայնժամ հանգիսին, լուծանէր
ամբոխ գիմելոցն անդր. և ինքն բանախօսու-
թեամբ Կարգինալին վառեալ յեռանդն, յան-
կայր գիտել զեզս ուղևորութեան կնոջ իւրոյ,
և տեսանել զաղջկն տառապեալ յաղաւա-
թեան: Ի մտանել նորա 'ի տուն, ասէ կինն
յուշանելով նմա զԼուչիա. « Մէյմը հոս նայէ »:
Եւ յարեաւ Լուչիա շինհետ յամօթոյ, և
խնդրէր ներուին թոթովելով. այլ նա կար-
ճեաց զխօսս աղջկանն՝ գոչելով հրճուանօք.
« Բարի եկեր ես աղջիկս, Աստուծոյ օրհնեն-
քը բերելու եկեր ես առ տանը վրայ. ահ, ուր-
չափ ուրախ եմ զքեզ հոս տեսնալուս. առա-
ջուց ալ վատահ էի՝ որ առ ալեհոծութենեն

էաքը նաեւ հանգիստալ պիտոյ համարիս. վասն
զի ամենևին չեմ տեսեր որ Աստուած հրաշք
մը ակսի ընել ու չկրճմընդնէ: Ուրախակից եմ
քեզի, խեղճ աղջիկ. խիստ մեծ բան է՝ հրաշքի
արժանի ըլլալը »:

Եւ մի ոք կարծեսցէ թէ ինքն միայն հրաշս
կոչէր զաստուածութիւն աղջկանն, ընթեռնելով
նորա զվարս սրբոց. այլ ընդ ամենայն երկիրն
և ընդ շրջակայ վայրս առ հասարակ, նոյնպէս
'ի հրաշս համարեր այն՝ ցորչափ չիշատակ է-
րացն ասէր: Եւ չիրաւի խակ էր մարթ այլազգ
համարել զայն, լուսնեամբքն եւ՝ որ յաւե-
լուին 'ի նոյն: Եւ ապա քայլ քայլ յառաջ մա-
տուցեալ առ կին իւր՝ որ զկաթսայիկն 'ի վայր
առնոյր 'ի շղթայէն, հարցանէ անձայն. « Աղէկ
յաջողցաւ ամեն բան »: —

« Խիստ աղէկ. էաքը կը պատմեմ »: —

« Հա հա, էաքը՝ հանգիստ կերպով »:

Եւ ուղղեալ սեղան, չոգաւ կինն ածել անդր
զկուչիա. և բազմեցուցեալ զնա 'ի սեղան, եգ
առաջի նորա կօրվեալ զթէ ի վառելին. բազ-
մեցան և ինքեանք այր և կին, և քաշալերելին
երկաքանչիւր զչիւրն տաժանեալ և զամօթի
հարեալ: Սկսաւ գերձակն ընդ առաջնաձայնակ
պատառոյն խօսել զմայլմամբ. այլ ընդմիջէին
զխօսս նորա մանկանն չուրջ զսեղանոյն բազ-
մեալ 'ի ձաշ, որոց արգարև հրաշալիս կայնմ
աւուր էր տեսեալ, և չկարելին լռել ընդեր-
կար 'ի լուր: Ներկարագրէր նա զմեծահանգէս
արարողութիւնսն, և անտի անցանէր 'ի պատ-
մութիւն մեծահրաշ գործի իշխանին. առաւել

քան զամենայն ազգեալ էր 'ի նա բանախօսաւ-
թիւն Կարդինալին։ Յոր դառնայր ասէպ, և
ասէր. « Տեսանելու բան էր, անանկ մեծ մարդը
Ժողովրդապետի մը պէս խորանին առջին կե-
ցած՝ քարող կուտար »...

Մի 'ի գասեբացին փոքրկանց ընդվիզէ. « Հա-
պա ան ոսկիէ բանն ինչ էր որ գլուխը գրած
էր »...

« Մաիկ ըրէ։ Անանկ մեծ մարդը, անանկ
գիտուն մարդը, որ ինչպէս լսեր եմ՝ գիրք չի-
կայ որ կարգացած չըլլայ. անանկ որ՝ Միլան
քաղքին մէջ ուրիշ մը չկայ, որ իրեն հասած
ըլլայ. անանկ մեծ մարդը մեղի յարմարի, ու
անանկ խօսի որ ամենքս ալ հասկընանք »։..

« Ես ալ հասկըցայ, հայրիկ ». ասէ միւս
գասերիկն չատախօս։ —

« Դուն ինչ կը հասկընաս. լուռ կեցիր »։ —

« Աս հասկըցայ որ Ժողովրդապետին տեղը
Աւետարան կը մեկնէր »։ —

« Զայնդ վար քաշէ։ Զեմ ըսեր կարգացող
մարդիկ, անոնք պարտքնան են հասկընալու.
հապա ամենէն պինդ գլուխ ունեցողներն ալ,
ամենէն ագէաներն ալ ծայրէ 'ի ծայր կը հաս-
կընային։ Բայց գնա հիմայ, մէյմը հարցուր ի-
րենց որ ըսեն լսածնին. հաւատա որ բառ մը
չեն կրնար զուրցել, թէ և միտք բանին հասկը-
ցած են։ Զարմանալին ալ աս էր, որ առանց ա-
մենևին իչխանին անունը տալու՝ կիմացընէր որ
անոր վրայ էր խօսքը. խմանալու համար ալ՝ հե-
րիք էր աչքըներուն արցունքը տեսնալ, զա-
մենքն ալ կը լացընկը »։

Յայնժամ մանկիկն ասէ. « Իրաւ անանկ է.
բայց ինչո՞ւ ամենքն ալ տղու պէս կուլային »։—

« Զէք կրնար քիչ մը լուռ կենալ, մինիկ ը-
նել։ Ու ան լացողներուն մէջ՝ պինդ սիրտ ու-
նեցողներ ալ կային։ Եաքը սովին վրայ ալ խո-
սեցաւ, ըսաւ որ միշտ պէտք է փառք տանք
Աստուծոյ, ու գոհ ըլլանք. չանանք աշխա-
տինք, ինչ որ կրնանք ընել՝ ընենք կարօտաւ-
թիւններս լեցընելու համար, առանց տրտնջա-
լու։ Ինչու որ նեղութիւն քաշելը չէ՝ որ մարդս
կը թշուառացընէ, և ոչ աղքատութիւնը, հա-
պա մեղք գործելը։ Աստք խօսք միայն չէին,
գիտեիք որ ինքն ալ աղքատի մը պէս կապրի,
բերնէն կը կարէ հացը՝ կարօտներուն կուտայ,
ինքն որ կրնայ ամենէն հանգիստ կեանք մը ան-
ցընել։ Ո՛հ, ասանկին խօսքը սիրով կը լսէ
մարդ, չէ թէ անոնցը՝ որ ուրիշ բան կը քա-
րոզեն, և ուրիշ բան կը գործեն։ Եաքն ալ
յայտնի ցուցուց՝ որ հարուստ չեղողներն ալ,
թէ որ իրենց պէտք եղածէն եւել ունին, պար-
տական են չունողներուն օգնելու »։

Աստանօր ընդհատեալ զբանս իւր՝ որպէս
յիշելով ինչ յանկարծ, զկայ հառ վայրկ մի.
և ապա առեալ 'ի կերակրոց սեղանոյն՝ եգ 'ի
պնակի, և հաց 'ի վերայ, և զետեղեալ զպնակն
'ի գինջակի, և զչորեցունց ատենոյն կալեալ՝ ասէ
ցդուստրն Երիցադոյն. « Աւ. ասիկայ », և՝ 'ի միւս
ձեռն նորա տուեալ սրուակ մի գինւոյ՝ յաւել.
« Գնա, որբևարի Մարիամին տար ատոնք, ու
ըսէ որ զաւկըներուն հետ ուրախութիւն ը-
նէ. բայց շնորհով, գիկարծէ որ ողորմութիւն

կընես իրեն. Թէ որ քովը մարդ կայ, առանց բան մը ըսելու առաջ. նայէ որ չխոտորես »:

Լուչիայի կարմրեցան աչքը, ղժաց ՚ի սրտի սիրուհւոյն մեծ, որպէս և ՚ի բանից անոյ առնն էր սիրելել, առաւել քան ՚ի յորդորական ձառից պատրաստելոյ: Սիրա նորա չարժեալ ՚ի նկարագրութենեն կրօնական հանգիստն, և ՚ի սրտեռանգն բարեպաշտութենէ պատմողին, սթափէր ՚ի սխրական խորհրդոց. և ՚ի դառնալ իսկ այնոյիկ ՚ի միտս իւր, հզօրագոյն ընդդէմ նոցին գառնէր: Յիշատակ իսկ մեծի անձնական զոհին, իբր ոչ եթէ զերծ ՚ի դառնութենէ, այլ հանդերձ այնուիկ խնդութիւն լիներ, ջերեմ սրտիսկ, լուրջ և զօրաւոր ընծայէր նմա:

Վայրկ մի ՚ի վերայ անցեալ, և ահա եհաս Ժողովրդապետ գեղջն, առաքեալ ՚ի Կարդինալէն՝ գիտել զղջումն Լուչիայի, և ազդ առնել՝ զի կամէր սեռանել զնա առօրեն, և ընդոհ ունել ՚ի գիտից իւրոց գերձակին և հնոջ նորա. որք առհասարակ գորովեալ և ամաչեցեալ, չկարէին յայտ առնել զընդհատապատ դոհութիւն սրտից իւրեանց առ այր այնպիսի:

Եհարց ապա Ժողովրդապետն յԼուչիա. « Մարդ դեռ չիհասա՞ւ »: —

« Մա՛րս », դոչեաց աղջիկն: Յաւել Ժողովրդապետն՝ զի ՚ի հրամանէ Կարդինալին յղեալ էր զոք առնուլ բերել զմայր նորա: Յայնժամ աղջիկն ածեալ զերեսաց զգենջակն, աղբերաբար հեղոյր արտասուս գորովոյ՝ մինչև յետ մեկնելոյ իսկ Ժողովրդապետին ՚ի բաց: Ապա ՚ի

հանդարտել տակաւ յուզելոյ կրիցն ՚ի լուր գալստեան մօրն, և ՚ի տալ տէրն զգօնագոյնս խորհելոյ, յիշեաց եղկելին՝ զի զմեծիմարութիւնն զայն սեռանելոյ զմայրն՝ ինքնին իսկ ՚ի ժամանակի տառապանացն խնդրեալ էր ազօթիւք, որպէս ուխտիւն պայմանեալ Զէտ Տէրս դոչիւր ասելով. և ՚ի յիշելն զայն յատակ, առաւել ևս հաստատէր կալ ՚ի խոստմանն, և դառնագոյնս խղձէր ընդ վայ ինչն վազելոյ յանկարծ ՚ի չքնաղից:

Մինչդեռ զմօրէն բանք լինէին, էր ինչ հեռի Ագնէս ՚ի տեղւոջէն. չէ հարկ ասել զկիրս տառապեալ կնոջն ՚ի լուր անակնկալ հրաւիրանացն, և աւետեալ տղատուութեան գտեալն ՚ի վանդիկ, զոր եհատորին հարկաւ տղօտ և հակիրճ պատմեալ էր նմա, զի և ոչ գիտէր մանրապատում առնել զերան. և ոչ Ագնէս կարէր ինքնին գուշակել: Զէտն ՚ի գլուխ հարեալ, աղաղակէր առ Տէր և առ Տիրամոյրն. հարցանէր բաղում ինչ ցեհաւորն, որ չկարէր տալ նմա պատասխանի: Ելմուտ ՚ի սայլն ձեռ ՚ի ձեռս, և ոչ զձանապարհային գազարէր ՚ի հարցանելոյ, այլ ՚ի զուր: Պատահէ նմա յուղղոջ տէր Ապոնոիոյ, որ գայր հանդարտաքայլ յենլով զգաւազանն զառաջեաւ առ իւրաքանչիւր տունփոխ. հնչեաց երկուասեաք հա. տէր Ապոնոիոյ զկայ էառ, էջ Ագնէս ՚ի սայլէն, մեկնեցան յանտառ ուրեք առ ձանապարհաւն: Տէր Ապոնոիոյ համառօտեաց նմա որչափ ինչ գիտէրն և տեսեալ էր. չէին իրքն անաղօտ, այլ գէթ գիտաց Ագնէս սառուիւ զղջումն

դասերն, և ոչի էառ։ Եմնոյ ապա տէր Ապոն-
տիոյ այլ զոյց, և խրատ երկայն տայր հնոջն՝
Թէ որպէս պարտ էր նմա վարել ընդ Կարգե-
նալին՝ ի կամել նորա աներկբայապէս խօսել
ընդ նմա և ընդ դասերն. և զդուշացուցանէր
չառնել ինչ զոյց զՀարանախօսուԹենէ դաս-
տերն։ Բայց հնոջն զգայեալ՝ զի ժողովրդա-
պետն ըստ անձին օգտի զնորատն տայր, հրա-
ժարեաց ի նմանէ առանց ինչ խոստանալոյ
նմա, և առանց խորհրդակից իսկ ընդ նմա լի-
նելոյ, և ուղեւոյ եղև։

Ուր ուրեմն եհաս սայլն, և զկայ էառ առ
դրան դերձակին. յարեաւ Լուչիա հապճեպ
գնաց ընդ առաջ մօրն, գիմեաց ի ներքս Ա-
նէա. և ահա գիրկ ընդ խառն մայր ընդ դաստեր։
Կին դերձակին՝ որ միայն էր անդ, քաջալերէր
զմին և զմիւսն, հանդարտէր զերկաքանչիւրս,
ուրախակից լինէր ընդ նոսա. և ապա խորհըր-
դով եԹող զնոսա միայնակ, ասէրով. « ԵրԹամ
անկողնի մը պատրաստեմ ձեզի, ուրկից անկո-
ղին ալ ուտինք. բայց Թէ որ չուտեցայինք ալ,
սիրով մերինը ձեզի կուտայինք, մենք գէտինը
կը պահպէինք, չէինք Թողուր որ ուրիշ տեղ
երԹաք »։

Եւ ի կատարել առաջին հեծեծախառն գըր-
կախառնուԹեանց, խնդրեաց Ապնէս գիտել
զարիածս դասերն. և նա սկսաւ հառաչանօք
պատմել զամենայն։ Այլ որպէս յայտ է ըն-
Թերցողացդ, ամենեցուն իսկ էր անծանօԹ բո-
վանդակուԹիւն անցիցն, և ինչ ինչ Լուչիայի
իսկ անդիտելի. մանաւանդ օրհասականն ար-

կած սոսկալի կառացն Հանդիպմանն յուղուղ,
յորժամ անցանէր աղջիկն ընդ այն ըստ անսո-
վոր դիպուածոյ. զորմէ երկաքանչիւր իսկ ի
բիւր կասկածանս անկանէին, առանց զտոյգն
կարելոյ դուշակել և ոչ ընդ աղօտ. բայց եր-
կոքին ևս սկզբնապատճառ դաւոյն զՀոտրիկ
համարէին։

Յայնժամ գոչեաց Ապնէս. « Ա՛հ սատանայ,
դժոխքի խանձող, քոյ օրդ ալ կը հասնի, պա-
տիժդ կը գտնաս Աստուծմէ, ան սաենը կը
հասկընաս »։ —

Կարճեաց զբանս նորա Լուչիա. « Զէ, մայ-
րիկ, չէ. մի բաղձար որ պատժուի, մէկուս մը
չարիք մի ուզեր. վնաս քաշել ինչ ըսել կ՝ չես
գիտեր. Թէ որ քաշած ըլլայիր,.. չէ, չէ. նըմա-
դրենք Աստուծմէ ու սուրբ Աստուածածինն՝
որ անոր սիրտն ալ շարժեցին, ինչպէս որ մեկալ
խեղճ իշխանինը շարժեցին՝ որն որ ասկէց գէշ
էր, ու հիմայ սուրբ մը դարձաւ »։

Բայց յարհաւրաց անտի, զոր կրեր աղջիկն
ի յիշատակ այն ինչ անցելոց գժոխըմբեր տա-
ռապանացն, երբեք երբեք նուաղէր, և ասէր
իսկ ատեպ. « Սիրտս չիգիմանալ պատմելու »։
Եւ յետ բաղում արտասուաց, հազիւ կարէր
յառաջ զբանն ածել։ Ի հասանել ապա ի
մասն ուխտին՝ այլայլեցաւ յոյժ, երկուցեալ
Թէ գուցէ մայրն կշտամբեսցէ զվաղվաղ և զան-
խորհրդ խոստումն իւր, և որպէս յօրհնու-
Թիւն Պասկին էր արարեալ՝ օրէնս էնն խղճի
մտաց ընդարձակս ի մէջ ածեալ, տակաւին
չինքն ի նմին, և յայտնեսցէ ուժգնք մտերմա-

բար զերան առ՝ի լայս մասց և՝ի խորհրդակ-
ցութիւն, և հրատարակեցին երկն. զոր՝ի
խորհէն ևեթ՝ զամենի մեծի հարկանէր. և
պատկառանք իսկ՝ի մօրէն յաւելցոյր նմա զը-
ժուարութիւն ի՝ն անեծադմանելի առնելոյ
զոյց զայնմանէ: Վասն այսր ամենայնի լռեաց
զկարեւորն զայն մատն, զի մի եգեալ պատմել
զայն առանձին Հօրն Քրիստափորի: Եւ ոչ է
հարկ ասել՝ որ ինչ կրեացն՝ի սրտի, ի հարցա-
նելն զնմանէ, և՝ի լսել՝ զի ոչ ևս էր անդ, այլ
՝ի գիւղ ուրեմն այլուր առաքեալ:

« Հապա Ռէնցոն չէս հարցըներ », ասէ Ա-
նէս:

Եւ Լուչիա անձկանօք ասէ. « Ո՞ր է, ողջ
առո՞ղջ է »: —

« Ողջ ըլլալը սոյգ է, ամէնն ալ ասանկ կը-
սեն. գիտենք որ Պերկամոյի սահմանը փախեր
է, բայց ձիշդ ուր ըլլալը չգիտցուիր. ինքն ալ
ինչուան հիմայ բան մը չգրեր, կրնայ ըլլալ որ
Թուրկը խրկելու կերպ մը չէ գտեր »: —

« Փառք Աստուծոյ որ ողջ ըլլալը սոյգ է »,
ասէ Լուչիա. և՝ի կամէն չորէիլ վնասս այլուր,
ահա անակնկալ դառնայր Կարգինալն յեկե-
ղեցւոյ, ուր Թողաքն զնա: Լուեալ նորա յիչ-
խանէն զողջամբ դարձ սպղնկանն, բազմեալ էր
՝ի ձաշ, ուշելով զնչխանն յաջմէ ընդ ակըմբա-
հոյլ երկուսեան՝ որ ոչ յապեղին հայել՝ի դէմս
զգօնացելոյն քաջութեամբ հանգերձ, և խո-
նարհելոյն առանց վատութեան. և հաճեմա-
տէին զնա ընդ պատկերին, որ՝ի բազմաց հե-
տէ՝ի միտս իւրեանց էր ազատօրեալ:

Եւ յարուցեալ՝ի սեղանոյ, մտին անդրէն
երկոքեան՝ի սենեակ առանձին. և յետ ընդ-
երկար խօսակցութեան՝ որ սահեաց առաւել
յոյժ քան զառաջինն, մեկնեցաւ իշխանն գնալ
յամրոց իւր նովին ջորւով առաւօտին. և Կար-
դինալն եւս կոչել զԺողովրդապետն, և ասաց
ընկերել ընդ իւր՝ի տուն անդր՝ ուր պատսպա-
րեալն էր Լուչիա:

Այն Ժողովրդապետն. « Սրբազան Հայր, մի
աշխատիր, ես շուտ մը կը խրկեմ կխմացընեմ
աղջկանը՝ որ մօրը հետ հոս գայ, թէ որ հասեր
է մայրը. հիւրընկալնելընին ալ մեյտեղ, թէ որ
կը հրամայես »: —

« Զէ, ես կուզեմ իրենց երթալ »: —

« Ինչո՞ւ հրամանդ աչխատես », կրկնեաց Ժո-
ղովրդապետն, « կը խրկեմ կը կանչեմ գիրենք,
վայրկեան մը բան է »: Այսպէս պնդէր Ժողո-
վրդապետն այր բարեշաւ, այլ Բան ասրող յայ-
ոց անուանելոյ. և ոչ՝ի միտ առնոյր՝ զի կամէր
Կարդինալն պատուել այցելութեամբ զուտաւա-
պետ աղջկին և զասպնջականս նորա, և փա-
ռաւոր առնել զպաշտօն իւր: Ցետ եւս Ժողո-
վրդապետն կամաց Կարգինալին, և խոնար-
հեալ շարժեցաւ՝ի գնացս:

Ցերեկել երկոցունց ատեաց արանցն յուշքաջ,
գիմեաց առ նոսա ամենայն Ժողովուրդն՝ որ
կայր անդ. և նոյնհետայն խոնարհեալ յամենայն
կողմանց ամբոխ բազմութեան, կեաք գնային
առ նոքօք, այլք խառն՝ի խուռն ղՀետ. և Ժո-
ղովրդապետն գոչէր անդադար. « Մ՚հկդի կե-
ցէք, ձամբայ տուէք, եաև քաշուեցէք »: Իսկ

Կարգինալն ասէր. « Թող տուր, մի նեղեր զինքդ »։ Եւ դնայր յառաջ, մերթ զձեռս ամբարձեալ՝ օրհնել զնոսա, և մերթ խոնարհեալ գլուխ՝ աղօթել զմանկան, որ առ ոտս կայր։ Հասին ապա, մտին ի տուն անդր, ժողովուրդն եկաց արտաքոյ. բայց ի խառն անդ էր և դերձակին, որ գայր զհետ առչեալ և բերանաբաց՝ ոչ գիտէլով ուր գնային. այլ երբև եաես զհիւրն անակնկալ, սկսաւ պատառել զամբոխն սաստ աղաղակաւ. « Թողէք որ անցնիմ, պէտք է որ հասնիմ »։ ԵՒ եմուտ ի տուն։ Ագնէս և Լուչիա լսէին զաղմուկն՝ որ երթայր և ըզօրանայր արտաքոյ, և ի խնդրել նոցա զվանդերն՝ տեսին փեռեհիեալ բացեալ զդուրս տանն, և զծիրանաւորն՝ զի մտանէր ընդ ժողովրդապետին։

Եհարց Կարդինալն. « Ասիկա՞յ է աղջիկը »։

Եւ յասել ժողովրդապետին, « Ձրամէր ես »։ մտաբեաւ առ Լուչիա, որ ընդ մօր իւրմէ կայր հիացեալ անշարժ և զամթի հարեալ։ Այլ բարբառ Կարդինալին, տեսիլ դիմաց նորա և կերպ հայրենի, մանաւանդ բանք նորա, եռուն նոցա խրախոյս, զի ասէր. « Խեղճ աղջիկ. Ասուած փորձել ուզեր է զքեզ, Թող ասլով որ վիշտ քաշես. բայց աչքը չէ վերուցեր վայիդ, չէ մոռցեր զքեզ. ամէն վտանգէ խալըսեց զքեզ, ու իր մեծ ողորմութիւնը քեզմով ցուցցուց մեկուս մը վայ, ու այնչափ մարդկանց շունչ առնել տուաւ »։

Յայնժամ եմուտ ի սենեակ անդր կինն հիւրընկալ, որոյ լուեալ զաղմուկն և դիմեալ ի պատուհան, ի տեսանել զԿարդինալն՝ զի մտանէր ի տուն խրբեանց, փութայեալ էր իջանել, յարդարեալ զանձն ըստ ժամուն փութոյ. նոյնհետայն եմուտ և այր նորա ընդ այլ դուռն, և ի լուր բանից Կարդինալին՝ զկայ առին խոնարհ մեծարանօք յանկեան։ Նորա ողջունեալ զնոսա մարդասիրապէս, յառաջ վարեր զբանս իւր առ աղջիկն և առ մայր նորա. և հարցուածս ընդ խօսիցն խառնէր, կամելով առնուլ պատճառս ի պատասխանոյ նոցա առ ի բարեբարել տառապելոյն։

Բայց Ագնէս քաջալերեալ ի հայրագութ խնամոյ Կարդինալին, և սրտառուչ ընդ բանս Տէր Ալեքսեայ, որոյ յայնպիսի ազէտս արկեալ էր զինքեանս և արգելեալ զդոյզն իսկ սփոփումն յայտնելոյ զսիրտ իւրեանց այնմ՝ որ հրամայէրն նմա, ուր անակնկալ դէպք ի բարի յաջողէին նմա, ասէ. « Ո՛ւր էր թէ աչքդ հրամանքիդ պէս խեղճ ընտանեաց պաշտպան ըլլայիր, չիմանայինն զանոնք՝ զիրենք վտանգէ խալըսելու համար »։ —

« Ըսէ համարձակ ինչ որ սրտիդ մէջ ունիս »։ —

« Կուզեմ ըսել որ՝ մեր յարգելի ժողովրդապետը թէ որ իր պարտքը ըրած ըլլար, առ բաները գլուխնիս չէին գար »։

Եւ ի սասփակել Կարդինալին՝ զի յայտնագոյն ևս խօսեցցի, գոտեւ ի տագնապի պատմելոյ զանձնայն, և զմտան իւր՝ զոր չկամեր մանաւանդ այնպիսւոյն մեծի առն յայտնել. բայց եգիտ զինարս իրին սուղ ինչ զեղծմամբ։ Պատմեաց զհարմանախօսութիւնն և զերթաժեշտ տէր Ա-

պանակով յօրհնէրդ զպահին. ոչ լռեաց և ըզպատճառանս՝ որով նա ՚ի մեծաւորս հանէը զինեան. և էանց ընդառաջ յանօրէնն Իւդային, և թէ արդեօք իրաւունք լեալ և իսկ առեալ էին ինքեանք, և ՚ի կնիք բանէին յաւել. « Իրաւ՝ անհէց խաղընկացանք, բայց ուրիշ որոգայթի մէջ ինկանք. թէ որ յարդելի Ժողովրդապետը մեզի առաջուց անհեղձաբար ըսած ըլլար, ուխեղճ գաւիրնէրս պահած ըլլար, մեկին ա մենքս մէյմէկ գաւառ կերթայինք հետու տեղ մը գաղտուկ՝ որ առանան ալ չէր գիտնար, ուշանալօնիսս եղաւ ինչ որ եղաւ » : —

« Ժողովրդապետը հաշիւ պիտոր տայ ինծի » : —

« Զէ տէր իմ », ՚ի վերայ էած Ագինէս, « առնոր համար չկպտաիլի որ իրեն ինսան մը ըլլայ. եղածը եղած է, օգուտ մը չկրնար անկէց. տանիկ ծնած մարդ մըն է, տանիքը գլուխ որ ըլլայ, նորին նոյնը կընէ » : —

Բայց Լուչիայի ոչ հաճոյ թաւեցաւ եղանակ պատմութեանն, և ասէ.

« Մենք ալ գէշ չարժեցանք, յայտնի է որ Աստուծոյ կամքը չէ եղեր՝ որ չկրպաջողեցաւ » : —

Կարգինալն ասէ. « Ինչ էր գէշ չարժէրնիդ, խեղճ աղջիկ » : —

Եւ Լուչիայի անուշ արարեալ զդէպատապէն ակնարկութիւնս մտին, պատմեաց Կարգինալին զիորձ իւրեանց ՚ի տան Ժողովրդապետին, և յաւել. « Գէշ ըրինք, անոր համար ալ Աստուած պատժեց զմեզ » :

Կարգինալն ասէ. « Քաշածնիդ Աստուծոյ նաւիրեցեք, ու Տանգիստ եղէք. ով որ իր պակասութիւնը կը ճանչնայ, ու Աստուծմէ եկածը սիրով կընդունի, անոր յոյսը ապահով է, Աստուած զինքը կուրախացընէ » :

Եհարց յայնժամ թէ ուր էր խօսելեալն. և լուեալ ՚ի մօրէն (քանզի լուռ եւեթ կայր դուստրն և աչիկօրեալ) զփախուստ պատանւոյն յերկիր օտար, զարմացաւ և տրտմեցաւ, և կամէր զվանէրն գիտել: Եւ Ագնէս պատմեաց օրջափ ինչ գիտէրն զՈւենցոյն:

Կարգինալն ասէ. « Լսած եմ առ ազուն վրայ. բայց ինչպէս անանկ բանէրու մէջ ինկղը կրնար ուզել տանիկ ալջկան մը հետ կարդալ » :

Լուչիա պատկառանօք այլ վստահութեամբ ինն ասէ. « Ալիկ ազայ էր » :

Յաւել և Ագնէս. « Խելօք կարիճ մըն էր, չափէն ալ էւել հանգարտ, ամենքը կը վկայեն, նաև Ժողովրդապետը. ով գիտէ ինչ հնարք, ինչ նենգութիւն բանեցուցեր էն, խեղճ ազան չանցաւոր ընէլու » :

Կարգինալն ասէ. « Շատ հաւանական է, կը տեղեկանամ իր վրայ » : Եւ հարցեալ զանուն և զմնականսն պատմուցին, նշանակեաց ՚ի տետրակի, և յաւել. « Փիչ օրէն ձեր կալնի ալ պիտոր գամ. ան տունն Լուչիան ալ կրնայ գալ հոն առանց վախնալու. հիմակուս հիմայ ապահով տեղ մը կը գտնամ իրեն՝ ինչուան որ ամեն բան օրջափ որ կարելի է՝ կարգի մտնայ » :

Դարձաւ ապա ՚ի հիւրընկալս, որ անգէն ՚ի մէջ եկեն, և նորոգեալ զնորհակալիս՝ ղրը ՚ի

ձեռն ժողովրդապետին արարեալ էր նոցա, եհարց թէ կամիմն զաւուրս քանի մի ունել առ իւրեանս զհիւրան, զորս առեր առաքեալ էր նոցա: Ասէ կինն. « Ի՞նչ ըսել է, տէր իմ». այլ այնպիսի ձայնիւ և դիմաք, որ յոյժ առաւել նշանակէին քան զհակիրճ պատասխանին հեզաժամձռուկ առ պատկառանաց: Իսկ այրն շիտեալ յերեսաց և՝ի հարցուածոյ կարդենալին, կամեր ըստ իրայն պատշաճի գեղեցիկ և պանծալի ինչ տալ պատասխանի. խորհրդեր զձակատ, առ՝ի կողմն կոյս հայեցիւք, կծկեալ չրթամիւք, աղեղներ զվիսս, ինգրեր որսներ կզկզեր իմաստ ինչ և բառս հատուկտիր, այլ կարձեր վայրկեանն. հայեր՝ի նա կարդինալն՝ի վերայ կացեալ լուռթեանն նորա, մինչև ստպ բացեալ հիքին զբերան իւր՝ ասէ. « Կրնաս մնալ կաբերել». այլ ինչ չկարացեր յաւելուլ. ընդ որ ոչ միայն յայնժամ զամենի հարաւ, այլ և միշտ յիշատակն այն տխուր դառնացուցանէր նմա զախորժ մեծի պատուոյն այցելութեան կարդինալին. և որչափ յիշէր նա զվայրկեանն զայն, դայլն՝ի միտս նորա բանք՝ գոգցես՝ի հեճուկ՝ պատշաճագոյնք քան զզուրան զայն կինոջ մահաբերել. այլ որպէս հին առակն ասէ, Եթէ խել ոչ ի՞ւր ի՞նչ լէ ըլլար:

Մեկնեցաւ կարդինալն ասելով. « Աստուծոյ օրհնութիւնը վրանիդ ըլլայ »: Եհարց ապա յերեկոյն ցժողովրդապետն՝ թէ արդեօք մարթէր հատուցումն ինչ առնել տանուտէառնն, որ ոչ թուէր ունելոր, վասն ծախուց հիւրընկալութեանն՝ մանաւանդ յայնպիսւոյն ժամանակի: Պատասխանի եւս ժողովրդապետն. « Ի՞նչ ալէկ է ըսել՝ որ ոչ իր արուեստէն, և ոչ իր պզտի արտին բերքէն կրնայ աս տարի ուրիշներուն առատաձեռնութիւն ընել. բայց առջի տարիներէն քիչ մը բան մեկդի դրած ըլլալով, աս կողմերուն հանգիստ ապրողներէն մէկն է. կրնայ քիչ մը ծախք աւելի ընել՝ առանց իր բանը աւրելու, ինչպէս որ ըրաւ ալ սիրով: Բայց անկարելի է որ ուզէ փոխարէն ընդունիլ»:

Կարդինալն ասէ. « Բայց առնելիքներ կրնայ ունենալ, որ պարտատէրները չեկրնան վճարել»: —

« Աղեկ կըսես, տէր իմ. աս աղքատ գեղացիները իրենց ուսելու բերքէն եւեղցածովը կը վճարեն պարտքերնին. անցած տարի բան մը չեւեղցաւ, կարօտութիւնն ալ չեկրցան լեցընել»: —

« Ուրեմն ան ամեն պարտքերը ես վրաս կառնեմ. ուզէ երկն առնելիքներուն ցանկը, ու վճարէ»: —

« Բայց խել մը բան կըլլայ»: —

« Այ աղեկ. հարկաւ աւելի կարօտներ ալ կան, որ պարաք ալ չեն կրնար ընել՝ իրենց փոխ առած չնչանութիւնն համար»: —

« Իրաւ է. ինչ որ կարելի է՝ կըլլուի, բայց ամենուն հասնել անկարելի է, մանաւանդ ասանկ առեն»: —

« Անոնց համար ալ հագուստ կարել տուր իմ հաշուիս, ու վճարէ. թէպէտև աս տարի կարծես որ գողութիւն մըն է հոգին՝ի զառ

բանի մը ծախք ընելը. կարգէ դուրս տալի մըն է »։ —

Չկարեմ վախճան առնել պատմութեան առաջս այսօրիկ, առանց անցանելոյ Տամասկոսիս զէնից իրաց իշխանին։

Լուր գարձի նորա կանխեալ էր զայս նուագ քան զնա՝ ի ձոր անդր. և՝ ի ծաւալել համբաւոյն ազգութիւն, հոգ, անձկութիւն և քրքիջն էր անդ։ Աբբանեկաց իւրոց Քաջաց՝ որ նախ գիպան նմա՝ ակնարկեաց գալ զկնի, և ապա որոց հեազկեաւ գիպէին։ Ամենեքեան դնայէին զկնի վարանեալ, սոլորք՝ ի հպատակութիւն, և յաւելեալ տակաւ՝ ի թիւ՝ հասին յամրոցն։ Հրամայեաց և որոց կայենն՝ ի պահ դրան՝ գալ ընդ նոսա. և մտեալ՝ ի գաւթին առաջին, հանց՝ ի մէջ. և գեհենս հեծեալ՝ ձայն էս որոտաձայն, որպէս սովորն էր՝ ի համախմբել զնոսա. և՝ ի վայրկենի յրուեալքն առ հասարակ եկին մի՝ ի վայր՝ ակնկառոյցք յիշխանն։ Նա՝ ի բարձուէ երիվարին էս նոցա պատուէր՝ գնալ սպասել՝ ի մեծի սրահին. և ինքն կացեալ՝ ի զնին գնալոյ նոցա, էջ ապա յերիվարէն, և տուեալ ածել զդրաստան յասպասաստան՝ էլ առնոսա։ Յերևեալ նորա՝ ի սրահին՝ լռեցին ամենեքեան, և ամփոփեցան՝ ի մի կողմն՝ թողեալ ազատ զսրահն մեծ։ Եւ նա ամբարձ զաչ իւր առ՝ ի հաստատել զլուութիւն, և ասէ.

« Մարիկ ըրէք, ձայն մի հանէք առանց հարցնելոյ։ Մինչև հնոյ, սիրելիք, բռնած ձամբանիս գժոխքին խորունկը կը հաներ. զձեզ յանգիմանելոյ համար չեմ ըսեր, ես ամենեգ

յանցաւորն եմ. լսեցէք ընելիքս։ Աստուած իր ողորմութեամբը կանչէց զիս՝ վարքս փոխելոյ. պիտոր փոխեմ, սկզբայ ալ փոխելոյ. նոյն ողորմութիւնը ամենուգ ալ ընէ։ Գիտցէք ուրիւն, ու ապէկ մոքերնիգ պահեցէք. որոշեր եմ ես մահ յանձն առնուլ՝ քան թէ մեյմէն ալ Աստուծոյ կամացը դէմ ընել։ Եւ կառնեմ ամենեգ իմ ձեզի տուած անօրէն հրամաններս, ու կը հրամայեմ ալ՝ որ անոնք չկատարէք։ Ա՛ս ալ գիտցէք՝ որ ասկէց ետքը չկրնայ պիտոր մեկը իմ անունովս ուրիշն ինձս մը ընել. որովհետև որ ատ դաշտմէ հետս կենալ կուզէն, իմ զաւկրներս էն, ետքն ինձացած հայս իրենցն է. խակ ով որ չուզեր, ազատ է երթալու, իր ամեն իրաւունքին վրայ՝ պարգև ալ ընդունելով. բայց մեյմէն ալ հոս չկրնար ոտք կոխել՝ առանց փոխելու իր վարքը. բայց փոխել ուզողին՝ միշտ գիրկս բաց է։ Բոլոր աս գիշեր մտածեցէք, վաղը առաւոտ կը կանչեմ զձեզ՝ պատասխանը առնելու։ Հիմակուս հինայ ամեն մարդ իր տեղը քաշուի. Աստուած որ ինծի ողորմեցաւ, բարի խորհուրդ տայ ձեզի »։

Եւ իբրև գադարեաց՝ ի խօսելոյ, եղև լռութիւն. պեսպես և բազմաձեւ եռային խորհուրդք՝ ի միտս նոցա, այլ ոչ ոք տայր ինչ նշան արտաքոյ։ Սովոր էին ընդունել զբարբառ իշխանին, որպէս պատգամ կամաց նորա անփոփոխելի. և՝ ի փոխել արդ կամաց նորա՝ զնոյն ազգեին զօրութիւն բանք իւր։ Ոչ ոք ետես գալ նորա՝ ի գարձ՝ մտաբերեր՝ ի սահակել, և որպէս անկելոյ յիշխանութենէ տալ նմա պա-

տասխանի: Տեսանէին 'ի նմա սրբութիւն, այլ որպէս զսրբոց բարձր 'ի գլուխս և սուր 'ի ձեռն նկարելոց. երկնչէին 'ի նմանէ, այլ սիրէին և այնպէս որպէս հայատակք սիրասիրք, մանաւանդ ընդօծինք, որոց առաւելագոյն էր Թիւրեայ նորա ակն ածէին պատկառանօք, զոր ժպիրհք խակ և վայրենամիտք զգան առաջի այնոցիկ, ընդ որովք կան 'ի ծառայութեան: Աղգեալ էին 'ի նոսա և բանքն, զորս լուան 'ի բերանոյ իշխանին. զի Թէպէտև լսելեաց նոցա գժպիհէք, այլ չէին անիրաւք և ոչ 'ի մտաց նոցա օտարք. և եթէ յաճախ խաղ արարեալ էր նոցա զայնպիսի բանս, չէր 'ի չհաւատալ, այլ առ 'ի մերժել 'ի մտաց զերկիւղ զոր կրէին 'ի խորհելն յայնոսիկ լքմուածեամբ. և 'ի տեսանել նոցա արդ զարգասիս երկիւղն այնորիկ յայր այնպիսի, գէթ առ վայր մի, որ առաւել և որ նուազ, կային սասանեալ: Եւ թող զայս. որք ինդամ յայնմ առաւօտու գտեալ էին արտոզոյ, և լուեալ և տեսեալ զընծուԹիւնն Ժողովրդեան, զսէր և զմեծարանս առ իշխանն՝ փոխանակ առելուԹեան և երկիւղի, պատմէին նոցա. որպէս զի յոր միւսն հայեցեալ էր նոցա իբր 'ի սաւրէ 'ի վեր՝ յորժամ ինքեանք էին առաւաւելագոյն զօրուԹիւն նորա, տեսանէին զնա և յայնժամ զարմանալի և սիրելի ժողովրդեան, գեր 'ի վերոյ այլոց, այլազգ յառաջմէ՝ այլ ոչ ինչ ընդհատ, և միշտ զանազանեալ 'ի հասարակածին մարդկանէ:

Վասն այսր ամենայնի կային տալչեալ, տարակուսեալ զիրերաց և զանձանց խակ. կէսք

սրամտէին, այլք երկնչէին խորհուրդ գնալ պատասխարել այլուր, կամ գործ ինչ գտանել. ոմանք քննէին զանձինս՝ Թէ կարիցէն այնուհետև լինել բարեկրօն, և ոմանք շարժեալ 'ի բանից իշխանին՝ զգային բերուեն 'ի գարձ: Էին և՝ որք առանց հաստատելոյ ինչ 'ի մտի՝ խորհէին յանձն առնուլ զամենայն, վայելել առժամն ղՀացն գժուարագիւտ՝ խոստացեալ մտադիւր, և շահել ժամանակ, այլ ոչ ոք ձիկ հանէր: Եւ իբրև կատարեաց իշխանն զբանս իւր, և աջ 'ի վեր հառ անդրէն՝ տալ նոցա հրաման գնալոյ, մեհենեցան լուռ անբարբառ որպէս ջոկ խաշնի, և ելին 'ի բաց: Ել և ինքն, և արձանացեալ 'ի մէջ գաւԹին, կայր 'ի զննել նեմմաս երեկոյին ցրուելոյ նոցա 'ի տեղիս իւրեանց:

Բայց Թէպէտև յայնքան խառն 'ի խուռն և 'ի տարակուսական գործս էր երբէք իշխանին որպէս յայնժամ տագնապեալ, սակայն աչք նորա ծանրանային 'ի քնոյ: Խիղճ մտաց, որ յառաջնումն գիշերի բարձեալ էին զքուն յարեւանաց նորա, փոխանակ հանգարտելոյ՝ տասիկ և և բարձրագոյն բառնային բողոք, սակայն սակաւը զնա քուն: Ջկարգ և զտեսչութիւն 'ի բազում այնքան ամաց խնամով մեծաւ 'ի ներքս անդ յիւրմէ հաստատեալ՝ անօրինակ կցորգութեամբ յանդգնութեան ընդ յարաւեւութիւն, ինքնին յայնժամ սուղ լինչ բանիւ աւերեալ էր. զՀպատակութիւն իւրոցն յամենայնի և զպատրաստութիւն առ ամենայն, զհաստատմութիւն արբանեկաց՝ յոր ընդ այնքան ամս սովոր էր կենալ, ինքնին էր խար-

խաբեալ, և զգործիս իւր դարձուցեալ էր յարգել և 'ի խափան գործոց, չիոմի և վտանգ 'ի տուն իւր արկեալ, սակայն 'ի քուն բռնագա- տէր: Զոգաւ 'ի սենեակ իւր մտաւեալ 'ի մա- հճակ՝ ուր յերկին գտանէր վուշ և տատասկ, անկաւ 'ի ծուռնը կալ յաղօթս. և հեռացեալ 'ի խորս մտացն, յիշեալ զաղօթս ինչ ուսեալս 'ի մանկուԹենէ, և սկսաւ աղօԹել. և բառք աղօ- ԹիցՆ յայնքանեաց ամաց որպէս ԹԷ կծկեալք 'ի միտս իւր՝ լուծանէին գային 'ի շրԹուն. և յաղօԹէնէն զգայր անխնամալի ինքքաղցրուԹիւն վասն գառնալոյ իւրոյ 'ի սովորուԹիւն ժամա- նակի անմեղուԹեանն. սաստկուԹիւն ցաւոց 'ի խորհել զվիշն արկեալ ընդ այն և ընդ այս ժամանակ, եւանգն հասանելոյ ապաշխարու- ԹեամբՆ 'ի նորոգումն խղճի մտաց, և մտաչէզոյ 'ի սահման անմեղուԹեան՝ յոր ոչ ևս կարէր գառնալ, և գոհուԹիւն և վստահուԹիւն յո- ղորմուԹիւն այնորիկ՝ որ կարողն էր 'ի սահման անգր ածել զնա, և տայր իսկ գրաւականս կա- մէզոյ ածել զնա: Ցարեաւ ապա, եզ 'ի մահճակ իւր, և խնդոյն եղև 'ի քուն:

Այսպէս երեկոյացաւ օրն այն, որ գեռևս էր հռչակաւոր 'ի գրել անանուն պատմագրին զպատմուԹիւնս զայս. զոր եԹէ չէր նորա ա- ւանգեալ, չէր մեզ մարԹ գիտել զինրան, գեԹ մանրապատում. զի ՌիփամանԹի և Ռիւոլա, զորս 'ի վեր անգր յիշատակեցաք, այսչափ ինչ միայն ասեն՝ զի անուանին այն բռնաւոր 'ի հու- սել ընդ Կարդինալին փոխեաց սքանչելապէս զվարս իւր մինչև 'ի վախճան: Այլ սակաւք ո-

մանք զգիրս նոցա ընԹեռնուն, և նուազագոյնք զմեր. Թերեւս և 'ի ձորն ևս այն, եԹէ խըն- գրել ոք կամիցի, ԹէպԷտև ձարտար ոք լցէ 'ի հետազօտել, հաղիւ ազօտ ինչ և խաւն 'ի խուռն գոցէ ահանգուԹիւն զիրացն, վասն այնչափ ինչ անցից յայնմհետէ 'ի տեղւոջ անդ անցե- լոց:

ԳԼՈՒԽ ԻԵ·

Ի վաղիւ անդր ՚ի գեղջ Լուչիայի, և ընդ առաջն երկիր ՚ի Լեքքոյ, զաղջկանէն ևեթ և զկարգինալէն և զիշխանէն լինէին բանք, և զայլմէ ևս ոչմեծին՝ որում թէպէտ և հաճոյ էր ընթանալ ՚ի բերանս ամենեցուն, այլ աստ ցանկայր լինել անկիշատակ· և էր սա Խոտրիկ։ Յառաջագոյն ևս բամբասեր անուն իւր, այլ բանք հատուկիւրք լսելի լինէին ՚ի մէնձնէ, և որք խօսէինն զնմանէ՝ քաջ գիրեաս ձանաչէին առ ՚ի կարելոյ չարախօսել զնմանէ· և ոչ բովանդակ որ ինչ ունէին ՚ի սրտի խօսէին· զի առաւելագոյնք ՚ի մարդկանէ, ուր չիցէ մարթառանց ծանր վտանգի թափել զսրտմտու-թիւն, ոչ միայն նուազ խօսին, կամ բոլորովին լռեն զոր զգան, այլ և զգան իսկ նուազ։ Այլ յայնժամ ո՞ հրաժարէր ՚ի տուգելոյ և ՚ի պա-

տեղոյ զգործ այնպիսի աշխարհագոյժ, յորում մեան Աստուծոյ էր, և ոչ այլք երկոքեան երես ելելիք առաքինանային, ի միում սէր արգասրութեան ընդ իշխանութիւն կցորդեալ, ի միասումն գոռոզութիւն խոնարհեալ՝ թուէր լինել զէնընկէց: Առաջն սոցա իշխանն Ռոտրիկ նկուն լեալ վոգբկանայր. անդ յայտնապէս գայր յերեան քանի սոսկումն էր խոշտանգել զանմեղութիւն, առ ի կացուցանել զայն ստնարդ, և հալածել զայն անպատկառ յամառութեամբ, անգութ բռնութեամբ և առելի գառով: Ի հանդիսի անցանելն յայնժամ և այլ ամենայն անօրէնութիւնք Ռոտրիկեայ, և ամենայն ոք որ ինչ զգայրն ի սրտի՝ տայր համարձակ ի դուրս, քաջալերեալ միաբանութեամբ ամենեցուն ի նոյն. հասարակաց էր քրիստնէութիւն և բողոք, այլ՝ի բացէ առ ահի սրիկայիցն, որ չուրջ կային զնովաւ:

Ոչ ինչ նուազ և ի վերայ բարեկամաց նորա և մարգահաճոյից անկանէր առելութիւն. քանզ բասէր արժանապէս և գառաւորն խուզ և համր և կոյր, որ զբռնաւորին անտես առնէր եղերուն. այլ սա էս ի հեռուստ, զի առանց նակ սրիկայից՝ընդ հրամանաւ նորա կայինն նուիրք առեներականք: Իսկ ի չաղակրատ և յանտարմել փաստաբանէն, որ Թնճուկ քակտն կոչէր, և յայլոց սինչքոր չողոքորթից, ոչ ոք ակն ածէր. ցուցանէին զնոսա մտանանիչ, և ընդ ակամբ ընդ նոսա հայհոյն, որպէս զի չնչխել նոցա երևել արտաքոյ առ ժամանակ մի:

Ռոտրիկ որպէս չանթահարեալ ընդ լուրն

անակնկալ, հակառակ այնմ՝ որում սպասէրն օր ըստ օրէ և ժամ ի ժամ, ծածկեցաւ ի տան ընդ Ֆաջս իւր, և հեղձամղձուկ լինէր առ սրտմտութեան զաւուրս երկուս. ապա յերրորդում աւուր էլ գնալ ի Միլան: Եթէ քրիստնէութիւն ևեթ ամբոխին էր՝ թէպէտև զայրացեալ, թերևս կայր խիզախէր նա ընդդէմ, խնդրելով պատուհասելոյ զոք ի յանդգնագունից առ ի խրատ ամենեցուն. այլ լուր գալստեան Կարդինալին ի կոմմանդ յայնոսիկ՝ եռնմա խուսել անտի: Կոմսն հօրեղբայրն նորա, որ ոչն գիտէր զանցիցն անցելոց՝ բայց որչափ ինչ Ատելեայ պատմեալ էր նմա, կամէր և պահանջէր ի Ռոտրիկեայ հայթայթել կայնժամ զպայծառութիւն աղգատոհմին՝ գտանել նեղով ընդունելութիւն փառաք ի Կարդինալէն. զի բարեպատեհ չոյժ էր ժամանակն առ ի ցուցանել ամենեցուն՝քանի մեծարոյ էր աղգատոհմ իւր առաջի բարձրագոյն իշխանութեան: Իսկ Ռոտրիկ առ ի խոյս տալ ի ծանրատաղտուկ հրամանէն՝ վաղվաղորդ լեալ ընդ այգն, եղ ի կառս՝ առեալ ընդ իւր զկրիզդ, ընդ այլս ի Ֆաջացն սրիկայից՝ որ արտաքոյ կառաց առաջի և զինի գնային, և պատուէր տուեալ այլոց ևս սպասաւորաց գալ զհետ, մեկնեցաւ որպէս փախստեայ. և (ներեցէք ինձ ասա ընդ արս աւագս նախնիս զնա համեմատել), մեկնեցաւ որպէս զկատիլինա ի Հռոմ, սպառնալով և երդնլով՝ գտանել այլազգ ի վրէժխնդրութիւն:

Բայց Կարդինալն հանապազորդեր զայցե-

լուծիւնս իւր առ Ժողովրդապետս երկրին 'ի Լէքքէոյ, առ մեզ մի յաւուր. և 'ի հասանել 'ի գիւղ անդր՝ ուր բնակէին Լուչիա, բազուկք 'ի բնակչաց անտի երթեալ էին ընդ առաջ նորա: Ի մուտս գեղջն առընթեր տան Ագնեսի էր կամար յաղթական, կազմեալ 'ի չերտից և 'ի յարդէ, ծածկեալ սաղարթուք. և ձախատ եկեղեցւոյն գորգովք զարդարեալ, և 'ի պատուհասնաց տանց կախեալ էին վերմակք և պաստառակալք, փաթեթք խանձարրոց, և որ ինչ առանին ձահաւոր և անձահ 'ի զարդ: Ընդ երեկս, որ էր ժամ գալստեան Կարդինալին, ոլք միանդամ 'ի տունս մեացեալ էին ծերք, մանկունք և կանայք՝ ելին ընդառաջել նմա, կէսք կարդաւ տողաբար, այլք խմբովին: Գնայր յառաջ տէր Ագնեսիոյ 'ի վարանս տագնապի 'ի մէջ այնքան ցնծութեան, յապուշ հարեալ ընդ այնքան աղմուկ չիմանի և ընդ եռալ բազմութեան առաջի և ղինի, և ասէր անդադար. «Հանդարտ, կամաց, գլուխս կը պտըտի». կասկածելով զի շաղակրատ կանանցն պատմեալ լցէ Կարդինալին զնրս Պատկին, և հարկ լինի իւր տալ նմա զպատմանէ համար:

Եւ ահա երևեցաւ Կարդինալն, կամ մանաւանդ ամբոխն՝ յորոց միջի էր Կարդինալն 'ի դեսպակի հանդերձ իւրովքն, զի 'ի բացէ նչան եւեթ այսր ամենայնի ընդ օգս երևէր, և գեր 'ի վերոյ բոլորից խաչն՝ զոր երից գրանն ածէր հեծեալ 'ի ջորի: Բազմութիւնն, որ գնայր ընդ տէր Ագնեսեայ, ձեպէր խառն 'ի խուռն հասանել միանալ ընդ միւս ամբոխին, և ինքն ձայ-

նեալ դարձեալ երից և ջորից «Կամաց, կամաց, ինչ կընէք», դարձաւ ցասուցեալ քըրթմնջելով՝ «Բաբիլոն դարձուցիք Բաբիլոն», և եմուտ յեկեղեցի մինչդեռ դատարկն էր այն, և կայր սպասէր անդ:

Յառաջ գայր Կարդինալն օրհնելով զժողովուրդն, և օրհնաբանութիւնս 'ի նոցանէ ընդունելով. զուր ձգնէին իւրքն ընկրկել զխուռն բազմութեան նոցա: Ինչիկ երկրին, գիւղացիկք Լուչիայի, կամէին առաւել ինչ պատիւ ընծայել Կարդինալին, այլ էր գիւրին. զի ուր և հասանէր, առնէին նմա բնակիչք որ ինչ և կարէին: Անդստին իսկ 'ի սկզբանէ հայրապետութեան նորա, յառաջին մուտն 'ի Կաթողիկէն, ամբոխն և գիմեցուին բազմութեան եղև այնպիսի՝ մինչև վտանգել կենաց նորա. և ազնուականք ոմանք, որ մերձաւորագոյնք կային առ նմա, ընկրկէին զամբոխն սուսերաբաց: Բնութիւնն այն անպատեհ՝ այնպիսի լեալ էր նոցա սովորութիւն, զի առ 'ի չափու ունել զցոյց սիրոյ նոցա առ հովուապետն իւրեանց, հատուցանէին նմա վտանգ մահու: Եւ ոչ պաշտպանութիւն սուսերաւորացն բաւեալ, արապողապետն և 'ի ձեռանէ նորին, և երկուքնք երկու առ ընթերակայք զօրաւորք մարմնով և ոգւով, 'ի բազուկս իւրեանց 'ի վեր ունէին զկարդինալն 'ի գրանէ եկեղեցւոյն մինչև ցաւազ սեղանն: Եւ պարտ է ընդ հովուական աշխատութիւնս նորա, թերևս և ընդ վտանգս կենաց, դասել զմուտս նորա յեկեղեցիս 'ի Թեմական այցելութիւնս:

Եմուտ և ասա որպէս էր հնար, և մատեաւ յաւադ սեղան անդր. և յեա վայրկի մի յաղօթս կալոյ, խօսեցաւ համառօտ առ Ժողովուրդն, յայտնել զգաւթ սիրոյ իւրոյ առնոսա, և զկնի 'ի փրկութիւն հոգւոց նոցա, և թէ արդէս պարտ էր նոցա պատրաստել 'ի հանդէս վաղուն: Եւ ապա 'ի տուն Ժողովրդապետին. և ընդ այլ բանս խնդրեաց տեղեկութիւն զԻնճոյկ պատանւոյ: Պատասխանի եա Ժողովրդապետն՝ զի էր պատանին փոքր մի աժխոյժ, փոքր մի յամառ, փոքր մի բարկացող: Այլ 'ի հարցանել Կարգինալին ճշդագոյնս և մանրամասն, սոխակեցաւ վկայել՝ զի էր նա լաւաբարոյ, և ցուցանէր զարմանս թէ արդէս 'ի Միլան յարուցեալ էր նորա զխռովութիւնս՝ որ պատմեին զնմանէ:

Եհարց դարձեալ Կարգինալն. « Բայց հնմոյ աղջիկը կրնա՞յ գալ ապահով հոս իր տունը կենալ, ինչպէս կերեւայ քեզի »: —

Պատասխանի եա տէր Ասպնախոյ. « Հնմոյկ հնմոյ կրնայ գալ՝ թէ որ կուզէ. բայց ... (յաւել յոգւոց հանելով).. բայց պէտք կըլլայ որ հրամանքդ միշտ հոս ըլլաս, կամ գոնէ մօտ »:

Կարգինալն ասէ. « Ամառաւած միշտ մօտ է, բայց կը մտածեմ ապահովել զինքը »: Եւ ապատուէր եա՝ յղել 'ի վաղիւ անդր ընդ առաւօտն դեսպակ հանդէրձ Թիւնապահօք, առնուլ ածել զաղջիկն ընդ մօրն:

Եւ Ժողովրդապետն ուրախամիտ 'ի բաց, զի չէղեն ինչ բանք զխօսեցեալոցն, և ոչ խնդրեաց Կարգինալն համար զհրաժարելոյ իւրմէ պատ-

կել զնոսա. և ասէր ընդ միտս իւր. « Ուրեմն չեգիտեր. ինչ հրաշք որ Ագնէսը բան չէ ըսած իրեն. իրաւ է որ նորէն պիտի տեսնուին, բայց ալէկ խրատ մը նորէն կուտամ իրեն »: Եւ ոչ դիտէր ողորմելին՝ զի Կարգինալն չէհարց ինչ զայնմանէ, առ 'ի խօսել ապա 'ի գէպ ժամանակի ընդ երկար, և տալ նմա տեղի պատասխանելոյ նախ քան զլճճիսն՝ որոյմ էր արժանաւոր:

Բայց խորհրդոյ Կարգինալին ապահովելոյ զԼուչիա՝ չէղեն ինչ պէտք. զի յեա մեկնելոյ իւրոյ անտի կերպարանափոխ եղեն իրք, որպէս առաջի կայ մեզ պատմել:

Ագնէս և Լուչիա 'ի տակաւ առուրս, յորս կացին 'ի տան դերձակին, սիրան պարտիէր ըստ կարի 'ի սովորական կեանս իւրեանց: Լուչիա ինդրեաց անդէն գործ 'ի վաստակ, որպէս արտրեալ էր և 'ի մենաստանին. կարէր կարկատէր անդ առանձին 'ի խցիկն իւրում անտես յօտարաց: Ագնէս՝ էր զի ելանէր արտաքս, և էր զի վաստակէր ընդ գտաբերն: Խոստակցութիւնք նոցա էին սիրալիր՝ այլ սիրալիրք. երկոքին էս պատրաստք 'ի բաժանումն յիրերաց, զի չէր մտրթ գաւթն կալ աներկիւղ մերձ 'ի յորջ գայլոյ. այլ երբ և որպիսի լինէր ըստ էր բաժանումն այն, մեծին և խառն 'ի խուռն էր նոցա հանդերձեալ, մանաւանդ վասն գրատեղւոյն: Բայց Ագնէս յուսայր՝ գիր յեաղ ուրեմն 'ի Ուէնցոյկ ընդունել, առանց ինչ արկածից նմա պատահելոյ. և եթէ գտաւ էր նորա գործ ինչ ուրեք և վաստակ առ 'ի կեալ անդ, և պինդ

կայր ՚ի խոսմանն՝ ընդ որ չէր ինչ երկբայել, զի՞նչ արդեւոյր զինքեանս ՚ի գնալոյ կալ ընդ նմա: Զայսպիսեաց ակնկալութեանց խրոյց խոսեր առ դուստրն սուէպ. բայց լսի՞ զայն՝ Թէ պատասխանի առնել առաւել էր վշտալի ազգականն, չունիմ ասել. զի զգաղանիան կարևորս Թագուհեայ էր նորա միտ. և Թէպէտ յաւէր նմա ունել ինչ ծածուկ ՚ի մերն սիրելւոյ, և խոյս տալ գարձեալ ՚ի բանից նորա, սակայն խափանեալ յանկողնեղի ամօթոյ և ՚ի պէսպէս կասկածանաց՝ զորս վերագոյն ասացաք, օր ՚ի յօր արկանէր և լուեր զայն: Խորհուրդք մտաց նորա յոյժ այլազգ էին ՚ի մերն խորհրդոց. տարտամ ինչ առնէր պատասխանի՝ ոչ ևս յոսալ գարձի պատանւոյն, և Թէ ոչ այլ ինչ այնուհետև էր իւր ըղձալի՝ բայց ՚ի միասին ընդ մերն կեալ, յաճախ ևս արտասուք ՚ի ձայ՝ խափանէին զնոսա: Բայց Ագնէս ասէր. « Դիտեմ ինչու հնմայ ատանկ կը մտածես. վասն զի շատ բան քաշեցեր, կը կարծես որ ալ յաղողութիւն չենք կրնար ունենալ, բայց Աստուծոյ ձեռքն է. Թէ որ... ազգի յոյս մը ծագելու որ ըլլայ, ուրիշ կերպ կը մտածես »: Իսկ Լուչիա համբուրեր զմայրն, և լայր:

Բայց ընդ նոսա և ընդ ասպնջականս եղև սիրելութիւն մեծ. զի ոչ առաւել ծնանի սէր՝ քան ընդ բարերարս և ընդ բարերարեալս, բայց ոչ երկուասեք լոյս լուսաւորիւն: Եւ առնէր Ագնէս զոյցս անսպառ ընդ կնոջն. իսկ այրն երբեք երբեք զբաղեցուցանէր զնոսա պատմութեամբք և բարոյական խօսիւք, մինչդեռ նա ՚ի ճաշու՝ գտեալ ինչ գեղեցիկ ՚ի վարուց սրբոց կամ ՚ի Հարանց վարուց ՚ի պատմել:

Ոչ ինչ հեռի ՚ի գեղջէ անտի էին յամարատանի իւրեանց ամեք ոչ հասարակածինք, այր և կին, Ֆերրանտ և Պրաքսեդէս. զորոց պատմիչն անանուն ըստ սովորութեան իւրում լռէ զմականուն: Պրաքսեդէս էր մեծուհի անցեալ զաւուրըք, յօժար ՚ի բարերարել, որպէս և արժանաւորագոյն գործ մարդոյ: Բայց առ ՚ի բարերարել՝ պարտ է ճանաչել զբարին, և որպէս բազում ինչ այլ. էկարեմք ճանաչել զայն՝ բայց շուրջ պատեալ ՚ի կրից, ՚ի ձեռն գատողութեան մտաց ըստ խորհրդոց՝ որ են ՚ի մեզ սովորաբար որպէս մարթին լինել: Պրաքսեդէս վարեր ընդ բարեկամս իւր, որպէս պարտն է վարել. սակաւս ընտրեալ էր իւր բարեկամս, զորս ոգւով ջափ սիրեր. բայց ընդ սակաւսն էին ըստ արկածից բախտի և Թիւրըք, ոչ ինչ ընդհատ սիրեցեալք ՚ի նմանէ: Պատահէր նմա հատմարել ինչ բարի՝ որ ոչն էր, կամ առնուլ ՚ի գործի՝ որ ինչ խափանն էր, կամ վարկանել օրինաւոր զայն՝ որ չէր օրէն, կարծելով զի որ առաւել քան զպարտս առաքինանային, օրէն իցէ նմա անցանել և ըստ իրաւունս: Պատահէր նմա չտեսանել որ ինչ էրն իսկապէս, և տեսանել որ ինչ չէրն. և բազում այլ ինչ հանգոյն սոցին, որ կարեն պատահել և պատահեն իսկ, և ս և լաւագունից ՚ի մարդկանէ. այլ Պրաքսեդէս սիկնոյ յաճախագոյն և պատահէին, և ոչ գոն ուրեք յոգունք ՚ի միասին:

Սա ՚ի լսել զանցս ծանուցս Լուչիայի, և որ

ինչ յայնժամ լսելի լինէր զաղջկանէն, ցան-
կացաւ տեսանել զնա. և յղեաց կառս հան-
դերձ սպասաւորաւ առնուլածել զնա ընդ մեր
խրտում: Լուչիա չկամէր գնալ, և ինդրէր 'ի
դերձակէն՝ որ եթէ նոցա գՏրաւէրն՝ գտանել
հնարս հրաժարելոյ: Յորչափ որեար հատարակ
ինդրէին տեսանել զաղջկին վասն հրաշիցն,
հաձէր զգժիամակութիւն նորա դերձակին մը-
տագիւր, այլ հրաժեչա առտանօր թուէր ար-
համարհութիւն. վասն որոյ բաղում ինչ արար
և խօսեցաւ, և ասէր. « Պէտք չէ տանիլ ընել,
մեծ մարդիկ են, տանկիներուն՝ չէ ջրսուիր,
կրնայ ալ ձեզի բախտ մը ըլլալ, սիկին Պրաք-
սետեսը ուրիշ կառարելութենէն 'ի զատ՝ սըր-
բակեաց կին մըն ալ է ». և համառօտիւ այն-
չափ ինչ ասաց, զի յանձն կառ Լուչիա. մնաց
ևանդ զի և մայրն հատատաէր զամենայն բանս
դերձակին՝ ասելով անդադար. « կայ ու կայ,
անանկ է, իրաւունք ունի »:

Իբրև հասին առ սիկինն, ընկալաւ զնոսա
բազում մեծարանօք և ուրախակցութեամբ.
եհարց զնոսա, և խորհրդակից եղև նոցա, յա-
մենայնի բերելով յանձին իշխանական ինն վա-
յելչութիւն ընդարձոյն՝ քաղցրախառնեալ խո-
նարհական բանիւք, և այնու բարեպօրով խըն-
նամովք և բարեպաշտութեամբ՝ զի խոկայն Աք-
նէս, և ապա Լուչիա, համարձակեցան 'ի պատ-
կառանաց անտի՝ որ 'ի սկզբան ընկճէր զոգիս
նոցա յերեսաց մեծուհւոյն, և ընդվզացան ընդ
նմա: Զի երկարեմ. սիկինն Պրաքսետես իբրև
լսաւ զի Կարթինային խնդրէր յապահովել ու-

րեք զԼուչիա, կամեցաւ սպասաւորել նմա, և
կանխել 'ի կատարումն խորհրդոյ նորա, խոս-
տանալով ընդունել զաղջկին 'ի տուն իւր.
կալանդ՝ ոչ 'ի ծառայութիւն, այլ ըստ հաճոյս
իւր վաստակակից լինել կանանցն. և յաւել՝
զի ինքնին ծանուցանէր զայն Կարթինային:

Տիկինն Պրաքսետես ընդ յայտնի և պատ-
րաստ հիւրընկալութեան, դիտէր միւս ևս մե-
ծագոյն բարերարութիւն՝ ըստ կարծեաց իւ-
րոց՝ առնել ընդ աղջկին, ածել զնա 'ի զգաս-
տութիւն և յուղիղ ճանապարհ: Զի յորմէ-
հետէ լուեալ էր զանցս Լուչիայի, եղեալ էր
'ի մոլի՝ զի որ ապիրատի և խռովարար պա-
տանւոյն, փախուցելոյ 'ի կախաղանէ, էր խո-
սեցեալ, էր արդեօք վէրծ 'ի չարեաց ըստ ա-
ռակին. Այս ոչ ըստ ամ կենայիս, և առաջի որեիսի
ոչ ես: Այցելութեամբն Լուչիայի հատատաե-
ցաւ նա 'ի նոյն միտս. եթէ ոչ եթէ անհաձոյ
թուեցաւ նմա աղջկին, այլ զի 'ի ցնորս մտաց
գտանէր 'ի նմա ըստգիւտ բազում: Անկորել
աղջկանն և խոնարհել զգլուխն, լսել կամ հա-
կիրճ և իբր բանի տալ պատասխանի, նշանք
պատկառանաց, կարծես տային նմա յամառա-
թեան: Թուէր սիկինոջն տեսանել յայտնապէս
'ի միտս աղջկանն խորհուրդս այլ և այլ, 'ի շա-
ռագունեալ նորա տեսլ և 'ի զսպելոյ զնա-
ռաչանս... Իսկ աչք նորա մեծամեծք՝ ոչ հաձոյ
թուէին սիկինոջն, և որպէս 'ի հատատարիմ
տեղւոջէ տեղեկացեալ՝ համարէր աներկբայե-
լի, զի աղէտք աղջկանն էին պատուհաս երկ-
նառաք վասն բարեհամութեան նորա ընդ ա-

պերատ պատանեւդին, և իրատ առ 'ի բաց կա-
ղդ 'ի նմանէ. վասն որոյ ցանկայր գործակից
լինել առ այսպիսի ինչ բարի. զի որպէս ասէին
յառաջս, ցանկայր առնել զկամս Աստուծոյ.
այլ սխալէր՝ զինորս իւր համարելով 'ի կամս
Աստուծոյ: Սակայն զգուշանայր էապէս ինչ ա-
մենևին կասկած զնորհրդոյ իւրոյ. և 'ի հաս-
տատուն օրէնս ունէր, զի առ 'ի բարեբարել
այլոց՝ կարևոր էր ծածկել զնորհուրդս իւր 'ի
նոցանէ:

Հայէին յերեսս մեծ և դուստր, և 'ի սո-
վորս հարկին բաժանելոյ 'ի միմեանց՝ առաջար-
կութիւն տիկնոջն Թուէր երկաքանչիւրոյն ընդ-
ունելի. մանաւանդ զի մեծ էր ամարատանն 'ի
գիւղ իւրեանց, և 'ի ձախողել իսկ երից՝ մեր-
ձաւորագոյնք գտանէին՝ առ 'ի դիւրաբեր հատա-
նել առ 'ի միմեանս: Եւ նկատեալ 'ի դէմս մի-
մեանց զհաճութիւն, ընկալան ընդօրհակալեօք
զառաջարկութիւն տիկնոջն. և նա անդրէն
հատատեաց զնորոգումն իւր, գրելոյ վաղվա-
ղակի առ Կարգինալն: Եւ 'ի մեկնել նոցա 'ի
բաց՝ էտ գրել առն իւրում զնամակ, որպէս 'ի
կարևոր դէպս առնէր իւր գիտաւորի. և նո-
ցա ըստ պատշաճի իրացն զամենայն ձիգն մե-
ռացն 'ի կիր արկեալ 'ի ճահագրել մատոյց
գինոջ իւրում զարուճանակն առ 'ի գաղափա-
րարել, պատուիրեալ նմա միա գնել ուղղա-
գրութեան, որ մի 'ի յոգուսոյց գիտութեանցն
իւրոց էր, և 'ի սակաւուց անակ իրաց՝ յորս
կարէր նմա հրամայել: Պրաքսեաեայ օրինա-
կեալ զոյն՝ ամենայն խնամով, առաքեաց 'ի

առն գերձակին առ Ագնէս, յառաջ քան զա-
ւուրս երկուս կամ երիս յղելոյ գարձեալ
Կարգինալին անդր գեստակ, գարձուցանել
զաղջիկն հանդերձ մարդն իւրով 'ի գիւղ իւ-
րեանց:

Հասեալ անդր՝ ընկեն 'ի տուն ժողովրդապե-
տին, ուր էր Կարգինալն, և պատուէր առեալ
էր մուծանել զնոսա անդէն 'ի ներքս: Խաչա-
կրին նախ քան զայլս տեսեալ զնոսա, արար
զպատուէրն, ուսուցեալ նոցա նախ ձեռ 'ի
ձեռոյ զարարողութիւնս մոլեցն և զմեծարա-
նաց անուանս՝ զորս պարտ էր ընծայել Կար-
գինալին, որպէս և առնէրն միշտ՝ ուր կարէրն
անտես և անլուր 'ի նմանէ: Զի վիշտ մեծ էր
խաչակրին տեսանել հանապազ զպատուաղրու-
թիւն կարգաց յայցելութիւնս Կարգինալին,
և ասէր ցայլ սպասաւորս. « Բոլոր իր չափա-
զանց բարութեանը համար է, բոլոր օրհնածին
խիստ ընտանութեանը համար է, որ կարգերը
հաւրուին »:

Կայր յայնժամ Կարգինալն 'ի խօսել ընդ-
ոեր Ապոնաեայ զիրացս ժողովրդապետութեանն, և
չերև պարապ ժողովրդապետին տալոյ միւսան-
գամ հրահանգս Ագնեսի և գտեր նորա, որ-
պէս ցանկայրն. միայն յանցանեն առ նոքօք
յելս իւր՝ ակնարկեալ առ նոսա հաճ և գոհ,
ասէ. « Ձեզ նայիմ, մաղը մի ծակիէք »: Ընկալաւ
զնոսա Կարգինալն մարգասիրապէս. և նոցա
խոնարհեալ մեծարանօք՝ մատոյց նմա Ագնէս
զդէրն ասելով. « Ա՛ս նամակը Պրաքսեաէս խա-
թունը տուաւ, որն որ աղէկ կը ճանչնայ եղեր

զհրամանքդ. բնական ալ է որ հրամանքներդ նուագ պէս մեծերը իրար ձանչնան. մեզի գլուխ դէն կիմանաք »:

Ընթերցեալ Կարգինալին զրկերն, և 'ի միտ առեալ զիմաստ պատճառելոյ բանիցն, ասէ. « Ակնկ է, իմացայ »: Եւ արգարև ճանաչէր Կարգինալն զվերլուանս և զկին նորա, որչափ բաւական էր առ 'ի վստահել ընդ անկասկած ծերի հրաւէրն և ընդ ապահովութիւն աղջկանն 'ի տան անդ 'ի չարանենդ հնարիչ և 'ի բռնութենէ հալածչացն. այլ թէ զինչ կարծիք էին նորա զպրաքսեաւոյ տիկնոջէ, չէ գիտեմ ըստուգիւ: Յայտ է զի Կարգինալն ինքնին իւրովի ոչ ընտրեր զնա առ այն. այլ որպէս այլոց ասացաք, էր սովորութիւն Կարգինալին խափանել զգործ այլոց՝ առ 'ի լաւագոյն ինչ գործել: Խօսեցաւ առ նոսա և ասէ.

« Ա՛ս իրարմէ բաժնուելնիդ ալ՝ համբերութեամբ յանձն առէք, սիրով քաշեցէք ձեր վիճակին անտուդութիւնն ալ. բայց վստահ եղիք որ շուտով պիտի լմընայ: Աստուած կը Թողու՝ որ բանը ինչուան հոն հասնի, մինչև ուր որ ինքը ձեր բարւոյն համար տահմանէ է »: Եւ և Լուչիայի իրատ ուրոյն, և քաշելեր եալ զերկաքանչիւր, օրհնեաց զնոսա, և արձակեաց 'ի բաց:

Յելանել նոցա արտաքս՝ խանեչյան զնոքօք բարեկամք, արք և կանայք, գրեթէ ամենայն քնակիչք գեղջն՝ ոչ սպասելին նոցա արտաքոյ, և ածին զնոսա որպէս յաղթանակաւ 'ի տուն: Եւ մանաւանդ կանայք եվևելս առնելին զմի-

մեամիք՝ խնդակից լինել նոցա և արտասուակից, և որոմէին ամենեքեան՝ զի 'ի վաղիւ անդր մեկնելոց էր Լուչիա: Իսկ սրք, որք քան զընկեր, խնդրեին օգնել նոցա, և կալ զդիչերն զարթ 'ի պահ անակին. առ որ պատասխան տային՝ յարմարել զառաւոտն՝ ելնել կամ օգնականս բաղձալ գտանել, զի կարօտիք օգնականութեան:

Ընդ այսպիսի ընդունելութիւնս ամաչէր և խռովէր Լուչիա, իսկ Ագնէս կայր անխռով. բայց աղջկանն օգնեցին ոչ սակաւ, սթափեցուցեալ զնա 'ի սխրալ յիշատակաց՝ որ և կայ մուկս անդ զարթնուին 'ի միտս նորա առ գութս տանն և 'ի խղկուտնս և 'ի տես ամենայնի: Ի հարկանել ցանգակին՝ որ աղդ առնէր զժամ սկսանելոյ հանդիսին, շարժեցան ամենեքեան գնալ եկեղեցի. և եղև այն որպէս միւս չորս յաղթական Լուչիայի և մեր նորա: Ի կատարած հանդիսին առ Ագնեսիայ, որոյ երթեալ էր 'ի տուն՝ այլ առնել թէ պատրաստակաւ էր ազախնոյն զամենայն ինչ 'ի ձաշ, հրաւիրեցաւ 'ի Կարգինալէն: Փութացաւ նա առ հիւրն մեծարոյ. որոյ կոչեցեալ զնա մերձ առ իւր, ասէ. « Տէր Ժողովրդապետ », այլ այնու եղանակաւ՝ զի չայտ առնէր սկիզբն իմն երկայն և ծանր խոստացութեան. « Տէր Ժողովրդապետ, ինչուան խեղճ Լուչիան փեսայացուն հետ չիպատկեցիր »:

Տէր Ագոնեսիոյ խռովեալ, ասէ 'ի մտի. « Ա՛ռնէք աս առուտ ոսկրակը պարտեր են ». և քրթմնջելով ետ պատասխանի. « Հրամանքդ լսած կըլլաս ինչ խառնափնդոր բաներ հան-

դիպեցան առանց պատկին պատճառաբը. ա-
նանկ չիսթճուԹիւններէ՝ որ ինչուան հիմայ ալ
կը քշէին, ինչպէս հրամանքդ ալ լմացար՝ առ
աղջկան այնչափ բան քաշելէն ետքը՝ գրեԹէ
հրաչքով հոս գառնալէն: Իսկ աղուն գլխէն
ալ շատ բաներ անցան, հիմայ ուր ըլլալն ալ
չիգիացուիր »: —

« Իմ հարցուցածս առ չէ: Իրաւ է որ գեռ
առ ամէն բաները չիպատահած՝ չես ուզած զի-
բենք պատկել, օրն ալ առաջուց որոշած ըլլա-
լով. ասոր պատճառը կուզեմ գիտնալ »: —

« Ի՞նչ ըսեմ, իրաւցընէ... բայց Թէ որ գիտ
նայիր հրամանքդ... ինչ հրամաններ ... ինչ
առակալ սպառնալիքներ ուշնեցայ չիխօսելու »...
Եւ առանց կատարելու զնօսա՝ լռեցաւ, որպէսԹէ
պատկառանօք առլովնամ իմանալ՝ գի չէր պատ
աւելի ինչ հետաքրքրել:

Բայց Կարդինալն լուրջ և ծանր գիմաք և ձայ-
նիւ, ըսաւ ոչ իբրուճն սովորուԹեան, ասէ.

« Ինու եպիսկոպոսդ է հարցընողը, իր պար-
տուցը ու քու արդարացուցմանդ համար կու-
զէ իմանալ՝ որ ինչ պատճառաւ քու պարտքիդ
գէմ առանկ կարգէ գուրս ձամբայ բաներ
ես »: —

Յայնժամ տէր Ալոնսիոյ ամփոփեալ կըծ-
կեալ փոքրկացեալ, ասէ.

« Գերապայծառ տէր, ըսել չուզէլս... այս
ինչն ինծի երկաւ որ առ պուճուկ ու հինցած
բաներըը պէտք չէ խառնել, ձայն ալ չըլլուե-
լուն համար: Բայց... առ ալ կըսեմ որ... հրա-
մանքդ ալ չես ուզեր որ խեղճ ժողովրգապետ

մը ճառնուի. ինչու որ՝ հրամանքդ առն տեղ
չես կրնար ըլլալ, ես հոս վառնգի մէջ կը ձեամ:
Բայց որովհետև կը հրամայես, առն բան կը-
սեմ »: —

« Հա, ըսէ, իմ ուզածս ուրիշ բան չէ, բայց
միայն քու արդարանալդ »: —

Յայնժամ տէր Ալոնսիոյ պատմեաց զաղէ-
տալի պատմուԹիւնն. այլ լռեայ զանուշն կա-
րևոր. ասելով ևԹէ՝ ՀՀ իշխան մը, ի նեղ ան-
կեալ և խոհեմուԹիւն համարեալ զգոյշ զայն
զգուշուԹիւն: Եւ ի լռել նորա եհարց Կար-
դինալն. « Ուրիշ պատճառ ալ չունեցա՞ր »...

Պատասխանի եառ տէր Ալոնսիոյ. « Կար-
ծեմ չիկրցայ աղեկ բացատրել, մահ սպառնա-
լով արդելք եկաւ ինծի ան պատկը չընելու »: —

« Ամէնէն բաւական էր քու անհրաժեշտ
պարտքիդ եառ կենալու »: —

« Ես միշտ չանացեր եմ իմ պարտքս ընելու,
հանգիստս ալ չիխնայելով. բայց երբոր մահ
կելլէ գիմացս »...

Յայնժամ Կարդինալն ծանրագոյն և եղա-
նակաւ ասէ. « Երբոր եկեղեցին ժողովրգապե-
տական պաշտօնը տուաւ քեզի, երբ խաւորեց
քու կենացդ. ըսաւ քեզի՝ որ քու պաշտօնդ
ազատ պիտոր ըլլար ամէն գժուարուԹենէ,
ամէն վառնգէ. ըսաւ քեզի՝ որ վառնգ մը գի-
մացդ որ ելլէ, պարտքիդ ազատ ըլլաս: Անոր
հակառակը՝ չըսաւ քեզի յայտնապէս, որ ըզ-
քեզ գառան մը պէս գայլերուն գիմացը կը
խրկէր. չէ՞ր գիտեր որ բռնաւորներ կան աշ-
խարհիս վրայ, որոնք չեն ուզեր որ քեզի տրա-

մայրաածը ընես։ Ֆրխատոս տէրն մեր մեզի խօս-
քով ու գործքով օրինակ էնատուաւ, ու իւրեն
պէս մենք ալ հովիւ էնինք կոչուիր. կը կարծես
որ ինքը երկինքէն առ պայմանով ինջաւ իր
պաշտօնը ընելու, որ կեանքը վտանգի չիդնէ։
Կը կարծե՞ս որ սուրբ եկեղեցին զմեզ կը ձեռ-
նադրէ, կօծէ, քահանայ կընէ, որ քանի մը
օրուան կեանքերնիս երկինցընելու համար՝ մեր
պարտքերը ոտքի տակ առնենք։ Աչխարքս ա-
սանկ ալ սորվեցընելու որ ըլլար, կրնայինք առ
վարդապետութիւնը ընդունել. աչխարքն ալիր
օրէնքները ունի, որոնք բարին ու չարը՝ աղէկն
ու գեշը կորոշեն. ինքն ալ իր Աւետարանը ու-
նի, կենաց սէրը բաւական պատճառ չնսեպեր
չարութիւն ընելու, հնազանդութիւն կը պա-
հանջէ. իսկ մենք որ եկեղեցւոյ զաւկըներ պի-
տոր ըլլանք, ու սուրբ Աւետարանին խոստա-
ցած յաւիտենական վարձքը ուրիշներուն պի-
տոր քարոզենք... Ի՞նչ կը դառնար եկեղեցին,
թէ որ առ քու լեզուդ բունէին ամէն քու պաշ-
տօնակիցներդ ալ, ո՛վ կընդունէր զինքը, թէ որ
առ վարդապետութիւնը քարոզէին»։

Տէր Ապտոխոյ կայր զլխակորեալ. միաբ նորա
՚ի մէջ պատճառաբանութեանցս այսոցիկ էին,
որպէս հաւ ՚ի մտիկս անդեզ ամբարձեալ ՚ի
վեր ՚ի գաւառ անծանօթ, յօդս՝ ընդ որ էէր
երբէք թռչածեալ։ Խորհեցաւ զի պարտ էր ինչ
ասլ պատասխանի, և ասէ.

«Գերապայծառ տէր, սխալէր եմ. բայց
կեանքը ոտքի տակ առնելու համար՝ չեմ գիտեր
ինչ ըսեմ. երբոր գործքերնիս անանկներու

հետ է, որ ձեռքերնին զսրութիւն ունին, ու
պատճառ չեն ուզեր հասկընալ, արհութիւն
ընելով ալ՝ չեմ գիտեր ինչ կը վատորհուի. զո-
րութիւնը անանկ իշխան մըն է, որուն չկրնար
մարդ ոչ յաղթել, և ոչ հետը իրաւախոհ ըլ-
լալ»։—

Կարդինալն ասէ. «Չե՞ս գիտեր որ մեր յաղ-
թութիւնը արդարութեան համար հալածուիլն
է. ուրեմն ինչ կը քարոզես, ինչ կը սորվեցը-
նես, ինչո՞վ կը մխիթարես խեղճերը։ Ո՛վ կը
պահանջէ քեզմէն՝ որ ուժի դէմ ուժով կը-
ռուիս ու յաղթես. ապահով եղիր՝ որ քեզի օր
մը հարցընող պիտոր չըլլայ, թէ կրցա՞ր մեծերը
իրենց ջափին մէջ կեցընել. աս բանիս ոչ հրա-
ման տուող եղած է քեզի, և ոչ կարողութիւն.
այլ պիտոր հարցուի քեզի՝ որ ըրի՞ր ինչ որ
ձեռքէդ կուգար քու պարտքդ ընելու, չխնա-
նալով անոնցմէ ալ՝ որ կը չանդգնին դէմ կե-
նալու»։

Բայց տակաւին տէր Ապտոխոյ քրմիջէր
չանձին. «Զարմանալի են աս սուրբերը. ըսա-
ծին պայացութիւնը՝ սլխմելու որ ըլլաս՝ աս
կէտն որ, խեղճ ժողովրդապետի մը կեանքին
վեր դնելու է երկու նշանածներուն իրար սի-
րելը»։ Եւ ցանկայր զի անդ առնուին վախճան
բանիք կարգինալին, այլ սեսաներ զի նա չամե-
նայն հանդիսաս խօսից կայր ՚ի լուր պատաս-
խանւոյ, հարկ էր զմեղանս չանձն առնուլ,
համ զանձն արդարացուցանել, և ասէ.

«Գերապայծառ տէր, կը խոստովանիմ որ
սխալեր եմ... բայց սիրա չունողին սիրա չե-
որուիր»։—

« Կրնայի ըսել քեզի՝ որ ինչո՞ւ աս պաշտօնը յանձն առիր, որն որ վրադ պարտք կը դնէ շա-
բունակ կռուելու աշխարհիս մոլութեանցը դէմ.
բայց աւելի աս կըսեմ քեզի. ինչ կերպով ալ որ
գանուիս ես աս պաշտօնին մէջ, ու գիտես որ
սիրտ ընել պէտք է քեզի պարտքերդ կատա-
րելու, ինչո՞ւ չես խնդրեր Աստուծմէ՝ որ կրնայ
տալ քեզի: Կը կարծեմ որ այնչափ բիւրաւոր
մարդիկ բնական կերպով ուշնեցան աս
արիւնթիւնը, որով երեսնց կեանքը ոտքի տակ
առնին, այնչափ կարիճներ՝ որ նոր սկսեր էին ի-
րենց կենացը համը առնել, այնչափ ծերեր՝ ո-
րոնց ծանր էր երեսնց մահը մտածելնին, այնչափ
օրիորդներ, այնչափ հարսեր, այնչափ մայրեր,
ամենքն ալ սիրտ ըրին ուր որ հարկաւոր էր,
վստահ ըլլալով որ կուտայ երեսնց Աստուած
արիւնթիւն. իսկ դուն որ կը ճանչնաս տկա-
րութիւնդ քու պարտքդ կատարելու, ինչո՞ւ
չխնդրես Աստուծմէ արիւնթիւն,
ու պատրաստու լ աս դժար դիպուածներուն՝
որոնց մէջը կրնայիր հիմա, ու ինկար ալ երբեք:
Ա՛խ, թէ որ այնչափ տարի քու հովուական
պաշտօնիդ մէջ սիրած ըլլայիր քու ոչխար-
ներդ, (ինչպէս ալ կրնայիր ընծրել), թէ որ
անոնք եղած ըլլային քու հոգի ու ուրախու-
թիւնդ, արիւնթիւն չէր պակսեր քեզի՝ պէտք
եղած աստիճանը, վասն զի սէրը վախ չիգիտեր.
Թէ որ սիրէիր աս քեզի յանձնուած հոգինե-
րը՝ որ քու զաւակներդ էին, երբոր տեսար ա-
նոնցմէ երկուքը քեզի հետ վտանգի մէջ ին-
կած, ինչպէս որ սերը քու անձիդ վրայ դողալ

տուաւ քեզի, անանկ ալ անոնց վրայ դողալ
կուտար. յաւերժար քու վրադ, վախցար քու
տկարութենէդ. իսկ աւելի ազնուական սէրն
ու վախը՝ որն որ պէտք էր ունենայիր զաւակը-
ներուդ վրայ՝ հարկաւ մտածեցիր, հարկաւ
սիրտդ տակնուվրայ եղաւ, հարկաւ ջքեզ յոր-
դորեց ու ստիպեց ձեռքէդ եկածը ընելու՝ որ
զերեսնք խաչըսես այն մեբձաւոր վտանգէն. ու-
րեմն այն սէրն ու վախը ինչ ընել տուաւ քե-
զի անոնց համար, ինչ ըրիր զերեսնք վտանգէ
խաչըսելու համար »: Եւ լռեաց, ձեռալով ան-
դրէն պատասխանուոյ:

ԳԼՈՒԽ ԻԶ.

Ա՛ռ այլ հարցուածս Կարգինալին քօղաբ֊
կեալ՝ հնարաւորէր ինչ պատասխանի տէր Ա֊
պտնիոյ. այլ՝ի հոլանել նորա զինդիրն, եկաց
ափ՝ի բերան: Ոչ ժխտեմ, զի և ես՝ որ մատեան
առաջի, գրիչ՝ի ձեռին, ընդ եղանակ բանիցս
լեթ և ընդ երկիւղ սոգտանաց ընթեռնլեացն
Ճգնիմ, զգամ ինչ գժկամակութիւն յառաջ
ածելոյ գոյզն ինչ աչխատութեամբ զգեղեցիկ
պատուէրս արիութեան, զգործունեայ եղ֊
բայրսիրութեան, և զբոլորանուէր փոխանա֊
կութեան անձին՝ի վերայ այլոց. այլ ածեալ
զմտաս, զի որ պատուիրէրն զայնոսիկ՝ կատա֊
րեր և գործով, քաջալերիմ յառաջ խաղալ
համարձակ:

Ցաւել Կարգինալն. « Զնս պատասխաներ֊
ո՛հ, թէ որ ըրած ըլլայիր ինչ որ եղբայրսիրու֊

Թիւնը՝ ինչ որ քու պարտքդ կը պահանջէր, հեռւանքը ինչ ալ որ ըլլար, կրնայիր պատասխան տալ: Ուրեմն դուն ալ կը տեսնաս ըրածդ, որ անիրաւութեան տեղիք տալով հոգդ չէ եղեր պարտքդ կատարելու: Ամեն կերպով հնազանդեր ես իրեն. քեզի միայն երկչեր է, իր բաղձանքը յայտնելու. ուզեր է պահպանիլ անկէ՝ որն որ կրնար իրեն դէմ կենալ: Էհ ուզեր որ ձանձրնուի, ուզեր է որ ծածուկ մնայ, որպէս զի առեն ունենայ պատրաստելու իր որոգայթն ու բռնութիւնը: Հրամմեր է քեզի՝ պարտքիդ դէմ ընել, առանց ուրիշի խմացընելու. դուն ալ պարտքիդ դէմ ըրեր ու լռեր ես: Հիմայ կը հարցընեմ քեզի. այսչափ միայն եր ըրածդ, պատճառանքներ ալ չեբերիր պահը չընկերուդ՝ որպէս զի բուն պատճառը չկարծեն. պատասխան տուր »: Եւ դարձեալ ղկայ հառ վայրկ մի, և մնայր պատասխանուդ:

Աստ 'ի մոմ տէր Ապոնտիոյ. « Շատախօս կինիկները առ ալ ականջը դրեր են ». և ոչ տայր նշան պատասխանելոյ:

Ցառել Կարգինալն. « Իրաւ է որ չէիր ծած բառ ներ զուրցեր ես խեղճերուն՝ եղածը ծածկելու համար, որ անօրէնութիւնը՝ իր ուզածն ալ ան ըլլալով՝ մուխի մէջ մնայ: . . Ուրեմն պէտք կըլլայ որ հաւատամ, ուրեմն ուրիշ բան չկայ՝ բայց՝ կնծի ալ քեզի հետ ամբչնալ. տես ուր հասուցեր է զքեզ քանի մը օրուան կեանց վատնդէն վախը, որն որ պատճառ կը բերէր զքեզ արդարացընելու համար: Տես ուր հասուցեր է զքեզ... ուրացիր առ խօսքը, Թէ

որ անիրաւ է, բայց խնարհէ, Թէ որ իրաւ է... հասուցեր է զքեզ ինչուան խաբելու խեղճերը, ու քու զաւկիներուդ սուտ զուրցելու »:

Իսկ տէր Ապոնտիոյ ասէ 'ի մոմ. « Նայէ բանը ուր հասաւ »: Եւ յուշ ածեալ զդուքն Կարգինալին առ իշխանն անանուն, ասէ անձայն. « Ան անզգամ սատանային ձիրը կնայ, դրկել զինքը. ու կէս սուտի մը համար՝ որ մահուընէ խոլըսելու պատճառաւ ըսի, այսչափ կանչըռատել վրաս: Բայց ինչ պիտոր ընես, մծծաւոր են, միշտ իրենցն է իրաւունքը. իմ աստղս է, ամենքը ինծի դէմ պիտոր ըլլան, սուրբերն ալ »: Եւ ասէ 'ի ձայն. « Սխալեր եմ, սխալիլս կը ձանչնամ. բայց անանկ վատնդաւոր առեն ինչ կրնայի ընել »: —

« Ինչ կրնայիր, չըսի՞ քեզի, պէտք էր ալ որ ըսէի: Կրնայիր սիրել զաւկիներդ, սիրել ու աղօթք ընել. ան առեն կիմանայիր՝ որ անօրէնութիւնը կրնայ տպառնալ, բայց չկրնար հրամմել: Կրնայիր կարգել զանոնք՝ որ Աստուած կուղէր միայն նել, ու մարդը կուղէր բաժնել: Կրնայիր քու պարտքդ ընել խեղճերուն՝ որոնք իրաւունք ունեին քեզմէ պահանջելու, ու հեռւանքը Աստուծոյ յանձնել. ինքը կը հոգար՝ Թէ որ դուն իր ձամբան բռնած ըլլայիր. իսկ որովհետև ուրիշ ձամբայ բռնեցիր, ամեն հեռւանք քու վրադ ծանրացաւ, ու ինչ հեռւանք: Կը կարծես որ մարդկային ձար մըն ալ ամենևին չկայ. կը կարծես որ փախչելու ձամբաները ամենն ալ գոց էին,

Թէ որ քիչ մը ջրոտ դիպ նայած ըլլայիր, քիչ մը մոռածած՝ քիչ մը փնտռռած ըլլայիր։ Ան խեղճերը պատած որ ըլլայիր։ ինքիրենուն կը գտնային փախչելու ճամբան. իրենք առաջուց պատրաստուած էին ան բռնաւորին ձեռքէն խալըսելու, առաջուց որոշած էին փախչելու տեղերնին։ Թողունք անիկայ. չմոռածեցիր որ մեծաւոր ունիս, որ չէր կրնար յանդիմանել զքեզ՝ պարտքդ չընելուդ համար, թէ որ ինքը չօգնէր քեզի որ կարենայիր պարտքդ ընելու. ինչո՞ւ չմացուցիր եպիսկոպոսիդ տա անօրէն բռնութիւնը, որ քու պաշտօնիդ տրգելք կը գնէր »։ —

« Փերփէթուային տուած խրատն է ». ասէ 'ի մեր աեր Ալոնսիոյ։ Եւ 'ի խօսել Կարդինալին՝ յանդիման աչաց նորա նկարեալ կային սրիկայքն, և Ոսոլիկ կէնգանի և քալառոզը, որ կարէր յաւուր միում դառնալ փառօք և յաղթանակաւ զայրագին։ Եւ թէպէտ 'ի սաստ ել Կարդինալին, յերեսաց և 'ի խօսից նորա կայր խռովեալ և զահի հարեալ, սակայն երկիւղն այն ոչ ընկճէր զնա, և ոչ տայր նմա դադարել յաքացելոյ մտաք ընդդէմ բանից Կարդինալին. խորհէր միշտ՝ զի չէին նորա ոչ հրաշք, ոչ սուտք, և ոչ սրիկայք։

Յաւել Կարդինալն, « Ի՞նչպէս չմոռածեցիր, որ ան անմեղներուն ուրիշ տեղ ալ կը գտնուէր, իրենց դէմ պատրաստուած որոգայթներէն ազատելնելու. ես զերեկը կընդունեի ու կապահովէի, թէ որ ինծի յանձնած ըլլայիր զիրենք, թէ որ անօգնական խեղճերը՝ եպիսկոպոսին յանձնէիր երբէք իրեն զաւկըները, երբէք պատուական մասը՝ չըսեմ իր պաշտօնին՝ հապա իր գանձուցը։ Իսկ քեզի համար գիշեր ցորեկ կաշխատէի, չէի հանգչեր, ինչուան որ ապահով չըլլայի՝ որ մէկ մազիդ ալ գպչող մը չըլլար, ինչուան որ կերպով ու տեղը չկանգնայի քու կեանքդ պահելու։ Իսկ ան յանդուգն իշխանը կը կարծէիս որ չէր սըմքեր իր յանգգնութենէն, երբոր իմանար որ իր որոգայթը դուրս եկեր է, իմ ականջս հասեր է, ու պատրաստ կեցեր եմ ամեն կերպով զքեզ պաշտպանելու։ Չէիս գիտեր որ մարդս գրեթէ միշտ կրցածէն աւելի կը սպառնայ. չէիս գիտեր որ անօրէնութիւնը իր զօրութեանը վրայ միայն չէ որ կը վստահի, այլ նաև ուրիշի վախին ու դիւրահաւանութեանը վրայ »։ —

« Ա՛ս ալ նման փերփէթուային խօսքն է », ասէր 'ի մեր աեր Ալոնսիոյ, առանց զմոռաածելոյ՝ զի համաձայնութիւն բանից աղախնոյն ընդ Կարդինալին զերայ՝ զոր կարէր և պարտէրն առնել, առաւել դատապարտութիւն էր անձին։

« Իսկ դուն », յաւել Կարդինալն, « քու կենացդ վտանգէն ուրիշ բան չմտեսար, ու չուզեցիր տեսնալ. անոր համար ինչ զարմանք որ ուրիշ ամեն բան ոտքի տակ առիր »։

Յայնժամ յանդգնասից վազեաց ընդ չորթունս տէր Ալոնսեայ. « Ուրիշ բան չմտեսայ, վասն զի սրիկաներուն երեսը կը տեսնէի, ու սպառնալիքնին կը լսէի. հրամանքդ աղէկ կը խօսիս, բայց խեղճ ժողովրդապետի մը տեղ

պէտք էր ըլլայիր, ու ան վտանգին մէջը գըտ-
նուէիր»: Բայց ընդ ասելն զայս՝ եհաց ղէ-
ղուն, ծանեաւ զի զառանցոյց ընա զայրոյթ,
և ասէ՝ի մոխ. «Հիմայ կարկուտները կը սկը-
սին թափիլ»: Այլ՝ի վեր առեալ զաչս՝ զար-
մացաւ՝ի տեսանել զդէմն Կարդինալին վո-
խեալ յիշխանական սաստէ անտի՝ի ծանրու-
թիւն գորովական մտայոյզ, և յապուշ հարաւ
ընդ խոնարհութեան բանս նորա, զի ասէր.
«Իրաւցընէ սոսկալի է մեծաւորներուն վիճա-
կը. պարտական ենք դատելու խրատելու յան-
դիմանելու ուրիշները այն բանէրուն մէջը՝ որ
Աստուած գիտէ, թէ որ մենք ալ նոյն վտանգին
մէջ նոյնը չէ՞նք ըներ: Բայց վայ էր ինձի, թէ
որ իմ պակասութիւններս կանոն ընէի ուրիշնե-
րուն, թէ որ անոնք ըլլային իմ սորվեցընելու
կանոնս. իրաւ է որ սորվեցուցածիս օրինակն
ալ գործով տալու պարտական եմ, պէտք չէ
այն օրինաց վարդապետներուն պէս ըլլամ, որ
ծանր բեռներ կը կապեն ուրիշներուն համար,
ու իրենք մատով ալ չեն դպչիր անոնց: Ուրեմն
սիրելի որդի ու եղբայր, որովհետև մեծաւոր-
ներուն սխալմունքը շատ անգամ աւելի ծա-
նօթ է ուրիշներուն քան թէ իրենց, թէ որ դի-
տես որ վախի կամ նկատման համար պակսեր
եմ պարտքէս, ըսէ ինձի համարձակ, ուղղէ զիս.
որպէս զի բարի օրինակ որ չեմ տուեր՝ գոնէ
պակսութիւնս խոստովանիմ: Ըսէ յայտնի իմ
պակսութիւններս, որպէս զի խօսքերս աւե-
լի զօրաւոր ըլլան. ան խօսքերը իմս չեն, այլ
Աստուծոյ՝ որ քեզի ալ, ինձի ալ, կրնայ զօ-

րութիւն տալ՝ սորվեցուցածիդ մէնք ալ ընե-
լու»:

Իսկ տէր Ապոնտիոյ ասէր՝ի մոխ. «Ի՜նչ
սուրբ մարդ, բայց դժար բան. կուզէ որ իր
վրայ ալ փնտռուենք, քննենք, դատենք ու պակ-
սութիւններ գտնենք»: Եւ ասէ՝ի ձայն. «Կա-
տակ կընես, Գերապայծառ տէր, ոչ չիգիտեր
հրամանքիդ արիւնթիւնը, սրտի վախ ամենևին
չունենալդ». և յաւել անձայն. «Ինչուան չա-
փին ալ աւելի»: —

Կարդինալն ասէ. «Ես քեզմէ գովեստ չու-
զեցի. կը գոռամ գովութիւն լսելէն. Աստուած
գիտէ իմ պակսութիւններս, բայց իմ գիտ-
ցածս ալ հերիք է զիս ամչցընելու. կուզէի
միայն որ մէկտեղ իր առջին ամբչնայինք, ու
մէկտեղ ալ իրեն ապաւինէինք. զբեզ սիրելէս՝
կուզէի որ խմանայիր ուրշէ տարբեր է լեզուդ
Աստուծոյ օրէնքներէն, որոնք կը քարոզես,
ու անոնց վրայ պիտոր դատուես»: —

Տէր Ապոնտիոյ ասէ. «Ամեն բան իմ վրաս
կը ծանրանայ. բայց որոնք որ զիս հրամանքիդ
ամբաստանեցին, չըսի՞ն ալ որ ինչ խաբեու-
թեամբ առնես մտան, յանկարծակիի բերին
զիս, որպէս զի ապօրինաւոր կերպով պսակեմ
զիրենք»: —

«Ըսին, սիրելի. բայց սուիկայ է որ սիրտս կը
կոտրէ ու կը վշտանամ, որ կուզես արդարա-
յընել զքեզ, ու կը կարծես՝ որ զիրենք յանցա-
ւոր ընելով դուն կարդարանաս. զիրենք ամ-
բաստանելու նիւթ կընես ան բանն որ պէտք
էր քեզի նիւթ ըլլար խոստովանութեան: Ո՛վ

ձգեց ղերենք, չըսեմ առ հարկին մէջ՝ հապա առ փորձութեանը մէջ, որ առանկ փորձ մը ըրին. առանկ անկարգ ու ապօրինաւոր ձամբայ կը փնտռէին իրենք, թէ որ օրինաւոր ձամբան դացուած չըլլար առջևնին. մոքերնին կանցնէր իրենց հովուին առանկ խաբէութիւն ընել, թէ որ անիկայ ընդունած ըլլար զիրենք, գրկէր զիրենք, օգնէր ու խորհուրդ տար իրենց. կը մտածէին յանկարծակիի բերել զինքը, թէ որ պահպըտած չըլլար: Իսկ դուն յանցանք կը սեպես իրենց ու կը բարկանաս, որ այնչափ վիշտ քաշէնին եսքը, մանաւանդ թէ քաշելու առեներնին, խօսք մը ըսեր են սրտերնին բանալու համար՝ իրենց ու քու մեծաւորդ: Անիրաւութիւն կրողին առեան գիմելը, վիշտ քաշողին բողոք ընելը զարմանք չէ որ առելի ըլլայ աշխըրքիս. աշխարքիս առանկ ըլլալը գիտենք: Բայց ինչ օգուտ կըլլար քեզի անոնց լուելին. կը կարծես որ քեզի առելի շահաւոր կըլլար, թէ որ իրենց գաղը ամբողջ Աստուծոյ առեա՝ նը ելլէր: Պէտք չէ որ ուրիշ շատ պատճառներն ի զատ՝ ասոնք պատճառաւ ալ ղերենք առելի սիրես, որ քեզի առիթ տուին եպիսկոպոսիդ անկեղծ ձայնը լսելու, որ քեզի առիթ եղան ճանչնալու ու կարենալու կէս մը հատուցանել քու մեծ պարտքդ՝ որ ունիս իրենց: Ո՛հ թէ որ դքեզ գրգռած նախատած առնջած ալ ըլլային, այսու ամենայնիւ կրնայի, ու պարտական էի ըսելու քեզի որ անոր համար սիրես ղերենք. բայց հիմայ պարտական ես ղերենք սիրելու, վասն զի վտանգած ու գէռ վտանգ մէջ

են, վասն զի զաւկընեբդ են, վասն զի խելջ ու անօգնական են, վասն զի Աստուածմէ Թողուած, Թիւն խնդրելու կարօտ ես, ու խնդիրքդ ընդունելու համար՝ մտածէ որ ծրչափ զօրաւոր է իրենց աղօթքը »:

Լուռ եւեթ կայր սէր Աստնաիոյ. այլ լուռ Թիւնն այն ոչ ևս էր բռնադբօս և անժոյժ. լուռ կայր որպէս զի որ բազում ինչ ունիցի խորհել քան ասել: Խնդք զորս լսէր՝ էին հետևուԹիւնք անակնկալք, և ձեռնարկութիւնք նոբանոբք՝ ի նոյն վարդապետութենէ՝ որ՝ ի միտս նորա կայր անժխտելի: Զարիք այլոց, որոց մըտածութեամբ փարատէր զերկիւղ իւրոյն, նոր ևս առնէին՝ ի նա աղդեցութիւն. և Թէպէտ չզդայր բովանդակ զաւրչնա՝ զորս կամէր Կարգինալն ներգործել՝ ի նմա, սակայն չկայր անզդայ, զդայր ահաձուԹիւն ևս ընդ ինքն, կարեկցութիւն ընդ այլը, և գութ ևս խառն ընդ ամենայն: Էր նա, եԹէ օրէն եցէ առնել զայս համեմատութիւն, որպէս պատրոյգ ձրագի խոնաբ՝ որ մատուցեալ՝ ի ջահ բոցավառ, ծխէ զառաջինն, կայծէ, ձայԹէ, մերժէ զբոց. այլ չեռոյ ապա վառի և այրի որպէս կարէ: ԵԹէ ոչ Յոտրիկ զիտաց նորա գրաւէր, առնոյր նա արդեօք յանձն զՔեզանն, և արտասուէր, սակայն յուզեցաւ սիրտ նորա որչափ բաւական էր առ՝ ի չայտ առնել զարգասիս բանից Կարգինալին:

Յաւել Կարգինալն. « Պատանին իր երկրէն փախստեայ, աղչիկը իր տնէն հեռանալու վտայ է, երկուքն ալ ծանր պատճառներ ունին իրար-

մէ հեռու կենալու, հաւանականութիւն ալ
չկայ՝ երբեք հոս միանալնուն, թէ որ Աստուած
չէ որոշեր միանալնին: Իրաւ է որ հիմայ երկնք
քեզի կարօտութիւն մը չունին, իրաւ է որ
դուն ալ հիմայ առիթ մը չունիս երկնց բարիք
ընելու, և ոչ մէր կարճ միտքը կրնայ ապագա-
յին հասնիլ. բայց Աստուած ողորմած է, ոմ
գիտէ ինչ պատրաստած է երկնց. դուն առիթը
մի փախցըներ, եաւէ եղիր, ապատ, ինդրէ
Աստուծմէ որ յայտնէ »:

Պատասխանի եա յայնժամ առը Ալպնափոյ
նուաղ ձայնիւ, այլ'ի սրտէ.

« Անհոգ չեմ ըլլար, ամեն կերպով եաւէ
կը լլամ »: —

« Հա, սիրելի », ասէ Կարգինալն, և խլնա-
նաբար լեն կարեկցութեամբ'ի վերայ ածէ.

« Աստուած գիտէ սիրտս որ ինչպէս կուզէի
քեզի հետ ուրիշ բաներու վրայ խօսիլ. երբ
կուքնուս կեանքն ալ առաջ գնացած է, ծանր
էր ինծի քու ծերութիւնդ տրամեցընել. չատ
աւելի կը բաղձայի որ մկիսեզ զաւկներնուս
վրայ ուրախանայինք, երբոր մեներեկնիք քա-
շած աշխատանքներնուս վրայ՝ անդիի բարեաց
յուսովը, որոնց այսչափ մօտեցեր ենք: Աս-
տուած տայ որ ան խօսքերս, որոնք պատրաստ
էի ըսելու, օգտակար ըլլան քեզի ալ՝ ինծի ալ.
Քանա որ օր մը պատասխանատու չըլլամ Ղեզ
քու պաշտօնիդ մէջ Թող տալուս համար, ա-
սանկ Թշուառաբար պահպանիդ եղբը: Ան-
կեն չկորսընցընենք, կէս գիշերը մօտ է, փեսան
մտնալու վրայ է, կանխեղնիս վառ պահենք.

նուիրենք Աստուծոյ մեր ողորմելի սիրտը, աշ-
խըրհս բաներէն պարպելով՝ որպէս զի Աս-
տուած իր սիրովը լեցընէ, իր սիրուն՝ որ ան-
ցածին տեղը կը բռնէ, ապագան ալ կապահովէ.
կը վախէ ու կը վստահի, կուլայ ու կուբախա-
նայ խմաստութեամբ, ու ամեն բանի մէջ մեզի
հարկաւոր եղած առաքինութիւնը կը սորվե-
ցընէ »:

Զայս ասացեալ՝ չարժեցաւ'ի դնալ, և առը
Ալպնափոյ զհետ:

Աստանօր պատմիչն անանուն ազգ առնէ, զի
ոչ այս միայն եղև Կարգինալին ընդ ժողովրդա-
պետին խօսակցութիւն, և ոչ Լուչիա եւեթ
պատճառք խօսից նոցա. այլ ինքն զայս միայն
պատմէ, զի մի արտաքոյ առաջարկութեանն
դեգերեսցի: Վասն որոյ և ոչ զայլ երևելի իրս
յաւելու, զբանս և զգործս Կարգինալին լսե-
ցեալս այցելութեան իւրոյ, զառաւաւտնուա-
Թիւնս նորա, հաշտեցուցանել զԹշնամու-
Թիւնս, չնջուցանել զվաղեմի առելութիւնս
միմեանց և ընտանեաց, գիւղից և քաղաքաց, և
ածել'ի զգօնութիւն զԲնաչս ամանս կամ զբըն-
նաւորս, և այլ այսպիսի ազէտք՝ որ առաւել
կամ նուազ էին ամենայն ուրեք'ի Թեմին, ուր
ուրեք և այրն գերազանցեալ լինէանէր:

Յարէ ասա՝ զի'ի վաղիւ անդր առաւօտուն էին
ակնկին Պրաքսեդէս ըստ ժամադրութեանն,
առնուլ զԼուչիա և մեծարել զԿարգինալն:
Գովէաց Կարգինալն զաղջկին, և չերմագոյնս
յանձն արար նմա: Ակնարկ է ասել՝ քանի ողջ
բուէ և արտասուօք բաժանեցաւ Լուչիա'ի

մօրէն և 'ի տանէ. զայս երկրորդ անգամ տայր նա ողջոյն հրաժարական գերզ իւրում, կրկին դառնութեամբ զոր է զգալ 'ի մեկնելն 'ի աեղւոջէ, որ միայն իւրէ սիրելի լեալ ուժք, և մեկնել անտի անդարձ: Բայց հրաժարել նորա 'ի մօրէն՝ ոչ էր վերջին. զի Պրաքսեդէս ասէր կալ տակաւին զաւուրս ինչ յամարատանին՝ որ ոչ կարի հեռի էր 'ի տանէն. և Ագնէս խոստա՜ նայր գտանելի՝ գնալ նմա յայց, տեսանել և տալ միմեանց վերջալի ևս բարեաւ մնաս:

Պատրաստէր մեկնել Կարթինայն 'ի լուսին այցելութեանցն. այլ ինդրեաց խօսել ընդ նմա Ժողովրդապետն՝ ընդ որով կայր ամրոց անանուն իշխանին, բերելով ծրար մի հանդերձ գրով՝ յորում խնդրէր իշխանն ընդունելի առնել մօր աղջկանն հարիւր սկուտս ոսկիս, որ էին 'ի ծրարին, յօժիա դատելն և 'ի պէտս՝ որ կարևորագոյն թուէսցին նոցա: Աղաչէր և ասել նոցա, զի եթէ երբէք լինին նոցա պէտք օգնականութեան իւրոյ, դիտէր աղջկին, և դիտէր իսկ յոյժ առատապէսն զբնակութիւն իւր, և ինքն համարէր իւր քան զամենայն ինչ առաւել ցանկալի լինել նոցա ձեռնտու: Կոչեաց Կարթինայն նոյն հետայն առ ինքն զԱգնէս, և պատմեաց նմա զբանս իշխանին՝ զորս նա լուաւ ինդութեամբ և զարմացմամբ, և մատոյց նմա զծրարն և նա ընկալաւ զայն, ասելով ևԵթ. « Աստուած փո՜ խարինը տայ իրեն հաղարապատիկ. կը ինդրեմ հրամանդդ ալ ընոր ընես՝ իմացընես իրեն մեր անչափ շնորհակալութիւնը: Բայց երանի թէ

չիմացուի աս բանը, վասն զի աս երկիրը:... Նէրէ լսելուս, վասն զի հրամանքիդ մեծու՜ թիւնը տասնիկ բաներու վրայ խօսք ալ ընելու աաեն չունի... բայց միաքս կրցայ արդեօք ի՜ մացընել»:

Այսպէս, և չոգաւ լսիկ մնջիկ 'ի տուն, փակե՜ ցաւ 'ի սենեկի, եթայ զծրարն, և Թեպէտ էր իսկ կանխազգեկոյց՝ սակայն հայեր հիացմամբ յոսկիսն փայլուննս, և իւրս, և առաջի իւր կու՜ տեալս, զորոց զմէն մի ուրոյն գումն ուրեք էր տեսեալ. Թուեցաց զայնոսիկ, և ոչ սակաւ աշ՜ խատս եղև ոտնել սլսնատև 'ի բանին, զի ուռուա՜ ցեալ ընդ մէջ՝ զերծանէին յանփորձ ձեռա՜ նէն: Յետոյ ապա յաջողեցաւ կարգել զայնս ըստ կարի, և ծրարեալ 'ի կապերսիկ մի, և պատատեալ ժապաւենաւ, միաեց 'ի խշտեակ ֆիւ յարգեալ. և զորն յերեկ խորհեր և անու՜ ենէր զառաջնկոյեց: Երթեալ 'ի մահիճն՝ կայր անքուն, մտայոյզ զսկսեացն՝ զորս ընդ իւրև ունէր, և 'ի քուն եղեալ՝ երազէր զայնս: Եւ ընդ այգն վաղայարոյց լեալ փութացաւ յա՜ մարատան անդր՝ ուր էր Լուվնա: Իսկ նա, Թեպէտ և տակաւին գժկամակեր խօսել զուխ՜ ումն, սակայն հատատեալ էր 'ի մտի՝ բուռն առնել անձին, և բանալ յայնժամ մր իւրում զսիրտ իւր, 'ի խօսակցութեանն յայնմիկ՝ որ ընդհանրապէս համարելոցն էր յետին:

Այն ինչ եղև նոցա մնալ առանձինն, Ագնէս զօրացեալ ժրացեալ՝ ասէ ցդուստրն անձայն 'ի ծածուկ, որպէս Թէ էր ոք անդ՝ յորմէ Թա՜ քուցանել կամէր մեծ ինչ.

« Աղջիկ, մեծ բան մը ունիմ ըսելու քեզի »· և պատմեացնմա զամենայն։ Եւ դուստրն ասէ·

« Աստուած օրհնէ ան մարդը· հանգիստ կեանք մը կանցընես ասկէց ետքը, ուրիշն ալ բարիք կրնաս ընել »։

Մայրն ասէ· « Այո ինչ խօսք է· դիտես որ չավ բան կրնանք ընել այնչափ սովկով։ Մոկ ըրէ· ես քեզմէ ուրիշ բան չունիմ աշխրքես վռայ, քեզմէն ու Ինկոյէն· վասն զի անոր քեզի հետ խօսել սկսելէն ի վեր, իմ զաւկիս պես կը նայիմ երբեն· միայն թէ դժբախտութեան մը հանդիպած չըլլայ, վասն զի ինչուան հիմայ լուր մը չկրցաւ տալ մեզի։ Բայց կուզես որ ամեն բան ալ ձախողդ դնացած ըլլայ· յուսանք որ չէ։ Եթոակը՝ ես կը բաղձայի ոսկորնեբս մեր երկիրը թողուլ· բայց հիմայ որ դուն հոն չես կրնար կենալ այն անզգամին պատճառաւը, մոռնալով ալ միայն՝ որ անիկայ մօտ է, աւելի եղած է ինծի իմ ծնած տեղս· ձեզի հետ՝ ուր որ ըլլայ՝ կը կենամ։ Այն աւետնեն պատրաստ էի մինչև աշխրքես ծայրն ալ հետերնիդ գալու, ու միշտ ան նոյն մտքի վրայ եղած եմ· բայց առանց սոկի ինչ կրնայինք ընել։ Իսկ հիմայ, մոկ ըրէ· թէ և քիչ մը բան որ խեղճ տղան այնչափ նեղութեամբ ու խնայութեամբ մեկ դի գրեր էր՝ եկան աւերեցին տարին, բայց Աստուած անոր տեղը բախտ խրկեց մեզի· ուրեմն երբոր կերթայը գոնայ իմացընելու մեզի՝ իր ողջ առողջ ու ուր ըլլալը, կուգամ կառնեմ զքեզ Միլանէն։ Աւաջուց ինծի գժար բան մը կերևար· բայց գժբախտութիւնները մարդուս

կտրիճութիւն կուտան երբեմն։ արդէն մինչև ի Մոնցա գնացի, ճամբորդութիւն ինչ ըսել է՝ գիտես։ հետս ճարպիկ մարդ մըն ալ կառնեմ, ապգահանութենէս մեկը, ինչպես Ալէքսիսը, որ գետնի մեջ ամենէն կարգաւորեալ մարդն է, ու կուգամ քեզ առնելու· ծախքը մեր վրան։·· Իմացար »։

Այլ երբև եւս զի Լուչիա փոխանակ զուարթութեան սրտաբեկէր, և գորովէր ևեթ առանց տալոյ ցոյց ինչ ուրախութեան, ասէ· « Ի՞նչ կը մտածես, աղջիկ, ազիկ չէ՞ ըսածս »։—

« Խեղճ մարիկ », գոչեաց դուստրն՝ արկեալ զձեռն զաւարանոցաւ մօրն, և ծածկեալ զդէմն ի ծոցն մայրենի։

Հարցանէ մայրն անձկանօք· « Ի՞նչ կայ աղջիկ »։—

Պատասխանէ դուստրն, ի վեր առեալ զդէմս, արբեալով զարտասուս· « Պէտք էր առաջուց ըսած ըլլայի քեզի, բայց սիրտ չկրցայ ընել· խղճա վրաս »։—

« Ուրեմն հիմայ սիրտ ըրէ, ըսէ »։—

« Ո՛հ, ասկէց ետքը ան խեղճին հետ չեմ կրնար կարդուիլ »։—

« Ի՞նչպէս, ինչո՞ւ »։—

Յայնժամ խռնարհեալ Լուչիա զգլուխ իւր, յոգւոց հանելով, և արտասուս առանց ողբոյ՝ յաչացն ինքնագլոր՝ որպէս ոք զի արկած ինչ անձար պատմիցէ, յայտնեաց զուրխան, խնդրելով ձեռնամած թողութիւն ի մօրէն վասն ցոյն վայր լռութեանն, և աղաչէր մի ումեք յայտնել զայն, և օգնել ի պահպանութիւն ուխտին։

Յաջորդ հարաւ, կարկեալ եկաց Աքնէս. կամքը յանձնուլ ընդ լուսնթիւն նորա, այլ խորհուրդք ծանուցանք հեղձուցին զյաւսումն իւր. կամքը ասել՝ « Ի՞նչպէս ըրիր սա բանը », բայց թուէր նմա ընդդէմ երկնից գումարել. մանաւանդ զի Լուչիա յանդիման աչաց նորա զդիշերն զայն և զդատն ամպոսթիւն իւր նը. կարէր՝ և ապա զանակնկալ ազատութիւնն յետ ուխտին՝ զոր յայտնի և բացայայտ արա. րեալ էր։ Յուշ լինէին մօրն և պատիժք սուս. կալիք ուխտազանցից, զորս լուեալ էր յառաջ և պատմեալ դասերն. և յետ կալոյ միալոյ առ վայր մի որպէս անզգայեալ, ապա ասէ. « Ու. րեմն հիմայ ինչ կը մտածես »։ —

Լուչիա ասէ. « Աստուածոյ Թողուցեր եմ, և. րեն ու սուրբ Աստուածածնայ յանձներ եմ զիս. ինչուան հիմայ զիս ձեռքէ չէին թողուցին, հիմայ ալ չէն թողուր. աս միայն հիմայ Աս. տուծմէ կը խնդրեմ, աս մէկ հատիկ շնորքը հոգւոյս փրկութենէն էաքը, որ զիս նորէն քէզի դարձընէ, որ մէկտեղ ըլլանք. աս շնորքը պիտոր ընէ ինծի։ Ան որը... ան կառքին մէջ... ո՜հ, սուրբ Աստուածածնին... ան մարգիկը... ով կրնար մտածել որ զիս ան մարդուն կը տա. նէին՝ որ օր մը էաքը զիս քէզի պիտոր տար »։ —

« Բայց սա մէկէն չըսէիր ինծի, քոյ մօրդ »։ ասէ գարձեալ մայրն՝ սէր ընդ սաստ խառ. նեալ։ —

Եւ գուսաբն կրկնէ. « Նեբէ ինծ մարիկ, սիրտ չըրի... բայց ինչ օգուտ էր ալ առա. ջուց սիրտդ վշտացընելէն »։ —

« Հապա Իվնցոյին ինչ պիտոր ըսես »։ ասէ մայրն տատանելով զբլոխն։

Յոգւոց եհան Լուչիա, և ասէ. « Ո՜հ, ինչ մոռածեմ խեղճին վրայ, բայց կարծես որ չէր սահմանուած... Աստուած զմեզ կարծես որ անոր համար իրարմէ հեռացուց, ով գիտէ... բայց էհ, էհ. Աստուած զինքը վտանգէ խալը. սելու համար հեռացուց, ու աւանդ ինծի ալ զինքը երջանիկ կրնայ ընել »։

Մայրն ասէ. « Բայց թէ որ գուն զքեզ ա. սանկ ինչուան եաքը կապած չըլլայիր, ուրիշ ամեն բանին ձարը կը գտնէի ան ըսաքովդ, մի. այն թէ գժբախտութիւն մը հանդիպած չըլ. լայ իրեն »։ —

Գուսարն ասէ. « Բայց ան սաակը կուգաք, թէ որ ան գինւորը անանկ անցուցած չըլլայի. ալ Աստուած սանկ ուզեց, իր կամքը օրհ. նեալ ըլլայ »։ Եւ արտասուաք հեղձամղձուկ ա. բարին զբան նորա։

Յայն անակնկալ բան՝ եկաց Աքնէս մտայոյզ. և Լուչիա ժոյժ ուշնելով հեծեծանացն, վայ. րիկ մի յետոյ յաւելը. « Հիմայ որ եղածը եղաւ, համբերութեամբ պէտք է պարտքերնիս ընենք. խեղճ մարիկ, գուն կրնաս օգնել ինծի. նախ՝ աղօթք ընելով խեղճ աղջկանդ համար, եաքն ալ... պէտք է որ ան խեղճն ալ գիտնայ եղա. ծը. գուն մտածէ, աս շնորքն ալ ըրէ ինծի, գուն կրնաս մտածել։ Երբոր խմացուի ուր ըլ. լալը, մեկը գալը, գրել տուր իրեն... Հա անէ. կայ, քոյ աղգականդ Ալէքսիսը, որ խոհեմու. ղղրմած մարդ մըն է, միշտ ալ մեզի բարեկամ

եղած է, մկուն մկալին չկրնար. գրել տուր երեն՝ բանը ինչպէս եղած է, ուր տարին գնա, ինչ քաշէցի, վերջապէս Աստուած ասանկ ուզեց, սիրտը թող հանգարտ բռնէ, ես ամենևին ուրիշի մը չեմ կրնար ըլլալ: Բայց հնարքով պէտք է բանը երեն հասկցընել, աղեկ մըն ալ բացատրել՝ որ յայտնի խոստացայ, ուխտ ըրի: Երբոր գիտնայ որ տուրբ Աստուածածնայ ըրի խոստումնքս... ինքը միշտ Աստուածոյ վախը սրտին մէջ ունեցած է: Կը խնդրեմ ալ որ երմէ լուր մը առածիդ պէս՝ գրել տաս ինծի, իմացընես որ ողջ է, ու եաքը... էհ, ուրիշ բան գրել մի տար »:

Յուզեցան գուշտք մարն, և խոստացաւ գրաւերն առնել զամենայն ըստ ըզէից նորա:

Եւ յաւել գուստրն. « Ուրիշ բան մըն ալ կուզէի ըսել. թէ որ ան խեղճը գիս մոռցած չըլլար, տա փորձանքը գլուխը չէր իյար: Ոչ գիտե հիմայ ուր կը պանդխտի, իր կարգի գրած կեանքը տակնուվրայ ըրին, ունեցածը առին, խեղճին այնչափ խնայութեամբ մկտի գրածը, ամեն ալ գիտես ինչ... ու մենք հիմայ այսչափ տակ ունինք. ամ մարիկ, որով հետև Աստուած մեզի առ բարիքը ըրաւ, ու իրաւ ալ է որ գինքը զահկիդ պէս կը նայէիր... կէս ընենք ունեցածնիս, Աստուած մեզի չիպահեցըներ. տպահով առիթ մը գտիր, կէսը երեն խրկէ, ոնի գիտե ինչ կարօտութեան մէջ է հիմայ »:

Մայրն ասէ. « Հապա, ինչ կը կարծես. իրաւցընէ կը խրկեմ երեն. խեղճ տղայ. ինչո՞ւ

ես այսչափ ուրախ եմ ան տակը ունենալնուս: Բայց... ուրախ զուարթ հոս եկայ... Հերիք է, կը խրկեմ երեն. խեղճ Ռինցոյ. բայց ինքն ալ... ըսածս գիտեմ. իրաւ որ տաս կը մեծ բան է՝ կարօտութիւն ունեցողին. բայց անիկայ էէ մարդը գերցընողը »:

Լուռիա չնորհակալելև մարն վասն պատրաստ առատաձեռնութեանն, այնու գոհութեամբ և սիրով, որով յայտ առնէր՝ զի և զսիրտ իւր բաժանէր ընդ պատանւոյն, թելեալ առաւել քան զոր ինքն կարծէր:

Իսկ մայրն արտասուելով ասէ. « Հապա ես առանց քեզի ինչ պիտոր ընեմ, խեղճ մայր »:

Եւ գուստրն ասէ. « Հապա ես առանց քեզի! խեղճ մայրիկ, ուրիշի տուն, հոն վարը Միլան... Բայց Աստուած երկուքնուս հետ ալ է, զմեզ մէկ տեղ կը գտնէ, ուրիշ ինչ ասիկէն նորէն կը սեանուինք. ան առինը, ան կէց ալ առաջ, կը յուսամ որ ինքը ամեն բան ներկնս կարգի կը դնէ, երեն ապահովինինք: Ան զօթք կընեմ միշտ, միշտ աղօթք կընեմ տուրբ Աստուածածնայ, որ աս շնորքը ընէ մեզի. ուրիշ բան մըն ալ որ ունենայի, ան ալ կը նուիրէի երեն. բայց ինքը անանկ ողորմած է որ առանց բանի մըն ալ աս շնորքը կընէ մեզի »:

Զայսոսիկ և զայսպիսի բանս յեղյեղելով, ողբով և զմիմեանս քաջալերելով մտմտքմամբ և ապահովելով առ Աստուած, յանձնելով միմեանց և խոստանալով մի ումեք յայտնել զերսն, և բաղում արտասուաց հեղմամբ, յետ երկարագոյն նուագօք գերկս միմեանց արկա-

նելոյ, բաժանեցան մայր ՚ի դասէրէ, խոսաս-
նալով տեսանել զնրեալս՝ Թէ յոյժ անագան ՚ի
յաջորդ աշնայնի, որպէս Թէ ՚ի ձեռս նւբեանց
էր կատարել կատարումն, որպէս և սովորու-
Թիւն է առնել միշտ յայսպիսի գէպս:

Էանց ՚ի վերայ ոչ սակաւ ժամանակ, և չկա-
րէր Ագնէս գիտել ինչ զպատանւոյն, ոչ գիր
ինչ կամ լուր ՚ի նմանէ ընկալաւ, և ոչ ՚ի
գեղջն և ՚ի չորչակայս՝ ուր կարացն հարցանել՝
գիտէր ինչ ոք զնմանէ: Եւ ոչ հնոյն ևԹէ հե-
տաքննուԹիւնք էլլն ՚ի դերև, այլ և կարդի-
նալին. որոյ ոչ առ բարեճեւուԹեան ինչ խոս-
տացեալ տառապելոցն առնուլ տեղեկուԹիւն
զհէք պատանւոյն, այլ դրեալ ևս էր վաղվա-
ղակի զայնմանէ, և ՚ի դառնալն նւբոյմ յայ-
ցելուԹենէ ՚ի Մելան՝ ընկալեալ պատասխանի,
զի էր լեալ հնար գիտել ուր էրն պատանին,
զի արդարև լեալ էր նա առ ժամանակ մի ՚ի
տան ազգականին նւբոյ ՚ի գեղջ ուրեմն առանց
յայտնելոյ զանձն, այլ ՚ի միւմ առաւօտուց
յանկարծ լեալ էր անտի աներևոյԹ, և ազ-
գականն իսկ նւբ այն չգիտէր՝ զինչ անցք ընդ-
նմա անցեալ էին. ասէր ևԹէ որ ինչ զրոյցք
զնմանէ հակառակք իրերաց յածէին ընդ օդս,
նւբ Թէ ՚ի զննուորուԹիւն յարևէլս երԹեալ,
և անտի անցեալ ՚ի Գերմանիա, յանցս ուրեք
ընդ գետ՝ կորուսեալ էր. և զի ՚ի խնդիր էին
առնուին, և ևԹէ երբեք հաւասոի ինչ լինէր
գիտել զնմանէ, փուԹային ծանուցանել կար-
գինալին:

Ցետոյ և յերկրի անդ ՚ի Լէքքոյ լսելի եղեն

զրոյցքս այսոքիկ, և հասին յունկն Ագնիսի. և
կինն ոտառապեալ գոն գործէր ՚ի հետաքննել
՚ի ստուգել զսկիզբն զրուցացն, այլ չկարէր ա-
ւելի ինչ գիտել՝ բայց միայն ասէ. որ չատ է առ
՚ի վկայել գրեԹէ զամենայնէ: ՄերԹ ևս այն
ինչ լաւ լիմն յականջս նորա հասեալ՝ ժամա-
նէր զհետ այլ զրոյց նոյնպէս նորանշան կամ
ձախողակ. այլ յօգուտածոյք էին առհասարակ,
և այսչափ ինչ նրացն էր ոտուգուԹիւն:

Քաղաքապետն Միլանու զօրավար Իոալիոյ
Ֆերնանտէզ բողոք մեծ արարեալ էր առ դես-
պանն Վենետոց ՚ի Միլան, զի սրիկայ ոմն,
աւազակ աշխարհագոյժ, ձեռնտու աւար-
առուաց և սպանողաց, հրչակաւորն Լոռենցոյ
Թրամալեհինոյ մատնեալ յատեան, և աղմուկ
յաղատուԹիւն նւբ յարուցեալ, ապատա-
նեալ էր ՚ի սահմանս Պերգամոյ: Եւ դեսպանն
ուզեալ էր պատասխանի՝ զի անծանօԹ էին
նւբ նրքն, և զի գրեր զպնդանէ ՚ի Վենետիկ,
առ ՚ի կարող լինելոյ տալ նմա տեղեկուԹիւն:

Բայց Վենետք զհետ էին մեռաքսադործոց
միլանեցւոց՝ օգնելոյ և խնամարկելոյ յօժարու-
Թեան նոցա գալ յերկիր Պերգամոյ, և հայ-
Թայնելոյ նոցա գնւբուԹիւնս, մանաւանդ
զպատահմունքիւն՝ առանց որոյ անօգուտ է
այն ամենայն: Այլ ՚ի վերջ ոսոխայ երկուց
զօրաւորաց՝ միւս այլոք չահն ինչ Թէ և գուզ-
նաբեայ. սղզ եղև ՊորԹոլոյն, չգիտեմ յումմ
մէ ՚ի ծածուկ՝ զի վտանգ էր Ինդոյի կալ
անդ, և լաւ էր նմա մտանել յայլ ուրեք գոր-
ծարան, զանուն ևս նւբ առժամն փոխեալ:

Ծանեաւ Պօրթոլոյ զամենայն, չեհարց այլ ինչ, ընթացաւ յայտ առնել զայն Ոչնոյին, և առեալ զնա ընդ իւր ՚ի կառս՝ ած յայլ գործարան հեռի անտի իւր հնգետասան մղոնաւ. և պիտակ անուն կոչեցեալ նմա Անտոն ՌիւոլԹա, ընծայեցոյց զնա վերակացուի գործարանն՝ որ և նա էր միլանեցի, և ՚ի բազմաց հետէ ծանօԹ իւր: Եւ Թէպէտ էջր ամն այն բարեբաստ, ընկալաւ նա առանց աղաչանաց զդուստր ՚ի Պօրթոլոյ ընծայեալ ՚ի համարուեստ և ՚ի հաւատարիմ բարեկամին որպէս լաւ ոք և ճարտար. և ՚ի փորձէն էս գնա, ուրախ եղև ընդ բարւոք ստացուածն. բայց միայն Թուէր նմա պատանին վատք մի ապուշ, զի ՚ի ձայնէն գնա Անտոն, բազում այն էր՝ զի ջոյր նա պատասխանի:

Յետ սակաւ միոյ եկն ՚ի վիենեաց պատուէր մեղմագոյն առ զօրավարն Պէրգամոյ, առնուլ և տալ տեղեկուԹիւն զպատանւոյն՝ Թէ ուր ուրեք էր յիշխանուԹեան նորա: Եւ զօրավարին խնդիր արարեալ, որպէս և ընկալեալն էր պատուէր, էառ պատասխանի չգիտել. և մատուցաւ գիր նորա դեսպանին ՚ի Միլան, յղել առ Ֆերնանտէզ:

Ոչ պակասեցին հետաքրքիրք գիտելոյ ՚ի ՊօրԹոլոյէ՝ Թէ ընդէր պատանին ոչ էս կայր առ նմա, և ո՞ւր էր երԹեալ: Աւաջնոյն պատասխանէր ևԹե. « ԱներևոյԹ եղաւ »: Իսկ զայս մատուցեալս ՚ի հետազօտել՝ պէսպէս բանիւք արձակէր ՚ի բաց, կիսոց զայս ինչ և այլոց այլ ՚ի նախատացելոցս տեղեկուԹեանց տուեալ. բայց

որպէս անստոյգս ՚ի լոյ ընկալեալ, առանց հաւաստեաց: Իսկ իբրև հարցաւ ՚ի գիմաց Կարդինալին որպէս կարևոր ինչ խորհրդաբար, յայտնելով ևԹե բանբերին՝ զի ՚ի մեծէ ումեքէ գայր հարցուածն, հարկ համարեցաւ տալ ինչ՝ որպէս սովոր էր՝ պատասխանի. և ՚ի մեծաբանս հարցողին, զամենայն տեղեկութիւնս՝ զորս այլոց մի ըստ միոջէ յայլ և այլ դէպս հնարեալ էր, էառ միանգամայն:

Մի ոք կարծեսցէ ասա՝ զի Ֆերնանտէզ, իշխան այնպիսի, հակառակ էր մեռաքսագործին չինաականի, և այնչափ վտանգաւոր գնա համարէր՝ մինչև հալածել զնախատեսին, և ընդերել նմա հեռի իսկ ՚ի բնիկ երկրէն կեալ յօտարուԹեան. ՚ի կարի յոյժ յայլ գործմունս պատահեալ էին միաք նորա, և էր նմա պարապ խորհելոյ ՚ի պատանին. և այնչափ իսկ միա գնել ևս բաց՝ պատահարքն ժամանակին առիթ ցնա յանգէաս:

ԳԼՈՒԽ ԻԷ.

Դէպ եղև մեզ ուրեք ուրեք յիշատակել զպատերազմին, որ եռայր յայնժամ՝ ի ժառանգութիւն սահմանաց դքսին Վինկենտեայ Կոնտակայ երկրորդի. այլ՝ ի տեղիս անդ հարկ էր մեզ ձեռնել յառաջիկայս, և հարկանացի ինչ կարացաք առնել զայնմանէ յիշատակ: Սակայն արդ առ՝ ի բարւոք խմացուածս պատմութեանս՝ պարտ է մեզ մանրապատում առնել ինչ ինչ, որ թէպէտև գեղեցիկացն՝ ի վէպս ժամանակին ծանօթք իցեն. այլ քանզի ըստ իրաւացի մտացս կարծեաց՝ առաւել այնոցիկ լինի զգերս զայս յանկն արկանել, որ չէնն տեղեակ պատմութեանց, ոչ անդէպ համարիմք ասել՝ որչափ ինչ նոցա է կարեւոր:

Ախտաբէ զի՝ ի մեռանել դքսին այնոսիկ, առաջին ժառանգ նորա յուղիլ գծէ յաջորդու-

Թեան, սկիզբն կրտսերոյ Ձղի, անցեալ 'ի Գաղղիա 'ի դքսուԹիւն Նևերեայ և Հռետեղեայ՝ Ժառանգէդը և զՄանտուա. յաւերժմբ ատա և զՄոնտերրաթոյ՝ Թողեալ առ փուԹոյ 'ի բաց: Ապանիա, որպէս յիշեցաք և զայս, կամէր ա՜ՄեՆայն Իրօք 'ի բաց առնուլ զերկոսին զայսոսիկ սահմանս 'ի ԺառանգուԹենէ նորոյ իշխանին, և առ այս հարկ էր ունել պատճառս, զի պատերազմ անպատճառ՝ լինէր անիրաւ: Վասն որոյ եկաց նա պաշտպան իրաւանց, որոց կամէին զայլ ոք 'ի Կոնծակայ տանէ դուքս 'ի Մանտուա, զՖերրանտ իշխան Կուաստալլոյ, և 'ի Մոնտերրաթոյ զԻմմանուէլ Ա. զդուքսն Սաւոյայ, և զՄարկերիթա Կոնծակա զայրն դքսուհին Լորենայ: Իշխանն Կոնծակա, յազգէ մեծի զօրավարին՝ զորոյ կրկր զանուն, մշտեալ պատերազմ 'ի Ֆիանտրա՝ կամէր և Իտալիա ածել զնէն, Թերևս ինքն էր՝ որ հուր բորբոքէր, զի յայտնեսցի նա 'ի մի կողմն. այլ նա գուշակելով զկամս սրբուՆեացն Սպանիոյ, և կանխելով քան զպատուէրս նոցա, ուխտ կռեալ էր ընդ դքսին Սաւոյայ, յարձակել 'ի Մոնտերրաթոյ, և բաժանել զայն. և դիւրաւ յաջողեալ նմա ընդունել զՀպատակուԹիւն ուխտին 'ի դքսէն Ալիւարեայ, ցուցանելով նմա դիւրին յոյժ առնուլ զՔաղաքն, զոյր ամրագոյն 'ի մասին որ պայմանեալ էր սրբոյին Սպանիոյ: Այլ յանուն սրբոյին յայտ առնէր չգրաւել վայր ինչ, բայց եթէ մինչև ցվճիռ ենթակալին, որ կէս ըստ աղերսանաց այլոց, և կէս ըստ իւրոց կամաց

յամեցուցանէր զԺառանգուԹիւնն նորոյ դքսին, և ունէր յերաշխի զսահմանս՝ զորոց էին վէճք. և խոստանայր 'ի լսել երկուսեքն զիրաւունս՝ Թողուլ զայնոսիկ որոմ էին անկ: Բայց դուքսն Նևերեայ չառնոյր զայն յանձն. էին և նորա բարեկամք հզօրք, Կարդինալն Ռիշըլեայ, վէՆեաք, և Պասքն Ուրբանոս Ը. որպէս ասացաք: Բայց առաջինն պատուհաս կայր յայնժամ 'ի պաշարուին Ռոչելլոյ և 'ի պատերազմ ընդդէմ Անգղիոյ, և ընկիճեալ 'ի կղզւանէ դըշխոյն մեր Մեսրէեայ՝ որ վասն երից ինչ հակառակ էր տանն Նևերեայ, չկարեր տալ նմա աւելի ինչ քան զքաջալերս. վէՆեաք ոչ կամէին, և ոչ 'ի մի կոյս լինել ձեռնտուս, եԹէ ոչ 'ի Գաղղիոյ լքանէր բանակ Իտալիա. այլ 'ի ծածուկ օգնեալով դքսին ըստ կարի, կային ընդ սպանիացիս և ընդ քաղաքապետին Միլանու, յայտաբարուԹեանս ևԹէ և առաջարկուԹիւնս առՆէին, 'ի յորդոր և 'ի սպառնալիս ըստ երից ժամանակի: Իսկ Պասքն յանձն առնէր բարեկամաց զնէր, բարեխօսէր վասն նորա առ հակառակորդս, և տայր խրատս յիրաւախոհուԹիւն, այլ օգնել զօրօք չկամէր բնաւ:

Ըստ այսմ օրինակի դաշնակիցք երկոքին առպահովագոյնս կարացին ձեռնարկել 'ի մարտ: Դուքսն Սաւոյայ եմուտ յիւրմէ կուսէ 'ի Մոնտերրաթոյ, և իշխանն Կոնծակայ պաշարեաց մտադիւր զՔաղաքն, այլ չեգիտ 'ի մարտի անդ՝ որպէս կարծէրն դիւրին զամենայն: Սրբոյնիկք Սպանիոյ ոչ հայԹայԹէին նմա 'ի բազմաց հեՏէ և զանհրաժեշտ կարևորս, և գաշնակից

Նորա ոչ միայն զբաժին իւր գրաւեալ, այլ հատանէր տակաւ և ՚ի մանկ՝ որ անկ էր արքային Սպանիոյ: Հատանէր և Կոնծալոյ ըստ կարի, այլ երկիւղիլ՝ թէ գուցէ առ գոյն աղմիկ կալոցս Լմմանուէլ, ժիր ՚ի հնարս, յեղյեղուկ ՚ի գաշինս, և նշանաւոր ՚ի զէն, չըշէացի ՚ի կողմն Գաղղիոյ. վասն որոյ սակաւք վաճառ չաչաց, ժոյժ ունէր, և կալ ՚ի լուռթեան: Զախողէր պաշարումն և յերկարէր, և յետս ընդդէմ գնային իրք վասն անյողդողդ հաստատութեան և զգուշութեան պաշարելոցն, վասն սակաւութեան զօրաց, և վասն սխալանաց նորա բազմաց՝ ըստ վկայելոյ ուրուքն ՚ի պատմագրաց:

Յայսմ վայրի առեալ նորա զլուր ապստամբութեանն Մխլանու, գիմեաց անդր. ուր ընդ այլ իրս պատմեցաւ նմա և աղմուկ խառնուածութեանն և վախստեան Ռէնցոյի, և զոյցք ՃՂՀմարիտք խաւն ընդ յօդուածոյս՝ որ եղեն պատճառք ըմբռնման նորա, և ապաւինէլոյ ՚ի սահմանս Պէրգամոյ: Աստանօր կայր իշխանն Կոնծալոյ ուշիւ ՚ի լուր, զի զայն ամենայն տեղեկացեալ գիտեր, և զգուշս ամբառնալ վնասուց ՚ի լուր ապստամբութեանն Մխլանու, և զհամարել նորա ՚ի սկզբան՝ զի սոխակեսցի ինքն լուծանել զպաշարումն Ֆաղալեայ, և զնորհել նորա գեռևս զի ինքն չվոթեալ ՚ի վարանս կայր, մանաւանդ զի հուպ ընդ հուպ հասեալ էր լուր անձնատուր լինելոյ Ռոչելայ, ցանկալի նորա և երկիւղալի նմին: Զչարեցաւ յոյժ այն քաջ և քաղաքագէտ՝ զի այս

պիսի խորհուրդք էին նորա զինքեանէ, և խընդրէր պարապ՝ ցուցանելոյ նորա արդեամբք զվստահութիւն իւր, զի ասել ևեթ թէ էր աներկիւղ զօրէր ինչ ոչ: Բայց օգնէր առ այս ցուցանել զահաճութիւն իւր, գանգատեալ, և բողոքել. վասն որոյ ՚ի գալ դեսպանին Վէնետոյ առ նա ՚ի մեծարանս, միանգամայն և ՚ի հետաքննութիւն մտաց նորա ՚ի դէմն և ՚ի կերպ, լինէն յետ խօսելոյ ընդ դեսպանին ՚ի հարեանցի զալմկէն՝ որպէս վաղ իսկ ցածուցելոյ, յաւել որ լինչ ասացաքն զՌէնցոյէ՝ հեռանօքն հանդերձ, և այլ ոչ ևս յիշեաց զնորան որպէս դաւճանաբեայս և վճարեալս: Այսպ երբեմն եհաս առ նա պատասխանին ՚ի Ֆաղալ, ուր գալձեալն էր, և յայլ խորհուրդս յուզեալ, ամբարձ զգլուխ իւր տատանելով որպէս շերամ ՚ի խնդիր տերևոյ, եկաց վայրկ մի առ ՚ի յոչ ածել զնրան՝ որոյ աղօթ ՚ինացեալ էր առաջեր ՚ի մտի իւրում. յիշեաց խաւն ՚ի խուռն հասլևանցն և զայրն մեծ, և զանց ալարեալ՝ ոչ ևս խորհեցաւ զայնմանէ:

Բայց Ռէնցոյ, որ ոչն աչն ունէր այնմ նեղոլամիտ անտեսութեան, այլ լինչ խորհէր առնելին, և գուն գործէր կալ անծանօթ. հալէր և մաշէր յղել առ իւրան լուր, և առնուլ ՚ի նոցանէ. այլ դժուարութիւնք կրկին մեծամեծք խափանէին զայն: Մի՝ զի պարտ էր նմա վստահել ՚ի գրագիտ ոք, զի ինքն եղկելին չգիտէր գրել, և ոչ ընթեռնուլ. և թէպէտ հարցեալ ՚ի կոչեցելոյ Թնձոփ փաղ վաստաբանէն՝ որպէս թերևս յիշեսցեն ընթերցողք՝ ասաց գե-

տեղ, առ ամբիծոյ, այլ ոչ սահեայ. զի գիտէր ընթեռնուլ զսպագիրս հեգելով, բայց այլ է գալրուվթիւն գձեռագիրս ընթեռնլոյ: Հարկ էր ապա գիտակից գաղտնեացն առնել զոք, և այնպիսւոմ վտանգաւոր գաղտնեաց. զոյնպիսի ոք՝ որ գիտիցէ ունել գրիչ՝ի ձեռին, և հաւատալիմ զոք՝ զոր չէր ինչ գիւրին գտանել յայնժամ, մանաւանդ ուր չէր նորա վաղեմի ծանօթութիւն: Միւս ևս գժուարութիւն էր գտանել զոք թղթատար՝ ուղևոր՝ի կողմանն յայնոսիկ, որ յանձն առնոյր ածել զգիրն. և հասուցանել զայն անկորուստ առ որ ուղեալն էր. և այսորիկ ևս գժուարին էր գիւտ: Բայց խնդրեալ և հետազօտեալ՝ յետոյ ապա եգիտ զոք, որոյմ կարէր տալ գրել՝ այլ ոչ գիտեալ թէ իւրքն՝ի Մոնցա՞ գեռևս կայնի թէ այլուր, խորհեցաւ ծրարել զգիրն գրեալ առ Ակինէս՝ի միւս այլ ծրար, և ուղղել առ Հայր Քրիստափոր, գրեալ սուղ ինչ և առնա: Յանձն էառ գրիչն ինքնին հասուցանել ևս զայն, և ամանգեաց ուղևորի ուժեին՝ որ առ Փէսքարէնեաւ անցանելոց էր, և նա բաղում յանձնապարտութեամբ եթող զայն՝ի մծռագոյն պանդոկի ուրեք՝ի Ճանապարհին. և զի՝ի վանս ուրեք էր ծրարն ուղղեալ, եհաս անկորուստ. այլ որ ինչ եղևն յետոյ, չէ յայտ: Ռինոյդ չըն կալեալ ինչ պատասխանի, եւս գրել միւս այլ գիր հանգոյն առաջնոյն, և եւս ծրարել զայն և ուղղել առ մի՝ի բարեկամաց իւրոց կամ յազգականաց՝ի Լէքքոյ: Խնդրեցաւ և այլ ոք թղթատար, և գտաւ. և զայս նուագ եհաս

գիրն ուղղակի առ որ յղեալն էր: Գիմեաց Ափնէս՝ի Մանճիանիկ, եւս Ալէքսեայ ազգականի իւրում ընթեռնուլ զայն և մեկնել, և յարմարեաց ընդ նմա զպատասխանին: Գրեաց զայն Ալէքսիս, և եգիտ զոք ուղևոր՝ ածել զգիրն առ պետականն Անտոն Ռիւոլթա՝ի տուն նորա. այլ այս ամենայն ոչ այսպէս փութով, որպէս պատմեցաքս, յայլոցանց: Եհաս պատասխանին առ Ռինոյդ, և եւս նա գրել միւսանգամ. և սկսաւ երկուսեքեան թղթակցութիւն, ոչ արագ արագ և ոչ ըստ կարգի, այլ ընդոստ և ընդհատ:

Բայց առ՝ի տեղեկութիւն թղթակցութեան նոցա, պարտ է գիտել փոքր՝ի շատէ՝ ինչպէս լինէրն յայնժամ, կամ առ ոմանսն ինչպէս լինի և այժմ, զի՝ի մասնիս յայսմիկ սակաւ կամ ոչ ինչ կարծեմ լեալ փոփոխութիւն: Գեղջուկ՝ որ ոչն գիտէ գրել, և պէտք իցեն գրելոյ, գիմէ առ գրագէտ ոք, ընտրելով ըստ կարի հասարակից ըստ ասելճանի. զի առ այլս էնչիսէ կամ չվստահի: Պատմէ նմա զկրսն, և տայ գրել ըստ պատմութեանն. գրագէտն կէս խմանայ և կէս չխմանայ. թելադրէ ինչ կամ առաջարկէ փոփոխութիւն, « Մնացածը ինծի թող առաբ » ասէ, առնու՝ի ձեռս զգրիչ, յարմարէ զինաս նորա՝ի ձեռնամարկի, ուղղագրէ, յօրինէ, մեղմէ, սահակացուցանէ և զեղչէ, որպէս թուի նմա և պատշաճ համարի. զի գիտնագունի քան զայլս չէ հնար յանձն առնուլ գործի նիւթական լինել նոցա, այլ՝ի մտանել յիրս նոցա՝ կամ ըստ հաճոյս իւր զիատարուժն: Սակայն

ոչ միշտ յաջողէ գիտնաւորի դրէլ զոր կամի. գրէ երբեմն այլազգ բոլորովին, որպէս և մեզ պատահէ՝ ՚ի գրելն իսկ առ ՚ի սիպ։ Ի ժամանել գրոյն առ Թղթակիցն անգրագէտ, ածէ նա զայն առ միւս ոք գրագէտ՝ ընթեռնուլ և բացատրել։ Ծնանին խնդիրք զիմաստից. տէր գրոյն գիտէլով զանցս, այլազգ կամի իմանալ. հարկ է՝ զի անգրագէտն յանձն լինի գրագիտին, և տացէ նմա գրել զպատասխանին. և պատասխանին ևս այն՝ յօրինեալ ըստ եղանակի գրոյն՝ անկանի ընդ հանգոյն մեկնութեամբք։ Իսկ եթէ պատճառք ևս թղթակցութեանն իցեն վտանգաւորք, և յաւելցին յայն գաղտնիք ևս՝ զորս չկարեն կամք թէ իմանայցեն ոք ՚ի կորընչել յանկարծ գրոյն, և վասն այն քօղարկեսցին կամաւ իմաստք, յայնժամ երկուասիրք չիմանան զբանս միմեանց, որպէս պատահէր ՃՃեմականաց ժամն ձիգս վիճել զինքնաչարժ զօրութենէ և չիմանալ ինչ։ Ոչ յարդեաց ինչ ածէմք օրինակ, զի մի կուսուփս ուսուեք հասցէ մեզ ընդունել։

Արդ երկոցունց թղթակցացն նոյն պատահեցեալ էր. գիրն առաջին, գրեալ ՚ի գիմաց Ոխնոյի, բովանդակէր բազում այլ և այլ ինչ։ Ի սկզբան ընդ պատմութիւն փախստեանն, հաստատեաւ՝ այլ քան զվերս զայս խառն ՚ի խուռն, բովանդակէր զարդի հանգամանս պատանւոյն. այլ ոչ Ագնէս, և ոչ Թարգման իւր, կարացին անսխ առնուլ յայնմ ինչ և ամբողջ ՚ի միտ. բայց միայն զեկուցումն ինչ գաղտ, փոփոխումն անուան, ապահովութիւն՝ այլ հարկ կալոյ անծանօթ, իւրք ինքեանն անհմանալիք, և խրթնաբար և բացատրեալք ՚ի գրին։ Էին ապա և հարցուածք, հանդերձ ցաւովք և անձկանօք, զարկածից Լուչիայի, և մեծին և վշտագին ակնարկութիւնք զղուացան հասելոց զայնցանէ առ ինքն, և ՚ի վերջէ յոյս լինն անստոյգ և հեռաւոր, խորհուրդք զապագային, խոստմունք և աղաչանք հաւատարմութեան, խրախոյս ՚ի համբերութիւն և յարնութիւն, և ակնկալիք յեղափոխութեան իրաց ՚ի լաւ անդր։

Սուղ ինչ ՚ի վերայ անցեալ ժամանակ, եգիտ Ագնէս այր հաւատարիմ առ ՚ի հասուցանել ՚ի ձեռս պատանւոյն պատասխանի, ընդ որում սակաւս ոսկիս ՚ի Լուչիայէ։ Ի տեսանել պատանւոյն զկոյտ ոսկեացն, չգիտէր զինչ խորհել. և յուզեալ ՚ի զարմանաց և ՚ի վարանաց՝ որ ոչ ոտին նմա տեղի բերկրանաց, փութացաւ առ դպիրն, ետ նմա ընթեռնուլ և մեկնել զգիրն և իմանալ զբերդակարծ իրան։

Դպիրն Ագնիսի ՚ի պատասխանին դանգատէր նախ զմոռացութենէ գրոյն, և նկարագրէր ապա ոչ ինչ ընդհատ մոռացութեամբ զսոսկալի պատմութիւն ծանօթ աղջկանն (որպէս ասէր), և վասն որոյ իրաց զխոստն սկսաւսն առաքէր. և ապա ՚ի ներքս ածեալ չքնաքանութեամբ զուխան, յորդորէր բացայայտ բանիւք՝ մի խոովել, և մի և ևս խորհել ՚ի նա։ Ի լսել զայն պատանւոյն, փոքր միւս և՝ և թափէր զզայրոյթ իւր ՚ի թարգմանն. զդողանի հարեալ, սրտմտեալ և կատաղեալ ընդ խմայեալն և ընդ ոչ խմայեալս, հրոյց և չորոյս տուեալ վերծանել

զգիրն սոսկալի, մերթ թուէր նման ՚ի միտ առեալ զգրեալսն, և մերթ համարէր մեծին՝ որ ինչ յայտնի և պայծառ յառաջն էր նմա երեւեալ: Եւ յեռանդեան անդ եւս ձեռն արկանել ՚ի պատասխանի գրոյն. և յեւս յանդիման առնելոյ Ագնիսի զվիշտ և զսոսկումն ընդ արկածս Լուչիայի, ասէ ցդպիրն. « Գրէ որ ես չեմ կրնար, ու չեմ ալ ուզեր չխոռովիլ. գրէ որ առանկ խրատ չիտրուիր ինծի պէս զաւկի մը, գրէ որ ձեռք չեմ գոյցըներ ան սոքկին, մէկդի կը դնեմ անիկայ իբրև աւանդ ու օժիտ աղջկանը. գրէ որ աղջիկը արդէն խմ է, ես խոստմունք մոստմունք, ուխտ մուխտ չեմ գիտեր, ես ասանկ սովրեր եմ միշտ՝ որ սուրբ Աստուածածինը խեղճերուն կողորմի ու կօգնէ, չէ թէ անիրաւութիւն ընողներուն, չէ թէ խօսքերնուն վրայ չկենցողներուն. գրէ որ ան սարկովը տուն տեղ պիտոր ըլլանք հոս, ու որչափ ալ հիմայ քիչ մը խառնակութեան մէջ եմ, մերթիկ մըն է՝ որ չուտով կանցնի », և սոյնն սակի բանս:

Ընկալաւ Ագնէս զգիրն, և եւս գրել պատասխանի. և տեսեր Թղթակցութիւնն այն ըստ օրինակին՝ որպէս և ասացի: Իսկ իբրև կարդաց, յոյր ձեռն ոչ գիտեմ, ծանուցանել դասերն՝ զի կենդանի էր ծանօթ պատանին և անվտանգ, սփոփեցաւ յոյժ Լուչիա, ասէ. « Ուրիշ բան չեմ ուզեր, բայց միայն որ մուտնայ գիս », կամ Ճչգըրտագոյն ըստ ասացեալսն, « Ահ թոզ չիմտածէ իմ վրաս »: Իսկ ինքն զօրհանապազ կրկներ զառաջադրութիւն իւր, և ձգնէր հաստատուն կալ ՚ի նմին. պարապէր անդադար ՚ի գործ, Ջանայր պատաղել ՚ի վաստակ. և ՚ի գալ պատահուցն յոյժ իւր, աղօթիէր: Ահա բազում այն էր, զի պատկերն այն իբր նեհգաստ և ոչ յայտնապէս ՚ի միտս նորա գայր, այլ յաբրամբն ընդ այլ խորհուրդս իբր յանդգնասից ՚ի նեղբս անկեալ, և վայրկ մի յամեալ՝ ապա գայր ՚ի յայտ: Միաբ աղջկանն ընդ մերն էին յաճախ, զի որպէս կարէին հեռանալ ՚ի նմանէ. և պատկեր պատանուցն գայր մեղմով կաղ ընդ նոսա, որպէս յառաջագոյն սովրն էր յաճախ. և ՚ի խորհել երբեմն հիքին զապագայ կենացն, անդ ևս յանդիման լինէր նմա պատանին՝ որպէս թէ ասէլով. « Բայց ես չքլլամ պիտոր հետդ »: Զխորհել երբեք ՚ի պատանին էր անհնարին. իսկ խորհել նուազ կամ յամրագոյն քան զանձուկ սրտին՝ մինչև ցսահմանն ինչ յաջողէր նմա. մերթիէր իսկ առաւել յաջողել, եթէ միայն էր. այլ սիկինն Պրաքսեակ, որ և նա Ջանայր հանել ՚ի մտաց նորա զպատանին, չպատանէր այլ հնարս առ այն՝ բայց յաճախագոյնս խօսել զնմանէ, և ասէր. « Ահ մի մտածեր իր վրայ »: Եւ պատասխանի տայր Լուչիա. « Ամենևին չեմ մտածեր »: Բայց Պրաքսեակայ ոչ չատացեալ ընդ պատասխանին, յաւելոյր. « Գործով պէտք է ցուցընես զինքդ մտածելդ. հիմակուան աղջիկներուն բնութիւնն է անպիտան տղոց յարուիլ, ու չուզել բաժնուիլ անոնցմէ ամենևին. թէ որ համոզուս ու խելքով, իբրենց պատիւը գիտցող ու կարգաւորեալ տղու մը յարուին, ու յան-

կարծ ձախորդութեամբ մը ուշացնեին յա-
ջողելու որ չըլլայ, գիւրաւ կը մոռնան. բայց
անպիտան տղու մը որ զարնուին, չիբժշկուե-
լու վերք կըլլայ սրտերնուն »: Եւ ասո սկսա-
նէր զգուաստանութիւն եղկելոյ պատանւոյն՝
ասելով. « Անզգամը Միլան եկաւ՝ յափշտակու-
թիւն ու սպանութիւն ընելու ». և կամէր զի
հաստատութեամբ աղջկին զբաղիս, զորս համարէր
նա գործեալ պատանւոյն ի գեղջ Իւրմա:

Իսկ Լուչիա գողգոջ ձայնիւ առ պատկառա-
նաց և սրտառուչ՝ ոլչափ նեղիչին նմա հեղու-
թիւն սրտի նորա և խոնարհութիւն բաղդին,
վկայէր և հաւատարիմ առնէր, զի բարիս ևեթ
առեալ էր եղկելւոյն խօսել զինքեանէ ի գեղջ
անդ, և յաւելոյր. « Ո՞ւր էր որ հոնկէց մեկը
ըլլար, որ խօսքիս վկայէր »: Դարձեալ և վասն
արկածից Միլանոյ, որոց չէր իսկ քաջ տե-
ղեակ, բայց գիտելով զբարւոքն գնացս պատա-
նւոյն ի մանկութենէ, պաշտպանէր նմա, կամ
չանայր պաշտպանել ըստ պարտեաց քրիստո-
նէական սիրոյ, և ի սէր ճշմարտութեան, կամ
որպէս ինքն ասէր՝ վասն եղբայրսիրութեան:
Այլ Պրաքսեաէ ի չատագովութենէն ասի
առաւել և առնոյր պատճառս յաղթահարելոյ
զաղջկին, որպէս թէ տակաւին զակատեալ էր
ի սէր պատանւոյն: Եւ է գուշակել զինչ
յայնմ վայրի կրէր ի սրտի աղջկանն: Անարա-
ժան նկարագիրն՝ զոր առնէր պատանւն զհնէ
պատանւոյն, զարթուցանէր հակառակ բանից
նորա կենդանի և լուսաւոր զպատկերն պատան-
ւոյն տպաւորեալ յայնքան ամաց ի միտս աղջ-

կանն. յիշատակք բռնի ընդհատեալք, դառնային
խուռն ի նա. արհամարհութիւն և անարգանք
յաւելուն յուշ ածել զարդ նորա, կոյր և
դժնեայ առելութիւն յուզէր խանդաղատելի
ևս զգուէն և զդորով. և ընդ այսքան կիրս, ո՛
գիտէ թէ էր ի նմա համ թէ չէր միւսն այն՝
որ զհետ նոցին ծնանի ի սիրտ, և որ ինչ ներ-
գործէ ի նմա ի մերժելն զայն ի բաց: Իցէ այն
որպէս և է, բայց Լուչիայէ չէր մարթ յերկա-
րել անդ ի խօսս, զի հեղձուցանէին զայն ար-
ատասուք:

Եթէ Պրաքսեաէ ի հնազեալ առելութենէ
չարժէր ընդդէմ աղջկանն ի նեղել զնա, թե-
րևս արտասուք ի գալ ածէին զնա. այլ նա-
խանձ բարւոյ մղէր զնա յայն. հեծութիւնք և
ողբք կարեն խափանել զչնա թշնամւոյ, այլ
ոչ և զերկաթ վերաբուժի: Բայց կատարեալ
տիկնոջն զայս նուազ զկարծեցեալ պարտս իւր
ի հարկանել զսիրտ աղջկանն և ի կշտամբել
ի չնա, էանդ ապա ի յորդոր և ի խրատ հան-
դերձ գովութեամբք, զդառն ընդ անոյշ խառ-
նեալ առ ի յաջողել, զամենայն հնարս ի կիր
արկեալ ազդելոյ ի սիրտ նորա: Եւ յայնքա-
նեաց կշտամբանաց, որոց գրեթէ միշտ նոյն
ակնդէն էր, նոյն մէջ և կատարած, ոչ ծնանէր
ի սիրտ աղջկանն առելութիւն ընդդէմ դառն
քարոզչին, որ ըստ այլոյմ մասին վարէր ընդ
նմա բազում քաղցրութեամբ, այսու և զբար-
ւոք միտս իւր յայտ արարեալ. սակայն մնային
ի միտս աղջկանն յոյզք խորհրդոց և աղմուկ
կրից այնպիսի, զի անագան և բազում ձգամբ
դառնայր ի խաղաղութիւն:

Ըստ յաջողելոյ բանից՝ ոչ ինքն էր միայն, որում բարեբարել կամէր տիկինն, որով նուազ յաձախելն ընդդէմ աղջկանն կշտամբանք: Զի բայ 'ի ծառայից և յաղախնայց, որոց առհասարակ առաւել կամ նուազ սէրք լինէին խրատուց և ուղղութեան, և ինքն խրատէր և ուղղէր զնոսա, այլոց ևս՝ որոց չէին ինչ իւր պարտք, ինդրէր պարապ մատուցանելոյ զնոյն սպաս պաշտամանն, եթէ ոչ ինքնին ընդ առաջ լինէին գէպք: Էին նորա դասերք հինգ, և ոչ մի 'ի նոցանէ 'ի տան. այլ հոգայր զնոցանէ առաւել քան եթէ էին 'ի տան: Երեք 'ի նոցանէ էին կուսանք, և երկու առնուկին. որով ունէր ընդ իւրև Պրաքսեաւ երիս մենաստանս, և երկու ընտանիս: Տեսչութիւն ընդարձակ և բազմակնճիռն, այնչափ առաւել տաժանաւոր, որչափ զի փեսայքն երկոքին ընդ ծնողս իւրեանց և ընդ եղբարս, և վանամարքք երեք ընդ օգնականս իւրեանց և ընդ յոդուածս 'ի կուսանացս, ոչ կամէին զտեսչութիւն նորա: Էր պաւերազմ հանապազ, մանաւանդ թէ հնգեակ պատերազմունք, ծածկաբար և բարեձևութեամբ մղեալք, այլ սաստիկք և անընդհատք. զգուշանային ամենեքեան 'ի նմանէ, քանզի խուսեալ 'ի խնամոյ նորա, ոչ տեղի տային խորհրդոց, խնդրոյ զմուտս հետազօտութեանց, ծածկէին ամենայն հնարիւք զգործողութիւնս: Լսեմ զվէճս և զխոչ և զնախատինս որ ընդ առաջ էլանէին նմա և յերս 'ի քնաւ խակ օտարոտս, որպէս և յայտ է՝ զի պատահէ յաձախ 'ի բունի բարեբարել մարդկան: Ասանին ևեթ

ազատ էր իշխանութենէն նորա. անդ ամենեքեան հպատակէին նմա յամենայնի, բայ յառնէ իւրմէ, ընդ որում այլազգ ամենևին գնայնի իրք:

Ֆեբրանա՝ այր բանասէր՝ ոչ հրամայել կամէր, և ոչ հնազանդել. ներէր կնոջն իշխել 'ի տան, այլ ինքեան՝ ոչ ևս. և եթէ երբեք աղաչեալ 'ի նմանէ՝ օգնէր նմա գրով, ըստ հաճոյս իւր առնէր. և եթէ էր ըստ մտի իւրում որ ինչ կինն կամէր տալ գրել, ժխտէր նմա զայն, և ասէր. « Դուն կրցածիդ չափ գրէ, որովհետև քեզի առանկ աղէկ կերևայ »: Պրաքսեւեայ փորձեալ առ ժամանակ մի ձգել զնա 'ի կամս իւր, և ոչ յաջողեալ, չառանցայր քըրթմընջել առեալ զնմանէ, և կոչել զնա անգործ և յամառ և բանասէր. այլ զգեաներս զայս առնէն, թէպէտև զայրացմամբ՝ այլ օրպէս չնորհս ինն առնելով տայր նմա:

Ֆեբրանա ժամս ձիգս զօրհանապազ պարապէր յընթերցուածս. և էր նորա գրեան բազում, ոչ ինչ նուազ քան զերեքարիւր հատոր երևելի մատենագրաց զպէսպէս գիտութեանց, յորս առհասարակ առաւել կամ նուազ յածեալ էր: Ի մասին ախտաբաց համարէր նա, և չիբաբի, առաւել քան սիրոյ ևեթ գիտութեանն. զի ոչ 'ի հարևանցի ինչ հանրական ունէր զայնմանէ տեղեկութիւն՝ գիտել ևեթ զաղբեցութիւն զերևոյթս և զզուշակցութիւնս աստղաց, այլ ճառէր իբր յաթուոյ վերկոտասանից աստեղատանց, զվեծագոյն պարունակաց, զասիճանաց պայծառութեան և նսեմութեան,

բարձրութեան և խոնարհման, զընթացից նո-
ցա և զնախամանից, և զըստոյգ տարերց և ըզ-
գալանեաց գիտութեանն: Եւ իբր 'ի քան ա-
մաց հեաե 'ի տեպ և 'ի ձիգ վիճաբանութիւնս
պինդ ունէր զօրինս բաշխից Բարսաներայ ընդ-
դեմ այլոցմ աստեղագիտի՝ որ մերձ էին հե-
ւէր բաշխին Ալքասպիցեայ, յամառութեամբ
ևեթ՝ որպէս ինքն Ֆերղանա ասէր. և խոստո-
վանելով համակար զգերակայութիւնն նախ-
նեայց, ոչ հանդուրժէր ժխտել և զակնյայտնի
երաւունս արդեաց: Տեղեակ էր, ոչ սակաւ,
և պատմութեան գիտութեանն այնորիկ, և
ըստ պիտոյից ածէր 'ի վկայութիւն զըրուն
գուշակութեանց երևելեաց, և ճառս նրբինս
և քաջհմուտս արկանէր զայնց գուշակու-
թեանց վրիպելոց, ցուցանելով՝ զի ոչ գիտու-
թեամն էր այն թերութիւն, այլ որոց էր գի-
տացեալ բարւոք վարել նովաւ:

Ուսեալ էր և զնահանեայն իմաստասիրու-
թիւն ըստ բաւականին, և յառաւելն նկրտէր
պարապելով 'ի գիրս Դիոգինեայ Լայերտեայ.
այլ քանզի գրութիւնքն այնոքիկ, թէպէտև
գեղեցիկք, այլ չէն ընդունելիք, և զի որոց ե-
մաստասիրելն ցանկան՝ պարտ է նոցա ընտրել
զոք իւրեանց 'ի հեղինակ, Ֆերղանեայ ընտ-
րեալ էր իւր զԱրիստոտէլ, վասն գոլոյ նորա՝
որպէս ինքն ասէր, ոչ նոր և ոչ հին: Էնն նորա
և գրեան իմաստնագունից և նրբամտաց 'ի հե-
տեւողաց նորին արդեաց. և ոչ երբեք կամէր
զհակառակորդաց նորա ընթեռնուլ զգիրս, 'ի
զուր համարեալ ժամավաճառ լինել 'ի նոսին,

և վատնել արծաթ. բայց միայն տեղի 'ի մտա-
նագարանի իւրում տուեալ էր հուչակաւորացն
երկոտասան գրոց Յաղագս նրբութեան, և այլոց
ինչ գրոց Բարսաներայ ընդդեմ ձեմականաց,
վասն քաջութեան նորա յախտաբս, և ասէր՝
զի որ այնպիսի գիրս վէրաբարձէ և զարթմանս ար-
ձոյնոց էր գրեալ և վերիվայրման տպեղոյ Քննդակա-
նաց, արժանի էր ունկնդրութեան և 'ի ճառել
իւրում զանտեղիս, և զի մեծագոյն թերու-
թիւն առնն լեալ էր բարձրութիւն հանճարոյն,
և զի չէր մարթ ածել ուշիք զմտաւ՝ ցոր վայր
կարէր նա հասանել և յիմաստասիրութեան,
եթէ չէր եղեալ արտուղի: Բայց թէպէտ և
Ֆերղանա համարէր 'ի գիտնոյ ծայրագոյն ձե-
մական, սակայն ինքն ոչ այնպէս թուէր անձին,
և ոչ գոն ուրեք չափաւորութեամբ մեծաւ
խոստովան լինէր, զի համագոյք և հոգի տիե-
զերաց և բնութիւն էից չիցեն պայծառ որբեսփ
կարծին:

Ի բնական իմաստասիրութիւն առ 'ի զբօ-
սանս եւեթ պարապէր. և զգիրս իսկ Արիստո-
տէլի իմաստասիրականս ընթեռնոյր միայն,
այլ ոչ պարապէր 'ի նոսին: Սակայն տեղեկու-
թեամբն ճառից հանրական իմաստասիրու-
թեան, և վեր 'ի վերոյ անցեալ ընդ Բնական
Հոփոնիկն Փորփայրէ, և ընդ երիս գիրս Բարանոյ
և Կենդանեաց և Բուսոյ Բարսաներայ, ընդ ճառս
Բուսոյ պինդ և անասնոյ Մեծին Ալպետրոսի, և ընդ
այլ գիրս նուազ քան զսոսա երևելիս, գիտէր
ըստ ժամանակին զըուցասրել զպարմանագոյն
զոլ ուրեքանց և զառաւելագոյն հրաշալեաց

խոտոց բազմաց, և Ճգնելու նկարագրէը զՃև և զընտրելն Համբարձաց և զմիակն փրկչիկ: Յաւգանէը որպէս սալամանդր անկիզելի կայ ի հուր, զնարդ Ճուկնն փոքրիկ նաւակաշ զօրէ խափանել յընթացից ի սպառ ընդ անդունդս զառաւարագոյնս ի նաւաց, որպէս կաթիլք ցօղոյ փոխին ի մարգարիտս ի խեցեմորթի, էբր դեռնառուծ կերակրի օգովք, զնարդ ի սառամանեայ տակառ կարծրացելոյ գոյանայ բիւրեղ, և զայլ հրաշագոյնս էր խեչամուտս, ասէ պատմիչն անանուն, ի գաղտնիս մտուելեան և հմայիցն՝ որոց կարևորագոյն թուէը յայնժամ գիտուելիւն և ի համարի, և արդասիք նոցա յանկալի էս, և գիւրագոյն ի ստուգել: Ոչ է հարկ ասել՝ զի յոստմունս յայսոսիկ ոչ առ այլ ինչ պարապէը նա, բայց առ ի գիտել և Ճանաչել զչարարուելեսա հնարս գիւելից, առ ի ըզգուշանալ ի նոցանէ: Առաջնորդուելեամբ առաւելապէս մեծին Մարմնոսի Տէլրիոյ՝ որ ներհուն էր ի գիտուելեանն, հասեալ էր ի չափ վարժապետութեան ճառելոյ զսիրելական հմայից, զձմերական թովչուելենէ, և զՀակիր գիւելուելենէ, և զաղդի աղդի անհամար տեսակաց կախարդուելեան, որ ըստ արկածից՝ ասէ նոյն պատմիչ՝ յաւուրս մեր տեսանին, մանաւանդ երկոցս այսոցիկ կախարդուելեանց չարաչար արդասիք: Նոյնպէս խոր և ընդարձակ էր հմտուելիւն Ֆերրանտեայ ի պատմուելիւնս, մանաւանդ ի սիեզերականն, յորում էին նմա հեղինակ Թարքանեսթա,

Տոլէէ, Պուկաթելի, Քամփանա, Կուաչցոյ, և համայն ասացեալ՝ երևելագոյնք ի պատմագրաց:

Այլ զինչ է պատմուելիւն, ասէը յաՃախ Ֆերրանտ, առանց քաղաքավարականին, բայց առաջնորդ՝ որ ընթանայ, առանց ուժգնք ոստոյանելոյ ուղղ, ընդունայն Ճանապարհորդեալ: և զինչ քաղաքավարականն առանց պատմուելեան, բայց ուղևոր առանց առաջնորդի: Վասն որոյ ի մատենագարանի իւրում էր նոցա դարան ուրոյն, յորում ընդ այլ մատեանս քաղաքավարական՝ չափաւորս քանակաւ և համբաւով, յաղթանակէին Պոտինոյ, Քաւալքանթի, Սանսովին, Փարուելա և Պոքքալինի: Այլ էին անդ մատեանք երկու, զորս Ֆերրանտ դեր ի վերոյ բոլորեցունց ի մասինս յայսմիկ վարկանէր, և զորս մինչև ցԺամանակ մի կոչէը առաջինս, առանց կարելոյ սահմանել՝ ուր յերկոցունց անտի անկ էր անուանն այն: Մի ի նոցանէ էր մակագրեալն Իչան և Ioսէփ երևելոյն Փլորենտեան քարտուղարին, զորոյ ոչ ժխտէը Ֆերրանտ զեղեռնաւորուելիւն, այլ խորագնին զնա կոչէը. իսկ միւսն Պաֆաոտ պէպուելեան, ոչ ինչ նուազ հռչակաւորին Պոճեորոյ, զոր նոյն ինքն կոչէը հաւատարիմ, այլ խորամանկ: Բայց սուտ ինչ յառաջ քան զԺամանակ պատմուելեանս եկեալ էր ի ըզյս մատեան մի՝ որ սահմանեաց զինդիր նախապատուուելեանն, գերազանցեալ քան զերկոսին և. մատեան՝ որ բովանդակէ զէուելիւն ամենայն յոստուելեանց՝ առ ի տալ ճանաչել զայնոսիկ, և զաւուելեանց՝

առ 'ի վարել նոքօք : Մատեանն այն փոքրիկ՝ այլ ոսկեզնիկ, Բաղաքաւոր արդէ մանագրեալ, էր գերահռչակն Վալերիանեայ Քաոթիկյէօնի. զորմէ մարթ է ասել՝ զի վերագոյնք 'ի գիտնոց եվեբէս առնէին զմիմեամբք 'ի գովել զնա. և Ուբբանոս Ը, որպէս ամենեցուն է յայտ, գերազանց գրուատեօք մեծարեալ զնա, և կարգինալ Պորիէզ և վսեմաբեղային Նեապօլսոյ Պետրոս Թոլետոյ ասպետին զնա 'ի գրել, առաջինն զգործս Պօղոսի ե. և երկրորդն զաստեր ազգային Սպանիոյ, այլ չեղեն լսելի. և Լուգովիկոս ԺԳ, արքայ Գաղղիոյ, յորդորեալ 'ի Կարդինալ Ռիշելեույէ, անուանեաց զնա պատմագիր իւր, և գուբան Սաւոյայ Կարոլոս Էմմանուէլ էտ նմա զնոյն պատիւ. և 'ի գովութիւն նորա, թող զայլ վկայութիւնս պանծալիս, գբասուհին Քրիստինէ գուսար Հռոմիկեայ Դ, արքային Գաղղիոյ 'ի հրովարտակի ուրեք ընդ այլ գրուատս՝ յատել հաստատել զհամբաւ նորա, գերագոյն 'ի մատենագիրս Իտալիոյ արդիս անուանեալ զնա :

Բայց թէպէտև յայս ամենայն գիտութիւնս վարժ եւեթ մարթ է ասել զՖերրանտ, սակայն վարժապետ արժանի էրև կոչելոյ յատկապետական գիտութեան : Ձի ոչ միայն վարժապետաբար ճառէր զայնմանէ, այլ և ալաչէալ՝ մատնէր յաշակերտս 'ի ինգիրս պատուոյ, և տայր միշտ զայնցանէ վճիռ : Էին 'ի գլխաւոր նորա, եթէ օրէն է ասել և 'ի մահ, գրեան երևելագունից մատենագրաց զայնմանէ, Փաբիոսեայ Փոլցոյի, Ֆաւսթոսի Լոնճիանեայ, Ուրբէայ Մուցիոյ,

Ռոմէի, Ալպերիանեայ, Ֆորնոյի առաջնոյ և երկրորդի, և զԹորգուատեայ Թասսոյի՝ զորոյ 'ի պատրաստի ունէր, և գիտէր ըստ տեղւոյն ածել զհատուածս 'ի վկայութիւն, յԱզատութենէ և 'ի Նուաճմանէ Երուսաղեմի 'ի վէմս ասպետութեան : Բայց գլուխ մատենագրաց 'ի մասինս յայսմիկ համարէր զՔրանչէսքոյ Պիրակոյ, ընդ որում ոչ գուն ուրեք կայր գատողակից 'ի վէմս պատուոյ, և նա զՖերրանտեայ խօսէր մեծարանօք : Եւ յորմէ հետէ եկեն 'ի լոյս գերագոյն մատենագրքն խօսք առաքինական , գուշակեաց Ֆերրանտ աներկբայելի՝ զի մատեանն այն ստուերած Ոլևանեայ մատենագրութեանն ածելոց էր, և ընդ այլ գիրս իւր որպէս մատեան օրինաց առ յետինս հանդերձեալ էր կալ գալով չափ գուշակութեանն ակն յայտնի ամենեցուն, ասէ պատմիչն անանուն :

Այսպէս անցանէ 'ի գպրութիւնս զուարճալիս. այլ ես սկանիմ երկմտել՝ թէ երջանիկ արդեօք կամք ընթերցողաց յառաջ ևս խաղալ ընդ նմա 'ի գրաւորակաս ասպարիզն : Նա աւանիկ և խելամտ՝ վաղ իսկ արժանի լեալ անուան ծառայաբար օրինակողի, և տաղտկացուցեալ զնոսա՝ ցայսմայր արտաքոյ առաջարկութեանս գերելով անխորհուրդ զհետ անանուն պատմագրին, որ 'ի հանդէս արդեօք հմտութեան իւրոյ, և առ 'ի ցուցանել՝ զի էր 'ի յետնոց ոք յԻւրում ժամանակի, երկարէ զճառս : Սակայն որ լինչ 'ի նմանէ 'ի կիր առեալ գրեցի, Թողում ամբողջ առ 'ի հետրուսանել զվաստակ

լմ, զանց զնիւսդորդօքն արարեալ՝ առ ՚ի գառնալ՚ի կարդ պատմութեանս. մանաւանդ զի և առսլարեզ երկայն առաջն կայ մեզ տակաւին յառաջ քան զպատահել անդրէն մերոցս դիւցազանց, և երկայնագոյն՝ առ ՚ի հատանել զհետ առաւել ցանկալեաց, եթէ լցեն և ընթերցողաց ցանկալի։

Մինչև ցաւուրս աշնայնոյ յաջորդ տարւոյ, որ էր ամն 1629, կային ինային ամենեքեան, որ կամակար և որ ըստ հարկի, ուր և որպէս թողաքն զնոսա, և ոչ արժանի ինչ յիշատակի անցին ընդ նոսա անցք։ Եհաս աշունն, յորում Ագնէս և Լուչիա համարեին գալ առ միմեանս. այլ մեծ ինչ պատահար հասարակաց ՚ի դերև եհան զոյս նոցա, և այս՝ մի՚ի թերեւս հետևանց արկածիցն էղև. եկին զհետ մեծամեծ և պատահարք, այլ և ոչ այնոքիկ ածին ինչ նոցա յերջանկութիւն բաղդի։ Յետոյ ապա պատահեցին արկածք այնպիսիք ծանուննք հանրականք և առանձնականք, զի հասին և առ նոսա, և առ նուաստագոյնս իսկ քան զնոսա, որպէս սահակ մըրիկ՝ զի արմատաքի խլէ զմայրիս, պարիս տապալէ, կործանէ ըզրմ և զաչտարակ, և զաբերակս չուրջ՚ի բաց արկանէ, մինչև զմշէզ իսկ ծածկեալ ընդ բուսոյք, և զտեղիս յանկիւնս և ՚ի խորս ՚ի թերեւս ինչ հողմոյ վարեալ յափշտակէ առնու յաւարի։

Այդ առ ՚ի գիւրիմաց առնելոյ զանց գուշնաքեայս և առանձնականս, ըզրս առաջի կայ մեզ պատմել, հարկ է մեզ համառօտիւ անցնել և զհանրականօք, փոքր մի ՚ի հեռուստ սկիզբն առեալ։

ԳԼՈՒԽ Ի.

Յետ խռովութեանն, որ եղև ՚ի ժողովրդեան Մարսիլիոսի և ՚ի վաղիւ անդր, դարձաւ որպէս առ աչօք ինն տեսիլ լինութեան ՚ի Մլեան. առաւօտութիւն հացի և ալեր, և գիւրագնութիւն որպէս յամս լինութեան։ Որք միանգամ յերկոսին յայնոսիկ աւուրս աղմիկ կերկերեալ էին յալաղակելոյ, և առաւել ևս ինչ քան զաղաղակ ՚ի կիր արկեալ, բայ ՚ի սահաւուց անտի ըմբռնելոյ, պանծային ընդ գործեցեալն, և ոչ զկայ առնուին ՚ի գործելոյ զնոյն՝ ընդ դադարել առաջնոյ երկիւղին ՚ի ձեռս անկանելոյ։ Ի հրապարակս և յանկիւնս փողոցաց և ՚ի գինետունս պար ցնծութեան յայտնապէս յօրինէին, խնդակից լինէին ընդ միմեանս, և խրոխտանային՝ որպէս թէ գտեալ զհնարս հնուազելոյ զհինս հացի։ Բայց խառն ընդ ցըն-

ծուխեան և խրոխտանոյց՝ կային յերկիւղի և
՛ի կասկածանս ոչ ընդ երկար տեւէին յաջո-
ղութեանն, զի ոչպէս խոկ մարթէր տեւել:
Շուրջ պաշարէին զՀացանոցս և զալերթա-
ճառս, որպէս արարեալ էր նոցա յառաջնուն
անցաւոր և վերՙի վերոյ լինութեան՝ ՛ի հատա-
նել Ֆերբերեայ զսակ հացի. վասնէին անխնայ
զՀայց. որոյ միանգամ էր գումար ինչ արծա-
թոյ, գնէին նովաւ հաց և ալիւր ՛ի շահավա-
ճառ, ընուէին յարկղ ՛ի տակառ և ՛ի կաթսայ:
Այսու օրինակաւ էլևէլս առնելով ամենեցուն
զվիճեամբք ՛ի հայթայթել զդիւրագին վա-
ճառն, ոչ միայն կարճառաւ առնէին զլինութիւն,
զի մի ասացից թէ անհնարին զերկարատեւու-
թիւն լինութեան՝ որ ինքնին խոկ էր հնարաւոր,
այլ և զառաջամանակեայ աւելորդութիւն գիւտա-
բացուցանէին:

Եւ ահա ՛ի 15 նոյեմբերի ՛ի հրամանէ քա-
ղաքապետին եհան Ֆերբեր հրովարտակ, զի ո-
րոյ իցէ ՛ի տան ալիւր կամ ցորեան՝ մի կարաս-
ցէ գնել և ոչ դոյզն ինչ այլ, և որոց գիտիցէ՝ մի
կարասցէ գնել հաց առաւել քան զպէտս էր-
կուց աւուրց. և ապա և պատիժ ըստ սահմա-
նելոյ քաղաքապետին կրեսցեն յանցաւորք:
Հրամայեր պաշտօնէից ամենեցուն գուշակել
զյանցաւորս, գտաւաւորաց խնդիր առնել ՛ի
տունս գուշակեալս, հացագործաց ուխտել հաց
՛ի պատրաստի. և սպառնայր յանցաւորաց հնձ-
գամեայ ծառայութիւն ՛ի թէ, և ծանրագոյն
ևս պատուհաս ըստ սահմանելոյ քաղաքապե-
տին: Ա՛ւ ՛ի պահպանել ՛ի մոլ զայսպիսւոյ հրա-

մանի զկատարումն, կարի կորովի երևա-
կայութեան են պէտք. և եթէ ամենայն հրա-
մարատիկ՝ յաւուրան յայնոսիկ հրատարա-
կեալք՝ գային ՛ի կատարումն, հարկ էր գքաղա-
քեանն Մելանու առաւել քան զմեծին Բրի-
տանիոյ ունել նաւատորմիղ ընդ ծով:

Բայց ՛ի հրամայել հացագործաց ունել ՛ի
պատրաստի այնչափ հաց, պարտ էր հայթայ-
թել նոցա ալիւր ըստ բաւականին: Խորհէցան
խառնել որիզ ՛ի հաց, որպէս է սովորութիւն
՛ի ժամանակի պակասութեան ցորենոյ գործել
հաց ՛ի ստածից ընդդէմ ձաշակելեաց: Ի 23 նո-
յեմբերի եւ հրովարտակ ՛ի հրամանէ համբա-
րատեան և երկոտասանից, բառնալ կէս ՛ի
կէսՙ առ որս կայր որիզ թեփոտ. և որոց ինք-
նահրաման անօրինէին այլազգ՝ սահմանէր պա-
տիժ կորուսանել զորիզն, և տուժել սկուտս
երիս առ քոռ. պատիժ արգար, որպէս ամե-
նայն ուշիք է յայտ: Այլ հարկ էր գնել որիզ,
որ ծանրագին յոյժ էր քան զցորեան. և ընդ
զանհնարին առաւելութիւն ծախուցն ծանրա-
նայր ՛ի վերայ քաղաքին: Վասն որոյ ժողով
տանպետաց խորհուրդ կալաւ ՛ի նմին խոկ ա-
ւուր ՛ի 25 նոյեմբերի, առնել աղիւս քաղա-
քապետին՝ զի էր հնար տանել զբեռնն զայն:
Եւ նա հրովարտակաւ յ7 դեկտեմբերի սահ-
մանեաց սակ թեփոտ բրնձոյ երկոտասան լի-
տրայ առ քոռ. և որ աւելի քան զայն պահան-
ջէսցէ, կամ չկամիցի ըստ այնմ սակի վաճա-
ռել, կորուսցէ զորիզն, և տուժեսցին նոյնչափ,
և ծանրագոյն ևս կրեսցէ ոտյժ և պատիժ մին-

չև 'ի Թէ, ըստ սահմանելոյ քաղաքապետին ըստ տեղւոյ և ըստ անձին: Իսկ անթեւք բրնձոյ վաղ իսկ սահմանեալ էր սակ նախ քան զԼուս-վուԹիւնն, որպէս և բարձրագոյն սակ ցորենոյ և այլոց արմտեաց այլովք հրովարտակօք, որ ոչ հասին առ մեզ:

Ի պահել այսպէս դիւրագին 'ի Մելան հացի և ալեր, ղհետ գայր դիմել անդր խուռն բազմուԹեան արտաքուստ առ 'ի դնել: Վասն որոյ արգել Կոնծալոյ հրովարտակաւ 'ի 15 դեկտեմբեր, մի հանել 'ի քաղաքէն հաց առաւել քան զքսան վղոյղ, և յանցաւորաց կորուսանել ղՀացն, և տուժել ֆռուս քսան և հինգ. և որոց չկոչ ձեռն բաւական 'ի տուժել, արբցեն հրապարակաւ գան, և կրեսցեն պատիժ ըստ սահմանելոյ դարձեալ քաղաքապետին: Եհան և միւս այլ հանդիպն հրովարտակ վասն ալեր և ցորենոյ 'ի 22 նոյեմբերին ամոյ. այլ առ ի՞նչ այսպէս անագան, ոչ է գիտելի:

Ամբոխն կամէր զևուԹիւն ազգաւ և հրդեհիւ, իշխանուԹիւնն՝ պինդ ունել զհրովարտակն գանիւք և Թիովք. հնարք երկուսեքք համեմատք. այլ որչափ ինչ այսոքիկ օգնէին յԼս իւրաց՝ գատեացեն ընԹերցողք. և տեսցեն ընդ հուպ Թէ հասի՞ն 'ի կէտ նպատակին: Դիւրին է տեսանել, և ոչ ընդունայն լինի նկատել, զի հնարքն այնոքիկ նորանշանք՝ հետևանք էին սահմանելոյ զսակ հացին այնչափ նուազ քան զօրինաւոր գինն, իմա քան զայն՝ զոր պահանջէր համեմատուԹիւն պետոյից ընդ չափոյ: ՉայԹայԹանք այսպիսիք Թուին միշտ բազմու-

ԹեանՀ, և հարկ իսկ է զի Թուիցեն, ոչ միայն իբաւացի՝ այլ և պարզ և դիւրին 'ի գործ. վասն որոյ և յանձկուԹիւնս իւր և 'ի տառապանս սովոյ՝ բնական է նմա խնդրել զայնս, և եԹէ կարէ՝ պահանջել ևս ուժգին: Վասն այնորիկ յերևել տակաւ հետևանացն՝ պարտ է որոց անկն իցէ՝ զառաջս ունել զայնց օրինօք, զի մի զառածանիցեն ուր մեզ:

Կրկին գլխաւոր չարիք ղհետ եկեալ էին խռովուԹեանն. ապականուԹիւն և կորուստ պաշարոյ յաղմկի անդ, և վատնումն նոցին անխնայ անխորհուրդ և անչափ ցորչափ տևէր սակն այն, սպառեալով սակաւուն այնորիկ ցորենոյ՝ որում պարտ էր բաւել մինչև 'ի նոր հունձս: Ցայսոսիկ հետևանս չարեաց հասաբակաց՝ յաւել և զՀշուառուԹիւն չորեցունց գլխաւոր խռովարարաց, յորոց երկոքին առ Փայատոնեցն հայանոցաւ կախեցան, և երկոքին յԼս ուղղոյն՝ ուր էր տուն համբարպետին:

Վեպք ժամանակին այնպէս համառօտիւ անցանեն, զի չկ 'ի նոսա և ակնարկուԹիւն Թէ երբ և որպէս գադարեաց սակն այն բռնի. և եԹէ օրէն իցէ, առ 'ի չգոյէ սոցա աւանդուԹեան, գուշակուԹեամբ ինչ ասել, յոժարիմք համարել զդադարումն նորին սուղ ինչ յառաջ կամ յետոյ քան զ24 դեկտեմբերի: Իսկ այլ հրովարտակս յետ վերջնոյն՝ զոր ասացաք հրատարակեալ 'ի 22 նոյեմբերին ամոյ՝ չգտանեմք և ոչ մի զպարենից, Թէպէտ իցեն կորուսեալ, Թէպէտ անտես 'ի հետազօտուԹենէ մերմէ և-

ղեալ, և թէ անհետ զայնոսիկ արարեալ էիմա-
նայ վհատեցոյց, կամ ուսեցոյց զակարութիւն
այնոցիկ, կամ խրատեցոյց յարկածից զհետ ե-
կելոց: Ա՛յլ գոանեմք առ պատմիչս, յօժա-
րեալս՝ի սաստգրել զարկածն ծանուցեա՛ քան
՝ի յուշացանել զպատճառս նոցին, զնկարագիրս
երկրին և մանաւանդ զքաղաքին՝ի խոր ձմե-
րայնի անդ և՝ի գարնայնի, յորժամ պատճառք
էարեացն՝ զանբաւականութիւն ասեմ պաշա-
րոյ առ պիտոյս, փոխանակ՝ի բաց բառնալոյ՝
յաւելուածն՝ի հայթայթանաց անտի առժամա-
նակելոց, յորժամ չէր հնար ածել արտաքուստ
ցորեան՝ առ՝ի չգոյէ բաւական գանձուց հա-
սարակաց և իւրաքանչիւրոց, և յորժամ առ
նուազութեան բերոյ չորկակաց վայրաց, առ
պակասութեան և անփոյթ լինելոյ տուրքա-
ւիկ վաճառակցութեան, և վասն օրինաց իսկ
օժանդակելոյ և հաստատուն ունելոյ զգիւ-
րաքնութիւն, յառաջ խաղայր պատճառ սո-
վոյն՝ կամ մանաւանդ սովին ինքնին, անխափան
ամենայն զօրութեամբ: Եւ ահա պատճէն ա-
ղետալի նկարագրին:

Ամենայն ուրեք փակեալ կային կրպակք,
գործարանք գրեթէ առ հասարակ ամայիք.
Ճանապարհք աւերատն անպատմելի չանդի-
մանն առնէին, երթևեկ աղետից անընդհատ,
և օթևան վշտաց մշտնջենաւոր: Մուրացագ սո-
վորականաց անհետ լեալ էր թիւ՝ խառնեալ
՝ի նոր խուժան կարօտելոց. զի ոչք երբեմն
ընդունէին՝ի նոցանէ ողորմութիւն, արդ՝ի
միասին ընդ նոսա խնդրեն զայն, կարկառելով

և նոցա ալ՝ի մոյր: Համբակք և պատանիք՝ի
բաց արձակեալք՝ի կրպակաւորաց և՝ի վաճա-
ռականաց՝ վասն նուազելոյ կամ՝ի սպառ գա-
գարելոյ հանապազորդ տուրքառից, սակ-
պեալք կեալ՝ի նշխարաց շհոուց իւրեանց և՝ի
գոյից. և տեսլք նոցա անանկացեալ և կործա-
նեալ առ՝ի չգոյէ գործառնութեանց: Գոր-
ծատուրք և ճարտարք ձեռագործաց և արուես-
տից, խոնարհաց և բարձրագունից, կալուածոց
և առ՝ի շուք հնարելոց, թափառականք գրա-
նէ՝ի գուռն և փողոց՝ի փողոցէ, յեցք յան-
կիւնս, ընկղմանեալք՝ի սալայատակս առալի
տանց և եկեղեցեաց՝ խնդրել կողկողելով ողոր-
մութիւն, տարակուսեալք ընդ պէտս և ընդ
ամենի չէ ևս նուաճեալ. նիհարեալք, նուա-
զեալք, երեսթացեալք՝ի ցրտոյ և՝ի քաղցոյ,
ծածկեալք ցնցոտեալք, զնշանակս հետ առաջ-
նոյ բարեկեցութեանն՝ի դէմս բերելով. և յան-
գործութեան անդ և՝ի վհատութեան զսովո-
րական ժրութեանն իւրեանց և զարհուրեան
չգիտեմ որպիսի ինչ տալով ցոյց: Սպասաւորք
համակամբեալք ընդ եղկելի ամբոխին՝ ոչ գոյզն
ինչ մանն նորին կազմելով, արձակեալք՝ի տե-
րանց իւրեանց՝ի բաւականութենէ՝ի կարօ-
տութիւն անկելոց. յորոց կէսք թէպէտ և տա-
կաւին ունեւորք, այլ ոչ ևս յայնպիսւոյն ամ
բաւականք՝ի պահել զպար սպասաւորաց: Ընդ
իւրաքանչիւրս յաղգի ազգի կարօտելոց անտի
էին և մանկունք և կանայք և ծերք, սովո-
րեալք՝ի վաստակոյ նոցին կեալ, և արդ՝ի միա-
սին ընդ նոսա մուրացկիք:

Էին և ՚ի ֆաջաց անտի անուանելոց ոչ սա-
կաւք, ծանօթք ՚ի գիսակացն խուռեալոց և յաղ-
նուական զբաստուցն պատառոտելոց, ՚ի կեր-
պարանացն և ՚ի նշանաց սովորութեամբ ՚ի
դէմս նոցա տպաւորելոց, այնչափ առաւել
ակնեղիւ՝ որչափ ղի անընդելական: Ոչ սակաւք
ասեմ ՚ի ֆաջաց անտի, որոց կորուսեալ ըստ
հասարակաց արկածից զհոգ իւրեանց եղեռ-
նաւոր, խնդրէին զայն յողորմութիւն. սովալը-
լուկք, ՚ի պղատանս ևեթ նախանձորդք պա-
լոց, ահաբեկք, յապուշ հարեալք՝ գնալով ՚ի
քարշ ընդ ուղիս, յորս երբեմն բարձր՚ի գլուխ
ձեռվին կասկածագին և վայրագ հայեցուք, ըզ-
գեցեալ պայծառս և նորաձև, փեստուրք բար-
ձունք զգլխով, ՚ի զինս ոսկեփայլս և արծա-
թափայլս, պերճապատիճք, իւղաթուրմք. և
խոնարհեալ արդ զձեռս, զորս յաճախ սպառ-
նալից ձգէին լերեռն և ՚ի հարուած:

Այլ տեսարան գժպհի միանգամայն և աղե-
տալի կացուցանէին չինակունք, որ զպգ, որ
միմնակ, որ ընտանեօք, արք և կանայք, ման-
կամբք ՚ի գրկի, կամ բարձեալ ՚ի յուս, կամ
կալեալ զձեռանէ, և զհետ նոցա ծերք. հէնք
՚ի նոցանէ կողոպտեալք և ՚ի բաց վարեալք ՚ի
բնիկ կամ լեհաւոր զինուորաց, և փախու-
ցեալք յուսահատ. որք առ ՚ի շարժել զտե-
սողս ՚ի գութ, և առ ՚ի յայտնել զաղէտս իւ-
րեանց, ցուցանէին զկապուտակ երաշխեպս և
սպիս հարուածոց՝ զորս ընկալեալ էր նոցա ՚ի
պաշտպանել սակաւուց ճնացուածոց պարենից
իւրեանց, կամ առ ՚ի զերծանել ՚ի ժպիրհ և

յանամնական խեռուԹեանց նոցա: Եւ կէսք
ԹէպԹեւս յարկածից անտի զերծեալք, տապ-
նապէին յերկուց այլոց՝ յորոց ոչ ոք էր ազատ.
յանբերուԹենէ երկրի, և ՚ի հարկաց ծանուհց
անտանելեաց, վասն կոչեցելոց պիտոյից պա-
տերազմի. և ոտիպէին ՚ի քաղաք անդր դիմել
իբր ՚ի կայեան և ՚ի յեսին ապաստան ՃոխուԹեան և առատաձեռնուԹեան: Յայտնի էին
եկք տեսողաց, ոչ միայն ՚ի տարտամ ընԹացիցն
և ՚ի նոր կերպարանաց, այլ առաւել ևս ՚ի զար-
մանաց և ՚ի գժկամակուԹենէ գտանելոց անդ
այնքան բազմուԹիւն քան զվիճանս եղկելեաց,
ուր կարծէին երեւել արժանագոյնք կարեկ-
ցուԹեան նոր օրինակք, և ձգել զաչս յինքեանս
և զողորմուԹիւն: Եւ որք յաւուրց հեաէ ՚ի
բազմաց կամ ՚ի սակաւուց ՚ի փողոցս անդ բնա-
կէին՝ օժանդակեալք ՚ի նպաստից անկելոց նո-
ցա ըստ բախտի, կարի յոյժ քան զվկաս իւ-
րեանց նուազագունից, խորագոյն և խոնջ բե-
րէին ՚ի դէմս իւրեանց վհատուԹիւն:

Էին ՚ի փողոցս անդ առ որմովք տանց կոյսք
յարդից կոխոտելոց խառն ընդ խուխս ապտե-
ղիս, շնորհեալք յողորմածոց ՚ի խշտի եղկե-
լեացն, և ՚ի բարձ գլխոյ ՚ի գիշերի: Երբեք եր-
բեք և ՚ի տուէ էր տեսանել անկեալս ՚ի նոսա
կամ ընկղմանեալս վաստակաբեկ, կամ նուա-
ղեալս ՚ի քաղցոյ, ապկիարս կալ կոտնն: Էր
զի և բերէր ախուրն այն խշտի գիսակն ՚ի վե-
րայ, և էր զի այլ ոք յանկարծ անկեալ անդր
գիսկնանայր: Տեսանէիր յազգականաց զոք
կամ յանցաւորաց խոնարհեալ ախտակցաբար

առ ուամբք, 'ի խչոխ անդր ձգեալ 'ի գորովոյ: Երկեր ուրեք ուրեք և օգնութիւն կարգեալ 'ի Ճոխ ձեռանէ սովորելոյ 'ի բարերարել, յաջոյ ասեմ Կարդինալին: Ընտրեալ էր նորա ելից գնացուհս վէց, յորս ընութիւն սնդակաղմ կը-ցորդեր եռանդուն և երկայնամիտ սիրոյ, և բաժանեալ էր զնոսա 'ի զոյգ 'ի զոյգ, կարգեալ զուգից իւրաքանչիւր զերիր մանն քաղքին 'ի յայց, և զհետ նոցա բեռնակիրս՝ որ ածէին կերակուր և գեղս կազդուրիչս և ձորձս: Հանապազօր ընդ առաւօտս յուղի անկանէին ամուքն երեքին յայլեայլ կողմանս, մատչէին առ լքեալ անկեալս 'ի գեանին, մատակարարէին նոցա զպէտս կարևորս: Կէսք 'ի նոցանէ ոչ ևս կարելով առնուլ կերակուր, ընդունէին զվերջին նպաստս և սիրտխնամ հոգեւոր: Ֆազդելոց մատուցանէին հաց, թան, ձու և գինի. սովալուկ նուաղելոց՝ արդանակ և պարարտ ըմպելիս, և անապակ զօրաւոր, 'ի զգայութիւն զնոսա ըստ պիտոյից բարկ հիւթովք դարձուցեալ: Հաշխէին ձորձս ևս 'ի ծածկոյթ վշտալի և տգեղ մերկութեան:

Եւ ոչ այսչափ միայն, այլ պատրաստեալ ևս էր նոցա հովիւն քաջ՝ ոչ առ ժամայն ևթե նը-պատաս, այլ երկարատև, գէթ ցոր վայր էրն ձեռնհաս: Եղկեղեաց՝ որոց նախկինն այն կազդուրումն տայր զօրութիւն յոտին կալոյ և գնալոյ՝ տային արծաթ, զի մի դարձեալ առ կաթսուրեան յառաջին աղէտն անկանիցին. այլոց հայթայթէին պատապարան և պարկին ուրեք 'ի մատակայից տանց: Ճոխք յատկարանս

իւրեանց ըստ տպաւորանաց Կարդինալին ժողովէին զնոսա վասն ողորմութեան. իսկ յողորմածոց, որոց ձեռն չէր բաւական կերակրել և զեղկելեսն, ինդրէին երկնուիք ընդունել զնոսա առձկաւ, հատուցանելով 'ի մանկ գուժմոր ինչ առ ժամայն 'ի ծախս: Եւ տային ժողովրդապետաց զհամար պատապարելոցն, որպէս զի կարասցեն այց առնել նոցա, և ինքեանք և դառնային յայց:

Ոչ է հարկ ասել՝ զի Կարդինալն ոչ 'ի ծայրագոյն տառապանն պահեալ էր նոցա զհոգ և զինամ, և ոչ 'ի վերջին վիշտս տառապելոցն այնոցիկ սկսեալ էր շարժել 'ի գութ: Սէր նոր բա եռանդնալից հետազօտէր լսէր զամենայն և խնամէր. և ուր չկարէին կանխել, հասանէր փութով ըստ պիտոյից յօգնութիւն: Հայթայթէր հնարս, յաւելոյր զնպաստութիւն, ձեռն արկանէր յարծաթ սահմանեալ յայլ առաքաձեռնութիւնս՝ որոց կարևորութիւն տեղւոյ կայնժամ կարևորագունից. գուն գործէր պատրաստեր զծախս 'ի պէտս սովելոց: Մթերեալ էր նորա ցորեան բազում, և յղեալ 'ի կողմանս կողմանս թեմի իւրոյ՝ ուր նուազագոյն էր պաշար. բաշխեալ էր և ժողովրդապետաց քաղաքին ցորեան և արծաթ, այց առնէր և անձամբ թաղից 'ի թաղս՝ առնել ողորմութիւն. օգնէր ծածկաբար և կարօտելոց ընտանեաց բազմաց: Յարքեպիսկոպոսարանի անդ հանապազօր ընդ առաւօտս բաշխէր որիվ 'ի թան երկու հաղար պնակ, որպէս վկայէ ժամանակակից ոմն պատմիչ Աղէքսանդր Թաւինոյ

քժիչկ, զորոյ բաղում ուրեք լեցի մեզ ածել
զվկայութիւն:

Այս ամենայն ողորմութիւնք, զոր մարթ է
կոչել ամբաւս, 'ի միոչէ ումեքէ 'ի սեփական
ընչից հայթայթեալք, (քանզի չէր սովորու-
թիւն կարդինալին առաստաձեռնել 'ի դոյից
այլոց), 'ի միասին ընդ ողորմութիւնս այլոց՝
թէպէտ և ոչ նոյնպէս առատս՝ այլ բազմա-
թիւս, և ընդ նպաստս զորս ժողով ամենևե-
տաց սահմանեալ էր բաշխել 'ի ձեռն վերակա-
ցուաց համբարոյ, զոյսն ինչ մասն ընուին ըզ-
պետից: Մինչդեռ կէսք 'ի չինականաց մերձ
'ի սովամահ՝ ողորմութեամբ կարդինալին եր-
կարէին 'ի կեանս, այլոց հասանէր նոյն վտանգ.
և առաջինքն ևս ապրեալք, 'ի սպառել առժա-
մանակեայ նպաստիցն, 'ի նոյն աղէտս անկա-
նէին: Պարձեալ և կողմանք, որք թէպէտև ոչ
'ի մոռացօնս անկեալ՝ այլ որպէս նուազ քան
զայլս կարօտք՝ 'ի խոհական սիրոյ էին յետա-
գասեալ, 'ի նոյն վտանգ և նոքա հասանէին:

Բայց պակասութիւն, զոր մահուամբ հանա-
պազորդք 'ի բազմութիւն եղկելեացն գոր-
ծէին, առաւելուն ընդդէմ օրէ. զի գոյնն
խանէին 'ի շրջակայ գիւղից և յանդաստանաց,
և ապա յամենայն քաղաքաց պետութեանն,
ապա յետոյ յօտար ևս քաղաքանուց: Իսկ 'ի
մայրաքաղաքէ անտի ընդհակ կարօտք մեկնէին 'ի
բաց. կէսք առ 'ի խուսել յերեսաց աղէտիցն,
այլք 'ի տեսանել զաչեղի երեսաց գերաւեալ 'ի
մերձոցէ 'ի քաղաք անդր գիմելոց, յուսա-
հատեալ գնային 'ի բաց՝ ուր և մարթէր նոցա

գտանել ողորմութիւն, կամ ուր նուազ էր
բազմութիւն և ելևէջ զմիմեամբք 'ի մերձոցու-
թիւն: Չանդիպէին մեկնեալք ընդ եկաւորս,
տեսարան սոսկալի երերաց, և գուժիկան ձա-
խողակի ելից՝ յոր երկաքանչիւր ուղևորէին.
սակայն սոքա և նոքա զճանապարհ երերանց
գնային, եթէ ոչ առ 'ի վտանել ըզթաիս
առ 'ի չգառնալ ընդ երկնաւ՝ որ առելի լեալ էր
նոցա, և առ 'ի չտեսանել զվայր յուսահատու-
թեան երերանց: Սակայն կէսք 'ի նոցանէ սո-
վալուկք, նուազելոք 'ի զօրութենէ, անկա-
նէին յուղղոյ, և կային ճանչին անդ դիտա-
պատս, տեսիլ աղետալի վշտակաց երերանց,
սոսկումն և յանդիմանութիւն անցաւորաց:
« Տեսէ, ասէ Ինփամոնեի, 'ի ճանապարհին՝
որ գնայ շուրջ զպարսպօք, կին մի մեռեալ
կուրծ կաղամբոյ 'ի բերանի, և Թուէր դեռևս
կրծել զայն առ քաղցն. էր 'ի թիկունս նորա
ծրար, և մանկիկ երիզապատ առ կրծովք՝ ըզ-
ծուծ կաթին ձգելոք խնդրելով: Հասին այլք 'ի
վերայ, առին կարեկցաբար զմանկիկն հէք 'ի
վեր, և ածին 'ի բաց՝ մատուցանել նմա զնախ-
կին սպասն մայրենի »:

Շ.քեզ հանդերձից ընդ ցնցոտւոյ, և պերճա-
նաց ընդ թշուառութեան, յամենայն ժամա-
նակի տեսիլ հակառակ, դադարեալ էր յայն-
ժամ 'ի սպառ. ամենայն ուրեք գրգռեակ հնո-
տի և աղքատին, էէր ինչ խոիր միջակայնոցն 'ի
հիքաց, նոյն կերպարան էր ամենեցուն: Աղա-
տանին գնայր պարզ և անպաճոյճ, էր զի և մաշ-
տեալ և ցծուծ. կէսք՝ զի հասարակաց աղէտից

յեղափոխեալ էր և զբանիս նոցա, կամ ասա-
ւեալ ընչիսաց գոյից, և այլք՝ ալ մի զհատա-
րակաց յուսահատութիւն դրդեսցին ընդդէմ
իւրեանց սէրձանիւք, կամ ալ մի թուեսցին հա-
սարակաց կարօտութեան անկարելիութիւք։ Ձզօրք
առելիք և մեծասելիք, սովօրք ի չքնել թիկ-
նատաձք՝ պարառեալ ի ֆաջաց, գնային յայն
ժամ դրեթէ միայնակ և ակնկոր, որպէս թէ
խոնարհեալ յաղերս խաղաղութեան. իսկ
այլք, որք և ի յաջողութեան էին բարեհամ
բայիք և մարդասէրք, թուէին յայնժամ խոս-
վեալ սոսկացեալ և յապուշ հարեալ ի սեսիլ
ազեսից՝ որ ի վեր էին քան զամենայն հնարս
օգնականութեան, և քան զկար կարեկցու-
թեան։ Որոց ձեռնհասք էին առնել ինչ ողոր-
մութիւն, պարտ էր ընտրել ընդ քաղց և ընդ
քաղց, ընդ կարիս և ընդ կարիս, և ի կարիս-
ւել բարերար ձեռին առ մի յեղկելեացս, յառ-
նէր չուրջ զնոսիս ձիգն՝ որոց էր զօրութիւն
յառաջ մատչելոյ թախանձագինս ի խնդիր. և
ծերք և մանկունք նքթեալք ամբառնային զձեռս
իւրեանց նիհարեալս, և մարք զաղայս իւրեանց
լալագինս ի վեր առեալ՝ յուցանէին ի բացէ,
զկարկամեալս ի նուաղելոյ, ի խանձարուրս
պատառատունս պատեալ։

Այսպէս ձմեռն այն և գարուն էանց. բայց
առեանն առողջութեան սկսեալ էր վազ ազդ
առնել առենին համբարոյց զվատանգ ժանտախ-
տին՝ որ ի վերայ կայր վասն ազեսից յամե-
նայն կողմանս քաղաքին յաճախելոյ, և առա-
ջարկէր ժողովել զմուրացիկս ի բնակարանս։

Մինչդեռ ի քննութեան էր առաջարկութիւնս
այս, և խորհէին ի հնարս ուր և որպէս կա-
տարելոյ զայն, բազմանային օր ըստ օրէ գիա-
կունք ի փողոցս, որով յաւելոյր և վտանգն։
Առեանն համբարոյց խորհեցաւ այլ ինչ հնարս՝
որպէս գիւրագոյն և պատրաստ, համախմբել
զմուրացիկս առողջ և հիւանդ ի մի վայր, և
անդ կերակրել զնոսա և խնամել ի դանձուց
հասարակաց։ Հաստատեցաւ խորհուրդս այս
ընդդէմ առողջութեան առենին՝ որ համարէր
յաճախել համախմբութեամբն այնուիկ զվը-
տանգն, փոխանակ խափանելոյ զայն։

Զգուշարանն՝ որ ի Միլան՝ է գրեթէ քառա-
կուսի, արտաքոյ քաղաքին, ի ձախմէ արևե-
լից գրանն, հեռի ի պարսպաց անջրպետեալ
փոսով ի շրջապատեալ ձանապարհէն, և ի
ջրագարձ առուէն՝ որ պատէ զնովաւ։ Երկոքին
երկայնագոյն կողմանք քառակուսւոյն են իբր
հիսուն քայլափաղ, երկոքին այլք՝ հնգետա-
սան քայլիս ընդհատ. բաժանեալ յարտաքոյ
կողմանէ ի միայարկ սենեակս մանուսս, և ի
ներքոյ գաւթի կամարակապ յերկիս կողմանս,
յարկածածուկ ի սիւնս նրբաւարս։

Շինուածս այս սկսեալ յամին 1489 հրիտա-
կաւ ուրուսն բարերարի, և տակաւ ի կատա-
րուսն ածեալ ի դանձուց հասարակաց և պ-
լովք հրիտակօք և պարգեւօք, սահմանեալ էր ի
սկզբանէ ի պատսպարան ըմբռնելոց ի ժան-
տախտ՝ որ ըստ արկածից վաղնջուց ժամանա-
կաց և յետ այնորիկ իսկ ընդ բազում ժամա-
նակս երևէր սակս, երկիցս չորիցս վեցկից և

մինչև ուղիցս ՚ի գարուս, ՚ի կողմանս կողմանս Եւրոպայ, էր ազի ՚ի մեծի մասին, և էր ազի ընդ երկայն կամ ընդ լայն անցեալ ծայր ՚ի ծայր: ի ժամանակի, զորմէ խօսիմքս, զգուշարանն այն սպասաւորէր ՚ի զգուշութիւն վաճառաց եկելոց ՚ի կողմանց՝ որ չէ ևս էին զերծ ՚ի ժանտախտէ:

Արդ առ ՚ի սահմանել զայն ՚ի նոր պէտս, ոչ պահեցան սովորական կարգէ. այլ շուտափոյթ կատարեալ զմաքրութիւն և զլուացս օրինադրեալս, թողլն անդ ՚ի մի կողմն զվաճառս ամենայն, ետուն տարածանել յարդ ՚ի սենեակսն, մթերեցին համբարս որպէս և որչափ կարէին, և հրատարակեցաւ հրաւէր պատսպարելոյ անդր մուրոզաց ամենեցուն: Բազումք դիմեցին անդր կամակար, ախտակրեալք առ հասարակ, որ ՚ի փողոցս և ՚ի հրապարակս անկեալ գնէին՝ ածան անդր. և ՚ի սակաւ աւուրս եղեն միահամուռ առաւել քան զերիս հազարս: Այժ յոյժ առաւել այնոքիկ էին, որ կացին ինացին արտաքոյ. կէսք ակն ունէլով մեկնելոյ անտի այլոց, և նուաղելոյ վայելելոցյողորմութիւն քաղաքին. այլք առ ընաւորս կան գժկամակութեան փակեալ կալոյ. և կէսք դարձեալ առ ակի, որպէս է սովորութիւն աղքատանաց կասկածել զամենայնէ՝ որ առաջիք կի նոցա ՚ի ձոխից և ՚ի հզօրաց, կամ առ ՚ի գիտել յարգեանց լրոց զբարութիւն հրաւիրեալ նացն, կամ յամենայնէ ասակ չարժեալ, և որ լինչ այլ էր նոցա խնդալի՝ անփոյթ եղեն ձնորհին, յանձն առեալ կալ ՚ի փողոցս անգ վճռակիր:

Իբրև զայն եռես առեանն, զհրաւէր ՚ի բնութիւն փոխեաց. յղեցան պատուիրակք շուրջ գալ ընդ քաղաքն, վարել զմուրացիկս ՚ի զգուշարան անդր, և կապեալս ածել զգերկամակս, տան փող առ մէն մի սահմանեալ: Ասպէս և ՚ի մեծի կարօտութեան վտանգին ՚ի զուր գանձք հասարակաց: Բայց թէպէտ, ըստ կասկածելոյ առեանն և ըստ կամելոյ խակ, յոգունք ՚ի մուրոզաց խոյս ետուն ՚ի քաղաքէն՝ կեալ կամ մեռանել յազատութեան, սակայն ՚ի սուղ ժամանակի պատսպարելոց անդր բազմութիւն, ընդ կամակար և ընդ բռնի, եղև իբր բիւր մի:

Իսկ թէ որպէս սոքա ամենեքեան բնակէին և կերակրէին անդ, առանց իսկ վկայելոյ պատմութեան՝ մարթի է ածել զմտաս. սակայն նըկարագրեն զայն պատմիչք: Ննջէին քսան և երեսուն անկեալք զմիմեամբք ՚ի սենեակսն յայնոսիկ փոքրիկոնս, կամ ՚ի գաւիթս ՚ի վերոյ դոյզն ինչ գարշահոտ յարդի կամ ՚ի մերկ գետնի կծկեալ. զի թէպէտ և հրամայեալ էր պաշտօնէից ածել յարդ գալսր ըստ բաւականին, և փոփոխել զայն ստէպ, այլ յոռի կամ նուազ ածեալ՝ չէր ևս նոցա փոյթ փոխելոյ զայն: Կարգեալ էր դարձեալ հաց ըստ օրինի, այլ որպէս մարթէր յայնպիսեսմ սովի առ այն չափ բազմութիւն հայթայթել հաց ՚ի ցորենոյ. վասն որոյ համեաւէր, և ոչ յանկրաւէ, զի հացն այն յընդոց անհալից, և ոչ ՚ի ստածիչ աչերէ էր գործեալ: Ջրոյ ևս էր նուազութիւն, խմա առողջ և կենդանի ջրոյ. զի ջրհոր

հասարակաց էր առուն այն՝ որ զչքնաղատ որ-
մունկն գնայր յամր, սկսեալ, և ապականեալ
յաղտեղութենէ՝ այնքանոյ և այնպիսի ամբո-
խին:

Ի պատճառս յայսոսիկ մահաւթից, մանա-
ւանդ հիւանդաց և նիհարելոց, յաւէլ և զան-
հարթութիւն օդոյ, զանձրևս երկարատևս,
և զերաշտ երկարագոյն ղՀետ անձրևաց, ընդ
նոսին և զսոթի սաստիկ կանխահաս. յաւէլ և
զյուսահատ գերութիւն, զվշտալն և զդառն
յիշատակ բաժանման յընտանեաց, և բիւր
այլ կիրս վհատութեան և զայրացման՝ զորս ա-
ծեալ էին ընդ իւրեանս, կամ անդ ՚ի նոսին
ըմբռնեալ, զերկիւղ և զահեղիլ մահու յաղետից
անտի յաճախեալ, և լեալ նոցա միւս այլ աղ-
դողագոյն առիթ մահու, և ոչ ինչ այնուհետև
զարմացիս՝ զի կոտորածն այն համարեր առ
բազում և կոչեր ժանտամահ. զի թիւ մեռե-
լոց անդ հանապազօր առաւել էր քան զկո-
րիւր:

Մինչդեռ ամենայն ուրեք ՚ի զգուշարանի
անդ ոչ այլ ինչ էր տեսանել, բայց լքումն,
տագնապ, արհաւիրս, մորմոք և հեծութիւն,
յաւերակ համբարապետաց էր ամէն ապրու-
թիւն և վարան: Խնդրեցին և ընկալան խոր-
հուրդ յաւերակ անտի առողջութեան, զի ոչ
այլ ինչ գոյր հնար՝ բայց եղծանել զոր այնչափ
հանգերձանօք ծախիւք և նեղութեամբ պատ-
րաստեալ էին: Բացաւ զգուշարանն, արձակե-
ցան հիւանդք՝ որ կենդանեօքն մնացեալ էին,
և գիմեցին մոլեգին խնդութեամբ ՚ի գուրս:

Ակաւ հնչել անգրկին ընդ քաղաքն հեծու-
թիւն, այլ նուազ քան զառաջինն և ընդհատ.
եաես քաղաքն անգրկին զամբոխ եղկելեաց,
այլ ոչ որպէս յառաջն խիտ, բայց առաւել ա-
ղիողորմ՝ յածել զմտաւ զորպէսն նուազմանն
նոցա: Ածան ախտաժէտք յաղքատանոյ անդր
՚ի սուրբն Մարիամ Աստղեայ, ուր առաւե-
լագոյնք ՚ի նոցանէ մահացան:

Բայց սկսանէին յայնժամ դաշտորայք օրհ-
նեալք սալսականալ. մուրոզք եկաւորք յա-
գարակաց մերինէն ՚ի բաց յիւրաքանչիւր տե-
ղիս ՚ի հունձս բազմաեռչալիս. և Կարգինալն
բարեգութ յուղարկէր զնոսա, նորահնար ո-
գորմութեամբ ՚ի ձիդն վերջին, բաշխելով որոց
յարքեպիսկոպոսարան անդր գային՝ մանգաղ
և դահեկան առ մէն մի: Եւ գագարեաց սոքա
յառաւուութենէ հնձոց, և ախտն ժանտ օր ըստ
օրէ նուազէր. սակայն տեւեալ մինչև ցաշուն:
Այլ մերձ ՚ի վախճան ահա միւս ևս պատու-
հաս:

Բազում ինչ ՚ի ժամանակին յայնմիկ անցեալ
էին անցք մեծամեծք, որք ըստ առաւելագան-
ցութեան պատմականք կոչին: Կարգինալ Ռիչը-
լեոյ առեալ զԻոչէլլա, ըստ նախապատուհան ի-
մոյ բանից, յարմարեալ էր վեր ՚ի վերոյ խա-
զաղութիւն ընդ Անգղիոյ. առաջարկեալ և ըն-
դունելի արարեալ էր ազգդ բանիւք ՚ի խորհրդ
դեան արքային Գաղղիոյ՝ օգնել գքսին Նևե-
րեայ հզօր ձեռամբ, և համոզեալ զթագա-
ւորն՝ ելանել ինքնին խաղալ առաջնորդել զօ-
րացն: Եւ մինչդեռ պատրաստութենք լինէին

մարտին, կոմն Նասոյի հրամայէր յերեսաց
ինքնակալին ՚ի Մանդուա նորոյ դպսին Թուղուվ
զսահմանան ՚ի Ֆերռինանտ. ապա թէ ոչ, սպառ-
նայր պատերազմաւ առնուլ զայնս: Դուքսն,
որ ՚ի ծանրագոյն վտանգի սայթաքեալ էր ըզ-
խիսան զայն և զվտանգաւոր հրամանն, խրախու-
սեալ յայնժամ օգնականութեամբ Գաղղիոյ՝
առաւել և խուսափէր, այլ պատ ՚ի պատ բա-
նիւք յերկարաձգելով զժխտումն, և խոստա-
նալով նմա հնազանդութիւն, առաւել ինչ յե-
լուման՝ այլ ոչ այնքան ծանրաբեռն անձին: Մեկ-
նեցաւ կոմն ՚ի բաց, յայտ առնելով զօրօք առ-
նել գարձ. և յամենայն մարտի էջ կարգինալն
ընդ արքայի ՚ի գլուխ զօրաց, խնդրեալ անցս
՚ի գքսէն Սաւոյայ: Եղեն բանագնացութիւնք
առանց յաջողութեան, և զօրացան ՚ի Ճակա-
տու գաղղիացիք: Խօսեցան անդրէն, հաստատե-
ցան գաշինք, և ընդ այլ պայմանս խոստացաւ
դուքսն՝ բառնալ կոնծալոյի զպաշարումն Ֆա-
զալեայ, յանձն առեալ ՚ի հրաժարել նորա՝
գումարել ընդ գաղղիացիս, և յարձակել ՚ի
Միլան: Ոչ ծանր ինչ Թուեցաւ կոնծալոյի բառ-
նալ զպաշարումն ՚ի Ֆազալեայ և մոլն անդր
վազվազակի զօրք գաղղիացիք՝ զօրացուցանել
զպահ քաղաքին:

Ցայսմ վայրի գրեաց Աքիլլինի առ Լուդո-
վիկ արքայ զնուագն հռչակաւոր

Sudate, o fuochi, a preparar metalli

«Քրտնեսջիր հուր, ձուլել կազմել պղինձ ՚ի մարտ»

և միւս ևս, որով յորդորէր զնա փութալ դէ-
մել յաղաւաւթիւն սրբոյ երկրին: Այլ խոր-
հուրդք քերթողաց ոչ լինին լսելի, այսպէս
Ճակատագրեալ, և եթէ եցէ ինչ ՚ի վէպս ըստ
խրատու նոցա յաջողեալ գոգիր աներկբայ՝
զի վաղագոյն քան զնորատս նոցա էր այն պատ-
րաստեալ: Կարգինալն Ռիչըլէոյ հաստատեալ
էր ընդ հակառակն դառնալ ՚ի Գաղղիա ՚ի գործ,
որ կաթոլորագոյն Թուէր նմա: Սորանցոյ, պատ-
գամաւոր վէնետից, ընդդէմ այնր խորհրդոյ
խօսեցաւ, այլ Թագաւորն և կարգինալ ոչ ա-
ռաւել ինչ տեղի տուեալ Ճառից նորա քան տո-
ղից Աքիլլինեայ՝ գարձան ընդ բանակին, վեց
հազար հեծ այր Թողեալ ՚ի Սուզա ՚ի պահ ան-
ցից և ուխտի դաշանց:

Ի մերնել բանակին Գաղղիոյ ասեն, գայր
մերձենայր անտի բանակն Ֆերռինանտեայ. և
կալեալ ղերկիւղն Կրիճենաց և զվալթելլինա,
պատրաստէր իջանել ՚ի սահմանս Միլանու: Ի
վերայ այլոց բազում ինաստուց անցանէին բա-
նակին ընդ այն, ազդ լեալ էր առենին առող-
ջութեան՝ զի ՚ի զօրս անդ Ճարակէր ժանտախտ,
որոյ էին միշտ յայնժամ արածք ՚ի բանակին
գերմանացոց, որպէս վկայէ Պարքի ՚ի պատ-
մել զաղէտան՝ զոր յառաջ քան զդար մի ա-
ծեալ էր նոցա ՚ի Փլորենտիա: Թատենոյի, որ
մի էր ՚ի հոգաբարձուաց առողջութեան, զի
էին հոգաբարձուք վեց, ջորք գառաւորք և եր-
կու բժիշկք, յանձն եղև յաւէնէն՝ որպէս նա
ինքն պատմէ, յանդիման առնել քաղաքապե-
տին զահագին վտանգն՝ որ ՚ի վերայ կայր եր-

կրնն յանգիլ բանակին ընդ այն, առ՝ ի գնալ պա-
շարել զՄանդուա՝ որպէս համբաւէրն։ Յամե-
նայն գնացից Կոնծալզի երևի, զի յանկարծ նա
յոյժ ուշնել՝ ի վէպս տեղի՝ որպէս և կալաւ-
այլ որպէս յաճախ պատահէ, ոչ գիտաց կամ
չէզև նմա փոյթ՝ արժանաւոր Թողուլ անգ յի-
շատակ, պատասխանեաւն՝ զոր ետ Թաւտինոյի,
զի ասէր։ « Ինչ ընելիքս չեմ գիտեր. օգուտն
ու անունը, որոնց համար զօրքը պիտոր անցնի
ամկէց, աւելի մեծ են քան զվտանգը անոնց
անցնելուն. բայց ամեն զգուշութիւն ընել կու-
տամ, ու յուսամ որ նախախնամութիւնը զմեզ
կը պահէ »։

Բժիշկքն երկոքեան, Թաւտինոյ և իշխանակից
Նորա Սեբաստիա որդի երևելւոյն Լուդովիկեայ,
առ՝ ի զառաջս առնուլ վտանգին՝ առաջարկե-
ցին յաւուրն անդ, սրպէսզի սպառնալեօք ծա-
նուցից պատժոց՝ չառնուլ և ոչ մի ինչ՝ ի զինուո-
րաց անոն անցաւորաց։ « Այլ չէզև հնար խե-
լամուտ առնել կարևորութեան երացն զվերա-
տեսուչ առնին, առ Թաւտինոյ, զայն բարե-
յոյս՝ որ չկարծէր վտանգ ինչ մահու՝ ի առու-
և առիկ կցորդութենէ այնքանեաց բնութաւո-
րաց »։ Զայս վկայութիւն արժան համարեցայ
ածել այսր զմիոջէ՝ ի զարմանալի արանց ժա-
մանակին. զի յորմէ հետէ սահմանեալ էր ա-
տեան՝ ի խնամս առողջութեան, չէր ուրուք՝ ի
վերատեսչաց նորին խորհեալ զայս այսպէս։

Բայց Կոնծալզ յետ սուղ ժամանակի տա-
լոյ զայն պատասխանի, կոչեցաւ՝ ի Մելան. և
Հզև նմա տրտմալի երթ իւր և պատճառք գնա-

լոյն։ Զի կոչեցաւ վասն ձախող ելից մարտին՝
որոց ինքն էր լեալ սկզբնապատճառ և զօրա-
վար, և զնա համարէր ժողովուրդն չարեացա-
պարտ աղետից սովոյն՝ զոր ընդ իշխանութեամբ
Նորա կրեաց երկիրն։ Իսկ որ ինչ պատճառս
սրածութեանն էր Նորա տուեալ, անդիտա-
նայր ժողովուրդն, և կամ անփոյթ արար, որ-
պէս տեսոյ յառաջիկայս, հոգաբարձուաց և եթ
առողջութեան և մանաւանդ բժշկաց գիտելով
զայն։ Վասն որոյ՝ ի մեկնել Նորա կառաք յա-
պարանեցն յուղևորութիւն, թիկնապահք
շուրջանակի նիզակաւորք, փողարք հեծեալք
առաջի, և կառք ազնուականաց՝ որ զհետ գնա-
լին՝ ի յուղարկ, սուլեր բազմութիւն ման-
կտուց՝ ի հրապարակ կաթողիկեին ժողովեալ,
խառնամբոխ զհետ կառացն ընթանալով։ Եւ՝ ի
մուտս Ճանապարհին՝ որ ածէ՝ ի դուռնն Թիչէ-
նեան, ընդ որ ելանելոց էր, սկսաւ յաճախել
ամբոխն, կէսք սպասելն նմա անդ, այլք անդր
դիմելն՝ անհնձս՝ ի նա արձակելով, և չար քան
զանհնձս՝ քար, աղիւս, կուբծս կաղամբոյ, և
գնատակս աղբի աղբի, զինք սովորականք այն-
պիսւոյ բանակի։ Այլ Կոնծալզ՝ ի ցոյց աներ-
կիւղութեան, կամ առ երկիւղն և ևս զայրա-
ցուցանելոյ զամբոխն, և կամ զի յապուշ ևս
առ փոքր մի հարեալ էր, չսպայր ինչ պատուհար
Թիկնապահացն՝ որ Ճանապարհ ևեթ առնէին
նմա։ Ցայս վայր հասուցեալ ամբոխին զզայ-
րոյթ իւր, ինքնին ապա ցրուեցաւ։

Կոնծալզի յղեցաւ յաջորդ Սփինոլա, որ
անուանի լեալ էր՝ ի պատերազմին Ֆիանարայ,

և պահի ցարդ անուն նորա: Բայց բանակն գերմանացոց, որում զօրավարըը Ռամպալտոյ Իտալացի, ոչ նոյնպէս անուանի՝ այլ և ոչ անշան ոք համբաւով, պատուէր անպայման ընկալեալ էր՝ խաղալ 'ի Մանդուա, և յամենայն սեպտեմբերի եմուտ 'ի սահմանս Միլանոյ: ԶննուորուԹիւն զայնու ժամանակաւ կազմեր դեռևս ըստ մեծի մասին յինքնակամ զօրաց, ընդ բախտախնդիր զօրավարօք, որ մտանէին 'ի ծառայուԹիւն իշխանաց՝ զօրաքն հանդերձ վարձկանեալ: Եւ էին սոքա խիստք 'ի հրահանգս. զի ոչ պակս մարԹ էր հաստատել բարեկարգուԹիւն 'ի զօրս՝ որ դիւրաւ կարէին ապստամբել 'ի զօրավարաց վասն մոռծանելոյ նոցա նորա. ձև կարգս, և խափանելոյ զաւարհարուԹիւն, և Թողեալ 'ի նոսա զդիւշակ՝ ԹօԹափիլ 'ի բաց: Դարձեալ զի և իշխանք՝ որ ունէին զնոսա դունդս 'ի վարձու, դուն գործէին առաւելուլ զնոսա քան զչափ ձեռին բաւականի, վասն որոյ յամր և առ սակաւ սակաւ զվարձս նոցա հատուցանել կարէին, և աւար պատերազմի և կողոպուտ երկրին՝ ընդ որ անցանէին՝ ընդոր զԹերին, այսպէս լռեցեալ պայմանեալ: Չոչափ կաւար է, ոչ ինչ ընդհատ յանուանէն, վՃիռ Վալէնտինեայնի՝ որ ասէր. « Դիւրագոյն է կեբակրել տան բիւր. քան երկուտասան հազար զօրական »: Բանակն Ռամպալտոյի առաւելագոյն մասամբ կազմեր 'ի զօրաց՝ որոց ընդ զօրավարուԹեամբ նորա ամայացուցեալ էր զԻՒերմանիա 'ի հռչակաւորն 'ի պատերազմս աղտիւքն և զհետ եկեալ չարեօք, որ կոչեցաւ

ապա Եչէնտֆէյտ պոպէրաղ. և ամն այն էր մեռաւ անեբորդ յետ այնր պատերազմի: Տեղակալն նորա ածեալ էր անդր զդունդս նորա, և այլոց ևս գնդապետաց առաւելագոյնք՝ էին ընդ ձեռամբ նորա, և էին 'ի նոսա ոմանք, որոց առաջի կայր յետ չորից ամաց տալ նմա առնել ըզչարաչար կատարածն ծանօԹ ամենեցուն:

Զոր արարին քսան և ուԹ հազար հեծեալք, և եօԹն հազար այրուձի 'ի վալԹելլինայ՝ խաղալ 'ի Մանդուա առ ափամբք՝ ուր ծովալիճն Աւտտա բաժանի յերկուս, և ապա անգրէն միացեալ և գետահեռեալ՝ անկանի 'ի Պադուս: Պարտ էր նոցա գնալ ընդ եղը գետոյս զաւուրս ուԹ մինչև 'ի Միլան: Բազումք 'ի բնակչաց երկրին ապաւինէին 'ի լերինս, ածեալ ընդ իւրեանս զկաՀ և զկարասի և զանասունս: Աւյլք կային ինայեին. կէսք 'ի խնամս հիւանդաց, 'ի զգուշուԹիւն տանց 'ի հրդեհէ, և 'ի պահ իրաց ցանկալեաց ծածկելոց ընդ երկրաւ, և կէսք՝ զի չէր ինչ նոցա 'ի կորուսանել, և ոչ լոյս 'ի ձեռս բերելոյ ինչ: Ի հասանել միոյ 'ի գնդաց՝ զկայ ուրեք առնուլ, սփռէին նոյնհետայն զինուորք անդ և 'ի չրջակայս յաւարառուԹիւն, և յափշտակէին որ ինչ կարէին ապառել կամ 'ի բաց ածել, և զայլն ամենայն աւերէին կոր ծանէին և հրոյ տային զկաՀ, զտուն և զախոռս. հարուածէին խոցոտէին զբնակիչս, և բռնաբարէին զկանայսն: Ամենայն հնարք և ճարտարուԹիւն զբծուցանելոյ ինչ 'ի դերև ելանէր, և էր զի յառաւելագոյն վնաս: Զօրք հմուտք 'ի մարԹանս և լայս ազգ մարտի՝ խիլ արկեալ

որոնեին 'ի խորչս տանց, ական հատանէին, փլուզանէին զորմն, հետապօտէին գտանել ինչ ուր և տեսանէին քրքրեալ զՅոզ 'ի պարտէզս և յագարակս. ելանէին մինչև 'ի լերինս, ապշոտել զարջառ և զոչխար. լքանէին յայրս և 'ի նկուղս՝ առաջնորդեալք յանօրինաց, 'ի խընդիր ճոխից ումանց թաքուցելոց. ածէին զնոսա 'ի տուն, և սպառնալեօք հարուածովք և խոշտանգանօք ստիպէին յայտնել զգանձս ծածկեալս: Եւ թողեալ ապա գնային 'ի բաց. աղօտանայր հնչիւն փողոց, և հանգարտեր երկիրն կասկածագին առ վայր մի: Այլ ժամք քանի մի 'ի վերայ անցեալ, ահա անդրէն դափէին թմբուկք ջարագոյժք, աղդ առնելով զգալոցս այլոց գնդի: Որոյ ոչ գտեալ աւար 'ի յափշտակութիւն, զայրագին ևս ածէր աւերած. այրէր զտակառս ունայնացեալս, խորտակէր զդրուճս սենեկաց՝ ուր ոչ ևս էր ինչ, և ատսալիկ ևս կատաղութեամբ ջարդէր զբնակիչս. աղէկաք յաղէտս յաւելուին զաւուրս քան, զի 'ի քան գոնդս էր բանակն բաժանեալ:

Այսահարեալքն այնոքիկ նախ 'ի Քոլիկոյ յարձակեցան, ապա 'ի Պելլանոյ. անտի մտին սփռեցան 'ի Վալտասինա, ուստի խուժեցին 'ի Լեքքոյ:

ԳԼՈՒԽ ԻԹ.

Ընդ աշաբեկեալս գտանեմք առ ծանօթս ոմանս: Յորում աւուր եհաս լուր լքանելոյ քանակին, մերձենալոյ և աւար հարկանելոյ, պարտ էր տեսանել զտէր Ալոնսիոյ՝ առ 'ի քաջ 'ի միտ առնուլ թէ զինչ է սարսափ: Բերան 'ի բերանոյ ընթանայր գոյժ. «Հինգ վեց բիւր կատաղի զօրք կուգայ եղեր. կողոպտեր են Քոգթէնը, այրեր են Փոխմալունան, աւերըշրջեր են Ինթեռոպոլեոյ, Փասթուռոյ, Պառսիոյ գեղերը, Պալտպոլեոյ հասեր են. վաղը հոս են»: Կէսք արշաւէին, այլք զկայ առեալ՝ խընդրէին խորհուրդ 'ի միմեանց խուճապաւ, վտանէին ընդ փախուստ և ընդ կալ ինալ: Գայր կանանին 'ի մի վայր, բուռն 'ի խոյր հարկանէին աբք. իսկ տէր Ալոնսիոյ 'ի մոլ եգեալ փախչել ինչ և է օրինակաւ, ուր և գտանէր ապաս-

տան, այլ ամենայն ուրիք սեսանէր խոչանչալ
թեղի, վառագ ահագին, և ասէր, « Ի՞նչ ընեմ,
ո՛ւր փախչիմ »։

Լերինք ոչ էին անբոյնք, թող զԺուռարու-
թիւն ճանապարհին. ոչ ոք անգիտանայր զհե-
սեսակաց գերմանացւոց սողոսկել կատուաբար
մագլցի՛ ի վեր՝ ուր նշմարանք էին սեսրի։
Ցորդեալ էր լինձն, ընդէր հողմ սաստիկ, առա-
ջեցագոյնք ի նաւավարաց զանգիտեալ՝ թէ
գուցէ սոսկեսցին ածել զինուորս կամ կարա-
սի, ապատանեալ էինն նաւակօք իւրեանց յայն-
կոյս, և նուաղուն ամենք այլք՝ լի նաւորդօք՝
համբաւէին ի վառագի ծանրաբեռնիլ սան-
ջեալք ի մըրկէ։ Այլ ի գնալ հեռի ի ճանա-
պարհէն՝ ընդ որ անցանէին՝ ոչ էր
մարթի գտանել՝ ոչ սայլ, ոչ գրաստ, և ոչ այլ ինչ
կրելի. իսկ հետի՝ չկարէր գնալ տէր Ալոն-
սոյ ճանապարհ երկայն, երկնչէր ևս ի հե-
տամուխ։ Սահմանք Պերգամայ էին ինչ հեռի,
և մարթի էր նմա հեռւակել անդր անընդհատ.
այլ համբաւէր հեծելագունդ ի Պերգամայ
յղեալ՝ գալ հասանել պահել զերեսս սահմա-
նաց ընդդէմ հեռւակաց գերմանացւոց. և հե-
ծեալքն այնոքիկ ոչ ինչ ընդհատ ի նոցանէ
էին գիւք ի մարմնի, եղեռնագործք քան զնո-
սա։ Երթևեկէր եղկելին ի տան իւր անզգա-
կեալ. դիմէր առ Փէրվիզթուա, խորհրդակ-
ցել սահմանել ինչ ընդ նմա. այլ նա սաստնա-
պեալ ի ժողովել որ ինչ պիտանագոյն դոյր ի
տան, ածել թաքուցանել զայնոսիկ ընդ տա-
նեօք և ի խորշս, ձեռքն անցանէր ընչասպառ,

կահ ի ձեռին և ընդ անթովք, և ասէր. « Հի-
մայ հիմայ, սըբիկայ ալ ապահովցընեմ, եաքը
մենք ալ ինչ որ ուրիշներըը կը մտածեն՝ անոնց
պէս կընենք »։

Տէր Ալոնսոյ կամէր զայլևայլ խորհուրդս
իւր յայտնել նմա, և հարցափորձել, այլևս ի
զբաղանս, ի չտալ տագնապի, և յերկիւղի
զոր և ինքն կրէր, դառնացեալ ևս ի տիսրելոյ
Ժողովրդապետին, և անհամբոյր՝ որպիսի էր
երբեք երևեալ, ասէր. « Թողութիւն կընես,
հրամանքդ արգելք ըլլալէն ուրիշ բան չես գի-
տեր. ինչպէս որ ամենքը ձար կը մտածեն, մենք
ալ կը մտածենք. կարծես որ ուրիշներն ալ ի-
րենց կեանքը չէ՞ն մտածեր. կարծես որ զօրքը
քեզի՛ դէմ միայն կուգայ. կընայիր տասնկ նեղ
տեղն՝ գանգըտելու ու ուրիշին արգելք ըլլա-
լու տեղը՝ քիչ մը օգնել »։

Սոքիմբէ և այսպիսի բանիւք խոյս տայր ի
նմանէ, հաստատեալ ի մտի կատարել չտա-
պաւ որ ինչ կարէրն, և ապա կալեալ զձեռա-
նէ նորա, որպէս մանուկ մի, ձգել ածել զնա
ի քարշ ի վերայ մեյ ի լերանց։ Իսկ նա թո-
ղեալ միայնակ և մատուցեալ ի պատուհան,
հայէր, ունկն դնէր. և ի տեսանել զանցա-
ւորս՝ ձայնէր առ նոսա ողբագին, յանդիմանե-
լով ի նմա զնոսա, և ասէր. « Ողորմեցէք ձեր
խեղճ Ժողովրդապետին, ձի մը՝ յաւանակ մը
գոնէ. օգնող մը չկայ ինձի, ինչպէս մարդիկ
էք. գոնէ կեցէք որ ես ալ մեկտեղ գամ. տաս-
նըհինգ քսան հոգի եղէք, գոնէ ալ ձեզի հետ
առէք, մի թողուք զիս սա չունեղրուն ձեռքը։

Ձէք գիտեր որ մեծ մասը լուսաբերական են, քահանաները սպաննելը բարեգործութիւն կը սեպեն. կուզէք որ մարտիրոս ընեն զիս, ինչպէս մարգիկ էք »:

Եւ առ այս ոմանք ասէր ցայտասիկ. առ կոթողացեալը ընդ բեռամբ աղքատին կահուց՝ ղրկս կրէին, հոգալով զթողեալն 'ի տան, վարելով առաջի զանասնեակս, ածելով զհետ ղորդիս՝ բարձուցեալ 'ի նոսա որ ինչ կարէին տանել, և զկանայս՝ որ բարձեալ բերէին զմանկտին ապկար 'ի ձեմ: Կէաք անցեալ դնային՝ առանց տալոյ ինչ պատասխանի, առանց 'ի վեր եւս հայելոյ. և ոմանք ասէին. « Ի՞նչ տեսակ մարդ, Թող ինքն ալ մեզի պէս ընէ. երանի՛ իրեն՝ որ ընտանիք ալ չունի, ինքը զինքը միտակ պիտոր հոգայ »: Իսկ ինքն ասէր. « Մեղք ինծի, ինչ անգութ մարդիկներ են, եղբայրասիրութիւն չէ ձեզի, ամենքը իրենք զիրենք միտակ կը հոգան, զիս մոռցող մը չկայ »: Եւ դառնայր գնայր 'ի խնգիր աղախնոյն. աղախինն ասէ.

« Հապա ստակները »: —

« Ի՞նչ ընենք »: —

« Տուր ինծի, տանիմ պարտէզը Թաղեմ ալ ծաթեղէններուն հետ »: —

« Բայց »... —

« Բայց, ինչ բայց. տուր սըտունք ինծի. քիչ մը բան պահէ, պէտք կըլլայ. ձեացածը ինծի Թող »:

Լուաւ նմա տէր Ապոնտիոյ, և երթեալ հանեալ յարկէզէ որ ինչ ունէին, աւանդեաց աղախնոյն. և նա չոգաւ՝ ասելով. « Կերթամ պարտէզը Թուզի ծառին տակը կը Թաղեմ »: Եւ յետ սակաւ միոյ գաբաւ՝ կողով 'ի ձեռին, յորում էր պարենիկ, և սակաւի դատարկ, յորում զետեղեալ փուքով զկտաւեայ իւր և զժողովրդապետին, և տուեալ նմա զժամագիրսն, ասէ. « Գոնէ սըփիկայ առ »: —

« Ո՞ր պիտի երթանք »: —

« Ուրիշները ո՞ր որ կերթան. ճամբայ կելլանք, կը հարցընենք, կը մտածենք ուր երթալիս »:

Յայնմ վայրի եմուտ անդր Ագնէս, կողով 'ի յուս, 'ի կերպ առաջարկելոյ կարևոր ինչ: Հաստատեալ էր և նորա 'ի մոլ՝ կանխել գնալ 'ի բաց, մինչև հասեալ հիւբոցն անօրինաց. զի էր նա միայնակ 'ի տան, ծնացորդաք ոսկերջին՝ զոր անանուն իշխանին էր յղեալ, և՝ 'ի վարանս կայր 'ի սկզբան՝ ո՞ր գնալ ապաւինել: Նոքին իսկ ծնացորդք ակուտին ոսկեաց, որովք յաւուրս սովոյն օժանդակեալ էր, էին նմա արդ պատճառք վշտաց և վարանաց. քանզի լսէր՝ զի 'ի յարձակել զօրացն առաւել 'ի վտանգի կայսին՝ առ որս էր արծաթ, ոչ միայն 'ի բռնութենէ նոցա՝ այլ և 'ի գարանաց քաղաքացւոց: Զի թէպէտ և ոչ ումեք զերկնառաք պարգևն էր յայտնեալ բաց 'ի ժողովրդապետէն՝ յորմէ ընդունէր ըստ պիտոյից մեն մի ակուտ, Թողեալ անտի մասն ազքատաց քան զինքն կարօտեալց, սակայն գրամբ ծածկեալք՝ մանաւանդ առ կարօտեալս՝ 'ի կասկածանս ունելն միշտ՝ զնոսա Թէ գուցէ գուշակիցք ոք: Արդ Ագնէս 'ի Թաքուցանելն ըստ կարի որ ինչ կարէրն ա-

ծէլ ընդ իւր, և ՚ի խորհել զակուանիցն՝ զորս կարեաւ էր ՚ի կրծկալին, յիշեաց զի իշխանն անանուն ՚ի յղէն զայնոսիկ՝ խոստացեալ էր և օգնել նմա յամենայն պէտս, յիշեաց և որ ինչ լուեալն էր զապահովութենէ ամրոցին՝ զի թուչունք եւեթ կարէին մտանել անդր անդրամանի, խորհուրդ կալաւ ինդրել անդ ապատման: Այլ որպէս ծանօթս տալ իշխանին զանձնէ: Յուշ եղև նմա յայնժամ տէր Ապոնոիոյ, որ յետ խօսակցութեանն ընդ Կարդինալին՝ բարեկամութիւն յոյժ ցուցանէր ընդ իւր, այնչափ մտադիւրացոյն՝ որչափ զի կարէր անվտանգ, զի հեռի ևս կալով պատանեացն երկոցունց՝ անկասկածելի էր: Խորհեցաւ առնել նմա զառաջարկութիւնն զայն, որ ոչ միայն չածէր ինչ նմա վտանգ, այլ և հաճոյ յոյժ ՚ի տագնապի անդ թուէր արդեօք հնչելին՝ առաւել քան զինքն ահաբեկելոյ, վասն որոյ գայր առաջարկել նմա զայն: Եւ գտեալ զնա ընդ աղախնոյն, յայտնեաց նոցա զխորհուրդ իւր:

Դարձաւ եհարց տէր Ապոնոիոյ ցաղախինն. « Ի՞նչպէս կերևնայ քեզի Փերփէթուա »: —

« Կըսեմ որ երկինքէն եկած ազդեցութիւն մըն է, պէտք է առանց աւելն կորսընցընելու ձամբայ ելլել »: —

« Եաթը՞ »... —

« Եաթը, եաթը. հոն որ հասնինք, գոհ կըլլանք. հիմայ ան իշխանը ուրիշներու բարիք ընել միայն կը փնտռէ, ինքն ալ գոհ կըլլայ ապահովցնել զմեզ: Հոն սահմանադիրն մտ, անանկ բարձր տեղ, զինուորները չեն հլլեր:

Անկէց ՚ի զատ կերակուրի կողմանէ ալ չենք մտածեր, թէ որ չէ, սա Աստուծոյ տուած քիչ մը բարիքն որ ըմպինայ, լեռներուն գլուխը բանեբրնիս ինչ կըլլայ »: Եւ ՚ի խօսելն զհառեղէսը զպարեկին ՚ի կողովն ՚ի վերայ կտաւեացն:

Տէր Ապոնոիոյ ասէ. « Իշխանը դարձի եկած է, անանկ չէ՞, իրաւցընէ դարձի եկած է »: —

« Թեռ տարակուսիլ կըլլայ այսչափ գիտցած բանեբրնէս ետքը, այսչափ ալ քուռ տեսած բանեբրեդ ետքը »: —

« Ըըլլայ թէ հոն յանկարծ վանդակի մը մէջ կրնանք »: —

« Ի՛նչ վանդակ, հոգիդ սիրես. առանկ միշտ ձախորդ մտմտուքներով՝ բանի մը չենք կրնար ձեռք զարնել, թողուքիւն կընես: Ապրիս Աբենէս, ինչ աղէկ բան միտդ կենկեր է »: Եւ ետքակալ զկողովն ՚ի վերայ սեղանոյ, արկ զբազուկս ՚ի վոհան բառնալիս, և հառ զայն ՚ի թիկ կուսս »:

Յայնժամ ասէ տէր Ապոնոիոյ, « Մէկը չիկայ որ հետերնիս գայ, ձամբայ ցուցընէ. անզգամի մը որ հանդիպինք, որ առ կողմերը միշտ կը պտըտին, դուք ինչ օգնութիւն կրնաք ընել ինծի »: —

« Նորէն քեզի ուրիշ բան մըն ալ առեն կորսընցընելու », ասէ աղախինն. « երթանք հիմայ մարդ փնտռելու՝ որ հետերնիս գայ. ամեն մարդ հիմայ իր բանը հոգալու հետ է. սիրտ ըրէ քիչ մը, շուտ ըրէ, ժամագիրքդ գըրէ խարդ՝ առ »:

Զոգաւ տէր Ապոնոիոյ, և գարձաւ իսկոյն՝

խոյր 'ի գլուխ, ժամագիրք ընդ անթով, ցուպ 'ի ձեռին. և ելին ընդ դռնակն՝ որ հանէր 'ի հրապարակն փոքրիկ: Եւ վակեաց ջայն Փեր-փէթուա, առ 'ի պահել ևեթ զսովորութիւն, զի ոչ 'ի վականն վատահէր, և ոչ 'ի դուռնն, և եդ զբանալին 'ի գրպանի: Եւ հայեցեալ տէր Ապոնոիոյ յեկեղեցին յանցանէն զառաջեաւ, ասէ 'ի մխիթնջ. « Ժողովուրդը Թող հոգայ իր ժամը՝ Թէ որ քիչ մը սիրտ ունի ու կը մոռածէ. Թէ որ չէ, ինքը գիտէ »:

Յուղի անկան ընդ արտորայս, իւրաքանչիւր ոք չըվահայեաց զգուշանալով անձին, և առաւել տէր Ապոնոիոյ առ ահի՝ Թէ գուցէ երեւեսցի ոք ուստեք կեղակարծ անսովոր, այլ ոչ ոք պատահէաց. ամենեքեան 'ի տունս իւրեանց կային 'ի պահ, կապէին ծրարս, Թաքուցանէին զկարասի, գնային ընդ Ճանապարհ՝ որ դէպ ուղիղ ածէր 'ի լերինս:

Տէր Ապոնոիոյ հառաչէր, յոգւոց հանէր, բացագանչէր, քրթմնջէր զդէսն Նևերեայ, և ասէր. « Թող գաղղիա կենար, վայելէր իր իշխանութիւնը, ուրիկէց միտքը ինկաւ ամենուն կամքին դէմ Մանդուայի դուքս ըլլալ »: Եւ վինքնակալէն ասէր. « Անոր ալ պարտքն էր որ քիչ մը ուրիշներն ալ մոռածէր, Թողուր որ ջուրը դէպ 'ի վար վազէ, միտքը գրածին վայ չէյամաձէր. ով որ ալ Մանդուայի դուքս ըլլար, երբե՞ն ինչ, ինքը միշտ ինքնակալ էր »: Եւ մանաւանդ զայրանայր ընդդէմ քաղաքապետին՝ որուն անկ էր զամենայն գուն գործել առ 'ի խափանել 'ի բաց զաղէտս, փոխանակ կոչե-

լոյ զնոսա անդր առ սէր պատերազմի. և յաւելլայր. « Պէտք էր հոս ըլլային ան պարոնները, որ տեւնային փորձէին ինչ ըսել է պատերազմ. պատասխան պիտոր տան Աստուծոյ. բայց ի՞նչ օգուտ, յանցանք չունեցողները մէջ կը խաղան »:

Աղախինն ասէ. « Թող տուր հիմայատ մարդիկը, առանցմէ մեղի օգուտ մը չկայ, աւելորդ խօսքեր են. իմ ցաւս գիտեմ ինչ բանի վրայ է աւելի »: —

« Ի՞նչ բանի »: —

Յայն վայր Փերփէթուա 'ի ձանապարհին պարապեալ 'ի խորհել ղերացն Թաքուցելոց շատերաւ, սկսաւ յայնժամ հոգալ և ասել ղի մոռացեալ էր զայս ինչ ուրեք, և այլ ինչ այլուր ոչ բարւոք ծածկեալ, ատ ուրեք հետս ինչ Թողեալ՝ ընդ որս մարթ էր աւազակաց հետևիլ, և անդ ուրեք...

Իսկ Տէր Ապոնոիոյ՝ ոգի առեալ յերկիւղէ մահու, և զատացուածոյն սկսեալ խորհել, ասէ. « Ապրիս, շատ ապրիս, ատանկ գործ ընել կըլլայ, ո՞ր էր խելքդ »: —

Չկայ հառ փերփէթուա վայրիկ մի, և ձեռս'ի կողս յեցուցեալ՝ որչափ կողոպէնները՝ գոչեաց. « Խելքս գլխէս վերցընողը ո՞վ էր. ան ատենը ինծի սիրտ տալու՝ օգնելու տեղը՝ հիմայ զիս կը չեխես: Ես տանը բաները խմիններէս եւել հոգացի, ձեռք առուղ մը եղաւ ինծի, Մարթա ու Մարիամ մեկտեղ եղայ, պարաքէս եւել աշխատեցայ. բան մըն ալ կորսուելու որ ըլլայ, չեմ գիտեր ինչ ըսեմ »:

Կարձեաց Ագնէս զվէճ նոցա, զվիշտ իւր 'ի մէջ բերեալ. զի ոչ այնչափ ցաւէր նմա ընդ կո-
րուստ կարասեացն, որչափ զի 'ի դերև էլեալ էր յոյսն նորա՝ դիւրիկ ընդ հուպ արկանելոյ դըս-
տերն. զի թէ յիշեն ընթերցողք, ժամադիր լեալ էր նոցա տեսանելոյ զարձեալ զմիմեանս յայնմ անշնայնէ, և չէր յուսալ յայնպիսւոյ ժամանակի գալոյ սկիզնոջն Պրաքսեասեայ 'ի կողմանս յայնոսիկ 'ի հովոց, այլ ընդ հակառակն էթէ եկեալ իսկ էր անդր յամարայնի՝ մեկնէր 'ի բաց, որպէս և այլոց ամենեցուն էր արարեալ: Տեսիլ վայրացն առաւել և զարթուցանէր 'ի միտս Ագնեսի զխորհուրդն, և դառնագոյն զվիշտն գործէր: Ելեալ յարտուղեաց անտի՝ երթային ընդ արահետ, ընդ որ եկեալ էր հնչէն 'ի գարձուցանել զդուստրն 'ի տուն՝ այսպէս առ սուղ ինչ ժամանակ, յետ կալոյ ընդ նմա 'ի տան գերձակին:

Եւ ահա երևէր գիւղն այն, և ասէ Ագնէս. « Երթանք տեսանեմք մեր ազնիւ հիւրընկալ նեբը »:

Յաւել Փերփերթուա. « Հանգչինք ալ քիչ մը, վասն զի բեռս սկսաւ ծանրանալ. պատառ մըն ալ բան բերանիս դնենք »:

Յաւել և տէր Ապոնտիոյ. « Բայց չերկընցընենք, զբօսանքի չենք ելած »:

Ամենայն սիրով ընկալան զնոսա գերձակն և կին իւր. խնդութիւն երկուսակէք մեծ, և քաղցր յիշատակ ասպնջականութեան: Աստա-
նօր յաւելու պատմիչն. Բաբգոբծբա որդ և յա-
քեա, և յաճախագոյն էնդի տեղ հանդիպել զնաթբնաբար

էբեայ: Ագնէս 'ի գրկախառնելն ընդ բարեգութ կնոջ գերձակին, եհել արտասուս ուղխօքն, և սփոփեցաւ. և հեկեկանօք տայր պատասխանի հարցուածոց, զոր այր և կին առնէին զդստերէն. և ասէ տէր Ապոնտիոյ. « Ա-
նկակայ հիմայ մեզմէ հանգիստ է 'ի Միլան, ամեն վտանգներէ ազատ, աս ամեն սատանայէն ոտք հանած խռովութիւններէն հեռու »: —

Գերձակն ասէ. « Անոնցմէ կը փախչիք հա՞ »: —

Աստեն միաբերան տէր Ապոնտիոյ և Փերփերթուա. « Անոնցմէ, կայ ու կայ »: —

« Խեղճեր, կը ցաւիմ վրանիդ »: —

Տէր Ապոնտիոյ ասէ. « Իշխանին բերդը պէտի երթանք »: —

« Աղէկ մտածեր էք, ժամու մէջ կեցածէ պէս ապահով կըլլաք հոն »: —

« Իսկ դուք հոս չէք վախնար »: —

« Շնաւակը ըսեմ, Հայր պատուական, հոս չեն եգար անունը, երբենց ձամբէն դուրս է տեղերնիս, փառք Աստուծոյ: Շատ շատ հոս հանդըպիլ ալ որ ուզեն, Աստուած պահէ, տանեն կիմանանք, առալ ուրիշ գեղեր կը կոխեն »:

Խորհուրդ կալան զկայ առնուլ անդ առ վայրս մի և հանգչել. և զի ժամ էր ճաշոյ, ասէ գերձակն. « Կազաչեմ որ առանց նկատմունքի մեր աղքատ սեղանին պատիւ ընէք. տղէկ կերթայ կուր մը ունինք, այսինքն ուրախ երես »:

Փերփերթուա ասէ. « Մենք ալ ծոմ աւրելու չափ հետերնիս բան առած ենք »:

Եւ յետ բարեձաւուածեան բանից ինչ երկուստեք, միաբանեցին ածել 'ի սեղան որ ինչ էր

երկաքանչիւրոյ, և ձաշէլ 'ի միասին: Կային մանկունքն ուրախութեամբ առ Ագնիսի, զոր վաղ ճանաչէին. և ասաց դերձակն ցգաւարիկ իւր, (որ՝ եթէ յիշեն ընթերցողք՝ կած երբեմն զկերակրիկն առ այրին Մարիամ). ասաց վեճեկել 'ի բուճճոյ չագանակս քանի մի երեսայրիս՝ որ կային յանկեան, և խարակեալս ածել 'ի սեղան. նոյնպէս և առ ուսաբերին ասէ. « Դուն ալ պարտէզը գնա, տանձին ծառը թօթուէ, թափածներըը ժողուէ բեր. ամենն ալ, հասկըցար »: Իսկ ինքն չոգաւ բանալ զծորակ փոքրիկ տակառին իւրոյ, և կինն՝ ածել զկտաւիս սեղանոյ. և փերփեթուա եհան որ ինչ էր 'ի կողովին պաշար. ուղղեցին սեղան, եդին յառաջին տեղւոջ վասն ժողովրդապետին պըճնակ մայորիկ և զինջակ, և դաստակերիկ՝ զոր ս փերփեթուայ ածեալ էր: Բազմեցան 'ի սեղան և ճաշէցին ուրախութեամբ, ոչ մեծաւ՝ այլ առաւելաւ քան զոր յուսային յայնսիսում աւուր բազմականք առ հասարակ:

Ասէ դերձակն ցժողովրդապետն. « Աս խոստովութիւններուն ինչ կըսես, Հայր պատուական, կարծես որ Սարակինոսներուն առիներնէք »: —

« Ի՞նչ ըսեմ, աս միայեր էր դէպքնիս գալու »: —

« Բայց շատ ալէկ տեղ ընտրեր էք ապաւինելու. ո՛ր սատանան կրնայ երթալ հոն. ընկերութիւն ալ կունենաք. արդէն լսեցինք որ շատերը հոն ապաւիներ են, եւանէ ալ կուգան »: —

« Կը յուսամ որ ան բարի իշխանը զմեզ ալ կընդունի. վնասը կը ճանչնամ, ուրիշ անգամ եր հետը գանուեցայ, շատ ալէկ մարդ »:

Ագնէս ասէ. « Հապա ես ինչ ըսեմ. կարդինալին ձեռքովը խմացուց ինծի՝ որ ինչ կարօտութեան մէջ որ գանուինք, իրեն դիմենք »:

Յաւել առ Ապոնափոյ. « Խիստ մեծ գարձ, միշտ նոյն մարքն վրայ է, անանկ չէ՞, նոյն մարքն վրայ »:

Եւ սկսաւ դերձակն մանրապատում առնել զարթակրօնութիւնն նորա, և թէ որպէս խրատէ զշրջակայս 'ի բարին, օրինակ բարեաց է ամենեցուն և բարեբար:

Յայնժամ առէ Ապոնափոյ, որ լուեալ էր ինչ ինչ զնմանէ՝ այլ չէիս էր անկասկած, ասէ. « Բայց որոնք որ եր հետը կը կենային, ան ամեն սպասաւորներըը »...

Ի վերայ էած դերձակն. « Մեծ մասը կորսուեցան գայլն. ուրիշներըը վարքերնին փոխեցին, բայց ինչպէս... վերջապէս բերդը Թեբայիդ գարձաւ. հրամանքդ խմացած պիտուր ըլլաս աս բաներըը »: Սկսաւ ապա յուշ ածել Ագնիսի զայցելութիւն կարդինալին, և ասէր. « Մեծ մարդ, մեծ. մեղք որ արտօրնօք անցաւ հոսկէց, չկրցայ մեծարանք մը ընել իրեն. որչափ կը փափաքիմ անգամ մըն ալ հանդիստ հետը խօսելու »:

Եւ յարուցեալ 'ի սեղանոյ, եցոյց նմա զոր պագեր պատկեր նորա մածուցեալ 'ի վերայ դրան 'ի պատիւ, վասն կարելոյ ասել եկաւս-

բաց, որպէս և ասէրն. « Շատ չինմանիր, վասն զի ես աղէկ տեսեր եմ զինքը հոս աս խուցին մէջ »:

Ադնէս ասէ. « Ամիկայ Կարդինալին պատկերը կը տեսնեն. հաւատա, զգեստին ուրիշ բան մը չիկայ որ նման ըլլայ »: —

Դերձակին ասէ. « Իմ ըսածս ալան չէր, միշտ ան կըսեմ. բայց որչափ ալ նման ըլլայ, տակը անունը գրած է, յիշատակ մըն է »:

Բայց ժողովրդապետին ձեռքէր ուղղայ լինել. և յանձն էառ դերձակին դառնալ այլմի՝ ածել զնա միչէ 'ի ստորոտ լերինն. փութացաւ 'ի ճանդիր, և գարձաւ անդէն աղդ առնել՝ զի ըզհետ հասանէր սայլն, և յաւէլ. « Հայր պատուական, թէ որ դիրքը մըն ալ կուզես՝ ճամբան առեն անցընելու համար, կրնամ աղքատաբար ձարել. վասն զի ես ալ երբեմն զբօսանքի համար կը կարդամ. բայց հրամանքիդ պէս գրաբառ դիրքեր չէ, աշխարհաբառ »...—

« Շնորհակալեմ, շնորհակալեմ », ասէ տէր Ադոնիոյ. « անանկ պարագաներու մէջ ենք, որ հազիւ ժամադիրքս կարդալու համար խելք կայ գլուխս »:

Եւ 'ի մեկնելնոցա 'ի միաձանց, մինչդեռ առաջ շնորհակալիք լինէին, անոյ հրաժեշտ այնպիսի բանս լսելոյ, ողջունաւորութիւնք և բարեմաղթութիւնք, հրաւէրք և խոստմունք անդրէն իջանելոյ անդր 'ի գարձին, եհաս ահա սայլն եկաց առաջի գրան: Գնեն 'ի նմա զբեռնիս, և լանեն անդր և ինքեանք, և սկսանին փոքր մի անդորր սրտիւ ընթացեալ կէս ուղղոյն:

Բայց դերձակին ոչ աւելի ինչ քան զձմառոտութիւն էին բանք ընչհանէին. զի յօրէ՝ յորմէ Թողաք զնա՝ էէր գադաբեալ յառաջագրութենէ իւրմէ, փոխարինելոյ զղջկանս, խնդրելոյ հաչտութիւն, օգնելոյ կարօտելոյն, և կարճառօտիւ՝ բարեգործելոյ յամենայն դէպս: Ասրիւթեամբ, որով վերսկսաւ երբեմն այլոց և պաշտպանէր անձին, արդ հրաժարեր յերկաքանչիւրոյ: Գնայր միշտ անդէն, պատրաստ առ ամենայն պատահարս. գադաբեալ յամենայն բռնութենէ, և համարեր բռնութիւն զպաշտպանել իսկ անձին՝ որ այնքանեաց արարեալն էր չարիս, եգեալ 'ի մտի՝ զի ամենայն չարիք ընդդէմ իւր գործեցեալք, թէպէտ Աստուածընդդէմ, այլ առ ինքն էին արդար հատուցումն, և զի նուազ քան ամենայն մարդկան էին իւր իրաւունք վերսկսելոյ այլոց 'ի պաշտպանութիւն իւր: Սակայն ոչ ինչ նուազ էր անվերսկսելի քան յորժամ էին նորա այնքան թիկնապահք, և այնքան բազուկք և իւրն իսկ 'ի պահ անձին: Յիշատակ առաջնոյ վայրենութեանն, և տեսիլ այժմու զգօնութեանն, միոյն 'ի բաց դնել զվերկիմպղութիւն, և միւսոյն առնել զնա այնպէս հեզ և գիւրամատոյց, ազգէին այլոց այնպիսի զարմանս՝ զի հրզօրագոյն գնովաւ էին պահպանք: Ոչ ուրուք երբեք կարացեալ էր խոնարհել զնա, և արդ խոնարհէր իւրովի. ոմանք, որ երբեմն գրգռէին յարհամարհութենէ և յահարկութենէ նորա, զվերսկսէին արդ յերեսաց խոնարհութեան իւրոյ: Թէնամանք ընդ-

ունէին յեղակարծ և անվոտանգ վհատութիւն, զոր չկարէր առնել յաղթող վրէժխնդրութիւն, ՚ի տեսանել զայնքանոյ առն զկնի ընդ անիրաւութիւնս իւր, և զոգեկս իմն զկորդուածիւն նորա ընդ զայրոյթ իւրեանց: Յոգոնք, որոց դառնագոյն և սաստկագոյն լեալ էր վիշտ ընդ երկար՝ վասն չկարելոյ երբեք զբանալ ընդդէմ նորա, և առնուլ վրէժ՚ի նմանէ զանիրաւութեանց ծանուցից, ՚ի տեսանել զնա արդ միայնակ անզէն և անկազմ ՚ի դիմաստրատ յորդորէին՚ի մեծարանս: Զգիտեմ որպիսի ինչ վհատ և ապիրատական, յայնոսիսում կամաւոր խոնարհութեան նորա, ապշէին յանդգնս իւր ՚ի տեսօղս դէմք իւր և կերպ, զի առաւել քան զառաջինն երևէր ՚ի նմա արհամարհութիւն մեծայն վտանգաց: Հեռ, կարի խոկ բռնն և կատաղի, թուէր մնանելոյ՚ի պարտութիւն, և ահիպէր մեծարել առաջի ամենեցուն զայրն ապաշաւ և բարեբար: Այնպէս էր նա պատուական և մեծարեալ յամենեցունց, զի գոնէր յաշխարհի ՚ի տագնապի առ՚ի խոսել, և հարկ լինէր նմա չտալ ինչ ցոյց ՚ի գէմս և՚ի շարժուածս զտարբերանց սրտի և զինքերին խոնարհութեան, զի մի առաւել ևս բարձրացուսցեն զնա տեսողք: Ընարեալ էր իւր յեկեղեցւոջ զբեմին տեղին, և ոչ որ իշխէր կալանդ՚ի յափշտակութիւն համարէր այն. իսկ Թշնամանել զնա, և արհամարհել իսկ, տեղանակապատութիւն իմն Թուէր քան սատակութիւն և վատութիւն:

Այսպէս և այլև պատճառք պահէին զնա

և յերեսաց առնէի, և պատրաստէին նմա ըստ այմ ևս մասին ապահովութիւն, զորմէ չէր իսկ նմա կասկած: Առիճան պատուոյ և ազնուականութիւն ազգատոհմի, որ յամենայն ժամանակի լեալ էին նմա օգնական, առաւել ևս արդ լինէին նմա զօրաւիգն, յաւելեալ յանուն նորա հռչակաւոր և՚ի չարիս՝ վարք առաքինիք և փառաւորեալ գործ: Իշխանք և մեծամեծք և ժողովուրդն խնդակից լեալ էին ընդ նմա հրապարակաւ. և գժպհի իմն Թուէր խառնել ընդ առն, որ մեծարոյ էր ամենեցուն: Դարձեալ և պարտ էր պետութեանն, որ նեղէր՚ի մշանջենաւոր և յաճախ ևս յանյաջող պատերազմ ընդդէմ ասպատամբաց, չառնել ընդ վերծանել իւր՚ի միջէ՚ի նոցունց՝ որ գժդգակագոյնն էր և աննուաճելի, և չպահանջել ինչ այլ՚ի նմանէ. մանաւանդ զի գործ նորա այնպիսի ընոյր զայժմ՝ զորոյ ինքն չէր սովոր առնուլ զնոխարէն, և ոչ պահանջել զայն: Նեղել զայր զգաստացեալ էր դիպող ինչ հնար՚ի ծածկել զամենի չկարելոյ նուաճել զեղեռնաւորս. և պատուհասելոյ զնա ոչ այլ ինչ լինէին արգասիք, բայց խափանել զնմա նիս նորա՚ի զգաստանալոյ: Հաւանելի է՝ զի և անոնց կարգինալին կցորգեալ ընդ գործի իշխանին, օգնէր նմա որպէս վճռոյ: Այսպէս յայնի յայն, որ եթէ սահեալ էր՝ մեծամեծք և փոքունք ոտնկոխ առնէին զնա, ՚ի խոնարհելն կամաւորաբար յերկիր՝ խնայէին ամենեքեան, և մեծարէին զնա բազումք:

Էին և, որք ընդ հռչակ գործի նորա զա-

բէին, արբանեակք նորա Թոշակաւորք, և որք կորուսին զկոչս զօրութիւնն՝ յոր կենուին, և հատան յանկարծ ոստայնանկելոց էարեաց իւրեանց Թելք: Վաղ իսկ տեսաւ քանի հակառակ աղդեցութիւնս արար դարձ նորա 'ի սրիկայս՝ որ կային ընդ նմա, և 'ի բերանոյ նորա լուան զայն. ապշութիւն, ցաւ, կորուստ, զայրոյթ, և փոքր 'ի շատէ յամենայն կրից, բայց յարհամարհութենէ և յատելութենէ: Նոյն և ընդ այլս պատահեաց, որ յայլևայլ տեղիս էին նորա արբանեակք, նոյն և ընդ կցորդս էարեաց գերակայն 'ի հնչել ահագին համբաւոյն: Վասն որոյ և Կարդինալն ոչ տակաւուց եղև տեսչի, որպէս օտարատեսուչ և եղծիչ երից իւրեանց: Այլ ոչ ուրուք երաւունք էին տրանջելոյ զառնէն, զի նա զանձին վրկութիւն կամեցաւ գործել:

Սակայն առաւելագոյնք 'ի սրիկայից ընտանեաց ոչ հանդուրժեալ նորոյ հրահանգացն, և ոչ յուսալով փոխոխելոյ նոցին, հեռացեալ մեկնեալ էին 'ի բաց, էին այլոց տերանց ելեալ 'ի խնդիր, և Թերևս՝ երբեմն բարեկամաց այնորիկ՝ զոր լքանէին, և կէսք զինուորել Սպանիոյ կամ Մանդուայ կամ այլոց պատերազմողաց. այլք գունդ կազմեալ յերկուզակել ընդ Ճանապարհս, և այլք ազատօրէն կինքնուրոյն աւազակել. նոյնպէս և որք յայլևայլ տեղիս արբանեկէին նմա: Որք միանգամ յանձն առեալ էին զնորն զայն կարգ կենաց, բազումք 'ի նոցանէ բնիկք ձորոյն, դարձ արարեալ էին յարտորայս կամ յառաջին արուեստ իւրեանց.


իսկ եկք գրեթէ նոյնհետայն ընդ իշխանին զգօնացեալք, կէին հանգոյն նմին անզկինք և 'ի պատուէ, ոչ ուսմէք ինասելով, և ոչ յուսմէքն կրելով ինաս:

Այլ յիշանել գերմանական գնդաց, ոմանք 'ի նոցանէ փախուցեալ 'ի կողմանց անտի՝ ուր մեալ էին զօրք, կամ սպառնային մոռանել, չդան յամրոց անդր ապաստանել. և իշխանն գոհութեամբ քան մարգասիրութեամբ ընկալաւ զվտարանդեալսն, որոց ընդ այնքան ժամանակս պահպանեալ էր զամրոցն զայն 'ի խըզտուիլ ահարկու: Եւ ետ համբաւել՝ զի բաց էր դղեակ իւր որոց միանգամ խնդրեին անդ ապաստան, և էարկ պահ չուրջանակի, ոչ զամրոցաւն միայն՝ այլ և զձորոյն ընդդէմ գերմանացն և վէնետ զօրականին, եթէ երբէք փորձէին ասպատակել անդր: Ժողովեաց զսպասաւորս, որ առ իւր մնացեալ էին տակաւք՝ այլ կորովիք, խօսեցաւ առ նոսա՝ զի գէպ ժամանակ ընորհէր Տէր նոցա և իւր, օգնել այնոցիկ՝ որք երբեմն տհաբեկեալ և հարստահարեալ էին յինքեանց. և նովին առաջնով հրամայական եղանակաւն խօսելով, յայտ առնէր զվստահութիւն իւր ընդ հնազանդութիւն նոցա: Աղդ արար որ ինչ պարտ էր նոցա առնել, և օրպէս վարել առ 'ի լինելոյ որոց անդր ապաստանէին հիւրընկալս և պաշտպանս: Ետ ածել 'ի տանեաց զամենայն հրազէնս, զսուսերս և զնիզակս՝ որ մեթերեալ կային անդ 'ի խղէ ուրեք, և բաշխեաց 'ի նոսա. և հրամանեաց չինականաց ամենեցունն և վարձուորաց ձո-

բոյն՝ որոց կամէինն դալ անդր զինուք, և որոց անզէնք էին՝ ետ նոցա զէնս: Եւ ընտրեալ ի նո-
ցանէ զնդապետս՝ ունել զայլս ընդ ձեռամբ,
սահմանեաց նոցա կայս ի մուտս և ուրեք ու-
րեք ի ձորն անդ, ի զառ ի վայրին, և առ դը-
րունս ամրոցին, և եցոյց նոցա զժամ և զեղա-
նակ փոփոխելոյ զպահ ըստ ի պատերազմի,
որպէս էր յառաջ յամրոցն անդ սովորութիւն
յաւուրս յուսահատ կենաց նոցա:

Յանկեան ուրեք ի խղի անդ ընդ տանեօք
կային ուրոյն զէնք, զորս իւր միայն արկեալ էր
ի կիր, հրաշէնք և սուսերք ազգի ազգի ընդ
դեռևին կամ յեցք ի յորմ: զայնոսիկ ոչ ոք ի
սպասաւորաց եբարձ, այլ միաբանեցին հարցա-
նել զմրս յայնցանէ կամէր նա, և ոչ մի ինչ կա-
մեցաւ. զի ուխտ եդեալ էր նորա կամ առա-
ջադրեալ կալ անզէն, նորոյ ազգի պահակա-
պանացն առաջնորդ: Դարձեալ և ծառայից և
աղախնայց, և որոց ընդ ձեռամբ իւրով էին,
հրամայեաց պատրաստել յամրի անդ տեղի
բազմութեան, արկանել որչափ մարթ էր՝ մա-
հիճս և խշտի յարդեղէն ի սենեակս և ի սրահս,
որպէս ի ննջարանի: Եւ ետ ածել պաշար ա-
ռատապէս ի պէտս հիւրոց՝ զորս Տէր առա-
քէր, և յաւելուին օր ըստ օրէ: Եւ ինքն էր-
թևեկէր անդադար ի նեղըս և ի դուրս, ի
վեր և ի վայր, ընդ ամրոցն և ընդ ձոր, այց
առնել, զօրացուցանել զպահս, տեսանել և ե-
րևել, կարգադրել և պինդ ունել զկարգս,
հրամանօք և ակնարկութեամբ և վերակացու-
թեամբ: Առանին և ի ձանապարհն հիւրընկա-

լէր զեկաւորս և զամենեսեան. յորոց կէսք տե-
սեալ էին զնա յառաջագոյն, այլք զայն առա-
ջին նուագ տեսանէին. հայէին ի նա հիացմամբ՝
մոռացեալ առ վայր մի զվիշտս իւրեանց, և զար-
հաւիրս՝ որ ի վեր անդր մղէին զնոսա. և ի
մեծին եսկ նորա՝ սկզբնացեալ դեռևս կային ի
նա:



ԳԼՈՒԽ Լ.

Բայց Թէպէեաւ բազմութիւն հաւատոյց ոչ էր ՚ի կողմանէ՝ ընդ որ փախստեայք մեր երթային մերձենային ՚ի ձոր անդր, այլ ՚ի հանդիպակայ կուսէ, սակայն գոհն նմանավիշտ ուղղեցաւ, որք ՚ի կողմնակի շաւղաց յարահետ անդր երթալ էին և երանէին: Եւ զի յայսպիսի արկածս անծանօթք որպէս զծանօթս պատահին միմեանց, ուր և հանդիպէր սայլն ուստիք ՚ի հետաւակաց, լինէին հարցուածք և պատասխանիք: Էր որ հանգոյն մերոցն նախ քան զհասանել զօրացն էր փախուցեալ, էր որ ՚ի լսել զկնի չինն փողոց և Թմբկաց. և ոմանց ևս ականատես լեալ պատմէին զարշաւանս նոցա նկարագրելով, որպէս զարհուրելոց է սովորութիւն. և կանայքն երկոքեան ասէին. « Փառք Աստուծոյ, բախտաւոր ենք եղեր՝ որ կեանքեղ

նիս կրցանք ապրեցընել, Թող կորսուի երթայ ուներացածնիս »։

Այլ տէր Ապտուռեայ ոչ հաճոյ Թուէր այնչափ ամբոխ եկաւորաց, մանաւանդ 'ի լսելն՝ զի բազմագոյնք ևս գային 'ի հանդիպոյ, և առ ահի քրիստնէից առ կանայս, յորժամ էր ոք առ իւրեանս. « Ի՞նչ խելք, ինչ խելք, այսչափ բազմութիւն մեկ տեղ, զինուորները բռնի հոն կանչել է. ամենքը ուներացածնին հարկաւ կը փախչընեն, անբնին բան չեն Թողուր. զօրքը՝ հոն գանձ կայ ըսելով հոն կը վազեն. ափսո՛ս ինծի, ո՛ւր երայ երկայ »։

Աղախինն ասէ. « Հա՛, զօրքը ուրիշ բան չուներ, մեկէն հոն պիտոյ վազեն. իրենց Ճամբան ո՛ւր, բերդը ո՛ւր. մէյմըն ալ լսեր եմ որ վտանգի մէջ չատուոր ըլլալը միշտ աղէկ է »։

Տէր Ապտուռեայ ասէ. « Շատուոր, շատուոր, չէս գիտեր որ ամեն մեկ գերմանացի զինուոր՝ բազմութեան հարիւրը մեկտեղ կը կըլլէ. իսկ Թէ որ անխելքութիւն մըն ալ ընեն, կռուիլ ելլան մերոնք, աւելի գէշ կըլլայ բաներնիս. մեղք որ հոս եկանք, աւելի լաւ էր լիուան մը վրայ փախչէր. ինչ խելք, ամենս մեկ տեղ գիլլուիլ »։

Ես ապա առ երթեալն յաւել անձայն. « Գացէք գացէք եուէ եուէ, անբան ոչխարներուս պէս »։

Աբնէս ասէ. « Անոնք ալ մեղ նոյն բանը կըրնան ընել »։

Տէր Ապտուռեայ ասէ. « Անխելք խօսք մի ըսեր, եղածը եղաւ. հոս գտնուեցանք, հոս պէտք է կենանք. պէտք է Աստուծոյ ապաւինինք որ եարքերնիս բարի ընէ »։

Զար ևս Թուեցաւ նմա՝ տեսանել 'ի մուտս ձորոյն գունդ զինեալ, կէս առ դրանն, և կէս 'ի վայրայարկի տան միոյ՝ որ Թուէր զինուորաց նոց։ Հայեցաւ 'ի նոսա ծայրիւք աչաց, և Թէպէտ էին գէմք նոցա խոժոռք՝ որպէս տեսեալ էր յառաջնումն աղետալի գալստեան, և եթէ էին ևս ոմանք 'ի նոցանէ՝ կերպարանս փոխ Թուէին լեալ, սակայն անմարթ է պատմել՝ որպիսի ահ կալաւ զնա, և ասէր 'ի մտի. « Վա՛յ վա՛յ, խնդիրներդ սկսան. յայտնի էր որ ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ, պէտք էր ան մարդկին ասս բաները ապասէլ։ Բայց միտքը ինչ դրեր է, պատերազմ ընել, Թագաւորը ըլլալ. վաղն ափսո՛ս մեզի. պահէրթիլ կուզէինք՝ անկից զմեզ ամեն կերպով կուզէ յայտնել, աչքի գիմաց գնել, կարծես որ զօրքը վրանիս կուգէ կանչէլ »։

Աղախինն ասէ. « Բայց չէս տեսներ, տէր իմ, ինչ կարիճներ պատրաստուեր են զմեզ պաշտպանելու. Թող գան զինուորները, ասոնք մեր վախկոտ գեղացիները չեն՝ որոնք փախչիլ միայն գիտեն »։

Աստեաց 'ի նա տէր Ապտուռեայ գաշն ձայնիւ, և ասէ. « Զայդ վար քաշէ, ըսածդ ալ չէս գիտեր. աղօթք ըրէ որ զօրքը ատեն չունենայ հոս գալու, չիմանայ որ հոս պատերազմի պատրաստութիւն կայ. զօրք ըսածդ, գիտցիր որ ուրիշ բան չինկնալուիր, բերդ կուզէ առնել. բերդի մը վրայ վազելը՝ իրեն համար հարս-

նիք երթալու պէս է. ւան ալ ինչ որ հոն կը գտնէ, իրենն է. ու զամենքը հոն թուրէ կանցընէ. խեղճ Ապոնոիոյ, դէթ կարենայի ժայռերուն մէջ ծակ մը գտնալ, էջին կրնար ալս պատերազմի մէջ սպաննել»:

Յայնժամ վկայել սկսանէր աղախինն. «Թէ որ պաշտպանուելիւն ընողներէն ալ կը վախէս»... բայց տէր Ապոնոիոյ կարձեաց ըզբանս նորա առնուլ, այլ՝ի մրմունջ, և ասէ. «Զայնդ քաշէ ըսի. առ խօսքերը մէյմըն ալ բերնէդ չելլեն. գիտեմ որ հոս ամեն բանի խընտուելիս պէտք է, ամեն բանի հաւնիլ ցուցընել»:

Եւ՝ի հասանել՝ի վայրն Զարագիչեր, տեսին միւս այլ գունդ թրատակ վկայել. և տէր Ապոնոիոյ, խոյր՝ի վայր առեալ՝ի պատիւ, ասէր ընդ միաս, «Ալ գէշ, ինչ փոսի մէջ ինկանք»: Անդ վկայ էառ ասյլն, և ինքն. տէր Ապոնոիոյ հառուցեալ զաթոռ սայլորդին, արձակեաց զինս. և երկոքունքն ուղեկցօքն ելանէր ընդ զառ՝ի վերն: Տեսիլ վայրացն զարհուցանէր՝ի միաս նորա զկնչատակ վշտացն՝ զոր կրեալ էր յառաջնումն նուաճի, յաւելեալ յորս կրէրն. և Ագնէս, որոյ էջր տեսեալ զվայրն՝ այլ նկարեալ՝ի մանի պատկեր սոսկալի՝ի լուր ուղևորութեան դառերն ընդ այն, ՝ի տեսիլ նոցին արդ զդայր առատապէս զանդողմամ յիշատակն, և ասէր ցԺողովրդապետն. «Ամածէ որ խեղճ Լուչիաս առ Ճամբէն անցեր է»:

Իակ նա ասէր յուսկանէ, «Ապոնք հիմայ հոս ըսելու խօսքեր չեն. չես գիտեր որ իր տա-

նը մէջ էնք. աղէկ որ մարդ չիլսեց ըսածդ. թէ որ ասանկ պիտոր խօսես»...

Պատասխանի էտ Ագնէս. «Բայց հիմայ ան ուրիշ մարդ է, սուրբ մըն է»...

Ի վերայ էած տէր Ապոնոիոյ. «Աւելիայ խօսք չէ. կարծես որ սուրբերուն ալ ամեն մաքէդ անցածը կըսուրի առանց ջրոս դիպ նայելու. չնորհակալ եղիր անոր տեղը, քեզի ըրած բարիքը մտածելով»: —

«Ես ալ ան կը մտածէի, կարծես որ այնչափ քաղաքավարութիւն ալ չունիմ»: —

«Քաղաքավարութիւնը ան է որ ուրիշի ձախորժած խօսքը չըսենք, մանաւանդ անոր որ սորված չէ անանկ խօսքեր լսելու: Երկուքդ ալ գիտէք որ հոս աւելորդ խօսքեր ընելու, ու ամեն մաքերնիդ եկածը ըսելու տեղ չէ. իշխանի մը տուն ենք, նայեցեք ինչ ուզեկիցներ ալ ունինք հետերնիս, ամեն տեսակ մարդ կայ. զգոյշ կեցեք, ամեն խօսքերնիդ կշռեցեք. ալ աղէկը՝ քիչ խօսեցեք. հարկաւորը միայն ըսէք, լուռ կեցողը չխսնալիր»:

Փերփիթուա ասէ. «Բայց հրամանքդ ալ աս խօսքերովդ աւելն գէշ»...

Կարձեաց զբանս նորա սասին Ժողովրդապետն ասելով՝ «Դեռ կը խօսիս». այլ յասելն զայս՝ զաչս՝ի վեր առեալ, եաես զիշխանն զի ինչանէր առ ինքեանս, և խոյր՝ի վայր էառ. քանզի իշխանն՝ի տեսանել զԺողովրդապետն, ծանեաւ զնա. և փութայր գալ ընդ առաջ. և՝ի մտանէն՝ ասէ. «Տէր Ժողովրդապետ, ասկէց աղէկ տեղ մը կուզէի որ տունս հրամիր-

բայց հիմայ ալ կուբանամ, Թէ որ կարե-
նամ ծառայութիւն մը ընել հրամանքիդ »:

Ժողովրդապետն ասէ. « Վստահ ըլլալով հրամանքիդ մեծ բարութեանը, համարձակե-ցայ գալու ասանկ առեն՝ նեղութիւն տալու. սիրա ալ ըրի ասոնք որ կը տեսնաս՝ հետս բե-րելու »: Եւ վասն ազատմանն ասէ. « Ասկից առնս ամեն բանը հոգացողն է »...

Իշխանն ասէ. « Բարի եկաք, հաշտ բարի »:

Յաւել ժողովրդապետն. « Ասկից ալ ան է որ՝ հրամանքդ բարիք ըրիր իրեն. աղջկան մայ-րը, ան աղջկանը որ »...

Ի վերայ հած Ադնէս. « Լուսիայի մայրը »: —

« Լուսիայի՞ն », գոչեաց իշխանն. և դարձու-ցեալ դէպ ուրիս Ադնէս՝ հայեցաւ 'ի խոհարն, ասէ. « Բարիք ըրի, դուն ինծի կընես՝ հոս դա-լուկ, իմ տունս գալուկ, ինծի գալուկ. բարի եկար, օրհնութիւն կը բերես տանս »:

Ադնէս ասէ. « Ի՞նչ կրսես, տէր իմ, նեղու-թիւն տալու եկայ »: Եւ մերձեցեալ յունկն նորա յաւել. « Մանաւանդ Թէ ընդհակառակն Թիւն ընելու ալ որ »...

Կարճատեաց իշխանն զբան նորա զայն, և հարցանէր գորովով զԼուսիայէ. և լուեալ զա-մենայն, կամեցաւ ընդերձել նոցա մինչև յամրոց անդր, Թէպէտև հրաժարէին նոքա պատուա-սիրական բանիւք: Եւ ետարց ցժողովրդապետն զչափոց՝ Թէ հասեալ էին 'ի գիւղ իւր: Պա-տասխանի ետ Ժողովրդապետն. « Զբսպասեցի ան գիւտահարներուն հասնելուն, չեմ գիտեր որ կրնայի՛ ձեռնընկէն ոչ խալըսելու, որ չի-գայի աս նեղութիւնը տալ հրամանքիդ »:

Իշխանն ասէ. « Մի վախնար, հիմայ ապա-հով ես, հոս չեն կրնար գալ. Թէ որ փորձել ալ ուզեն, պատրաստած եմ ամեն բան՝ ինչպէս որ պէտք է զերծնիք աղէկ ընդունելու »: —

Տէր Ադոնսիոյ ասէ. « Յուսամ որ չիգան ». և մտանանիչ ցուցեալ զլերինն՝ որ վահկն 'ի հանդիպոյ զՀովիան, յաւել. « Բայց ինչպէս որ լսեցի, ան կողմանէ ալ զօրք կուգան եղեր »: —

Իշխանն ասէ. « Իրաւ է, բայց անոնց դի-մացն ալ առած ենք »:

Յայնժամ տէր Ադոնսիոյ ասէ 'ի մտի. « Եր-կու կողմանէ կրակի մէջ կնկանք. ինչպէս Թո-ղուցի երկու անխէլք կնկան, որ գիս հոս քա-շեն բերեն. ինքն ալ կը կարծէ մեծ բարիք մը ընել ինծի, գիս հոս ընդունելով. ինչ մարդիկ կան աշխարքիս վրայ »:

Եւ իբրև մտին յամրոցն, յանձն արար Իշ-խանն՝ ածել զԱդնէս և զքերմէնեթուա 'ի բնա-կութիւն կանանոցն՝ որ ունէր զերիս կողմանս երկրորդի գաւթին, 'ի վերնակողմն ամրոցին՝ կառուցեալ 'ի դահաւանդ մի լերինն, սեպա-ցեալ 'ի վերայ վախից: Իսկ բնակութիւն ա-րանց էր յայնմ և յահեկէ միւսոյ գաւթին 'ի սարահարթի. և վայրն որ 'ի միջի տայր անցս ընդարձակ միջոց 'ի միւս գաւթին, հանդէպ մե-ծի դրան ամրոցին, գրաւեալ 'ի համբարոյ, և ըստ մասին 'ի կարասւոյ ապաւինելոյ անդր: Ի կողին արանց էին սենեակք ինչ վասն եկե-ղեցականաց. անդր էած իշխանն զժողովրդա-պետն, որ առաջին կալաւ անդ օթևան:

Քանևերիս կամ քանևէրս աւուրս կացին

անդ փախստեայք մեր ՚ի մէջ աղմկի բազմութեանն, որ ՚ի սկզբան անդ յաւելցոյր օր ըստ օրէ, այլ առանց ինչ նշանաւոր անցից: Չանազատ պաշտօր լինէին զնուաղութիւնք. ատեն անցանէր հեռւակազօրն գերմանացի, անտի հեծեալք վկնեաք. և ՚ի լուր անցից նոցա յղէր իշխանն գունդ ՚ի պահ. և ըստ պիտոյից առեալ և ինքն զնուաղս, որ միշտ պատրաստ կային առ այն, ելանէր արտաքս ՚ի ճորայն՝ հասանել ուր ուրեք գայր ինչ վտանգ: Եւ էր տեսանել անդ տեսիլ նորանշան, գունդ սպառազինեալն ձախատեալ ՚ի պատերազմ, և ՚ի գլուխ գնդին զօրավար անղէն: Բազում այն էր՝ զի համբարակիցք զօրացն, և ասպատակք աւարառուք, յերեսաց գնդին վազվզակի ՚ի փախուստ դառնային. այլ ՚ի միում նոցագի ՚ի հալածել իշխանին զոմանս յասպատակաւորաց անտի՝ զի մի և իշխեսցեն դալ ՚ի կոզմանն յայնոսիկ, գիտաց զի ՚ի գիւղ մի մօտակայ յաձախակել էին հեռւակք գերմանացիք և աւար հարեալ. և ապա յետ յաւիշտակութեանցն գունդ կազմեալ, յարձակէին յեղակարծում ՚ի գիւղս և յանգստանս մերձակայս բանակի իւրեանց, կողոպտէին զբնակիչս, և զամենայն ազգի ազգի էարիս հատուցանէին նոցա. խօսեցաւ առ իւրան սուղ ինչ, և էած զնոսա ՚ի գիւղ զօրէս անդր:

Հասին յանդստարատեցին ՚ի վերայ. որոց յաւարառութիւն եւեթ կարծելով եկեալ, իբրև տեսին գունդ ձախատեալ, թողին զաւարս իւրեանց և փախեան՝ առանց մնալոյ միմեանց:

Զհետ եմուտ նոցա իշխանն հարուստ մի. և ըզկայ և ուրեք ոչ սուղ ինչ առեալ՝ զի թերևս այլք և ուստեք գային աստատակաւորք, ապա դարձաւ յետս: Այլ յանցանել նորա անդրէն ընդ գիւղն, անդստամբի եղեն բնակիչքն ծառիսահար դրուատիւք, և օրհնաբանութիւնք ընդ հատարտք առ զօրն և առ զօրավար, աղաչէս իւրեանց:

Բայց ՚ի բազմութեան, որ յամրոցի անդ ըստ դիպաց էին ժողովեալ՝ զանազանեալք ըստ բանակս ըստ բարուց ըստ սեռի և ըստ տոհմ, դըժպատեհ ինչ ոչ պատահեաց: Զի իշխանին կարգեալ էր բազում ուրեք պահապանս՝ որք ըզգուշանային կարգաց ամենայն խնամով. քանզի պարտ էր նոցա տալ համար ղերդաց, որ յանձն էին նոցա: Նկեղեցականք և և արք մեծարժանք, որ էին ընդ ապաւինեալս, շրջէին ըստ աղաչանաց իշխանին յայց. յաձախագոյնս և ինքն առ մեծամեծս ուրեք երևէր. և ածել խոկ զմտաւ յոյր ուրուք կային ՚ի տան, սանձահարեր զձիոսիկ՝ որոց պէտք էին սանձուց: Պարձեալ զի և գրեթէ առ հասարակ որեարն փախստական խաղաղասիրք էին. և հոգ տան իւրեանց և առացուածոց, և ազգականք խոկ ոչ սակաւուց և բարեկամք՝ որ կային ՚ի վտանգի, և զոյդք՝ որ հասանէին արտաքուստ, արտաքուստ զնոսա արարեալ՝ պահէին և հաստատէին ՚ի նեղքս անդ զնաղաղութիւն:

Էին ՚ի նոսա և արք սրտեայք անխռովք, որք յուրախութեան կամէին անցուցանել անդ զաւուրս. և անզօրք ՚ի պաշտպանել առանց իւ-

ըեանց, սակայն ոչ ախորժէին լալ և հառաչել
'ի վերայ անհրաժեշտ արկածիցն, և ոչ մոռախոհ
լինել 'ի վերայ աւերանաց՝ զորս հարկ էր նո-
ցա տեսանել: Ընտանիք ծանօթք միմեանց և
բարեկամք, որք ապաստանեալ էին անդր և
հանդիպեալ երբեմն, և ընդ այլս ևս բարեկա-
մացեալ, կային 'ի խումբս խումբս բաժանեալ
ըստ բազուց և ըստ ախորժակաց: Ճոխք և բա-
րեհիւթք ելանէին ճաշել 'ի հովտին, ուր ըստ
պիտոյից ժամանակին կազմեալ էին հարևանցի
ճաշարանք. յոմանս յայնցանէ ճաշ ընդ հա-
ռաջանս խառնէր, և զալեհից ևէթ օրէն էր
խօսել. յայլս չլինէր յիշատակ աղետից, բայց
'ի քաջալերս միմեանց՝ չխորհելոյ զայնցանէ:
Իսկ որք ոչն կարէին համ չհամէին ծախել, նո-
ցա յամրոցն անդ բաշխէր հայց թան և գինի.
բայց պատրաստէին հանապազօր և սեղանք
ուան այնոցիկ, զորս իշխանին հրաւիրեալ էր
անդր. յորս էին և մեքըն:

Սգնէս և Փերփէթուա ոչ կամէրով ուտել
հայ ձրի, ինդրեալ էին սպասաւորել պիտոյից
մեծի այնր հիւրընկալութեան, և պատրաստէին
յայն գիճ կէս մաս աւուր. իսկ յայլ ժամս
'ի ղրուցատրութիւն ընդ բարեկամուհիս՝ ընդ
որս անդ կցորդեալ էին, և ընդ հիւրին տէր
Սպոնտեայ, որ անգործ կայր և մոայդոյզ յերս-
կիւղէ: Ոչ ևս յերկիւղէ յարձակման զօրաց,
զի վարատեալ էր երկիւղն այն 'ի նմանէ, և
եթէ էր ինչ դեռ ևս մնացուածք՝ ոչ յոյժ նե-
ղէր զնա, զի ընդ խորհել իւր յայն, հասու լի-
նէր՝ զի անոտի կասկածանք էին: Այլ ախուր

պատահէր չքնաղայ երկրին՝ որ ասաի և անոտ
ողղեալ էր 'ի զօրաց, և զինք և զինուորք՝ զորս
տեսանէր զի շուրջ յածէին, և գղեակն, և
կասկած արկածից՝ որոց յայնպիսւոմ վտան-
գաւոր ժամանակի մարթ էր վայրկեան 'ի
վայրկենէ պատահել, ունէին զնա հանապազ
յարհաւրս: Թող զհոգն՝ որ տագնապէր զնա
վասն աղքատին տան իւրոյ: Զամենայն աւուրս՝
զորս հակայ յամրոցի անդ՝ ոչ հեռացաւ անտի
քան զնետընկէց մի, և ոչ երբեք էջ ընդ զառ
'ի վայրն, այլ 'ի սարահարթի անդ ձեմէր աստի
և անտի գղեկին, գիտէր ընդ ժայռս և ընդ
վախս 'ի վայր՝ ընդ որ մարթ էր անցանել գնալ
գտանել տեղի թաքստեան յանկանէն 'ի նէղ:
Զամենեսեան որ ընդ իւր ապաստանեալ էին
յամրոցին՝ մեծարէր, և սիրով մեծաւ ողջու-
նէր. այլ ընդ ասկաւս յոյժ խօսէր. յաճախա-
գոյն խօսակցութիւն նորա էր ընդ Սգնէսի և
ընդ Փերփէթուայ, որպէս ասացաք. ընդ նոսա
զվիշտս սրտի իւրոյ սփոփէր, վտանգաւ իսկ
կրէր յանգիմանութիւն յայտնեցոյն, և ամեն
'ի բանից Սգնէսի: Ի սեղանի ոչ յամէր, և հաղիւ
երբեք խօսէր. անդ լսէր սոսկալով զլուր ան-
ցանելոյ զօրաց, որ հանապազօր հասանէր դէղ-
ջէ 'ի գիւղ, բերան 'ի բերանոյ, կամ ածէր ոք
յայնցանէ՝ որք 'ի սկզբան կացեալ 'ի տան, և
ապա փախուցեալ էին 'ի բաց, ոչ կարացեալ
զերծուցանել ինչ, թերևս և գտնահարեալ.
օր ըստ օրէ լսելի լինէին աղէտք նորանոր:

Էին և բանբերք՝ որոց ժողովեալ զլուրս, և
խարբաշեալ զզրոյցս, ածէին ընծրանաւ 'ի վեր:

վ.ՀՀք լինէին զղօրսն՝ Թէ ոչ ք՛ի նոցանէ էին վայրենագոյնք, հեռաւակաղօրն Թէ այսուհետև, ո՛ քան զո՛ էր չարագոյն. լեղեղէին որպէս և կարէին զանուանս զօրավարացն, զոմանց պատմէին զնոցեալ քաջութիւնս, մանրապատում առնէին զկայս և զնաղացմունս զօրացն, որ օր, որ գունդ, յոր գիւղօրէս ախռեալ, և յոր պատրաստեալ էր յարձակել ք՛ի վաղիւ, և ուր միւս այլ գունդ չար ևս գործէր եղերուն: Մանաւանդ խնդրէին զիտել զթիւս գնդացն անցելոց հետզհետէ ընդ կամուրջն՝ որ ք՛ի ՀՀքքոյ, զի համարէին զնոսա մեհենալս ք՛ի սահմանաց անտի, և գնացեալ ք՛ի բաց աներկայելի: Անցանէր այսուհետև Վաչէնսեթացին, անցանէր հեռաւակաղօրն Մարրատայ, անցանէին հեծեալք Անհաղթի, անցանէր հեռաւագունդն Պրանտասուրիի. էանց ապա հեծելազօրն Մանթիգուզոլեայ, ապա Ֆերրարեայ. անցին Ալթրինձիք և Ֆուրսթենպէրգ, էանց Ռոզորեայ, անցին Լիբուրնիացիք, և ապա Թորգուաթոյ Ռոնթի և այլք. և երբե՛ կամք եղէն երկնից, էանց և Կալաստոյ վերջին: Իսկ գունդն Վենետ ասատանդական մեհենեցւոյ և նա ք՛ի սպառ, և գոյր երկիրն համօրէն յաչ և յահեակ հանդարտեալ:

Բնակիչք վայրացն ասպատակելոց, և յաղաչ քան զայլ տեղիս ղերծելոց, վաղ մեհենալ էին յամրոցէն, և օր ըստ օրէ մեհենէին անտի, որպէս յետ աշնայնոյ մրրկի է սեաւանէ՝ զի թռչունք, պատապարեալք ք՛ի սաղարթախիտ ոստս ծառոյ մեծի, եւանեն մեհենին ամենուստ: Ցետոյ քան զամենեսին մեհենեցան մերքն երե-

քեն, վասն երկնչելոյ սէր Ապոնոեայ՝ Թէ գուցէ ք՛ի գաւնալ իւրեանց վաղ ք՛ի տուն՝ պատահէին զինուորոց գերմանացւոց յետս մնացելոց ք՛ի բանակէն: Ի զուր փերսիկեթուա առաքէր՝ զի ք՛ի յամել իւրեանց պարսպ գտանէին սրինկայք գեղջն մտանելոյ ք՛ի տուն, ածել ք՛ի բաց զինացորդս կարասւոյ: Ուր զկենաց էր վտանգ, յաղթէր միշտ սէր Ապոնոեայ, եթէ ոչ մտատառագոյն այլ վտանգ բառնայր ք՛ի նմանէ ըզխնդիրս ք՛ի սպառ:

Ի սահմանեալ աւուր մեհենելոյ նոցա էս իշխանն պատրաստել առ Զարագիչերաւն պանդոկիս կառս, և ք՛ի նմա ձորձս վասն Ագնեսի. և առեալ զնա մեհուսի, եդ ք՛ի ձեռս նորա և այլ դուսարը սկուտից առ ք՛ի բեզեկ աւերածոյ տանն իւրեանց, Թէպէտև նա ձեռս ք՛ի կուրծս ածեալ՝ ասէր. « Դեռ առջի տուածներէդ ուննիմ քովս »: Ապա ք՛ի վերջէ ասէ իշխանն. « Առջիկդ խեղճ Լուչիան տեսնելու տանեդ... (գիտեմ որ ինձի համար աղօթք կընէ՝ այնչափ իրեն չարիք ընելուս համար)... բայց ըսէ իրեն՝ որ իր ինձի համար ըրած աղօթքը իրեն վրայ ալ Աստուծոյ օրհնութիւնը կը բերէ »:

Կամեցաւ իշխանն ուղեկից ևս լինել նոցա մինչև ք՛ի կառս. Թողեալ ընթեռնլեաց ածել զմտաւ զարաեռանդն չնորհակալս սէր Ապոնոեայ, և զմեծարանաց բանս Ագնեսի և զփերփեթուայ: Մեհենեցան, ուղեղս եղեն. և որպէս էր խոստացեալ՝ սուղ ինչ ք՛ի տան գերձակին գնոյ առին. և լուան անդ բազում ինչ զանոյշ զրուցականին, զսովորից յաճախութեանց, զը-

հարուածոց, զաւերանաց, և զբռնաբարու-
թեանց. այլ ըստ յաջողուածոյ բախտի՝ էր ե-
լեւել ոք անդ ՚ի դերմանիկ էլուզակաց: Եւ
հառաչանօք ասէր դերձակին, տալով բազուկ
ժողովրդապետին ելանել ՚ի կառս. « Տէր ժո-
ղովրդապետ, դիրքեր՝ տպած դիրքեր՝ հանելու
է, ասանկ խեղճութիւնները պատմելու հա-
մար »:

Յետ փոքր միւս ևս յառաջ գնալոյ, սկսան
ուղևորքն մեր ականատես լինել պատմելոյ տղե-
ային, այգեստանեաց աւերելոյ, ոչ որպէս ՚ի
կիթոց՝ այլ նոր ՚ի կարկտահար մրրկէ, ուռոց
և բարուձակաց տերևազերծ և բեհեռեալ ընդ
երկիր տարածելոյ, անդաստանաց հոխոտե-
լոյ, դաշտաց ծածկելոյ ՚ի սալարձաց և ՚ի
հողերոյ, արմատախիլ և ոստաքանչ ծառոց,
ցանկապատից քայքայելոյ, և չէրտափակից
՚ի բաց ածելոյ: Իսկ ՚ի գիւղորէս՝ դրունք
տանց խորտակեալ, պատուհանք կառափեայք
պատառոտեալ, բեհերք բաղմախորտակք և
կապերտք չէղջախուտեալք և ցիրևցան ընդ ճա-
նապարհս սփռեալ, այեր հեղձամղձուկ և ժա-
հահոտ ՚ի ներքուստ տանց վերածխեալ: Կէսք
զժահ և զաղտեղութիւն հանէին ՚ի բաց, այլք
զդրունս ՚ի դրանդիս՝ որպէս մարթ էր՝ զետե-
ղէին. այլք ժողովէալ ՚ի միասին ողբային. և
յանցանէլ կառացն՝ ձեռք ատի և ձեռք անտի
՚ի պատուհանս կարկառէին՝ խնդրել ողորմու-
թիւն:

Պատկերք այսպիսիք առաջի աչաց նոցա և ՚ի
մտի, և ՚ի սրտի նոցա երկիւղ՝ զնոյնս և ՚ի տան

սեսանելոյ, հասին անդր. և գտին որպէս կա-
կածէին: Եւ ետ Աշնէս իւրացանել զբեհիս
յանկեան միում ՚ի գաւթին, որ միայն ոչ յոյժ
ալտեղի ինացեալ էր վայր ՚ի տան. և սկսաւ
ածել աւել, ժողովել և մաքրել զսակաւ ինչ
մնացուածս կահուց. կոչեաց հիւսն և դարբին
նորոգել զկարևորագոյն աւերածս: Եւ ապա
զննեալ զձորձան պարգևեալս յիշխանէն ի ըստ
միոջէ, և թուեալ զդահեկանս, ասէ. « Փառք
Աստուծոյ, փառք սուրբ Աստուածածնին. ողջ
կենայ իշխանը. կրնամ ըսել որ բարեբախտ եմ
եղեր »:

Իսկ տէր Ալոնսիոյ և Փէրփէթուա մնին ՚ի
տուն առանց պիտոյից բանալեաց. և յամենայն
ոտնփոխս ՚ի մուտս անդ գարշահոտութիւն և
ժահ յետս ընկրկէր զնոսա: Խնուն զհոտտե-
լիս, մատչին ՚ի գուռն խոհանոցին, մտանեն
անդր յոտն ՚ի մտան, ոչ գիտելով ուր գտա-
նել կամ ուսին զերծ յաղաղղութեանց՝ որ
ծածկեին զգետինն. չուրջ յածեն զաչս, և
չէր ինչ անբեկ. զամենայնի՝ զոր թողեալ էին
անդ և այլուր՝ զբեկորս ևթէ գտանեն յան-
կեան: Փետուրք ևթէ հաւուցն փէրփէթուայ
էին ինացեալ, ծուէնք կառափեայ, թերթք տե-
նաց ուրց ժողովրդապետին, պուտանց և պնա-
կաց կոտորակք ՚ի կոյտս կամ ՚ի սիւնս. և ՚ի
կրակարանի անդ կուտեալ նշանակք սաար-
ատուածութեան մեծի, խանձողք չինչեալք, թևք
աթոռոց, ոտք սեղանոց, դրունք գարանաց,
տախտակք մահճաց, չէրտք տակառի՝ յորում
պահէր գինին կազդուրիչ տէր Ալոնսեայ, և

այլն ամենայն յաձիւն գարձեալ և յածուխս, և նովին ածխոք առ քէն վրիժուս ազտեղեալ յաւարաձուաց որմք այլանդակ նկարուք եկեղեցական խուրից և դիմաց, սոսկալիս ընոսա յանդիման առնելով, յոր չէր խակ մարթ չյաղողել դիտաւորութեան նկարչաց այնպիսեաց։

« Անբան անասուններ », դոչեաց աղախինն. « Անզգամ անօրէններ », դոչեաց Ժողովրդապետն. և փութացան եղին արտաքս ընդ միւս դուռնն՝ որ ածէր ի պարտէզ անդր, առ ի չունչ կլանել։ Գնային առ Թզենին, և չէ անդր հասեալ, ի տեսանել զբերեալ ղՀոգն Ճշմարիտն և ի հասանելն, փոխանակ մեռելոյ՝ դոյն փոս պեղեալ։ Այնդ յարեան վէրք. ասէր Աստուածոյ յանդիմանէր զՊետրիկեթուա՝ որպէս թէ ոչ բարւոք ծածկեալ զտեղին, և չէ հարկ ասել թէ կարճը նա լուել։ Յետ երկաքանչիւրոյն աղաղակելոյ կշտասպինդ, դարձան զբերթողելով՝ ալ երկաքանչիւր ի փոս անդր մտանելոյ ձգեալ, և դոյն դրեթէ ամենայն ուրեք գնոյն առերած։ Բազում աշխատ եղեն առ ի տալ մաքրել զտունն, և ի բաց փարատել զժահ նեխահոտ. մանաւանդ զի յաւուրսն յայնոսիկ գժուարին էր յոյժ գտանել օշնականութիւն. և տակաւ նորոգեալ զդրունս զկահս և զտնօթս, բարեկարգեցին ըստ կարի զտունն, արծաթի ի փոխ առեալ Աստիճանէ։

Բայց վէրք տաղտկալիք յարկածիւ ասի յառաջ եկին. զի աղախնոյն խոյզ և խնդիր ա-

րարեալ, դիտեալ հոտոտեալ և հետազօտեալ, գիտաց զի կահք ինչ զորս կարծէին աւար առեալ և խորտակեալ կային ամբողջ առ ոտանս ի չնաչանաց անտի, և նեղէր անդադար զսէր Աստուածոյ՝ բողոքել և առնուլ ուժգին զնոսն։ Այլ գժտչի թուէր նմա այն. քանզի ի ձեռս այնպիսեաց էր կարասին, ընդ որս չանայր ինքն կալ ի խաղաղութեան, և ասէր ցաղախինն. « Զեմ ուզեր առ բաները, քանի՛ անգամ զուրչել կուտաս. կորածը թող կորսուի երթայ. կուզէս որ կեանքս վտանգի դնեմ առանց համար »։

Իսկ աղախինն ասէր. « Ըսածս է, աչքըներդ ալ կը թողուս որ փորեն հանեն. ուրիշներն դողնալը մեղք է, քեզմէն չեզողնալը »։

Տէր Աստուածոյ ասէ. « Նայէ ինչ անխելք խօսք է ըսածդ. ալ ձայնդ վար քաշէ »։

Լռեաց աղախինն, այլ ոչ խակ և խակ. և պատճառանս խնդրէր յամենայնէ, առ ի սկսանել անդրէն զվէրն. որպէս զի ոչ ևս դանդաղէր եղկելին զնոցա, որ պահասէին, զի ասէր նմա աղախինն. « Գնա, որուն որ քուկդ է՝ անկէց ուզէ. թէ որ միամիսկ մը դէմ չըլլար ըսածը, ինչուան հիմայ քովը չէին մնար առած բաները »։

Մինա ևս ծանրագոյն վիշտ էր նմա, զի տաւնին մեացորդք զօրաց անցանէին՝ որպէս կասկածեալն էր, և կայր հանապազ յերկիւղի՝ թէ գուցէ ոք ի նոցանէ կամ խուճք ինչ նոցա ի դրունս իւր հասցէ, զորս չտապաւ նախ քան զամենայն տուեալ էր նորոգել, և խնա-

մով մեծաւ ուշիկը վախ։ Այլ յայսպիսեաց լինէ խնամովք Տեառն ոչ պատահեաց . սակայն ՚ի դադարել երկիւղին՝ միւս այլ վհեծ հասա-նէը։

Բայց աստանօր թողցուք զերկիւղին. զի առա-ջի կայ մեզ ահագին ինչ քան զերկիւղ նորա, քան զաղէտս չինից ոմանց, և քան զհարւանդի արկածս պատմել։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Մինչդեռ առեանն խնամակալաց առողջու-թեան խնդայր՝ զի զօրք գերմանացիք ածգեն սրածուղիւն ՚ի սահմանս Միլանու, վաղ իսկ մոռաւ էր այն անդր. և որպէս յայտ իսկ է, ոչ վկայ առեալ անդ՝ այլ տարածեալ էր յիտա-լիա, և անմարդի առնէը զերկիրն։

Ածեալ այսր ՚ի կարգէ պատմութեանս, անց-ցուք ընդ գլխաւոր մասունս արկածից երկրին համ՛ մանաւանդ քաղաքին Միլանու, զորմէ միայն գոգցես ճառէն յիշատակագիրք ժամա-նակին, յերեաւ կամ յաներեաւ, որպէս յա-ճախ պատահէ։ Արդարև առ ՚ի ցուցանել միայն զանցս մերոցն գամք ՚ի պատմել զայս, բայց միանգամայն է մեզ ՚ի մոռ տալ համառօտիւ ըստ կարի զման ինչ պատմութեան հայրե-նեաց հռչակաւոր քան ծանօթ։ Ի յոգունց

ժամանակակից պատմագրաց չիք ոք, որ առանց այլոց իցէ բաւական առ ի տալ ընկալարգիր նորին պարզ և ըստ կարգի. չիք և ոք, որ ոչ օգնեսցէ առ ի յանդիման առնել զայն բովանդակ: Իւրաքանչիւր ոք ի նոցանէ, (և և Ռիփսիմեանքի՝ որ քան զամենեսին բազմագոյն և ընտրանաւ յիշատակէ զանցս հանգերձ ճահաւոր տեսութեամբք), Թողուս ի բաց կարևորս ինչ, զորս այլք յիշատակեն. և առ խրաքանչիւր ուժմբ գոանին վրիպակք մեծամեծք, զորս այլք կամ արքունի յիշատակագիրք՝ հասեալք առ մեզ՝ տպագիրք և անոխպ, տան ճանաչել և ուղղել: Ի տեսանել յաճախ առ միում զսպատճառս, զորոց այլք առատերաբար ցուցանեն զարդասխս. և յամենեսին սիրէ անսովոր իմն շփոթութիւն ժամանակաց և իրաց, և անընդհատ երթևեկ իբր ըստ դիպուածոյ, առանց հանրական կամ մասնաւոր ինչ տեսութեան, որ այնր ժամանակի երևեցագոյն իսկ գրոց ե նկարագրոշմ, մանաւանդ հասարակաց խօսիցք դրելոց:

Այդ ընդ ամենայն ուղին, ընդ որ բանակն էանց, ուրեք ուրեք ի առնս կամ ի ձորս պարհի գոանէին գիակունք. և ընդ հնուս յերկրի անդ և ի շրջակայս սկսան ախտանալ և մեռանել ոչ սակաւք, և ընտանիք իսկ տամբ, բըռնադատեալք ի նոր իմն ախտէ, նշանօք՝ որ առաւելագունէից էին անծանօթք: Սակաւուց ոմանց ոչ նոր ինչ թուէին նշանք ախտին, և ոմանք յիշէին զախտն ժանտ՝ որ յառաջ քան զամս չիսունևերիս ամայի արարեալ էր զմասն մեծ

Իռաչնոյ, մանաւանդ զերկիրն Միլանոյ, ուր յիշատակի ցարդ որպէս թուական ձանապարհն արեւին Կաբուլոյ: Այսքան հզօր ե մարդասիրութիւն, որ յարկածս հասարակաց աշխարհագոյժս և այլազանս ի միմեանց՝ զառն միոյ յիշատակ ետ գերազատել, աղդելով ի նա խորհուրդս և գործս արժանագոյնս յիշատակի քան զամենայն անցս արկածիցն, և տպաւորել զանուն նորա ի միտս ամենեցուն որպէս բովանդակութիւն լինն անցելոց. եմոյծ զայրն զայն ամենայն ուրեք որպէս տեսուչ, որպէս օժանդակ, և որպէս զոհ ինքնակամ. զղեկաս հասարակաց ետ ընծայել նմա յառաքինութիւն, և յանուն նորին յորջորջել զայն որպէս աշխարհակալութիւն լինն կամ գիւտ նորոյ աշխարհի:

Ներկուն բնաբանն Սեթեթալա, ականատես ժանտախտին այնորիկ, և մի ի ժիր և յանվեհեր իմամակալաց տաճկին առաղջութեան, զեկոյց ի ժողովն զի ի կիւս սահմանաց Էգբեպտի և Պերկամոյի ի Բիւզդոյ ձարակէր ժանտախտ աներկբայելի. սակայն չարաբաս լինչ զգուշութիւն, որպէս վկայէ Թաւխնոյ: Այլ ահա հասին ի Էգբեպտոս և ի Պելլանոյէ զորոյգք ի հատատութիւն. և խորհուրդ կալաւ տաճկին յայնժամ արձակել պատուիրակ, զի առեալ զոք ի բժշկաց ձանապարհայն ի Քոմոյէ երթիցէ ի գիւղ անդր առ ի ստուգել զիրան: Առքա առ տգիտութեան կամ վասն այլ ինչ պատճառաց խաբեցան ի տխմարէ ուխտիմէ վարսավիրայէ ծերոյ պելլանացւոյ, որպէս թէ հիւանդութիւնն այն չէր ժանտախտ՝ այլ ի

տեղիս տեղիս սովորական վան ողողից լճաց յաշնայնի, և այլուր արգասիք վաճառց և տա-
ռապանաց կրելոց յանցս գերմանացւոց: Այս տեղեկութիւն ածաւ ՚ի ժողով, և հաւանե-
ցոյց՝ որպէս Թուխ՝ զառեանն:

Այլ ՚ի հասանել հեռվհեռ այլոց տեղեկու-
թեանց յայլեայլ կողմանց զպատահարաց մա-
հու, արձակեցան ոստիկանք երկու, վերսի-
շեալն Թաւինոյ և մի ՚ի ժողովականաց առե-
նին, հեռաւօրեալ տեսանել և խնամել զամե-
նայն: Ի հասանել սոցա ՚ի տեղն անդր՝ այնպէս
ձարակեալ էր ախտն, զի հաւասարիք էրացն՝
առանց խոչդ և խնդիր առնելոյ՝ ընդ առաջ ե-
լանէին: Այսցին նոքա ընդ Լէք-քոյ, ընդ Վալտաս-
պինա, ընդ ափունս Խամպէ, և ընդ կիրճս՝ որ
կոչին Մանէ պէ Պրիանդա և ձէ-ա պէ Աւպաց, և գրե-
թէ ամենայն ուրեք գտանէին փակեալ զմեռաս,
ամայացեալ զայլս ՚ի չինից, և փախուցեալ
զբնակիչս՝ սփռեալ ՚ի դաշտս ընդ վրանօք « Եւ
Թուխէին մեզ վայրաբնակք », ասէ Թաւինոյ.
« կէսք բերէին անանուխ ՚ի ձեռին, այլք վե-
գենայ, ոմանք խնկենի, այլք քացախ յապակ-
ւոջ »: Առին խնամակալք զմեռեալ մեռելոց, թիւ
աշխարհս. այլ արարին հիւանդաց և գիա-
կանց, և ամենայն ուրեք գտեալ զժանտ և ըզ-
սոսկալի նշանակս ապականարար ախտին, ե-
տուն նամակաւոյ զձախողակ տեղեկութիւնն
սքն վաղ ընդ փոյթ առնելն. և հաստատեցաւ
՚ի խորհրդեան՝ արգելուլ հրովարտակաւ ըզ-
ժուռս ՚ի քաղաք անդր եկեալոցդ ՚ի վայրաց
անախ, յորս ձարակէր ախտն. և մինչդեռ պա-

տրաստէր հրովարտակին, պատուէր ղբուղու-
թեան առաւ մաքսատեսաց:

Յայնմ վայրի ոստիկանացն երկուց սահմա-
նեալ կարգս զբուղութեան՝ որպէս թուէր նո-
ցա ՚ի ձահ, գործ արարին սխուր պատրանօք՝
բաւելոյ այնոցիկ ՚ի խափանել ըզբոցածաւալ
ճարակումն ախտին: Եւ հասեալ, ետուն ան-
դրէն տեղեկութիւն առնին բանիւ և գրով,
և յանձն եղև նոցա յանդիման լինել քաղա-
քապետին, և ցուցանել նմա զհանգամանս ի-
րացն: Խօսեցան նոքա ընդ նմա, և դարձան պատ-
մեցին՝ զի թէպետև արտաքոյ կոյժ էր նա ընդ
արկածն, այլ կարևոր ևս զհոգս առաջնակայ
պատերազմին համարէր, որպէս յաւելուլ Ռի-
փամոնթի: Եւ էր պատերազմն այն, եթէ յի-
շեցեն ընթերցողք, վասն նոյն նոցին երից յա-
րուցեալ, որ և նոցին ձախող եղեալ պատահեաց:
Ցետ երկուց կամ երից աւուրց եհան քաղա-
քապետն հրովարտակ, որով հրամայէր ամն
հասարակաց վասն ծննդեան իշխանորդւոյ ան-
դրանկին Փիլիպպեայ Դ. ոչ ինչ կասկած կամ
հոգ ունելով ընդ վտանգ խռնելոյ բազմու-
թեան ՚ի ժողն յայնպիսում ժամանակի, որ-
պէս թէ չէր ինչ նորա լուեալ զձարակելոյ ախ-
տին:

Էր նա, որպէս ՚ի վեր անդր ասացաք, անուա-
նեն Ափինոլա յղեալ ՚ի զօրավարութիւն պա-
տերազմին, յուղղութիւն սխալանաց Կոնծա-
լոյի իշխանին, և առ ժամն քաղաքապետ. որ և
յետ սակաւ ամանոյ մեռաւ ՚ի նմին պատերազմի՝
զրմէ այնչափ փոյթ էր նմա. և մեռաւ, ոչ ՚ի

ձակատու պատերազմին վերջ ընկալեալ, այլ
'ի մահճի առ վշտին՝ կշտամբանս և թշնամանս
և զամենայն ազգի ազգի դառնութիւնս կրելոյ
յայնցանէ, որոց ծառայութիւն մատուցանէր:
Ոչքայ զբաստ նորա պատմութիւնն, եպերք
զապերախտութիւն այլոց, նկարագրէ զնե-
նուորական և զքաղաքական քաջութիւնս նո-
րա, նեբբոզէ զնորին նախատեսութիւն, զիր-
րութիւն և զանյողդողդ հաստատութիւն. այլ
պարտ էր նմա և քննել՝ թէ զինչ բարեմաս-
նութեամբքն այնոքիւք արար'ի սպառնալ սրա-
ծութեանն և 'ի ձարակել նորա 'ի ժողովըր-
դեան, որ յանձն էր'ի խնամս՝ կամ մանաւանդ
'ի կամս նորա:

Պարսաւելի են արդարև գնացքնորա. այլնը-
ւազ ընդ այն է զարմանալ առ անհոգութեամբ
ժողովրդեանն՝ որ մեծագոյն ածէ զարմանս: Զի
ուր այնչափ երկիւղ էր ամենեցուն յառաջ
քան զհասանել արկածիցն մեռ առ նոսա, 'ի
լուր ճարակելոյ ախտին 'ի գիւղս՝ որ կիսաթո-
ղոր զքաղաքսն կազմեն, և ուրեք ուրեք ոչ
ինչ հեռի քան զղութեասան կամ զքսան մղոն,
էր երբեք կարծելի՝ թէ չարիցէ տղմուկ հա-
սարակաց և բողոք զգուշութեան խաղաղասի-
րաց և խոհեմից, կամ դեթ գոլոյր ինչ ան-
գործ: Սակայն յիշատակագիրքք ժամանակին
միաբան վկայեն, զի յայսպիսեաց ինչ ոչ պա-
տահեաց: Սով հերուին, բռնութիւնք զօրա-
կանին, և վիշտ սրոյն թուէին պատճառք մահ-
առիթք առաւել քան զբաւական. 'ի հրա-
պարակս, 'ի կրպակս, 'ի տունս, որ ոք բան

ինչ զվտանգէն առնէր, որ խօսէր ոք զժանա-
ախտ, ծաղր կայր որոց չհաւատային՝ և
կրէր թշնամանս զայրագինս: Նոյն մտահաճու-
թիւն, կամ մանաւանդ կուրութիւն, զօրա-
նայր 'ի ծերակուտին և յամենայն առեանս:

Բայց ընդ հասանել գումժի առաջնոց պա-
տահարաց ժանտախտին, կարդինալն Ֆեռե-
րիկ արար ընդհանրական առ ժողովրդապետս,
և ընդ այլ խնամս զգուշութեան՝ սահմանեաց
ազգ առնել ժողովրդեան կրկին և կրկին զկա-
րևորութիւն և զնախատ պարտս յայտնելոյ զայն-
պիսի պատահարս, և տալոյ 'ի բաց զհանգերձ-
ձանին ապականեալ կամ կեղտակոծ: Զէ պարտ
անյիշատակ առնել և զայս գովութիւն կար-
դինալին:

Առեանն խնամակալաց առողջութեան խըն-
գրեր և թախանձէր զգործակցութիւն այլոց
առենից, այլ սակաւ կամ ոչ ինչ լինէր լսելի.
և նորին իսկ խնամք առենին 'ի սառն յոյժ
քան զկարևոր պետսն էին: Եւ որպէս վկայէ
Թառինոյ, և որպէս 'ի բովանդակութենէ իսկ
տեղեկութեանցն առելոց 'ի նմանէ քաջայայտ
է, բնաբանքն երկոքին խելամուտ լեալ մտա-
լոտ վտանգին՝ սոսկային զառեանն 'ի հնարս
հայթայթանաց, և պարտ էր առենին սոսկել
զայլ առեանս 'ի նոյն:

Բայց ժանտախտն վազ իսկ մտեալ էր 'ի
Միլան. և որ եմոյծն զայն՝ էր իսաւլացի ոմն
զինուորեալ Սպանիոյ: Զանուանէ նորա ոչ
միաբանին պատմիչք. ըստ Թառինոյի էր Պե-
տրոս Լովաթոյ 'ի Լէքքոյէ, իսկ ըստ Ռիփա-

մինթեայ՝ Պետրոս Լէք-քաթի՛ ի Քեաւեննայէ։ Տարաձայնին և զօրէ մնէց նորա ի Մելան. առաջինն համարի ի 22 հոկտեմբերի, երկրորդն ի 22 նոյեմբերի. այլ ոչ միւսն է ստոյգ, երկոքեան ևս հակառակին սուրգագոյն Թուականին։

Իսկ այս որպէս և է, այլ հեքն այն զինուորք մահաբեր, ծրար զդեստուց ծանրաբեռն՝ի յուսն՝ զորս գնեալ էր կամ առեալ՝ի զօրաց դերմանացւոց, էլ՝ի տուն ազգականաց իւրոց յարուարձանս արևելեան դրան քաղաքին, մերձ՝ի վանս վեղարաւորաց։ Եւ ընդ հասանելն անդր՝ ախտացեալ, ածաւ՝ի հիւանդանոց, ուր եղեւնդն ընդ անթիւ նորա՝ի վերս երևեցաւ։ Որ դարմանիչքն զնա բժիշկն կասկածեաց զախտն, որ լինչ էրն խակապէս. և՝ի չորրորդումն աւուր մեռաւ ախտացեալն։ Սոսկեան խնամակալ աւուղջութեան զատոյց զընտանիս, և զհանդերձս նորա և զանկողինս, յորում մեռեալ էր՝ի հիւանդանոցին։ Եւ այրել։ Հիւանդապահք երկուս՝ որ սպասաւորէին նմա, և մի՝ի բարերար Եղբարց, ՝ի սակաւ աւուրս ըմբռնեցան յախտէն. և ըստ կասկածանաց, որ՝ի սկզբանէ հեռե լեալ էր անդ, արարան զգուշութիւնք, որ ոչ եռաւն անդ տէղն ախտին ճարակելոյ։

Բայց սերմն, զոր զինուորքն թողեալ էր արտաքոյ, ոչ յամեաց ընձիւղել. առաջինն՝ի վանակիցց յախտէն եղև Կարապետ Փոլոնիա, տանուտէր տանն՝ ուր ինկեալ էր զինուորն՝ի սկզբան։ Վարձուորք տանն առ հասարակ, ըստ

հրամանի տանէնին, ածան՝ի զգուշարան, ուր առաւելագոյնք ախտացեալ և ոմանք՝ի նոցանէ՝ի սուղ ժամանակի մեռան, ոմն յայսմանէ՝ի ժանտախտէն։ Այլ վաղ իսկ սերմանք ժանտաբեր սփռեալ էին՝ի նոցանէ, և՝ի հանդերձից նոցա և՝ի կահուց՝ զորս ազգականք և վարձուորքն նոցա և սպասաւորքն ղերծուեալ էին՝ի խընդրակաց, և՝ի հրոյ՝ յոր սահմանեալ էր զայնսակ առեանն։ Պարձեալ և՝ի մուծելոյ իրաց՝ի քաղաքն վան Թերուէթեան հրամայեցին, վան Թերահոգուէթեան պաշտօնէից՝ի կառավարուին նորին, և վան մուծողայն Ճարտարուեթեան, սոզոսկէր յուշիկ և ածէր ախտն ցկատարած տարւոյն և՝ի սկիզբն յաջորդին, որ էր 1630։ Էր զի ուրեք, և էր զի այլուր՝ի թաղից քաղաքին ըմբռնէին ոմանք յախտէն, և մահուամբ իսկ լինէին. այլ նուազագուեթիւն պատահարացն փարատէր զկասկած, և հաստատէր զժողովուրդն յապուշ և՝ի մահաբեր վրատահուեթեան՝ որպէս թէ չէր և ոչ իսկ լեալ էր անդ ժանտախտ։ Բազումք ևս՝ի բժիշկաց հաճախեալ ժողովեցեան, (էր արդեօք և տատ ձայն նորա ձայն Աստուծոյ), ծագեցին զձախող հմայս և զահարկու ազգեցուեթիւնս սակաւուց, և՝ի պատրաստ ունէին զսովորից ախտից անուանս տալ պատահարաց ժանտախտին, հրաժիրեալք առ՝ի դարման։

Լուր պատահարացս այսոցիկ յամն և՝ի կարճ հասանէր յաստեանն, եթէ հասանէր իսկ. սակայն փախեալ կալոյ՝ի զգուշարանի՛ սրբէր ըզվիրս առ՝ի հանձարել այլ պատճառս մահուանց։

ոչ զեկուցանէին զըմբռնեալս յախտէն, կաշառեալին զմեռեալիւրս և զդլխաւորս նոցա. և՝ի պաշտօնեից, զորս առեանն կարգէր այցելուս գիւղականց, առնուին վկայականս սուտս կաշառով: Դարձեալ զի և՝ յայտնել պատահարաց հրամայէր առեանն հրոյ տալ Ճարակ զկարասին, անմատոյց զտունս առնել, և փակել զընտանիս՝ի զդուշարանի, դիւրաւ է դուշակել քանի զայրոյթ և տրտունջ հասարակաց էր ազատանուց և ժողովրդեան և ռամկին, համբերով զամենայն ումպէտս և անպատճառ հարկս տահարուածիւն: Աստւեղագոյն առեւրութիւնն ձգէին յանձինս բժիշկքն երկոքին, նոյն ինքն Փաւղոս և առենական Սեթեթալա որպէ բնաբանին. որպէս զի ոչ ևս կարել նոցա ելանել՝ի հրապարակ՝ առանց ընդունելոյ թշնամանս, եթէ ոչ քարինս: Նոր խմն էր և յիշատակաց արժանի վշտակրութիւն նոցա ընդ ամիսս ոչ սակաւս՝ի տեսիլ արկածիցն հասանելոյ, և վասն չկարելոյ խուբեանց խափանել զայն, զըտանելով արդեւք՝ ուր չանային հայթայթել հնարս:

Աստղն լինէին և բժիշկք, որք խելամուտ լեալ Ճարակելոյ իսկապէս ախտին՝ իսրատ զգուշութեան ատին, և գունն գործէին խելամուտ առնել և զայլս վշտալի հաւաստեային: Նոհմագոյնք գիւրահաւանս զնոսա և յամառս կոչէին, իսկ այլք խաբէութիւն և գաւ զբանս նոցա համարէին, որպէս թէ կամելով նոցա զհաւրօք հասարակաց զոչաքաղել: Մի յարանց պատահառելոյ ժամանակին էր Սեթեթալա, ծերունի ամաց իբր ութսնից, որ վարդապետ բժշկութեան կացեալ էր՝ի համալսարանին Փաւիոյ, և ապա բարոյական խմաստասիրութեան՝ի Միլան, մատենագիր երկասիրութեանց բազմաց՝ի ժամանակին յայնմիկ երեւելեաց, պայծառացեալ հրաժարմամբ՝ի հրապարանաց այլոց համալսարանաց, Ինկոլսթատի, Փիզայի, Պոլոնեայի, Փատուայի. և՝ի համբաւ գիտութեան նորա յաւելոյր և անարատութիւն կենաց. և սիրելութիւն յոյժ, վասն մարդասիրութեան նորա՝ի գործանել զաղքատս և՝ի բարերարել: Սակայն այս ամենայն համբաւ հռչակաւոր ոչ միայն չէղև բաւական յաղթել վիսակ կարծեաց հասարակաց, այլև ոչ կարաց զերծուցանել զնա՝ի հակառակութենէ և՝ի թշնամանաց կիսոց՝ի ժողովրդենէ, որք դիւրագոյն՝ի կարծեաց՝ի գործ անցանէն:

Ի միւմ աւուրց՝ի գնալ նորա գեսպակաւ յայց հիւանդաց, խնդեցաւ զնովաւ ամբոխ՝ աղաղակելով. «Ա՛ս է ուղղներուն գլուխը՝ որ ժանտախտ ըլլայ քալքին մէջ, աս է՝ որ իր խոտոռ նայուածքովը ու բուրդ մորուքովը ամենուն սիրտը վախ կը ձգէ, որպէս զի բժիշկները բան գործ ունենան»: Յաւելոյր տակաւ ամբոխն և կատաղութիւն. և տեսեալ գեսպակակրաց ըզվտանգն, պատսպարեցին զտէր խուբեանց՝ի տան ուրեք բարեհամաց՝ որ ըստ յայղողւածոյ մերձ գտանէր:

Ի վերջկոյս մարտի սկսաւ նախ յարուցանս արևելեան դրան, և ապա յամենայն խակ

Թաղս քաղաքին զայրանալ ախան. և յաճա-
խէին մահուանէ նորանչան ցաւովք, թնդմամբ
սրոյ, մահահանգոյն թմբրութեամբ, զառան-
ցանօք մոաց, և օրհասականնշանօք կապուտակ
ուռուցից և եղընդեան, որով յոդուն արա-
գամահ, բնամահ, և ոչ դուն ուրեք յանկար-
ծամահ լինէին, առանց տալոյ յառաջագոյն նշան
լինչ հիւանդութեան: Իժիւկք հակառակք կաս-
կածանաց ժանտախտի ասիպեցան խոստովա-
նել ականջ՝ զոր ծաղը արարեալ էին, և հարկ
լեալ նոցա անուն հանրական տալ ախտին՝ որ
հանապազորդեր աներկբայելի, հնարեցան կո-
չել զայն՝ տենդ ժանտ, ջերմ ապականարար:
Եղկելի իրաւախոհութիւն, պատրանք բառից,
ճշմարտութեան, որում
խելամուտ լեալ՝ սակայն կեղծեին չտեսանել
և չհաւատալ, հպմամբ ևեթ վարակելոյ ախ-
տին:

Դատաւորք որպէս ի խոր քնոյ զարթու-
ցեալ՝ սկսան լսել աղաղակս ընդհանրական
կալուածոց տեղւոյն, և տալ կատարել գերեզման-
տակս և զդուշութիւնս սահմանեալս յատենէ
ատեն. և տալ նմա արծաթ առ ի ընդուն գհանա-
պազորդ պիտոյից, և զզգուշարանին յաւե-
լեալ ծախս, և զայլոց սպասաւորութեանց: ի
զգուշարանին, թէպէտև յաճախէին մահուանք,
այլ օր ըստ օրէ յաւելոյր բազմութիւն. և էր
գժուարին յոյժ ապահովել զսպասաւորս ի
վտանգէ, ունել զնոսա ի հնազանդութեան,
զգուշանալ օրինագրելոց բաժանմանց, և պա-
հել կամ մանաւանդ նորոգել զտեսչութիւնն

կարգեալ յատենէն առողջութեան. զի ի սկզբ-
անէ հետէ ամենայն լինչ խառն ի խուռն էր
անդ վասն անկարգութեան բազմաց՝ որ վա-
կեալ կային անդ, և վասն անհոգութեան և
թուլութեան պաշտօնէից: Ատեանն և տասըն-
պետք յանհնարս մտեալ, խորհեցան դիմել առ
վեզիրատաւորս, և աղաչէցին զնոսա ի մեծա-
ւորին՝ որ սուզ լինչ յառաջ վախճանեալն էր,
տալ զոր կարող ի վերակացութիւն անտե-
ղոյնչ հոգաբարձութեանն: Եւ առաջարկեաց
նա զՀայոյն Փեղիքս Ֆազոթի, զայր կատարեալ
հասակաւ, և համբաւեալ մարդասիրութեամբ,
ժրութեամբ, հեզութեամբ, միանգամայն և
քաջասիրտ, որպէս ցուցաւ ապա արժանի
համբաւոյն. և գործակից նմին և պաշտօնեայ՝
զՀայր Միքայէլ Փոյդոպոնէզլեն, գեղ պատա-
նի՝ այլ ծանրաբարոյ և խստակրօն, համեմատ
կերպարանացն բերելոյ զանձին խոհականու-
թիւն. որք սիրով մեծաւ ընդունելի լեալ, յ30
մարտի մտին ի զգուշարան անդր:

Վերատեսուչ խնամակալացս տաճկին շուրջ
էած գնոսա, առնուլ զժառանգութիւն պաշ-
տաման իւրեանց. և կոչեցեալ զսպասաւորս և
զպաշտօնեայս առ հասարակ, ծանոյց նոցա վե-
րակացու զՀայոյն Փեղիքս լիակատար իշխանու-
թեամբ: Եւ ապա ի բազմանալ տակաւ եղկե-
լեաց ամբոխին, հասին և այլք ի համակրօն
Հարց՝ հոգաբարձուք, խոստովանահարք, սըն-
տեսք, հիւանդապահք, խոհակերք, հանդեր-
ձապետք, հացադործք, և ամենայն պիտոյից
յանձնակատարք: Հայոյն Փեղիքս պարապեալ յաշ-

խաուսուքիւն և՝ ի հոգս, չըջէր զուիլ և զգիչէր ընդ գաւիթս, ընդ սենեակս, յընդարձակ յարկին, մերթ դաւազան՝ ի ձեռին, մերթ անզէն քրձազգեաց, յորդորէր կարգաւորէր զամենայն, յածուցանէր զաղմուկս, երաւ առնէր վնձից, սպառնայր, պատժէր, կշտամբէր, քաջալերէր, լայր և սրբէր զարտասուս այլոց: Հարաւ և ինքն՝ ի սկզբան՝ ի ժանտախտէ, այլ առողջացաւ, և հղօրադոյն գարձաւ՝ ի նոյն վաստակս, ուր բազումք՝ ի կրօնակցաց նորա մեռան, այլ ուրախամիտք:

Նորանշան ինն էին հնարիցն հայթայթանք, համեմատք անասելոց սրկածիցն և ժամանակին: Զի որոց անկ էր կարևորն այն իշխանութիւն՝ Թողին զայն այլոց հրաժարելոց ամենևին յիշխանութենէ. և ընդունէին սոքա զայն, զի էր ոք որ յանձն առնուցէ. և ընդունէին վասն ծառայելոյ միայն, ոչ այլ խիք յաչխարհի ատ ակն ունելով բայց նախանձելի քան նախանձ ձեալ մահու: Գեղեցիկ էր տուչութիւն իշխանութեան վասն վտանգին ևեթ և գժուարութեան, ոչ ինչ երկեայելով տուողաց ընդ անյողդողդ արիութիւն ընդունողացն կարևոր և գժուարագիւտ յայնպիսումն վտանգի: Վասն որոյ սիրտ և գործ կրթնաւորացն այնոցիկ արժանի էն յիշատակի, գորովոյ, զարմանալոյ, և շնորհապարտ գոհութեան, զոր աշխարհօքն պարտ է մատուցանել վասն մեծամեծ վաստակոց մարդկան առ մարդիկ, մանաւանդ առանց ինչ ակնկալութեան յանձն առելոց: « Զի եթէ չէին հալքն այնոքիկ, ասէ Թաւինոյ, քաղաքն

համօրէն անմարդանայր. վերնախնամ տեսչութիւն շնորհեաց մեզ զնոսա, որք՝ ի սուղ ժամանակի այնչափ բարերարեցին հասարակաց, և ոչինչ կամ դոյզն ընկալեալ նպատս՝ ի քաղաքէն, ճարտարութեամբ և խոհականութեամբ իբրեանց բիւրաւորս աղքատաց՝ ի զգուշարանի անդ կերակրեցին »: Եւ էին, ըստ Ինփամինթեայ, ոգիք իբր չիսուն հաղար պատսպարեալք անդ զամիս ւօթն, ընդ տեսչութեամբ Չօրն Փեչիքսի:

Նուազէր տակաւ և լռէր յամառութիւն հասարակաց չհամարելոց ծաւալեալ ախտին հըսմամբ՝ ի տեսանելն զայն ընդ հուպ՝ ի ռամկին առ մեծամեծս հասեալ: Նշանաւոր՝ ի նոսա էր մեծ բնաբանն Սէթթալա, զոր առանձինն պարտ է աստ յիշատակել: Եղե՞ն արդեօք խուտովան ներհակախոհք, զի երաւունք էին հիքի ծերունեաց հաղորդական զախտն համարելոյ. ըմբռնեցան յայնմանէ նա ինքն, և կին իւր, և ւօթն՝ ի սպասաւորաց. ինքն միայն զերծաւ, և մի յորգոցն. այլք ամենեքին մեռան: Ուր յաւելու Թաւինոյ. « Պատահարք՝ ի քաղաքին՝ ի տունս մեծամեծաց պատահելք, արկին զադաւանին և զժողովուրդն՝ ի վարանս. և բժշկաց Թերահաւատից, և յանդուգն և տգէտ ռամկին փակեցան շրթունք, խոցան առամունք, և սկըսան կեցան յօնք՝ ի վեր »:

Բայց յեղափոխութիւնք իրաց, դարձադարձ՝ ի նոյն կանխակալ կարծիս, և վըհծիսըն դրութիւն պարտեղոյ յամառութեան, ցանկալի երբեմն առնեն զյարատեւութիւն առաջ-

Նոյ մեղսութեան ընդդէմ բացայայտ Աչմաբատութեան. այսպէս յայնժամ պատահեաց։ Որք ամենայն զօրութեամբ և միով՝ ի սպառ հաւասար կացեալ էին կարծողաց՝ ըստ մերձ և՝ ի միմեանց իւրեանց էր սերմն չարին, և կարէր ընաւորապէս ծաւալել և առնել կոտորած, ոչ ևս կարելով ժխտել զՀաղորդականութիւն նոցին, և ոչ կամելով տալ զայն պատճառաց՝ որովք հարկ լինէր նոցա խոստովանել զպատարանս իւրեանց և զպանդխտիս, յօժարէին ընդունելի համարել զայլ ամենայն պատճառս։ Ըստ սակաւիկ կայր յայնժամ՝ ի պատրաստի պատճառ ինչ՝ ի կանխահալ կարծիս և յաւանդութիւնս ժամանակին, ոչ աստ և անդ՝ այլ և յամենայն կողմանս Եւրոպայ, արուեստ իմն և դաւակցութիւն ծաւալէր՝ ի ձեռն թունից և կախարդանաց զժանտախիտ։ Վաղ իսկ այսպիսի համարեալ և հաւատացեալ էր այն յայլ դէպս, մանաւանդ աստ յարկածս ժանտախտին յառաջ քան զկէս դար։ Պարձեալ և՝ ի հերձն հետե նամականի՝ ի Փիլիպպեայ Դ. հասեալ էր առ քաղաքապետն, զի՝ ի Մառսիլիա քաղաքէ վտարեսցեալ էին գաղղիացիք երս, զորոց կասկածէր ծաւալէլոյ սպեղանիս Թունաւորս ժանտաբերս. և ազդ առնէր զդոյզ կալ՝ թէ գուցէ անդր՝ ի Միլան եկեալ լցեն։ Քաղաքապետն ծանոյց զայն ծերակուտին և խնամակալաց առողջութեան. Թուի թէ յայնժամ առաւել էր զգուշութիւն։ Ի ձարակել և՝ ի յայտ գալ ժանտախտին, աղգարարութիւնն եղև՝ ի հատատութիւն կասկածանաց եղեռնաւորն դաւակցութեան։

Դէպք ևս կրկին, մին կոյր և անխրատ երկիւղ, միւսն անգիտելի իմն չարութեան, զոր կէզակարծ կասկածանան դարձուցին՝ ի հաւատնելի կարծիս, և՝ ի հաւատս իսկ առ բազումս, յայտնի եղեռան և սոսկ դատս։ Ումանք, որոց Թուէր տեսեալ՝ ի կաթողիկէն արտոմանս՝ որք օծանէին զիայատակերս անչըպետս արանց՝ ի կանանց, ետուն՝ ի գիշերին յայնմիկ ածել արտաքս յեկեղեցւոյ զանչըպետսն, և որ՝ ի ներքս անդ կային բազմոցք բազումք տախտակեայք։ Բայց վերատեսուչ տեղին առողջութեան չորիւք պաշտօնէիւք եկեալ յայց, և քննեալ զիայատակերսն և զատաղան օրհնեալ ջրոյ, չեգիտ ինչ՝ ի նոսա՝ ի հաստատութիւն կասկածանացն. այլ առ՝ ի հաճել զանորս մտաց, և յաւելուլ քան զկէս՝ ի զգուշութիւն, պատուէր ետ լուանալ եւեթ զայնս։ Բայց չեղջակոյն այն փայտակերտից լեռնաձև՝ զարհուրեցոյց զամբոխն, որում ամենայն ինչ թուի ապացոյց կասկածանացն։ Լու եղև. և հաւատացաւ թունաւորութիւն աթոռոցն և փայտակերտից, և չուանաց իսկ զանգակացն. ոչ յայնժամ միայն, այլ և յիշատակարկիրք ժամանակին աւանդեցին զայն յետնոց իբրև ստոյգ, որպէս զի չէր մարթի զհանգամանս իրացն գուշակել, եթէ ոչ պահէր՝ ի գիւտնի սրբոյն Ֆեռեչեայ նամականի խնամակալաց առողջութեան առ քաղաքապետն, ուստի ընկալաք զայս տեղեկութիւն։

Ի վաղիւ անդր առաւօտու այլ իմն նորանշան իրք պատահեցին, ազդողագոյնք յայս և՝ ի միտս

քաղաքային: Յամենայն կողմանս քաղաքին դրունք ամուր և պարսպաց էին շաղախեալ գորշ և գեղնաւորթ, որպէս սովորութիւն էր նոցա աղտեղութիւն: Իմ խիզախ զերծանել, անմիտ ախորժակաց արկանելոյ արհամարհս յամենեսեան, թէ չարութեան խորհրդոց վերադարձուցանել զքաղաքն, կամ այլոյմ խիզախ, անգիտելն. այլ ըստ վկայելոյ պատմագրաց գործոյն՝ հաւանելի թուի ընծայել զայն ցնորից մտաց բազմութեան քան սակաւուց ոմանց: Այլ ոչ առաջին և ոչ վերջին պատահեցին իրքս այս: Ոխիմաննեի, որ ծաղրէ յաձախ զայսպիսի օձութիւնս, և յաձախագոյն ևս ողբայ զնանրահասատութիւն ռամկին, հաստատէ զիրս զայս և նկարագրէ. և՝ ի վերայիւրաքանչիւր խնամակալք առողջութեան պատմէն զիրան յարևնման, և յիշատակէն զնոսոյզ և զնենգիս, և զիարձ օձանիւղսոյն՝ ի չնեարն՝ առանց ինչ սանանիւղոյ նոցա. և համարին՝ ի յանդուգն ստահակութենէ յառաջ եկեալ զգործն զայն քան յեղեռանէ:

Քաղաքն վաղ իսկ խռովեալ, վեր՝ ի վայր դղրդեցաւ. ամենուստեքին բոցավառ յարդիւ կիզուին զմասունս գրանց օձեալս, և անցաւորք զկայ առեալ պղծեալ մնչէին: Զօտարականս, յորոց մարթ էր կասկածել զիրան, և զորս գիւրին էր յայնժամ՝ ի հանգերձին ձանձնալ, ժողովուրդն կալեալ ածէր յատեան: Հարցփորձք և քննութիւնք լինէին զըմբռնելոցն և զըմբռնողաց և զկայից, ոչ որ գտանէր պարտաւոր, սակայն չէ և հանգարտէին միտք:

Ազատեան խնամակալութեան առողջութեան եհան հրովարտակ, յորում խոստանայր ազատութիւն՝ ի պատուհասէ՝ որ որք գուշակէր զայնցաւոցս. այլ՝ ի վերայիւրաքանչիւր նամականուագ ասէր խնամակալք. « Ոչ բարւոք թուեցաւ մեզ թողուլ անպատուհաս՝ ի սպառ զեղեռն այսպիսի, մանաւանդ յայսպիսում բազմութեանդ և՝ ի կասկածելի ժամանակի. և՝ ի սիրտս և յանդգնութեան ժողովրդեան, և առ՝ ի վեր հանել նշանակս ինչ զիրացն, արարաք հրովարտակ »:

Բայց մինչդեռ առեանն՝ ի խնդիր էր երացն առուգութեան, բազումք՝ ի ժողովրդենէ, որպէս յաձախ պատահէ, գիտէին զայն: Որք միանգամ թունաւորք զօձութիւնն համարէին, կէսք՝ ի նոցանէ կարծէին զայն վրէժխնդրութիւն Կոնճալոյն վասն թշնամանացն՝ ի մեկնելն իւրում կրելոյ. այլք հնարս իմն Ոխիլէոյ Կարգինալին վասն անմարդի զքաղաքն առնելոյ, առ՝ ի գիւրաւ առնուլ զայն, և այլք պարտաւոր կամէին առնել, վասնէրն անգիտելի, զկոմսն Գոլաթոյ զՎալէնսթային, կամ զայրը ոք կամ զայն յաղատաց Միլանոյ: Էին և՝ որք համարէին զայն խաղս մանկուց, կամ զբօսանս աշակերտաց և պաշտօնէից տաղտկացեալ՝ ի ժամանակի պաշարման Գալալէայ: Յաւէտ ձեռնհաս ձարակելոյ ախտին, որպէս էր երկիւղ, և չպատահէլ կոտորածի հասարակաց, հանգարտեցոյց առ ժամն զարհաւիրս, և թուէին իրքն անկեալ՝ ի մոռացօնս:

Բայց էին տակաւին ոչ սակաւք, չէ և ևս հա-

մղձեալք Թէ էր խակապէս Ժանտախտ ՚ի քա-
ղաքին և ՚ի զգուշարանի, զի ապաքինեին անդ-
ամանք յախտէն. և ըստ յայտնից ՚ի բժշկաց
սոսկականաց հատատեր ոամիին, զի չէր այն
Ժանտախտ. զի եթէ էր, պարտ էր՝ առնին ա-
մենեցուն խոկ մեռանել: Այ ՚ի բառնալ զամե-
նայն տարակոյս՝ խորհեցաւ առեանն առաղնու-
Թեան հնարս համեմատ պետութեան, ակն յայտնի
զերան կացուցանել՝ որպէս խնդրէր և Թելա-
դրէր Ժամանակն:

Ի հանգստարանն՝ որ կոչէր սրբոյն Գրիգո-
րի, արտաքոյ արևելեան դրան, տասոր էին քա-
ղաքացիք ՚ի տանի Հոգեդատութեան համարում
բեալ, պատնել վասն հանգուցելոց՝ որք ՚ի նա-
խորդ սրածուԹեան Թաղեալ էին անդ. և ան-
տի պատճառս առեալ զբօսանաց և տեսարա-
նաց՝ գնային անդր զգեցեալ հանդերձս վա-
ռաց ըստ իւրաքանչիւր կարի: Ի նմին աւուր
մեռեալ էին ՚ի Ժանտախտէ ընտանիք տան միոյ
համօրէն, ընդ այլ մեռեալս. և ՚ի պահու առա-
ւեղացոյն խառն, ընդ մէջ կառաց և հեծելոց և
հետևակաց, գիակունք ընտանեացն ՚ի հրամա-
նէ տեղին ածան ՚ի գերեզմանս անդր հոլա-
նիք ՚ի սայլս, որպէս զի տեսցէ ժողովուրդն
զնչանս ախտին: Յառնէր ձիչ և ազաղակ տոս-
կալի ընդ ուր անցանէր սայլն, և չշուկ երկա-
րատև ընդ ուր և անցեալն էր: Առաւել ևս այ-
սուիկ հատատարիմ եղև Ժանտախտն, և ինք-
նին ևս օր ըստ օրէ հատատարմանայր, զի և
համախմբուԹիւնն այն յաւել ոչ սակաւ զնա-
քակումն ախտին:

Այսպէս ՚ի սկզբան անդ արգելեալ՝ մի հա-
մարել զայն Ժանտախտ, և մի զանուն Ժանտ-
ախտի առնուլ ՚ի բերան, ապա կոչեցաւ այն
տենդ ապականիչ՝ տարատամ լինն տալով խմատս,
և ապա՝ ոչ խակապէս, այլ սիմատականուն Ժանտ-
ախտ: Այսպա յետոյ Ժանտախտ անէրկեայ և
անԺխտելի, այլ ՚ի ձեռն Թունից և կախարդա-
նաց նեղգործեալ, որ այլայլէ և չփոԹէ զնչա-
նակուԹիւն երկին:

Զէ ինչ կարևոր, որպէս ինձ Թուի, ներ-
հուն համառուԹիւն պատմուԹեան գալափարաց
և բառից՝ առ ՚ի գիտել զբաղմաց ՚ի նոցանէ
հանգուհատիսկ այլայլուԹիւնս: Ըստ յաջո-
ղուածոյ բախտի՝ ոչ բաղումք յայնցանէ այս-
քան կարևորք են, և բացայայտուԹեան նոցին
գինք այսչափ ծանուցանք, և այսքան մակդրաց
ամենեքին ընդունակք: Բայց մարթ էր ՚ի
դուշնաբերայս և ՚ի մեծամեծս խոյս տալ՝ ի բա-
զումս յերկայն և ՚ի Թիւր եղանակէ ատել բա-
յայայտուԹեան, ՚ի կիր առեալ զիանոն ՚ի բա-
զում ժամանակաց ընկալեալ, քննել, լսել,
համեմատել, և խորհել յառաջ քան զբար-
բառել:

Այլ այնքան դիւրին է քան զայլ ամենայն ի-
րայ ձառել զայսմանէ, զի և մեք մարդիկս առ
հասարակ ՚ի մասինս յայսմիկ կարեկցուԹեան
կարօտ գտանիմք:

ԳԼՈՒԽ Լ.

Երթայր և դժուարանայր ընդ ղվշտալի պէտս արկածիցն. առեանն առանպետաց խորհեցաւ դիմել առ քաղաքապետան 'ի ինդիր օգնականութեան. և յղեցան երկու 'ի նոցանէ 'ի բանակին՝ յանդիման առնել նմա զպէտս և ընդ չքաւորութիւն քաղաքին, զանհնարին ծախս, զունայնանալ գանձուն, զհասիլ յաղբրդ ամին դրաւումն, զհարկաց այնր տարեայ խափանած՝ վասն հատարակաց Թշուառութեան 'ի բազում պատճառաց յառաջ գալոյ, մանաւանդ յատկականութենէ զօրականին: Յուշ առնել նմա, զի ըստ օրինաց, և ըստ անընդհատ սովորութեան, և ըստ վճռոյ Կարոլոսի Ե. ծախք արկածիցն սրածութեան անկ են գանձուց արքունի, և զի յամին 1576 քաղաքապետան Ալիմանթէ վասն այնր ամի ժանտախտին ոչ միայն ապահարկ

արարեալ էր զքաղաքն, այլև չորս բևեռս սկսուցանել ՚ի գանձուց արքունեաց առեալ նմա ՚ի նպաստ: Եւ գարձեալ առաջի առնել նմա զչորեսին ինգրուածս. զապահարկութիւն որպէս յայնժամ, նպաստ քաղաքին ՚ի գանձուց արքունի, դրեալ առ Թագաւորն զաղէտս քաղաքին եւ զգաւառին, և զերկիրն ապականեալ ցայնվայր ՚ի վնասուորանոցաց՝ աղաւաղ՚ի տալոյ բնակութիւն վնասուորաց:

Քաղաքապետն արար պատասխանի վշտակցութեամբ և քաջալերելով. և յաւելոյր. « Յաւէտ ինձ յոյժ՝ զի չեմ ՚ի քաղաքիդ, և չկարեմ զամենայն հոգ և խնամ ՚ի կիր արկանել ՚ի սփոփումն դորին. այլ վասն եմ զի նախանձ տանուտեացդ լցեմ զամենայն պէտս. ժամանակ է ծախելոյ անխնայ, և զամենայն գումն գործելոյ »: Իսկ առ ինգիւրն նոցա խոստանայր առնել որ ինչ ժամանակն և նուաղութիւն արքունի գանձուց ներէին: Բայց չէտ պլոց և երթևեկաց, ինգրոց և պատասխանեաց, ոչ ինչ էլաք երացն չայղուցին. և ՚ի սատկանալ չոյժ սրածութեանն խորհեցաւ քաղաքապետն Թողուլ զամենայն իշխանութիւն իւր գրով ՚ի մեծ գաղրապետն Ֆէերրեր, պատաղեալ ինքն՝ որպէս ասէր՝ ՚ի հոգս պատերազմին:

Տանպետաք ՚ի գիմել առ քաղաքապետն՝ միւս այլ խորհուրդ կալեալ էին, ինգրել ՚ի Կարդինալ արքեպիսկոպոսէն՝ առնել աշխարհօրէն ապաստանս, ածել Թափօրով ընդ քաղաքն զչխարս սրբոյն Կարոլոսի: Ընկալաւ Կարդինալն զինգիրս նոցա վասն այլևայլ պատճառաց.

զի ոչ հաճոյ Թուէր նմա վտահել նոցա անխորհուրդ ՚ի հնարս, որոց եթէ ոչ չայղուցին էլաք՝ վտահութիւնն այն լինէր նոցա ՚ի գայթակղութիւն. երկիւղէր և՝ զի եթէ արդարև գոյին օծողքն անուանեալք, մարթ էր նոցա պատեհ առնուլ զթափօրն չօծանել գիւրաւ. և գարձեալ՝ զի ՚ի համախմբելոյ այնքան բազմութեան առաւելագոյն էր վտանգ ձարակման ախոյն, և զի կասկած էս օծութեանն առ վայր մի նիւթհատ, զարթուցեալ էր սատակիչ էս քան զառաջինն և տարածեալ:

Տեսեալ էին միւսանգամ, կամ Թուէր նոցա տեսեալ որմն և շինուածս հասարակաց, գրբունս տանց և դռնահարս օձեալ. և չընթանալ համբաւոյն բերան ՚ի բերանոյ, որպէս չաճախագոյն ՚ի կանխակալ կարծիս պատահէ, լուր լեթի երացն Թուէր տեսուածին: Սկրաք չերեսաց չարեացն և էս դառնացեալ, և դրբդռեալ ՚ի հասեալ վտանգէն, մտագիւրագոյն ընդունէին զայնպիսի կարծիս. զի զայրոյթ ցանկայ վրէժինդրութեան. և որպէս նրբին խմաստասիրք հանճարեղ ոմն, ախորժէ զայրոյթ ընծայել զարիածս չարութեան մարդկան՝ չորոց կարէ ինգրել վրէժ, քան պատճառաց՝ որոց չկարէ ատանել ինչ, այլ պարտ համբերել:

Սկ ՚ի բացատրել զբռնութիւն Թուինգին՝ կոչէին զայն լրբանոյն, արագաթոյն, նախանգին. և համարէին զայն խառնեալ ՚ի գորացս, չրժից, ՚ի լորձանց, չատկանելոց երաց, և չամենայնէ՝ զոր խառն ՚ի խուռն չնորք մտաց, գիտից են

քեսատ և գԺնդակս խմնալ: Կարծէին 'ի նոսա և կախարդանս առ ամենայն ինչ զօրաւոր, ա-մենայնի յաղթող, ամենայն գԺուարութենանց յուծիչ: Եթէ առաջնումն օծութեան ոչ արագ գՀետ գային արդասիք, մերձ կային պատճառք՝ ընծայել զայն տպայութեան արուեստին, զոր ապա 'ի կատարումն համարէին ածեալ, և նե-րակրթեալ զկամս 'ի գիւտական արուեստին: Որ ոք այնուհետև իշխէր խաղ մանկաւարդ զօ-ծումն համարել և ժխտել զգաւ, կայր և յա-մառ 'ի կասկածանս որպէս թէ մոլորեցուցա-նէր առեւտրն զԺողովուրդն 'ի ՀՀմարտութենէ վան զօշաքաղութեան, և գործակիցքն օծո-զաց. զի անուն այս եղև հուպ ընդհուպ աշխար-հագոյժ և ահարկու, այնպէս աներկբայելի, զի եթէ էր ոք ուրեք յօծողաց, գայր անվրէպ 'ի յայտ. ամենեքեան դէտ կային, ամենայն չար-ԺուՀն ածէր կասկած, և կասկած փոխէր ան-դէն 'ի հաւաստիս, և հաւաստիք 'ի զայրոյթ:

Երկուս գէպս առ այս ածէ Ռիփամոնեի յօ-րինակ, ոչ որպէս գԺնդակագոյնս 'ի գիւտքան հանապազորդ, այլ զի ականատես այնոցիկ ա-ռէ լեալ:

Յեկեղեցւոջ սրբոյն Անտոնի, յաւուր միում հանդիսի, ծեր ոմն ուԹսնամեայ վայրիկ մի 'ի ծունր կացեալ յաղօԹս, և ապա կամելով ա-ղօԹել 'ի նիստ, սրբեաց քղանցիւք զդէստուն զնստարանն: Կանայք ոմանք ընդ առեւտրելն զայն՝ ՀՀնն միաձայն. « Վ՛րէ հոգի, ծերը կօծէ աԹոռները »: Ժողովուրդն՝ որ կայր յեկեղե-ցւոջ՝ անդ 'ի վերայ հասին ծերոյն. և բուռն

հարեալ զսլիտակ հերացն, հանելով նմա կատուփս, կէսք 'ի քարշ ածէին զնա արտաքս, այլք մղէին յետուստ, և ածին կիսամեռ 'ի բանտ 'ի խոշտանգանս հարցափորձի: « Տեսի ես զնա 'ի Ճանապարհի », ասէ Ռիփամոնեի, « և ոչ ես դիտացի ինչ զնմանէ. Թուի ինձ՝ զի ոտաղ ինչ այնուհետև կարացեալ էցէ նա կեալ »:

Միւս ևս դեպք 'ի վաղիւ անդր պատահէ-ցին, նորանշան՝ այլ ոչ մահառիթ: Պատանիք երեք գաղղիացիք, մին բանասէր, միւսն նկա-րիչ, և երրորդն մեքենականին մանացու, և-կեալ էին Իտալիա յայց հնոց յիշատակաց և 'ի ինդիր շահու. և կային հուպ 'ի յորմ կաԹո-ղիկէին ուշիւ 'ի զնին: Մի յանցաւորաց ընդ այն եւս զնոսա զկայ առեալ, ակնարկեաց այլոմ, այլք ևս 'ի վերոյ հասեալ՝ խուռն կաղ-մեալ, գէտ կային արանցն՝ որք 'ի հանդերձից և 'ի ձեւոյ յարդարանաց հերացն և 'ի պայու-սակաց յայտնէին օտարականք, և չար ևս՝ զի գաղղիացիք էին: Եւ 'ի կարկառել նոցա ձեռն յորմ անդր առ 'ի ստուգել Թէ էցէ մարմա-րեայ, պաշարեցան ըմբռնեցան, և կափահա-րեալ մղեցան 'ի բանտ: Ըստ յաջողուածոյ՝ ոչ ինչ հեռի էր յեկեղեցւոյն առեւտրն, և ըստ մեծ ևս յաջողութեան՝ անպարտ գտեալ, 'ի բաց արձակեցան:

Ոչ 'ի քաղաքին Լեթ անցք այսպիսիք անցա-նէին. այլ մղեգնութիւն Ճարակեալ էր որպէս զԺանտախտն: Անցաւոր ոք ընդ չէնս, արտա-քոյ արահետ Ճանապարհի, կամ 'ի նմին խակ,

առաջ ինչ յաւելաւ՝ շուրջ հայելով, կամ ընկոզմանեալ առ ՚ի հանդչելն, կամ անծանօթ ոք՝ օտար ինչ կամ կասկածելի ՚ի դէմն կամ ՚ի ձորձս բերելով համարեր աներկբայապէս օ-ծող. և ընդ աղջ առնել ոյր ուրուք և իցէ, կամ ՚ի ձիչ մանկան, ՚ի հնչիւն զանգակի ըմբռներ եղկելին և քարկոծեր. և կամ կալեալ ածեր ՚ի կառաղն ամբոխն ՚ի բանտ, որպէս նոյն ինքն Ռիփամոնթի վկայէ. և բանտն առ ժամանակ մի էր նաւահանգիստ փրկութեան:

Բայց տանուպետք ոչ ինչ վհատեալ յանընդունելի լինելոյ աղաչանաց իւրեանց ՚ի խոհական հովանին, դարձան առ նա թախանձ առնել. և նմա ժողովրդեանն օգնէր նոցա աղաղակաւ: Կարդինալն դարձեալ հակառակ կացեալ, չանայր շրջել զնոսա ՚ի խորհրդոյ անտի, որչափ կարէրն խոհականութիւն առն միոյ ընդդէմ բռնութեան ժամանակին և թախանձանաց բազմութեան: Այլ ապա աւղն եա կատարել զթափօրն. հաւանեցաւ և ածել զարկղ նշխարաց սրբոյն Կարոլոսի յաւագ սեղան կաթողղիկէին, և դնել ՚ի տեսիլ ղաւուրս ութ:

Զգուանեմ ուրեք խնամակալաց առողջութեան արարեալ ինչ ընդդիմութիւն առ այս, կամ ցուցեալ դժկամակութիւն. բայց միայն սահմանեցին զգուշութիւնս ինչ, որովք առանց խափանել կարելոյ զվտանգն՝ ցուցանէին զերկիւղ իւրեանց: Սահմանեցին խաստագոյն և կարգս վանն եկաւորաց ՚ի քաղաքն. և առ անվրէպ կատարումն կարգացն զգուշութեան՝ եառնն փակ ունել զդրունս քաղաքին, և առ ՚ի

խափանել ըստ կարի ՚ի խառնել զվարակեալս ախտիւն և զկասկածելիս՝ եառնն թևեռել ընդդրունս առանց անհաղորդելեաց, որք ըստ վկայելոյ ուրուքն ժամանակակից պատմագրի, էին երբ հինգհարիւր:

Ցետ եւօրեայ հանդերձանաց ՚ի մետասան յունիսի, որ էր օր հանդիսին, չուս արար թափօրն ընդ այգն ՚ի մայր եկեղեցւոյ: Յառաջոյ գնայր երկայնաձիգ կարգ ժողովրդեան, առաւելագոյն մասամբ կանայք, լոյն քօղով ծածկեալք, բազուկք ՚ի նոցանէ բռկանի և քրձազգեաց: Զհետ գային արուեստաւորք, գրօշ նըշանաւոր առաջի. ապա եղբայրութիւնք՝ ՚ի ձև և ՚ի գոյն զգեստուց զանազանեալք. ապա կարգք կրօնաւորաց, ապա երիցունք, իւրաքանչիւր նշանաւ ատիճանին, ջահ ՚ի ձեռին. և ՚ի մէջ բոցափայլ խիտ առ խիտ մոմեղինաց և երգոց քաղցրաձայնութեան, ընդ ոսկեհուռ ձոխ հովանեաւ, գայր արկղ սրբոյ նշխարացն, բարձեալ ՚ի չորից կանոնիկոսաց զգեստաւորելոց պայծառ սպասուք, որ փոխանակաւ ընդ այլ զարկղն կրէին: Երեսէր ՚ի նմա ընդ ապակիս մարմին սրբոյն, զգեցեալ հայրապետական ոսկեթել սպասուք, թագ ՚ի գլուխ. և ՚ի ցամաքեալ և յայլայլեալ գէմն նորա էր նշմարել զնախատիսն կերպարան, որպիսի պատկերք նորա նկարին, և որպէս յիշէին ամենք տեսեալ զնա և մեծարեալ:

Զհետ նշխարաց քաջի հովուին, ասէ Ռիփամոնթի՝ յորմէ առաւելապէս առնուամ զայս նըկարագիրս, գայր արքեպիսկոպոսն, մեբձաւոր

Նմին արեամբ և աստիճանաւ և վաստակովք։ Այսպա հետևեալ միւս մասն գրոց, և զհետ նոցա գային ի շքանք, արարողական վառաւորագոյն զգեստուք. ապա աղաւանին մեծապայծառ հանդերձիւք ըստ պատշաճի կրօնական հանդիսին, և կոչք ի ձև ապաշխարութեան սգազգեաց կամ բոկոտն, ամենեքեան ջահ ի ձեռին. և յետ ամենեցուն այլք ի ժողովրդենէ խառն ի խուռն։

Այմենայն ձանապարհն ծնօթքար էր զարդարեալ. մեծատանց սպասս ազնիւս ընդ պատուհանս ապարանիցն արտաքս արկեալ, և տանց աղքատաց ծածկեալ էին ձակատք ի դրացեաց ձոխից կամ ի գանձուց հասարակաց։ Ուրեք փոխանակ սպասուց, այլուր ի ներքոյ նոցին, էին ոսոք սաղարթունք, և ամենայն ուրեք ի կախ պատկերք, արձանագիրք, և նկարք խորհրդաւորք։ Ի մէջ պատուհանաց եդեալ կային ի ցոյց անօթք պատուականք, աւանդք վաղեմիք և անդիւտք, և ամենայն ուրեք ձրագունք։ Ի յոգունս ի պատուհանաց անտի կային ի զնին ախտաժէտք զառուցեալք և փակեալք ի տան, և կցորդեին թափորականացն աղօթելոյ։ Իսկ այլք ի ձանապարհայ էին լուռ և ամայի, բայց միայն նուագողունք ոմանք ընդ պատուհանս ունին գնեին թափառական ձայնին. այլք, յորս էին և մայրապետք, եղեալ ի տանիս՝ ցանկալին գոնեայ ի հեռուստ անտի զարկղ սրբոց նշխարացն նշմարել, կամ զայլ ինչ մասն հանդիսին։

Էանց թափօրն ընդ ամենայն թաղս քաղաքին, և յամենայն կիցս ձանապարհայ, և ի հրապարակս՝ ուստի մեկնին գնան արահետք յարուարձանեայս, ղկայ առնոյր՝ հանգուցեալ զարկղ սրբոց նշխարացն առաջի խաչից կանգնելոց ի սրբոյն, յորոց ոմանք կան մինչև ցարդ կանգուն։ Երկարեաց հանդիսն մինչև ղկնի միջօրէին, յամեալ ոչ սակաւ դառնալ անդրէն ի կաթողիկէն։

Ի վաղիւ անդր, մինչդեռ ակրէր յանդուգն վատահուԹիւնն այն, և ի յոգունս աներկեան ապահովուԹիւն դագաղելոյ սրածուԹեան ի սպառ հանգիսիւն այնուիկ, սկսան յաձախել մահուանք յամենայն կարգս և ի կոզմանս քաղաքին, այնչափ առաւել և յեղակարծ և ապագ, զի չգոսաւ ոք՝ որ ոչ զԹափօրն զայն համարէր այնուրիկ պատճառ։ Այլ ոչ զարմանալն և աղետալն զօրուԹեան հասարակաց մոռահաճուԹեան. առաւելագոյնք երբ ոչ էԹէ համախմբուԹեան այնչափ բազմուԹեան ընդ այնքան ժամս, և շփելոյ նոցա անդադար ընդ միմեանս, տային զձարակուսն ախտին, այլ օծողացն պարտ գտանելոյ ի կատարուսն ամպարշտուԹեան իւրեանց։ Զի խառնեալ նոցա յամբոխն, որպէս ասէին, ապահանեալ էր ընպեղանեաւն զի և կարացեալ։ Այլ զի այս ևԷԹ ոչ դիպող և բաւական Թուէր պատճառ անհնարին կոտորածին ամենայն ուրեք ամենայն կարգաց, և ոչ ուրուք ի դիտողաց՝ զրոս սրակնագոյնս գործէին կասկածանք՝ տեսեալ ուրեք էր օծուսն կամ չաղախուսն յորում, դիմեցին անդրէն՝ առ ի մեկնել զերան՝ ի միւս հնարան

հնացեալս, և ընկալեալս յայնժամ՝ ի կարգ
եւրոպական մակացութեանց, ի փոչի թուհա-
ւոր. և ասէին ցանեալ զայն ընդ ճանապարհն,
և մանաւանդ ի տեղիս՝ ուր զկայ առնոյր թա-
փօրն, և մածեալ ի քլանցս հանդերձից, և
յոտս բազմաց՝ որ բոկանկ գնային ի հանդի-
սին: Մի ի ժամանակակից պատմագրաց յա-
ւելուա առաւ: « Էր յայնժամ սեռանիզ զբարե-
պաշտութիւն ընդ ամպարշտութեան, զնենգ
ընդ անկեղծութեան և զկորուստ ընդ շահու
ի պատերազմ. և հնչ խմաստութիւն մարդ-
կային ընդ ցնորս սոեղծեալս յիւրմէ մաքա-
ռէր »:

Ակսաւ այնուհետեւ ժանտախտն ևս քան զևս
մոլեգնիլ ճարակել. ի սակաւ աւուրս չինաց
դոգդես տուն զերծ ի հարուածոյն. և որ ի
զգուշարանին էր բազմութիւն ախտաժետաց՝
ի սուղ ժամանակի, ըստ վկայելոյ Սոմալեայ,
յերկուց հազարաց յաւելաւ յերկուտասան
հազար. և ապա, ըստ այլոց գրեթէ ամենեցուն
պատմագրաց, եհաս մինչև ի վեշտասան հա-
զար: Ի ջորջորգոմ աւուր յոլնխի, որպէս
դատեմ յայլոմ նամականուոջ խնամակալաց
առողջութեան, հանապազօրեայ թիւ մեռելոց
էանց քան զչինգհարիւր. և ապա ի ծայր սաստ-
կութեան ախտին, ըստ առաւելագունիցն հա-
մարոյ, եհաս ի հազար երկերիւր. իսկ եթէ
հաւատալ արժան իցէ Թուտինոյի, յերերքհա-
զար հինգհարիւր: Եւ յաւելու նա հաստա-
տել՝ զի յետ դադարելոյ սրածութեանն խոյզ
և խնդիր արարեալ խնամով, գտաւ թիւ բնակ-

չացն Միլանոս սակաւ ինչ աւելի քան զչորեք-
տասան հազար, որ յառաջն առաւելոյր քան
զերկերիւր հիսուն հազար: Այլ ըստ Ռիփա-
մոնթեայ էր յառաջագոյն երկերիւր հազար,
և ի քաղաքական արձանագրութենէ դատն
մեռեալք հարիւր քառասուն հազար. թող զ-
որոց չէզև հնար ունել ղհամար:

Ի սրդ դուշակել ի քանի անձիւրութեան էին
տատնպետք, յորս միայն Թողեալ էր հոգ հա-
ւարեակաց պետոյից, հայթայթել որ ինչ էր հր-
նարաւոր յայնպիսի ազէտս: Պարտ էր հանա-
պազ ընուլ զթիւս պաշտօնէից և յաւելուլ ըստ
աղգի աղգի պաշտամանց: Որք ի վտանգաւո-
րագոյն և յառաւել տաժանաւոր սպասաւո-
րութիւնս ախտին էին կարգեալ, կոչէին ըստ
վաղեմի անուանակոչութեան Մ՚նոպ, ոտցս էր
գործ՝ բառնալ ի տանց և ի ճանապարհաց և
ի զգուշարանէն զդիակունս, սայլիւք կրել ի
փոսս, և թաղել զնոսա. ածել ի զգուշարան
զախտացեալս, դարմանել զնոսա անգ, այրել
կամ մաքրել զկարասին ապականեալ և կաս-
կածելի: Այլք՝ որ Ռահահոդիսն կոչէին, գնային
առաջի սայլիցն, աղդ առնել անցաւորաց ի
ձայն զանգակի՝ կալնոցա ի բաց. և Պափոնէրակ՝
որ ոտցս և նոցա հրամայէին յերեսաց առնելոյ
խնամակալաց առողջութեան: Պարտ էր ունել
ի զգուշարանի բժիշկս, վիրաբոյժս, դեղորայ
և պարէն, և զամենայն կարևորս հիւանդանո-
ցի. պարտ էր պատրաստել այլևս տեղի ախտա-
ժետաց, որ օր ըստ օրէ հասանէին:

Նազմեցան առ այս ճեպ՝ ի ճեպոյ հիւղք փայ-

տակերպք յարդածածուկք ՚ի բացալայրն ըզդուշարանին. կառուցաւ միւս այլ զգուշարան կազմեալ ՚ի հիւղից, պատեալ տախտակամած շրջապատիւ, բաւական չորից բիւրուց ախտաժեռաց. և ոչ այնոքիկ բաւեալ, սահմանեցան այլ ևս երկուք, և ձեռն իսկ արկաւ ՚ի գործ. այլ առ ՚ի ջդոյէ կարևորաց ազդի ազդի սլիտակից՝ Թողան անկատար:

Դարձեալ և պակասէր օր ըստ օրէ արծաթ և բաղուկ և խրախոյս, ուր ընդ հակառակն յաւելուին տակաւ պէտք: Անդորձ մնային խորհուրդք և պատուէրքն, պակասէին ինամք կարևորք, և սիրտքն իսկ բանից. և յայն ծայր եհաս անկարողութիւն և յուսահատութիւն, մինչև Թողուլ անինամ և զաղխողորմ և զանհրաժեշտ կարևորս: Օրինակ ինն. մեռանէր մանկան բաղում, որոց մերք հարեալ էին ՚ի ժանտախտէ. առաջարկեաց ատեանն պատրաստել պատապարան վանն նոցա, և որոց յերկուսն կային կանայք կարօտեալք. այլ ոչ կարաց ձեռնհաս լինել իմք: «Պարտ էր, ասէ Թատենոյ, կարեկից լինել և տանապետացն՝ որ ՚ի վիշտս և ՚ի տրտմութեան կային յերեսաց անկարգ և անպատկառ զօրականին, անդ և ընդ ամենայն սահմանս երկրին. զի ոչ արծաթ և ոչ պարկնս ընդունէին ՚ի քաղաքապետէն, բայց միայն պատուէրն՝ զի ժամանակ էր պատերազմի, հարկ էր ինամել զզինուորս»: Որպէս թէ այսպէս կարևոր էր առնուլ պատերազմաւ զՔաղալէ, և այսքան ցանկալի՝ պահպանութիւն յաղթանակի:

Եւ քանզի վասն լայնատարած, զոր մերձ ՚ի զգուշարան անդր փորեալ էին, լի էր ծայր ՚ի ծայր. և մնային գիակունք՝ ոչ միայն անդ, այլ և յամենայն կողմանս քաղաքին անթաղ, և օր ըստ օրէ յաւելուին, ինդրեցին իշխանք բազումս առ գործն տխուր, և ոչ գտեալ՝ տիպեցան տալ պատասխանի խնամակալաց առողջութեան, զի չգիտէին զիր հնարս հայթայթել:

Զէր իսկ մարթ գիտել զելս երացն, եթէ ոչ օգնականութիւն նմին անակնկալ հասանէր: Վերատեսուչ խնամակալաց առնէին յուսահատեալ, գիմեալ արտասուօք առ երկոսին ժիրաժիր միանձունս վերակացուս զգուշարանին. և Հայրն Միքայէլ խոստացաւ նմա ՚ի չորս աւուրս առնել զքաղաքն զերծ ՚ի գիականց, և յաւուրս ուրեք բանալ վտոս ՚ի բաւականութիւն ոչ միայն առձեռն սլիտոյիցն, այլ և չարագոյն արկածից՝ եթէ պատահէին: Եւ առեալ ընդ իւր զերկայրն կրօնակից, և զարս երկուս տուեալս նմա յատենէն, եւ արտաքոյ քաղաքին ՚ի ինդիր շինականաց աշխատասիրաց. և ՚ի ձեռն պետական իշխանութեան, և ձեռն զգեստուն իւրոյ և բանից զօրութեան, գումարեաց արս իբր երկերիւր, և եւս նոցա պեղել վտոս երիս մեծամեծս: Յղեաց ապա անդր ՚ի զգուշարանն Մոնաստս, ժողովել ըզդիակունս, և ՚ի ժամադրեալ աւուրն՝ երկոյ ըզխոստումն իւր:

Դէպ եղև պակասել և բժիշկայ ՚ի զգուշարանին. և հաղիւ խոստմամբ մեծամեծ վարձուց և

պատուոյ գոհանուաղունք յոյժ քան զպէտս։ Բաղում անգամ ՚ի սպառել կայնի և պարէնք, և վտանգ ՚ի վերայ կայր սովամահ լինելոյ. և յանհնարինս անդ ոչ գոն ուրեք հասանելին յերզակալծ նպաստք յորդառատք յանակնկալ ողորմածաց։ Յասլշուքեան հասարակաց, որք առ երկիւղի զանձնէ՝ անկարելիք ընդ այլս էին, գոհան միշտ ողորմածք յօժարք յողորմութիւն, և այլք՝ յորս զարթեաւ ողորմածութիւն ՚ի դադարել ամենայն երկրաւոր գործոց։ Ի կոտորածի և ՚ի վախստեան բազմաց՝ որոց անկ էր վերակացութիւն և հոգաբարձութիւն, ելն միշտ և քաջասիրտք և քաջառողջք, որ պինդ կացին ՚ի պաշտաման իւրեանց, և այլք՝ որ առ գոլե սկզբ յանձն առին առաքինութեամբ զհոգս՝ յորս չէին կոչեցեալ ՚ի պաշտամանէ։

Փայլեաց յայնժամ առաւելապէս յերկեղեցական հանրագոյն և պատրաստագոյն և անյողդողդ հաւատարմութիւն ՚ի պարտս գործուարինս ժամանակին։ Ի զգուշարանս և ՚ի քաղաքին ոչ պակասեաց երբեք օգնականութիւն նոցա. հասանէին նոքա ուր և տառապանք էին. խառնէին ընդ նուաղեալ անկեալս յախտէն և ընդ օրհասականս. էր զի և ինքեանք նուաղեալք և օրհասականք։ Ի հոգևոր նպաստս յաւելուին ըստ կարի և զմարմնաւորս, և մատուցանէին զամենայն սպառաւորութիւն՝ զոր պահանջէին պէտք ՚ի ժողովրդապետաց քաղաքին և եթ վախճանեցան վեշտասան, իսկ ութ ՚ի կենդանոյ։

Կարգինաչն՝ որպէս էր իսկ ակնկալել ՚ի նմանէ, տայր բոլորից յորդոր և օրինակ. անկան զնուաստ յախտէն գրեթէ ամենայն պաշտօնեայք արքեպիսկոպոսարանին. և աղաչեալ յաղգականաց իւրոց, ՚ի բարձրագոյն աստիճանսն, և ՚ի ջրջակայից երկրին եկեղեցւոյ, հեռանալ ՚ի վտանգէն յամարաստան ուրեք, հրաժարեաց ՚ի խորհրդոց նոցա, և ոչ լուաւ թախանձանաց, այնու արիութեամբ՝ որով գրէրն առ ժողովրդապետս. «Պատրաստ կացցուք մեկնելոյ ՚ի մահկանացու կենաց աստի, քան թողուլ անխնամ զորդիս մեր և զընտանիս հոգևորս. յօժարութեամբ ընթացցուք ընդ գէմ ժանտախտիս որպէս ՚ի մրցանակ, և որպէս ՚ի կեանս, ուր իցէ չահել և հոգի մի ՚ի ֆրկատս»։

Այլ ոչ անփոյթ առնէր զզգուշութիւնս, որ ոչ խափանէին զնա ՚ի պարտուց իւրոց. վասն որոց և հրահանգս և կանոնս տուեալ էր գրելոց։ Միանգամայն և անտես առնէր զվտանգս, և թուէր նմին անգիտանալ զայնս, ուր անհրաժեշտ առաջի կային դէպք ՚ի բարերարել։ Թող զեկեղեցականս, զորոց գովէր միշտ և ուղղէր զնախանձ՝ առ ՚ի վառել յեռանդն, եթէ էր ոք ՚ի նոցանէ ցուրտ ՚ի վաստակ. և առ ՚ի փոխանակել այլս ՚ի տեղի վախճանելոց, եթայ մեռս առաջի ամենեցուն՝ որոց պէտք լինչ էին, և կամէին գալ առ ինքն։ Այլ առնէր ՚ի զգուշարանս՝ սփոփել զհիւանդս, և քաջալերել զպատաւորս. ընթանայր ընդ քաղաքն՝ ածել նպաստս փակելոց ՚ի տունս փակա-

նեալս յանտէն, զկայ առնոյր առ գլուխս նո-
ցա ընդ պատուհանօք՝ լսել զչեծուածիւնս նո-
ցա, մխիթարել և քաջալերել զնոսա: Եւ զի՛
երկարեմ, կեցեալ ընդ երկար ՚ի մէջ հարեւոց
՚ի ժանտախտէ, զարմանայր և ինքն յիւրմէնէն
անսխողջամբ:

Այսպէս յաղէտս հասարակաց և յաղմկել
ամենայն սովորական կարգաց ընդերկար, երե-
ւի միշտ աճումն և բարձրութիւն առաքինու-
թեան. այլ աճէ ընդ նմին և չարութիւն, և
բազում այն է՛ զի առաւել քան զառաքինու-
թիւն, որպէս յարկածս անդ պատահեաց:
Այնօրինիք՝ յորս ժանտախտն խնայեաց, և ոչ
ահ ՚ի նոսա արկանէր, գոն ՚ի խռովութեան
անդ հասարակաց և ՚ի թողանալ առհնական
զօրութեան՝ պատէհ ժամանակ անօրինելոյ ան-
պատուհաս. զի և առհնական զօրութիւն էանց,
գրեթէ բուռնգակ, ՚ի ձեռս չարագործիս ՚ի
նոցանէ:

Պաշտօն Մոնաստից և ռահասորդաց յանձն
էր ՚ի բազում, յորս սէր յաւիտենական և
անառակութեան յաղթէր երկիւղն ախտին և
սոսկալոյ բնութեան: Կարգք և կանոնք խիստք
օրինադրեալ էին նոցա, և պատուհասք սաս-
տիկք սպառնացեալ. սահմանեալ իւրաքանչիւր
ումեք տեղի, և կացուցեալ ՚ի վերայ նոցա պա-
տուիրակք, որպէս ասացաք. և ՚ի վերայ ամե-
նեցուն առ հասարակ գառաւորք և իշխանք յա-
մենայն թաղս կարգեալ, ունել խնամ ամենայն
կարևորաց ՚ի բարեկարգութիւն. այլ այս ամե-
նայն, հանդերձ արդասւօքն առեալ առ ժամա-

նակ մի: Զի ՚ի յաճախել տակաւ մահացելոց և
երթելոց ՚ի բաց, ոչ ևս էին՝ որ սանձահարեին
զնոսա. այլ ազատ մնացեալ, մանաւանդ Մո-
նաստք, անօրինէին ըստ հաճոյս զամենայն: Մը-
տանէին իշխանաբար և թշնամաբար ՚ի տունս,
և թողզպաշտակութիւնս և զնստութիւն ընդ
երկեալս անհետալս ժանտախտիս ՚ի ձեռս նոցա,
զձեռն անօրէնս ապականեալս յախտէն՝ գը-
նէին ՚ի վերայ ողջոց, արանց և կանանց և որդ-
ոց նոցա և ազգականաց, ապառնալով ձգել
ածել զնոսա ՚ի զդուշարան՝ եթէ ոչ ինքեանք
կամ յայլոց լինէին գրաւեալք:

Դարձեալ և վարձս պահանջէին, ոչ յանձն
առեալ ածել ՚ի բաց զդիակունս նեխեալս՝ ա-
ռանց այսչափ կամ այնչափ դրամոյ: Դար-
ձեալ և ՚ի սպրդից գիականց թողուին կամաւ
ձորձս ապականեալս անկանել զնանապարհսն
՚ի ճարակուսին և ՚ի չարահոտութիւն ախտին,
որ էր նոցա յեկամուտ, յիշխանութիւն, և ՚ի
ահն ցնծութեան: Ի վերայ այսոցիկ և արք ա-
նօրէնք ձեացեալ ՚ի Մոնաստս, զանգակ յօտին՝
որպէս էր սահմանեալ նշանակ Մոնաստից, ազ-
դարար անցից նոցին, մտանէին ՚ի տունս անօ-
րինել համարձակ. զիւս ՚ի տանց գտեալ բաց
և ունայն, կամ բնակեալ յանգոյս և ՚ի կիսա-
մեռ ախտաժետաց, աւար հարկանէին անպա-
տուհաս. յայլս յանկարծակի յարձակեալ որ-
պէս նուիրակք, գործէին զնոյն և առաւել ևս
չարիս:

Ընդ չարութեան ածեաց և յիմարութիւն.
ամենայն մոլորութիւնք, վաղ իսկ առաւել

կամ նուաղ սիրեալք յապշութենէ և՛ ի յուշ մանէ մոաց հասարակաց, առնն զօրութիւն նորանշան, և ածին արագ և բազմապատիկ արդասիս. յաւելին զօրացուցանել և յաճախել զօծութեանն արհաւիրս, և նուաւ միւս այլ աղգ չարեաց: Զի պատկեր կարծեցեալոյ վտանգին պատեալ պաշարեալ նեղէր զոգիս առաւել յոյժ քան զնմանսն վտանգ ահաւոյիկայ: «Մինչդեռ դիակունքն սպառեալ և չեզջակուռեալ առաջի աչաց կային՝ դարձուցեալ զքաղաքն համօրէն՝ ի գերեզմանս, էր յոռեգոյն ինչ և աղետագոյն քան զայն, ասէ Ինիփամոն-Թի, զայրոյթ կատաղի ընդ միմեանս և կասկած այլանդակ: Ոչ միայն կասկածել զմերձաւորի, զբարեկամէ, զամուսնոյ և զհիւրոյ, այլ և ա-նուանք և զոգք սիրելութեան առն ընդ կնոջ, եղբօր ընդ եղբօր, և հօր ընդ որդւոյ, էին խիթալի. և որ սոսկալին ևս է և անասելի, սեղան և առագաստ ահ արկանէին որպէս գարան և ծածկարան մահաբեր Թունից»:

Կարծեցեալն այն ընդհանուր դաւ խօլական խռովէր զամենայն միտս, և այլայլէր զամենայն հաւատոյս վստահութեան յիրեարս: Ի սկզբանէ հաւատոյն՝ ՛ի փառասիրութենէ և ՛ի զօշաքաղութենէ չարժեալ զօծողս. ապա երազեցն և հաւատացն՝ ախորժ ինչ յօծութեան և հրապոյրս, որ սիրէին կամաց: Ցնորք ախտաժէտաց՝ որ ասէին կասկածել յայլոյ՝ Թըւէին յայտնութիւնք, և զամենայն ինչ զամենայն ումեքէ առնէին կասկածելի: Եւ առաւել քան զցնորս բանից զօրէր յապացոյց, եթէ

դէպ լինէր ախտաժէտին ՛ի ցնորս անդ առնել՝ որ ինչ համարէին առնել օծողաց, և յոյժ հաւանելի և դիպող Թուէր այն պատճառ հասարակաց խելամտութեան, որպէս վկայէն բազումք ՛ի պատմագրաց:

Դարձեալ և յերկայն և ՛ի տխուր հարցափորձս կախարդանաց՝ խոստովանութիւնք, Թէպէտ և ոչ միշտ կոծղեալք յամբաստանելոյ, ոչ սակաւ զօրէին ՛ի յառաջ վարել և ՛ի պինդ ունել զկարծիս սիրեալս: Այլ յորժամ կարծիք ինչ սիրեն ընդերկար և ՛ի բազում տեղիս, ամենայն երօք գան ՛ի յայտ, հեռագոյնն զամենայն ելս, անցանեն ընդ ամենայն աստիճանս խելամտութեան. և յայնժամ դժուարին է յոյժ զի ամենեքեան կամ բազումք հաւատոյցեն մինչև ՛ի սպառ՝ Թէ հրաշալի ինչ առնիցէ, եթէ ոչ գայցէ ոք ՛ի մէջ՝ որ ակներև արասցէ զայն:

Ի վէպս, զորս ցնորք օծութեան եռուն յօգել, մի ինչ արժանաւոր է յիշատակի, վասն գտանելոյ նորա հաւատս, և ասպարէզ ՛ի ձեմ: Պատմի, (ոչ արդարև միօրինակ, որպէս և ոչ մի յառասպելաց, այլ վեր ՛ի վերոյ ինչ նմանութեամբ,) սեռեալ երբեմն ուրուք ՛ի հրապարակի մայր եկեղեցւոյն կառս ՛ի վեցից ձիոց ընթեալ, և ՛ի նեբբս անդ բազմեալ ընդ այլս այր յալեթանգամ, ազնուական դիմօք՝ այլ թխամիսկ, հրափայլ աչօք, խոզանեալ հերովք, ըստպառնող չըթամբք: Եւ մինչդեռ կայր նա պչուցեալ՛ի ընկէն, ղկայ առնուն կառքն, և հրաւիրեն զնա կառավարն ելանել՛ի կառն, և նա չկարէ

հրաժարել: Երջանիկ ինչ առեալ կառոք, իջանէին առ դրան պալատան ուրեք, ուր մտեալ և ինքն ընդ այլս, սեսանէ անդ զոսարձալիս և սոսկալիս, բռնարատանս և ամայիս, անձաւս և սըբահս, և հոլմնեալ ձիւաղս 'ի խորհուրդ: Յոմեցանէն նմա անդ գանձք, և լինի հրաման՝ առնուլ անտի որչափ և կամք նցեն, բայց ընդ նմին և անօթ փոքրիկ սպեղանւոյ, չուրջ ածել զայն ընդ քաղաքն: Այլ նորա չառեալ զայն յանձն, 'ի քթթել ախան գոանի 'ի սեղւոջ՝ ուստի յափշտակեալն էր: Պատմութիւնս այս հաւատարիմ եղեալ ժողովրդեան, և ըստ սահմանի Ախմամնթեայ՝ ոչ բաւականապէս ծաղրեալ 'ի խոհականաց, տարածեցաւ Իտալիա համբուրն և արտաքոյ, և տպագրութեամբ իսկ եղ 'ի լոյս 'ի Գերմանիա: Աբքեպիսկոպոսն Մակոնցայի գրեաց զայսմանէ առ Կարդինալն, թէ մաքթ էր հաւատս ընծայել հրաշալեացն այնոցիկ պատմելոց, և ընկալաւ պատասխանի՝ զի երազք էին:

Ցնորք գիտնոց ժամանակին, թէպէտ և ոչ սոյնպիսիք, այլ համաչափ էին, և նոցին չարաչար արգասեաց բերրիք: Առաւելագոյնք 'ի նոցանէ գուժէին չարիս, և պատճառ նոցին համբերին զվարսանն երևեալ յամին 1628, և ըզգուշդընթացութիւն Երևակին ընդ Լուսնթագի: Բժիշկք իսկ, որպէս Թաւենոյ և Սևթթալա, գուշակեալ էին զժանտախտն, սեսեալ զմուտս նորա և զճարակումն. այլ յետոյ ասպա տեղի հատուն կարծեաց ոմանիկն, և ընծայեցին Թունից և գիւտական գաւոյ զսովորական արգասիս ախտին: Դատաւորք օր ըստ օրէ նուաղեալ և տարակուսեալ, զդոյզն իսկ զայն հակողութիւն՝ որում ձեռնհաս էին՝ Թողլեն 'ի բայ գրեթէ 'ի սպառ, և 'ի ինդիր լինէին ածողաց, և ըստ արկածից բախտի՝ հաւատային գտեալ զնոսա: Բայց քանզի երկարատատուր են վէպք նոցա, և ոչ կարեւոր ընթեռնլեաց, դարձցուք առ գիւցազունս մեր, զորս ընդհերիալ Թողաք 'ի բաց:

ԳԼՈՒԽ ԼԳ.

Ի միում աւուրց ՚ի վերջկոյս օգոստոսի, ՚ի բնէն իսկ եռանդեան Ժանտահարն, գառնայր Ռոտրիկ գիշերային ՚ի տուն իւր ՚ի Մելան՝ ընդ հաւատարմին իւրում Կրիզոյի, որ մի էր յերից կամ չորից յամենայն սպասաւորս իւր զերծեալ ըստ յախտէն: Եւ գառնայր յակմբէ բարեկամացն, ընդ որս սովոր էր պարապել ՚ի սքանչելի ժամանակին. և էին ՚ի նոսա միշտ նորանորք, այլոչ ոք ՚ի ծերոց: Այն օր լեալ էր նմա ՚ի զբաղութագունից, յաճախելով զկարեւոր արձանագանաւ լինն Ատիլեայ կոմսի, որ երկաւորեայ յառաջ հարեալ էր յախտէն:

Բայց ՚ի գառնալն զդայր նեղութիւն ինչ և տկարութիւն ծնգաց, դժուարութիւն ընդդէմ հուր նեղելին, զոր ինքն համարէր ՚ի գինեբուաց ՚ի պղնութենէ և ՚ի տօթոյ ամարայնոյ:

Ոչ երբայ յաւելնայն ձանապարհին զբերան իւր ի խօսս, և ընդ հասանելն ի տուն, ասաց ցԿրիզզ՝ առաջնորդել լուսով ի սենեակ իւր. և երբև մտին անդր, եռես Կրիզզ զդէմս տեառն իւրոյ պլանդակ և հրաւառ, և զայն փայլակնացայտ ի դուրս կրկովեալ. և կայր հեռի ի նմանէ, զի յայնպիսեաւ վտանգի սրինկայից ևս դադցես էին աչք բժշկականք: Ռոտրիկեայ ի գիմաց Կրիզզի զիատն դուշակեալ ասէ. « Բան չիկայ, աղէկ եմ, շատ աղէկ, քիչ մը եւել խմեցի ան ձերմակ գինիէն... բայց աղէկ քուն մը որ ըլլամ, կանցնի. սա ձրագը գիմացես վերցուր, խնամ կը զարնէ աչքիս, սասիկ քուն ուզեմ»...

Կրիզզ հեռի կացեալ միշտ, ասէ. « Հա, աննանկ պիտոր ըլլայ, ձերմակ գինիին ուժին կպատահէ, շուտ մը պատհէ որ անցնի, քունը աղէկ կընէ »: —

« Աղէկ կըսես, մեյմը որ քուն ըլլամ... Բայց հիմայ ալ աղէկ եմ. սա զանգակը քովս դիր, յանկարծ պէտք կրնայ ըլլալ. ուշ դիր՝ զարնելու որ ըլլամ. բայց յուսամ որ պէտք չեմ ունենար »:

Եւ ի կատարել Կրիզզի զպատուէրն՝ հեռի կալով ըստ կարի, յաւել Ռոտրիկ. « Շատ զարմանք՝ որ ձրագը առջեւի նեղուելիեն տայ աչքիս »:

Կրիզզի բարձեալ զձրագն, և գիշեր բարի մաղթելով նմա, եւ փութով ի բաց, մինչդեռ նա ընդ վերմակաւն ամփոփէր: Բայց վերմակն Թուէր նմա ծանրաբեռն, և թօթափեալ զայն

ի բաց՝ կծկեալ կայր առ ի նինջ, ստիպեալ ի քնոյ: Այլ ընդ փակել զաչս՝ ընդոստնայր ի վեր, որպէս թէ ցրցելով զնա ուրուք, և ոչ նեղելովնամ լինել ի քուն, զի տակաւ զօրանայր ջերմն, և յաւելոյր տագնապ. խակ ինքն ամօթայնոյ տօթոյն և անտակին գնէր մեզ. բայց և կասկածէր զժանտախտէն՝ որ տիրէրն յայնժամ և ամենայն ուրեք հասանէր, և զոր ի խրախուսնս անգ յեզեղէին ընդ խաղ, զի գիւրագոյն էր ծաղրել զայն՝ քան խորհել զայնմանէ ուշիւ:

Շրջշրջեալ ընդհերիար յանկողնի, յետոյ ուրեմն ի քուն եղէ. բայց երազք խառն ի խուռն անդադհականք նեղէին զնա: Յետ այլոց Թուէր նմա կալ ի մեծի ուրեք եկեղեցւոջ ի վեր ի վեր ի խառն, և ոչ գիտէր որպէս երթեալ էր անդր, և որպէս անկեալ ի միոս խոր, մանաւանդ յայնպիսեաւ ժամանակի, գնալ յեկեղեցի: Հայէր չուրջ զիւրև, և էին ամենեքեան գեղնեալ ծիւրեալ, աչք նոցա անքթիթ յապուշ հարեալ, և չրթունք անկեալ ի կախ. ամենեքեան ցիցոտի պատառատունս զգեցեալ, և ընդ պատառուածս կապերտին երևէին ածք և պալարք. և Թուէր նմա վարել զնոսա աղաղակաւ ի բաց, դիտելով ի դուռնն՝ որ հեռի կայր: Բայց յաղաղակէն խոժոռագեմ և սպառնալից անչարժ կայր, մանաւանդ յինքն ամփոփէր, զդուշացեալ յաղտեղի խառնէն՝ որ հպէին ի նա ամենուստ, և ոչ ոք յանդգնայ ամբոխէն տայր նշան հեռանալոյ, և ոչ խմանալոյ ինչ: Եւ Թուէր նմա՝ միոյ ուրուք ի նոցա

նէ խթել ղինքն արմաւ՝ ի ձախմէ ընդ սիրտն
և ընդ անուէթ, և զդայր անդ խայթուած և
ցաւ և որպէս բեռն ինչ ծանր. և՝ ի ձգնելն զեր-
ծանել անտի յաչ, այլ նմին անգիտելի ինչ խայ-
թէր ընդ՝ ի նոյն տեղի: Սրամտեալ բուռն հա-
րեալ՝ ի սուսեր, թուէր նմա սուսերն այն՝ ի
վեր չարժեալ՝ ի խառնէն, և զնդի երախակա-
ղին ձնդել զխայթուածն. արկ ձեռն, և չեգիտ
զսուսերն, այլ սաստիկ ևս զդայր զխայթ:
Ձչէր և հևայր, և՝ ի կամըն դոչել բարձրաձայն՝
եաեա, և ահա դէմք ամենեցուն՝ ի մի կողմն
դառնային: Դարձաւ և ինքն, և եաեա բեմ, և՝ ի
շրջանակէ բեմին խորանաձև նմին ողորկ և փայ-
լուն զնուաւ վերացեալ: Ամբառնայր՝ ի նմա
և տակաւ երևէր գլուխ մի գերծեալ, ապա
աչք, ապա երեսք, ապա մօրուս երկայն և ապև-
տակ, յետոյ ապա կրծնաւոր զօտւով չափ
կանգուն՝ ի վեր քան զշրջանակ ամպիսին, և
էր Հայրն Իլիատափոր: Որոյ շուրջ յածեալ
զաչս փայլակնաձև հայեցիւք, թուէր ապա՝ ի
նա ինքն ակնկատոյց, ձեռն՝ ի վեր առեալ որ-
պէս կայրն՝ ի վայրապարկ սրահի պալատան
Նորա: Յայնժամ և ինքն ամբարձ զձեռն իւր
զայրագին, բուռն արար անձին՝ որպէս թէ
զիմիելով ունել զբաղուկ Նորա ընդ օգս կա-
կառեալ, քրթմնջելով աղօտաձայն: Եւ յան-
կարծ ուժգին գոչմամբ զարթուցեալ, էառ՝ ի
վայր զբաղուկ իւր՝ զոր երօրէն էր ամբար-
ձեալ, հալիւ լինքն եկն և եբաց զաչս, որ նե-
ղէին՝ ի լուսոյ առնջեան, որպէս յերեկոյին՝ ի
ճրագէ, զի ծագեալ էր տիւ: Ծանեաւ զանկո-

ղինս իւր և զսենեակ, և գիտաց՝ զի երազք էին
որ անցին, եկեղեցին, ամբոխն, կրօնաւորն, և
ամենայն ինչ, բաց՝ ի ցաւոց ահեակ կողին: Եւ
զդայր նա Թնդիւն սրտի ուժգին, տագնապ,
չհոգնէր՝ ի լսելիս և չքնն անլռելի, հուր՝ ի
նեբքս, և Թուլութիւն անդամոց չար ևս քան
յերեկն՝ ի մահիճս: Երկմտէր զառաջինն զըն-
նել զտեղի ցաւոցն, այլ ապա ակնարկեալ
անդր ահիւ, եաեա եղունգն ժանտ և կապուա-
տակ:

Խոհեցաւ այրն, արհաւիրք մահու կալան
զինա, մանաւանդ՝ ի սոսկմանէ մտանելոյ՝ ի
ձեռս Մոնատից, և՝ ի զգուշարան անդր ածե-
լոյ: Խորհէր՝ ի հնարս զերծանելոյ՝ ի չարեաց
անտի, չուարէր, և խաւարէին խորհուրդք
մտաց իւրոյ. զդայր զի մերձ էր անկանել՝ ի
մտաց և յուսահատել: Էառ զղանդակն, եհար
ուժգին. երևեցաւ անդէն Կրիղոյ, որ կազմ
և պատրաստ կայր արտաքոյ. եկաց հեռի՝ ի
մահճացն, հայեցաւ՝ ի նա ուշիւ, և գիտաց
հաւաստեաւ՝ զոր կասկածեալն էր յերեկոյէ:

Այժ ցնա Ոտորիկ, հալիւ կարացեալ կալ՝ ի
նիստ. « Կրիղոյ, դուն միշտ հաւատարիմ եղած
ես ինծի » : —

« Ի՞նչ լսեր է, տէր իմ, պարտքս ըներ
եմ » : —

« Ես ալ քու բարիքդ ուզեր եմ միշտ » : —

« Հրամանքիդ բարեմեծնէն » : —

« Քու վրադ կրնամ վստահիլ » : —

« Ա՛ո ինչ խօսք է » : —

« Ազէկ չեմ, Կրիղոյ » : —

« Կ'իմանայի » : —

« Ըռընտաչը որ ըլլար, առջինէն եւեր բա-
րեր պիտոր ընեմ քեզի » :

Լռեաց Կրիզոյ, ծալով երկոց այնքան նախեր-
գանաց. և յաւել Ռոտրիկ.

« Ձեմ կրնար ուրիշի վառահիլ, չնորք մը
ըրէ ինծի, Կրիզոյ » : —

« Հրամմէ » : —

« Գիտես ոնր է Գեօտոյ վիրաբոյժը » : —

« Շատ աղէկ գիտեմ » : —

« Պատուական մարդ է, ծածուկ կը պահէ՝
աղէկ որ վճարուի. գնա կանչէ զինքը, ըսէ որ
հինգ վեց սկուտ կուտամ ամեն մէկ այցելու-
Թեանը, աւելի ալ Թէ որ գոհ չըլլայ. Թող
չուտ մը գայ, ու չնորք կընէ Թէ որ մարդ չի-
մանայ գալը » : —

« Աղէկ մտածեցիր, տէր իմ. կերթամ ու
չուտ մը կը գտնամ » : —

« Կեցիր, քիչ մը ըսելու տուր ինծի, անանկ
ծարուեր եմ որ ալ չեմ կրնար դիմանալ » : —

« Ձէ, տէր իմ, առանց բժշկին հարցընելու
բան մ'ըներ. ատոնք կարգե գուրս հիւանդու-
Թիւններ են. առեն ալ կորսընցընելու չէ,
սիրտդ հանգարտ բռնէ, քանի մը վայրկեանէն
հոս եմ վիրաբուժին հետ » :

Բայց Ռոտրիկ ընկողմանեալ անդրէն ի մա-
հիճան, ընկերէր ընդ նմա մտաք ի տուն Գեօ-
տոյի, Թուէր զքայլս նորա, չափէր զժամա-
նակն, գտանայր տեսիլ զինեալ զվալերն, և գար-
ձուցանէր անդէն զերեսս իւր սոսկալով: Եւ
գարձեալ վերատուն ունկն դնէր ի լուր գալըս-

տեան վիրաբուժին, և մտադրութիւնն այն
մեղմէր սակաւիկ մի զղջացումն ախտին, և ու-
նէր զնա ի զգաստութեան : Եւ ահա լուաւ
ձայն ի հեռուստա, այլ Թուէր նմա ի ներքուստ
ապարանիցն, և ոչ ի ճանապարհէ. ուշ եգ, և
զօրանայր բարբառն և յաճախէր, և ոտնաձայն
ևս լինէր լսելի : Կասկած երկիւղն անկաւ ի
միտս նորա, յարեաւ անդրէն ի նիստ, և ու-
շիւ ունկն եդեալ՝ լուաւ բոմբիւն ինն մեղմ ի
մերձակայ սենեկէ, որպէս բեռին զգուշու-
Թեամբ եդեալ ի գետին : Այրկ զոտս ի գուրս
յանկուցեաց՝ կամելով ինն իջանել. հայեցաւ ի
գուռն սենեկին, և ետես զի բանայր, և մտա-
նէին ի ձորձս կարմրաշորթիս ազատեղս գէմք
երիտս նզովելոք, յայտնի ատացից, Մոնտոք
երիտս : Տեսանէր և զկէս գիմաց Կրիզոյի, որ
ծածկեալ յետիոսս Թերաբաց գրան՝ գիտէր
ի ներքս : Գոչեաց Ռոտրիկ. « Մատնիչ գար-
չելի... գուրս անզգամներ... հասէք Պոնտե-
նոյ, Գարլոթթոյ », և ձեռն ընդ բարձիւն արա-
կեալ՝ խնդրէր զատրճանակ. եգիտ զայն և ի
գուրս ձգեաց : Այլ ընդ գալել նորա գիմեցին
Մոնտոք ի մահիճն, և արագագոյնն յերկո-
ցունց՝ չև կարացեալ նորա առնել ինչ՝ անկաւ
գնովաւ, կորզեաց զատրճանակն ի ձեռաց նո-
րա, և արկ ի բաց. և մղեալ գնա յորսայս և
գինդ կալեալ, ասէր կատաղութեամբ և ան-
գոսնելով. « Գեղն ակս անզգամք, Մոնտաներ-
գիմ ատրճանակ հա՞, ատեանի մարգիկներու՝ որ
ողջմտութեան գործ ընելու եկեր են » : Եւ
ցընկերն իւր ասէ. « Բռնէ սրեւիկայ ուժով, ին-

չուան որ առնենք տանինք »։ Եւ փուքթացաւ յարկը անդր։ Յայնժամ եմուտ ՚ի ներքս և Կրիզոյ, օգնել ՚ի խորտակումն փականաց արկղին։

Մռնչէր Ռոտրիկ, տեսանելով զնա ՚ի ներքոստա ձեռին՝ որ կաշկանդեալ ունէրն զնա։ Ձգնէր զերծանել յամառուստ բազկաց անտի, և աղաղակէր։ « Թողուցէք որ սպանանեմ սա անզգամ անօրէնը, եթէ ինչ որ կուզէք՝ ըրէք »։ Եւ կոչէր գարձեալ ամենայն զօրուն Թեամբ զայլս ՚ի սպասաւորաց յօգնութիւն, այլ ՚ի զուր։ զի սիրագուժ նենգաւորին յղեալ էր զնոսա հեռի իբր ՚ի ծառայութիւն տեառն իւրեանց՝ նախ քան զկոչ Մռնատոյ յաւարն, զոր բաժանելոց էին յիւրեանս։

Իսկ որ զՌոտրիկ արգելեալ ունէր ՚ի մահճին, ասէր ցնա։ « Հանգարտ կեցիր, մի շարժիր »։ Եւ առ աւարառուսն երկոսին ասէր։ « Արգարութեամբ գործ տեսէք, հաւասար բաժին ըրէք »։

Եւ մինչդեռ Կրիզոյ փուքթայր խորտակել զարկղն, հանել զդրամս և որ ինչ էր անդ մեծագին՝ և բաժանել, ոչ դադարէր Ռոտրիկ ՚ի մռնչելոյ։ « Դուն, դուն, գժոխքի հոգի ։ ։ ։ Եթէ պիտոր տեսնաս, դեռ կրնամ ապրիլ, կրնամ ըրբնտնալ »։ Բայց Կրիզոյ և ոչ ձիկ հանէր, և ոչ զաչս ՚ի նա գարձուցանէր։ իսկ գործակից նորին Մռնատոն ձայնէր առ ընկերս իւր։ « Աղէկ բռնէ, իրմէ գուրս ելած է »։ Եւ ոչ անիրաւէր։ զի Ռոտրիկ յուժգին մռնչելոյ և ՚ի բուռն ձգանց զերծանելոյ անկաւ նուա-

ղեալ և անզգայ։ Հայէր և՚ետ տակաւին սկզբնեալ և աղչեալ, և երբեք երբեք չարժէր և հեծէր։

Բարձին զնա Մռնատոք, մին զոտից, միւսն զուսոց։ ածին եդին ՚ի պատգարակի՝ զոր թողեալ էին յընթերակայ սենեկի։ և գարձաւ մի ՚ի նոցանէ առնուլ զաւարն, և ածին ՚ի բաց գբեռնն եղկելի։ Բայց Կրիզոյ եկաց մնաց անդ, ընտրել չտակաւ որ ինչ դեռ ևս կարէր առնուլ։ և արարեալ ՚ի ծրար զամենայն, էլ ՚ի բաց։ Եւ թեպետ զդուշացեալ էր չհպել ՚ի Մռնատոս, և ոչ թողուլ նոցա հպել յինքն, այլ ՚ի յետնումն անդ չտակաւ ՚ի խնդիր աւարի՝ առեալ թօթափեալ էր զզգեստս տեառն իւրոյ, որ առ մահճաքն նորա կային, գտանել թերևս դրամ ՚ի նոսա։ Այլ ՚ի վաղիւ անդր զկնի եղև նմա ընդ այն։ զի մինչդեռ բազմեալ կայր ՚ի պանդոկի ՚ի գիւղերքուս, անկաւ յանկարծ սարսուռ զնովաւ, խաւարեցան աչք նորա, և պակասեալ ՚ի զօրութենէ անկաւ։ և թողաւ յընկերաց իւրոց ՚ի ձեռս Մռնատոյ։ Որոց կողոպտեալ զնա յամենայնէ՝ որ ինչ էին առ նմա, բարձին զնա ՚ի սայլ, յորում փչեաց զոգին՝ չև ՚ի զգուշարան անդր հասեալ, ուր ածեալ էին զտէր նորա։

Այդ թողեալ զսա յօթևանս աղեւոից, երթեկաւք ՚ի խնդիր այնորիկ՝ որոյ պատմութիւն չխառնէր ընդ սորայս, եթէ չէր նորա իւրովի հարկ արարեալ, և երկաքանչիւրոցն իսկ չնայր պատմութիւն։ Զպատանեսցն Ռինոզոյ ասեմ, զոր թողաք ՚ի գործարանին Պորթոլեայ ընդ անուամբ Անտոնի Ռիւոլեայ։

Եկայ նա անդ հինդ կամ վեց պմիս. յետ այնորիկ 'ի յայտնել Թշնամութեան ընդ հասարակապետութեան և ընդ արքային Սպանիոյ, և 'ի դադարել երկիւղի հետազոտութեան ընդմանէ, փութացաւ Պորթոլոյ գնալ առնուլ ածել զնա անդրէն առ նը, քանզի սիրէր զնա. զի և Ռէնցոյ էր պատանի հանճարեղ 'ի բնէ, ճարտար յարուեստին, և աշակից նը 'ի մեծի գործարանին, առանց կարելոյ հետամուտ լինել բարձրագունի պաշտամանն նրոյ, ոչ գիտելով ունել գրիչ 'ի ձեռին: Պարտ էր մեզ յիշատակել և զպատճառս զայս, զի ըստ երց ինչ եգիտ անդ տեղն: Թերևս յանկալի ևս էր ոմեք այլոհոգ ոք Պորթոլոյ մոացածին, չուենիմ ինչ ասել առ այս, Թող ստեղծցէ զայն մոօք. այլ մերս այսպիսի էր:

Ռէնցոյ միշտ կացեալ էր առ նմա, բայց երբեմն երբեմն՝ մանաւանդ յետ ընդունելոյ գիրս յԱգնիսէ մոաբերեր 'ի վենուորութեան, առ 'ի զերծանել յամենայնէ: Դէպք իսկ ոչ պահասին առ այն, զի 'ի ժամանակին յայնմիկ հասարակապետութեանն կարօտեր զօրայ: Առաւել զօրանայր 'ի Ռէնցոյ փորձութեանս այս, յորժամ զօրացեք լինէին ապշաւանաց յերկիր Միլանու. զի ցանկայր դառնալ յաղթողաբար 'ի տուն նը, տեսանել զկուչիա, և խօսել միանգամ ընդ նմա: Բայց Պորթոլոյ չէրէր միշտ զնա 'ի խորհրդոյ անտի, և ասէր. «Զօրքը հոն երթալ ուզելու որ ըլլան, առանց քեզի ալ կրնան երթալ, եւքը դուն հանգիստ կրնաս երթալ. իսկ թէ որ պղտիննին պատռած ես

դառնալու ըլլան, ալ աղէկ չէ՞ որ դուն տեղդ կեցած ըլլաս: Յուսահատ մարդիկ չեն պակսիր, Թող անոնք երթան. բայց ինչուան որ ատ երնին հոն գնեն... Ես աս բանիս Թերահաւատ եմ, Թող երթնք սպառնան. բայց Միլանու երկիրը գիւրաւ կըլլելու պատառ չէ, Սպանիայի հետ է բաներնին, սիրելի: Ըսէ ինծի, հոս գոհ չէ՞ս...: Գիտեմ ինչ պիտոր ըսես. բայց Թէ որ վերը որոշած է բաղձանքդ յաջողելու, ապահով եղիր որ աւելի աղէկ կերպով կը յաջողի առանց ատ խենթութիւնը ընելու. սուրը մը կըլլայ՝ որ քեզի օգնէ. հաւատա որ առանց բաներ մոածելու հարկաւորութիւն չկայ: Կարելի բան է որ մարդիկ սպանելը՝ մեռաքս պըլլելէն աղէկ սեպես. ինչ ունիս առ տեսակ մարդկանց հետ. առանց բանի՝ յարմար բնութիւն պէտք է ունենալ»:

Երբեմն ևս խորհէր Ռէնցոյ ծածկապէս գընալ՝ ծպտեալ և ընդ պիտակ անուամբ. բայց Պորթոլոյ և 'ի խորհրդոյ անտի գիտաց չըրէր զմիտս նորա պատճառօք, զորս գիւրաւ է գուշակել: Այլ 'ի ձարակել ժանտախտին 'ի սահմանս Միլանու, և մանաւանդ՝ որպէս ասացաք՝ յեզր սահմանացն Պերգամոյ, ոչ յամեաց ախտն անցանել անդր: Մի խառնվեսցին ընթերցողք, չեն ինձ կամք պատմելոյ և զայն. որ կամիցին զպատմութիւն նորա, գոցեն զայն արարեալ արքունի հրամանաւ 'ի Լաւրենտեայ Փերարտելեայ. մատեան գժոխարագիւտ և անծանօթ, Թէպէտև բովանդակէ առաւել քան զամենայն երևելի նկարագիրս միանգամայն.

այլ ՚ի հռչակ մատենից բազում ինչ ինդրելն պայմանիք։ Կամէի զայն միայն առեալ, զի և Ինն-ցոյ հարաւ յախտէն. այլ անփոյթ արարեալ, և ինքնադարման մերձեալ ՚ի մահ՝ զօրաւոր կազմուածոյն յաղթեաց բռնութեան ախտին, և ՚ի սուղ ինչ աւուրս զերծաւ ՚ի վտանգէն։

Յայնժամ ընդ կենացն դարձան ՚ի նա ազգդ զադոյնս յիշատակիք, իղձք, յոյս և խորհուրդք առաջինք. առաւել ևս սկսաւ խորհել ՚ի Լու-չիա, զի՞ արդեօք եղև նմա ՚ի ժամանակի՝ յո-րում սակաւուց էր բախտ կենաց. ո՞րպէս յայնքան ՚ի մեծոյ չափել ինչ զնմանէ, և կալ միալ ՚ի վարանս՝ ո՞ գիտէ ցերբ. և ՚ի փարատել իսկ վարանացն, և ՚ի դադարել ամենայն վտանգաց, և ՚ի գիտել զղջմունէ նորա, միայր տակաւին միւսն այն խորհուրդ գաղտ՝ կրճիմն ուխտին, և ասէր ՚ի մտի՝ չև կազդուրեալ յառողջու-թիւն. « Երթամ մեյմը, Լուչիայէն տեղեկաց-ղքը խմանամ. միայն թէ կենդանի ըլլայ. ա՛ն, միայն թէ կենդանի ըլլայ. գտնալը կը գտնամ զինքը. երթամ լսեմ մեյմը ինչ է ատ խոստմունքը, խմացընեմ իրեն՝ որ չէր կրնար անանկ խոստմունքը ընել, առնեմ հետս զինքն ու խեղճ մայրը՝ թէ որ ողջ է։ Խեղճ Ադնէսը՝ որ միշտ իմ բարիքս կուզէր, չեմ տարակուսիր որ հիմայ ալ կուզէ։.. Բռնեմ զիս. ո՞ւր ենք. հիմայ ողջ մնացողներդ ուրիշ բան ունին մտա-ծելու։ Հոս յանցաւորներդ ապահով կը պըտ-տին. ուրեմն չարագործներդ միայն ապահո-վութիւն պիտոյ ունենան։ Ամենուն ըևբանն է որ Մելան ասկէց գէշ խառնակութիւն կայ և-

ղեր. տասնկ յարմար առիթ մը կորսընցընելու որ ըլլայ, մեյմըն ալ ո՞ւր կը գտնամ. քեզ նայիմ, սիրա ըրէ Ինծոյ »։

Եւ հազիւ զօրեղով գնալ, չոգաւ ՚ի խնդիր Պօրթոլոյի՝ որ մինչև ցայնժամ խուսեալ յե-բեսաց ժանտախտին, կայր ՚ի զգուշութեան։ Զեմուտ ՚ի տունն նորա, այլ ձայնեալ ՚ի փողոցէ՝ կոչեաց զնա ՚ի պատուհան։ Եկն Պօրթոլոյ, և ՚ի տեսանելն զԻնծոյ՝ ասէ. « Էրնէ՛կ քեզի, աղէկ խալըսեցար »։ —

« Բայց դեռ ծընկըընելս տակաւ են, ինչպէս կը տեսնաս. միայն վտանգէն խալըսեցայ »։ —

« Կուզէի քու տեղդ ըլլալ. իրաւ՝ աղէկ եմ, ուրիշ տաեն հերիք էր այսչափիկ կարենալ ը-նել, բայց հիմայ չեւաւեր »։

Յայնժամ Ինծոյի բարեմաղթութիւն ինչ արարեալ նմա, ծանոյց զնորդգ իւր. և Պօրթոլոյ ասէ. « Գնա աս անգամ. Աստուած հետդ ըլլայ. բայց դառնալուդի մարդիկներէն զգուշացիր. Աստուած բաներնիս յայդուղելու որ ըլլայ, կը դառնաս, նորէն կը տեսնուինք »։ —

« Իրաւցընէ կը դառնամ. ա՛ն, ո՞ւր էր որ մի-նակ չիդառնայի. կը յուսամ »։ —

« Աստուած տայ որ ընկերդ դառնաս. հոս ամենուս ալ գործ չիպակսիր Աստուծով, աղէկ ընկերութիւն մը կընենք. միայն թէ որ զնա ողջ գտնաս, ու ամէն վտանգ անցնի »։ —

« Կը տեսնուինք »։ —

« Աստուած տայ, նորէն կըսեմ, Աստուած տայ »։

Զաւուրս ինչ եկաց Ինծոյ ՚ի կրթել զանձն,

առնուլ զփորձ զօրութեան իւրոյ և կաղդուրել· և իբրև թուեցաւ նմա կարել ուղևորել, պատրաստեցաւ ՚ի գնալ: Ածաւ ընդ մէջ իւր ընդ հանդերձիւքն գօսի, զետեղեալ ՚ի նմա զչիսուն սկուտան ոսկիս, զորս պահեալ էր ամբողջ, և ոչ յայտնեալ ումեք, և ոչ Պորթոլեայ· էառ ընդ իւր և զսակաւ մինչ դրամանն, զորս մնեերեալ էր տակաւ՝ ինայութեամբ յամենայնի, և զծրար ձորձոյն ընդ անթոլ: Զվերկայական ևս բարւոք ծառայութեանն, ընկալեալ յերկրորդ տեառնէն ընդ Անտոն Ռիւալ թա անուամբ, եդ ՚ի գրպանի, և ՚ի քսակ տափառին դանակ մի ժանգահար՝ որ ՚ի ժամանակին յայնմիկ և կարի խակ խաղաղասէր մարդկան էր ղէն կարևոր, և անկաւ յուղի ՚ի վերջոյս օգոստոսի, երիւք աւուրբք յետոյ քան զխոհագրութիւն Ռոտրիկեայ ՚ի զրուշարան: Եւ զի մի կայր անտեղեակ երթիցէ ՚ի Միլան, զերեաս հաստատեաց ՚ի Լէք-քոյ՝ անցանել ընդ գիւղ իւր· զի յուսայր գտանել անդ զԱգնէս, և տեղեկանալ ՚ի նմանէ ամենայնի՝ որոց ըղձիւքն ցանկայր:

Ցուսադունչ ոմանք ՚ի ժողովրդեան ապաքինեալք ՚ի ժանտախտէն, էին որպէս արդարև բարեմասին հասեալ· այլք՝ որ մինչև ցայնժամ զերծեալ էին յախտէն՝ կէին յարաժամ յերկիւղի· խուսէին, ծածկէին, կասկածէին, փութային և վարանէին, զի ամենայնի մարթ էր նոցա լինել մահաւէտ: Բայց առաջինք գրեթէ յապահովի կէին, զի գուն ուրեք պատահէր ումեք երկեցս ըմբռնել յախտէն, չըմչէին ՚ի

մէջ ախտացելոց համարձակ և անվեհեր, որպէս երբեմն ՚ի միջին գարու ասպետք սպառազինք երկաթապատք հեծեալք յերիվարս զրահաւորս, այսր անդր ընդ վայր թափառեալք ՚ի մէջ եղկելեաց՝ հեռեւակ սինքթորայ քաղաքացոց և չինականաց, որք առ ՚ի բաց վանել և անպիտան առնել զՀարուածս՝ չունէին ինչ զանձամբ բաց ՚ի ցնցոտւոյ: Աւրուէստ գեղեցիկ և խմաստուն, արուեստ պիտանի, գերաստիճան ՚ի քաղաքական անառեսութեան:

Սովին վատահութեամբ, զոր մեղմէին հոգք՝ ոչ անծանօթք ընթեռնլեաց, և տխրութիւն ՚ի յաճախ տեսիլ աղետից և տառապանաց ամենեցուն, երթայր Ինդոյ ՚ի տուն իւր, ընդ գեղեցիկ երկնաւ և ընդ վայրս գեղեցիկս· այլ յերկայն և ՚ի տխուր միայնութեան ոչ զոք տեսանէր՝ բայց ոտաւերս ինն չորագոյեալս, և գիտէին՝ որ ածէին ՚ի փոս առանց գերեզմանական հանդերձանաց, առանց երգոց, և յուղարկաւորաց: Ձկայ էառ զմիջաւուրըն յանտառի ուրեք՝ ճաշակել որ ինչ ածեալ էր ընդ իւր հաց և ալանդեր· իսկ պտուղք առ ձեռն կային նմա զձմեռնայարկային առաւել քան զկեաս, թուզ, գեղձ, սալոր և խնձոր, որջափ և կամէր· շատ էր մտանել յանդաստան ուրեք, քաղել ՚ի ծառոց, կամ ժողովել զփռեալս ընդ նոքօք թօթափեալս կարկտաբար· զի բերրի էր աւն, մանաւանդ պաղոց, և չէր ումեք փոյթ զայնցանէ, և ողկոյզք ծածկէին գոգցես զտերևս այգեաց:

Ընդ երեկս սկսաւ Ինդոյ նշմարել զգիւղ

իւր. և Թէպէտ պատրաստ կայր առ ի սեռա-
նել զայն, սակայն խռովեցաւ սիրտ իւր ընդ
սեսլն, և խնդեցան ի միտս նորա յիշատակք
և գուշակութիւնք աղետաւիլք. Թուէր նմա լսել
զհնչիւն զանգակին՝ որ զհետ նորա ի փախչելն
իւրում ի վայրաց անտի ազդ առնէր. ընդ նը-
մին զգայր և զգերեզմանական ինն լսութիւն
տիրեալ անդ յայնժամ: Աղաւել ևս խռովե-
ցաւ ի մտանելն ի հրապարակ եկեղեցւոյն, և
առաւելագունն պատրաստէր յիշս ուղւոյն՝
ուր խորհէին զկայ առնուլ ի տան, զոր սովոր
էր կոչել առն Լուսնայի, և ոչ ևս կարէր կո-
չել զայն յայնժամ՝ բայց Ագնիսի, հայցելով
ի սեռանել և յուսալով գտանել զնա ողջ և ա-
ռողջ. և խորհէր խնդրել անդ օթևան, զի զնոյն
միանց և կղնց համարէր լեալ բնակարան, ոչ
ևս իւր բնակելի:

Այլ ոչ կամելով անցանել ընդ չէնն՝ առ ի
հատանել անդր, կալաւ զճանապարհ արտուղի՝
ընդ որ եկեալն էր գիշերային ցանկալն ուղեկ-
ցութեամբն, հատանել յանկարծ ի վերայ ժո-
ղովրդապետին: Իբրև ի կէս ուղւոյն՝ կայր աս-
ել այդպէս, և անտի անկն Ռէնցոյի, և մտրճ
էր նմա յանցանելն ընդ այն այց առնել վայ-
րիկ մի յերկոսին և: Բայց ի գնալն՝ գիտէր
անձկանօք և երկիւղիւ սեռանել զրաք զառա-
ջեաւ. և ահա եռես զոմն ի շապիկս բազմեալ
ի գետնի, յեցեալ զթիկունս ի թփիւթ անդր
իբր անզգայ. և Թուէր ի գիմացն ապուշն այն
ձկրտաղզ՝ որ եկեալն էր ի վկայութիւն չա-
րաբասիկ արշաւանին: Այլ ի մտերն՝ ծա-

նեաւ զի էր արտգամիսն Թոնի, որոյ ածեալ
էր անդր զձկրտաղզոյ: Ժանտախտին բարձեալ
էր ի նմանէ զզօրութիւն և զմիտս, և փոխեալ
զդէմն նորա և զարժուածս յաղօտ լինն նմա-
նութիւն ապուշ եղբօրն: Եկաց Ռէնցոյ առ
նմա, և ասէ. « Թոնի, դո՞ն ես »: Ի վեր հայե-
ցաւ Թոնի, կալեալ զգլուխ իւր անշարժ. և
յաւել Ռէնցոյ. « Խեղճ Թոնի, զիս չճանչ-
նար: Պատասխանի ետ Թոնի. « Որուն որ
գլուխը պիտոր գայ, կուգայ »». և եկաց բերա-
նաբաց: Կրկնեաց Ռէնցոյ. « Խեղճ Թոնի, բըռ-
նուեցար հա՞. դեռ չէս ճանչնար զիս »: Պա-
տասխանի ետ ապշութեամբ լինն ժպտելով, և
զնոյն բան ասաց:

Տեսեալ Ռէնցոյի՝ զի էր մարթ գիտել ինչ՝ ի
նմանէ, անց գնաց տրտմութեամբ: Եւ ահա
եռես յանկեան ուրեք զոմն սևազգեաց՝ որ
յառաջ մատչէր, և ծանեաւ իսկոյն՝ զի էր տէր
Ապոնոյ՝ որ գայր յուշիկ յեց՝ ի գաւազան.
և՝ ի մտերն տակաւ, ի ժժգոյն և՝ ի ծնգեալ
գիմացն և՝ ի չարժուածոյ յայտնի լինէր, զի
և նա անցեալ էր ընդ վտանգ: Հայեցաւ՝ ի
Ռէնցոյ, թուէր նմա սեսանել օտար զրաք՝ ի ձև
պերգամացի. և ասելով՝ ի մտի՝ « Այն է անտա-
րակոյս »՝ ի վեր էառ զձեռս իւր տխուր
զարմացմամբ, ի կախ ընդ օդս ունելով զաւա-
զանին՝ զոր ունէր յաջում, և խաղային բա-
զուկք հիքին՝ ի թեզանիս յորս երբեմն հագնիւ
ամփոփէին: Փութացաւ Ռէնցոյ ընդ առաջ,
և մատոյց նմա մեծարանս. զի թէպէտ և ոչ
բարեզոք մեկնեալ էին՝ ի միմեանց, որպէս յիշեն

ընթերցողք , սակայն էր նա ժողովրդապետ իւր : Գոչեաց առ Ապտուխ ·

« Հո՞ս ես դուն » : —

« Հոս եմ ահա · Լուչիայէն լուր մը ուներ » : —

« Ի՞նչ լաւ կուզես որ ունենամ· սոյպ բան մը չեզիտցուիր : Մկան պիտի ըլլայ , թէ որ աշխարքիս վրայ է » : —

« Ախենսը ո՞ղջ է » : —

« Կրնայ ողջ ըլլալ, բայց ինչ գիտնամ, հոս չէ » : —

« Հապա ո՞ւր է » :

« Վալասասկնա գնաց , հոն իր աղգականացը հետ՝ որոնք աղէկ կը ճանչնան՝ փասթուրոյ բընակելու , ուր որ ժանտախտը հոս առնուն չափ սաստիկ չէ : Բայց դուն » ...

« Աւտը վրայ շատ կը ցաւիմ· հապա Հայր Ֆրիստաֆոլը » ... —

« Շատոնց է որ ասկէց գնաց · բայց » ... —

« Ասիկայ ինծի գրեցին · հարցընելս անոր համար է որ գարձաւ նորէն հոս » : —

« Ի՞նչ , մեյմէն ալ խօսքը չեղաւ · բայց դուն » ... —

« Աւտը վրայ ալ կը ցաւիմ» : —

« Բայց դուն ինչ բանի համար աս կողմերը եկար , հոգիդ սիրես · չէս գիտեր որ կը բանեն գքեզ » : —

« Հոգս չէ · բայց անունք ուրիշ բան ունին մտածելու · ես իմ բանիս գործիս համար եկեր եմ · ուրեմն ստոյգ բան մը չէս գիտեր՝ որ » ... —

« Ինչ կուզես որ գիտնամ· մարդ չիմացայ , բան չիմացայ · նորէն կըսեմ, գիտէս ինչպէս կը բանեն գմարդը· բուն քու տեղդ եղլէ գալ, գայլին բերանը ինդգ գինդգ ձգել, խելք չէ ը֊ բածդ : Մտիկ ըրէ ծերուս մը խօսքին , որուն գլխին քեզմէ շատ աւելի բան անցեր է, ուզքեզ սիրելէն է ըսածը · չուտ մը կասկ կօչնկերդ՝ դեռ մարդ չիմացած , գարձիր ուսկից որ եկար · թէ որ խմացող ալ եղաւ , աւելի արտորա դառնալու · մտածելու բան է որ հոս տեղն օգը քեզի չարմարի · չես գիտեր որ եկան գքեզ գինաքռելու · գինաքռելին , պրպտեցին , ամեն բան տակնուվրայ ըրին » ... —

« Գիտեմ, ալկէկ գիտեմ, անզգամները » : —

« Ո՞ւրեմն » ... —

« Ըսի քեզի որ հոգս չէ : Իսկ մէկ մարդը դեռ ողջ է , հո՞ս է » : —

« Ըսի քեզի որ հոս մարդ չիմացայ · քեզի կը սեմ որ՝ ալ հոս տեղն վրայ մի մտածեր , քեզի կըսեմ որ » ... —

« Հարցուցածս ասէ որ մէկ մարդը հո՞ս է » : —

« Կը զարմանամ· որոշ խօսէ · կարելի բան է որ դեռ կրակդ մարած չըլլայ , այնչափ բաներ գլխէդ անցնելէն ետքը » : —

« Հո՞ս է , Թէ հոս չէ » : —

« Հոս չէ , ինչ ըսեմ· բայց ժանտախտ կայ , գիտե՞ս սիրելի , ժանտախտ կայ · ով կերթայ կը պարսի ասանկ տաեն » : —

« Ո՞ւր ես որ ժանտախտէն ուրիշ բաներ չըլլար աշխարքիս վրայ ... ինծի համար կըսեմ· բռնուեցայ անկէց, ու խալըսեցայ, ազատ եմ» : —

« Ուրեմն, ուրեմն, ասոնք խրատ չէ՞ն. մեկն որ ասանկ բանէ մը կը խալըսի, ինծի կերևայ որ ընորհակալ պէտք է ըլլայ Աստուծմէ, ու »... —

« Շնորհակալ եմ, ու չատ շնորհակալ » : —

« Ու ուրիշ բաներու համեր ըլլայ. ես աս կըսեմ, դուն գիտցածդ ըրէ » : —

« Թէ որ չեմ սխալիր, Հայր պատուական, հրամանքդ ալ բռնուելու ես » : —

« Իրաւ է, բռնուելցայ, ու գէշ տեսակէն, բայց հրաշքով դեռ ողջ եմ. հերիք է ըսելս՝ որ պիտ աս վիճակը հասուց, չէ՞ս տեսար. հիմա պէտք է որ քիչ մը հանդչիմ ու զօրանամ, ուժս տեղը դայ. սկսեր էի քիչ մը զօրանալ... Հոգիդ պիրես, ինչ ընելու եկար հոս. դարձիր » ... —

« Մինչ դառնալու վրայ է խօսքդ. Թէ որ մեկէն դառնալու միտք ունենայի, տեղէս չէի շարժիր. ինչո՞ւ եկար, ինչո՞ւ եկար կըսես. ասանօր բան, իմ առնս եկայ » : —

« Ինչո՞ւ առնդ » ... —

« Աս ըսէ ինծի. չատ մեռնող եղա՞ւ հոս » :

Յայնժամ հառաչելով աէր Ապոնոիոյ սկսաւ յաղաղնոյ իւրմէ՛ի Փերփերեթուպէ, և արար շար երկայնաձիգ վախճանելոյ. ամբողջ խակ ընտանեաց, որպէս մնայր խակ Ուենցոյ լսել. այլ՛ի լուր մահուան ծանօթանից իւրոց և ազգաց կանաց վշտացեալ, և խոնարհեալ ղէպ՛ի սակ անդադար. « Խեղճ մարդ, խեղճ կնիկ, խեղճ աղջիկ, խեղճերը » : —

Յաւել աէր Ապոնոիոյ. « Կեցիր, դեռ խօսքս չիմընցուցի. Թէ որ ողջ մնացողները հիմայ ալ

խելքընին գլուխնին չիժողվեն, խելքնուն փըչած բաներէն ետ կենալու որ չըլլան, աչքըրնիս ետքը կուգայ » : —

« Մինչդ կը հասկընամ, բայց մի կարծեր որ ես հոս կենամ պիտոր » : —

« Փառք Աստուծոյ որ մեր մը կըցայ հասկըցընել, շուտ ըրէ, ապահովէ զքեզ, նորէն Պերկամոյի սահմանը անցիր » : —

« Ա՛ս բանը քեզի մտմտուք չըլլայ » : —

« Ի՛նչ, ա՛լ գէշ միտք մը ունիս » : —

« Ա՛ս բանը մի հոգար կըսեմ, ինծի կիյնայ մտածելը, տղայ չեմ, բանականութիւնս բացուած է : Բայց յուսամ որ պիտ տեսնալդ մարդու չես ըսեր. հովիւս ես, քու ոչխարդ եմ, պիտ չես մտաներ » : —

« Խմացայ », ասէ տէր Ապոնոիոյ զայրացեալ, « խմացայ. բայց քեզի ալ գէշ կընես, ինծի ալ. քաշածնեղդ դեռ չէ՞ն բաւեր, հերիք չէ՞ն ինծի քաշել տուածնեղդ ալ » : Եւ քըրթմընջելով « Խմացայ, խմացայ », դնաց զձանապարհ իւր : Իսկ Ուենցոյ մնաց անդ ախտաբեր և ժպգոհ, ոչ գիտելով ուսանի առնուլ տեղեկութիւն :

Ի վախճանելս՛ի գեղջ անդ, զորս տէր Ապոնոիոյ արկ՛ի համար, էր մի՛ի տանց, յորում ամենեքեան մեռեալ էին՝ բաց՛ի պատանւոյ միոջէ, որ գրեթէ հասակակից էր Ուենցոյի և ընկեր՛ի տղայ սիոց, և բնակութիւն նորա սակաւ ինչ հեռի՛ի գեղջէն, խորհեցաւ Ուենցոյ անդր գնալ հանդչել : Եւ յանցանել առ այգեաւն իւրով, ակնարկեալ անդր՝ ետես զա-

ւեր նորա արտաքուստ. ուր մի՛ ի ձեռատունկ որթոց իբրոց, տեսի մի՛ ի պղտաբեր ծառոց, ոչ երևեր՛ ի վերոյ որմին: Մատեաւ՛ ի խըզմատ մի, զի ոչ էաս մնացեալ էր դուռնն վանդակեայ, և ոչ ծղնիկք, և շուրջ յածեցուցեալ զաչս, ասէ. « Խեղճ այդի »: Ձմեռն կրկին հետ զՀետ հատեալ էին անտի չինականք փայտ՛ ի հուր. որթատունկք, թթենիք, ծառք պղպի պղպի մրգաբերք, խըլեալ արմատաքի կամ հատեալ առ արմին. բայց գեռևս երևէին հետք առաջնոյ մշակութեանն, և ընձիւղք մատաղք, ի կարգս անդ խրամատեալս չառասղեալք, ցուցանէին զհետս կարգաց աւերելոյ. և զբողբոջս թթենեաց, թզենեաց, դեղձենեաց, հաչեաց, և սալորեաց, ատս անդ ընձիւղեալս, և հեղձուցանէին նորաբոյս պղպի պղպի մոլախոտք անձեռատունկ թանձրախիտ ածեցեալք:

Զեղև ինչ փոյթ Ռէնցոյի մտանել՛ ի ներքս, այլ յառաջ խաղաց՛ ի տուն իւր՝ որ ոչ ինչ հեռի էր անտի. և գնայր անդր ընդ պարտէզն, ծնգոք ջափ թաղեալ՛ ի մղլախոտս՝ յորոց ծածկեալ էր և այն որպէս զայգին: Ցերեսաց նորա և յառնաձայնէն խուճապելին խառն՛ ի խուռն մկունք սուսւարք, թաքչէլ յաղբս՝ յորոց ծածկէր երկիրն, զի էր լեալ տունն օթևան գերմանացի զօրականին: Եաես զորմն, զի էին փլուզեալ ծեփք նոցա և աղտեղեալ՛ ի վեր էառ զաչս, և եաես պառեալ զյարկս՛ ի սարդի ոսոգայն, և ոչ գտեալ ինչ՛ ի նմա՝ եզև անտի ձեռս՛ ի գլուխ: Եւ գառնայր ընդ շաւիղն, զոր իւր էր բացեալ՛ ի գնալն, և կալաւ ուղի՛ ի ձախմէ, որ ածէր

՛ի գաչաս. ոչ զղջ եաես անդ, և ոչ լուաւ բարբառ մարդոյ. և մատեաւ՛ ի տուն անդր, ուր խորհէրն զկայ առնուլ, և տիւն նահմանայր: Կայր անդ բարեկամն բազմեալ առ գրան յաԹոռ փայտեղէն, բաղուկ զբազկաւ արկեալ, ընդ երկինս պղուցեալ, որպէս ոք յապուշ հարեալ յարկածից, և՛ ի միայնութենէ վայրենացեալ: Ի լուր ոտնաձայնին՝ գարձաւ հայեցեալ Թէ ով էր. և առ այն զոր Թուեցաւն նմա տեսանել՝ նահմանէ ընդ ոտս և ընդ աղաղթս, ասէ բարձրաձայն. « Մինակ եմ, մինակ. բաւական չաշխատեցայ երկիր բոլոր օրը. Թող տուր որ քիչ մը հանգչիմ. աս ալ գործք ողորմածեան է »: Ռէնցոյի ոչ լմնցեալ զնմաստ բանն, ձայնեաց վնա յանուանէ. և նա զտա, « Ռէնցոյ, դո՞ն ես »: Ռէնցոյ ասէ. « Հապա, ես եմ»: Եւ գիմեցին յիրեարս:

Բարեկամն ասէ. « Դուն ես հա՛. մհ, ոըչափ ուրախ եմ զքեզ նորէն տեսանելուս, որո՞ն մտքէն կանցնէր. կարծեցի որ մեռելները հոգացող Փաւլինոն էր, որ միշտ կը նեղէ զիս առնիք Թաղելու: Գիտես որ մինակ մնացի, ձըրնաւորի մը պէս մինակ »: — « Գիտեմ, ազէկ գիտեմ», ասէ Ռէնցոյ. և ողջունելով զմիմեանս շատախոս. հարցմամբք և պատասխանեօք, մտին՛ ի տնակն՝ առանց գադարելոյ՛ ի խօսից:

Փաւթացաւ բարեկամն պատրաստել ինչ նմա ապաս՝ որպէս կարելն յեղակարծումն անդ, և յայնպահուտ ժամանակի: Եգ ըուր՛ ի հուր, առնել փոխինդ սիմինդեր. այլ Թողեալ՛ ի նա ղբերելն առ՛ ի խառնել, գնայր ինքն յեզե-

ղեղով « Մինակ մեացի, միամինակ »։ Եւ դարձաւ՝ բերելով կաթն եւ ապուխտ եւ թուղ եւ դեղձ. եւ եդեալ զամենայն ի սեղանի, եւ զխոնկինդն հեղեալ ի սիտեղ, բազմեցան յընթրիս, շնորհ ունելով միաբանց, մին վասն այցելութեանն, միւսն վասն հիւրընկալութեանն։ Զերկեամ մի հեռի կացեալք յիրերաց, եղեն յանկարծ մըտերմագոյնք յոյժ քան զոր էին ի սեառնէն զմիմեանս զօր հանապազ։ Բանզի երկաքանչիւրսոյն, ասէ աստ ձեռագիրն, պատահեալ էին արկածք՝ որ տան ի միտ առնուլ որպիսի սպեզանի վշտաց է բարեկամութիւն վշտակրին եւ վշտակցի։ Յերաւի՝ չէր ումեք մարթ ընդել ըզսուղն Ագինոսի ի սիտիլել զՈհնոցոյ հեռի ի նմանէ, ոչ միայն վասն ի բազմաց հեռե սերտիւ սիրելութեանն, այլ եւ զի ընդ ցանկալիսն ի գիտեէ՝ էր ինչ, զորոյ նա միայն ունէր զբաղալի։

Անդ Ոհնոցոյ երկմտեցաւ վայրկի մի, մեկնիլ վաղվաղակի գնալ զհանապարհ իւր, թէ այլ առնել Ագինոսի՝ որ չէր ինչ հեռի անտի։ Այլ զմտաւ ածեալ զի չգիտէր ինչ նա զոզջունէ գաւառին, հաստատեցաւ յառաջին խորհուրդ իւր, գնալ ուղղակի առ Լուչիա, փութալով զերկբայս իւր, դիմագրաւել մեծի վտանգին, եւ ածել զոյգ զնմանէ առ մայրն։ Բայց լուաւ եւ ի բարեկամէն ոչ սակաւ ինչ, զոր ոչ գիտէր, եւ առուգեաց բազում ինչ՝ զորս վեր ի վերոյ էր լուեալ, զարկածս Լուչիայի եւ որ ինչ հալածանս կրեալ էր. եւ որպէս Պոտրիկ յամեծ լեալ, եւ ոչ ևս ի կողմանն յայնոսիկ էր երե-

ւեալ, եւ համառօտիւ զամենայն կնճիռն իրացն։ Դիտաց եւ զայն՝ որ կարեւոր յոյժ էր նմա, զըստոյգ հնչուածն մականուանն Ֆերրանտեայ, զոր Ագինոսի առեալ էր դրել գալըն իւրում, այլ՝ գիտէ որպէս էր գրեալ, եւ թարգմանն պերգամոյի յընթեռնուլ զգիրն այնպէս էր արտասանեալ զայն, զի եթէ այնու անուամբ գնայր Ոհնոցոյ խնդրել ի Մլեան զանուն նորա, դըժուարաւ ոք կարէր գուշակել զուսմն խօսիցի. եւ սակայն այն ևեթ էր ճանապարհ գտանելոյ զԼուչիա։ Իսկ վասն առենին ի խնդիրն իւր լինելոյ՝ օր ըստ օրէ ապահովէր, զի հեռաւոր յոյժ էր վտանգ. քանզի գաղտնօրն մեռեալ էր ի ժանտախտէ, եւ ո՞ գիտէ երբ ոք հասանէր յայնդրզել նմա. եւ ի նուիրակայ խոհ՝ որք ի իրն դիր իւր չըմբռնին՝ բազում պակասեալ էին, եւ ապրելոցն այլ ինչ էր հոգ կարեւոր քան զնորհել ի հին անցս։

Պատմեաց ինքն բարեկամին իւրում զարկածս իւր, եւ լուաւ փոխարէն ի նմանէ բազում ինչ. զի պատմէր նա զանցից զօրուն, զալէպից սրածուխեան, զօձոլայ, եւ վշրաշալեաց. եւ ցուցեալ նմա զմի ի սենեկաց՝ յորում մեռեալ էին ի ժանտախտէ ամենայն ընտանիք իւր, ասէ. « Դէշ բաներ, չնհաւատալու բաներ, անանկ վշտալի բաներ, որ մարդս մեչմէն աչ բոլոր կենացը մէջ չնկրնար ուրախանալ. բայց բարեկամի պատմելը մխիթարանք մըն է »։

Ի ծագել այգուն՝ կային երկաքանչիւր ի խոհանոցն. Ոհնոցոյ կազմ ի ճանապարհ կամբաւն ծածկելով ընդ հանդերձիւք, եւ գոնա-

կաշն 'ի գրպանի. այլ զծրարն եթող անդ յա-
ւանդի առ 'ի ձեռնէ յընթացս, և ասէ. « Թէ
որ Աստուած բանս յաջողէ, Թէ որ ողջ գըտ-
նամ զինքը... հերիք է... նորէն կանցնիմ աս-
կէց, կերթամ փասթուրոյ՝ աւետիս առնելու
խեղճ Ադնէսին:.. Իսկ Թէ որ դժբախտաբար,
Աստուած պահէ... ան առնէը ընելիքս չեմ
գիտեր, և ոչ ուր երթալս. աս կողմերը մէյմին
ալ չես գտնար գլուս »: Եւ 'ի խօսելն զայսոսիկ՝
'ի սեամն գրանն զկայ առեալ կայր կանգուն,
որոմախառն գորովանօք արտաբեկ պչուցեալ
'ի գեղեցիկ արշալոյս գեղջ իւրոյ, զոր յայն-
քան ամաց հեռի չէր տեսեալ: Յաւելն նմա բա-
րեկամն որ ինչ սովորութիւն է ասել 'ի քաջա-
լերս, և ես նմա առնուլ ինչ ընդ իւր 'ի պա-
րէն, և ուղեկից լեալ նմա առ վայր մի, այլոլիք
ևս բարեմաղթութեամբք յուղարկեաց զնա:

Եւ գնայր Ռինդոյ հանդարտութեամբ, զի
շատ էր նմա հասանել 'ի վաղիւ անդր ընդ ա-
ռաւօտն 'ի քաղաքն առ 'ի լինել 'ի խնդիր: Ոչ
ինչ դեպք պատահէցին նմա յուղւոջ՝ զլինել
զնորհուրդս նորա. բայց առ ժամայն աղէտք
և արտմութիւն յուղէին 'ի միտս նորա. և որ-
պէս յերեկին արարեալ էր, զտեղն էառ ըստ
ժամանակին, յանուսալի ուրեք՝ ձաշակել ինչ
և հանգչել: Եւ յանցանել իւրում ընդ Մ'ոնցա
առ միով 'ի կրպակաց՝ որ 'ի բաց կայր, և էին
եգեալ նկանակք առգինք 'ի ցոյց, խնդրեաց
երկուս 'ի նոցանէ՝ առ 'ի չհնալոյ անպաշար 'ի
հարկէ: Արգել նմա հացագործն չմոռանել 'ի
նեբքս. և կարկառեալ 'ի ծայր թխակի պնակ

փոքրիկ լի ջրախառն քացախով, ասաց արկա-
նել անդր զգրաստս, և արար Ռինդոյ այնպէս.
և հացարարն մատոյց նմա ունելեաւ զերկոսին
նկանակսն մի ըստ միոջէ. և նա արկ զայնոսիկ
'ի գրպանս իւր ասաի և անտի:

Եհաս Ռինդոյ ընդ երեկս 'ի Կրեքոյ գիւղ,
զորոյ էգիտեր իսկ զանուն. այլ 'ի լիշատակս
տեղեաց՝ որ կային առ նմա յանցեալ ուղեւո-
րութենէն, և 'ի չափոյ ժամանակին 'ի Մ'ոնցայէ
անդր գուշակելով զի չէր հեռի 'ի Մ'իլանէ, էլ
արտաքս յարահետ ճանապարհէ՝ գնալ ընդ
դաշտս 'ի խնդիր, գտանել ուրեք հիւղ, առ 'ի
գիշերել անդ. զի ոչ ևս կամէր վտանգել զանձն
'ի պանդոկի: Լաւագունի քան զոր խնդրէրն
պատահեաց. տեսեալ խրամատ 'ի ցանկս շուրջ
զդործարանաւ ուրեք կիթեղինաց, եմուտ անդր,
և չէր ոք անդ. կայր 'ի մի կողմն գաւիթ մեծ,
և խոտ 'ի նմա չէղջակուտեալ, և սանդուղք
կրեզի յերդ 'ի չէղջակոյտ անդր: Շուրջ հայե-
ցեալ, եղ 'ի վեր, ընկղմնեցաւ, և 'ի քուն եղև
խնդոյն. և ընդ այգն իբրև զարթեաւ, սողեալ
յափս 'ի թեբս յերդ ընդարձակ անկողնոյն,
եհան արտաքս զգլուխ իւր, և ոչ զոք տե-
սեալ՝ էզ ընդ որ ելեալն էր 'ի վեր, և ելեալ
արտաքս ընդ որ մտեալն էր, ուղեւոյ եղև ընդ
շաւիղ արտուղն, կալեալ իւր ասաղ առաջնորդ
զկաթողնիկն. և սուղ ինչ երթեալ յառաջ,
եհաս 'ի պարիսպս քաղաքին ընդ դուռնն Աբե-
ւելեան և ընդ Նոր դուռնն՝ որ էր հպագոյն:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Լաւ էր Ռէհոբոթ զի խիստ զգուշութիւնք օրինադրեալ էին ի դրունս՝ մի ոմիք ի քաղաք անդր մտանել առանց հրամանագրի խնամակալաց առողջութեան առեներն, այլ քանզի կարէր մտանել որոյ էր փոքր մի ճարտարութիւն դէպ ժամանակ գտանելոյ ի մուտս. և էր իսկ այնպէս: Զի թող զպատճառս հանրահանս՝ որովք յայնժամ ոչ կատարէին պատուէրքն, թող և զմանաւանդ՝ որովք գժուարէին էր կատարումն այնոցիկ. յայնպիսի հանգամանս կայր քաղաքն՝ զի զգուշութիւնքն այնոքիկ թուէին տարաժամ, և եկաւորաց առաւել քան քաղաքացոց ի մտից անտի էր վտանգ:

Ռէհոբոթի ըստ այսոցիկ տեղեկութեանց ի մտի եդեալ էր փորձ փորձել ընդ դուռն՝ յոր

նախ հասանէր. և եթէ ոչ յաջողէր մտանել ընդ այն, պատէլ ղպարսպաւ՝ մինչև դառանէր այլ դուռն դիւրամուտ. (ո՛ գիտէ քանի դրունս համարէր ունել քաղաքին)։ Այդ հասեալ ի քաղաքորին, շուրջ հայէր որպէս զի՝ ղն չգիտէ յե յո՞ր կողմն գնալ, և ինդրիցէ գուշակել ի կարծ։ Տեսանէր յաջմէ և յահեկէ զծայրս ուղեաց, և զման ինչ պարսպի զառաջեաւ, և ոչ ուրեք հեաս մարդոյ. բայց միայն ի հողաբլոյ ուստեք ելանէր ծուխ սիւնաձև թանձր և մթին, որ ստուարացեալ դիզացեալ՝ անհետանայր ի գորշ և յանշարժ օդէր։ Էին ձորձք և անկողինք և կարասի ապականեալ ի ժանտախտէ, որ ի հուր այրէին. և բոց այսպիսի ահուր, ոչ անդ միայն, այլ և ի բազում կողմանս պարսպին բորբոքեր անդադար։

Ամպապատ և մշձկուտ էին օդք, և երկին միգամած ծածկէր զարեգակն, առանց խոստացնելոյ անձրև. երկիր չուրջանակի, ուրեք խոպանացեալ, և ամենայն ուրեք ծարաւուտ. ածոք գտնաւեալ ոչ կաթ մի ցօղոյ ի աերևս թառամեալս երևեալ և ի վերայ այսոցիկ միայն նուիթիւն և լուսթիւն առ մեծաս քաղաքաւն՝ յաւելուին արհաւիրս ի տափնապ պատանեացն, և ահաւորութիւն ի խորհուրդս նորա։ Վայրիկ մի զկայ առեալ անդ, խոստրեցաւ ապա յայլ կոյս ըստ դիպուածոյ ի Նոր գուռնն, որ և ի մեծոյ էր նմա անտես՝ խափանեալ ի միջէ ի պատնիչաց։ Բայլս քանի մի առեալ, սկսաւ լսել հնչիւն զանգակաց ընդհատ, և ապա բարբառ մարդկան։ Յառաջ մատեաւ, և անցեալ

զանկեամբ պատնիչին, եռաս անակ մի փայտակերտ, և պահապան առ դրան յեց ի հրաշէն որպէս խոշոր և անփոյթ, և յեակուռաք չերտափակ, և գուռն ի խորս, նման որմն կրկին սնաձեւս, և քիւ ի վերայ ի պատսպարութիւն փեղկից դրանն՝ որ բացարձակ կային։ Եւ կայր անդ ի գետնի խոշ սխուր, պատգարակ մի, յորոյ վերայ Մոնատք երկու հանգուցանէին զմին թշուառ. և էր նա մաքսապետ դրանն, սուղ ինչ յառաջ հարեալ ի ժանտախտէ։ Զկայ հաս պատանին, մնալով ելիցն. և ի մեկնելն՝ նոցա՝ սեսեալ զի ոչ ոք էր որ փակէր զդուռն չերտափակին, ժամ պատեհ համարեցաւ, մատեաւ յառաջ ի մուտս. այլ որ ի պահ դրանն կայր՝ զոչեաց ամարդաբար. «Մէկ գի»։ Հայեցաւ ի նա Ռէնոյդ, եհան ի ծոցոյ, եցոյց նմա դրամակէս մի. նա, կամ զի ապրեալ էր միանգամ ի ժանտախտէ, և կամ զի առաւել քան զերկիւղ յերեսաց ախտին ազդէր ի նա սէր դրամին, ակնարկեաց ձգել առ ինքն զայն. և յանկանել դրամին առ ոտս իւր՝ ասէ. «Շուտ ըրէ, անցիր»։ Զեթող նմա պատանին կրկնել, էանց ընդ չերտափակն եմուտ ընդ գուռնն առանց ուրուք տեսանելոյ կամ ուշ դնելոյ։ Այլ ի գնալն յառաջ քայլս իրր քառասունն, ձայն էր զհետ նորա մի ի մաքսաւորաց. «Է՛, ո՛ր բարով»։ Ինքն չլսելոյն արարեալ, առանց յետս նայիլ հայելոյ՝ ձեպեր յընթացս։ Կրկնեաց մաքսաւորն. «Կեցիր կըսեմ»։ բայց գժգունելով ինն ասէր քան սաստելով. և ի սոսկացանել նորա, զուսպ ի վեր ընդոստուցեալ մաքսաւո-

բին՝ դարձաւ 'ի տեղի իւր. Թուէը՝ ղի առա-
ւել փոյթ էր նմա չհսկել յեկաւորս, քան նե-
ղել զնոսա:

Ուղին՝ զոր կալաւ Ինճոյ՝ հանէը յայնժամ
ուղիղ յառուս անդր, որ արդ կոչի Նաւիլէոյ-
ատակ և անակ էին ցանկապատք և որմք պար-
տիզաց, եկեղեցիք, մենաստանք, և տունք սա-
կաւ: Չայէը պատանին յաջ և յահեակ, և ոչ
զոք տեսանէը. յետոյ ուրեմն երևեցաւ ոք
յաջմէ՝ ղի գայր յառաջ. դարձաւ 'ի նա պա-
տանին հարցանել զուղեցն: Նորա տեսեալ 'ի
բացէ 'ի ձև օտար զՈՒինճոյ, գիտէը զնա կա-
կածանօք, և առաւել 'ի տեսանելն՝ զի գայր
դէպ ուղիղ առ ինքն: Ի մտել առ նա պատան-
եայն, որպէս զեղջուկ բարեկիրթ 'ի վայր էառ
զնոյնն, և կալեալ զոյն 'ի ձախսեմ՝ արկ զաջն
'ի մէջ խուրձին, և մատչէը առ անծանօթն: Ա՛յլ
նա չրջէրջելով զաչս՝ ընկրկեալ, 'ի վեր էառ
զգաւազանն ոստակից, և զերկաթի ծայր գա-
ւազանին ուղղեալ 'ի Ուինճոյ, ասէ. « Մէկ դի
կորիր »: Եւ պատանին « Ա՛ղէկ աղէկ » ասելով,
եդ զնոյն 'ի գլուխ, դարձոյց Թիկունս առ այրն
այլանդակ, և գնայր շճանապարհ իւր. զի այլ
ինչ ամենևին խորհէը 'ի մտի քան 'ի վէգ գալ
ընդ նմա, որպէս ասէը առա 'ի պատմէն զոյն:

Գնայր և միւսն շճանապարհ իւր մանչէլով, և
դառնայր ատեպ հայէը 'ի պատանին: Եւ 'ի
հասանելն 'ի տուն՝ պատմէը, զի մի յօծոզաց
մերձեցեալ 'ի նա, հեզ և խոնարհ ձևով, կեղ-
ծաւորեալ դիմօք, տուի սպեղանեայ կամ ծրար
փոշւոյ, (զի չգիտեր շհաւաստեան), ունելով

'ի ձեռին 'ի խորս խուրձին, կամեր օծանել
զինքն, եթէ չէր իւր մերժեալ զնա 'ի բաց, և
յաւելոյր. « Բայց մեն ալ որ մտեհնալոս ըլլար,
դաւազանս փորը պիտոր խոթելի անզգամին՝
դեռ ինքը զիս չօծած. գժբախտութենէն ան
եղաւ որ միևակ եկինք հոն, թէ որ քաղքին մէջ
պատահած ըլլար, օգնական կը կանչէի զինքը
բռնելու, անտարակոյս մեսրութենն մը կելլեր
դէմս բերկին մէջէն: Բայց հոն միևակ տեղ՝ հերիք
սեպեցի վախցընել միայն զինքը, չուզեցի վտան-
գի մէջ դնել զիս, ինչու որ սկըսաւ մեկէն քիչ
մը փոշի ցանել. Թշուառականները ճարպիկ
են, ատոնցմէ ալ պատրաստ է իրենց օգնելու:
Հիմայ հարկաւ քաղքին մէջ պտըտելու հետ է,
ով գիտէ ինչ կոտորած կընէ »: Եւ յամենայն
կեանս իւր, զի եկեալ զամն բազումս, որչափ
բանք լինէին զօծոզաց, կրկներ զպատմութիւն
իւր, և յաւելոյր. « Որոնք որ դեռ կը սնդեն
ու մտքերնին դրեր են որ սուտ է օծողներուն
վրայ եղած խօսքերը ու առասպել են, թող
գան լնծի հասկըցընեն. մեկ բանը աչքով տես-
նալու է »:

Իսկ պատանեայն ոչ գիտելով յորմէ վտան-
գէ եղև նմա զերծանել, գնայր յուզեալ 'ի ցաս-
մանէ քան յերկիւղէ. բայց 'ի գնալն զարմա-
նայր ընդ նորանշան ընդառնելութենն, և դու-
շակէը ինն որ ինչ անծանօթին կասկածեալ էր
զինքենէ: Ա՛յլ այնպէս այլանդակ Թուէին նմա
երբեք, զի պակասամիտ զայրն համարէր, և ա-
սէր 'ի մտի. « Գէշ սկսանք, Միլանու մէջ ձա-
խորդ է աստղս. առաջ ամեն բան յաջող կեր-

թաբ, նեբս որ մոայ՝ ձախորդութիւննեբը սկը-
սան. բայց թէ որ Աստուած յաջողէ ու գըտ-
նամ ուղածս . . . ամեն բան կանցնի կը մոռ-
ցուի »:

Հասեալ ապա 'ի կամուրջն, խոտորեցաւ ա-
ռանց ընդ բանս ինչ ածելոյ՝ յահեակ, 'ի ճանա-
պարհ սրբոյն Մարկոսի, համարելով 'ի քաղա-
քամէջ անդր ելանել ընդ այն: Այլ 'ի գնալն
հայէր այսր անդր, մարդասիրագունի ուշիք
պատահէլ. և տեսեալ 'ի փոսի ուրեք դիակն
անկերպարան, զանց արար. և փոքր միւս ևս
յառաջ խաղացեալ, ըստաւ բարբառ՝ որ ասէր.
« Թէշճ մարդ ». և ոչ ինչ անսի 'ի բացեայ ե-
տես կին մի, որ 'ի վերնայարկի տան միոյ յան-
ցնակ վայրի, շուրջ պատեալ 'ի մանկանց, աղա-
ղակէր և կոչէր զնա ձեռամբ: Դիմեաց անդր. և
իբրև մօտ եղև, ասէ ցնա կինն. « Հօրդ, մարդ
հոգւոյն համար ըլլայ, կորիճ պատանի, ողորմ
մեզի, լմացուր քաղաքը հոգեբարձուներուն
մեծին, որ հոս գոյեցին զմեզ՝ սլըշտիկած էք
ըսելով, ու մոռցան գնացին. խեղճ երիկս մե-
ռաւ, դուռնեբնիս գամած է՝ ինտոր որ կը տես-
նաս. երէկ առաւըընէ ինչուան հիմայ՝ կերա-
կուր բերող էղաւ, ողորմած մը էղաւ՝ որ աս
հնօրքը ընէ մեզի, աս անմեղ զաւկընեբս կը մեռ-
նին անօթութենէ »: —

« Անօթութենէ՞ » գոչեաց Ռէնոյ, և ար-
կեալ ձեռս 'ի գրպանս՝ ձգեաց 'ի դուրս զնկա-
նական, և ասէ. « Աման մը ինձէցուցէք՝ որ մէջը
դնեմ» : —

« Աստուածմէ առնես վարձքդ, կեցցէ քէշմէ »,

ասաց կինն, և ընթացաւ խնդրել կողով և պա-
տան, և իջոյց 'ի վայր: Ցուշ եղեն յայնժամ
պատանւոյն նկատակքն, զորս եգիտ առ խաչին
յառաջին մուտս իւր 'ի Մլեան՝ զորս էառ, և
ասէ 'ի մտի. « Ասկայ անոնց հատուցում մը
կըլլայ, ասկէն ընդունելի Աստուծոյ, քան թէ
սերօջը ապի. վասն զի ան իրաւցընէ գործք
ողորմութեան մըն է »: Եւ յարկանել զնկա-
նական 'ի կողով անդր՝ յաւել. « Իսկ հոգաբար-
ձուներուն մեծին խմացընել որ կըսես՝ չեմ
կրնար, խելքէ հնկիկ. երբոր կըսեմ որ հոս տեղի
ճամբանեբուն տեղեակ չեմ, օտարական եմ.
բայց ողորմածի մը հանդիպելու որ ըլլամ, ո-
րուն հետը կըրնայ խօսուիլ, իրեն կը յանձ-
նեմ»: Շնորհակալ եղև նմա կինն, և ուսոյց
զանուն ուղւոյն, զի կարասցէ եկեալորն գտա-
նել զտուն իւր:

Յաւել յայնժամ պատանին. « Դուն ալ ին-
ծի կրնաս շնորք մը ընել. մեծ ողորմութիւն մը
կընես առանց աշխատելու: Մլեան աշխուժան
ասպետներուս տուն մը կայ եղեր, կրնաս տեղը
ըսել ինծի »: —

Պատասխանի եառ կինն. « Գիտեմ որ անանկ
տուն մը կայ, բայց տեղը չեմ գիտեր. ասկէց
երթալու ատենդ կրնաս հանդիպիլ մէկուն՝ որ
գիտնայ. բայց չեմնաեաս մեզի համար ալ ըսե-
լու իրեն »: —

« Մի տաբակուսիր », ասաց Ռէնոյ, և գնաց
յառաջ:

Բայց չանդգն լինի, որ մինչդեռ խօսէր նա ընդ
կնոջն՝ սկըսեալ էր լսելի լինել, յաւելոյր աս-

կաւ, չառաչիւն անուռոց, ոսնաձայն երիվա-
րաց, և հնչիւն զանգակի, և երբեմն երբեմն շա-
ռաչ խարազանաց և գոչիւն: Հայեր յառաջ,
և ոչ տեսանէր ինչ. այլ 'ի հասանել յելս ուղ-
ւոյն, երևեցաւ հրապարակ սրբոյն Մարկոսի.
ուր նախ քան զամենայն գիսան աչաց նորա
ցեց երկու կանգուն, և պարան 'ի նոսա և
ձախարակք. և ոչ յամեաց 'ի գիտել զի էր
այն տանջանարան առեալ՝ յաձախեալ 'ի ժա-
մանակին: Ոչ անդ միայն, այլև յամենայն հրա-
պարակս և 'ի փողոցս ընդարձակս կանգնեալ
կային տանջանարանք այսպիսիք. և վերակա-
ցուք Թաղից ևւրաքանչիւր առեալ իշխանուս
Թիւն ըստ հաճոյից, խոշտանգէին անդ զորս
արժանի համարէին պատուհասի, վասն էլա-
նելոյ նոցա 'ի փակելոց տանց անհաղորդելեաց,
կամ զպաշտօնեայս վերջացեալս 'ի պարտուց
պաշտամանցն, և զայլ յանցաւորս: Պատու-
հասք ծայրայեղք և անօգուտք, որ զայնու ժա-
մանակաւ՝ մանաւանդ յաւուրսն յայնոսիկ 'ի
կիր արկանէին:

Մինչ դեռ 'ի տանջանարան անգր ալեւոյեալ
կայր պատանին, և խորհէր վասն որոյ իրաց
կառուցեալ էր այն, և ևս քան զևս զայրանայր
չարինդն: Եւս, և ահա յանկեանէ եկեղեցւոյ
գայր յերևան այր մի՝ զանգակ 'ի ձեռին, պաշ-
տօնեայ տաճարի, և զհետ նորա զայդ ձիոց, որ
կորովի զպարանոցան առնելով, և ձիգն սմբա-
կօքն գործելով, տաժանէին դալ յառաջ, լը-
ծեալք 'ի սայլ մի ահագնաւն գիսակամբք. և ըզ-
հետ այնորիկ միւս այլ սայլ, և միւս այլ զհետ:

Եւ առ երի երիվարացն Մոնատք ատամ և ան-
տի, մղելով զնոսա գանգծեծ և մարակ 'ի
կուշտ՝ յեչոցս 'ի նոսա արձակէին: Առաւելա-
գոյնք 'ի գիսականցն էին մերկանգամք, կէսք
պատեալք 'ի ցնցոտիս, խառն 'ի խուռն չեղջա-
կուտեալք. և որպէս օձք ընդ երեսաւս պատա-
տեալք՝ յերկիանալ գարնանոյ խլըտին, այնպէս
'ի ցնցեղապալչին և 'ի խոչ ընդ անիւս անկանել՝
դողդոջէին գիսակունքն սոսկալիք, տատանէին
դլուխք 'ի կախ, վարսք կուսականք ըստորան-
կեալ, ծղիք յանիւս բաբախեալ, աչաց զարհուս
րելոց ածեալ աեսիլ տգեղ և սգալի՝ քան զոր
մոաց ևս տեղծանել:

Կայր Ռէնոյ 'ի մի յանկեանց հրապարակին
առ շրջապատիս առուին, աղօթելով վասն մե-
ռելոյն անծանօթից. և խորհուրդ գժնդակ 'ի
մոի՝ մրմնջելով ասէր. « Թէ որ յանկարծ ա-
ռնոյ մէջը... Աստուած պահե... ան, տէր իմ,
մի Թողուր որ ասանկ բան մտքէս անցնի »:

Իանոյ չուն եղերական. և Ռէնոյ մեկնեալ՝
անդ ընդ մէջ հրապարակին, և գնայր 'ի ձախմէ
առուին, զի յաջմէ անցանէին սայլքն գիսակիրք:
Եւ երթեալ ընդ որմ եկեղեցւոյն և ընդ ա-
ռուն, եառեալ յաջմէ զկամուրջն Մարչելլինոյ. և
յառաջ ևս անցեալ, եղ 'ի Պորկս Նովոյ: Հայեր
գիսեր հանդիպեալ ուստք՝ որ ցուցցէ իւր ձա-
նապարհ, և եառեալ 'ի խորս ուղւոյն երեց մի՝
ցուպ 'ի ձեռին կացեալ առ Թերաքաց գրան,
խոնարհեալ զգլուխ իւր, և ուսկիդիր 'ի ծերպ
գրանն, և ասպա ալ 'ի վեր առեալ 'ի խաչակըն-
քել: Գուշակեաց պատանին որ ինչ էրն, զի

զնուռաուվանուԹիւն ուրուք լուեալ անդ երիւ-
ցուն՝ արձակէր զնա. և ասէ ՚ի մեծ. « Ասիկայ
ինծի յարմար կերևնայ, Թէ որ քահանայ մը
իր պաշտօնը կատարելու առենն ալ եղբայրսկ-
րուԹիւն չունենայ, քիչ մը գուԹ չունենայ,
շնորք մը չուզէ ընել, ըսելու է որ աշխարքիս
վրայ բարիք ընել ուզող չկայ »:

Յայնժամ երիցն մեհենալ ՚ի դրանէ անտի,
գայր ՚ի պատանին կոյս՝ զգուշուԹեամբ մեծաւ
ընդ մէջ ուղղոյն. և իբրև մօտ եղեն միմեանց,
եկաց պատանին. և ՚ի վայր առեալ զնոյր՝
յայտ առնէր զիւղձ խօսելոյ ընդ նմա, առանց
այլ ևս մերձենալոյ ՚ի նա: Զկայ էառ և երիցն
սա ՚ի լսել, յեցուցեալ զգաւազանն զառա-
ջեաւ ընդ երկիր որպէս ընդդիմադրել. և ՚ի
լսել զնդիր պատանւոյն, ոչ միայն եցոյց նմա
զուղին՝ ուր էր տունն այն, այլ տեսանելով
զսէտս հիքին դիտելոյ զդիրս ձանապարհացն,
ուսոյց նմա զալ և զահեակ խոտորմունս, զե-
կեղեցիս և զհաւս ուրիք ուրիք կանգնեալ, և
այլ ևս իբր ուԹ ուղիս՝ ընդ որս պարտ էր նմա
անցանել: Ասէ ցնա Ռէնոյ. « Ատուտած կեանք
տայ հրամանքիդ, մանաւանդ ատանկ առեն ».
և ՚ի չարժել նորա ՚ի գնացս՝ յաւել. « Ուրիշ
շնորք մըն ալ կը խնդրեմ հրամանքէդ ». և
պատմեաց զիրս տառապելոյ կնոջն: Շնորհս
կալաւ նմա երիցն վասն տալոյ նորա դէպս առ-
նելոյ զկարևորն զայն գործ ողորմուԹեան. և
խոստանալովնմա գնալ ազդ առնելոյ պարտն
էր, մեհենեցաւ ՚ի բաց:

Մեհենեցաւ և Ռէնոյ. և ՚ի գնալն յեղեղէր

՚ի միտ զուղիան ուսեալը, զի ժ. և յամենայն
կէսս ուղեաց ստիպեսցի հարցանել: Ապ ծան-
րանայր նմա այն, ոչ այնչափ վասն գժուարու-
Թեան իրին, որչափ զի այլ իմն աղմուկ յու-
զէր անտի ՚ի սիրտ իւր. զի անուն ձանապար-
հին և հեռաք խառնվիլին զնա: Նչանակին ցանկալի
և կարևոր՝ խնդրեալ ՚ի նմանէ, և կարևոր ան-
հրաժեշտ Թելադէտ չէր ինչ չարաբուշակ, այլ
անստուգուԹիւն լսելոյ ընդ հուպ զկենդանու-
Թիւն կամ զմահ սիրելոյն այնպէս վեր ՚ի վայր
զսիրտ նորա հարկանէր, զի ընտրէր կալ մնալ
Յերկբայս և դառնալ ՚ի սկիզբն ուղւոյն՝ յորոյ
հասեալ էր ՚ի ծայր. այլ քաջալերելով զանձն՝
ասէր. « ՏղայուԹիւնը մեկդի դնելու որ չըլ-
լանք, ծայրը ո՞ւր կը լսմընայ », և երԹայր յա-
ռաջ ընդ քաղաքն:

Ապ որպիսի Թուէր նմա քաղաքն. այլայ-
լեալ ՚ի սրածուԹենէ ՚ի սպառ, ոչ եւս էր այն՝
զոր հասս ՚ի հերուն. մանաւանդ զի դէպ լինէր
նմա անցանել ընդ կողմն առաւել սգալի և ա-
մայացեալ, ընդ կէսս ուղեաց՝ որ կոչէր Ֆար-
րոպոլոյ: Զի այնպիսի լեալ էր անդ ախտին ճա-
րակումն, և. նէթ դիականց լքելոց անԹալ,
մինչև սակաւուց ևս կենդանւոյն մնացեալց՝
սոխալիլ Թողուլ եղանել ՚ի բաց: Ի ախորուԹիւն
անցաւորի յերեսաց միայնուԹեան և ամայու-
Թեան՝ յաւելոյր սոսկումն և գարշուման ընդ
հեռս և ընդ մնացուած արդի ընակուԹեանն:
Երագեաց Ռէնոյ զգնացս. չև ևս էր յելս ա-
պարիզին՝ յուսայր նախ քան զչասանել անդր՝
գտանել ինչ փոփոխումն տեսարանին: Եւ ար-

դարև սուղ ինչ յետոյ եւ ՚ի վայր, զոր մարթ
էր կոչել քաղաք կենդանեաց. այլ և այն որ-
պիսի՛ քաղաք, և կենդանիք որպիսիք: Կասկա-
ծանօք և արհաւրօք ամրացեալ ամենեքեան ՚ի
տունս, դրունք առ հասարակ փակեալք բայ ՚ի
ժամս աւուր հարելոյ և ամպրն մնացելոց ՚ի
բնակչաց. այլք հաստահեղոյս ամրափակեալք
և կնքեալք՝ վասն ՚ի ներքս անդ մեռելոց կամ
հարելոց ՚ի ժանտախտէ, այլք խաչակնքեալք
ածխով ՚ի նշանակ Մոնաստից՝ զի էին անդ դիա-
կունք, զորս պարտ էր նոցա ՚ի բայ առնել.
ամենայն ուրեք էին ցնցոտիք, և գարշագոյն
քան զընցոտիս՝ պատանք Թարախոտք, անկո-
ղինք ապականեալք, պաստառակք արտաքս
՚ի պատուհանաց արկեալք, և ուրեք ուրեք
դիակունք ևս յանկարծամահ ՚ի փողոցս ան-
կելոց, Թողեալք մինչև ցհատսնել դիակիր սայ-
լից, կամ ՚ի սայլից անտի անկեալք, կամ ար-
կեալք գարձեալ ՚ի պատուհանաց: Յայն վայ-
րենութիւն ածեալ էին ոգիք յերկարատև կո-
տորածէն, մինչև ՚ի մոռացօնս արկանել զամե-
նայն գութ և հոգ ընդ ելականն:

Դադարեալ էր ամենայն հնչիւն ՚ի կրպակաց,
չառաչիւն կառաց ՚ի փողոցաց, ձայն վաճա-
ռողաց, բարբառ անցաւորաց. և լռութիւնն
այն մահաղեհոյց ոչ ընդհատեր, բայց միայն ՚ի
ձևինչ դիակիր սայլից, ՚ի կականաւոր ողբոց
աղքատաց, ՚ի հեծութենէ ախտաժետաց, ՚ի
գոչիւն ցնորելոց, և յաղաղակէ Մոնաստից:
Ցառաւօտու, ՚ի միջօրեի, և յերեկոյս զանգակ
կաթողիկէին ազդ առնէր զաղօթս սահմա-

նեալս յաղբեպիսկոպոսէն. ՚ի ղօղանջ այնորիկ
հնչէր և այլոց եկեղեցեաց զանգականին. յայն-
ժամ բնակիչք տանց առ հասարակ դիմէին ՚ի
պատուհանս աղօթել ՚ի միասին. և հառաչանք
նոցա սփոփանս լիմն արտմախառն աղդէին ՚ի
սիրտ:

Պակասեալ էր կրկին երիր մասն քաղաքայ-
նոց, բազումք ևս ՚ի մնացելոց մեկնեալ էին ՚ի
բաց կամ ախտացեալ. սակաւք ոմանք երևէին
՚ի փողոցս, և հազիւ ոք ուրեք ՚ի նոսա՝ որ չէր
յանսովոր ինչ իրաց սոսկալոյ: Այրք աշնուա-
կանք գնային առանց լոգակի և վերարկուի՝ որ
յայնժամ կարևոր մասն էր հանդերձից աւագ-
երէցոյ, երիցունք առանց պճղնաւորի, և կրօ-
նաւորք առանց կապայի, ամենեցուն ՚ի բաց
եդեալ զամենայն լայն հանդերձանի՝ որոմ
գիւրին էր հալել ապականութեան, և որ առա-
ւել քան զամենայն ինչ երկիւղալին էր՝ տալ
գիւրութիւն օձողաց: Բայց ՚ի զգուշութենէ
աստի զգեցեալ հանգուշն և զուսպ, դնային ան-
խնամ և անյարգար. որ միանգամ մօրուանիքն
սոլոր էին՝ երկայնամօրուսք յայնժամ գնային,
և որ անմօրուս սոլորեալք՝ Թողուին ածել մօ-
րուացն, և երկայնահերք և գիսախուիք երե-
էին. ոչ միայն վասն երկարատև վշտաւո-
Թեանն, այլ և զի կասկածելի լեալ էին վարսա-
վիրայք՝ յորմէ հետէ մի ՚ի նոցանէ ըմբռնեալ և
դատապարտեալ էր որպէս օձող անուանի.
Մուռա ոմն անուն, հռչակեալ այնուհետև ընդ-
ամն բազումս, որ արժանագոյնն էր աշխար-
հաքարոզ և մշանջենաւոր կարեկցութեան: Ա-

ռաւելագոյնք կրէին՝ի միում ձեռին գաւազան. և ոմանք առաջանակ ևս՝ ի սպառնալիս՝ որոց իշխէցեն մօտել առնոսա. և՝ի միւսումն խունկս սաստկահոտս, և տուփ փայտեայ ծակոտկէն՝ բերելով՝ի ներքս սպունգ թացեալ՝ի դեղս խառն քացախ, զոր սահել հոտոտելին, կամ ունելին յար՝ի հոտոտելիս: Եւ կէսք կրէին կախեալ զպարանոցէ մեղկ՝ի լիչ, համարելով ունել նմա զօրութիւն ծծելոյ զամենայն ժահ ապականիչ: Ապատանին առանց սպասաւորի ելանէր, զամբիւղ՝ի ձեռին, դնել անձամբ ըզկարևորն պարէն. բարեկամք, եթէ երբեք հանդիպէին միմեանց յոլորոյ, ՝ի հեռուստ ողջունէին զնրբաթս լռելեայն և հարևանցի: Աչխատութիւն յոյժ էր ամենեցուն՝ի գնալն ըզգուշանալ՝ի զաղտալն և՝ի ժանտ խոչից՝ որ սփռեալ կային ընդ երկիր, ուրեք ուրեք բնաւ իսկ ծածկէին զերկիր: Ամենայն ոք չանայր դէնել ընդ մէջ ճանապարհին, զի մի ինչ աղտեղի կամ մահահոտ անկցի զնրբաւ՝ի պատուհանաց, կամ փոշի չարաթոյն, զի առկին արկանել զայն օծոցաց՝ի վերուստ անտի՝ի վերայ անցաւորաց. և առ ահի ընդ որմն օծեալս պատահելոյ: Այսպէս ոգևոռութիւն, ձախողակի զգուշաւորս, յաւելոյր անձկութիւն՝ի վերայ անձկութեան, և յաճախէր երկիւղ տարապարտ՝ փոխանակ բանաւորս և փրկաւէտ երկիւղի, որ խափանեալ էր՝ի սկզբան:

Ընդ մէջ ալեծաց այսոցիկ գնայր պատանին, և մինչդեռ հեռի էր յօրղոյն՝ յոր պարտ էր նմա խոտորել, լուաւ անդրէն չիոմի ինն խառնաձայն՝ յորում ազգազգոյն լսելի լինէր սովորականն այն զօրանջ զանգակի ահարկու: Եւ հասեալ յանկիւն ճանապարհին՝ որ մի էր՝ի լայն ճանապարհաց, եռաս սայլս ջրոս զկայառեալ, և որպէս՝ի տուրևառ ցորենոյ երթեւեկի խառն՝ի բեռնաւորել և՝ի տապալել զբուրձս, հանդոյն ինն էր՝ի տեղւոջ անդ շարժումն: Մտանէին Մոնաստաք՝ի տունս, և ելանէին բերն՝ի Թիկունս, և դնէին զգիակունս՝ի սայլս. կէսք կարմրագեաց նշանաւորք, այլք անշնչան. տեսլի ևս այլք՝ փետուրս և ծոպս երփնագոյնս՝ի նշան ուրախութեան, ՝ի սգի անդ հասարակաց կրելով: Լսելի լինէր մերթ ասաի և մերթ անաի՝ի պատուհանաց ձայն եղերական առ Մոնաստ գոչելով՝ « Հոս հասէք », և պատասխանի անողոքմ՝ի տխուր խառնէն՝ « Հիմայ, հիմայ, կեցցէք քիչ մը »: Աղաղակէին և գրացիք՝ « Շուտ ըրէք ». և նոքա փոխանակ պատասխանւոյ՝ յիշոցս արձակէին:

Եմուտ պատանին՝ի փողոց անգր, և վազվազէր՝ի գնացս առ՝ի չտեսանելոյ զնոյն և զնուրթ աղետացլի, բայց որչափ հարկ էր՝ի զգուշութիւն. այլ գիտաւ յանկարծ աղետագունի խմիք տեսարանի, որ էտ նմա զկայ առնուլ՝ի զնին: Ինքեր՝ի սեմոյ գրան միոյ և գայր՝ի խուռն անգր կին մի, անցեալ զառոյգ հասակաւ, աղօտացեալ դէղ նորա՝ այլ ոչ եղծեալ՝ի ծանունց վշտաց և՝ի մահացու թալկանէ, տեսիլ նուաղեալ՝ այլ վսեմական, որպէս է տեսանել յարիւն լմնպարատական. գնացք նորա պարտասեալ՝ այլ ոչ կիծուցեալ. աչք անթաց՝ այլ

բազումս ցուցանելով հեղեալ արտասուս. խաղաղութիւն նմին լուրջ և զգօն կայտ առնէր զնորա դիւրազգաց, և կրկին գիտակից։

Այլ ոչ միայն տեսիլ նորա կայնքան աղէտս առնէր զնա առաւել աղետալի, և յուշէր գութ՝ ի սիրտս՝ գոգցես այնուհետեւ անզգայս, այլ կրկնը նա՝ ի գիրկս դասրիկ իբր ննջամեայ վաղամեռիկ, զարգարեալ՝ ի մայրենի ձեռաց, և որպէս թէ՝ ի հանգէս ոճնի պատրաստեալ սպիտակ տակազգեաց, վարսք՝ ի ձակատուն կերկուս բաժանեալ. ոչ՝ ի կախ զպարանոցէ մերն, այլ՝ ի նիստ՝ ի վերայ բազկին, կուրծ՝ ի կուրծս կեց՝ որպէս թէ կենդանի. բայց միայն մի՝ ի սպիտակ ծղեացն գոգցես մոռեղէն՝ ի մի կողմն կախեալ, անշնչութեամբն վայրաբեր, և գլուխ նորա յուսն մայրենի հանգուցեալ, անկեալ որպէս խոր՝ ի քուն. և եթէ ոչ դէմքն երկոքին համանմանք վկայէին զի մայր իւր էր նա, յայտնէր զայն՝ որ՝ ի նմանն երևեալ գութ։

Եւ ահա մի՝ ի Մանաւիցն զազրալի եկն բառնալ՝ ի գրկաց մերն զդասրիկն. նա յետս ընկղմեալ, ոչ զայրացմամբ, ասէ. «Մի մօտիր, թոզ առաւ որ ես դնեմ սայլին վրայ». և ցուցեալ նմա՝ ի միւսում ձեռին քսակ արծաթոյ, արկ՝ ի պայուսակ Մանաւին, և յաւել. «Ա՛ռ ասի կայ, ու խօսք տուր ինձի որ Թէլ մը վայրն չվերցընես, և ոչ ուրիշին Թոզոս որ վերցընէ. ասանկ դիր հողուն տակը»։

Զեռն՝ ի կուրծս էդ Մանաւն. և ամենայն խնամով, և գոգցես մեծարանօք, և զգացմամբ՝ որ զսիրա նորա գրաւեալն էր՝ քան յանակընկ-



կալն վարձուց, փութացաւ պատրաստել սե-
րուն մեռելոյն տեղի՝ ի սայլին. և մայրն համ-
բուրեալ զձակատ նորին, հանդոյց զնա անդ-
րպէս՝ ի մահճի, և ծածկեալ զնա սպիտակ
քօղով, եւս ողջոյն յետին. «Մնաս բարով Զե-
չիէակս, գնա հանդչէ խաղաղիկ. ես իրիկուն
մենք ալ կուգանք՝ մեկ տեղ հանգչելու յաւի-
տեան. աղօթք ըրէ մեզի համար. ես ալ քեզի
ու ամենուդ համար կընեմ»: Եւ առ Մոնատն
ասէ. «Իրիկուան գէմ տակէդ որ կանցնիս, ե-
կուր զնա ալ ա՛ռ, մինակ ալ չէ»: Եւ զայս ա-
սացեալ էմուտ՝ ի տուն. և վայրկի մի յետոյ ե-
լեւէջաւ՝ ի պատուհանի, միւս ևս դասրիկ փո-
քրիկ՝ ի ձրիկ, որ չէ էր մեռեալ, այլ ընչա-
նակս մահու՝ ի դէմս բերեր. եկաց՝ ի զնին
գժպհի յուղարկաւորութեանն մինչև՝ ի մեկ-
նել սայլին, յոր վայր երևէր. և ապա եղ՝ ի
բաց: Եւ զինչ այլ ինայր. ընկողմնեալ և ինքն
առ մանկանն՝ եղև նմա մահակից, որպէս ծա-
ղիկ վթթեալ՝ ի ծիլ ընդ անփթիթ գետ հոս-
նին, անկեալ՝ ի սայր գերանդւոյ՝ որ անխիղ
հնձէ զարօր:

Յայնժամ գոչեաց պատանին, «Տէր իմ, լսէ
իր աղօթքին, զինքն ալ՝ դասրիկն ալ՝ քովդ առ,
քաշածնին հերիք սեպէ, բաւական սեպէ քա-
շածնին»: Եւ՝ ի սասիկ այլայլմանէն յինքն
եկեալ, մինչդեռ խորհէր՝ յո՞ր՝ ի յուղեաց խո-
տորել, լուաւ գարձեալ՝ ի ձախմէ այլ ինն
և այլազգ աղմուկ խառնաձայն՝ հրամայական
սասից, ողբոց կերկերելոց, լալեաց կանան-
ց, աղաղակի մանկանց: Յառաջ մատեաւ սը-

խուբ և մթին սովորականաւն ակնկալութեամբ. և ՚ի կնոց ուղղոյն եաեա՝ զի յայնմ կողմանէ ամբոխ խառն ՚ի խուռն յառաջ գայր, և զկայ էառ՝ Թողեալ նոցա անցանել: Եւ էին ախտաժէտք՝ զորս Մոնաստք ածէին ՚ի զբուշարան. էէտք բռնի մղեալ՝ զուր ջանային զդէմ ունել, այլք ընդունայն աղաղակէին՝ « Մեր անկողինը կուզենք մեռնիլ », և անէծս ընդդէմ Թշնամանաց և սատից Մոնաստին արձակէին: Այլք գնային անմխուանչ, առանց յաւ ինչ կամ կիրս յայս առնելոյ իւր անզգայք: Կանայք մանկունս բերելով ՚ի գրկի. և մանկունք զարհուրեալ յաղաղակէ, և ՚ի սատից քան ՚ի մհոն երկիւղ, բարձրաձայն լալեօք ՚ի գիրկս մարցն ինդրէին պատսպարել, գառնալ ՚ի տուն. այլ աւար զի մարք նոցա, զորս յանկողնի Թողեալ ՚ի քուն կարծէին, անկեալ Թերևս կային անզգայեալք ՚ի մահՀ, և Մոնաստք ընոսա գնային ածել ՚ի զբուշարան, կամ ՚ի փոս՝ եթէ յամէր այլ ևս սայլ. գուցէ և մարց, ոմ արտասուաց դառնագունից արժանի, մոռացեալ էր առ վշտին զմանկունս իւրեանց, ոչ խորհելով ինչ այլ՝ բայց մեռանել և ՚ի վշտացն ազերծանել:

Սակայն յայնքան չփոթի՝ էր տեսանել և օրինակս անյողդողդ արիութեան և գորովոյ: Հարք, մարք, եղբարք, որդիք, կանայք, քաջալերս սիրելեաց իւրեանց մատուցանէին. ոչ չափահասք միայն, այլ և մանկունք և աղջկունք զեղբարս իւրեանց մանուսն զձեռանէ կալեալ ածէին, օգնէին նոցա ուղեկցելով և սփոփէին զնոսա հնազանդել, հաւատարիմ

առնելով նոցա՝ զի գնային ՚ի տեղի, ուր հոգ և խնամ պատրաստ կային ՚ի բժշկութիւն:

Ի մէջ այսքանեաց սխորք և գորովելի տեսարանաց՝ էր ինչ աղգողդոյն, որ առաւել աղմիկը զՈՒՀնոյ. զի մօտ էր ՚ի տուն անգը, և ո՞ գիտէ զի ՚ի խռան անգ...: Այլ Հանց գնաց ամբոխն, և ՚ի դադարել կասկածանացն՝ Եհարց պատանին ցմի ՚ի Մոնաստից, որ գայր զՀետ, զուղի և զտուն բնակութեանն ՖԷրբանտեայ. և ընկալեալ Թշնամանս ՚ի նմանէ ՚ի պատասխանի, անփոյթ արար տալ նմա զարժանին. և տես ապա զմի ՚ի պատուիրակաց, որ գայր ընդՀետ կարաւանին, և էին դէմք նորա քրիստոնէի, եհարց և զնա: Նա ծայրիւ ցպոյն ցուցեալ զկողմն ուսոյն գայր, ասէ. « Այ կողմիդ առջի ճամբուն, ձախ կողմի եաքն մեծ տունը »:

Նորով էին առաւելագոյն անձկութեամբ դէմ եղեալ կայն կողմն, ծանեաւ պատանին զտունն ՚ի մէջ խոնարհագոյն և գծուծ տանց: Մատեաւ անգը, եգիտ զայն փակ. և կալեալ զզարկ դրանն, որպէս ոք զի բառնայցէ ՚ի սա փորոյ զվիճակ կենաց կամ մահու, առ զայն ՚ի վեր, և բաղխեաց զդուռնն: Վայրկի մի, և բայաւ մի ՚ի պատուհանաց. եհան կին մի զգլուխ ՚ի դուրս, հայեցաւ եռես, և կասկածոտ գիմօք ասէր յանձին. « Ո՛վ գիտէ, Մոնաստներէն՝ գողերէն՝ պատուիրակներէն՝ գիւահարներէն՝ մեկը ալիսոր ըլլայ »:

ՈՒհնոյ հայեցաւ ՚ի վեր, և ձայնեաց գողալով. « Խնդրեմ, Լուչիա անունով գեղացի աղջկէ մը կայ եղեր հոս ապահին, հո՞ է »:

Պատասխանի եւս կենին. « Չոս չէ, գնաց »։ Եւ կամեր փակել զպատուհանն։

« Քիչ մըն ալ կեցիր, հոգիդ սիրես. ո՞ւր գնաց »։ —

« Զգուշալանը »։ Եւ դարձեալ կամեր փակել։

« Քիչ մըն ալ, Աստուծոյ սիրոյն համար, ժանտախտէն զարնուեցաւ »։ —

« Չա՛, կարծես որ նոր բան մըն է »։ —

« Վա՛յ խեղճը. ծա՞նր հիւանդ էր, որչափ առեն է »... այլ փակեալ էր պատուհանն։

« Կեցիր, կաղաչեմ. խօսք մըն ալ, հոգիդ սիրես, քուկիններուդ հոգւոյն համար »... այլ որպէս թէ առ որմն խօսէր։ Եւ վերստացեալ գուժիչն, և զայրացեալ ընդ ամարդութիւն կնոջն, բուռն եհար անդրէն զդարին, շրջէրջէր զայն՝ յեցեալ ի գուռնն, և ամբառնայր բաղխել դարձեալ զայն յօսասհատ, և ուշեր ի կախ։ Ի վարանս անդ՝ դարձաւ հայել թէ էր ոք ի դրացեաց, յորմէ մարթէր գիտել ինչ յայտնագոյն. և ահա գայր կին մի պառաւ, հեռի քայլեալ իբր քան, սարսափ ի դէմն, զայրոյթ և շտապ անժոյժ. աչք փեռեկեալ, պղտցեալ ի պատանին՝ այլ հեռի ևս գիտելով, բերանաբացեալ իբր առ ի գոչել՝ « Ալ չեմ գիմանար »։ այլ բռնաբարեր զշունչ ի լռել, ամբարձելով երկոքումբք բազիւք, կարկառելով և ամփոփելով զձեռան զերկոսին ի ձև մագլաց, որպէս թէ ի յափշտակել ինչ, և թռուեր կոչել զոք անտես յայլոց։ Իբրև հասին հանդէպ միմեանց, ևս քան զևս խոժոռեցաւ պառաւն՝ որպէս խաբեալ։

Ամբարձ և Ուչնցոյ զձեռս ի կենին կոչին, և ասէ. « Զարմանք բան »։ Ալ պառաւոյն ոչ ևս յօսասցեալ հասանել յանկարծ ի վերայ, ձայն եբարձ որ լռէրն ցայնժամ, և գոչեաց. « Օծո՛ղ է, վրան հասէք »։

Աւե պատանին. « Ե՞ս օծող, կախարդ կենն, ստախօս պառաւ, ձայնդ վար քաշէ »։ Եւ ի վեր վազեաց՝ գիմել ի վերայ, ահ արկանել, կարկեցուցանել զնա. այլ յոյշ լեալ նմա որ ինչ այլ ինդիր էր իւր կարևոր՝ յետս եկաց։

Բայց ի ձիչ պառաւոյն հասին ասոի և անոի, ոչ ամբոխիւ՝ որպէս յառաջ քան զամիսս երիս գիմելին՝ թէ պատահէր ինչ այսպիսի, այլ որչափ բաւեր ընդդէմ միոյ զօրել բռնութիւն։ Յայնմ վայրի բացաւ անդրէն պատուհանն, և երևեալ անդրէն նոյն կենն ոմարդի ազաղակեր. « Բռնեցէք սրբիկայ, բռնեցէք. անզգամներէն մէկը սիտոր ըլլայ. դռները օծելու կը պարսի »։

Ոչ ևս զկայ էառ պատանին, խորհուրդ կալաւ ուղի տալ ի բաց. դիտեաց յաջ և յահեակ՝ ուր էին նուազագունք, և մղեալ բռընխէթ արկ յետս ուժգին իբր տասն քայլ զմի ոք որ կայր խափան ընդ ուղին, և զմիւս ոք այլ՝ որ դայրն ընդդէմ, զերծաւ արշաւասոյր՝ կուռվ ընդ օդս պատրաստ ի տապատս արկանել ոք ոք և իշխեր ընդդէմ ելանել։ Բաց էր միշտ ուղին առաջի նորա, այլ լսեր յետոյսէ ոանաձայն, և չար քան զոռնաձայն՝ աղաղակ սոսկալի. « Վրայ հասէք օծողին »։ Տևէր աղաղակն, և ոչ գիտեր մինչև ցէրբ, և ոչ տեսանէր ուրեք ապաստան։ Յայնժամ ցասումն փոխեցաւ ի

կատաղութիւն, և անձկութիւն ի յուսահատութիւն, և ձարպոյ զսկսեալ նորա եկեալ՝ եդ ձեռն ի սուսեր, մերկեաց զայն ի պատենէ, եկաց արձանացեալ, գարձոյց զերեսս ի յետս դժնէադէմ և սպառնալից՝ որպիսի չէր յամենայն կեանս իւր երբեք երևեալ. և սուր ընդ օդս բարձր բազկաւ շողացուցանելով, գոչեաց. « Ով որ կը յանդգնի՝ Թող գիմացս գայ, ձեզ պէս անիրաւները, գիմացս Թող գայ՝ որ իրաց ընէ օձեմ զինքը ասով »։

Եւ եռեալ զարմացմամբ և քաջալերութեամբ, զի հալածիչքն խնթացեալ կասեցան, այլ ոչ դադարէին ի գոչելոյ, և ձեռս ընդ օդս հանդոյն գիւահարաց տատանէին՝ լթր առ ամբոխ եկաւորաց զՀետ խրեանց։ Դարձաւ անդրէն պատանին, և եռեալ՝ զոր առ սաստիկ խռովութեան սրտին չէր տեսեալ նորա յառաջ, այլ մի կամ մանաւանդ շաբ այլից եղերականաց սովորականաւքն ուղեկցաք, և զՀետ այնոցիկ ոչ ինչ հեռի միւս այլ ամբոխ՝ յարձակել յօծողն, և շուրջ պատել զնովաւ. այլ զնոյն կրճիւն գըլուխն և նոքա։ Եւ տեսեալ պատանւոյն հուր ասող և հուր անող, խորհեցաւ զի որ ահարկուն էր նոցա՝ կարէր լինել իւր ի փրկութիւն, և զի ոչ ևս էր ժամ քնքշելոյ և զղուշելոյ, արկ զսուր ի պատեան, գիմեաց ի այլ անդր, անց զառաջնումն, եռեալ յերկրորդումն տեղն ունայն, և ի կշիռ ական ոստեաւ անդր, եկաց ի վերայ աջոյ ոտին՝ զձախ ընդ ոտս կալեալ և զձեռս ի վեր։ Աղաղակեցին Մռնատք միաձայն. « Կարէ՛ տալ »։ կէսք ի նոցանէ

զՀետ սայլեցան գային հետւոյ, և կէսք ի սայլս նստեալք. այլք սոսկալի ևս՝ ի վերայ դիականցն բազմեալ կային, սրտաւակ սուսաւ ի ձեռին՝ որ գինեվոյ շուրջ ընթանային. և մի յերոցունց՝ որ ի սայլն անդ էին, ասէ ցՌինոցոյ. « Կարէ՛ տալ, ինչ աղէկ հնարք գտար. մեր Թևին տակը անանկ ապահով ես, ինչպէս ժամու մը մէջ »։

Իսկ Թշնամիք նորա յանցանել սայլեցան Թևկունս դարձուցեալ գնային ի բաց՝ անգադար ի գոչելոյ. « Վերայ հասէք, բռնեցէք օձողը »։ Ոմանք ի նոցանէ յամր ընթանային, և երբեք երբեք զկայ առեալ՝ գառնային հայհոյին ի Ռինոցոյ նշանացի սպառնալեօք։ Իսկ նա ի պատասխանի՝ կուսիս ընդ օդս հանէր ի սայլէն. և մի ի Մռնատից, « Ինձի Թող » ասելով, խլեաց կապերտ մի զաղտոտ յումեմնէ ի դիականց, և ոլորեալ կապեալ զայն, և զմիջէ ի ծայրկին ի վեր կալեալ որպէս պարսատիկ, ընդդէմ յամառելոցն ձգել սպառնայր՝ ասելով. « Սպասեցէք, սպասեցէք, գդուամ գլուխները »։

Յայնժամ փախեան ամենեքեան յերկիւղէ, և Ռինոցոյ ի Թիկանց զելեալ գարշապարաց նոցա սեսանէր. իսկ Մռնատք խրախոյս յաղԹանակի բարձեալ՝ քրքիջ ծաղրու զՀետ փախստեցին արձակէին։ Եւ մի ի Մռնատից ասէ ցՌինոցոյ. « Տեսա՞ր ինչպէս գիտեենք աղէկ մարդը պաշպանել. մեզմէ մեկ հոգի աւելի կա՞ժէ, քան Թէ հարիւր ատ անպիտան մարգիկներէն »։ Պատասխանի եւ Ռինոցոյ. « Իրաւցընէ որ կեանքս ձեզի պարտական եմ. բոլոր սրտանց շնորհակալ կըլլամ ձեզի »։

Մոնաան ասէ. « Ինչ բանի համար չնորհա-
կալ պիտոր ըլլաս, դուն արժանի էիր. կը տես-
նուի որ դուն կարիճ տղայ մըն ես. աղէկ կը նես
կօծես սա անպիտաններըը, օձէ, լըմընցուր սը-
տունք, բանի մը չեն նգար մեռնելէն առաջ: Մենք
իրենց համար այսչափ աշխատանք քաշելէն
ետքը, կանիծեն զմեզ, ու մոքերնին գրեր են
որ ժանտախտը անցնելուն պէս՝ ամենքս ալ
կախել տան. բայց իրենք առաջ կը լըմընան,
ետքը ժանտախտը կանցնի. Մոնաաները մինակ
պիտոր ուան յաղթանակ երգելու, ու Մելանը
վայելելու »: Եւ միւսն գոչելով « Կեցցէ ժանտ-
ախտ », եդ զսրուաքն 'ի բերան, կալաւ զայն
'ի վեր երկոքումբք ձեռօք 'ի ցնցել սայլէն, և
հարը ցյագ. ապա մատոյց զայն պատանուին՝
ասելով. « Դուն ալ խմէ մեր կենացը ». իսկ նա
ասէ. « Ամենուդ ալ երկան կեանք, բայց հի-
մակուհիմայ ծարաւած չեմ »:

Յաւելու Մոնաան. « Կարծեմ չատ վախցար.
բայց դուն աղէկ տղայ մը կերեւնաս, ատ գէմ
քով օձող չըլլար. օձելու համար ուրիշ դէմք
պէտք է »:

Եւ միւսն ասէ. « Ամեն մարդ կրցածը կընէ »:

Եւ մի յայնցանէ, որ հեռի առ սայլէն գա-
յին, ասէ. « Սա գինիին ամանը ինծի տուր՝ որ
քիչ մը ես ալ խմեմ իր սերոյը կենացը՝ որ սա
աղտոր ընկերութեանը հետ կուգայ, հոն հոն,
կարծեմ սա գեղեցիկ կառքին մէջը ». և 'ի
ժանտ ժպիտ ցուցանէը զսայլն յառաջը սայ-
լէն, յորում էր Ռէնցոյ. և տպա լուրջ դիմօք,
այլ առաւել խեթի աչօք, 'ի ձև մեծարանաց,

ասէ. « Ներէ տէր իմ, որ խեղճուկ Մոնատ մը
քու գինեասունէդ ելած գինին համտես ընէ:
Ըրած կեանքերնիս աղէկ կը տեսնաս. մենք ա-
նոնք ենք՝ որ զհրամանքդ կատարը գրնինք, գեղ
տանելու համար: Հրամանքդ պէս պարոններ-
ուն շուտ մը գլուխը կը զարնէ գինին, խեղճ
Մոնաաներուն սատմանքը ամուր է »:

Ձարձատէին ընկերքն ծաղուս. նա առեալ
զսրուաքն, դարձաւ 'ի Ռէնցոյ, և հայեցեալ 'ի
նա՝ ասէ. « Պէտք է որ շատ պզտիկ սատանա-
ներէն ըլլայ դաշնակիցդ, որ չէր կրնար քեզի
օգնել՝ թէ որ մենք զքեզ չխալըսէինք »: Եւ
'ի քաքթել նոցա անգրէն, մատոյց զսրուաքն 'ի
շրթունս. « Ի՛ հ, մեզի ալ թող », գոչեցին բո-
լորեքեան 'ի սայլէն՝ որ գնայր առաջի: Իսկ նո-
ցա արբեալ ցյագ, եւս նոցա զսրուաքն երկո-
քումբք ձեռօք. և նոքա ձեռաց 'ի ձեռս ածին
զայն մինչև ցվերջինն՝ որ քամեաց զայն. և կա-
լեալ զսրուաքն և պատուակեալ, հար խորտա-
կեաց 'ի սալարկի՝ գոչելով. « Կեցցէ ժանտ-
ախտ »: Եւ սկսաւ զերգ մի իւրեանց խափա-
րաձայն. զչետ կցեցին այլք առ հասարակ սոս-
կալի պարուն երգակիցք: Նուաղն այն գժո-
խայնն, խառն ընդ ղօղանջ զանգակացն և ընդ
ձռինչ անուոց սայլից, և գընդիւն ամբակաց,
հնչեալ ընդ լուռ և ընդ անմարդի փողոցս,
ճմլելին զսիրտս՝ որոց դեռևս ճնացեալ էին անդ
բնակիչք սակաւք:

Այլ ո՞ր այն ինչ է՝ որ ոչ երբեմն 'ի դէպ ապ-
տահէ, ո՞ր այն ինչ՝ որ ոչ երբեմն ախորժ խոկ
ածէ. վտանգն՝ որ վայրիկ մի յառաջ գիւրըմ-

բեր արարեալ էր Ինճոյին զուգեկցութիւն Մեռելոյն այնոյիկ և կենդանեալ, ախորժելի դոգլես առնէր նմա արդ զերաժշտութիւնն զայն՝ որ ազատէր զնա ի դժոխալուր խօսից նոցա։ Զի և ևս զերծ ի տագնապէ, ի յոյզ սըրտի գոհանայր՝ որպէս կարելն զաստուածաճանաչ տեսչութենէ, զի ելանէր ի վանդակէն՝ առանց կրելոյ ինչ կամ առնելոյ ուժեք չար. և հայցէր ի Տեառնէ օգնութիւն վասն ազատելոյ ի ձեռաց ազատչաց իւրոց։ Պատրաստ կայր, հայէր ի նոսա, հայէր ընդ ուղին, և խնդրէր պարապ՝ սահել լջանել ի սայլէ անտի, առանց ինչ տալոյ անցաւորաց կասկածանս։

Հասին յանկիւն մի, որ Թուէր նմա ծանօթ. և ուշիւ զննեալ, ծանեաւ աներկեայ՝ զի էր յընթացս ճանապարհին, ընդ որ յառաջ քան զնամիսս քան եկեալ էր խաղաղութեամբ, և ապա շտապաւ գարձ արարեալ ընդ այն։ Յուշ եղև նմա անդէն՝ զի ընդ այն էր դեպ ուղիդ՝ ի զգուշարան անդր գնալ, և համարեցաւ ի խըզնամոց Տեառն բարեդուշակ՝ զի գտանէր յընթացս Արևելեան գրան յուղիղ ճանապարհի անջան, և առանց ուժեք հարցանելոյ։ Յայնմ վայրի գայր ընդ առաջ սայլից մի՝ ի պատուական՝ գոչելով առ Մոնատս զկայ առնուլ, առ ինչ՝ ոչ ունիմ ասել։ Եկաց կարաւանն, և վոխեցաւ երգն ի վէճ. մի՝ ի Մոնատեան ոստեաւ յերկիր, և Ինճոյ ասէ ցմիւսն. « Շնորհակալ եմ ձեր ըրած բարեբարութեանը, Աստուած վարձատրէ զձեզ»։ և ինքն ևս էջ ի միւս կողմանէ։ Եւ Մոնատն ասէ. « Գնա բանըդ խեղճ

օձոզ. բայց դուն չես երեւար ան մարդը՝ որ կը բենայ Մելանին մէջ բնակիչ չէ Թողուր»։ Ըստ յաջողելոյ բախտի՝ էր ոք անդ որ լսէր։

Կարաւանն զկայ առեալ էր ի ձախակողմն ճանապարհին. Ինճոյ ընդ աջակողմն փութացաւ, քերեալ առ որմով դիմեաց ի կամուրջ անդր, էանց ընդ այն. և կալաւ ուղի ընդ առուարձանեայս, ծանեաւ զվանս վերարուոցաց, և ի մօտոյ գրանն եաես զանկիւն զգուշարանին. եմուտ ընդ դուռն չերտափակին, և բացաւ առաջի նորա յաղէտս անդ՝ որ արտաքոյ չըջապատին, ճաշակ իմն և ցոյց մեծի նըրանչան և անպատում նեղըքին տեսարանին։

Երկուստեք ամբոխ մեծ ախտաժետաց, ի խումբս խումբս գնային ի զգուշարան անդր. կէսք բազմէին կամ անկանէին յերեսս փոսոյն՝ որ առ ճանապարհաւն, պակասեալ ի զբուածենէ՝ առ ի գնալ պատապարել ի նեղքս, կամ առ յուսահատութեան՝ ոչ ևս կարելոյ գնալ յառաջ։ Այլք եղկելիք այսը անդր խոտորեալ, յապուշ հարեալ, և ոչ սակաւք յանձնէ իսկ եղեալ, ոմն առ ըերման զջնորս մտացն պատմէր այլոցմ հիքի հարելոյ յախտէն, այլ ոք մըղեգնէր, այլ ոք զուարթագէմ չուրջ հայէր՝ որպէս թէ կալուած բերկրալի տեսարանաւ. և տխրագին խնդութեանն նշանակ էր երգել անլռելի։ Եւ ձայն երգոյն թէպէտ և թուէր անլուր ի խառն, սակայն քան զայլ ամենայն ձայնս առաւել լինէր լսելի. երգ զըւարթ և խառն ընդ կատակ, հանդոյն կոչեցեալոցն Դոքրնի գեղչիութիւն։ Եւ եթէ ոք զհետ ձայ-

նին երթայր խնդրել զերգեցկին գոհ և զուարթ յայնպիսում տեղւոջ և ի ժամանակի, գտա- նէր զոք յեղկելեաց նստեալ խաղաղ առ փո- սով, որ դէմք ընդ օդս բերանալիր նուագէր:

Այն ինչ պատանւոյն սուղ ինչ յառաջ ընդ հարաւային կողմն չինուածոյն երթեալ, լուաւ ի բազմութեան անդ աղաղակ անսովոր, և բարբառ ի հեռուստ՝ որ ասէր. «Զգուշացիր, բռնէ սա ձին»: Յոտն ի մատն յարեաւ, և ե- տես ձի մի վառ՝ մորակեալ ի վտտագոյն հե- ծելոց, որ էր նա մի ի ցնորելոց. որոյ գտեալ զգրաստն արձակ առ միով ի սայլից, և ի նուա նոքին աչառնակեալ, կափահարելով զպարա- նոց նորա և աքացելով զկուշտ, և Մնասից զհետ նորա գոչելով, վարէր մղեգին, ծածկեալ յամպ փոշւոյն՝ որ ծաւալէր ցհեռաս- ատն: Ի տեսիլ աղեխիցս այսոցիկ պարտասեալ պատանին, եհաս ի գուռն՝ ուր խռնեալ էր բազմութիւն, թերևս առաւել քան զամենե- սեան՝ որ ի սփիւռս հրապարակին էին. և ե- մուտ ի գաւիթն կամարակապ, եկաց հանդէպ գրանն առ վայր մի անշարժ:

ԳԼՈՒԽ ԼԵ.

Որոց զդիպս զայս յայն արկանիցեն, մարթ է պատկերել ի մտի զբնաւպատ զգուշարանին, լի վեշտասան հազար ախտաժէտօք, և զհրա- պարակն ի միջի՝ ծածկեալ առ հասարակ, ու- րեք ի հիւղից և ի տաղաւարաց, ուրեք ի սայլից, և ամենայն ուրեք ի մարդկանէ, և զերկայնաձիգ գաւիթն կամարակապս յաջմէ և յահեկէ խռնեալ յանկեղոց խառն ի խուռն ընդ գիակունս ի յարգեալ անկողինս և ի հոյս խոտոյ. և ի վերայ այնքանեաց երբ ան- համար խշտեաց՝ որպէս զծուփս ալեաց զերթ- ևեկ մարդկան, կացելոց և չընչելոց, խռնար- հելոց և կանգնելոց, այն ինչ ապաքինելոց, մո- ւելոց և ցնորելոց, և ապաստաւորաց: Յայս տե- սարան յանկարծակի գրաւեցան աչք պատան- ւոյն Ութնոցի, և եկաց ապշեալ: Զեն մեզ կամք

մանրապատում առնել զայն ասասնօր, և ոչ ընթերցողաց ցանկալի. բայց միայն զհետ երթալ պատանւոյն, և ուր զկայ առնուցու՝ կալ ընդ նմա ՚ի զինին կարևորաց յիշատակի, որ ինչ արար նա, և որ ինչ դիպաւ նմա անդ:

Ի գրանէն, ուր կացեալն էր պատանին, մինչև ՚ի մատուռն որ ՚ի միջի, և անտի մինչև ՚ի դուռնն հանդիպակայ, խափանեալ էր ճանապարհն ՚ի տաղաւարաց և յայլոց անչարժ խոչից: Եաես, և ահա չարժէին կառք, կրկին ըստ պատասխոյք կահ և կարասի, և հոդդէին ուահ. Եաես վեզարաւորս և աշխարհականս վերակացուս ՚ի գործ, որ ՚ի բաց վարէին զանգործս: Եւ երկուցեալ՝ թէ գուցէ և զինքն վարեսցեն ՚ի գուբս, եմուտ յանջրպետս հիւղիցն՝ յայլոց կողմն կոյս ըստ դիպաց խոտորեալ, և գնայր յառաջ հիւղ ՚ի հիւղէ՝ ուր կարէրն մատչէր, դիտէր զանկողինս՝ որ կային ՚ի բացել, զիներ զդէմս տժգունեալս ՚ի տառապանաց, կծկեալս ՚ի գառնակակիծ ցաւոց, մահացեալս անչարժ, դողալով՝ թէ գուցէ պատահէր որում խնթայրն: Այլ գնացեալ ոչ սակաւ՝ սակայ զվըշտալի հետազոտութիւնն առնելով, և ոչ տեսեալ զոք ՚ի կանանց, ՚ի միտ էառ զի ուրոյն էր նոցա տեղի. խնդրէր և ոչ գտանէր զայն, և ոչ գուշակել կարէր: Հանդիպէր երբեմն երբեմն պաշտօնէից՝ զանազանելոց գիմօք և գնացիւք և ձեւովք, ըստ այլ և այլ և հակառակ յօժարութեան սրտի՝ որ առնէր նոցա կալ յայնպիսում պաշտամանի, ՚ի կէս շինուին գթութեան ՚ի ապառ, յայլս վառեալ գթութիւն գերբնական:

Այլ ոչ զսոսա և ոչ զնոսա իչխէր հարցանել՝ թէ գուցէ խափանեացի, եդեալ ՚ի մոլ գնալ յառաջ՝ մինչև պատահիցէ կանանց. և դիտէր միտ ՚ի գնալն, այլ ուրեք ուրեք սոխպէր դառձուցանել զաչն տխուրս՝ չըտուցեալ ՚ի վերոց և յաղեխից. այլ ո՞ր մարթէր նմա դառձուցանել, բայց դարձեալ ՚ի վերս և յաղէտս:

Օդք խակ և երկինք յաւելուին, եթէ մարթէր յաւելուլ, զարհաւրս տեսարանին: Մէգ թանձրացեալ տակաւ, և վերացեալ որպէս ամպ գիղադէզ, մթագնէր հանգոյն մըրկայղոյ գիշերոյ. այլ զմիջաւուրըն ընդ խոր և ընդ խոնարհեալ երկին՝ որպէս ընդ խիտ քօղով երեւէր գոնէ արեգական գոնատեալ, արձակելով զնորս նշոյլ նուազ և աղօտ: Յանդեզի չըշունչ ամբոխին երբեմն երբեմն լսելի լինէր որպէս ձայն որոտման խորին, ընդհատ և տարտամ, որպէս զի ունկն ուրուք եդեալ՝ ոչ լմնայր յորմէ կուսէ գայր ձայնն. Թուէր ընթանալ կառաց ՚ի հեռուստ, և յանկարծ զկայ առնուլ: Ոչ երևէր շուրջանակի ՚ի դաշտս չարժիւն ոստոյ, և ոչ թռչուն ուրեք դադարեալ, կամ թռուցեալ. Ծիծառն միայն զտանեօք չրջապատին յանկարծ երևէր, և սահեալ զերկրաւ՝ վերանայր անդրէն, փախչէր սրաթռիչ ՚ի չշրջենէ անտի երկուցեալ: Յայնպիսեաց անտի էր ժամանակն այն, յորս ոչ իչխէ ոք յուզեկացս լուծանել զլուծիւն. գնայ որսորդ մոայլ զաչս ընդ երկիր բևեռեալ և գեղջկուհի ՚ի ձըէլ անդ զերկիր՝ ընդհատ զերգս յանզգաստից, և յորս համագոյք անչարժ արտաքոյ՝ յու-

զին 'ի նեղբուսա, և Թուխն ընկճել զսիրա
մարդիկեղէն՝ բեռն անդիտելի յաւելեալ 'ի գործ
և յանգործութիւն և 'ի կեանս խոկ : Այլ 'ի
վայրն անդ, որ սահմանեալ էր 'ի կրել և 'ի մե-
ռանել, էին որ 'ի վէգ եկեալ ընդ ախտին 'ի
նոր նին բռնութենէ 'ի պարտութիւն մատնէին,
և բազում 'ի նոցանէ արագ արագ զայրացեալ
ախտ, յեռին ձկդն նոցա առաւել էր տաժա-
նաւոր. և 'ի զայրանալոյ ցաւոց նոցա՝ առաւել
հեղձամղձուկ էին հեծութիւնք . որպէս զի 'ի
սեղոջ անդ աղեւոյց չև էր արդեօք լեալ ժա-
մանակ այնպիսի :

Եւ 'ի չքվել անդ պատանւոյն ընդ երկար,
եռես վեղարաւոր մի՝ որ կերպարանօքն և գնա-
ցիւք Թուխը ծանօթ իւր, և էր ինքն Հայրն
Քրիստափոր. որոյ մեկնեալ 'ի սանկ ուստէք
սնակ 'ի ձեռին երթայր 'ի հիւղ մի. և նստեալ
առ դրան, և շուրջ հայեցեալ, խաչակնքեաց
զինքն, պատրաստելով 'ի ճաշակ :

Զպատմութիւն նորա 'ի ժամ՝ յորում Թու-
զաք զնա մինչև 'ի գեպս հայս, հատից կալաճա-
ոան : Ոչ մեկնեցաւ նա 'ի Ռիմինեայ, և ոչ խոր-
հէր մեկնել. բայց 'ի ճարակել ժանտախտին 'ի
Միլան, ժամ պատեհ համարեցաւ ըղձիցն փո-
խանակելոյ զկեանս իւր 'ի վերայ այլոց : Խըն-
դրեաց Թախանձանօք գնալ անդր 'ի սպասաւո-
րութիւն ախտաժետաց. կոմսն խորհրդական
վախճանեալ էր, և հիւանդապահաց հայնժամ
առաւել էին պէտք քան քաղաքապետաց, և
դիւրաւ խնդիրն նորա եղև լսելի : Եկն նա 'ի
Միլան, եմուտ 'ի զդուշարան անդր, և կայր
անդ յերից ամսոց հետէ :

Բայց Ռիմինցոյն միսիթարութիւն ընդ գիւտ
բարւոյ Հօրն չէզև կատարեալ. զի 'ի ստուգելն
և 'ի ճանաչել՝ զի նա ինքն էր Հայրն Քրիստա-
փոր , եռես զնա կերպարանափոխ եղեալ 'ի
սպառ : Կորացեալ և ծիւրեալ, և դէմք նորա
մահաւոր, 'ի սպառուած կենացն երևէր հա-
սեալ. մարմին նորա կիճուցեալ և անկեալ՝ զո-
րութիւն ևեթ հոգւոյն ունէր զոյն 'ի վեր :
Եռես և նա զՌիմինցոյ, որ գայր առ ինքն, և ոչ
իշխեցով ձայնել 'ի հեռուստա, խնդրէր նշանաց
առ նմա ծանօթս զանձնէ : Եւ երբև մերձեցաւ
պատուհանին ուստի առանց դուշերոյ լինէր լսելի,
ասէ. « Ո՛վ, Հայր » :

Իսկ նորա յերկիւր զսինակն եդեալ, և յոտն
կացեալ, ասէ. « Դուն հոս ! » : —

« Ի՞նչպէս ես, Հայր իմ» : —

« Ա՛ա խեղճերէն աղէկ », ասէ կրօնաւորն.
այլ էր ձայն նորա նուաղեալ, հնչումն խորին
և այլայլեալ. բայց միայն աչք նորա նոյն որպէս
յառաջն, և կենդանութիւն ինն և բոց եղբայրս
սիրութեան ծայրացելոյ, և բերկրանաց սրտի՝
մերձ յարարիչ իւր հասելոյ, վառեալ 'ի նոսա՝
քան ուրութեան մարմնոյ չինջուցեալ զնոսա :

Եւ յաւել. « Իսկ դուն ինչպէս ես. ինչո՞ւ
եկար հոս, ժանտախտին վտանգին մէջ զքեզ
ձգեցիր » : —

« Մեյմը բռնուեցայ , Հայր իմ, ու փառք
Աստուծոյ, խալըսեցայ : Ղուչիան... ո՛չ, Ղու-
չիան փիտքեալու եկեր եմ» : —

« Ղուչիան հո՞ս է » : —

« Հոս է, ու կրնամ յուսալ որ դեռ ողջ է » : —

« Հարսըդ եղաւ վերջապէս » : —

« Ո՛հ, Հայր իմ, դեռ չէ. չէս գիտեր որ ինչ չէր անցան գլխուդէս » : —

« Զէ, սիրելի որդիս. քանի որ Աստուած ուղեց ձեզմէ հեռանալս, բան մը չիմացայ. հիմայ որ գիս ձեզի դարձուց, իրաւցընէ կուզեմ գիտնալ. բայց... հապա աքսորուելուդ հրամանը » : —

« Ուրեմն գիտես անիկայ. հապա էութը ինչ էր ալ որ ըրին ինծի, անունք ալ գիտես » : —

« Բայց դուն ալ ինչէր ըրեր ես » : —

« Մանիկ ըրէ. թէ որ ան օրը Միլան խելքով վարուեցայ ըսելու ըլլար, սուտ կըլլայ. բայց մէկուն չարիք մը չըրի » : —

« Աստիկայ կը հաւատամ, առաջ ալ կը հաւատայի » : —

« Ուրեմն հիմայ ամեն բան պատմեմ » : —

« Բայց քիչ մը կեցիր », ասաց Ծերունին. և ելաւ սուղ ինչ՝ի բացելու, ձայնեց. « Հայր Վիկտոր » : Յետ սակաւ միոյ եկին վեղարաւորոն պատանի, և ասէ ցնա Ծերունին. « Շնորհք ըրէ Հայր Վիկտոր, աս խեղճերն ալ հոգա ինչուան որ գառնամ. մեկը գիս ուզելու որ ըլլայ, կանչէ մեկէն, մանաւանդ որն որ գիտես, պզտի նշան մըն ալ տալու որ ըլլայ ղրկասուածեան, մեկէն իմացուր ինծի » : —

« Մի՛ տարակուսիր », ասաց Հայրն Վիկտոր. և Ծերունին դարձեալ՝ի Ռինցոյ՝ ասէ. « Եկուր ներս », բայց վայրկ մի ղկայ առեալ, յաւէլ. « Շատ նիհարցած կերևնաս ինծի, կարծեմ անօթի ալ ես » : —

Ռինցոյ ասէ. « Իրաւ անօթի եմ. աղէկ միաքս բերիր, ծոմ եմ » : —

« Կեցիր », ասէ Ծերունին. և առեալ պնակ մի, մատեաւ ընուլ՝ի սանկէն, դարձաւ ետ նմա զայն հանգերձ դրդալաւ, և նստոյց զնա՝ի վերայ կապերան միոյ՝ որ էր իւր փոխանակ մահճի, և մատուցեալ՝ի կարաս գինւոյն՝ որ կայր առընթեր, ելից անակ բաժակ մի, եդ՝ի վերայ փոքրիկ սեղանոյ առաջի հիւրոյն, առեալ և զիւրն պնակ, նստաւ առ նմին :

Յայնժամ ասէ Ռինցոյ. « Ո՛հ Հայր իմ, ատ բաներըը ընել կիյնայ Հրամանքիդ. սրտանց չընորհակալ եմ: Բայց Հրամանքիդ սիրտը միշտ նոյն է » : —

« Ինծի մ՛ըլլար ընորհակալ. աղքատներուն է ատ կերակուրը, բայց դուն ալ հիմայ աղքատ ես: Հիմայ պատմէ չեզիցածներս. ան խեղճ աղջիկը հոգը ինչ եղաւ. բայց կարճ ըրէ, ատենը քիչ է, գործ շատ կայ ընելու՝ ինչպէս որ կը տեսնաս » :

Եւ սկսաւ Ռինցոյ ձաշ ընդ միջ պատմել զանցս օրիորդին, զպատսպարել նորա՝ի կուսատանին՝ի Մոնցա, և որպէս յափշտակեցաւ անտի... բայց՝ի լուր աղետից այնոցիկ և վտանգաց, քանզի ինքն յղեալ էր անդր ըզհէք և զանմեղ աղջկին, կայր շնչատագ բարեգութ Ծերունին, մինչև ապա ոգի էառ՝ի լսել զպատահարիւն նորա աքանչելապէս, և զդարձ, և որպէս կայր առ Պրաքսեւեայ՝ յանձնեալ՝ի մօրէն :

Եւ յառաջ ածեալ պատանւոյն զբանս իւր

ասէ. « Հիմա պատմեմ հրամանքիդ իմ դլուխս եկածը »։ Եւ պատմեաց կարճ՝ի կարճոյ վնասուածքն՝ որ՝ի Մելան, զխախտած խըր անտի, և գնեաւ կալ միշտ՝ի տանէ, և ոչ պրպէս արդ՝ի վեր՝ի վայր յուզել երթայ, յանձն առեալ զվտանգ՝ եկեալ էր անդր, և ոչ գտեալ զԱթենէս, և լուեալ՝ի Մելան՝ զի Լուչիա կայր՝ի զգուշարանի, և կնքեցաւ. « Հիմայ հոս եկեր եմ զինքը գտնալու, տեսնելու զինքը՝ Թէ որ ողջ է. խակ Թէ որ... Թէ որ գեռ կուզէ ցնս... ինչու որ... կրնայ ալ ըլլալ »...

Ծերունին ասէ. « Բայց գիտեմ որ կողմը գրեր են զինքը հոս բերած առենին »։ —

« Բան մը չեմ գիտեր, բայց միայն հոս ըլլալը, Թէ որ հոս է. Աստուած տայ »։ —

« Խնդճ տղայ. բայց ինչուան հիմայ ոՒր փընտռեցիր զինքը »։ —

« Պըտըտեցայ, քալեցի, միայն էրիկ մարդիկ տեսայ. մոտծեցի որ կնիկները զատ տեղ պահտը ունենան, բայց չկրցայ տեղերնին գըտնալ. հրամանքդ ցուցուր ինծի »։ —

« ՁՒս գիտեր, որդի, որ արդեշած է էրիկ մարդկանց անունց տեղը մտնալ, Թէ որ պաշտօն մը չունին հոն »։ —

« Ուրեմն ինչ պիտոր ըլլայ իմ բանս »։ —

« Կանոնը աղէկ գրուած է, սիրելի որդեակ. որչափ ալ խեղճութեան չատութիւնը ու ծանրութիւնը չնթողուր՝ որ կանոնը ձիշդ պահուի, բայց երաւմնք է որ իր պատիւը գիտցող մարդ մը կանոնին դէմ ընէ »։ —

« Բայց, Հայր իմ, Լուչիան իմ հարսս պիտոր

ըլլար, հրամանքդ գիտես ինչ կերպով իրարմէ բաժնուեցինս. քանի ամիս է որ աս վշտիս մէջն եմ, համբերեցի, ինչուան հոս ալ եկայ՝ այսչափ իրարմէ գէշ վտանգներու մէջ դնելով զիս, ու հիմայ »...

Ծերունին ասէ, պատասխանելով մտաց նորա քան բանից. « Ինու գիտաւորութիւնդ բարի է. Աստուած տար որ՝ ամեն հոն մնացողները ազատութիւն ունեցողները անանկ վարուէին, ինչպէս որ քու վրադ կրնամ վստահիլ։ Աստուած՝ որ կօրհնէ ատ քու հաստատուն սէրդ ու հաւատարմութիւնդ՝ փնտռելու որն որ ինքը քեզի համար ատհմաներ է. Աստուած՝ որ որչափ ալ խիստ է, բայց աւելի նեղող է քան զմարդիկ, կարգի կանոնի դէմ չխնայեր ատ կերպով զինքը փնտռելդ։ Բայց մինչ որ՝ հոն բանելու կերպիդ համար երկուքնիս ալ պատասխան պիտոր տանք. մարդկանց՝ յուսամ որ չէ, բայց Աստուծոյ՝ անտարակոյս. հետս եկուր »։ Եւ յարեաւ. յարեաւ և պատանին, որ ոչ վերջացեալ՝ի հնազանդելոյ բանից նորա, հաստատեցաւ՝ի խորհուրդ լուր՝ զոր յառաջագոյն խորհեալ էր, չասել ինչ նմա զուսանէն Լուչիայի. զի ասեր՝ի մոլ. « Լսելու որ ըլլայ աս բանը, անտարակոյս ուրիշ գժուարութիւններ ալ կը հանէ. կամ պիտոր գանամ աղջիկը, ուսան եաքն ալ կրնամ խօսիլ ատ բանին վրայ. և կամ... ան ատենն ալ պարապ է մտածելը »։

Եւ ածեալ զնա Ծերունւոյն՝ի գուռն տաղաւարին՝ որ հայեր՝ի հիւսիս, ասէ. « Մոխիկ

ըրէ, մեր Հայր Փեղլիքսը՝ որ աս զգուշարանին վերակացուն է, այսօր քանի մը ըռընացածնե-ը ուրիշ տեղ պիտոր վոխագրէ. սա ժամը կը տեսնամ, որն որ մէջ տեղը »... և՝ ի վեր ա-ռեալ գնհՀոր և զգողդոջ բազուկ իւր, ցոյ-ցանէր՝ ի ձախակողմն ընդ պղտոր օդս զգըմ-բէթ մատրանն՝ որ տմբառնայր ղվրանօք եկեղ-եցւոյ, և յաւել. « Հիմայ հոն աս մատրանը չորս դին կերթան կը ժողովին, Թափօրով ան-կէ պիտոր ելլեն անցնին ան դռնէն, ուսկից որ դուն մուտ պիտոր ըլլաս »: —

« Ուրեմն անոր համար էր որ ձամբայ կը բանային »: —

« Հապա, զանգակին ձայնն ալ լսած պիտոր ըլլաս »: —

« Հրամմեր էս, նշան մը ուրաւ »: —

« Այնիկայ երկրորդ նշանն էր. երրորդին ա-մէնքը հոն կըլլան, Հայր փեղլիքսը կարճ քարոզ մը կուտայ իրենց, ետքը անոնց հետ կը սկըսի երթալ: Դուն երրորդ նշանը լսածիդ պէս՝ հոն գնա, քանա որ եռանէն երթաս ձամբուն մէկ դիէն՝ ուսկից առանց մեկուս մը նեղուելուն տալու, աչքի ալ չիզաբնելով կրնաս տեսնել անցնողները. նայէ, դիտէ, անոնց մէջը կրնայ ըլլալ: Թէ որ Աստուած չուզեր որ անոնց մէջը ըլլայ », և դարձեալ տմբարձ զձեռն, ցուցանել զկողմն զգուշարանին՝ որ կայր՝ ի հանդէպ, « ան կողմը ուր անոր առջևի երկիրն է կանանց տե-ղը: Հոն կը տեսնաս ցիցերով չինած բաժան-մունք մը. տեղ տեղ աբուռած, տեղ տեղ բաց, անանկ որ դիւրաւ նէրս կրնաս մտնել. նէրսն

ալ զգուշացիր որ ուրիշի կասկած տալու բան մը չընես. քեզի բան մը ըսող չըլլար: Բայց յան-կարծ ըսող մըն ալ որ ըլլայ, պատասխան տուր որ Հայր Փրնատափորը զքեզ կը ճանչնայ, անի-կայ քեզի համար կը խօսի: Հոն փնտռուէ, հա-ւատքով ու Աստուծոյ կամացը համակերպու-թեամբ. գիտնաս որ պղտի բան չէ հոս գալ-զինքը փնտռուելու: Դուն զինքը ողջ կուզես գտնալ. բայց գիտեմ որ ես քանի անգամ աս տեղի պարպուելը տեսայ, քանինեմուն թա-ղուելու տարուելը տեսայ, որչափ քիչ ասկէց ելլողները... պատրաստ սրտով գնա, Աստուծոյ նուէրը մը ընդուր »: —

Ի վերայ էած պատանին գոլումելի աչք և այլայլեալ դիմաք. « Կիմանամ, Հայր իմ, կ'ի-մանամ ըսածդ. երթամ նայիմ, ասդին անդին փնտռտեմ, բոլոր զգուշարանին մէջ ծայրէ՛ի ծայր. ու թէ որ չգտանեմ »...

« Թէ որ չգտանես », ասէ ծերունին լուրջ դիմաք և ազդարար աչք, մնալով ելից բանին:

Անդ՝ ի կասկածանաց անտի բորբոքեալ վերատին զայրոյթ պատանւոյն, մթագնեցան աչք նորա, և յաւել. « Ու թէ որ զինքը չգտնամ, մկակը կը գտնամ, կամ քաղքին մէջ, կամ իր պալատը, կամ աշխըրքիս ծայրը, կամ չար սատանային քովը. կը գտնամ անզգամը՝ որ զմեզ երբամէ բաժնեց, կը գտնամ անօրէ-նը, որ եթէ ինքը եղած չըլլար, Լուչիան քսան ամիս առաջ իմն կըլլար. թէ որ մեռնէինք պի-տոր ալ, մկակեզ կը մեռնէինք: Կը գտնամ ան-զգամը, թէ որ ողջ է, կը գտնամ»...

Յայնժամ Ծերունեւոյն բուռն հարեալ զբազկէ նորա, և պշուցեալ ՚ի նա խոժոռ, սաստեաց. « Թեզքդ զբախիդ Ժողվէ Ուինոյ »:

Այլ նա կուրացեալ ՚ի սպառ ՚ի կատաղութենէ, յաւել. « Թէ որ գանամ անօրէնը, թէ որ ժանտախտը չէ տուած իր պատիժը... ալ հիմայ առէնը չէ՝ որ անառակ մը իր սրիկաները չորս դէն առած, ուրիշները յուսահատութեան մէջ ձգէ, ու վրանին ծիծաղի. առէնը եւ կած է դիմացէ դիմաց ելլելու. արդարութիւնը ես պիտոր ընեմ, ես պիտոր տամ անոր պատիժը »: —

« Ողորմելի՛ » գոչեաց Ծերունին ձայնիւ լիու՝ որ բերդը անդրէն զառաջին զիւր մեծասաստ զօրութիւն: « Ողորմելի », գոչեաց անգրէն՝ ՚ի վեր առեալ զգլուխ իւր, զնոնաթրհեանն ՚ի կուրծս. դէմք իւր առին վերստին զնախկին իւրեանց կենդանութիւն, և բոց յաչս իւր արկուս լոյս փայլատակեալ, հայեցաւ ՚ի նա, և գոչեաց գարձեալ. « Ակէդ բաց, ողորմելի ». և մինչդեռ միով ձեռամբ պինդ կալեալ զբազուկն նորա շարժէր, շուրջ ածեալ զմիւսն՝ ցուցանել որպէս կարելն զբազմաղէտ տեսարանն շուրջանակի, ասէր. « Ակէդ բաց, վեր նայէ, տես, ո՛վ է որ կը գաաէ, ու ինքը չիդատուիր, ո՛վ է որ կը պատժէ ու կը նեղէ. իսկ գուն Ողէ եղած որդ մը, գո՞ն արդարութիւն պիտոր ընես ու պատժես. արդարութիւն ինչ ըսել է՝ դիտե՞ս. գնա կորիր ողորմելի: Կը յուսայի որ... այո՝ յոյս ունէի որ մեռնելէս առաջ Աստուած զիս մխիթարէ, խեղճ Լուչեայիս ողջ ըլլալը լսեմ

Թերեւս տեսնամ ալ զինքը, ու խօսք առնեմ բերնէն՝ որ գերեզմանիս վրայ աղօթք ընէ. կորիր գնա, անպիտան. յոյսս պարապ հանեցիր. Աստուած զքեզ պատժելու համար՝ Թերեւս Թողած չըլլար զինքը երկրիս վրայ. գուն ալ զքեզ չես խլեր արժանի սեպելու որ Աստուած զքեզ մխիթարէ: Լուչիան արժանի է մխիթարութեան, Լուչիան անանկ հոգիներէն մէկն է, որոնց Աստուած յատկութենական մխիթարութիւնը պատրաստեր է. գնա, ալ տեսնիմ քեզի համար կորսընցընելու »: Զայս ասացեալ՝ եթող ՚ի բաց զբազուկ նորա, և ուղղեաց զընացս իւր ՚ի մի ՚ի հիւղից անտի ախտաժետաց:

Զհետ ընթացաւ պատանին պաղատելով. « Ասանկ կը վերնտես զիս Հայր իմ »:

Յայնժամ մեղմեալ Ծերունեայն փոքր մի ըզասաս՝ ասէ. « Կուզես որ առենս քեզի հետ կորսընցընեմ, զիկելով աս խեղճերը՝ որոնք կը սպասեն որ Աստուծոյ ողորմութեանը վրայ խօսիմ իրենց, ու քու վրէժխնդրութեանդ կատաղի խօսքերը լսեմ: Մանկ ըրէ. քանի որ մխիթարանք ու օգնութիւն կը խնդրեիր ինծմէ, եղբայրսիրութիւնը մեզի Թողեր էի. բայց հիմայ որ վրէժխնդրութեան եանէ ես, ինչ կուզես ինծմէ, մեզի գնա: Գանիներ տեսայ հոս՝ որ մեռնելու առենին իրենց վնաս առողներուն Թողութիւն կուտային, վնասողներն ալ կը հառաչէին հիւրնամնուն համար Թողութիւն խնդրել անոնցմէ՝ որոնց վնասեր էին. լայն ամենուն հետ ալ. իսկ քեզի պէս ոխակալին հետ ինչ բան ունիմ»:

Գոչեաց պատանին. « Կը ներեմ, Թողութիւն կուտամ ամենուն. մեյմըն ալ չեմ լիշեր ըրածնին » :

Յայնժամ ասէ Ծերունին առաւել ևս զիջեալ. « Ինծոյ, աղէկ մտածէ, ուրիշ անգամ ներ ալ ասանկ ըսիր » : Եւ անսացեալ վայրկեմի, և ոչ ինչ ընկալեալ պատասխանի, խոնարհեցոյց յանկարծ զգլուխ իւր, և մեղմագոյն ևս ձայնիւ յաւել. « Գիտեմ ինչ ըս ես ըզգեստը հագեր եմ » : Եւ մինչդեռ 'ի վարանս կայր պատանին, յաւել Ծերունին. « Գիտես, աղէկ գիտես » : —

« Այո՛ գիտեմ » , ասէ պատանին :

« Ես ալ առեղծուածիւն ունեցայ. ես որ՝ զքեզ մտքով ու խօսքով միայն ըրած առեղծուածդ համար կը յանդիմանէի, ես սրտանց ու շատոնց օձնեցած առեղծուածիս գործով ալ ըրի, սպաննեցի առեղիս » : —

« Իրաւ է, բայց անիկայ բռնաւոր մըն էր, անանկներէն մէկն որ » ... —

Կարճեաց Ծերունին զբան նորա. և ասէ. « Մի ըսեր, մի ըսերատ խօսքը. առիկայ աղէկ պատճառ մը որ ըլլար զիս արդարացնելու, կարծէս որ երեսուն տարուան մէջ միտքս չէր գար : Ո՛հ, թէ որ կարենայի տալ սրտիդ այն զգացմունքը՝ որն որ ետքը ունեցայ ու դեռ ունիմ այն մարդուն վրայ, թէ որ կարենայիր կըսեմ... ես չեմ կրնար, բայց Աստուած կասրղ է, Աստուած տայ... Մանիկ ըրէ, Ինծոյ. Աստուած զքեզ աւելի կը սիրէ, քան թէ դուն զքեզ. թէ որ դուն կրցար մոռնալ վրէժդ առնելու, ինքը չկրնար. բայց ողորմութիւն ալ ունի, կարդալէ քու վրէժխնդրութիւնդ. քեզի շնորք մըն է ըրածը, որուն ես անարժան էի : Դուն գիտես, ու այնչափ անդամալ ըսիր՝ որ կրնայ արդիւնալ բռնաւորի մը ձեռքը. բայց գիտցիր որ ոխակալի մը ձեռքն ալ կրնայ արդիւնալ. կը կարծեմ որ աղքատ ըլլալուդ համար՝ անիրաւութիւն կրած ըլլալուդ համար՝ չկրցիր նար քեզի դէմ պաշտպանել ուրիշ մը, որն որ 'ի պահակեր իւր առեղծեր է. կը կարծեմ որ կը Թողութ քեզի ինչ որ կուզես անոր դէմ ընել. մի կարծեր : Բայց գիտեմ ինչ կրնաս դուն ընել. կրնաս առեղծուածիդ ընել, կրնաս քու մէկ առեղծութեան խորհրդովդ Աստուծոյ օրհնութիւնը քեզմէ հեռացընել. վասն զի ինչպէս ալ որ բանը լմընայ, թէ որ յաջողի ալ քու վրէժխնդրութիւնդ, քեզի պատիժ կըլլայ, քանի որ չես ներեր իրեն, ու անանկ ներելը՝ որ ալ պէտք չըլլայ ըսել կը ներեմ » :

Շարժեցաւ սիրտ պատանւոյն, և ակնկռեալ՝ ասէ. « Անանկ է, կիմանամ որ ինչուան հիմայ չէի ներած իրեն, կիմանամ որ խենթի խօսք էր ըսածս, քրիստոնէի խօսք չէր. ու հիմայ Աստուծոյ շնորքովը սրտանց կը ներեմ իրեն » : —

« Հապա թէ որ զինքը տեսնալու ըլլայիր » : —

« Կը խնդրէի Աստուծմէ՝ որ ինծի համբերութիւն տայ, ու անոր սիրտը շարժէ » : —

« Կը մոռնայիր ալ՝ որ Ֆրիստոս տէրն մեր ներել միայն չիսրամեց մեր թշնամեացը, այլ

նաև սիրել զիրենք. կը մոռնայիր որ ինքը ա-
նանկ սիրեց իր Թշնամիները՝ որ անոնց համար
կեանքն ալ տուաւ »։ —

« Այո՛ իր սուրբ ընութքովը »։ —

« Ապրիս, ուրեմն հետս եկուր։ Կուզիկիր
զինքը գտնալ, եկուր հետս որ տեսնաս, ե-
կուր տես մէկ է որ կատկիր, որուն չարիք
կը բաղձայիր, որուն կենացը տեր ըլլալ կու-
զիկիր »։

Եւ առեալ զձեռանէ նորա, և սկսիդ կալեալ
զայն որպէս պատանի ոք ուժով, ածէր զնա.
և նա առանց իշխելոյ հարցանել ինչ՝ գնայր ըզ-
հետ։ Ա՛ս սուղ ինչ քայլ՝ զկայ հառ ծերուհին
առ միով՛ի հիւղից, և հայեցեալ՛ի պատանին
գորովախառն ծանրութեամբ՝ եմոյծ զնա՛ի
ներքս։ Տեսին նախ մի՛ի հիւանդաց ընկողմա-
նեալ՛ի յարդի, ոչ առ՛ի մահ՝ այլ մանաւանդ
մերձ յապաքինումն. որոյ տեսեալ զՀայրն
Քրիստափոր՝ չարժէր զդլուխն՛ի ձև ժխտա-
կան. իսկ ինքն խոնարհեալ զգլուխ իւր՝ կայր
որատամ որպէս՛ի կամս Աստուծոյ ապաստան։
Յայնժամ Ուհնցոյ շուրջ ածեալ զաչս, եռես
ընդ այլս՝ հիւանդս երիս կամ չորս, և զմի՛ի
նոցանէ պատեալ՛ի պաստառակալ, և վերաբ-
կու աղնուական արկեալ զնովաս որպէս վեր-
մակ. և յառեալ՛ի նա, ծանեաւ զի էր Իո-
տարիկ։ Հայրն Քրիստափոր սկզբեալ և ևս զքա-
զուկ նորա ձեռամբն՝ որով ունէրն զնա, ձգեաց
մերձ՛ի մահճակս անդր. և միւսոյն ցուցանէր
նմա մանանիկ զհիւանդն հէք՝ որ անկեալ
հայր անշարժ, աչք նորա բաց՝ առանց տեսա-

նելոյ, ժժգոյն՛ի դէմս՝ պիսակաք՛ի նմա սեաւք,
Թուխ և ուռուցիկ չրթունք, իրան գոգցես
դիական՝ եթէ ոչ ձգտումն ինչ վկայէր կենդա-
նութեան նորա, կուրծք նորա ամբառնայր եր-
բեք երբեք՛ի հև տաժանաւոր, և աչ նորա
արտաքս՛ի վերարկուէն ձնիչէր զկուրծսն առ
արտիւ՝ կաստուտակեալ և՛ի ծայրս կորացելոյ
մատանցն սևացեալ։

Եւ ասէ Հայրն Քրիստափոր գաչն և ծանր
ձայնիւ.

« Կը տեսնամ, պատիճ կը սեպես ասիկայ թէ
ողորմութիւն. ինչ որ դուն կը մոռծես իր վը-
րայ՝ որ իրաւցընէ քեզի դէմ ըրաւ, Աստուած
ալ՝ որուն դուն դէմ ըրիր՝ նոյնը կը մոռծէ քու
վրադ. վասն տուր իրեն, որ օրհնէ զքեզ։ Զորս
օր է՝ որ աս ասանկ հոս կեցած է, ինչպէս որ
կը տեսնես. պատրաստ է Աստուած՝ գարձ տալ
լոյս իրեն, բայց թերևս կը սպասէ որ ինդրես
իրմէն, ու այն խեղճ ու անմեղ աղջիկն ալ իրեն
դրէ քեզի հետ. թերևս Աստուած այն առա-
նին կը պահէ իր շնորքը, երբոր ցաւելով ու ի-
րեն ապաւինելով խնդրէք իրմէն. թերևս աս
մարգուն փրկութիւնն ալ քուկդ ալ հիմայ
քեզմէն կը կախուի, իրեն Թողութիւն տալէդ,
իր վրայ գթալէդ, զինքը սիրելէդ »։

Լուեաց Ծերուհին, և ձեռնամած խոնարհեալ
կայր յաղօթս. զնոյն արար և պատանին. և
մինչդեռ աղօթէին, լուան զերկրորդ հնչիւն զան-
գակին. յարեան՛ի միասին և ելին արտաքս. ոչ
մին հարցանէր ինչ, և ոչ միւսն խօսէր. դէմք
ևեթ նոցա բարբառէին։ Ապա ասաց Հայրն

Քրիստափոր. « Գնա հիմայ, կամ ընդք մը ընդունելու Աստուածմէ, կամ նուէրք մը ընելու իրեն, ուրն որ ըլլայ՝ եկուր խմացուր ինծի »: Եւ մեկնեցան 'ի միմեանց առանց այլ ինչ բանի. մին դարձաւ ուստի եկեալն էր, և միւսն երթայր 'ի մատուռն անդր՝ որ չէր ինչ հեռի քան զհարիւր քայլ:

ԳԼՈՒԽ ԼԶ.

Կարէր երբեք պատանին Ռէնցոյ սուղ ինչ յառաջ զմտաւ ածել՝ զի 'ի սրտաբորբ պահուն 'ի խնդիր լինելոյ, 'ի սկսանել յոգնատարան յայնմ յեսին վայրկենի սահմանելոյ խնդրոյն, միաք իւր բաժանելոց էին ընդ Լուչիա և ընդ Ռոսարիկ. սակայն դէպք այնպէս եղաւն: Ցեսարանն այն գայր խառնէր ընդ ամենայն սիրելի և սոսկալի պատկերս, զորս յոյս և կասկած յանդիման առնէին փոխանակաւ մտաց նորա: Բանք զորս լուաւ առ հիւանդին, յուշ լինէին յերկբայ՝ յորս յուզէին միաք նորա, և ոչ կարէր կատարել զաղօթս՝ զոր սկսեալ էր առ մահճաւք նորա վան յաջող ելից մեծի վտանգին, և 'ի հնչել զանգակին Թողեալ անկատար:

Եկեղեցեական ուխտանկիւնի, որ աստիճանեալ ամբառնայ ի միջի զգուշարանին, էր յառաջագոյն աղօտ ամենուստ՝ ի սիւնս ևեթ յեցեալ, բայց յամենայն կողմանց, կամարակապ սեանէ ի սիւն, և գաւթի շուրջանակի զբօսն խմբաբանաւն, որոյ կամարքը ուրթ կային հանդէպ կամարացն արտաքնոյ՝ ի վեր զդմբեթին ունելով. որպէս զի մարթէր ի պատուհանաց ամենայն սեներկայ շրջապատին, և գրեթէ յամենայն կողմանց դաշտավայրին, տեսանել զսուրբ սեղանն կանգնեալ ի միջի: Այլ յայնժամ շինուածն այն յայլ պէտս ի կիր արկեալ, բացուածք ձակատուցն փակեալ էին որմով. բայց նախնին կազմած ամբողջ մնացեալ՝ ցուցանէ յայտնապէս որպիսի էին յառաջագոյն, և զառաջին կարգաւորութիւնն:

Ինձնոյ այն ինչ յուզի անկեալ՝ եաես զչայրն փեղիքս ի գաւթի աղօթարանին ընդ միջին կամարաւ ի կողմն՝ որ հայի ի քաղաքն, յորում կողման ուղեկիցքն էին համախմբեալ, հանդէպ միջին ձանապարհին. և ծանեաւ ի չարժուածոց նորա, զի սկսեալ էր զբանախօսութիւնն:

Պատեցաւ ընդ նբբուղես, եհաս յեակոյս ունկնդրաց՝ որպէս խրատուն էր, և զկայ հաւանդ լսիկ: Շուրջ էած զաչս զնոքօք, և ոչ այլ ինչ տեսանէր, բայց սալայատակ լմն գոգես կազմեալ՝ ի գլխոց, և՝ ի միջն՝ ոչ սակաւս թաշկինակս կամ՝ քօղով ծածկեալ: Անդր ուշիս կայր՝ ի զնին, այլ ոչ կարելով աւելի ինչ տեսանել՝ ի նոսա, զաչս՝ ի վեր էառ՝ ուր ակնկառոյց կային ամենեքեան: Շարժեցաւ սիրտ նորա՝ ի տեսիլ

պատկառելի երեսաց քարոզչին. և ամենայն մտադրութեամբ, որպէս կարէին՝ ի լեռնին Յայնմ պահու ակնկալութեանն, լուաւ զայս մանն քարոզին.

«Մտածենք այն հազարաւոր անձինքը՝ որ ելան ասկէց», և ամբարձեալ զձեռն՝ ցուցանէր մատնանիշ լեռս կոյս զդուռնն՝ որ ածէ՝ ի դերեզմանս կոչեցեալս սրբոյն Գրիգորի, որ էր յայնժամ որպէս փոս մի մեծ: «Աչք մը տանք մնացեալ հազարաւոր անձանց, որոնք ուսկից պիտոր ելլեն՝ չենք գիտեր: Նայինք մեր վայ ալ, որ այսչափ քիչ հոգի պիտոր ելլանք ողջ: Օրհնեալ է Աստուած, ու օրհնեալ ըլլայ միշտ իր արդար կամքը, օրհնեալ ըլլայ իր ողորմութիւնը, օրհնեալ ըլլայ թէ մեռելոց և թէ ողջ մնացելոց համար, օրհնեալ ըլլայ իր ըրած ընտրութիւնը մեր վրայ: Ո՜հ, ինչո՞ւ ուզեց, սիրելի որդիք, ողջ պահել զմեզ պզտիկ մաս մը: — Որպէս զի այն վիշտերուն որ քաշեցինք՝ խրատուինք, ու երախտագիտութեամբ ջերմեռանդ ըլլանք. որպէս զի աւելի խմանալով՝ որ կեանքը իր պարգևն է, յարգենք եթէ իր տուած պարգևը, ու անանկ բաներու գործածենք՝ որոնք կրնանք նուիրել իրեն. որպէս զի քաչածնիս մեղքով կարեկից ըլլանք ուրիշներուն՝ որ դեռ քաշելու հետ են, ու օգնենք իրենց: Հիմայ ա նոնք, որոնց վշտակից եղանք, ու հետերնին յոյս ու վախ ունեցանք, որոնց մեջը մեր բարեկամներն ու ազգականներն ալ կան, ու վերջապէս ամենքն ալ մեր եղբարքն են, անոնք ալ որ կը տեսնան մեզերնին անցնելնիս, ու թերևս

կը մեկնաբանեն սեմանեղով որ ողջ եղողնեը ալ կան ասկէց, նայինք որ չենուին վրանիս: Աստուած պահէ որ չիտեմնան վրանիս աշխարհային խնամուտ մը մահտրնէ միայն խալըսեընուս համար՝ երբոր իրենք գեռ ապահով չեն: Տես նան որ մեզի համար Աստուծոյ փառք տալու առեննիս՝ իրենց համար աղօթք ընելով կելլանք ասկէց, ու կարենան յուսալ՝ որ դուրսն ալ պիտոր լինինք խեղճերը: Ձամբէն սկսինք եղբայրսիրութեան կեանք մը, առջի քայլերնէս սկսինք. անոնք որ առջինին պես ուժովցած են, ակարներուն թեւը մտնան. դուք կարեձներ, օգնեցէք ծերերուն. դուք որ առանց զաւկի մնացեր էք, տեսէք որ ծրջակի զաւկիներ չորս դինիդ առանց հօր մնացեր են, հայրութիւն ըրէք իրենց, եղբայրսիրութիւնը կը ծածկէ մեղքերնիդ, ձեր վիչտերն ալ կանուչցնէ »:

Աստանօր չշռնչ խուշ հառաչանաց և հեծութիւն՝ որ երթայր և յաւելլոր, գադարեաց յանկարծ ի տեսանել ամենեցուն զ Հայրն փեսլիքա՝ զի արկեալ պարան զպարանոցաւ անկաւ ի ծունկս, և կայր ի լուութեան. մնային լսել զինչ ասելոցն էր, և ասէ.

« Ինծի ու ընկերներուս համար, որ առանց մեր արժանաւորութեանը՝ աս մեծ չնորքը ուղեցանք, ձեզի ծառայելով Քրիստոսի ծառայելու, Թողութիւն կը խնդրեմ թէ որ աս մեր մեծ պաշտօնը՝ ինչպէս որ պէտք էր՝ չկատարեցինք, թէ որ ծուլութեամբ կամ անհոգութեամբ ձեր ամեն կարօտութիւնը չիլեցուցինք, թէ որ կանչելնուդ պէս չհասանք, թէ որ ան-

համբերութիւն ըրինք, թէ որ ձանձրութիւնք ու խիստ դէմք երբեմն ցուցուցինք, թէ որ երբեմն ալ ողորմելաբար մտքերնիս անցընելով որ կարօտ էք մեզի՝ խոնարհութեամբ ու պէտք եղած կերպովը չխնամեցանք հետերնիդ, թէ որ ակարութեամբ անանկ գործք մըն ալ ըրինք՝ որ դայթակղութիւն եղաւ ձեզի, ամենն ալ ներեցէք. Աստուած ալ ներէ ձեզի, ու օրհնէ զձեզ »: Եւ խաչակնքեաւ ի վերայ ամենեցուն, յարեաւ:

Այսչափ ինչ կարացաք զնմաստ և զընաբան քարոզին համառօտել. այլ զերանակ ասացուածոյն անտի է ի միտ առնուլ, զի ընորհս կոչէր զծառայել ախտացելոց ի ժանտախտէ, քանզի այնպէս ի սրտէ համարէր. խոստովանէր՝ ոչ արժանապէս ընորհին սպասաւորեալ, քանզի անարժան այնմ զանձն վարկանէր. և խնդրէր թողութիւն, քանզի կարօտ թողութեան զինքն ճանաչէր: Սակայն ամենեքեան, որոց չուրջ զնեբեամբք տեսեալ էր զ Հարս վերարաւորս ի ծառայութեան, և զբազմայ ի նոցանէ ըզմահ, և դիտելով նոցա՝ զի որ խօսկերն ի դիմաց ամենեցուն, առաջին էր ի նոսա յաշխատանս որպէս յիշխանութեան, և ոչ երբեք պակասեալ ի սպասաւորութենէ՝ բայց միայն յորժամ և ինքն ախտացեալ կայր մերձ ի մահ, որպիսի հեծեծանօք, քանի արտասուօք չսէին զբանս նորա, ոչ է մարթ պատմել: Այնեալ ապա զնաչափական մեծ՝ որ ի մի ի սեռանց կայր յեց, եբարձ զայն ի վեր, և թողեալ յեզը արտաքին գաւթին զանգալս իւր, էջ ընդ առաջ

Ճանս ընդ մէջ բազմութեանն՝ որ խոնարհ յարգանօք բանային նմա ճանապարհ, զնայր առաջի։

Իսկ Ռէնցոյ արտասուալից որպէս զմի ՚ի նոցանէ՝ յորոց խնդրեալ էր Չայրն Փեվլիքս Թողութիւն, անցեալ մեկուսի՝ եկաց առ միւսմ ՚ի հիւղից, ծածկեալ յեակոյս, և զգլուխ իւր միայն լայնաբաց աչօք ՚ի գուբս կարկառեալ, ծայր գողութեամբ և առաւելագոյն ինն վըստահութեամբ զոր ներգործէր ՚ի նմա գորովն ազգեալ ՚ի բանից քարոզչին և ՚ի հաստատակաց գործուանաց։ Եւ ահա հասանէր Չայրն Փեվլիքս բակոտն, պարան ՚ի պարանոցի, երկայն և ծանրաբեռն խաչիւն՝ զոր բարձեալ բերէր, գուշնատ և նեղհար գիմօք՝ որ ազգէր ՚ի սեսողս զիրզ և խրախոյս համայն, հանգարտաքայլ՝ բայց անյողդողդ, այլոց աւելի խնայելով՝ որպէս թէ ինքն յառաւել վաստակոց և ՚ի վերոյ զօրացեալ ՚ի տակ այնքանեաց կարևոր աշխատանաց, որ յարակից էին իւրումն պաշտաման։

Չհետ նորա գայր մանկանին զարդուն, բազուկք ՚ի նոցանէ բռնանի, սակաւք յոյժ ամբողջ զգեցեալ, և ոմանք ներքնահագ միայն։ Ապա գայր կանանցին, ամենեցուն նոցա գրեթէ կալեալ գաստրիկս զձեռանէ, սաղմոսելով փոխանփոխ զՈղորմեայն. ձայնք նոցա, և գոյնք երեսաց հատեալ, զսեսողաց առ հասարակ ՚ի կարեկցութիւն շարժէր զդիս։ Իսկ Ռէնցոյ հայեր գիտէր կարդ ըստ կարգի, զդէմս իւրաքանչիւր, և ոչ զմի ՚ի նոցանէ անսես արարեալ, զի յուշիկ գնայր Թափօրն, տալով պարսպ նկատելոյ։ Անցանէն և անցանէն, գիտէ և գիտէ, այլ ընդունայն. երբէք երբէք ակնարկէր և ՚ի կարգս՝ որ գայն յեակոբայ, և ասէր. « Ա՛լ քիչ մնացեր, եռքնեան հասանք »։ Անցեր բնաւք, անցեր գնացեր և տակաւին հայէր նա զչետ այնր խմբի, մինչ գետ արանցն սկսեալ էր գունդ անցանել զառաջեաւ։

Նոր ուշագրութիւն, նոր յոյս յաւելին ՚ի նա եկաւորիք զչետ սայլք, յորս էին ապաքինեալք՝ չէ կարողք ՚ի գնացս. զի ընդ նոսա ՚ի վերջ գայր կանանին. և այնպէս հանդարտ ընթանային սայլք, զի կարէր Ռէնցոյ գիտել ՚ի նոսա մի ըստ միոջէ զամենեսեան։ Այլ զինչ. երկայ ՚ի զինի առաջնոյ սայլին, ապա և այլոց հետ չհետէ, գարձեալ ընդունայն, մինչև յվերջինն՝ զորոյ չհետ գայր վեղարաւոր ոմն ծանրաւեալ, ցուպ ՚ի ձեռին, որպէս սեսուէ կաբանին, և էր Չայրն Մ[illegible]քայէլ, որ ըստ ասացեալսն տուեալ էր ՚ի վաստակակից Չօրն Փեվլիքսի ՚ի վերակացուութիւն։

Այսպէս ՚ի գերև էլ և յոյսն այն ցանկալի, ոչ միայն բարձեալ զքաջալերութիւն՝ զոր սըւեալ էր պատանւոյն, այլ որպէս յաճախ պատահէ, Թողեալ զնա առաւել ևս ախորժ քան զառաջինն։ Յոյս որ միայր այնուհետև՝ էր գըտանել զկուշխա ախտացեալ, եռանգեան յուսոյ յաջորդելով երկիւղ սասակագոյն. սակայն և ՚ի Թեզն յոյն ակօր և ախորժ ամենայն զօրութեամբ եղև ապաստան։ Եմուտ ՚ի սրահ անգր, յառաջ խաղաց ընդ կողմն՝ ուստի Թափօրն էր եկեալ, և ՚ի հասանել առաջի մատ-

բանն՝ ծունր եդեալ ՚ի յետնումն աստիճանի, եկաց յաղօթս առ Տէր, կամ մանաւանդ ՚ի խառն ՚ի խուռն և յընդհատ հառաչանս և ՚ի թախանձանս, յորս և ՚ի խոստմունս, որպէս ոչ է մարթ առնել առ մարդիկ. զի ոչ զիմաստս նոցին կարեն իմանալ, ոչ երկայնամտել ՚ի լուր և ոչ լսել զայն առանց արհամարհումն Աստուծոյ:

Յարեաւ ապա խուն ինչ զօրացեալ, պատեցաւ շուրջ զիոքբիկ տաճարաւն, և էլ ՚ի միւս այլ սրահ՝ զոր չև էր տեսեալ, և հանէր այն ՚ի միւս դուռն զգուշարանին: Ֆայլա քանի մի առեալ, էտես զանջրպետան ցցապատ՝ զոր վերստաւորին էր ասացեալ, աւերք ուրեք ուրեք: Եւ մուտ ընդ մի ՚ի խորամուխսն, և գտաւ ՚ի կողմն կանանցն. և այն ինչ զնախկին ոտնիմոն առարեալ, էտես ՚ի գետնի զանգակ մի որպիսի Մոնատքն կրկին յոտին. խորհեցաւ՝ զի կարէր այն օգնել նմա ՚ի մուտս որպէս անցագիր: Էառ զայն, շուրջ ածելով զաչս՝ թէ տեսանէր ոք, և կապեալ յոտին հանգոյն Մոնատից, վազվազեր ՚ի խնդիրն, ոչ միայն աղեաւաւոր ՚ի տեսիլ՝ այլև ծանր և տաժանաւոր վասն բազմութեանն մեծի: Դիտէր, կամ մանաւանդ տեսանէր նոքանոր աղէտս, հանգոյնս ըստ մասին այլոցն տեսելոցն, և ըստ մասին այլազգս. զի նովքն տառապանօք՝ նորօրինակ լինէր անդ կրեզ, նոր օրինակ նուաղել, այլազգ լինն հեծութիւն ՚ի տոկ, վշտակից լինել միմեանց և օգնել. այլ գոբով և այլ սոսկումն տեսողաց:

Ոչ սակաւ յառաջ ընթացեալ, այլ ՚ի շուրջ՝ թէպէտև առանց լինչ պատահարաց, լուաւ ա-

պա կոչ յակովբոսէ՝ որ առ լինքն թուէր ուզղեալ. դարձաւ և տեսս ՚ի բացեայ զմի ՚ի պատուիրակաց, որ ձեռն ՚ի վեր ամբարձեալ ակնարկէր նմա գնալ ուր պէտք էին օգնականութեան, և աղաղակէր. « Հո՛ն, հո՛ն, սենեակինբոսն մէջ, հոս լմընցաւ աւելը »: Գիտաց Ինձիցի զի զինքն կարծէին՝ պատրեալ ՚ի զանգակէն, և մեղադրեր անձին վասն խորհելոյն և եթէ խոսեալ նուաղ ՚ի խոչից, և ոչ որոց լինչ լինէրն ձայնատուր, և խելս խառնեալ զերծանել ՚ի կոչոյն, կրկին և կրկին չարժուածովք գլխոյն ակնարկեր կոչողին՝ որպէս թէ խմացեալ և հնազանդեր, և անտես եղև յերեսաց նորա ՚ի կողմն սենեկաց: Եւ շատ համարեցաւ հեռացեալ ՚ի նմանէ, խորհեցաւ բառնալ զպատճառ վասնզին զզանգակն. այլ առ ՚ի բառնալ զոյն անտեսաբար, եմուտ յանձուկ անջրպետ ուրեք միջնաշաւիղ հիւղից երկուց՝ որ երբ թեկն ՚ի թեկն միմեանց կային, և խոնարհեցաւ լուծանել զզանգակն, յեցուցեալ զգլուխ իւր յորմն յարգելէն միոյ ՚ի հիւղիցն. և լսեր բարբառ ՚ի ներքուստ. ունկն մատոյց, ՚ի լսելիս իւր կայր հոգին բովանդակ, և ասէ. « Տէր Աստուած, կարելի բան է... Հա, անոր ձայնն է »: Եւ բարբառն այն ասէր քաղցրաձայն. « Ինչո՞ւ կը վախնաս... մեծ մրրիկը անցուցինք. մինչեւան հիմայ զմեզ պահողը, ասկէց եառն ալ կը պահէ »:

Եթէ ոչ աղաղակեաց պատանին՝ չէր առ ակն մանանելոյ զանձն, այլ զի եղև հեզամիձաւուկ, ծունկք նորա թողացան, մթագնեցան աչք նորա, յառաջնում անդ վայրկենի. այլ ապա

կանգնեցաւ եկաց զգաստ և զօրաւոր քան զառաջինն, պատեցաւ արագ զհիւղիւն, եկն ՚ի մուտս դրանն, եւտես զնա՝ որ խօսէրն, և եւտես յոտին՝ խոնարհեալ ՚ի վերայ փոքրիկ անկողնոյ: Իսկ նորա չըզկաալ զաչս յոտնաձայնն, եբրև եւտես զՊինդոյ, Թուէր երապէզ. հայեցաւ ուշիւ, և դոչեաց. « Փառք քեզ Տէր »: Գոչեաց և Ռինդոյ. « Լուչիա, դասի զքեզ հա՞. դուն ես երաւցընէ, ոդջ ես հա՞ ». և յառաջ մաւեւս դոզալով:

Իսկ Լուչիա սասկի ևս քան զնա հարեալ զդողանի, գոչեաց. « Փառք քեզ Աստուած. Ռինդոյ, ինչպէս, դուն հո՞ս, ժանտախտի մէջ »: —

« Մի վախնար. մեր մը բռնուեցայ. իսկ դո՞ն »: —

« Ա՛հ, ես ալ. իսկ մայրս »: —

« Զնեեցայ զինքը, բայց աղէկ պիտոր ըլլայ. երեսիդ գոյնը դեռ աղէկ մը չէ եկեր, շատ տըկար կերևաս, բայց վախք Աստուծոյ, որ ըրընացեր ես »: —

« Աստուած ուղեց որ դեռ ապրիմ. ան, Ռինդոյ, ինչո՞ւ աս կողմերս կը պատսխս »: —

« Ինչո՞ւ աս կողմերս կը պատսխմ » ասկ Ռինդոյ մտեղով առ նա. « աս ինչ հարցմունք է, պէտք չէր որ գայի, ուրիշ ոչ ունիմ մտածելու. ալ Ռինդոյ չէ՞ անուշս, ալ Լուչիա չէս »: —

« Ա՛հ, ինչ կըսես, մայրս գրկէ չեստուաւ քեզի »: —

« Տուաւ, ինչ աղէկ խեղճի մը գրելու բան. խեղճ ազու մը պանդխտութեան մէջ, խեղճ ազու մը՝ որ չեմ գիտեր ինչ ըրեր է քեզի »: —

« Ռինդոյ, ան Ռինդոյ. ուրեմն գիտալով գիտալով ինչպէս եկար »: —

« Ինչպէս եկայ! ինծի կըսես ինչպէս եկայ, այնչափ խոստմունքներ ընելէն ետքը. ուրեմն ալ աշխըքիս վրայ չեկա՞նք, ալ չէ՞նք յիշուիր, ինչ կը պակսէր մեզի »: —

« Ո՛հ. Տէր Աստուած, գոչեաց Լուչիա ձեռնամած առ վեմին, և զաչս յերկինս ամբարձեալ, ո՛հ, ինչո՞ւ չեկանչեցիր զիս Տէր իմ... ո՛հ, Ռինդոյ. ինչ ըրիր. կը յուսայի որ մոռցուած ըլլամ »: —

« Ի՞նչ ազուր յոյս. երեսիս ըսելու խոսքերը էն ատոնք »: —

« Ի՞նչ ըրիր, հոս ասանկ տեղ, խեղճերու մէջ, ասանկ խղճալի տեսարաններու մէջ. հոս մեռնելու միայն տեղ է, ինչպէս հոս եկար »: —

« Մեռնողներուն համար աղօթք պէտք է ընել, ու յուսալ որ աղէկ տեղ երթան. բայց ապրողները պէտք չէ որ յուսահատութեան մէջ ապրին »: —

« Խելքդ, Ռինդոյ, առանց մտածելու մի խոսիր. հապա սուրբ Աստուածածնայ սրուած խոստմունք մը... ուխտ մը... —

« Անանկ խոստմունքները խոստմունք չէն սեպուիր »: —

« Ո՛հ Տէր Աստուած. ինչ կըսես Ռինդոյ, ո՞ր էիր աս միջոցիս, որո՞ւ հետ էիր, աս ինչ խոսք է »: —

« Բարի քրիստոնեի խոսք է. քեզմէ ալ աղէկ կը մտածեմ սուրբ Աստուածածնայ պատիւը, ու կը հաւատամ որ անանկ խոստմունքներ չու-

զէր՝ որոնք ուրիշն ինաս կը հասցընեն. Թէ որ
աուրբ Աստուածածինը ուզէրու ըլլար, ո՛անոր
խօսք չէի ունենար ընելու. բայց եղածը բոլո-
րովին քու երևակայութիւնդ է: Գիտես ինչ
պէտք է իրեն խոստանանք, առջի աղջիկ զա-
ւակին որ ունենանք, անունը Մարիամ դնենք.
ասկէց ես ալ կը խոստանամ. ատոնցմով է որ
սուրբ Աստուածածինը կը փառաւորուի. ա-
սոնք են խէլքով ջերմեռանդութիւններ, որոնք
ուրիշն ինաս մը չեն ըներ »: —

« Չէ, չէ, ատանկ խօսք մ'ըսեր, խօսածդ
չես իմանար, չես գիտեր որ ուրիշ ըսածդ ինչ
է, չես ըրած, չես փորձած. հոգիդ սիրես՝ Թող
տուր զիս ». ատոց և մեկնեցաւ դէպ 'ի մա-
հիճս: Իսկ Ուէնցոյ կացեալ անշարժ, ասէ.

« Լուչիա, գոնէ աս ըսէ ինծի. Թէ որ աս
արկէքը ջրլար, առջինին պէս կը լսայիր ին-
ծի »:

Պատասխանի ետ Լուչիա, դարձուցեալ ճե-
րեսս 'ի բաց, և բռնաւորեալ զարտասուս.

« Սիրտ չունիմ, պարապ խօսքեր զուրցընել
կուտաս ինծի, անանկ խօսքեր՝ որ գէշ կընեն
ինծի, անանկ խօսքեր որ Թերևս մեղք ալ կը
խոթեն զիս. գնա, ո՛հ գնա, մոռցիր զիս. ըսել
է որ իրարու համար եղած չենք, երկինքը ի-
րար կը տեսնանք. արդէն շատ ալ պիտոր չինէ-
նանք աշխարքիս վրայ. գնա, կը խնդրեմ, գաւիր
մայրս, իմացուր իրեն, որ աս անգամ ալ պա-
հէց զիս Աստուած, ու աս բարեգութ կնոջը
հանդիպեցայ, որ զիս մօր պէս կը հոգայ: Ըսէ
իրեն որ կը յուսամ, Աստուած զինքը կը պահէ

աս գէշ հիւանդութենէն, ու իրար կը տեսնանք
ևրբ ու ինչպէս որ կուզէ Աստուած: Աստու-
ծոյ սիրոյն համար ըլլայ, գնա, ու զիս մի մո-
ռնար, բայց միայն աղօթքիդ մէջը »: Եւ որ-
պէս ոք չունէցի ասէլ այլ ինչ, և ոչ լսել ինչ
կամիցի, որպէս ոք՝ զի փախչէ 'ի վտանգէ,
մերձ ևս 'ի մահիճ անդր մատեաւ, ուր կայր
կինն այն:

Իսկ Ուէնցոյ կացեալ դարձեալ ուր էրն՝ ան-
շարժ, ասէ ցնա. « Լուչիա մտիկ ըրէ »: —

« Չէ, հոգիդ սիրես գնա »: —

« Մտիկ ըրէ. Հայր Քրիստափորը »... —

« Ի՞նչ »: —

« Հոս է »: —

« Հոս ո՞ր, ի՞նչպէս գիտես »: —

« Քիչ մը առաջ խօսեցայ հետը, խել մը իրեն
հետ կեցայ. խիստ բարի կրօնաւոր մը կերևնայ
ինծի »: —

« Անտարակոյս հիւանդներուն ծառայելու
համար եկած պիտոր ըլլայ. բայց ինքը ըրու-
նուքը է ժանտախտէն »: —

« Ա՛ն Լուչիա, կը վախնամ, շատ կը վախնամ
որ »... Եւ մինչդեռ երկմտեր ասէլ, զի վշտալի
էր իւր և նմին իսկ Լուչիայի՝ զոր ասէլն կամէր,
և Լուչիա մեկնեալ 'ի մահճակ անտի՝ մերձենայր
առ ինքն, կատարեաց զբանն և ասէ. « Կը վախ-
նամ որ հիմայ բռնուած է »: —

« Վա՛խ խեղճ մարդուն, այր Աստուծոյ է.
բայց ինչո՞ւ խեղճ մարդ կըսես. խեղճը մենք
ենք. ինչ վնասակի մէջ է, անկողնին ինկած է,
հոգացող ունի՞ »: —

« Ելած է անկողնէն, կը պըտըտի, ուրիշ հիւանդները կը հոգայ. բայց սեմնաս գինքը, ինչ երեսի գոյն, հազիւ ոտքի վրայ կրնայ կենալ. շատերը տեսայ, չեմ սխալիր »։ —

« Բայց հոս է երեւցընէ »։ —

« Հոս է, քիչ հեռու քեզմէ, որչափ որ ձեր տունը հեռու է մերինէն »։ —

« Ա՜հ, սուրբ Աստուածածնին »։ —

« Մտածէ որ որչափ խօսեցանք երեն հետը քու վրադ. բաներ ըսաւ որ... գիտէս ինչ ալ հասկըցուց ինծի, հոգը կը պատռէ. բայց հիմայ մոռիկ ըրէ ինչ որ իր բերնովը ըսաւ ինծի։ Ըսաւ որ՝ ազէկ ըրեր եմ գալ գբեզ փնտռելէս, Աստուածած ալ տանկ կուզէ որ ընէ պատանի մը. օգնեց ալ ինծի գբեզ գտնալուս։ Իրաւ սուրբ մարդ, անանկ որ՝ մոռիկ ըրէ »... —

« Աստանկ ըսեր է, վասն զի չիգիտեր որ »...—

« Ի՞նչ կուզես որ գիտնայ, ինքիր գլխուդ՝ կանոնի գէմ՝ առանց հրամանի ըրածդ. առաքինի ու խելացի մարդ մը՝ ինչպէս որ ինքն է, տտանկ բան չմտածեր. բայց ինչ որ հասկըցուց »... Եւ աստ պատմեաց զայցելութիւնն իւր ընդ նմա՝ ի հիւղ անդր. և Լուչիա, թէպէտ և զգայութիւնք իւր և միտք սովորեալ էին՝ ի տեղւոջ անդ յաղդողագոյն տպաւորութիւնս աղէսից, սակայն զարհուրեալ և կարեկից լինէր։ Եւ յաւել Ութնցոյ.

« Հոն ալ սուրբը ու արդար մարդու մը պէս խօսեցաւ. ըսաւ որ կրնայ Աստուած որոշած ըլլալ ընորհք տալու խեղճին, (հիմակուս հիմայ աս անունը պէտք է տամ երեն), ու կը սպասէ ժամանակ աստիճանի ինչը գարձի բերելու, բայց կուզէ որ աղօթք ընենք մեկտեղ երեն համար. հասկըցար »։ —

« Հա՛; հասկըցայ. երկուքս ալ կաղօթենք՝ ուր որ Աստուած ուզէ որ գտնուինք »։ —

« Բայց իր բառերուն է ըսածս, գիտե՞ս »։ —

« Բայց ինքը չիգիտեր որ »... —

« Բայց գուն չե՞ս գիտեր որ սուրբը մը երբոր կը խօսի, Աստուած է խօսել տուողը. անանկ չէր խօսեր, թէ որ ըսածին պէս չըլլար... Հապա ան խեղճին հոգին. թէ և ես աղօթք ըրի երեն համար ու կընեմ սրտանց՝ երբեմն թէ եղբայրս ըլլար, բայց ինչ կուզես որ ըլլայ անդին՝ թէ որ հոս իր բանը կարգի չիդնէ, աւրածը չնեղլու չըլլայ. թէ որ մէյմը քու խելքդ պառկի, ամեն բան տեղը կերթայ. եղածը եղած է, հոս քաչածը՝ քաւարան կըլլայ երեն »։ —

« Զէ, Ութնցոյ, չէ. Աստուած չուզեր որ մեզք ընենք, որպէս զի ինքը անոր ողորմի. թող տանք երեն, մենք մեր պարտքը ընենք, աղօթենք. ես ան գիշերը մեռած որ ըլլայի, չէր կրնար Աստուած ներել երեն. թէ որ չմեռայ, թէ որ Աստուած զիս խալըսեց »... —

« Հապա մայրդ, խեղճ Ագնէսը, որ միշտ իմ աղէկութիւնս կուզեր, կը հալէր կը մաշէր որ կարգուինք, ինքն ալ չըսաւ քեզի՝ որ տտ ըրած խոստումնդդ չիսեպուիր, ծուռ երեւակայութիւն մըն է, ուրիշ բաներու մէջ ալ ինքը էր որ խելքդ կը հասցընէր. ինչո՞ւ, վասն զի բան կայ որ՝ ինքը քեզմէ աղէկ կը մտածէ »։ —

« Մայրս. կուզես որ մայրս ուխտիս դէմ ը-

նել տայ ինծի. ո՛հ Ռէնցոյ խելքդ վրադ չէ »։—

« Կուզէս որ ըսեմ. դուք կնկոխք աս բանե-
րէն չէք հասկընար. Հայր Ֆրիստափորը ինծի
ըսաւ որ զքեզ դանալու որ ըլլամ՝ դառնամ
իմայընեմ իրեն. նայինք ինչը ինչ կըսէ »։—

« Հա, աղէկ ըսիր, գնա այն սուրբը մարդուն,
ըսէ իրեն որ ես կաղօթեմ իրեն համար, ինչն
ալ Թող ինծի համար աղօթք ընէ, շատ պէտք
ունիմ. բայց Թէ որ հոգիդ կը սիրես, Թէ որ ես
ալ կը սիրես, ալ հոս մի գար, ինծի դէշ կը-
նես... գնա փորձուածեան մէջ կը ձգես։ Հայր
Ֆրիստափորը գիտէ, կը հասկըցընէ քեզի,
խելքդ գլուխդ կը բերէ, սիրտդ կը հանդէս-
ցընէ »։—

« Սիրտս կը հանդէսցընէ. ո՛հ անիկայ մոքէդ
հանէ. արդէն դրէթ տուիր ինծի ատ խօսքը, ու
ես գիտեմ ինչ քաշելդ ատոր համար. ու հի-
մայ սիրտդ կը քաշէ ատ խօսքը երեսիս ալ զուր-
ցեր։ Ատոր դէմը ես քեզի յայտնի ու կըսեմ
կըսեմ, որ իմ սիրտս հանդէսելիք չունի. դուն
գնա կուզես մոռնալ, բայց ես չեմ ուզեր զքեզ
մոռնալ. ու աս ալ կըսեմ. Թէ որ խելքս կոր-
սընցընելու ըլլամ, ալ նորէն չիգամ. արուեստս,
բարի վարքը, ամէն բան մէկդի ձգած՝ կառաւղ
մարդու մը պէս պիտոր ապրիմ... իսկ ան ողոր-
մելին... Ատուած գիտէ որ սրտանց ներեցի
իրեն... կուզէս ուրեմն որ բոլոր կենացս մէջ
միշտ մոքէս անցընեմ՝ որ եԹէ ինչը եղած չըլ-
լար... Լուէիա, ըսիր որ՝ ալ զքեզ մոքէս հա-
նեմ. ուրեմն ալ կուզես որ ասկէց ետքը մոռ-
նեմ... այսչափ բան գլխես անցնելէն ետքը,

այսչափ խոստմունքները ընելէդ ետքը. ինչ
ըրի քեզի՝ իրարմէ բաժնուելնէս ետքը. այս-
չափ բան քաշելուս համարը է որ ասանկ կը վա-
րուիս հետս, գժբախտութիւններէն ուներնալուս
համար է, հալածուելուս համար է, այսչափ
առեն սխուր արտուամ՝ քեզմէ հեռու՝ անէս
դուրս կեանք անցընելու, ու առջի վայրկեանը
որ կրցայ՝ զքեզ փնտռելուս համար է »։

Իսկ Լուէիա, որչափ ներքեցին նմա յայնժամ
արտասուք յօդել բարբառ, ձեռնամած ան-
դրէն զաչս յերկինս ամբարձեալ գոչեաց լա-
լագին. « Սո՛ւրբ Ատուածածածին, օգնէ ինծի,
գիտես որ ան գիչերուընէ ետքը ասանկ վայր-
կեան մը չեմ անցուցեր. ինչպէս որ ան առենը
հասար ինծի օգնելու, հիմայ ալ օգնէ »։—

« Հա, Լուէիա, աղէկ կընես, սուրբ Ատուա-
ծածնայ դիմէ. բայց սուրբ Ատուածածածինն որ
այնչափ բարեգութ է, մայր ողորմութեան է,
կը հաւատամ որ յանկարծ բերնէդ ելած խօսքի
մը համար ուզէ՝ որ այսչափ վիշտ քաշենք, գո-
նէ ես. ու անանկ առեն բերնէդ ելած խօսքի
մը համար՝ երբոր ըսածդ չեիր գիտեր. կը հաւ-
տամ որ ան առենը օգնած ըլլայ քեզի, որ ետ-
քը աս նեղութեան մէջը կրնանք... Իսկ Թէ որ
առիկայ պատճառանք մըն է, Թէ որ ես քեզի
առնի եղած եմ, ըսէ ինծի... յայտնի խօսէ
Լուէիա »։—

« Հոգիդ կը սիրես, Ռէնցոյ, մեռնողներուդ
հոգւոյն համար ըլլայ, լըմընցուր մէյմը, դադ-
րէ, մեռնիլս կուզես... առենը չէ. գնա. Հայր
Ֆրիստափորին, իրեն յանձնէ զիս, ու ալ մի
գառնար հոս, մի գար նորէն »։—

«Կերթամ, բայց մի կարծեր որ կարենամ՝ չեղառնալ, ալեկոծիցես ծայրեն ալ ըլլայ կը դառնամ»: Ասաց և մեկնեցաւ. և Լուչիա գնաց նըստել, կամ մանաւանդ անկանիլ յերկիր առմահճին. և եդեալ զդլուխ իւր անդ՝ ի վայր՝ ոչ դադարէր՝ ի լալ յորդահոս արտասուօք: Իսկ կինն՝ որ ցայնվայր անմռունչ կայր, բացեալ զաչս և զնայեցս, եհարց Թէ զինչ էր վէճն այն, և ընդէր լայր: Բայց Թերևս աստ հարցանիցէն ընթերցողք՝ Թէ ո՞ կինն այն էր. չեն ինչ պէտք երկարագոյն բանից՝ ի պատասխանի:

Էր նա բարեկեցիկ ոմն կին վաճառականի իբր երեսնամեայ, որոյ՝ ի սակաւ աւուրս մեռեալ էին՝ ի տան այր իւր և որդիք առ հասարակ. և յեթ սակաւ միոյ հարեալ և ինքն՝ ի ժանտախտէ՝ ածեալ էր՝ ի զգուշարան անդր, և եդեալ՝ ի հիւղն անդ՝ ի ժամանակի՝ յորում Լուչիա զերծեալ՝ ի սատակութենէ ախտին, և փոփոխեալ յանզգաստից այլ և այլ բնակակից ախտացեալս, սկսեալ էր ապաքինել և լինքն գալ, որ՝ ի սկզբանէ ախտին՝ մինչդեռ էին՝ ի տան ՖԷրրանտեայ՝ գրեթէ անզգայեալ էր:

Զկարէին կալ՝ ի հիւղն անդ հիւանդք առաւել քան երիւս, և՝ ի մէջ երկոցունցս այսոցիկ վշտացելոց լքելոց ահաբեկելոց միայնից յայնքան բազմութեան՝ լեալ էր անդէն մեծարմութիւն այնպիսի և սիրելութիւն, որ հազիւ մարթէր՝ ի մէջ ընդերկար բնակակցաց: Ի սուղ ժամանակի այնչափ էր զբօսացեալ Լուչիա, զի կարաց խնամել զմիւսն՝ ի զայրանալ ախտին. և

ապա իբրև զերծաւ և նա՝ ի վտանգէն, օգնէին և զգուշանային երեքից, քաջալերէին երեքօք, և միաբանեցին զի յերանելն ևս՝ ի զգուշարանէ անտի՝ կայցեն՝ ի միասին: Վաճառականին, որոյ յանձնեալ էր եղբօր իւրոյմ, միոյ՝ ի խնամակալաց առաղջութեան զտուն իւր և զվաճառատնոց և զարիզ լի բարեաւք, առաջի կայր կեալ միայնակ և ախուր, ուշնելով նորա առաւել քան զպէտս՝ ի բարեկենդանութենէն: Վասն որոյ կամէր առնուլ առ իւր զԼուչիա որպէս դուստր կամ քոյր. և Լուչիա հաւանեալ էր ընդ այն բաղում շնորհակալեօք, որպէս ոչ է հարկ ասել, և գոհանալով զաստուածայինն ի նմանից: Այլ զի յոյժ էր զգուշաւոր, չէր ատացեալ նմա ինչ, ոչ զնոստանէն՝ ի հարսնութենէն, և ոչ զայլոց անկարծելեաց. այլ յայնժամ յայնպիսում մեծի եռանդեան սիրոյ կաթսէր բանալ նմա զսիրտ իւր, որչափ միւսուն ցանկալն էր լսել: Եւ այնդեալ երկոքումբք ձեռօք զաչ նորա, սկսաւ պատմել զամենայն՝ ի հեկեկանաց և ի լեթ ընդհատեալ:

Բայց Ռենցոյ զնայր՝ ի հիւղ կրծնաւորին, ուշիւ և դարձադարձիւ հետազօտեալ զուզին՝ մինչև եգիտ զայն, այլ չէր անդ կրծնաւորն: Եւ շուրջ յածեալ՝ հաս զնա՝ ի հիւղն ուրեք խոնարհեալ՝ ի քաջալերել զոք՝ ի հոգեվարս: Զկայ հառ միալով լռելեայն. և յեթ սակաւ միոյ հաս՝ զլի փակեալ նորա զաչս հիքին, և կաց վայրկի մի յաղօթս, և յարեաւ: Յայնժամ մտահաւ առնա. և նորա տեսեալ զպատանին, ասէ.

« Ի՞նչպէս եղաւ, դուռը զինքը »։ —

« Հրամմեր ես, դուռ »։ —

« Ի՞նչ վնասակի մէջ »։ —

« Զբսեմ ըսընացած, բայց ոտքի վրայ »։ —

« Փա՜ռք Աստուծոյ »։ —

« Բայց »... ասէ պատանին՝ մերձ մտաւոյ եալ առ՝ ի խօսել անձայն։ « Բայց արդեօք մը դուրս հանեց »։ —

« Ի՛նչ արդեօք »։ —

« Այսինքն... արդէն գիտես խեղճին ինչ բան մի աղջիկ ըլլալը։ բայց երբեմն միտքը դրածը դժար կը փոխէ։ Այնչափ խոստմունքներ ընէր էն եաքը, այնչափ բան գլխընէս անցընէր էն եաքը՝ որ աղէկ գիտես, հիմայ կըսէ որ չկրնար հետս պահպանել, վասն զի... ինչ գիտնամ, ան վախին գիշերը... գլուխը տաքցած ըսեմ, ինչ ըսեմ, սուրբ Աստուածածնայ նուիրեր է զինքը։ Զիսեպուխը, անանկ չէ՞. ասանկ բանը՝ խորհրդով կարգով կանոնով պիտոր ըլլուի՝ որ սեպուխ, անանկ չէ՞ »։ —

« Ըսէ ինծի, ինքը հեռո՞ւ է ասկից »։ —

« Չէ, մտաւուխն քանի մը քայլ անդին »։ —

« Կեցիր քիչ մը հոս, եաքը մեկտեղ երթանք իրեն »։ —

« Ըսել է որ՝ հրամանքդ իր խելքը կը պատռկեցընես »։ —

« Չեմ գիտեր, ուրդի, պէտք է որ իրմէ լըսեմ »։ —

« Հասկըցայ » ասէ պատանին, և զաչս՝ ի վայր արկեալ, բաղուկ զբաղկաւ՝ ի կուրծս ածեալ խաչանիշ՝ ի վարանս կայր։

Զոգաւ կրծնաւորն անդրէն՝ ի խնդիր Հօրն Վ.ևկոտրի, աղաչեաց զնա կալ փոխանակ իւր առ վայր մի, եմուտ՝ ի հիւղ իւր, եւ անտի զամբիւղ՝ ի ձեռին, դարձաւ առ պատանին, և ասէ. « Երթանք »։ և երթայր ինքն առաջի, դէմ եդեալ՝ ի հիւղ անդր՝ ուր մտեալ էին յառաջագոյն՝ ի միասին։ և մտեալ անդր միայնակ, եւ վայրկի մի յետոյ և ասէ. « Բան չկայ, աղօթք ընենք »։ Եւ ապա ասէ. « Հիմայ տար զնա հոն »։ Եւ ոչ յաւելեալ ինչ այլ, ուղղոյ եղեն։

Նսեմանայրն օդք, սպառնայր մրրիկ ընդ հուպ. փայլատակունք խիտ ընդ խիտ լուսաւորէին յանկարծ զյարկս, զկամարս գաւթին, զգմբեթ մատրանն, և զկատարս հիւղից. բոմբիւնք որոտընդոստաբ բարկաձայնեք գնային կողմանէ՝ ի կողմն ընդ երկին։ Երթայր պատանին առաջի, ուշ եդեալ ուղեւոյն, անժոյժ՝ ի հասանել, բայց հանդարտաբայլ՝ ըստ տկարութեան ուղեկցին, որ խոնջ՝ ի վաստակոց, ընկճեալ յախտէն, նեղեալ՝ ի հեղձամղձուկ օդոց, գնայր յուշիկ, զնիհարեալ դէմն երբեմն երբեմն՝ ի վեր առեալ՝ կլանել զոգի։

Հասին՝ ի հիւղ անդր. դարձաւ պատանին յուղեկցէ իւր, և դողդոջ ձայնիւ ասէ. « Հասանք. հոս է »։ և մտին՝ ի ներքս։ Ձայնեաց՝ ի մահճայ կինն բնակակից. « Լուչիա, եկան »։ Դարձաւ Լուչիա, յարեաւ շտապաւ, եւ ընդառաջ ծերունւոյն գոչէլով. « Ո՞վ է տեսածս, ո՜հ, Հայր իմ »։

Ծերունին ասէ. « Լուչիա, ուրչափ տառապանքներէ խալըսեց զքեզ Աստուած, չատ գոհ

պիտոր ըլլաս՝ յոյսգ միշտ Աստուծոյ վրայ դրած ըլլալուդ »։ —

« Ո՛հ, իրաւցընէ. բայց հրամանքդ, Հայր իմ, (վայ ինձ, ինչպէս փոխուեր է) ինչպէս ես, ան ըսէ »։ —

« Ինչպէս պիտոր ըլլամ, ինչպէս որ Աստուած կուզէ, ու ինչպէս որ իր շնորհքովը ես ալ կուզեմ»։ Եւ առեալ զնա մեհուսէլ, ասէ. « Մտիկ ըրէ աղջիկ, քանի մը վայրկեանէ եւեթ չեմ կրնար կենալ հոս. կը վստահիս վրաս առջինին պէս »։ —

« Ո՛հ ատ ինչ խօսք է, միշտ իմ հայրս չէս »։

« Ուրեմն, աղջիկ, ինչ է ատ ուխտն որ ըրեր ես կըսէ Ինենոյն »։ —

« Սուրբ Աստուածածնայ ըրի... ո՛հ, սակայն մտիկ ատատպանացս մէջ ուխտեցի որ չեկարդըմ»։ —

« Խեղճ աղջիկ. բայց ան ատենը չհմտածեցիր որ խօսք ատած էիր, ուրիշի հետ կապուած էիր »։ —

« Աստուծոյ ու սուրբ Աստուածածնայ հետ ըլլալով բանս, չհմտածեցի »։ —

« Փա՛ աղջիկ, Աստուած ան նուէրքներըը կընդունի, որ մեր ունեցածէն կընենք, մեր սիրտն ու կամքը կուզէ. բայց դուն չէիր կրնար ուրիշի կամքը Աստուծոյ նուիրել, մէյմը անոր հետ կապուած ըլլալովդ »։ —

« Ուրեմն դէշ ըրի »։ —

« Չէ, խեղճ աղջիկ, ատ կոչմանէ մի մտածեր. ես կը հաւատամ որ սուրբ Աստուածածինը քու սիրագ ընդունած է ու Աստուծոյ նուիրած. բայց ըսէ ինծի, ատ խոստմունքը ընէլէդ առաջ՝ հարցուցիր մէկուն »։ —

« Չէ, չկարծեցի դէշ ընէլս՝ խոստովանած հօրս ալ չըսի. յայտնի է որ պզտի բարեգործութիւն մը որ կարենանք ընել, ուրիշի չի պատմուիր »։ —

« Ակռեց ուրիշ պատճառ մը ունիմ, որ արգելք ըլլայ՝ Ինենոյենի ըրած խոստմունքդ կատարելու »։ —

« Ատոր... ինչ պատճառ... պիտոր »... ատացաղջիկն, երբ չգիտցուով զինչ ասել, այլ այնու եղանակաւ՝ որ այլ ինչ ամենևին քան զերկբայութիւն ցուցանէր. և դէմք իւր տակաւին գոնատեալ՝ ի հիւանդութենէն՝ վառեցան յանկարծ կարմրափայլ։

Եւ ծերունին հայելով՝ ի խոնարհ, յաւելու « Կը հաւատամ որ Աստուած իր եկեղեցւոյն իշխանութիւն տուած է՝ ուխտ պարտք խոստմունք քակելու, երբոր քակելովը աւելի փառք կըլլայ Աստուծոյ »։ —

« Կը հաւատամ»։ —

« Ուրեմն գիտցիր որ՝ մեզի որ հոս եղողներուն հոգին հոգալու պաշտօնը առեր ենք, սուրբ եկեղեցին ատ բանին համար լիակատար իշխանութիւն տուած է. ուստի երբոր դուն ուզելու ըլլաս, կրնամ քակել քու ըրած ուխտդ, թէ և պարտքի տակ ինկած ըլլաս ատ ուխտովը »։ —

« Բայց մեղք չեմ գործեր՝ սուրբ Աստուածածնայ ըրած խոստմունքս ետ առնելով, սըրտանց խոստացայ իրեն »։ Պարտ է ատ ասել՝ զի

սասանեալ խռովեալ էր աղջկին յանակնկալ
յուսոյ անտի, 'ի յառնել ընդդէմ այնորիկ աս-
հաւթոյ երկիւղի՝ զոր սատակացուցանէին որ
'ի բազմոց հետէ տիրեալ 'ի միտս նորա խոր-
հուրդք:

Պատասխանի ետ Ծերունին. « Մի՛ղք կը սե-
պես, աղջիկ, սուրբ եկեղեցին դիմել, ու ա-
նոր պաշտօնեայքն խնդրել՝ որ բանեցընէ քու
վրադ անկէց ընդունած իշխանութիւնը՝ որն որ
եկեղեցին ալ Աստուծմէ ընդուներ է: Ես չի-
տեսայ ու չեմ գիտեր ինչ կերպով ուզեցիք
դուք մեկզմեկ. իրաւցընէ, թէ որ տեսեր եմ
երկու հոգի՝ որ ինծի երևցեր է Աստուծոյ կա-
մքը իրար ուզէնին, դուք երկուքնիդ էք. հի-
մայ ինչո՞ւ ուզէ պիտոր Աստուած բաժնել ըզ-
ձեզ իրարմէ: Փա՛ռք Աստուծոյ որ ինծի պէս
անարժան ծառայի մը իշխանութիւն տուեր է՝
իր կողմանէ խօսելու քեզի, ու ատ խոստա-
մունքդ ետ դարձընելու. ուստի թէ որ կը
խնդրես՝ ուխտէդ ազատ ըլլալ, չեմ տարակու-
սիր ազատելու զքեզ, այլ մնաւանդ կուզեմ
խնդրելդ՝ որ ազատեմ»:—

« Ուրեմն կը խնդրեմ», ասաց Լուչիա, ոչ
ևս յուզեալ սիրտ նորա, բայց միայն 'ի պատ-
կառանաց:

Յայնժամ կոչեաց Ծերունին զպատանին, որ
ոչ ևս կարելով առնել ինչ՝ կայր հեռի յանկեան
ուրեք, ուշն ուշով ունկն դնելով խօսիցն՝ որ
սահմանէին զբանս իւր: Եւ իբրև մատեաւ,
ասէ Ծերունին բարձրաձայն. « Իշխանու-
թեամբս, որն որ սուրբ եկեղեցին տուած է

ինծի, կը մտացընեմ քեզի՝ Լուչիա, որ ազատ ես
կուսութեան ուխտէդ, կը վերցընեմ վրայէդ
ինչ պարտք որ առանց մտածելու յանձն ա-
ռեր ես, ու կազատեմ զքեզ ամեն պարտքէա-
նութենէ՝ որուն մեջը ինկեր ես»:

Որպիսի հնչեաց բարբառս այս 'ի լսելիս Ուչե-
ցոյի՝ ոչ է հարկ ասել. չնորհակալ 'ի խորոց
սրտէ յառեալ 'ի նա՝ որ բարբառէրն, դարձոյց
իսկոյն զաչս 'ի յաչս Լուչիայի. այլ նա կայր 'ի
լուր, զի տակաւին խօսէր առ նա Ծերունին.
« Սկսե՛ հիմայ հանգարտ սրտով առջի ձամբադ
բռնել. նորէն խնդրէ Աստուծմէ, ինչպէս որ
առաջ կը խնդրէիր, որ քեզի շնորհք տայ սուրբ
հարս մը ըլլալու, ու վստահ եղիր որ առջինէն
եւս կուտայ՝ այսչափ վիշտ իր սիրոյն համար
քաշելէդ ետքը»: Եւ դարձեալ 'ի պատանին,
ասէ. « Դուն ալ մտածէ, որդի, որ սուրբ եկե-
ղեցին աս աղջիկը քեզի հարս տալու վախճա-
նը՝ ժամանակաւոր ու աշխարհային միտքե-
րուն միայն չէ. որն որ եթէ կատարեալ
ալ ըլլայ՝ առանց ամենևին տրամաբանեան, միշտ
անցաւոր է, ու վշտալի իրարմէ բաժնուելու ա-
տենները. այլ իր բուն վախճանը՝ զձեզ անվախ-
ճան ուրախութեան ճամբան դնելն է: Սիրե-
ցէք մեկզմեկ ինչպէս ուզեկիցք, մոքերնիդ
դնելով որ քիչ մը առեն իրարմէ բաժնուելու
ալ ըլլաք, ետքը նորէն իրար պիտոր գտնաք,
մեկտեղ ըլլալու յաւիտեան: Փառք տուէք Աս-
տուծոյ որ աս վճռակին հաստց զձեզ. ու թէ
որ զաւկրներ ալ տայ ձեզի, նայեցէք որ իրեն
համար մեծցընէք զիրենք, իր սէրը սրտերնուն

մէջը վառէք, եղբայրսիրութիւն սորվեցընէք իրենց, ասով ամէն առաքինութիւն սորվեցուցած կըլլաք. Լուչիա, Ինձոն ըսաւ քեզի ալ տեսնալը հոս »: —

« Հրամմէր ես, Հայր իմ, ըսաւ »: —

« Պէտք է որ անոր համար աղօթք ընես. ինծի համար ալ աղօթք ըրէք, սիրելի որդիք »: և հանեալ'ի զամբղէն տուփ մի փայտեայ անպատճոյ, այլ ձախարակեալ և փայլուն ըստ ախորժակի վեղարաւորեալ, ասէ. « Կուզեմ որ քովերնիդ ինծի պէս ողորմելի կրօնաւորի մը չիշատակը մնայ. աս տուփիս մէջ առջի խնդրած ողորմութեանս հացին կտորը կայ, որուն պատմութիւնը լսած էք. ձեզի կը թողում ասկից, պահեցէք. ու զանկընէնտուդ ալ ցուցուցէք. ախտաւոր աշխարքի մը մէջ պիտոր գան, ախտաւոր առեն, գոռոզ ու խռովարար մարդկանց մէջ. իրենց ալ ըսէք որ աղօթք ընեն ողորմելի կրօնաւորիս համար »: Եւ մատոյց Լուչիայի ըզտուփին. և յանկուսլ նորա զայն յարգանօք որպէս նշխարս սրբոց, յաւել հանգարտագոյն ձայնիւ. « Հիմայ ըսէք ինծի, ո՞վ ունիք Միլան՝ որ ձեզի օգնէ. չիտակ ո՞ւր պիտոր երթաք. Լուչիա, ո՞վ զքեզ մօրդ պիտոր տանի, Ասուած տայ որ ինքը ողջ առողջ գտնաք »:

Պատասխանի ետ Լուչիա, և ասէ. « Աս ողորմած խաթունը՝ որ ինծի մայրութիւն ըրաւ. հիմակու հիմայ մեկուեղ կելլանք ասկէց, էրքը ամէն բան ինքը կը մտածէ »: —

« Ասուած օրհնէ զինքը », ասաց Ծերունին՝ մերձեալ'ի մահիճն նորա: Եւ կիներն ասէ. « Ես

ալ շնորհակալ եմ հրամանքիդ, որ աս խեղճերը ասանկ միսիթարեցիր. կուզէի որ աս սիրելի աղջիկը ինծի հետ կենայ միշտ. բայց առ ժամս իմ տունս կառնեմ, էտքը իր գիտը կը տանիմ զինքը, մորը կը յանձնեմ »: Եւ ապա յաւել անձայն. « Ես կուզեմ պատրաստել իր օժիտը. Ասուած ինծի պէտք եղածէն եւել տուած է. որոնք ալ որ ինծի հետ պիտոր վայելէին, ամէնքն ալ մեռան, մեկը չմնաց »: Եւ ասէ Ծերունին. « Մեծ նուէրը մը կընես Ասուծոյ, ու եղբայրսիրութիւն. ուրեմն աւելորդ է որ աս աղջիկը քեզի յանձնեմ, կը տեսնամ որ արդէն զաւիդ պէս կը սիրես զինքը. ուրիշ բան չմնաար ինծի, բայց միայն փառք տալ Ասուծոյ, որ խրատելու առեն ալ հայրութիւն կընէ, ու զձեզ իրարու հետ մեկ տեղ հանդիպցընելով՝ իր մեծ խնամքը ցուցուցեր է երկուքնուդ ալ »: Եւ գարձեալ'ի պատանին, ասէ. « Ուրեմն հիմայ մեզի հոս բան չմնաար ընելու, շատ ալ ուշացանք հոս, երթանք »:

Եւ ասէ Լուչիա. « Հայր իմ, կարեւո՞ր պիտոր նորէն տեսնալ հրամանքդ. ես հիմայ ըռընտացած եմ, ես՝ որ ուրիշի օգուտ մը չունիմ, իսկ հրամանքդ »... —

Ի վերայ էած Ծերունին, լուրջ և հանդարտ բարբառով. « Արդէն խել մը առենէ'ի վեր խնդիրքս աս է Ասուածմէ, որ ուրիշներուն ծառայութիւն ընելով կեանքս լըմընցընեմ. թէ որ Ասուած ինծի աս շնորհքը ընէ, կաղաչեմ՝ ո՛վ որ ինծի կը սիրէ, օգնէ ինծի շնորհակալ ըլլալու Ասուածոյ. երթանք, ինչ յանձնարա-

բուԹիւն որ ունիս մօրդ ընԹլուս, յանձնէ Ուխնոյին »:

Եւ ասէ աղջիկն առ խօնայր իւր. « Տեսած պատմէ իրեն՝ որ ուրիշ մայր մըն ալ գտայ հոս, իրեն հետ կուգամ որչափ առաջ որ կարելի է, ու կը յուսամ որ աղջառողջ կը գտնամ զինքը »:

Եւ Ուխնոյ ասէ. « Թէ որ առկի կարօտուԹիւն ունիս՝ խրկածդ ամբողջ քովս է, ու »...

Կրճատեաց Լուչիա զբան նորա. « Չէ, չէ, եւԹերօք ալ ունիմ »:

Կրկնեաց Ծերն. « Շուտ ըրէ, երԹանք »:

Եւ պատանին չկարենալով բացատրել բանիւ զոր զգայն ի սրտի, ասաց ևԹե. « Մնաս բարով Լուչիա. հրամանքդ ալ բարեգուԹի խաԹուն »:

Եւ գոչեաց Լուչիա. « Աստուած տայ որ նորէն ամենքս մէկ տեղ տեսնուինք »:

Եւ Ծերունին ասելով առ Լուչիա և առ կինն՝ « Աստուած հեռերնիդ ըլլայ ու օրհնէ ձեզ », եղ ընդ պատանւոյն ի հիւղէ անտի:

Տարաժամեալ էր օրն, և օդք մերձ ևս սպառնային մըրիկ: Հայրն Ջրհեղեղիր հրաւիրէր զպատանին գիշերել ի հիւղ իւր, և ասէր. « ԸնկերուԹիւն չեմ կրնար ընել քեզի, բայց գոց տեղ կը պատսպարուիս »: Այլ Ուխնոյ աճապարէր ի գնալ, չկամէր այլևս յամել յայնպիսեմ տեղւոջ աղէտից, ուր չկարէր ևս տեսանել ղԼուչիա, և ոչ կալ ընդ բարւոյ Ծերունւոյն. ժամ և եղանակ, տիւ և գիշեր, արև և անձրև, ջերմուԹիւն և հիւանդութիւն, նոյն էին նմա յայնժամ. վասն որոյ շնորհս կալաւ Ծերունւոյն, ասելով. « Որչափ որ կրնամ, շուտ կուղեմ գտնալ Ադնէսը »:

Եւ իբրև հասին ի կէս ուղւոյն, կալաւ Ծերունին զաջ նորա, և ասէ. « Աստուած տայ որ աղջ առողջ գտնաս զինքը՝ ան բարի կնիկը. կը բարեմտի զինքն ալ՝ ամենն ալ՝ որ Եղբայր Ջրհեղեղտափորը կը յիշեն. ըսէ որ աղօթք ընեն ինծի համար. Աստուած հեռերնին ըլլայ ու օրհնէ ձերնիք »:

Եւ պատանին ասէ. « Ո՛վ Հայր իմ... կը տեսնուինք նորէն »:

Եւ Ծերունին ասէ. « Երկինքը, հոն կը յուսամ որ կը տեսնուինք »: Եւ զայս ասացեալ մեկնեցաւ: Հայր հայեր պատանին մինչև անտես եղև. և ապա դիմեաց ի դուռն, յաղ և յահեակ ձայն կեանն նուագ ի վայրն աղեւոց ակնարկեալ: Էր անդ երԹևեկ անսովոր, արշաւանք Մոնատից, կրել կարասի, կաղդուրել ձիւղս, և դեռ այն ինչ ապաքինելոց դիմել անդր հիւանդաբայլ՝ պատսպարել ի ըսպառնալեաց մրրկին:

ԳԼՈՒԽ ԼԷ.

Ա.յն ինչ անցեալ պատանւոյն ընդ սեամն դրան զգուշարանին, և յայլ կոյս դարձեալ, գտանել զուղին՝ ընդ որ եկեալն էր առաւօտուն առ որմով շրջապատին, սկսաւ անձրևել. կաթիլք ցանցառք և մեծամեծք հարեալ ուժգին՝ և սպիտակ և՝ ծարաւուտ ուղին՝ յարուցանէին փոշի նուրբ: Եւ՝ հասանել նորա յուղի անդը՝ յաճախեր անձրևն՝ և տեղ թանձրախիտ, և իջանէր հեղեղաստաւտ: Իսկ պատանին փախանակ տագնապելոյ՝ զովանայր, և զբօսնոյր՝ և շառաչ տարափոյն, և խլրտումն բուսոց, և խարշափ գողգոջելոց կանաչափայլ սաղարթուց, և կոկորդալիր տուրևառ շնչոյ. և ընդ կենդանանորոգ զուարթութեան էից՝ ապաագոյն և ազդուազդոյն զգայր զեղափոխութիւն իւրոյ բախտին:

Ահա քանի՛ առաւել կենդանի և կատարեալ զգացումն իւր այն լինէր, եթէ կարելր անդրադառնալ գուշակել որ ինչ յետ աւուրց հանդերձեալ էր յայտնել: Չի անձրևն այն փարատելոց էր զժանտախտն, և այնուհետև զգուշացան, եթէ ոչ զամենեսեան վկենդանւոյն մնացեալս տալոց էր ի գուբս, գոնէ ոչ ևս ուներ և զայլս կլանել, և ի միում եօթնեկի բանալոց էին առնաք և կրպակք. և ոչ ևս քառասնօրեայ զգուշութեան լինելոց էր յիշատակ, և հազիւ ուրեք երևելոց էին հետք՝ զորս պատուհասն այն ատ անդ սովոր է թողուլ:

Արդ ուղևորն մեր գնայր զուարթութեամբ, առանց սահմանելոյ ուր վկայ առնուլ, կամ գիշերել խակ ուրեք, ուշ ևեթ եդեալ յառաջ խաղալ, հասանել վաղագոյն ի գիւղ իւր, գըտանել զոք՝ ընդ որում խօսել, որում պատմել զնրա իւր, և գնալ անտի ի Փասթուրոյ ի խընդիր Ագնեսի: Գնայր, և միտք իւր յուզէին յանցից անտի առ օրին պատահելոց. և անդրէն սակս աղէտից արհաւրաց և վտանգաց ուշ ի կուրծս անկեալ՝ ասէր ի մտի. « Բայց գոյ զինքը, ու ըստնացած գոյ. ալ հիմայ խմն է Լուչիան »: Եւ վազս առնոյր յընթացս՝ սրակելով ցօղս զնրև, որպէս չուն Թաւահերը եղեալ ի ջրոյ: Շփեր ափ ընդ ափ, և գնայր արշաւասոյր, հետաղաւելով ինն ընդ ուզին զնորհուրդս՝ յառաւօտին և յերեկն ի գնալ իւրում Թողեալս անդ. և խնդրեր բերկրանօք, զորս յայնժամ մերժէրն ի մտաց, զկասկածանս, զդժուարութիւնս, զտարակուսանս գտանել

լոյ՝ կամ ոչ՝ զաղջկին կենդանի ի մէջ՝ բազմութեան մեռելոց և օրհասականաց, ի վերայ ածէր. « Բայց, փառք Աստուծոյ, ողջ գտայ զնինքը »: Յուշ ածէր զանցս աւուրն առաւել սոսկալիս, զվարանել իւր՝ զարկ դրանն ի ձեռին, « Հո՞ս է արդեօք՝ թէ հոս չէ », և զսխուր պատասխանին. զչունել պարապ խորհելոյ ի վերջ կատաղութեան խալխն անօրինաց ի վերայ հասելոց, զզգուշարանն, զծովահանգոյն բազմութիւնն՝ յորում խնդրէր զցանկալին, և ոչ գըտանել կարէր: Գառնային ի միտս նորա, վայրկեանն՝ յորում անցին գնացին սայլք զերծելոցն ի վտանգէ չև կազդուրելոց, տխրութիւն որպիսի՛, և զննչպիսի՛ վհատութիւն ի չգտանելն զնա ի նոսին, և լքումն այնուհետև. բարբառն յանկարծալուր յետիոսէ հիւղոյն, նորին խակ ցանկալոյն իւրոց բարբառ, և տեսանել զնա յոտին. կնձիռն ուխտին անլուծանելի հասեալ զհետ, և յեղակարծ լուծումն նորին. տեղութիւն ընդդէմ Ռոտրիկեայ և զայրոյթ դառնացուցիչ տառապանաց, և թուանաւորիչ սփոփանաց, այլ ապա անհետացեալ: Որպէս զի էր մարթ պատանւոյն ածել զմտաւ առաւելագոյն խնդութիւն, եթէ չէր ի վարանս զողջունէ Ագնեսի, թէ ոչ կասկածեր զկենաց Հօր Քրիստափորի, և ոչ տեսանէր տակաւին զնրև զաղեաս ժանտախտին,

Եհաս ընդ երեկս ի Սեսթոյ, և էր ինչ նշան գադարելոյ անձրևացն. բայց զգալով ըզծուռնկս գեռևս յուժի, և զի դժուարաւ ևս էր դառնել անդ տեղի ինչ անի, թէպէտև ողղեալ

էր անձրևաթաց՝ չարաբ ինչ փոյթ զայնմանէ. Նեղէր միայն առ քաղցն, զի բերկրութիւն սըրտի տայր նմա հալել զամենայն, Թող թէ զդայնի Թան վերարաւորին: Դիտէր աւետանել և անդ հացանոց ուրէք. և ահա հանդիպեալ գնեաց երկուս նկանակս. և առեալ զայնոսիկ ուշնէ լեօք և այլովք ևս արարողութեամբք, արկ զվին ի գրպան, և ճաշակելով զվիւան՝ չառաջ խաղայր:

Յանգանել նորա ընդ Մռնեցս էր գիշեր, սակայն չայրոցեաց նմա գտանել զդուռնն՝ որ հանէր յուղիլ ճանապարհ, որ չէր ինչ գիւրին: Եւ Թող զայս, որպիսի ինչ էր ճանապարհն այն աւեր, և որպէս տակաւ լինէր անգնալի ի ջուրց, ոչ է մարթ ասել: Խորացեալ որպէս ձոր գետոյ, և ուրէք փոսացեալ որպէս ջրամբար, և գժուարաւ էր խլել անտի զտես, Թող Թէ զկոչնակս. բայց Ինչպէս անցանէր որպէս կարէրն, առանց սարքանալոյ ընդ անկանել իւր յուղի, և ասէր ի մտի. « Ամեն չայր որչափ որ ալ աշխատանօք ընեմ, առաջ կը տանի զնս. Աստուած որ ուզէ՝ անձրևն ալ կը գադրի, առտու որ ըլլայ՝ ըրած ճամբաս պարապը գացած չըլլար, միշտ ըրած կըլլամ»:

Յաւելում զի չխորհէր ևս չայն ամենայն, բայց ուր հարկ լինէր. էին նմա որպէս ցընդմուընք մտայ և վաստակ մեծ՝ անցանել մօք ընդ արկածս ամայն տխրականաց, ընդ տագնապս սրտի, ընդ Թշուառութիւնս, ընդ վայրկեանս՝ չոր գրեթէ չուսահատեալ, ձեռընթափ կամէր լինել չամենայնէ. այլ ընդ հա-

կառակն պատկերէր ի մտի այլազգ ամենևին զհանդերձեալս, զհասանել Լուչիայի, զհարսնիկս, զկազմել տուն և ընտանիս, զպատմել իրեց զանցս և զամենայն զկեանս իւրեանց:

Իսկ Թէ զիա՞րդ ի կէս ուղեաց այնու դադրեցեալ մեղկութեամբ վայրաց չաջողէր նմա գտանել կամ գուչակել ըստ բախտի զուղիղն ճանապարհ, չունիմ ասել զչայն. զի և ինքն, որ ստէպ մանրապատում առնէր զանցս իւր, և երկարապատում իսկ, (և է կարծել ստուգիւ՝ անանուն մերում պատմագրի լռեալ զչայնոսիկ ի նմանէ չայլևայլ նուագս), սոսկր էր ասել. « Զեմ գիտեր որ ան գիշերը ինչպէս անցուցի, երազի մը պէս է ինծի »: Հաւասարի այն է, զի չառաւօտուն գտաւ չերեքս Ատտայ: Եւ անձրևն ոչ դադարէր. այլ որ հեղեղն էր չառաջ, փոխեցաւ ապա ի տարափ, և ապա ի ցօղ հանգարտ և անընդհատ: Ամպք բարձունք և ցանցառք քօղ լինն զերկինս աճեալ նաբրք և Թափանցիկ, այդ աղօտալոյս տայր նշմարել պատանեացն զգիւղօրէս չուրջանակի, չորս էր և իւրն: Անպատմելի է որ ինչ զգայ նա ի տեսիլն չայն. չկարեմ ասել այլ ինչ, բայց զի լերինքն այնոքիկ, և մծտագոյնն Ռեսկոն, և բնաւ իսկ երկիր Էքքոյի, Թուէին նմա իւրք:

Չայեցաւ և լինքն, ետես քան զոր կարծէրն այլանդակեալ զանձն, մածեալ զգեստս և զամենայն ինչ զիւրև, ողողեալ չոտից ցգլուխ, իսկ ի գօտւոյ և ի վայր սղմաչաղախ, որպէս զի եԹէ տեսանէր նա զինքն ի հայելւոջ, զե-

զերս խուրին ջրայեզց 'ի վայր անկեալ, մա-
ծեալ զգեստս 'ի գետն, առաւել ևս երևեր նմա
նորանշան: Վաստակեալ ևս էր յուղղոյն այլ
ոչ զդայր զայն. այգուն և գիշերոյ զով և տամ-
կութիւն տայր նմա խրախուսանօք խիզախել,
երագել յընթացս: Էր նա հասեալ 'ի Փէսքաթ,
քերէր առ յետին եզերօք Ատտայ. և ակնար-
կեալ 'ի Փէսքարէն՝ անդ ընդ կամուրջն, և ընդ
շաւիղս և ընդ արտորայս եհաս 'ի տուն բարե-
կամին առանձնականի: Որոյ այն ինչ յարու-
ցեալ, մինչդեռ կայր 'ի զնին օգոյ՝ սեսեալ
զկերպարանն զայն ջրողով և տղմուտ, ատացից
եակ և աղտեղի, այլ ժիր և աշխոյժ՝ որպիսի էր
նորա սեսեալ 'ի կեանս իւր զուարթ ոք 'ի
հանդամանս այնպիսիս, ասէ.

« Ի՞նչպէս, ասանկ օդով! ինչ ըրիր, զը-
տաը »: —

« Գտայ, հոն է Լուչիան, հոն »: —

« Ո՞ղջ առողջ »: —

« Այ աղէկ, բանուեր ու ըրընցեր է. պար-
տիկան եմ փառք տալու Ատտուծոյ, ընորհա-
կալ ըլլալու սուրբ Ատտուածածնոյ. մեծ բա-
ներ, սիրտ չեզխմանալու բաներ. եաքը կը պատ-
մեմ »: —

« Բայց առ ինչ վրայ գլուխ է »: —

« Աղուոր եմ հա՞ »: —

« Հաւատա որ վերի կէսովդ վարի կէսդ կըր-
նաս լուալ, կեցիր՝ աղէկ կրակ մը վառեմ
քեզի »: —

« Չէ չեմ ըսեր. գիտէս ուր բանէդ գիս ան-
ձրևը, բուն զգուշարանին գրանը առջին. բայց
օդը իր գործքը սեսաւ, ես լմն »:

Զոդաւ բարեկամն, էած կրկուտ տրձակս
երկուս, զմին եդ 'ի գետին, զմիւսն 'ի կրակա-
բանի. և 'ի կայծականց յերերկոյէ մնացելոց
յարոյց բոց փուխրանակի: Իսկ Ռինցոյ հա-
նեալ զնայր, և երկից և երկից թօթափեալ
զայն՝ հարկ 'ի բաց. մերկացաւ և զձորձս իւր
ոչ սակաւ աշխատանօք. և հանեալ 'ի դրպանէ
տափտափն զգանակին հանդերձ պատենիւն այն-
պէս ողով՝ որ 'ի Թուրջ Թուէր արկեալ, եդ
զայն 'ի վերայ սեղանոյ՝ ասելով. « Աս ալ աղէկ
զարգարուեր է անձրևէն. փառք Ատտուծոյ...
մազ մնաց որ... բայց եաքը կը պատմեմ ». և
շփելով ափ ընդ ափ՝ ասէ. « Հիմայ ինծի ուրիշ
շնորք մըն ալ ըրէ. ան ծրարն որ վերը ձգեր
էի՝ պառկած խուցիս մէջ՝ ինծի բեր. վասն զի
ինչուան որ չորնայ վրայի հագուստս »...

Դարձաւ բարեկամն հանդերձ ծրարիւն, և
ասէ. « Կարծեմ անօթի ալ ես. Ճամբան ըմպե-
լիք կրցած կըլլաս գտնալ, բայց ուտելիք »...—

« Երկու հայ գտայ, գնեցի. բայց չհտակը
մէկ ակռայիս չիբաւեց »:

« Թող ինծի ». ասաց բարեկամն, և լցեալ
ջրով զսան՝ կախեաց զչիթայէ կրակարանին, և
ասէ. « Ինչուան որ երթամ քիչ մը կաթ կը-
թեմ, ջուրը տաքցած կըլլայ. աղէկ փոխինդ մը
եփեմ սիմինթրէ. դուն քու հանգիստագնայէ »:

Ռինցոյ առանձինն մնացեալ, մերկացաւ և
զնեալքնակս իւր աշխատանօք, զի մածեալ էին
զիւրև, յամաքեցոյց զայնոսիկ, և զգեցաւ վե-
րըստին յոտից ցգլուխ: Դարձաւ բարեկամն,
մատեաւ 'ի սան անդր նստաւ և Ռինցոյ՝ մնալով

փոխինդին, և ասէ. « Հիմայ կիմանամ անօթի ըլլալս. աղէկ դիմացեր եմ այսչափ ժամ։ Բայց ասիկայ բան մը չէ, բոլոր օրը պատմելիք ունիմ. ինչ դարձեր է Միլան, տեսնալու բան, գանելու բան, բաներ որ մարդ իր վրան ալ տեսնայ՝ սիրտը չի քաշեր որ նայի. ըսել կուզեմ որ աս եկած ջրհեղեղը պէտք էր ըսնունք մաքրելու։ Կը լսես ալ՝ ինչ որ ան պարոնները ինծի ըրին. Թէ որ տեսնայիր զդուշարանը, խեղճուԹիւններու մէջ կը կորսուէիր. հերիք է, կը պատմեմ ամեն բան... Բայց Նոյեան հոն է, կուգայ ու կը պահպանէ. դուն պիտոր ըլլաս հնգահայր. ժանտախտ մանտախտ չեմ գիտեր, քանի մը ժամ մեկտեղ պիտոր անցընենք ուրբաԹուԹեամբ »։

Եւ կատարեաց գնոստուն իր՝ պատմել բարեկամին գործն ողջոյն. մանաւանդ գի ոչ դադարէր անձրևն, և կայր նա ի տան՝ մերթ առ իր, և մերթ պարապեալ առ հնձանին և առ տակառաց, և յայլ վաստակս ի պատրաստուԹիւն յայգեկուԹս. օգնէր նմա և Ռէնցոյ, գի սովոր էր ասել. « Ես անտնցմէ եմ, որ աւելի կը յոգնիմ պարապ կենալէն քան աշխատելէն »։ Այլ ընդ երեկս ոչ կարաց յետս կալ ի գնալոյ վայրիկ մի ի տուն Ագնիսի, առ ի տեսանել զնշանաւորն պատուհան, և չիւել անդ ամ ընդ ամ։ Զոգաւ և դարձաւ ծածկաբար, և էլ ապա ի մահիճս։ Ի վաղիւ անդր վաղվաղ էլաւ նախ քան զծագել այգուն, և տեսաւ՝ գի գագարեալ էր անձրևն, ուղղոյ եղև ի Փասթուրոյ։

Այդ գեղեա խորին էր յորժամ եհաս նա անդր, քանզի փուԹայր ոչ ինչ նուազ քան զընԹերցողն իմ ի վախճան։ Խնդիր արար զԱգնիսէ, գիտաց զոզջուհնէ նորա, ցուցին նմա ոը նակ մի ի բացեայ՝ ուր բնակէր. չգաւ անդր, ձայնեաց զնա ի փողոցէ, և եկն նա ի պատուհան. և մինչդեռ կայր բերանաբաց ասել ինչ նմա, կանխեաց Ռէնցոյ. « Ողջ է Լուչիան՝ գիտեմ, ըսընացեր է, տեսայ զինքը մեկալն օր, բարև կընէ, շուտով կուգայ »։

Ընդ ապշուԹիւն ի տես պատանւոյն, ընդ ուրախուԹիւն ի լուր աւետեացն, և ընդ հառաչանս աւելի ինչ գիտելոյ, մերթ բացագանչէր, մերթ հարցանէր՝ առանց ճնալոյ պատասխանւոյն, և ի մռայլծնս արկեալ զզգուշուԹիւն՝ զոր ի բաղմոց հետ սովոր էր առնել, ասէ. « Հիմայ կուգամ կը բանամ »։ —

« Չեմ վախնար ժանտախտէն, չեմ կարծեր որ բռնուած ու անցուցած ըլլաս »։ —

« Չիբռնուեցայ. հապա գոնէն »։ —

« Բռնուեցայ, ուսոկ պէտք է զգուշանաս ինծմէ. Միլանէն կուգամ, կը պատմեմ, ոսքով գլխով բուն ժանտախտին մէջը մտայ. իրաւ է բոլոր զգեստներս փոխեր եմ, բայց անիկայ սխտ մըն է՝ որ չի կարծած բանէդ երբեմն կը պըղըչաքկի։ Ասատած զքեզ ինչուան հիմայ պահեր է, կուզեմ որ աղէկ նայիս զքեզ մինչև բոլորովին դադրի վտանգը. վատ գի մեր մարիկն ես, կը փափաքիմ որ մեկտեղ տալրինք երկան տարիներ ուրախանանք մեկտեղ՝ այսչափ բան քաշելէն ետքը, գոնէ ես »։ —

« Բայց »... կամքը Ագնէս հարցանել, և կըրճատեալ Ռէնցոյ զբանս նորա, ասէ.

« Բայց մայր չուզէր , գիտեմ ըսելիքդ, կը լսես կիմանաս որ բայլ մեղ չեմնար. հիմայ բաց տեղ մը երթանք, որ կարենանք հանգիստ առանց վտանգի խօսիլ. կը լսես, կիմանաս »:

Եւ եղյյ նմա Ագնէս զպարտէզն յետոսէ ետնակին, և ասէ. « Մոր հոն. երկու տախտակէ աթոռ կը գտնաս դիմացէ դիմաց, կարծես որ մեղի համար պատրաստած. ես ալ շուտ մը կուգամ »:

Զոգաւ Ռէնցոյ, նստաւ 'ի միւսմն յաթոռոց անտի. եհաս և Ագնէս վայրկ մի յետոյ, բազմեցաւ 'ի միւսումն. և ոչ երկբայիմ, զի եթէ գտաներ անդ ընթերցողն՝ տեսանել զնոսա, և ականջալուր լինել խօսից նոցա, լսել զպատմութիւն երկաքանչիւրոցն, զհարցուածս, զպատասխանիս, զբացատրութիւնս, զցաւակցութիւն, զկրս Ռոտրիկի, զՀօր Ֆրիտտափօրի, և զամենայնի, և զպատկերս հանդերձելոցն վայելից նկարագրեալ 'ի նոցանէ պայծառ և հաւատալի որպէս զանցելոցն, ոչ ինչ երկբայիմ՝ զի զմայլէր, և չկարեր մեկնել անտի: Այլ զնոսակցութիւնն զայն վերծանել 'ի քարտիսի համր բանիւք նկարագրեալ լուռ սևակաւ՝ չորս և ոչ նոր ինչ անծանօթ գտանէր, թուի ինձ զի չեցէ նմա փոյթ, և ախորժիցէ ինքնին գուշակել: Կնիք բանից նոցա եղև՝ գնալ բնակել ամենեցուն նոցա 'ի միասին յերկիրն Պերգամոյ, ուր վաղ իսկ յարմարեալ էր պատանւոյն զիրս իւր. բայց չէր մարթ սահմանել ըզ-

ժամանակին՝ չև գադարեալ ժանտախտին, և այլոց ինչ հանգամանաց ժամանակին 'ի չայտ եկեալ: Բայց միաբանեցին՝ ընդ գագարել վտանգին գառնալ Ագնիսի 'ի տուն, ձեալ գալըստեան Լուչիայի, կամ Լուչիայի սպասել անդ, և Ռէնցոյի երթևեկել 'ի Փասթուրոյ, տեսանել զԱգնէս, և զեկուցանել նմա զկարևորս:

Կամքը իսկ նախ քան զմեկնելն տալնմա արծաթ, և ասէր. « Խոտս են ոսկիները, բոլորն ալ պահէր եմ. ես ալ ուխտ ըրեր էի՝ չծգպչիլ անոնց քանի որ բաներնիս չէր որոշուած, հիմայ թէ որ կարօտութիւն ունիս, պնակ մը քացախով խառնած ջուր բեր, որ մէջը ձգեմ յիսուն հատիկ սիրուն ու փայլուն ոսկիներ »: —

« Չէ, չէ, ես ալ դեռ ունիմ անոնցմէ ինծի պէտք եղածէն եւեր. քովդ եղածները պահէ, պէտք կըլլան՝ տուն տեղ պատրաստելու՝ տեղաւորուելու »:

Դարձ արար Ռէնցոյ 'ի գիւղ իւր ուրախացեալ ևս ընդ գտանել ողջ և առողջ զսիրելին իւր զԱգնէս. և զմեացուած տունջնեան և զգիշերն զայն ողջոյն կացեալ 'ի տան բարեկամին, 'ի վաղիւ անդր ուղեւոյ եղև անդրէն ընդ այլ Ճանապարհ 'ի նոր հայրենիս իւր: Եգիտ անդ զՊօրթոլոյ՝ առողջ և զնա, և 'ի նուազ երկիւղն կորուսանելոյ զնա, զի 'ի սուղ աւուրս կերպարանափոխ լեալ էին և անդ երբ. սակաւք ախտացեալ, ոչ ևս որպէս յառաջն վտանգ, ոչ ևս կապուտակ և մահացու կերպարան ախտին, և ոչ այնպիսի նշանակք, այլ յանձնապաղոյնս որպէս տենդ ընդհատ, և թէ շատ՝ պալար ինչ

փոքրիկ ՝ի վեր երևեալ, դարմանելի որպէս այսոցիկ ընդհակառակ: Թուէր կերպարանափոխ լեալ գիշէն. որք կենդանւոյն ճիացեալ էին անդ՝ սկսանէին երևել արտաքոյ, ՝ի համար ածել զերեսս, ցաւակից և խնդակից լինել երեսաց. խօսէին դառնալ ՝ի վատակս իւրեանց, տեսլեք խնգրէին վարձել աշխատաւորս, մանաւանդ արուեստից՝ որոց յառաջ իսկ քան զժանտախտն սակաւք էին գործաւորք, որպէս ՝ի գործ մեռաքսի: Ոչինչ, առանց ընդ բանս լինել ածելոյ, խոստացաւ Պօղթողոսի մնանել անդրէն ՝ի ծառայութիւն նորա՝ կեհաւորել իւրովքն ընականալ անդր, ոչինչ զվարձուց սակ արկեալ. և պարապէր ՝ի պատրաստութիւն կարևորաց: Եգիտ ընդարձակագոյն իւր տուն անաչխատ և դիւրագնի. զարդարեաց զայն կահիւք և կարասւով՝ ասս ուրեմն ձեռնարկեալ ՝ի գանձն, առանց բազում ինչ ծախելոյ անոմ. զի բազմագոյնք էին յայնժամ քան զընդունս վաճառք:

Յետ աւուրց դարձաւ ՝ի գիւղ իւր, և եգիտ զայն առաւել ևս ՝ի լաւ անդր նկրտեալ. փութացաւ ապա ՝ի փասթուրոյ, եառս զԱգնէս քաջալերեալ բոլորովին, և պարապտեալ դառնալ ՝ի տուն. և էած զնա անդր: Ոչ յաւելում որ ինչ զգացմունք, որ ինչ բանք եղեն նոցա ընդ միմեանս ՝ի տեսանելն ՝ի միասին ընդվայրան զայնոսիկ:

Եգիտ Ագնէս զամենայն որպէս և Թողեալն էր ՝ի տան, և ասէ. « Խեղճ՝ որքևարիւ մը ուրք աղջկան մը բաներուն՝ հրեշտակները պահ-

պանութիւն ըրեր են. մենք կարծեցինք որ Աստուած երեսէ ձգեր է զմեզ, չէհոգար, թողուցեր է որ քիչ մը ուշեցածնիս ալ առնեն տանին. բայց հիմայ տեսանք որ ամենևին ներհակն է եղեր: Մեկալ կողմանէ աղուոր ոսկիներ ալ խրկեց, որոնցմով կրցայ ամեն պէտք եղածը ձարել. ամեն պէտք եղածը կըսեմ, բայց անանկ չէ. Լուչիային համար պատրաստած օժիտս ալ ուրիշ բաներուն հետ տարեր էին, ան կը պակսէր, Աստուած անիկայ ալ ուրիշ տեղայ խրկեց: Ո՞վ կրնար անիկայ պատրաստելու ատենս ըսել ինծի. Ագնէս, դուն կը կարծես որ Լուչիային համար կաշխատիս. ո՛վ գիտե ատ կտաւներըդ՝ ատ զգեստներըդ՝ ո՛վ պիտոր հագնի, իսկ Լուչիային պէտք եղածը բարերար մը պիտոր հոգայ, որուն աշխարքիս վրայ ըլլալն ալ չես գիտեր »:

Առաջին հոգ Ագնէսի եղև պատրաստել յաղքատին տան իւրում սենեակ վայելուչ բաներաւ տիկնոջն. ապա եւ ՝ի խնդիր մեռաքսի առ ՝ի զբօսանս նորին, եթէ կամիցի ածել զայն ՝ի կծկիկ: Եւ ոչ Ոչինչ կայր անդորձ յաւուրսն յայնոսիկ երկարատեւս վասն իւրաքանչիւր բաներաւք կրկին էին նորա քան բաւական, և էտ զանձն ՝ի վատակս չլինականս. մերթ օգնէր իւրումն վանտարի, որում յայնոսիկ մեծ էր յայնպիսւոյ ժամանակի ունել տեսակ օգնական ՝ի գործ, զայնպիսի որ ձարտար. և մերթ մշակէր և զարդարէր զփոքրիկ պարտէզ Ագնէսի, որ ՝ի կալ նորա ՝ի բացեայ՝ խոպանացեալ էր. իսկ զիւրն անտես առնէր՝ ասելով. « Թըն-

ձուք կեղծամ մը (ֆէռռուքա մը) դարձեր է, եր-
կու ձեռք չիբաւեր կարգի գնելու անիկայ »:
Եւ ոչ իսկ գնայր անդր, և ոչ ի տուն իւր, ալ
յաւէր նմա տեսանել զայն աւար հարեալ, և
հաստատեալ էր ի մոխ վաճառել զայն և ա-
նարդ գնոց, և ծախել ի նոր հայրենիս իւր՝ որ
ինչ և չահէր անտի:

Որք սալրեալքն էին ի գեղջն, Թուէին մի-
մեանց որպէս ի մեռելոց յարուցեալ. իսկ
ալիենցոյ համարէին գիւղակիցք իւր որպէս
կրկնակի վերկենցաղեալ, հրաւիրէին զնա առ
իւրեանս, խնդային լսել զանցս նորա: Բայց
վճիռ աքսորանացն! — ոչ ևս խորհէր նա յայն-
ոչ միայն վասն ժանտախտին՝ որ բազում ինչ
իրաց լինէր խափան, այլ և զի բազում այլ ու-
րեք ի ժամանակին յայնմիկ հրովարտակք հա-
սարակաց և առանձնականք, եթէ չէր ոք ոխե-
լիմ հզօր՝ որ ուներ զայնոսիկ յուժիւ և ոյր
կառարել, անգործ մնային ի յամէն. որպէս
գնատակք հրազինուց՝ վրէպ ի հարուածոյ ան-
կեալք՝ մնան յերկիր, ուր չեցեն ումեք խա-
փան: Այրգասիք սովորք յաձախելոյ գհրովար-
տակս: Զի զօրութեան մարդոյ է չափ ինչ և
սահման, և ուր հրամանք յաձախեն քան զկար
ածելոյ զայնոսիկ ի կատարումն, հարկաւ մնան
անգործք:

Որոց միանգամ ցանկալի է գիտել՝ Թէ որպէս
Ալենցոյ, ի սպասէն ի գեղջ անդ, վարեր ընդ
առ Ապռնաեայ, յաւելում զի կայն նորա հե-
ռի ի միմեանց. առ Ապռնաիոս առ ահի լսելոյ
զնախերգանս Պօակի, ի խորհել իսկ յայն առ

անէր ասոի յանգիման աչաց զՊոտրիկ սրիկ-
կայիւքն իւրովք և անտի զկարգինալն ասատիւք
բանականաւք: Իսկ Ալենցոյ հաստատեալ էր ի
մոխ չխոսել ինչ զայնմանէ՝ չև պատրաստեալ
զամենայն, Թէ գուցէ գրգեսցէ զնա նախ քան
զգէտ ժամանակ ի յարուցանել գժուարու-
Թիւնս ընդունայն քրիստոնէից: Ընդ Ապենէի
զլուչիայէ միշտ էր նոցա խոսակցութիւն. մին
հարցանէր՝ « Ի՞նչ կը կարծես, կուգա՞յ շու-
տով» , միսն պատասխանէր՝ « Կարծեմ որ չու-
շանար » . և բազում այն էր, զի որոյ զպատաս-
խանին զայն առեալ էր՝ սուղ ինչ յետոյ ինքն
զնոյն առնէր հարցուածս. և այսպիսի հնարիւք
դուն գործէին համառօտել զժամանակն, որ և
քան զևս քան զանցեալն Թուէր երկարագոյն:
Իսկ մէք փուԹացուք արագագոյն տալ ընԹեր-
ցողաց անցուցանել զայն, պատմելով կարճ ի
կարճոյ, զի յետ աւուրց ինչ մեկնելոյ Ալենցոյի
ի զգուշարանէն՝ եղ անտի Լուչիա ընդ բարե-
գութ այրսոյն. հրամայեցաւ զգուշութիւն հա-
սարակաց զաւուրս քառասուն. արարին զայն
և ինքեանք ի տան այրսոյն, պարապեալ ի
հանգերձանս օժտին՝ յոր հարկ եղև և Լու-
չիայի յետ բանից ինչ բարեձևութեան օգնել
նմա. և ի կատարել աւուրց զգուշութեան՝
յանձն արար նա եղբօր իւրոմ հոգաբարձուի
գտան և զկրպակ իւր, և պատրաստեցան ուղ-
ևոյ լինել: Մարթէր յաւելուլ ասա և զչու նո-
ցին և զհասանել, և որ ինչ յետ այնորիկ անցք,
այլ երեք ինչ՝ որ ի միջոցի ասա անցին՝ չիա-
րեմք անյիշատակ առնել, գէթ զերկուց յայն-

ցանկ և ընթերցողք սոգոտանիցկեն զլուծիւն, թէպէտև ցանկալի է մեզ օգնել ձեռոյ նոցին ՚ի գիտել զէջս երացս։

Առաջին՝ զի ՚ի պատմել Լուչիայի միւսանգամ զանցս իւր այրոյն, մանրապատում առնելով որ ինչ էջր կարացեալ ՚ի յոյզս սրտի նախկին մտերմութեան, և ՚ի յիշել առանձին զՏիկինն՝ առ որում պատսպարեալ էր ՚ի Մոնցա ՚ի կուսատանին, լուաւ զնմանէ երս՝ որ լուծին ՚ի միտս իւր գաղանիս բազումս, և յայսոցն հաւատ ազեատալի և սոսկալի զարմացմամբ։ Գիտացյայրոյն՝ զի եղկելին այն անկեալ ՚ի կասկածանս գԺնդակ եղեռնութեանց, ածեալ էր պատուիրանաւ կարգինալին ՚ի վանս ուրեք ՚ի Միլան, ուր յետ ջայրագին կատաղութեան և յուսահատ ձգանց զգաստացեալ և խոստովանեալ էր, և այնուհետև կենցաղնորա էր առաջի խարուեթիւն այնպիսի կամակոր, որպիսի չէր հնար ումեք բայ ՚ի նմանէ ածել զմտաւ։ Որ կամիցին գիտել զսխուր պատմութիւն նորա մանրամասն, գայեն զոյն ՚ի մատենի՝ զոր այլուր յիշատակեցաք։

Երկրորդ՝ զի Լուչիայի հարցեալ զողջոյնէ Հօր Քրիստափորի զամենայն վեղարաւորս՝ զորս ՚ի զգուշարանի անդ եռես, գիտաց առաւել և տրամութեամբ և զարմացմամբ, զի վախճանեալ էր նա ՚ի ժամուսխտ։

Եւ երրորդ՝ զի Լուչիա, նախ քան զմեկնել իւր ՚ի Միլանէ, կամեցաւ գիտել ինչ զառաջնոց տեսից իւրոց, և որպէս ինքն ասէր՝ հնարս ունել ըստ պարտեաց, եթէ ոք ՚ի նոցանէ մնա-

ցեալ էր կենդանի։ Այրին ինքնին էած զնա ՚ի տուն անդր, և գիտացին՝ զի երկոքին ևս այր և կին մեռեալ էին։ Զպարաբսեաց ակնոցէ չէք ինչ ասել, բայց զի և նա վճարեալ էր ՚ի կենաց։ Այլ զՖերրանտեայ, զի էր այր գիտնական, պատմիչն մեր անանուն պարտ համարի տալ ինչ տեղեկութիւն, և մեք յանձն առեալ զվաստագ տագտկալի լինելոյ, զնոյն գրեթէ որպէս ինքն աւանդէ երկրորդեացոյնք։

Այդ ըստ պատմելոյ նորա, ընդ հնչել համբառոյ սրածութեան՝ եղև Ֆերրանտ մի ՚ի ժըմտոզաց զայն, կացեալ հատատուն միշտ ՚ի նոյն կարծիս. ոչ աղաղակաւ հանդոյն ամբոխին, այլ պատճառաւք՝ յորս չէ մարթ ժխտել, զի էր ինչ կարգաբանութիւն, զի այսպէս պատճառաբանէր.

« Ի բնութիւն էրայ այսինքն աշխարհս վրայ էրկու տեսակ բան կայ, գոյացութիւն և պատահումն. երբոր յուցընեմ որ ժանտախտը առնց ոչ մկին և ոչ մկիացը կրնայ ըլլալ, ցուցացած կըլլամ՝ որ չինծու բան է։ Գոյացութիւնները կամ հոգեղէն են, և կամ նիւթեղէն. մկը չընդունիր որ ժանտախտը հոգեղէն գոյացութիւն ըլլայ, ուրեմն աւելորդ է անոր վրայ խօսիլ։ Իսկ նիւթեղէն գոյացութիւնները՝ կամ պարզ են, կամ բաղադրեալ. ժանտախտը պարզ գոյացութիւն չնկրնար ըլլալ. ասիկայ երկու իրեք բառով կը յուցուի։ Օգեղէն չէ, վասն զի օգեղէն որ ըլլար՝ մարմնին մարմին չէր անցներ, երկինքը կելլէր. ջրեղէն ալ չէ, վասն զի ջրեղէն որ ըլլար՝ կը թըր-

ջէր, ու հովէն կը ցամքէր : Հրեղէն ալ չէ, վասն զի ջայրեր. հողեղէն ալ չէ, վասն զի չէ-բնաւ : Բաղադրեալ գոյացութիւն ալ չեկերը-նար ըլլալ, վասն զի ան ատեն ալ պէտք էր ոե-սանելի ու չօշափելի ըլլար. բայց ոմ ատեր կամ չօշափեր է զինքը » :

« Հիմայ կը մնայ քննել որ կրնայ ժամա-նախառ պատահում ըլլալ, ամ դէշ : Ատ պարոն-ներդ կրսեն որ ժամանախառը մարմինէ մարմին կանցնի. աս է իրենց Աքիլլէսը, այսինքն ամե-նէն զօրաւոր պատճառը. ասով փուճումուճ կանոններ կը հնարեն : Թէ որ ժամանախառը պա-տահմանէք ըլլար, պէտք էր ուրիշ գոյացու-թեան մը վրայէն փոխադրուած ըլլար, որն որ հակառակ է. վասն զի բոլոր փիլիսոփայու-թեան մէջ ասկէց յայտնի բան չկայ, որ պա-տահումը էնթակայէ էնթակայ չանցնիր : Թէ որ աս Շիլլայէն՝ այսինքն աս վատնդէն փախչե-լու համար ըսեն որ ինքիրմէն առաջ եկած պա-տահում մըն է, ան ատեն դիմացի ժայռը՝ այս-ինքն ֆարիրզինին կը զարնուին. վասն զի ինք-իրմէն առաջ եկած որ ըլլար, չէր կրնար ուրիւ-շի անցնիլ, չէր կրնալ պլըշարկիլ՝ ինչպէս որ ի-րենք կերևակայեն : Մէյմը աս հիմը գնեցին Եաքը, անօգուտ կըլլայ այսուհի՝ եղունգի՝ խա-զաբաժի վրայ խօսիլ » :

Ի լուր պատճառաբանութեանս այսորիկ՝ ի միտ աւուրց չկարացեալ ուրուք լսել, գո-չեաց. « Ի՞նչ խմաստակութիւն » :

Պատասխանի եւս Ֆերրանտ. « Չէ, չէ, ան չէ իմ ըսածս. գիտութիւն ըլլալը՝ գիտութիւն

է, բայց պէտք է գործածելը գիտնալ : Ա՛յսպէս՝ եղունգ՝ խաղաբաժ՝ կապուտակ պալար՝ թխա-ծիկ մարմնոյ ասոնց ամենն ալ յարգելի անուն-ներ են, ամենն ալ իրենց նշանակութիւնը ու-նին, բայց մեր խնդիրն դուրս բաներ են. ոմ կուրանայ ասոնց կարելի ըլլալը. բանը գիտ-նալն է որ ասոնք ուսկից առաջ կուգան » :

Ա՛սա սկսանէին վայք Ֆերրանտեայ, ցորչափ հերքէր նա զկարծիս սրածութեան գոլոյ մի յախտից, յակճիռս կային ունկնդիրք յօժա-րակամ. զի չէ մարթ ասել քանի զօրաւոր են բանք գիտնաւոր վարժապետի՝ ի վարդապե-տել ղերայ ըստ կարծեաց ունկնդրոյ : Ա՛յլ՝ ի կամել նորա զանազանել և ցուցանել, զի վրի-պակ բժշկացն այնոցիկ չէր՝ ի հաստատել նոցա զգոյութիւն սոսկալի և հանրական ախտին, այլ՝ ի տահմանել զպատճառ նորին, յայնժամ (զնախնի ժամանակաց է բանս՝ յորս չէր մարթ զպրածութիւն համարել ախտ) յայնժամ փո-խանակ լսելեաց բանային լեզուք ապստամբք և անհամբերք, և չէր մարթ ձառել զայնմանէ և վարդապետել համարձակ, այլ հարեանցի և հատակոտոր :

Եւ յաւել. « Ա՛ս է բուն պատճառը, ու հարկ է որ ընդունին ասիկայ անոնք ալ՝ որ օդու վրայ կը հաստատեն իրենց կարծիքը... Կրնա՞ն ու-րանալ Երևակին ու Լուսընթագին ազեցալի զուգընթացութիւնը. ո՞ր լսուած է որ աստ-ղերուն ազդեցութիւնը պլըշարկուի... բայց Թող ուրանան նայիմ անոնց ազդեցութիւն ու-նենալը : Կրնա՞ն ըսել որ աստղերը՝ բարձի վրայ

խոթած գնաստեղն պէս՝ երկինքը անգործ կը կենան։.. Խելքս չհասնիր ատ բժիշկներուն մտածութեանը. կընդունին որ գէշ զօրքն թացութեան տակ ենք, ու եաքը ինչ երեսով կըսեն մեղի՝ ասոր մի դպչիք, որ ապահով ըլլաք. իբրև թէ երկրի վրայ ատ կամ ան բանին չդպչիլը՝ երկինքին աստղերուն ազդեցութիւնը կրնայ արգիլել, ու հաշխատին այնչափ լաթեղէնները այրել տալու. խեղճ ողբմելիներ, Լուսընթագը երեցէք, Երեւակը երեցէք »։

Յայսոխ ապաստան, այսինքն՝ ի վերայ գեղեցիկ հիմանցս այսոցիկ վստահացեալ Ֆերրանտ, չառնէր ինչ զգուշութիւն. և հարեալ՝ ի ժանտ ախտէ անկաւ՝ ի մահիճս, և մեռաւ որպէս զմի ի գիւցազանցն Մեթասեթասեայ՝ ընդ աստեղս պայքարելով. և հուշակաւորն այն իւր մատենագրան թերիս դեռ սփռեալ կայ առ որմովք փողոցաց՝ ի վաճառս։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Ի միում աւուրց ընդ երեկս լուաւ Աքենէս շչիւն անուաց, և զգաստարել կառապ առ դրան, և դիւէաց խնդութեամբ. « Լուչիաս պիտոր ըլլայ »։ Եւ էր արդարև ինքն Լուչիա ընդ բարեդութ այրոյն։ Ջեղանակ ողջունից նոցա և ըզհամբուրից՝ ընթերցողն ինքնին կարէ ածել զմտաւս։ Ի վաղիւ անդր այդուն գայր Ռէնցոյ սթափիլ զհոգս իւր ընդ Աքենիսի՝ վասն յաջողոյ Լուչիայի. և՝ ի տեսանելն զնա անդ՝ որ ինչ արարն և ասաց, զայն և թողում ընթերցողացդ դուշակել։ Այլ զկերպ ողջունին Լուչիայի չէ ինչ դժուարին պատմել. զի խոնարհեալ զաչս իւր անայլայլակ, ասաց և եթէ. « Բարի տեսանք, ինչպէս ես »։ Եւ ոչ պատանին խոովեցաւ, ցորքա ինն զեղանակ ընդունելութեանն համարեալ. այլ քաջ՝ ի միտ հառ զնմանատ բանին

'ի ձեռ ասացուածդն՝ որ յոյժ սլաղդ էր յողջունելոյ զայս 'ի ծանօթից, որպէս է սովորութիւն առ բարեկիրթ մարդիկ. վասն որոյ և ինքն ընդհակառակ եւս պատասխանի. « Փառք Աստուծոյ աղէկ եմ, ու ալ աղէկ գքեզ տեսնելս » :

Եւ Լուչիա ասէ. « Հապա մեր խեղճ Հայր Բրնատոն որը ! աղօթք ըրէ հոգւոյն համար, թէ և կրնանք ապահով ըլլալ՝ որ ինքը հիմայ երկինքը մեզի համար բարեխօս է » :

Ինճոյ ասէ. « Կը սպասէի աս դոյժը լսելու » : Եւ ոչ այս միայն խօսք աղջկանն՝ Թէպէտ և սխալի, այլ և որ ինչ այլ ասէրն՝ զմայլելի էր պատանւոյն. և որպէս երկիւղ ամէն կին ուրեք առեալ գաւիթ հատանէ զառաջինն, առնու և դնէ զոտն 'ի նմին կայն, և ապա յանկարծ սրանայ ետք 'ի հողմոյ յափշտակեալ, այսպէս էր նմա ժամանակն այն. վայրկեանք սուղ ինչ յառաջ Թուէին նմա ժամք, և արդ ժամք Թուին նմա վայրկեանք : Իսկ այրին բարեւաւ ոչ միայն էր ինչ նոցա խոչ, այլ օգնէր և նոցա. չկարէր պատանին 'ի տեսանելն զնա յանկողնի՝ զմտաւ ածել, զի էր նա այնպիսի բարեհամբոյր և զուարթ. բայց այլ և զգուշացան և այլ առանին, այլ մահ և այլ հարսանիք : Իսկ զընտանութիւն նորա ընդ Լուչիայի՝ բերկրութիւն էր տեսանել, գորովալի և զուարճալի, քաղցրութեամբ և անբռնազատ սոյր նմա զեղանել զցնծութիւն սրտին :

Ասաց ապա պատանին. « Հիմայ երթամ ժողովրդապետին հետ Պասկին օրը ու տեսնը ո-

ջոչինք » : Եւ երթեալ առնա, զաւեշտախառն յարդութեամբ ասէ. « Տէր Հայր, գլխուդ ցաւը անցաւ վերջապէս, որուն համար ուշացուցիր մեր Պահը. ալ հիմայ առեւն է, հարսնացուն հոս է, եկայ խմանալու որ երբ կրնաս հանդստեամբդ զմեզ պսակել. բայց կը խնդրեմ որ աս անգամ լմնցընես » : Ոչ հրաժարեաց տէր Ալոնսոյ, այլ սկսաւ դեգևել, պատճառանս դարձեալ կցկցել և յորդորանս. « Ի՞նչ պէտք է որ իմ անուշս ծամծմուխ, աքսորացդ հրամանագիրը դեռ կեցած է, կրնաս դուրսը պսակուիլ », և այլն և այլն :

« Հասկըցայ », ասէ պատանին, « դեռ գըլխուդ ցաւը բոլորովին չէ անցեր. բայց մոխիկ ըրէ » : Եւ սկսաւ նկարագրել՝ յոր հանգամանս կայր եղկելին Ռոտրիկ, և զի անտարակոյս վճաբեալ էր յայնժամ զկեանս, և կիսբեաց. « Յուսանք որ Աստուած ողորմի հոգւոյն » :

Տէր Ալոնսոյ ասէ. « Ասկից վերաբերուԹիւն չունի Պասկիդ հետ. ինչ, կարծես որ չեմ պսակեր ըսի՞ղձեղ. ինչո՞ւ չպսակեմ. խօսքդ քու ապահովութեանդ համար էր : Բայց աս ալ կայ որ, քանի որ չունչը վրան է... Նայէ, ես արդէն ձաթած փարչ մըն եմ, մէկ ոտքս անդին՝ բայց դեռ կապրիմ... գլխուս փորձանք մը գալու որ ըլլայ... հերիք է... կը յուսամ որ քիչ մըն ալ ապրիմ: ԻնուԹիւններ ալ կան որ, մտածէ մէյմը... Բայց ինչպէս որ ըսի, առանք մեր բանին հետ վերաբերուԹիւն չունին » :

Եւ յետ այլ ևս բանից ինչ և պատասխա-

նեաց, որոց ոչ աւելի և ոչ նուազ էր նշանակութիւն, մատոյց նմա Ութնոյ խոնարհ մեծարանս, և դարձ արարեալ առ իւրան, պատմեաց զամենայն, և յաւել. « Մ'էիկն ելայ եկայ վասն զի լեցուած էի, յուզեցի համբերութիւնս վերանգի գնել, ու իր պատիւն ալ ոտքի տակ առնել: Աստն առն առջի թիւիկը կը գառնար, նոյն դէմքը, նոյն խօսքերը. քիչ մըն ալ քշելու որ ըլլար, նորէն պիտոր սկըսեր գրաբառ խօսքերով վրաս յարձակիլ. ալ աղէկ է ըսածին պէս ընել, երթալ դուրսը պահուիլ, ուր որ պիտոր երթանք »:

Ասէ այրին. « Գիտէք ինչ կընենք. մէյմը մենք ալ հնկակը կերթանք կը փորձենք, կրնայ ըլլալ որ յաջողի. ես ալ կուզեմ ճանչնալ սա մարդը՝ բայց կերակրէն ետքը, հիմայ մեկէն վրայ չկրնանք: Ութնոյ, քիչ մը պտըտելու տար երկուքս, քանի որ Ագնէսը զբաղած է. ես Լուչիայէն մայրութիւն կընեմ, կուզեմ աղէկ մը սա լեռնները տեսնել, մանաւանդ լիճը՝ որուն վրայ շատ լսեր եմ: ինչ ալ որ քիչ մը տեսայ՝ շատ աղուոր տեղ կերևնայ ինծի »:

Եւ էած զնոսա Ութնոյ նախ ի տուն տապալջականին իւրոյ, ուր արարին ուրախութիւն մեծ. և ընկալան ի նմանէ խոստումն ճաշելոյ ընդ իւրեանս, ոչ միայն ի նմին աւուր, այլ և հանապազօր ըստ կարի,

Ապա յետ ճաշուն եղ գնաց Ութնոյ, առանց ասելոյ ուր գնայն. և կացին մնացին անդ կանայք խօսել միաբանել ի հնարս տանելոյ զտէր Ապոնոիոյ, և ապա ուղեւոյ եղեն, հասին առ նա:

« Տնկըւեցան » ասէ ի մոխ տէր Ապոնոիոյ. բայց զուարթ դէմս եղոյց նոցա. արար խընդակցութիւն բազում ընդ Լուչիայէ, ետ ողջոյն Ագնեսի, և մատոյց մեծարանս հիւր տիկնոջն. բազմեցոյց զնոսա, և սկսաւ խօսել ըզժանտախտէն, խնդրեաց լսել ի Լուչիայէ որպէս զերծեալ էր ի վտանգէն. և ի զգուշացանէ անտի առեալ պատեհ, խօսեցաւ և զսենեկակից տիկնոջէն. ապա պատմեաց ըստ պատշաճի և զվտանգ իւր, և ապա ուրախակից եղև ընդ Ագնեսի՝ վասն չմերնելոյ նորա ի ժանտախտէն: Բայց ի սկզբանէ անտի կանայքն երիտքին խնդրելին պարապ խօսելոյ զիւրաքանչինէն, և ոչ գիտեմ ո յերկոցունցն սկիզբն արար: Բայց տէր Ապոնոիոյ չլսելոյն առնէր, ոչ ասէր չլսեակէ, այլ սողէր գալարէր, ասա ի յոտատոյ ընդոստնոյր. « Պէտք է նախ սա աքսորականքին հրամանագիրը վերցընել տալ վրայէն. հրամանքդ, խանթուն, որ միջնցի ես, շատէն քիչէն անցած գացածը գիտես, ճանչցուորներ կունենաս պաշտօնականներէն, անոնց ձեռքով ճար մը կրնաս ընել: Իսկ թէ որ կարճ ճամբան կը փնտրուես առանց աշխատանքի, հարս ու փեսայ ու մեր Ագնեսն ալ գիտաւորութիւն ունին ասկէց երթալու, (չեմ գիտեր ինչ ըսեմ, մարդուս հայրենիքը հոն է՝ ուր որ իր հանգիստը կը գտնայ), ինծի կերևնայ որ ամեն բան դիւրին կըլլայ հոն ընելը, աքսորանքի վախ ալ չկիայ հոն: Ես ալ կը բաղձամ զիրենք պահակելու, բայց կուզեմ որ աղէկ կերպով խաղաղութեամբ ամեն բան լմընայ. քա-

նէ որ առ հրամանագիրը կայ, չէմ կրնար հան-
դարտ սրտով խորանին վրայէն Լուբենցոյ Թրա-
մալէնոյ անունը տալ համարձակ. շատ կը սի-
րեմ զինքը, չեմ ուզեր որ ինծառ մը ըլլայ երեն.
աղէկ մը մոռածէ հրամանդդ, դուք ալ մոռածէ-
ցէք »։ —

Առաւնօր մերթ Ադնէս և մերթ տիկինն այլ
հերքելին զպատճառս նորա, և նա կրկներ ըզ-
նոյնս յայլ ձև. և մինչդեռ չկարելին ելլն տղադս
դառնել, եմուտ Ինենցոյ ուրախութեամբ, ա-
ւետիս 'ի դէմս բերելով, « Մարքեզը հասաւ »։

Յոան կացեալ տէր Ալոնսոյ հարցանէ.
« Ինչ ըսել է, ո՞ր մարքեզը, ո՞ւր հասաւ »։ —

« Ոտարիկ իշխանին պալատը՝ որ երն է հի-
մայ, մարքեզ իշխանը՝ որ անոր ժառանգն է.
ալ հիմայ տարակոյս չկայ։ Շատ կուրախա-
նայի, թէ որ լսէի որ խեղճ մարդը աղէկ մահ
մը ունեցեր է. ինչուան հիմայ Հայը մեր, Ողջոյն
կըսէի երեն համար, ասկէց ետքը ի խորոց կը-
սեմ. բայց մարքեզ իշխանը շատ աղէկ մարդ
մըն է եղեր »։ —

« Հապա », ասէ տէր Ալոնսոյ, շատ ան-
գամ լսած եմ իր անունը, աղէկ մարդ մըն է
եղեր, հին մարդիկներէն. բայց լուրը իրաւ
է »։ —

« Ի՞նչ, լուսաթարին չէ՞ս հաւատար »։ —

« Ինչո՞ւ չհաւատամ »։ —

« Ինքը աչքովը տեսեր է. ես գացի ան կող-
մերը, հետաքը լսեմ, ան մարքով որ հարկաւ բան
մը կը լսեմ. Ամբոխը դիմաց ելաւ, վերէն
կուգար. տեսեր է, ինչպէս որ ըսի, մարքեզ

իշխանին հետ սիրոյ պէս հրամանէը. ըսի երեն
որ հոս դուրսը սպասէ, կուզէս երթալ »։ —

« Լաւնք », ասէ տէր Ալոնսոյ. և չուգաւ
Ինենցոյ կոչել զնա. և ժամարարն հաւատար-
մացոյց զամենայն, և եղ 'ի բաց։

Յայնժամ դոչեաց տէր Ալոնսոյ. « Ուրեմն
մեռաւ հա, գնաց ուրեմն, տեսէք որդիք, ինչ-
պէս արդարութիւնը կը հասնի ասանկներուն
երեսէն. գիտէք որ ինչ մեծ բան է ասիկայ.
խեղճ գեղերնիս շունչ կառնէ, չէինք կրնար
առ մարդէն խալըսիլ. երբա՝ ժանտախտը մեծ
պատիժ է, բայց աւելի մը եղաւ, աւելց տարաւ
առ մարդիկը՝ որոնցմէ ուրիշ կերպով չէինք
կրնար ազատիլ, գեռ հասակնին չառած զօրա-
ւոր մարդիկ, մեռան գացին. անոնց թաղումը ը-
նելու սահմանուած քահանաները կը կարծէինք
որ գեռ գպրոցը այբբենգիմ կը սորվին, աչք
գոցելու բանալու առեն աներևոյթ եղան ամե-
նը մէկտեղ։ Մէյմըն ալ պիտոր չտեսնանք սրիկ
կաներովը ամբարտաւան ամբարտաւան պտը-
սիկը՝ գլուխը վեր անկած, նայուածքով մը՝ որ
կարծես թէ իր հրամանովը կեցեր են ուրիշնե-
րը աշխարհիս վրայ. բայց հիմա ինքը աշխարհքիս
վրայ չէ, ու մենք կեցեր ենք. ասկէց ետքը չի-
կրնար պատահիլներ հրամանները խրկելու ու-
րիշներուն. ամենքս ալ շատ բան քաշեցինք
ձեռքէն, հիմայ կրնանք ըսել »։

Ինենցոյ ասէ. « Ես երեն սրտանց Թողու-
Թիւն տուեր եմ »։

Տէր Ալոնսիոյ ասէ. « Պարտքդ կատարեր
ես. բայց պարտական ենք շնորհակալ ըլլալու

Աստուծոյ որ զմեզ անոր ձեռքէն խալըսեց։ Իսկ մեր վրայ դառնալով, նորէն կըսեմ. ինչպէս որ կուզէք, անանկ ըրէք. Թէ որ կուզէք որ ես ընեմ Պապակը, պատրաստ եմ. չէ՝ թէ որ աւելի դիւրին կըլլայ ձեզի մեկալ կերպը, անանկ ըրէք։ Աքսորանքի կողմանէ ալ մեծ հոգ մը ընելու բան չկայ, մեկը չգիտցայ ձեզի միասը ընել ուզողները, աչքընին վրանիդ եղողները, մանաւանդ այն ընօրհալի հրամանագրէն եաքը՝ որն որ ալբայորդւոյն ծննդեան պատճառաւը եղաւ. ժանտախտն ալ շատ բան մաքրեց լմընցուց, արդեօք մը չունինք։ Անանկ որ... այսօր հինգշաբթի չէ... առջևնուս կիրակին ժամը ծանուցում կընեմ, կըսեմ անուննիդ, վասն զի ան առջի ըրած ծանուցումս այսչափ աւետին եաքը չկսեպուիր. մխիթարանք մըն ալ է ինծի որ ձեր Պապակը ես ընեմ»։

Ռէնցոյ ասէ. «Գիտես որ մենք ալ ասոր համար եկեր էինք»։—

«Շատ աղէկ, բաղձանքնիդ կընեմ, ու մեկէն կիմացընեմ Կարդինալին. հիմակուս հիմայ գիտէք ինչ մոռցեցի շուտ ընելու համար, անօրինութեամբ խնդրեր ուրիշ երկու անգամ ալ ծանուցում չընելու. կիրակի օրը ուրիշներ ալ պիտոր պահեմ, նայիմ... մեկ... երկուք... իրիք... ձեզմէ 'ի զատ. դեռ կրնայ ուրիշ ալ ըլլալ։ Եաքն ալ մեծ գործ պիտոր բացուի։ Անխնայ փերփերեցուան աւետնը գետաս մեռնելու, իրեն շահելու աւետնը աս էր։ Կարծեմ Միլան ալ նոյն բանը պիտոր ըլլայ, անանկ չէ խա՛թուն»։—

«Ի՞նչպէս չէ, մոռցէ որ սոսկ անցած կիրակի Յիսուն հարսնիքի ծանուցում եղաւ ժամը»։—

«Զըմի՛, աչխարքս լմընցնելու միաք չունի. դեռ հրամանքիդ չորս գին չըսկըսած խոշոր ձանձիր վրասփըսալ»։—

«Չէ, չէ, ես անանկ բաներ չեմ սիրեր, և ոչ կուզեմ մոռցել»։—

«Ուրեմն միանակ կուզես մնալ. Աքնէյան ալ»։—

«Հրամմեր ես, Աքնէյան ալ»։

Աքնէս ասէ. «Ո՛հ, կատակ ընելու աւե՛ն ալ ունիս»։—

«Հապա՛, ունիմ. կարծեմ ալ որ կատակ ընելու՝ ուրախանալու աւետը եկաւ, դէշ օրերը անցուցինք, անանկ չէ. սա մեկ քանի օրն ալ որ պիտոր կենանք աշխարքիս վրայ, գանէ քիչ մը ուրախ անցընենք. երանի՛ ձեզի, որ Թշուառ օրերը անցընելէն եաքը՝ աւետն ունիք քաշածնիդ պատմելու, իմ մեկ ոտքս գերեզմանին մէջն է. ամեն հիւանդութեան դեղ կրնայ ըլլալ, մարդս ժանտախտէն ալ կրնայ խալըսիլ, բայց ծերութեան դեղ չկայ. աւտակն ալ կըսէ. Ինչն իսկ ծերութի՛ն հիւանդութի՛ւն է»։—

Ռէնցոյ ասէ. «Ալ հիմայ, որչափ որ կուզես, գրաբառ խօսէ, հոգս չէ»։—

«Դուն դեռ գրաբառին Թշնամի ես, բայց առանց անոր բանդ չկըմընաս. կիրակի օրը Լուչիային հետ առջևս որ գաս, կուզես որ եբ֊ռա բարով ըսեմ, որովհետև չես ուզեր լսել. Պահպանիչ»։—

«Ես ըսածս պիտեմ. ան գրաբառը չէ՝ որ զիս

կը վախցընէ. անիկայ պարզ ու յարդելի գրաբառ մըն է՝ սուրբ պատարագին աղօթքներուն պէս. ես ան գրաբառներէն կը վախնամ՝ որ ժամէն դուրս ուրիշը խաբելու համար կըսուին: Ինծի որ ամէն բան յընկնցաւ, նէրէ որ ըսեմ. ան գրաբառ խօսքերն որ ըսիր՝ մեզի հասկըցընելու համար որ չէիր կրնար զմեզ պահել, հիմայ աշխարհաբառ չըսէս անոնք »: —

« Ձայն մի հաներ, թշուառական աղայ, ա՛ւ ատ բաներդը մի խառներ, թէ որ հիմայ ատ բաներուն հաչիւ ընելու ըլլանք, չեմ գիտեր ո՛վ պարտկան կը մնայ. ես ամէն բան նէրէցի ձէզի, ա՛լ չեմ ինչենք. բայց աղէկ խաղցուցիք զիս: Քու վրադ այնչափ չեմ զարմանար, վասն զի չարաճճիկ տղայ մըն ես. բայց սա հանդարտ կինիկը, սա սրբուհին, որուն վրայ ատանկ բան մտածելը՝ մեղք կը կարծէր մարդ »... Եւ յանեղն վայ՝ մատնահիւ ցուցանէր զԱփենս: « Բայց գիտեմ գիտեմ, անիկայ ալ չարժողը դուն էիր »: Ա՛յլ էչ մարթ պատմել քանի քաղցրութեամբ և սիրելութեամբ առնէր զանդիմանութիւնս զայսոսիկ. յեղակարծ լուր մահուն Ռոտրիկեայ առեւալ էր նմա զայն եղանակ բարեհամբոյր, ՚ի բազմոց հետէ անսովոր ՚ի նմա: Եւ յամէր առաւելին խօսել ընդ նոսա, և ՚ի կամել նոցա քանիցս անգամ հրաժարել՝ կալաւ զնոսա, և ապա առ դրան իսկ ոչ դադարէր ՚ի խօսելոյ. որպէս զի եթէ կամէաք զամենայն խօսս նորա ածել այսր, երկարէր յոյժ պատմութիւնս:

Ի վաղիւ անդր եղև նմա այցելութիւն ի

անահնկալ, այլ հաճոյական: Մարքէզն, զրմէ ասացաք, ոչ առոյգ և ոչ ծեր, որոյ դէմք վկայէին համբաւոյ նորա, հանդարտ և ակնածելի, բերելով յանձին տխրութիւն իմն հանդերձ համբերութեամբ, ասէ.

« Կարդինալին բարեը հրամանքիդ բերելու համար եկայ »: —

« Ա՛ա ինչ խոնարհութիւն »: —

« Ահն աննման անձը, որուն բարեկամութիւնը մեծ պատիւ կը սեպեմ ինծի, խօսեցաւ երկու նշանաւածներու վրայ՝ որ հրամանքիդ ժողովրդապետական վիճակին մէջն են եղեր, ու շատ նեղութիւն քաշեր են ողբոմելի Ռոտրիկին ձեռքէն. տեղեկութիւն կուզէ իրենց վրայ, ո՞ղջ առո՞ղջ են, իրենց վախճանին հասա՞ն »: —

« Ամեն բան կարգի մտաւ. միայն դուբր էի որ դրեմ իրեն, բայց հիմայ որ հրամանքդ հրամայեցիր եկար »...

« Հո՞ս են »: —

« Հոս, ու օր մը առաջ կուզեն պատկուիլ »: —

« Կը խնդրեմ հրամանքէդ որ ըսես ինծի, ինչ կերպով բարիք մը կրնամ ընել իրենց. երկու զաւակներ ունէի, սա գժբաղդութեանց մէջը կորսընցուցի, իրենք ալ մայրենին ալ, ու իրենք մեծ մեծ ժառանգութիւններ ալ ունեցեր, առաջուց ալ ինծի պէտք եղածէն եւս ունէին. ուստի ինծի մեծ չնորք մը կրնես օգնելով որ կարենամ ունեցածս աղէկի բանեցընել, մանաւանդ ատանկ տեղ »:

« Աստուած օրհնէ զՀրամանքդ, երանի թէ հրամանքիդ պէս շատեր ըլլային... հերիք է:

Ես ալ հրամանքիդ սրտանց չնորհակալ կըլլամ՝ որ ինծի համարձակութիւն կուտաս մտածածս ըսելու. կրնամ կերպ մը միտքդ ձգել, որն որ Թերևս ախորժիս : Այս բարեպաշտ ընտանիքը որոշեր են՝ որ առիկէց երթան, ուրիշ երկիր տեղաւորուին, ուստի քիչ մը երկիր որ ունին հոս, կուզեն ծախել. մանչը այդպէս մը՝ տասը կանգունի չափ ըսելու որ ըլլամ՝ չեմ սխալիր, բայց երեսի վրայ ձգած, հաղիւ հողի գնով կը ծախուի. առիկէց ի զատ անակ մըն ալ աղքիկը, երկուքն ալ միներուս բոյն : Աղքատ ներուն վիճակը՝ հրամանքիդ պէս ազնուական մը չկրնար երևակայել, երբոր կը հարկաւորին տեղերնին փոխել, միշտ խաբեբայի մը բերան կերթայ ունեցածնին. չատոնց մեկը աչք անկեր է անոնց քիչ մը հողին, ու երբոր ծախողներուն կարօտութիւնը լմնայ, ետ կը քաշուի, ջուղել կը ձևացընէ, պէտք կըլլայ երեսէն լմնալ, պատառ մը հացի գնով տալ երեն, մնաւանդ առանկ առեն : Հրամանքդ աղէկ կիմանաս ինչ ըսել կուզեմ. մեծ ողորմութիւն կընես երեոց, ու զիրենք նեղութենէ կը խլես, Թէ որ հրամանքդ գնես ունեցածնին : Ի բաւ որ առած խորհուրդս ինծի ալ օգտակար է, վան զի կը փափաքիմ հրամանքիդ պէս իշխան մը ունենալ իմ ժողովրդապետական Թեմիս մէջ : Բայց ինչպէս որ կը հաճիս, անանկ ըրէ. ես հրամանքիդ հնազանդելու համար ըսի » :

Հաճեցաւ իշխանն ընդ խորհուրդ նորա, չընորհակալ եղև, և ազաչեաց զի ինքն տէր Ապոն սիոյ զգինան սահմանեսցէ ըստ բարձրագոյն

սակի : Եւ ապէհցոյց ինա, կամելով գնալ ընդ նմա ՚ի տուն հարսին, ուր գտանէր արգելօք և փեսային : Եւ մինչդեռ գնային, տէր Ապոնափոյ ուրախ և զուարթ յաւել. « Որովհետև հրամանքդ ատանկ պատրաստ ես բարիք ընելու ատ խեղճերուն, ուրիշ չնորք մըն ալ կրնաս ընել երեոց : Միլան երկու տարի առաջ փեսին վրայ պզտիկ յանցանքի մը համար աքսորանաց դատակնիք մը եղած է, ան մեծ խռովութեանը մէջ գտնուելէ ի, տգիտութեամբ առանց չարութեան, որոգայթի մէջ ինկած մկան մը պէս, Թեթև բանի մը համար, տղայութեան մը համար, անխոհեմութեան մը համար, վան զի ուրիշն ինաս ընելու տղայ չէ՝ ատոր կրնամ վկայել, կնունքը ես ըրեր եմ, աչքիս տակը մեծցած է : Ատեն չունիս, Թէ որ չէ՝ ատ խեղճերուն պատմութիւնը երեոցմէ կրնայիր լսել : Հիմայ բանը հինցած ալ ըլլալով, նեղութիւն տուող մը չկայ երեն. ու ինչպէս որ ըսի, ինքը կը մտածէ դուրս երթալ. բայց կրնայ ըլլալ որ առենօք գտնայ հոս կամ ուրիշ տեղ մը Միլանոյ ատմանին մէջ երթալ. հրամանքդ ինծի կը տրվէցընես, որ միտս աղէկ է իր անունը ան գիւղերուն մէջ չըլլալը : Հրամանքիդ անունը Միլանոյ մէջ մեծ է, ինչպէս պէտք է ալ որ ըլլայ. ազնուական, տասեա, երևելի, ինչպէս իրացընէ ալ ես, ներէ որ ըսեմ ձմարիտը, հրամանքիդ պէս իշխանի մը մեկ խօսքը՝ մեկ յանձնարարութիւնը հերիք ու աւելի է տըղուն համար աղատութեան գիր մը ընդունելու » : —

« Ա՛ս աղուն ապաուրթեանը զօրաւոր դէմ կեցող մը կա՞յ » : —

« Ձէ , չեմ կարծեր . առջի բերանը կրակ թափեցնեն վրան , բայց հիմայ մարեցաւ , սուրբական ձև մը միայն մնաց իր ապաուրթեանը , ուրիշ բան չկայ ընելու » : —

« Թէ որ առանկ է , դիւրին է առօր ձարը , սիրով վրաս կառնեմ » : —

« Հրամանքդ որչափ ալ չես ուզեր մեծ մարդ ըսուիլ , բայց ես կըսեմ , ու կուզեմ ըսել , զուզուդ համար ալ՝ աւելի կըսեմ : Թէ որ չըսկէ ալ՝ անօգուտ էր , վասն զի ամենքը կըսեն . Ձայն ծողովրդեան՝ ձայն Աստուծոյ » :

Հասին գոնն յիրաւի զերեսին կանգնած և ըզՌէնցոյ 'ի միասին , և Թողում ընթերցողին 'ի միտ առնուլ զայլուրթիւն ամենեցուն նոցա ընդայցելուրթիւն իշխանին : Որմէ իսկ մերկք և խորտաբորտք , պատուհանք կաւելք , աթոռք փայտակերտք , և սուտուննք Թուէին զարմացեալ ընդ նորահրաշ տեսարանն : Ինքնին իսկ իշխանն սկիզբն արար բանից զկարգինալէն և զայլոց երից , մեծարմաբար խօսելով և ազնուական հաստուրթեամբ . և առաջարկեաց վասն որոյ եկեալն էր : Եւ տէր Ապոնոլոյ ըստ սովորական նորա յառաջ մատուցեալ սահմանել զգինան , յետ հրաժարելոյ վայրկի մի վասն բարեձևուրթեան , ասելով՝ զի չէր իւր անկ . և տիպերը առհնազանդելոյ միայն որպէս Թէ առ խարխափ ասել ինչ , և զի միշտ 'ի կամս իշխանին առնէր սպասաւան . և սակայն ասաց ինչ որպէս և 'ի դէպ համարեցաւ , սակ անառելի : Պատասխա-

նի էտ իշխանն . « Իմ կողմանէս գոհ եմ ամենևին » : Եւ որպէս Թէ վերսպակ լուեալ զսակին , կրկնապատիկ հատոյց , ոչ համեցեալ ընել զստոյգն՝ կարճատեղով զնօսս . և հրաւիրեաց զամենեսեան գալ 'ի վաղիւ անդր յետ Պսակին յաղագս իւր , առնել անդ զդաշնագիրս ըստ օրինի :

Դարձաւ տէր Ապոնոլոյ 'ի տուն , և ասէր . « Թէ որ՝ ժանտախտը միշտ ասանկ աղէկ բաներ ընէր , հաւատա՝ մեղք կըլլար իր վրայ գէշ խօսելը , գրեթէ բաղձալի կըլլար՝ որ երբեմն երբեմն դառնար այցելուրթիւն ընէր , միայն ատ դասամբ որ՝ բանուէրնիք միայն , չիմեռնէրնիք հա » :

Եհաս հրամանագիրն անօրինման , եհաս մուրհակին աղատուրթեան պատանաւոյն 'ի գատաւորքն , եհաս և օրն ցանկալի , եկին խօսեցեալք յաղթողաբար յեկեղեցի , և պսակեցան 'ի տէր Ապոնաեայ : Ա՛յլ ինն յաղթանակ եղև գնալ նոցա 'ի պալատ անդր , ուսան Ռատրիկն տայր ընդգէմ իւրեանց պատգամ . Թողում ընթերցողին գուշակել որ ինչ ընդ միտ ածէին նոքա յերթանել ընդ զառ 'ի վերն , 'ի մտանել ընդ դուռնին , և որ ինչ ըստ իւրաքանչիւր բնաւորուրթեան խօսակից ընդ միմեանս լինէին : Յաւելից աւեթ՝ զի յուրախուրթեան անդ , էր զի մին , էր զի միւսն , ասէին . « Ա՛ս ուրախուրթեան մէջ ուրիշը չկպակսիր , Հայր Քրիստափորէն 'ի զատ . բայց անիկայ հիմայ մեզմէ ուրախ է անսարակոյս » :

Եւ արար իշխանն ընթրիս մեծ , հաճ զնոսա 'ի սեղանատուն գեղեցիկ , բազմեցոյց զպատ-

կեալն ընդ Ադենիսի և ընդ միլանեցւոյ սիկինոլֆն ի մի սեղան, և մինչչև երթեալ լինքն ընդ սէր Ասպոնեայ այլուր ի ձաշ, կամեցաւ կալ վայրիկ մի ընդ բազմականս, և օգնել խակ ի սպասաւորութիւն: Ոչ կարծեմ թէ ևցէ ոք որ խորհիցի՝ զի լաւ ևս էր կալ նոցա առենեցուն ի մի սեղան. ասացի զի էր իշխանն այր բարեշաւ, այլ չէաուս զնա յօրինակ նմանութեան. ասացի զի էր խոնարհ, այլ ոչ նախատիպ խոնարհութեան: Էին նորա բարեմասնութիւնք առ ի կարող լինելոյ կալ զհետ ընտրելոյ ընտանեաց փոքրիկ ազգատոհմին, այլ ոչ համադասել ընդ նոսա:

Յետ ձաշուն յօրինեցան գաշնագիրք ի ձեռն վաստաբանի, որ էր կոչեցեալն այն Թոնճուկքակող. զի զերեզման նորա էր և է ցարդ ի Քանթերբերլի: Աստանօր պարտ է ինձ, որոց չէն տեղեակ վայրացն, տալ տեղեկութիւն: Կէս մղնաւ վերագոյն քան զԼէքքոյ, մերձ ի Քասթելլոյ, է կոչեցեալն Քանթերբերլի, ուր ուղիք երկու հատանեն զնրեար: Ի միում կողման հատելոյ ուղւոյն կայ բլրաձև հողակոյտ, խոչ ի գագաթանն բերելով. այն է գերեզման մեռելոց ի ժանտախտէն: Աւանդութիւն այս չափ ինչ միայն ասէ. այլ հարկ է՝ զի ժանտախտն այն էցէ յետինն սաստկագոյն քան զայլս, որոյ հայ մնայ յիշատակ. զի աւանդութիւն առանց օգնականութեան յոյժ է սակաւախոս:

Ի գառնալ նոցա ոչ գիպաւ ինչ գժպատահ. միայն ծանրաբեռնեալ էր Ոխինոյ ի գրամոց զորս բերէր ըստանձին. բայց նորա ծանրա-

գոյնս յոյժ քան զայնս կրեալ էր ձգուն: Թողուաւ զհոգս ի շահաբեռագոյն ինչ զեռելոյ զդրամսն, զի խորհուրդք որ անցանէին ընդ միտս նորա նպաստաւորք և հակառակք, արդեօք ի մշակութիւն երկրի յարգել զայն թէ ի ճարտարութիւն, թուէին գնացելոյ գարուն ձմերանք կրկին ձակատեալք երկուստեք ի հակառութիւն. և կնճիռն գժբաղդագոյն այն էր միայնութիւն իւր, զի չէր ոք որ ասէր ցնա. «Ինչ պէտք է առջակ մտածել, երկոքեան ալ ալեկ են, երկուքումն ալ բանեցուր սակը, երկու ոտքն պէս՝ որ մեկտեղ աւելն ալեկ կը քալեն, քան թէ մեկը մինակ»:

Ակսան նոյնհետայն կապել զծրարս, և պատրաստէր ի չուն տունն Ֆրամլեան գնալ ի նոր հայրենիս, և այրին բարեկամ գնալ ի Մլչան: Աւրտասուք, ընդհակալիք, խոստմունք վերստին զմիմեանս տեսանելոյ, բազմաւք յոյժ. ոչ ինչ նուազ խանդաղատելի և բաժանումն Ոխինոյն յընտանեաց վանաստուր մտերմին, ըստ մասին ևեթ արտասուաց ոչ հաւասարեալ: Եւ ոչ ընդ սէր Ասպոնեայ ցրտագոյն անցին ողջոյնք հրաժարականք: Կրկին միշտ ի սրտի զաւակն օրհնեալք սէր և մեծարանս առ հովիւ իւրեանց հոգեւոր, և նա միշտ սիրէր զնոսա. այլ դէպք ևեթ գժպատահք աղմկեցին առ վայր մի զիղձս սրտի:

Զելլ արդեօք վճռալի և բաժանումն ի հայրենի երկրէ անտի և ի լերանց. — այո ամենևին, եղև խակ, զի ոչ ուրեք սպասաւ վիշտ: Բայց Մեղմագոյն Թուի լեալ աստանօր, զի մերթ խակ

էր նոցա չերթալ ՚ի բաց, և կալ մնալ ՚ի տան իւրեանց. խոչք երկոքին մեծամեծք բարձեալ էին ՚ի միջոյ, Ռոտրիկն այն և դատաւնիկք աքսորանաց: Սակայն նոքա յամաց հետէ երեքեան իսկ սովորեալ էին համարել իւրեանց միւս այլ հայրենիս զերկիրն՝ ուր գնային. զի պատանւոյն սիրելի արարեալ էր նոցա զայն, պատմելով զգիւրութիւնս ձեռագիտաց անդ, և բազում այլ ինչ ցանկալիս ՚ի բարեկենդանութիւն: Դարձեալ և ամենեցուն նոցա լեալ էին աւուրքը գառինք յերկրին՝ ուստի հրաժարէին, և տխուր յիշատակք ուծացուցանէին զնոսա անտի: Ցղայք ևս գիւեցիկք, յաւելու ասասիօր պատմիչն անանուն, հանգչին մոագիւր ՚ի ծոց գայեկին՝ ուր խնդրեն քաղցիւ և վսահութեամբ զկաթն քաղցր, որ զնոսա սնուցանէ. այլ եթէ սոքունաւն ՚ի սարսուցումն նոցա օծանէ զպտկունան լեզուով, յեաս զչրթունս ամփոփեն, և գարձագարձ արարեալ ՚ի ծուծ, յերոյ ապա լքանեն զծոյ անուցչին. լան, բայց սակայն ուծանան:

Մի զարմացի ոք արդ յընթերցուածն, զի ընդհասանել նոցա և զեռելել ՚ի նոր հայրենիսն՝ եգիտ և անդ Ռենցոյ պատրաստեալ գառնութիւնս ինչ. ոչ արդարև ծանուցնս, այլ սակաւ ևս ինչ բաւական է առ ՚ի խառվիլ զբարեկենդանութիւն:

Զրոյցք հաչակեալք ՚ի գեղջն զԼուչիայէ յառաջ քան զհասանել նոցա անդր, և Ռենցոյի այնչափ ինչ վշտակրել վասն նորա և կալ միշտ հասատատուն և հաւատարիմ առ նա, և բանք ևս արգելաք մոեբմի ուրուք բարեկամի զնմանէ և զերացնորա, զարթուցեալ էին յամենեսին իղձս տեսանելոյ զՏարսնուհին, ակնկալութեամբ գեղջ նորա. և զինչ է ակնկալութիւն, բայց ցնորք մտաց գիւրահաւան, ՚ի փորձ երթայն՝ ժպգոհ և տհաճ. որ ոչ երբեք գտանէ ինչ բաւական, վասն զի չգիտէ որ ինչ կամի, և խընդրէ անհնայ զվերջ քաղցր ցնորիցն: Վասն ուրոյ յերեսել Լուչիայի, բաղուածք որ կարծէին թերևս տեսանել ոսկեղէն զվարսս նորա, զայտան վարգենիս, զաչս նորա մի քան զմի գեղանիս, և զի գիտեմ որ ինչ այլ, սկսան ուս ՚ի վեր առնուլ, պարսաւել զջնոս, և ասէին. «Ի՞նչ, ամն է նղեր Լուչիա ըստծնին. այսչափ տառնէ ՚ի վեր՝ այսչափ գովեստները լսելով, բանի մը կը սպասէինք. ի՞նչ է տեսածնիս, գեղջուկ աղջիկ մը՝ որուն պէս շատերը կը տեսնանք, տակէց աղէկներն ալ ամեն տեղ կը գտնուին»: Եւ մանրաշնին ևս գիտելով գտանէին ՚ի նմա թերութիւնս, ումն զայս, և ումն զայն, մինչև տգեղ իսկ համարել զնա:

Այլ քանզի ոչ ոք իշխէր ասել ինչ յայսպիսեաց ասի յերեսս պատանւոյն, էգոյր ինչ ցայնվայր ելնաս. վերատակաւ այնոքիկ եղեն, որ պատմեցին նմա զայս ամենայն: Յոգի հարաւ պատանին, խորհէր զայնմանէ, քանքատեր առ որս պատմեին նմա զայն, և ասէր յանձին. «Զեղի՛ ինչ, ոմ ըսաւ ձեզի որ մեծ բանի տպաւեք, բան մը ըսած ունիմ ևս ձեզի Լուչիային աղաւորութեանը վրայ, ձեր գոված տառնն ալ զինքը՝ էի՛ պատասխաներ որ աղեկ գեղացի աղ-

ջևկ մըն է, ուրիշ բան բերնէս ելած է, խոս-
տացէք եմ ձեզի որ աղօթ հարս մը պիտոյ
բերեմ. չէք ախորժիր, երեսը մի նայիք, ալ աղ-
ւոր կնիկներ ունիք, անոնց երեսը նայեցէք »:

Ա՛յլ տես գուռ լինէ՝ թէ ուրպէս երբեմն բան
լինչ անոտի յեղափոխէ զամենայն ղկեանս ու-
րուք. եթէ Ռինցոյ կացեալ մնացեալ էր ի
գեղջ անդ՝ որպէս եդեալն էր ի մոլ, ախուր
ամենեքին վարելոյ էր կենցաղ. զի ի գժկամա-
կելն ընդ այլս, եղև և ինքն գժպհմի այլոց. վա-
րէր անչնորհ ընդ ամենեսին, զի թերևս էր ոք
ի նոսա յեպերոզացն Լուչիայէ. հեգնական
ինչ յամենայն խօսս նորա էր, գոանեը սոպիւտ
ինչ յամենայնի. եթէ աւուրք երկու ամպա-
մածք և անհարթք յաջորդեին, ասէր խնդրն.
« Չա՛, աս տեղն օդն է »: Եւ ոչ սակաւք տաղտ-
կացեալ էին ի նմանէ, ևս և այնոքիսի՝ որոց սի-
րելի էր նա յառաջագոյն, և մարթէր օր ըստ
օրէ ամենեցուն խնդ լինել առելի, առանց զըս-
կիզբն չարեացն գիտելոյ:

Ժանտախտն գոգցես այս ամենայնի էլս հը-
նարաւորեաց. քանզի մեռաւ ի ժանտախտ
տէր միոյ ի գործարանաց մերձ ի գրուհս Պեր-
գամայ, և ժառանգ նորա պատանի սոսկակ՝
որ յամենայն գործարանի անդ չգտեալ լինչ իւր
զբաղումն, կամէր և ըղձանայր վաճառել զայն,
ևս և կէս ի կէս գնոյ, և ունել արծաթ առ
ձեռն պատրաստ՝ առ ի վառանել ընդուհնայն:
Գիտաց զայն Պորթոլոյ, փուԹացաւ տեսա-
նել, սակ էարկ, եդ գաչինս շահաբեռագոյն
յոյժ. այլ առ ի չգոյէ պատրաստ գրամոց ըստ

բաւականին՝ խափանէը ամենայն. զի որ լինչ առ
սակաւ սակաւ մթերեալն էր խնայուԹեամբ՝
յոյժ քան զգինսն էր նուազ: Կալաւ զնա ի
խոստման, գարձաւ փուԹանակի պատմել
զկրան հօրեղբօրորդւոյ իւրում, առաջարկելով
նմա գնել զայն ի միասին: Այս ցանկալի առա-
ջարկուԹիւն սահմանեաց զանտեսական վա-
րանս պատանեւոյն, և հաստատեալ ի զեռեղել
զարծաԹն ի ձարտարուԹիւն, հաւանեցաւ ընդ-
այն: Զոգան ի միասին, կռեցին զդաշինս. և ի
գալ նորոց տերանց գործարանին կալ անդ,
Լուչիա՝ որում ոչ ակնկալուԹեամբ ծնային քնա-
կիչք տեղւոյն՝ ոչ միայն չերևեցաւ նոցա ստգտա-
նելի, այլ և ձաձոյ գոաւ նոցա. մինչև եհաս
յունկն Ռինցոյի, զի ասէին բազումք ցմիմեանս.
« Տեսա՞ր ան սիրուն ձագուկը », և մակդիրս
այս եղև նմա սակաւ յանուն:

ԴժկամակուԹիւնն իսկ այն, զոր ի միւսում
անդ գեղջ կրեալ էր, եղև նմա ի խրատ. յա-
ռաջ քան զայն վազվազէր առ ի տալ վճիռ, և
դիւրամիտ էր ի ստգտանել զամենայն, մնաս-
ւանդ զկանայս այլոց. այլ յայնժամ ի միտ
էառ՝ զի այլ ազգեցուԹիւն էր բանից ի շըր-
ԹուՀնս, և այլ ի լսելիս. և ուսաւ խորհել յան-
ձին, և ապա հանել զնոսա ընդ շրԹուՀնս:

ԳործառնուԹիւնք նորա գնային և յաջո-
ղէին. ի սկզբան անդ խուն լինչ խափան եղև
պակասուԹիւն գործաւորաց, և սակաւուն՝
որ կային առ նմա՝ ելանել ի բաց, կամ պա-
հանջել վարձս ծանուհնս, մինչև հրատարակե-
ցան հրովարտակք՝ որ սահմանէին զսակ գոր-

ծաւորաց. և յառաջ խաղային երեք իւր յաջողութեամբ, որպէս և հարիւ էր ամենայնի յառաջին կարգն դառնալ: Եհաս և ի Վենետաց խոհականադոյն հրովարտակ, որ ապահարիւ առնէր ցամս ամաց զծառայականս՝ որ գային ի սահմանս անդ բնակելոյ որ և մերոցն եղէ ի շահ մեծ:

Մինչչև լըսացեալ ամի հարսանեացն, եկն ի լոյս դասրիւկ դեղանի, աստուածային ինն տեսչութեամբ այսպէս յաջողեալ՝ առ ի տալ պատուհ Ինճոյին ի վաղագոյն կառարումն գեղեցիկ խոստմանն, և եդ մանկանն անուն Մարիամ: Եղէն նմա ապա և այլ ուստերք և դպստերք, յորս զբաղէր Անգնէս ի շուրջ ածել զնոսա, չարաձայնս զնոսա կոչել, և համբոյրս ի դէմս նոցա ապաւորել, որոց մեայնի ընդերկար յերեսս տղայոցն սիրք սպիտակիք: Եւ անաւ մանկանին մէտ ի բարին. և էտ Ինճոյ ուսանել նոցա գարուեթիւն ընթերնուլ և գրել, զի ասէ. « Մէյմը որ մտեր է աս սովորութիւնը, Թող սորվին »:

Սիրելի էր լսել ի նմանէ զպատմութիւն արկածիցն իւրոց, զորս սովոր էր կինել Յաւել լավ որ ինչ ուսեալն էր յայնցանէ ի խրատ առաքինեայ կենացն, և ասէր. « Սորվեցայ որ մէյմէն ալ խռովութեան մէջ չխմնամ: սորվեցայ որ հրապարակի մէջ ամենուն առջին չխոսիմ: սորվեցայ որ մարդու ձեռք չխվերցընեմ: սորվեցայ աաքցուխ մարդկանց առջին դուռ չխզարնեմ: սորվեցայ որ առքիս զանգակ չխկապեմ, մտածեմ առաջ ինչ վտանգ կրնայ դեռևս ինել »: և այլ սոցին սակի խրատս:

Բայց Լուչիա, Թեպէտ և ոչ անիրաւ զվարդապետութիւն նորա համարէր, այլ ոչ հանդարտէին միտք իւր այնուիկ, տարտամ և թերի թուէր իւր այն. և ի լուր հանապազորդ տաղից այնպիսեաց յեղյեղելոց մտախոհ լեալ, ի միում աւուրց ասէ ցվարդապետն. « Բայց ես, ինչ կուզես որ սորված ըլլամ քաշածնէրէս. ես գժբախտ տուեթիւններուն եւեւէն չիգայ, անոնք իմ եաւէս եկան ». և յաւել քաղցրութեամբ ընդ քիմն ժպտելով. « Կրնաս ըսել որ իմ անխելքութիւնս՝ զքեզ սիրելս եղաւ, ու քեզի խօսք տալը »: Խոովեցաւ պատանին, և եկաց ափ ի բերան. և ապա վիճակաւ առ վայր մի ընդ միմեանս, և քննեալ, կինքեցին՝ զի Թեպէտև աղէտք, բազում այն է՝ զի պատճառս առեալ հասանեն, սակայն և կեանք անարատաք չէն բաւական առ ի զերծանել յայնցանէ. այլ ի հասանել նոցա՝ Թէ ղէհտ յանցանաց և Թէ առանց յանցանաց՝ ապաւինութիւն եւեթ առ Աստուած՝ քաղցրացուցանէ զայնս, և առնէ օգտակար ի լաւագոյն կենցաղավարութիւն: Ա՛յս կինք բանից, Թեպէտև յաղքատիմաց մըտաց խնամատարելոյ, այնպէս արդարացի Թըւեցաւ ինձ, զի խորհեցայ ածել զայն առ ի ներքս որպէս հիւթ ինն բովանդակ պատմութեանս: Որ եթէ ոչ անհաճոյ լինի ընթերնըլեաց, յիշեսցեն զպատմագիրս սորա, և մի անյիշատակ զնմաքագիր ևս սորին արասցեն. իսկ եթէ տաղտկալի եղէ նոցա, դիտասցեն՝ զի ոչ կամաւ զառանցայ:

ՀԱՏՈՐ Ա.

Է.Ջ	ՏՈՂ.	ՏՊՐԻՊԱԿՔ	ՈՒՂՂԱԿԱԼՔ
13	23	պատուիրական	պատուասխրական
41	27	ընդ ամօթ ի գլուխ կայր	ընդ ամօթ կայր
102	28	փողղս	փոցեղս
183	2	արդեօք և	արդեօք չէ։
536	11	ի փորս	ի խորս
428	25	նմա	իւր

ՀԱՏՈՐ Բ.

38	12	հասանել	ի հասանել
234	3	դրդեսցին	դրդեսցեն

ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ՈՒՐԻՇ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ

Ա.ՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ, 2 հատ. 1865.
Ա.ՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՏԵՍԱԿԱՆ 2 հատ. 1862.
Ա.ՍՏՈՒԱԾԱՍԷՐ, Ս. Փր. Սալեզացւոյ, աչխ. 1864.
Ա.ՐԻՍՏՈԴԵՄ, ողբերգուԹիւն Մհնեի իա. 1873.
Ա.ՐՍՈՐԱԿԱՆՔ Ի ՍԻՊԵՐԻԱ, Գոթենի գաղղիուհւոյ 1874.
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ արուեստ, առձեռն 1839.
ԲԱՌԱՐԱՆ յաչխարհաբառէ 'ի գրաբառ 1869.
ԲԵԼԻՍԱՐԱՅ Ա.ՐԿԱՆՔ. Ֆանչի գաղղիուհւոյ 1859.
ԲՈՒՐԱՍՏԱՆՔ, քերԹուած 'ի չորս գիրս 1851.
ԴԻՑԱԲԱՆՈՒԹԻՒՆ առձեռն 1839.
ՁԲՕՍԱՐԱՆ ՏՆՆԻՑ, աչխ. 1875.
ՀՈՎԻՒ ՀՈԳԵՒՈՐ, 5 հատոր, աչխ. 1855-1857.
ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ առձեռն 1839.
ՄԱՂԹԱՆՔ ԶԱՓԱԻ, 1843.
ՄԱՐԿՈՍ ԱՒՐԵԼԻՈՍ, աչխ. 1868.
ՄԵՏԱՍՏԱՍԵԱՑ սրբազան տաղերգուԹ. 1871.
ՄԵՐՈՎՊԷ, ողբերգուԹիւն Ալֆիէրի Թաղաւորհւոյ 1873.

Յովբաց Գիրք, տաղաչափեալ 1862.

Պարթելըմի, Ուղեւորութիւն կրասերոյն Անաքարսեայ, 6 հատոր 1843–1845.

Պօղ եւ Վիրգինի, վիպասանութիւն Սէն-Փիէռի 1862.

Ռասին կրասեր, քերթուած վկրօնից 1873.

Ռուէն, Հնախօսութիւն, 6 հատոր 1825–1829.

Վիրգիլիոս, Ենէական 1845.

» Հովուականք 1873.

Վրուէրի որմզդանաց առակք, տաղաչափեալք 1865.

Տակիտոս, Տարեգրութիւնք 1873.

Փեդրոսի լաւին քերթողի Առակք 1855.

Փեդրա, ողբերգութիւն Ռասինի 1863.

Փինար, Հուր աստուածային սիրոյ, աշխարհաբառ 1870.

Քերականութեան Դուրն, աշխ. 1836.

Քերականութիւն գործնական, աշխ. 1836.

Քերթուածք 1853.

Օրհնութիւնք հին կտակարանաց, տաղաչափեալք 1866.

Ֆեննելոն, Արկածք Տէլեմաքայ 1850.

Ֆլորիան, Նումա Պոմպիլիոս 1853.

2748

2013



